ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



VI


ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ОВ. ТУМАНЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

ТОМ ШЕСТОЙ

ДОПОЛНИТЕЛЬНЫЙ

АРМГИЗ
ЕРЕВАН 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Դասվ. 1986





ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1959

Խմբագրական կոլեգիա՝
ՍԱՀԱԿՅԱՆ ՍԻՄԱԿ (պատ. խմբագիր), ԶՈՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ,
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ, ԻՆՃԻԿՅԱՆ ԱՐԱՄ

Տեխսոր և ծանոթագրություններր պատրաստեցին՝ ԱՍԱՏՐՅԱՆ ԱՍ.,
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆՎ., ՀՅՈՒՍՅԱՆ Մ., ՄՈՒՐԱԴՅԱՆ Ն.



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հովհաննես Թումանյանի «Երկերի ժողովածու»-ի 6-րդ, լրացուցիչ հատորն ընդգրկում է բանաստեղծի այն երկերը, որոնք, այլևայլ նկատառումներով, դուրս են մնացել նախորդ հինգ հատորներից։

Ներկա հատորում զետեղված նյութերի մի նշանակալից մասը ո՛չ հեղինակի կենդանության օրով և ո՛չ էլ նրանից հետո ամբողջությամբ տպագրված չի եղել («Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իբրև պատմություն» և «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրությունները, սևագիր և անավարտ մի քանի բանաստեղծություններ, հոդվածներ, նամակներ և այլն). նյութերի մնացած մասը միայն մեկ անգամ տպագրված լինելով պարբերական մամուլում (գրա-քննադատական և հրապարակախոսական մի շարք հոդվածներ) և կամ՝ հեղինակի այս կամ այն գրքում (մասնավորապես վաղ շրջանի պոեմը՝ «Մեհրի»), այնուհետև տեղ չեն գտել Թումանյանի երկերի հետագա ժողովածուներում։

Բազմաժանր և բազմաբովանդակ այս նյութերը հատորում խմբավորված են հետևյալ բաժինների մեջ.

ա) Գեղարվեստական երկեր (բանաստեղծություններ, պոեմներ, արձակ).

բ) Հոդվածներ գրականության, լեզվի և պատմության մասին.

գ) Հրապարակախոսություն.

դ) Ուսումնասիրություններ.

ե) Ելույթներ և ճառեր.

զ) Գրություններ, հեռագրեր, կոչեր.

է) Նամակներ։

Բոլոր բաժիններում նյութերը դասավորված են ժամանակա-

գրական կարգով, ընդ որում, ֆրագմենտներն ու տարբերակները տրված են համապատասխան բաժինների վերջում:

«Երևանի կռիվը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իբրև պատմություն» անավարտ ուսումնասիրության տեքստն ու ծանոթագրությունները պատրաստել է Ա.ս. Ասատրյանը, իսկ մնացած բոլոր նյութերի տեքստերն ու ծանոթագրությունները պատրաստել են Ն. Թումանյանը, Ա. Ինճիկյանը, Մ. Հյուսյանը և Ն. Մուրադյանը: Ա. Ինճիկյանը մասնակցել է նաև 1-ին, 3-րդ և 4-րդ հատորների խմբագրման աշխատանքներին:

Սույն հատորով ավարտվում է Հովհ. Թումանյանի «Երկերի ժողովածու»-ի առաջին ակադեմիական հրատարակությունը, որն ընդգրկում է հայ մեծ բանաստեղծի գրեթե ամբողջ գրական ժառանգությունը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Սույն հատորը տպագրության պատրաստելիս կիրառված են հետևյալ տեքստաբանական կանոնները.

1. Ինքնագրերում եղած այն բոլոր ջնջումները, որոնք չեն փոխարինված նոր բառերով կամ նախադասություններով, առնված են քառակուսի փակագծերի մեջ. մնացած դեպքերում ջնջումները տարված են տողատակ՝ նույնպես դրվելով քառակուսի փակագծերի մեջ:

2. Տողատակ են տարված լուսանցքում կամ տողարանքում հեղինակի կատարած այն լրացումները, որոնք անավարտ են և չեն կապվում տեքստի հետ: Ջնջված լրացումները նույնպես տրվում են տողատակում՝ քառակուսի փակագծերի մեջ:

3. Խմբագրական լրացումները տրված են սուր < > փակագծերում: Սուր փակագծերում է նշված նաև անընթեռնելի բառերի քանակը, այսպես՝ <1 անընթ.>, <2 անընթ.> և այլն, իսկ ինքնագրում ջնջված անընթեռնելի բառերի քանակը նույն ձևով նշված է քառակուսի փակագծերում:

Կիսով չափ ջնջված բառերն, ըստ հնարավորին, վերականգնված են համապատասխան փակագծերում, այսպես, օրինակ՝ [ավ<երակներ>]:

4. Տեքստի կամ առանձին պարբերությունների ու նախադասությունների անավարտ լինելը նշված է բազմակետով՝ սուր փակագծերում: Սղված բառերը, ինչպես և բառերի սղված վերջավորությունները լրացված են՝ առանց այդ մասին նշելու:

5. Ինքնագրի մեջ պարբերության սկզբի ջնջված բառերը, որոնցով հեղինակն ուզեցել է սկսել տվյալ պարբերությունը՝ նշված են պ.ս. (պարբերության սկիզբը) տառերով:

6. Առանձին դեպքերում անհրաժեշտ է եղել ծանոթագրությունների բաժնում տալ լրացուցիչ բացատրություններ: Վերջիններս տպագրված են պետիտով:

ԱՅՍ ՀԱՏՈՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թ Թումանյան
Թա Թումանյանի արխիվ
Զ1 Զեռագիր առաջին
Զ2 Զեռագիր երկրորդ
Զ3 Զեռագիր երրորդ
ԲՄ I հ. «Բանաստեղծություններ», I հատոր, Մոսկվա, 1890 թ.
ԲՄ II հ. «Բանաստեղծություններ», II հատոր, Մոսկվա, 1892 թ.
Հթ «Հորիզոն» օրաթերթ
Տզ «Տարազ»
Ֆր1 Ֆրագմենտ առաջին
Ֆր2 Ֆրագմենտ երկրորդ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1885

«ԹՈՂ ՓՋԵ ՔՈՒՄԻՆ» ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Լուսնկա գիշեր.
Պայծառ երկնքում
Ջկայլին սև ամպեր.
Աստղերն էին փայլում։

Հանդարտ ու տխուր
Լուռ էր բնություն,
Ջի ամենայն ուր
Մորփեն էր տիրում։

Այդ ժամին, ընդարձակ
Արարատ դաշտով,
Մի տխուր էակ
Գնում էր ճեպով։

Մոտեցա նորան.
Ա՛խ, տեսնում եմ մի
Գեղեցկատիպ ու
Ջվարթ պատանի։

Ո՞ւր ես շտապում,
Ասա՛, պատանի,
Անունդ, ազգանունդ,
Այսպես հարց արի։

—Դեպի Հայաստան,
Պատասխանեց ինձ,
Նորան օգնության,
Ցավին կարեկից։

Դեպ սրտիս միակ
Սիրած առարկան.
Անունս՝ Աղեքսանդր,
Ազգավ՝ Գոլոշյան։

Երբ «դեպ Հայաստան»
Բառը լսեցի,
Զարմանք ինձ պատեց,
Շվարած մնացի։

Փա՛ռք քեզ, տեր աստված,
Մտքումս ասացի.
Տաքացավ սառած
Արյունն հայ ազգի։

Ով էլի դարձա
Ես դեպի նորան,
Այսպես խոսեցա
Ձայնիվ հեգնական.

Դարձի՛ր, պատանի,
Փոխի՛ր ընթացքդ.
Համապատասխան
Չէ ուժիդ միտքդ։

Ձմեռն է ասստիկ
Հայաստան երկրի.
Դու միակ ծաղիկ,
Գարուն չես բերի։

Ամայացած է
Հայաստան աշխարհ.
Հայը ցրված է
Երկիրներ օտար։

Անցյալն է ողբում
Անդ բուն չարգուշակ.
Գյուղեր, քաղաքներ
Կան ողջ ավերակ։

Ծնողք, ազգական,
Եղբայր ու քույրեր,
Քեզ են սպասում
Անդուլ, անհամբեր։

Դարձի՛ր, պատանի,
Թող այդ մտքերդ,
Քեզ են միշտ խնդրում
Բարեկամներդ։

Բացեց բերանը,
Խոր հոգվոց հանեց,
Երկու աչերից
Ջույգ արցունք կաթեց։

—Ընկերությանն այն,
Որին երդվեցա,
Սրտովս ամենայն
Հպատակ, ծառա

[Վինիմ ամեն ժամ,
Հրամայում է նա,
Կատարել երդում,
Թողուլ ամեն բան]։

Ա՜խ, չկա հնար
Այլևս բաժանման.
Վճռած է արդեն՝
«Դեպի Հայաստան»։

Ես իրագործել
Կամիմ մի սուրբ միտք,
Միայն քավ մոռնալ
Ծնողք, ընտանիք։

Այսուհետ պիտ լինի
Իմ բարձս չոր քար
Ու վառ լապտերս՝
Լուսինը պայծառ։

Շքեղ դահլիճս՝
Սոսկ անտառները.
Փափուկ մահիճս՝
Կանաչ խոտերը։

Փափուկ վերմակս՝
Մառայլ ամպերը.
«Ղույթուվ դոշակս»՝
Կանաչ դաշտերը։

Մայրական «որդյակ»
Քաղցր բառի տեղ,
Լսեմ որոտ, կայծակ
Այսուհետև թող։

Եվ զի այն որոտ
Հայաստանինն է.
Ինձ համար անշուշտ
Հարաժամ քաղցր է։

Որոտք ձեր Մասյաց
Ճերմակ գագաթեն
Թե լսեմ, անկասկած
Ինձ համար քաղցր են։

Դե՛հ, գնաս բարյավ,
Գնա՛, տեր ընդ քեզ,
Միայն հեգացյալ
Մորդ միշտ հիշես։

«Նատալիա» անունն
Մտքումդ ունենաս,
Ժամեժամ սպասում
Է քեզ, իմանաս։

[Արև տեսնելիս
Առավոտյան ժամին
Քեզ կյանք է խնդրում,
Քեզ միտն է բերում]։

Արև է մտնում,
Իրիկուն գալիս,
Միշտ քեզ է հիշում
Լուսնին նայելիս։

Ամեն իրիկուն
Լուսնին նայելով
Անունդ է հիշում
Ու ասում լալով.

«Ա՜խ, երանի քեզ,
Ո՜վ պայծառ լուսին,
Որ միշտ տեսնում ես
Իմ Աղեքսանդրին»։

1888

ԿՈՎԿԱՍՏԱՆ

I

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Սրկնաբերձ լեռան զառիվայր կրծքին,
Հանգչում է վաղուց մի սուրբ նահատակ,
Կուսական և թավ ծմակի միջին։

Քանդված է մատուռն, քարերը ցրված,
Եվ ավերակի վերա սպառած,
Կանաչ բաղեղով խստապինդ գրկված
Նիրհում էր ուռին ճյուղերը փռած։

Խոնարհված էր խաչն յուր պատվանդանից
Եվ ընկած հեռու սուրբ ավերակից,
Իսկ գերեզմանը մեծ նահատակի
Մամռոտ նայում էր խաշամի տակից։

Գիշերներն այնտեղ կանթեղ չէր վառվում,
Այցելում էին նրան հրեշտները,
Եվ միշտ հանգստյան երգ էր հորինում
Քամին, շարժելով լայն տերևները։

II

Այդ լուռ ու խաղաղ վայրում մենացած,
Երկար ժամանակ աստուծո մարդու
Անշուք շիրիմը մարդկանցից մնաց
Անհայտ և անզարդ, առանց այցելու։

Մինչև որ մի օր աստուծո հրամանով,
Երազ եկավ մի արդար մարդու մոտ,—
Թե այս ինչ տեղը թաղված է մի սուրբ,
Ցավերով լիքը երկրին անծանոթ։

Այսպիսի հրաշքով նա հայտնվեցավ
Մարդկային ազգի փրկության համար,
Եվ հռչակավոր ուխտատեղ դարձավ,
Բարձրացավ խորան գեղեցկակամար։

III

Նա անտրտունջ, ասում է հին բանը,
Ինչպես քրիստոնյա բարեպաշտ և քաջ,
Պահելով տիրոջ սուրբ պատվիրանը,
Գլուխը թեքեց թշնամու առաջ։

Եվ արդար մարդիկ տեսել են աչքով,
Ասում է նույնպես ավանդությունը,
Որ լուս է իջել երկնային հրաշքով
Եվ բժշկում է հիվանդությունը։

Հաճախ բերանով արժանավորի
Հայտնել է երկրին աստծո կամքը,
Եվ ժողովուրդը գլխովին տեղի
Ջոնում է նրան իրան հարգանքը։

Բայց և շատ անգամ յուր զորությունը
Նա ցույց է տվել մի պատժով արդար,
Քանդելով մեկի ողջ տեղ ու տունը,
Մարդկանցն անհայտ մեղքերի համար։

Նա է մեղավորին տալիս պատիժը,
Արժանավորին ուզած բարիքը.
Նա է սահմանում, գործքին համեմատ,
Մահկանացուի գլխի գալիքը։

Ահա թե ինչու հայ ժողովուրդը,
Խաչ կամ նահատակ անունը տալով,
Ջուր է համարում մարդկային ջանքը,—
Նրա մեծ զորքի վերա հուսալով։

Կամ երբ որ տերտերն յուր տուփը ձեռքին
Հայտնվում է նրան կրկին և կրկին,
Առատ շահելով, հանուն սուրբ խաչին,
Նա հավատում է թե՝ փրկեց հոգին։

IV

Անցնում է անցվոր այն մատրան մոտից
Երկյուղածությամբ և խաչակնքում,
Ջարատանջ օրով դառնացած սրտից
Այսպես լիասիրտ աղոթում մտքում.—

«Ով սուրբ Նահատակ, գլխովդ պտույտ գամ,
«Դուն հասցնես ինձ ապրուստ օրական,
«Քո մեծ զորքովդ, անգութ, անզգամ
«Թշնամուս ջնջես և առնես կոխան»։

***

Հայոց ժողովուրդն ահա խռնված
Հետևում է յուր ծերուկ տերտերին՝
Խաչից խնդրելու, որ բռնված
Երկինքը խնայե իրան արտերին։

Թե մի վարակիչ ցավ է տարածված,
Մարախն ուտում է դյուղացու ցանը,
Այս «երկնառաք պատուհասի» դեմ
«Օրհնած հողն» է միակ դարմանը։

***

Արևը կրակ է թափում վերից.
Հայուհին ընկած խաչի առաջին,
Արյուն արցունք է չափում աչերից,
Օգնություն հայցում,— հիվանդ է որդին։

Եվ զարդարում է ջերմեռանդ սրտով
Ծառի ճյուղերը յուր կտրած մազով,
Ուխտում է երկար պաս ու ծոմ պահել,
Ինչպես ազդել է խաչը երազով։

***

Ահա մի ծեր կին մաղախն ուսին,
Որդի չի ծնում մանկատի հարսին,
Պիտի յոթն գյուղ «խաչի սեր» ման գա,—
Ամուլ արգանդին խաչը պատուղ տա։

Տատի եաևից քողը երեսին,
Ոտքերը բոբիկ, կուչ ու հուպ գալով
Գնում է հարսը գրավը ձեռքին,
Իրավ չըգործած մեղքերը լալով։

***

Ահա ուխտավորն ահով ու դողով
Խմբված լսում է պատգամավորին*,
Որը պատմում է, իրան ծեծելով,
Ինչ է կամեցել երկինքը որին։

Սրան մուրազը, նրան աշխարանք,
Կամ պահանջում է զոհեր ծանրագին.
Մյուսին ցեղե-ցեղ նզովք, բանադրանք,
Որ հայհոյել է յուր ընկնավորին։

V

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Ուր չոր քարն էլ է ծլում, կանաչում,
Տեղացու սիրտը միաժամանակ
Մի զաղտնի երկյուղ հալում է, մաշում։

Նա իրան ուժին դեռ չի հավատում.
Նա դեռ իրանից դուրս է որոնում
Բարօրութիյունըն յուր չարքաշ կյանքի
Եվ գոհացումն հասած զրկանքի։

---

* Պատգամավոր կամ ընկնավոր, շատ տեղ «նզավոդ» են ասում, որովհետև դեռ Դելֆի պատգամախոսի նման ուշաբարձվում է, ապա փրփրած, իրան ծեծելով հայտնում «աղայի»—խաչի կամքը։

1890

ԽՄՐԱՅԵԼ

Պանդուխտ, հալածված, հոգնած վշտաբեկ,
Եվ ոչ մի երկրում հանգիստ չըգտա.
Դարձյալ դեպի քեզ, հայրենիք իմ հեգ,
Հարազատ որդիդ թռչում եմ ահա:

Բայց և քո գրկում, ավա՜ղ, կորած է
Տենչալի կյանքի հույսը հավիտյան,
Քո գրկում նաև ինձ սպասում են
Սարըկի վիճակ, օրեր հեծության.—

Քո իրավունքից զրկված Սիոնի
Սրբազան գավթում լումա են փոխում,
Կորած է փառքը Երուսաղեմի
Եվ լիրբ ոսոխի սիրտը չէ դողում:

Եվ գերի որդիդ, ո՛վ գերված աշխարհ,
Ազատ քայլերով, և ո՛չ մի անգամ,
Այն սուրբ վայրերում, ուր որ մեծացա,
Եվ այսուհետև չպիտի ման գամ:

Անիրավ տիրող թշնամու ձեռքը
Ինձ կըհալածի քո երկնքի տակ,
Եվ թաքուն կերգեմ ես իմ ողբերգը
Քո սար ու ձորում հեծելով մենակ...

Ա՜խ, մենք պատրաստ չենք միասին կռվի,
Եվ մեզ թշնամին խեղդում է ջոկ-ջոկ,
Մենք հալածված ենք առանց մեղքերի
Եվ չի պաշտպանում մեր դատը ոչ ոք:

Դեկտեմբեր

1892

ՄԱՐՏ

«Մարտի 8-ի Թիֆլիզի
Թեմական պատգամավորների ընտրությունը»

Խոսք՝ Х-ի **Երաժշտությունը՝ Չուխաճյանի**

Կեցցե՛ «Մշակ» և ժողովուրդ
Եվ այս օրը մեծախորհուրդ—
Մեր ազգային իրավունքի,
Համայնական ազատ կամքի։

Անդառնալի թող վերանան
Ամեն գործեր կամայական.
Ընտրությունը ապօրինի,
Կոպիտ չոբանն Աբարանի[1])։

Կեցցե՛, կեցցե՛ մշտազվարթ
Նոր սերունդը երիտասարդ,
Յուր եռանդով ամենազոր,
Գաղափարով պարզ, լուսաժոր։

Կորչի՛ Մամբրե, սև է Աբգար[2])
Իրանց խմբով գիշերավար,
Եվ անսասան կեցցե՛ հավետ
Մեր ժողովուրդն Արծրունու հետ։

14 մարտի։

1901

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Կազմած հ. Ալիշանի գրվածքներից)

Թեպետև վաղուց հասել էր աշուն,
Ցամքած տերևուկն ըսպասեր հովուն,
Թե երբ 'ի լերաց ծոցում փըչե խոր,
Զըգե անկըսկիծ 'ի մահուն սև ձոր,
Այլ ես շանթահար ապշիմ վըշտակոծ,
Թե ի՜նչպես ընկավ Նահապետն հայոց,
Մահու սև թախիծն երկիրն հայրենյաց,
Հոգին ձգելով յերկինս-առ ասված:

Ու աշխարհն ամեն թեև անցուգնաց,
Ծեր Նահապետն այլ տի գնար հոգնած,
Բայց, ավա՜ղ, որ մեր լեռներն աննըման
Իրենց շայիրին չետուն գերեզման,
Ու օտար լեռներ, անծանոթ հովտին
Մընաց՝ հայրենյաց անձուկն իր սըրտին.
—Ո՜հ, լերունք ծաղկած, ո՜հ, ջուրք ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերդ 'ի յիս ածեք մոտ.
Հողմո՜ւնք անուշիկք, եկեք մոտ 'ի յիս,
Երգս ու շունչս առեք, տարեք 'ի Մասիս:

Շարժի՛ր, դե՛հ շարժիր, ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց հայոց աշխարհիս,
Ահա շունչ ետ քեզ Նահապետն հայոց,
Հուր ետ հողեղեն ու հոգին հուր-բոց.
Շնչե, հա՛, շնչե ծըխիկ ծիրանի,
Որ քո զավակաց հուր նըշան ըլնի...

Դուք այլ շարժեցեք, մանկըտիք Հայկա,
ի յեզըր հողուն կօրհնեն ձեզ ահա.
— Պինդ կացեք, աստված ցողե՛ւ ի վերեն,
Ծըլիք ու ծաղկիք, քանց վարդն ի թփեն,
Մի՛ մոռանաք բընիկ աշխարհքն հայոց
Ու Նահապետին ասացեք հոգոց։

ՊՈԵՄՆԵՐ

1890

ՄԵՀՐԻ

I

«Սիրելի Մեհրի, չէ՛, ամեն երկրում
Մարդիկ այսպիսի նեղություն չեն կրում.
Այս ի՞նչ երկիր է. տեր չըկա կարգին,
Ամեն ավազակ տեր է մեր գլխին...
Դողալով մնում է մարդ ամեն վայրկյան,
Թե ահա իսկույն, ուր որ են, կըգան,
Կնոջս տանից կառնեն-կըտանեն,
Որդիս կըխլեն կամ ինձ կըսպանեն...
Հալալ հաց չունենք թուրքիցն անկշտում,
Դառն աշխատում ենք ու դատարկ նստում.
Գետինը ձգած սերմը չենք վերցնում...
Այս ընչի՞ կյանք է, դե՛ քեզ ես հարցնում»։
— Ես գիտեմ, Մհե, ինձ ինչ ես ասում,
Այսպես է, հոգիս, դուն ի՞նչ ես ուզում...
«Մեղանից հեռու, ասում են, որ մի
Աշխարհք կա, Մհերի, բարեկարգ ու լի.
Այնտեղ չէ իշխում գաղանի կիրքը,
Այնտեղ չէ հարգվում կեղծավոր դիրքը,
Եվ մարդիկ այնտեղ իրար հետ սիրով
Ապրում են հանգիստ, թուրքից ապահով.
Իսկ փողըն այնտեղ հողի պես լի է,
Ես էլ կըգնամ, շատ կարելի է»...
— Օ՜, այս ցավերիցն ես դուն հեռանում,
Ապա ե՞ս, Մհե, ինձ ի՞նչ ես անում...
«Քեզ... քեզ կըհանձնեմ Տիրոջ խնամքին,
Իսկ ես հնազանդ նրա սուրբ կամքին,

Կըգնամ, հոգի՛ս, աշխատանք կանեմ,
Գուցե շուտով գամ ու քեզ էլ տանեմ»...
— Այստեղ աշխատի՛ր, մի՛ գնալ, Մհե,
Ինձնից հեռանալ չեմ թողուլ, չէ՛, չէ՛,
Լավ է միասին մեր ցավը քաշենք,
Քան իրար կարոտ, սիրտներս մաշենք...
«Սիրելի Մհերի, ինձ հետ հավասար
Դուն քարշ ես եկել, ընկել քարեքար,
Միշտ պակաս օրով, կիսակուշտ փորով,
Շատ անգամ ուկլոր, բոբիկ ոտներով։
Ի՞նչ ենք աշխատել, ցո՛ւյց տուր ինձ, հոգիս,
Ի՞նչ, ի՞նչ ես տեսնում տանս կամ հագիս.
Բայց ուրիշ բան է, թե այնտեղ գնամ,
Տես ինչպես պիտի շուտ հարստանամ»։
— Այն հարստությունն ես ի՞նչ եմ անում.
Ա՛խ, Մհե, Մհե, դու չես իմանում,
Ինչն է ինձ տանջում, թե որ իմանաս...
Այն օտար երկրում որ հիվանդանաս,
Գոնե, ո՞վ պիտի քեզ սառը ջուր տա,
Պատռածդ կարի, կեղտդ լվանա...
Ազիզ* օր կըգա, դուն անտուն, մենակ,
Կուչ կըգաս սրա նրա պատի տակ»...
Լցվեց, հեկեկաց Մհհրին դառնագին.
Սիրտ տվեց Մհհն.— «Բան չըկա, ա՛յ կին»...

II

Մի աշնանային ցուրտ իրիկուն է.
Ծխոտ ու փլեկ հին գլխատուն է.
Ածխակոթերը մլում են տխուր.
Օջախի շուրջը նստոտած են լուռ.
Ծեր սկեսար կողքին հարսն է կուչ եկած,
Մհհն նստած է երկուսի դիմաց։
Հագիվ են նկատվում նրանց դեմքերը.
Տխուր են մարդ ու կին, տխուր է ծերը,
Հոնքերի տակից փայլում էր թախիծ,
Եվ ահաբեկված մի գաղտնի վախից,
Բերանն անատամ, դողդոջուն ձայնով
Այսպես բաց արավ իրան պահելով.

---

* Ազիզ օր—տոն օր, հանդիսավոր օր։

— Ո՞ւր ես կամենում գնալ, ի՛մ Մհե,
Այնտեղ ի՞նչ կա, ի՞նչ, նպատակդ ի՞նչ է,
Ինչո՞ւ ես թողնում քո հոր օջաղը,
Ալևոր հորդ, քո օղլուշաղը:
Ես ծերացել եմ, առաջվանը չեմ,
Որ ամեն ցավի հանից թռչեմ.
Արդեն հասել են մահվանս օրերը,
Դուն էլ գնում ես, ո՞վ է մեր տերը:
Կաց այստեղ, որդի, հորըդ ականջ դիր,
Ձեռքդ չեն բռնում, այստեղ աշխատիր:
«Այստեղ ի՞նչ կա, հայր, որ ինչ աշխատեմ,
Հենց թեկուզ, ասենք, մնամ, աշխատեմ,
Ի՞նչը կըպրծնի անօրեն թուրքից,—
Մարդու հացն անգամ խլում են ձեռքից»:
— Ոչ ոք չի դիպչել քո արդար հացին,
Տուր փարեն՝ պրծիր չարեն*, ասացին
Մեր լուսահոգի խելոք պապերը:
Կատարի՛ր, որդի, նրանց պատվերը,
Սուված չես մնալ, բախտավոր կըլնես,
Թուրքն էլ քաղցր աչքով միշտ կնայի քեզ:
«Աշխատանք չըկա, հայրիկ, աշխատանք,
Եղած չեղածն էլ որ թուրքերին տանք,
Իսկ մե՞նք ինչ անենք, սուված կոտորվե՞նք.
Մինչև ե՞րբ պիտի այսպես չարչարվենք»:
— Մեր ցավն է, որդի, մենք պիտի տանենք,
Դուն ո՞նց ես ուզում, ուրիշ ի՞նչ անենք.
Եթե ձեռքիցդ մի բան է գալիս,
Դե արա՛, ո՞ւմ ես էլ մտիկ տալիս,
Թե չէ, ինչո՞ւ ես կորչում հողից հող,
Ո՞վ է քեզ համար այնտեղ կարել փող:
«Չըգիտես, հայրիկ, այդ ինչ ես ասում,
Այն երկրում փողը թիով են դիզում.
Դուն չես հավատում Մկոյի խոսքին,
Որ այնտեղ խանով** են չափում ոսկին»:
— Խանով ոսկին քեզ համար չեն չափում,
Ցնորքներ են որդի, քեզ շլացնում, խաբում.

---

* Առած է:

** Խան—ցորենի չափ է:

Դարձի՛ր այդ ճամբից, լսի՛ր ծեր հորդ,
Պանդխտության մեջ կըսևացնես օրդ։
«Ես չեմ ուզում, հայր, օրեր սևացնել,
Այլ մեր սև օրին մի ճար հասցնել.
Ես պիտի գնամ, և երբ որ ասուծով
Կըվերադառնամ ջեբս լի ոսկով,
Կըգովես որդուդ, թե ինչպես ճարեց
Այդ հարստությունն, քեզ մխիթարեց»։
— Դու գիտես, որդի, գնա, տեր ընդ քեզ,
Բայց տե՛ս, մոլոդ երբեք չըձգես
Պապիդ օջաղը, քո հայրենիքդ,
Ծերունի հորդ, ջահել կնիկդ.
Թե սրանց, Մհե, դուն կըմոռանաս,
Իմացի՛ր, թեկուզ թագավոր դառնաս,
Օր չես քաշելու քո արած մեղքից։
Բարի ճանապարհ. թող քեզ ուղեկից
Լինի այն հրեշտակն, որ երբեմն տարավ
Տովբիթի որդուն դեպի Մարաստան.
Իսկ ես հայրական սրտով վիրավոր
Քեզ համար աղոթք կանեմ ամեն օր—
Է՛հ, գնա՛ որդի, գնաս-գաս բարով...
Վերջացրեց խոսքը ծերունին զորով...

III

Տանջվում էր, տանջվում խղճալի Մհերին.
Խառնվում էին նրա վշտերին
Եվ սնունդ էին տալիս անհամար
Կասկածանքները տխուր ու համառ։
Սարսափում էր նա, երբ ամեն վայրկյան
Մտաբերում էր ժամըն անջատման.
Մի օր էլ մնաց, մի օրը վերջին,
Որ ճամբու դնե Մհերին Մհեին։
Եվ արտասվելով խեղճ կինը կարեց
Մի սիրուն ղայլուխ* ու վրեն շարեց
Գույնզգույն հուլունքներ վզի շարանից**,
Մարդուն հիշատակ տվեց իրանից։

---

* Ղայլուխ—փողի քսակ։

** Շարան—հուլունքներից և զանազան փայլուն իրերից կազմված, շարած բան է, որ կանայք իրրև զարդ կրում են վզին։

IV

«Դե՛հ, մնաք բարով, ծերունի հայրիկ,
Նազելի Մեհրի, սիրուն հայրենիք,
Սրտակից աղերք, ընկեր-հարևան,
Մոտիկ բարեկամ, արյուն-ազգական»...
Ասաց սրտաբեկ երիտասարդը,
Եվ, անիծելով իրան չար բաղդը,
Ճանապարհ ընկավ. այն ինչ ջրատար
Մեհրին ետևից նայում էր երկար։
Մհեի հայրն էլ, զառամ ծերունին,
Դողալով հենված յուր գավազանին,
Բերանը բացած, ձեռքը ճակատին
Նայում էր ապշած Մհեի ճամբին։
Դեռ երևում էր սև կետի նման,
Այն էլ չքացավ, և ամենայն բան
Վերջացավ պրծավ. ծերուկն ու Մեհրին
Ապշած ու քշված կանգնած մնացին։
Մհեին ճամբու դնելու համար
Հավաքվածները, իբրև մխիթար,
Մեհրուն ու ծերին հուսադրական
Խոսքեր խոսացին, կամաց հեռացան։
Բայց երկա՜ր, երկար, մի ձայն թուլլ, չնչին,
Այսպես խոսում էր նրանց ականջին.—

***

«Սիրելի Մեհրի, մնացիր բարով,
Աչքերդ լցրած, տխուր երգերով
Զրհիշես էլ ինձ, մոռացիր, հոգիս,
Զրկանգնես երկար, չընայես ճամբիս.
Թե աչքդ մնա*, կըխաբե նա քեզ,
Թե հանկարծ շեմքում ոտնաձայն լսես,
Հանգիստ, սիրելիս, դիշերվան ժամին
Գիտե միշտ խաբել խաբուսիկ քամին։
Գուցե թե գիշերն անքուն աչքերով
Ուզես իմանալ վիճակս աստղերով,
Եվ հանկարծ մինը ծոր տա ու թռչի**,

* Աչքի մնալը՝ ճամբորդի, դնացածի դալու նշան է։
** Աստղի թռչելը՝ մահու նշան է։

Մութ հորիզոնի սահմանում կորչի,
Խռոված հոգով և հազար ու մին
Մտածմունքներով մտնես անկողին,
Մի տխուր երազ կըգա կազդե քեզ,
Որ քո Մհեին էլ տեսնելու չես»...

***

«Իսկ դուն, ո՛վ անբախտ և չարատանջ մարդ,
Դո՛ւն, իմ ծերունի հայրիկ ալեզարդ,
Երբ որ կըխնդրես արդեն չորացած
Քո բազուկներդ երկինք տարածած
Ու չես գտնիլ ծերութեան նեցուկ,
Որքան արտասուք կըթափես ծածուկ.
Ո՛հ, ինչպես պիտի քո ճերմակ մէրքի
Վրայից հոսեն հորդ արտասուքի
Աղի շիթերը, թրջեն վշտակոծ
Մազոտ, մերկ կուրծքդ, և ինչպես սև օձ,
Կըթունավորեն օրերդ ծերութեան
Գաղտնի կասկածներն Մհեիդ մահվան:
Քո որդու ձեռքի հողին անարժան
Կըխփես, հայրիկ, աչքերդ հավիտյան.
Անմխիթարանք և որդուդ կարոտ.
Բայց և քո տխուր գերեզմանի մոտ
Չի կանգնելու քո Մհեն երբեք»...
Դուք այնտե՞ղ, այնտեղ իրար կըզրկեք»...

V

«Վարդիթեր քույրիկ, գիշերս երազում
Դռնիցն ականջիս մի ձայն է հասնում,
Տնքում է երկա՜ր և ծանր հառաչում,
Հանկարծ մի կամաց Մհերի է կանչում:
Դուրս եկա, տեսնեմ՝ Մհեն էր կանգնած
Մի սև ձի հեծած, թռավ ու գնաց.
Ետևուց կանչեցի՝ Մհե՛, կաց, արի՛.
Հենց այս կանչելումն աչքս բաց արի:
Էլ ետ չնայեց, սև ձիուն հեծած,
Սև շորեր հագած, սև ճամբով գնաց*.

* երազում սեր տրամութեան է, մահ է. մանավանդ վերև հիշված երեքը:

Քամու նման էր այն սև ձին վազում.
Ի՞նչ է, վարդիթեր, սև ձին երազում»։
— Մեհրի, տեր աստված բարին կատարի.
Տիրամոր առաջ մի ջուխտ մոմ վառի։
«Երեք օր առաջ Շողերի դարին
Թևև մոտիկ էր ցույց տալիս բարին,
Բայց չար հարամին* (նա այսպես ասաց)
Ճամբա չէ տալիս առաջը կտրած»։
— Մեհրի, տեր աստված բարին հառաջի,
Գրավ խոստացիր սրբի ու խաչի։
«Իսկ այս առավոտ մի ագռավ եկավ
Երդկին վեր եկավ, սիրտս դող բնկավ,
Երբ բերան բացից, գլուխն ուտե իրան,
Բոթաճայն կռավից** ճիշտ երեք բերան»։
— Մեհրի, տեր աստված բարին կատարի,
Տիրամոր առաջ մի ջուխտ մոմ վառի։

VI

Ճամբա է տանում դեպի Հայաստան.
Այն ճամբու վրա կա մի գերեզման,
Որ միշտ հայացքով լուռ, ողորմելի,
Անցվորից խնդրում է մի ողորմի։
Ջունի այն քարը չարաշուք դրած
Ոչ տապանագիր, ոչ անուն դրած,
Որ մարդ իմանա, թե այս վայրենի,
Ամայի վայրով ո՞վ պիտի լինի
Հանգստանալիս անտաշ քարի տակ։
Արդյոք խոտակյաց մի սուրբ նահատակ,
Փախած աղմուկից մեղքոտ աշխարհի,
Եկավ և այստեղ, այս ճանապարհի
Վերա հաստատեց իրան օթևան,
Իբրև աստծուց կարգած պահապան.
Թե չար մարդիկը, դեռ կիսաճամբի,
Կտրեցին թևը ճամբորդի կյանքի.
Գուցե մարդկանցից քշված, հալածված
Ավազակը վես յուր գլուխը ցած

* Հարամի—ավազակ, մարդասպան։
** Ագռավի կանչը չարագուշակ է։

Դրեց այստեղ, և այս ճամբու տակին
Ավանդեց իրան մեղավոր հոգին...

VII

Մի օր մի քանի հայ անցվորական
Քրտնքամխած այն ճամբով եկան,
Կանգ առան այնտեղ ու շունչ քաշեցին,
Փոշոտած դեմքից փոշին սրբեցին։
Դեպ այն շիրիմը նրանցից մեկը
Երկչոտությունով մեկնեց յուր ձեռքը,
Եվ այսպես հորդոր կարդաց մյուսներին՝
— Եղբայրք, ողորմի տվեք Մհերին.
Սրանից առաջ մի քանի տարի
Եկանք տեսանք, որ այս ճանապարհի
Վերա հավաքված գիշակեր թռչուն,
Գիշատող գազան, մի լեշ են ուտում։
Քշեցինք նրանց,— տեսնենք մի դիակ
Ի՞նչպես սոսկալի, ի՞նչպես այլանդակ.
Շատ տգեղ էին և զարհուրելի
Սիպտակ շարքերը բաց ատամների.
Դառարկ աչքերի փոսից էլ, կարծես,
Տխուր հայացքով նայում էր նա մեզ։
Դեմքին ու լեշին երկար նայեցինք.
Վերջը շորերից միայն ճանաչեցինք,
Եվ պատառոտած նրա դիակը
Քարշ տվինք հասցրինք այն ծառի տակը,
Թաղեցինք այնտեղ և փախանք թաքուն»։
— «Աստված ողորմի Մհեի հոգուն».
Մի բերան ամենքն ասացին սրտով
Եվ ահակալած հեռացան փութով։

VIII

Գնում է ճամբան մտնում մի ավան,
Տխուր, կիսավեր հայի բնակարան,
Եվ այդ ավանի նույնիսկ առաջին
Տան շեմքում կանգնած դեռահաս մի կին,
Երեսը ծածկած բարակ քուշուշիկով*,

* Քուշուշիկ՝ հարսնական քող, շղարշ։

Առաջի ճամբին նայում է ուշքով.
Այդ ճամբով մի օր նրա սիրելին
Գնաց հեռու տեղ, չդարձավ կրկին։

IX

Տարիներ անցան, և աչքը ճամբին
Մնաց նայելիս նորահարս Մեհրին.
Ձեռքերը ծոցին, աչքերը լցված
Նայում էր, խոսում նա տարակուսած.
«Ա՜խ, մի ծիտ դառնամ, թռչեմ ու գնամ,
Գտնեմ Մհեխս, տեսնեմ միանգամ.
Բայց ո՞վ կըտա ինձ թռչելու թևեր...
Երնեկ իմանամ, երնեկ մինն ասեր,
Թե այս րոպեին նա ինչ է անում։
Գո՞րծ ունի արդյոք, հաջո՞ղ է գնում,
Արդյոք մի անգամ ինձ միտն է բերում,
Գիտե՞, թե օրերն ինչպես եմ համրում.
Ով գիտե, գուցե այնտեղ մի սիրուն
Խանում կին սիրեց, մոռացավ Մեհրուն,
Կամ, գուցե, հիվանդ տնքում է հիմա,
Ջորս կողմը նայում՝ յուր Մեհրին չըկա.
Թե չար թշնամին, ձեռքը չորանա,
Սուրը բարձրացրեց Մհեխս վերա.
Չըլինի թե վաղուց, Մեհրի ու աշխարք
Մոռացած, թողած, նա սև հողի տակ...
Ախ, ինչո՞ւ է, ինչո՞ւ այսքան տանջանքը,
Միթե սա՞ է, տեր, քո տված կյանքը.
Միթե ա՞յս էր ինձ համար պատրաստած,
Ի՞նչ արի քո դեմ, անարդար աստված։

X

Գնաց ու գնաց, չըդարձավ կրկին.
Բայց, ահա, մի օր նկատեց Մեհրին,
Որ հեռվից մի բան սևին է տալիս.
«Դարիբությունից ոքմին է գալիս»,
Մտքումըն ասաց Մեհրին և ծուխով
Աչքերի արցունքը սրբեց գոգնոցով։
Սիրտը սկսեց արագ բաբախել,

Վաղուց էր, խեղճ կինն այդպես չէր եղել։
«Օ՜, տառապածի ողորմած աստված»,
Մրմնջաց Մհերին աչքերը լցված,
Ուրախությունից արցունքը հետին
Ցավերը պիտի ողջ թափեր գետին։
Արդեն եկավորն եկավ մոտեցավ,
Քանի մոտեցավ, այնքան շատացավ.
Եվ ահա, մի խումբ թուրք ավազակներ,
Գյուղը քանդեցին, արին տակն ու վեր.
Լեղապատառ տուն ընկած Մհերուն
Տանից հանեցին, նստացրին ձիուն.
Նրա ալևոր սկեսարն ընկավ
Թուրքերի սրից և իսկույն հանգավ.
Մերի անեծքի հետ ի միասին
Տարան թուրքերըն յուր խոնարհ հարսին։

XI

Ճամբա է տանում դեպի Հայաստան.
Այն ճամբու վրա կա մի գերեզման,
Գերեզմանի մոտ մի ծառ է կանգնած.
Այն հովանու տակ ահա մի հոգնած
Ջիավոր իջավ, և նորա թարքին,
Իրան փաթաթված, նստած էր մի կին.
Եվ տղամարդը զենքերում կորած,
Կանաչ խոտերում երբ ձիուն թողաց,
Դարձավ դեպի այն վաստակած կինը,
Ցույց տալով մատով մոտիկ շիրիմը.
— Մհերի, ճանաչի՛ր իգիթ Օսմանին.
Նայիր առաջիդ այդ գերեզմանին.
Այդտեղ թաղած է, մի քանի տարի
Առաջ, իմ ձեռքով մեռած գյավուրի
Հոտած մարմինը. երբ որ նրան ես
Թալանում էի, հայհոյում էր մեզ։
Շատ համարձակ էր այն լիրբ գյավուրը,
Բայց երբ Օսմանի կտրուկ կես թուրը
Նրա գլուխը ուսերից պոկեց,
Էլ բան չըխոսեց և խելոք պառկեց։
Գրպանում, ծոցում ոչինչ չըգտա,
Աղքատի մինն էր, միայն այս առա.

Ասաց, գրպանից հանեց դայլուխը,
Մեհրու արյունը սվեց գլուխը.
— Ես պիտի քնեմ, Մեհրի, դու մնա,
Լավ նայիր, որ ձին հեռու չըգնա.
Մինչև հովն ընկնի, այնպես վեր կենանք,
Ասպծուն կանչենք, մեր ճամբեն գնանք։

XII

Մեհրին քարացած, որպես շանթահար
Այն գերեզմանին նայում էր երկար
Ուշքը վերացած, ոչինչ չէր տեսնում.
Ուրիշ երկրում էր ականջին հասնում
Անլուռ աղմուկը մոտիկ առվակի,
Արձագանքն իրանց պատող ծմակի.
Այն ինչ աչքերը փայփայում էին
Ջվարթ երեսով առողջ Մհեին։
Նայում էր Մեհրին, նայում էր միայն,
Եվ ահա բարակ, ողրմուկ մի ձայն
Հասավ ականջին այն գերեզմանից.—
«»Առ իմ արյունը, Մեհրի, Օսմանից»։
Սարսափեց, դողաց և միանգամից,
Ինչպես որ հանկարծ զարթնում են քնից,
Սթափվեց Մեհրին, նայեց դես ու դեն,
Ինչպես նայում է վախեցած երեն,
Եվ մի միտք նրա դեմքըն այլայլեց.—
Խոշոր աչքերում վրեժը փայլեց,
Վայրենի ձևով, զգույշ ու կամաց
Մի քանի քայլով Թուրքին մոտ գնաց,
Ձեռքերը փռած, քնած էր Թուրքը,
Ծանր ու երկար շնչում էր կուրծքը.
Կամաց խանչալը պատենից քաշեց,
Օսմանը հանկարծ բազուկը շարժեց,
Թեթև թռիչքով ետ թռավ Մեհրին,
Խանչալը պահեց գոգնոցի տակին
Եվ անշարժ մնաց, մինչև որ դարձյալ
Օսմանը սկսեց հանգիստ խռմփալ։
Փայլեց պողպատը վառ արևի տակ.
Եվ Մեհրին, ինչպես հոգեհան հրեշտակ,
Խանչալը ձեռքին մնաց խոր քնած

Իգիթի գլխին մի բոպե կանգնած.
Դարձյալ դես ու դեն խենթի պես նայեց,
Ձգույշ կորացավ, շունչն իրան պահեց,
Խանչալի ծայրը դնելով կրծքին
Յուր բոլոր ուժով հարեց դաստակին։
Օսմանը գոռաց, վեր թռավ տեղից,
Մհհրին սարսափած փախս առավ վախից.
Վագրի թռիչքով ցատկեց Օսմանը,
Հասավ ու բռնեց թիկունքի ծամը.
Եվ դարձավ Մհհրին ահից կատաղած,
Դարձյալ թուրքի դեմ խանչալը շողաց,
Մռնչաց ուժգին, մազերը թողաց,
Կրակոտ աչքերն արյունը կոխած,
Կիսաշունչ թուրքը թուրը պատեց.
Ծղրտաց Մհհրին, աչքերը մթնեց.
Վայր իջավ թուրը, նրա հետ Մհհրին
Մի թույլ ճիչ հանեց, խանչալը ձեռին,
Կուրծքը սպառառած, արյունաթաթավ,
Մհեի շիրմի վերա վայր ընկավ.
Վայր ընկավ մեռավ, նաև Օսմանը,
Եվ երեք դարձավ մի գերեզմանը։
Դեռ իրար կողքի հանգչում են այնտեղ
Ջար սպանողն ու սպանվողն անմեղ.
Եվ ամեն տարի գարունը գալով
Հավասար պճնում է նրանց դալարով։

ՀԻՆ ԿՈՒԼՔ

ՏԱՆԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Մենք կարծում էինք թե իր շանթերով
Հըսկում է աստված Սասմա սարերին.
Մենք ասում էինք՝ անթիվ նավերով
Կըգան օգնութեյան մեր ծանըր օրին...
Ավա՜ղ մեր պայծառ հույսերի համար.
Ահա խորտակված, և ահա կըրկին
Նայում ենք անհույս, մենակ, դալկահար՝
Մորթող թըշնամու արյունոտ ձեռքին։
Երկրի մեծերը չեն փոխում իրենց
Մեռելի ոսկրին ողջ ազգը հայի,
Մեր տունն են ուզում, մեր տեղն են ուզում,
Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի...
Նա էլ, որ աստծու անունով եկավ,
Փրկչական խաչով, խոսքով գըթութեյան,
Նա էլ աստըծուն՝ կանգնեց՝ փառք տըվավ,
Որ մենք հոշոտված, տանջված ենք էսքան...
Ու հոսո՜ւմ, հոսո՜ւմ, հոսում է անմեղ
Արյունն-արցունքը տարաբախտ ազգի,
Հոսում ամեն օր, հոսում ամեն տեղ,
Եվ դեռ սոսկալին չի եկել իսկի...
Եվ ահա մենակ, խոցված ու ցավոտ,
Թե մարմնով տանջված՝ հոգով առավել,
Մենք միտք ենք անում մինչև առավոտ,
— Տե՜ր ամենագետ, մենք ի՞նչ ենք արել...

I

Հայի չար բախտը ինձ ներքև բերավ
Խարձըր Գուգարքի ծաղկոտ սարերից,
Իմ հոգին լըցրեց հառաչանք ու ցավ,
Տըխուր երգերի քընար տըվավ ինձ։
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես կըհեծծի
Բուքն իմ ամայի աշխարհքի վըրա,
Անքուն կարոտի դուռը կըծեծի,
Թե՝ քու անբախտը չըկա ու չըկա...
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես սըգավոր
Հայի հեծեծանքն ու բողոքն անվերջ,
Ինչպես պանդուխտի թառանչ սրտախոր
Օտար դրոներում, անհայտ ճամփի մեջ...

II

Իմ միտքն էլ, ավա՜ղ, շըրջում է մոլոր
Հայի հալածված պանդուխտի նըման,
Մենակ ամեն տեղ, տըխուր ամեն օր,
Ցավերով լըցված պանդուխտի նըման։
Կորցրել է վաղուց ամենն, ինչ ուներ,
Փնտրածն էլ, էսպես, չի գըտնում բընավ,
Անքուն չըրի պես գընում է երեր,
Աշխարհքից աշխարհք, մի ցավից մի ցավ։
Ու, ինչպես օտար աշխարհքից դարձող
Կարոտած ճամբորդ, նըկատում է նա՝
Հեռու՜, մըթան մեջ, վառ կարմիր լուսով
Ծաղկում է ծանոթ լուսամուտն ահա...
Մենակ ու խաղաղ ճըրագի առջև,
Ջոր ձեռքը տըված դալուկ ճակատին,
Մտքի ծովն ընկած մտածում է նա,
Հին տառապանքի, հին ցավի որդին։
Գըլխի վերևը տըխուր պատկերներ,
Գըրքե՜ր ու գըրքեր իր շուրջը բոլոր...
Ու ներս է մտնում մի բարի ըստվեր,
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր։
— Ի՞նչ ես միտք անում, վահա՛ն ջան, էդքան,
Ասա՛, քեզ ղուրբան, քո մտքին ղուրբան,
Ի՞նչ ես միտք անում ու հալվո՜ւմ, հալվո՜ւմ...

— Բան չկա, մայրիկ, գըլուխս է ցավում...
Ձե՛, սուտ ես ասում, ինձ չես խաբիլ էլ.
Էդ ո՞վ է, ասա, քո քունը կըտրել,
Էդ ո՞ր սիրտնը, ո՞ր անուշ հոգին...
— Հա՛, գըտար, մայրի՛կ... սիրում եմ մեկին...»
— Տեսա՞ր, որ ասի՝ չես խաբիլ ինձ էլ,
Տեսա՞ր, ինչպես եմ ցավըդ իմացել...
Ինչու՞ ես հապա ծածկում ինձանից,
Ծածկում ինձանից — քեզ սիրող նանից...
Դե ո՞վ է, ասա՛, ես էլ կսիրեմ...
Դե ու՞ր է, ասա... ու՞ր է, որ բերեմ...
Բերեմ, որ էդքան միտք չանես էլ դու...
— Չես կարող, մայրիկ, նա շատ է հեռու...
Նա շատ է հեռու, գերութ֊յան միջում,
Դու չես իմանում, դու չես ճանաչում...
Էնպես մի դըժար տեղ եմ սիրել ե՛ս...
Չես կարող հասնես, չես կարող բերես...
Ու դուրս է գընում հուսահատ, մոլոր
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր,
Աղոթում իրեն Վահանի համար,
Աշխարհքի համար, ամենքի համար...

III

Հայտնըվեց ապա մի օտար տըղա,
Մի ուրիշ տըղա երևաց էլի,
Խոսում են անքուն գիշերներն երկար,
Խոսում են տաք-տաք, մութ, կասկածելի...
— Ո՞վ են, Վահա՛ն ջան, գալիս են քեզ մոտ,
Էդ ինչ տղերք են՝ գունա՛տ, անծանոթ...
Երնեկ իմանամ՝ էդ ինչ եք ուզում,
Էդ ի՞նչ եք էդքան խոսում ու խոսում...
— Պանդուխտ են, մայրի՛կ, ընկեր տըղերք են,
Քըշված, հալածված, ընկած դես ու դեն.
Տուն ու տեղ չունեն, ինձ մոտ են գալիս,
Ջըրույց ենք անում, իրար սիրտ տալիս...
— Իմ անբախտ զավակ, մանկուց վըշտակոխ.
Ընկերներդ էդպես հալածված, անհոգ,
Սիրածըդ հեռու, գերութ֊յան միջում...
Խոսում է մայրը, խոսում, հառաչում,

Ու դուրս է գընում կըրկին շըվարած...
Ամեն տեղ քընած, ամենքը լըռած...
Մենակ՝ մընում է իր անհոգ մարդուն,
Չի գալիս նա էլ, դեռ չի գալիս տուն
Իր պեսների հետ էլի՛ էն անտեր
Գինետանն ընկած ու խոսում է դեռ...

IV

(Գինետաճը)

Կըտրել է վազուց ամեն ձեն ու ձուն։
Գիշերվա կես է։ Հոգնած ու անքուն,
Գըլուխը գինոտ դաղգահին դըրած՝
Գինետան տերն էլ քուն մըտավ թըմրած։
Կեղտոտ լամպարի աղոտ լուսի տակ,
Մեջ տեղը մի գավ, աղքատ ու անկարգ
Սեղանի շուրջը, իրենց անկյունում,
Դեռ երեք հոգի զրույց են անում։
— Ցավ-կրակ դառավ էս լակոտն, ախպեր,
Էլ բան չի ասվում, հետը չի խոսվում,
Ուշքըն ու միտքը միշտ հեռու տեղեր՝
Չես էլ հասկանում, թե ինչ է ուզում...
Հավան չի կենում աշխարհքի կարգին.
Ասում է՝ մարդիկ բըռնության տակին...
Միտս էլ չի գալիս՝ ինչպես է ասում.
Խըրթին, դըրաբառ բաներ է խոսում,—
Էս մեկն՝ էսպես է, էն մեկելն՝ էնպես...
Երկուսից մինը — կամ Նրանք, կամ ես...
Սու՛ս կաց, ասում եմ, էդ ի՞նչ ես անում...
Թե՝ դու հին մարդ ես, դու չես հասկանում...
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Ա՛յ քեզ նոր տըղա՜...
Դե, բաժակըդ բե՛ր,
Մարտիրոս ախպեր,
Բեր մի մի բերան
Կյանք խընդրենք դըրան։
Էդ, ինչ որ դու ես խաբարը տալիս,
Մի ուրիշ տեսակ բան է դուրս գալիս...
Բարի հիշատակ լինի քեզ համար,

Տունըդ շեն պահի ու ծուխըդ վարար»։
Ածում են կոնծում ընկեր ծերերը,
Բայց նոր է բացվել պատմության ծերը։

— Հա՛, ախպե՛ր, ուրիշ բան է դուրս գալիս.
Ես էլ հենց էդ եմ գըլխիս վայ տալիս,
Թե սըրա վերջը ուր պիտի գընա.
Տանից ու բանից եղած ավարա,
Աշխարհքի դարդը շալակն է առել՝
Ամենքի համար դարդաքաշ դառել...
Ընկեր թե օտար, ծանոթ, անծանոթ—
Ով վեր է կենում — վազում է իր մոտ.
— Վահա՛ն, ի՞նչ անենք... Վահա՛ն, ո՞նց
կենանք...
Վահա՛ն, ի՞նչ կասես... Վահա՛ն, ե՞րբ
գընանք...
Գըլխի՞ եք ընկնում՝ «էնտե՞ղ» են գընում...
«Էնտեղ» հո գիտե՞ք, լավ եք իմանում...
— «Էնտե՞ղ», օ՞ֆ, «էնտե՞ղ»—
Կըրակ է անթեղ...
Դե, բաժակըդ բեր,
Մարտիրոս ախպեր.
Արի՛, մի սըրտանց
Կյանք խընդրենք դըրանց...
Ջահել ժամանակ ի՞նչքան եմ ես էլ
Էդ ճամփի վըրա անքուն երազել,
Ի՞նչքան եմ ուզել թե փախչեմ ծածուկ...
Հիմի դըրանցն եք թարիֆ անում դուք...
Ուր գընան՝ աստված բանները աջի,
Ջարը խափանի, բարին առաջի...
Ածում են կոնծում ընկեր ծերերը,
Բայց հեռու է դեռ պատմության ծերը։

— Շնորհակալ եմ, ողջ կենաք, ախպե՛ր,
Էս տեսակ մի բան չեմ տեսել ես դեռ.
Տեղ ունես թե չէ՝ մտիկ չեն տալիս,
Տասը գընում են՝ քըսանը գալիս,
Ինչ որ ճանկում են՝ ուտում են, թափում,
Ամբողջ գիշերը վիճում, աղմըկում,
Ամպի պես ծըխով սենյակը լըցնում...

Էլ ոչ մահճակալ, ոչ տեղ են հարցնում.—
Մինը բարձրանում՝ սեղանին պառկում,
Մյուսը հատակին լեն-արձակ ձգվում...
Ոչ աղբ են նայում, ոչ փոշի, ոչ ցեխ,
Պառկում են էստեղ, պառկում են էնտեղ...
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Թամաշա է հա՞...
Դե, բաժակըդ բե՛ր,
Մարտիրոս ախպեր.
Արի՛, մի սըրտանց
Կյանք խընդրենք դրանց.
Շատ լավ տըղերք են, ես ու իմ հոգին.
Հավան եմ կենում դրանց արարքին.—
Մարդը նա հո չի՝ հենց իրեն նայի,
Մարդը նա է, որ աշխարհքը շահի...
Տեր աստված պահի իրեն խընամում...
Ածում են՝ վերջին բաժակն էլ քամում,
Ջեն հասնում սակայն պատմության ծերը,
Ու միշտ ընկնում է էգուց գիշերը։

V

Դատարկ փողոցով, բարձրը հազալով,
Ինքը իրեն հետ մենակ խոսելով,
Թըրը՛խկ հա չըրը՛խկ, գիշերվա մըթնում
Մարտիրոս ախպերն իր տունն է գընում։
Եվ ուշ գիշերով հասնում է նա տուն։
Ճըրագը վառ է, «նրանք» էլ զարթուն,
Աղմըկում են դեռ կողքի սենյակում,
Էն նոր դուրս եկած երգերն են երգում։
Պառավն էլ անքուն իրեն է մնում,
Ջեռները ծոցին դուրս ու տուն անում,
Ու մարդը շեմքից մըտած-չըմտած
Դիմացն է գալիս հանգած ու հատած։
— Բա՛, գիտե՞ս, ա՛յ մարդ, ի՞նչ իմացա ես,
Գիտե՞ս ինչիցն է մաշվում երեխես,—
Սիրո՞ւմ է մեկին...
— Վա՛յ քու կարճ խելքին...
Ի՞նչ սիրահարված, բա՞ն գիտես իսկի.—
Աղջի համար է միտք անում, ազգի՞.

Ուրիշի համար, խեղճերի համար...
Ի՞նչ սիրահարված, կարճամիտ հիմա՛ր,
Ի՞նչ ես հասկանում՝ ինչ կա աշխարհքում.
Ականջդ մի բաց, տես ինչ են երգում...

(Տղերքը երգում են)

Սև սարերի հետև նըրանք
Տառապում են խավարում,
Լույս են ուզում ու ազատ կյանք
Աստծու ազատ աշխարհում:
Կանցնենք թափով
Սարերն ամպատ,
Կերթանք խըմբով
Մենք նըրանց մոտ:
Է՛յ, հերիք էր, չար ու բռնակալ,
Քանի՞ տանջես խեղճերին.
Խեղճը պիտի ապրի դարձյալ,
Վայն եկել է քու օրին...
. . . . . .
Ազատության որդիքն ենք մենք՝
Թըռած դեպի ապագան:
Էսպես խըմբով սըլանում ենք,
Ո՞վ կըփակի մեր ճամփան.
Կայծակ կըլնենք
Կիջնենք ամպից.
Հեռո՛ւ ճամփից,
Հեռո՛ւ ճամփից...

Հե՛յ, գալիս ենք, ո՛վ տանջվածներ,
Գալիս ենք մենք պինավառ,
Եվ ազատ օր, և՛ կյանք, և՛ սեր—
Ողջ բերում ենք ձեզ համար:
. . . . . .

VI

Դողդոջ ու գունատ պառավները լուռ
Ականջ են դընում: Սարսափ ու սարսուռ
Պատել են նրանց և սարսափահար,
Տեղները սառած, նայում են իրար.
Ի՞նչ է կատարվում իրենց հին տանը,

Ի՜նչ երգ է երգում իրենց վահանը,
Ի՜նչ երգ են երգում էս աղերքը նոր,
Ի՜նչ երգ են երգում անզո՜ւսպ, ահավոր...
Ամբողջ գիշերը կըրակի վըրի
Էն շամփրի նըման, անքուն ու ցավոտ,
Պըտուտ են գալիս անկողնի միջին,
Պըտուտ են գալիս մինչև առավոտ։

—Վահա՛ն ջան, Վահա՛ն, ի՜նչ երգեր են էդ.
Ի՜նչ վըտանգավոր երգեր եք երգում...
Էդ ո՜ւր ես ուզում գընաս դըրանց հետ...
Ի՜նչ է պատահել, ի՜նչ կա էն երկրում...
— Է՜հ, մայրի՛կ, դու էլ՝ ի՜նչ երգեր են էդ...
Ջահել տըղերանց երգեր են էլի...
Ջահել տղերք ենք, միտքներըս թրոչում՝
Հաղար մի հեռու տեղ են մաև գալի...
Ու ժողովները դարձան աղմըկոտ,
Աշնան հավքերի էն տարմի նըման,
Որ դըժվըժում է՝ չըվելուց առաջ
Դեպի արևոտ կողմերը գարնան։
Մի օր էլ հանկարծ աղմուկը լըռեց,
Վահանը չեկավ էն գիշերը տուն։
Ջըկա մյուս օրն էլ, չըկա՜ ոչ մի տեղ,
Ամեն հարուփորձ անցավ ապարդյուն։
Եվ ահա նամակ կորած Վահանից։
Բանում են ,ըշտապ, դողդոջ ձեռքերով.
Ասում է՝ ի զուր էլ մի՛ փնտրեք ինձ,
Էլ մի՛ փնտրեք ինձ ու մընաք բարով...
— Դուք ինձ կյանք տըվիք, դուք ինձ մեծացրիք.
Բայց քանի էսքան ցավ կա աշխարհքում,
Իմ կյանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,
Ջեմ կարող հանգիստ մընալ ձեր գըրկում։
Ցավի աշխարհքում արնոտ ու ահեղ
Ուրիշ նոր կյանք է բացվել ինձ համար.
Ուրիշ հայրեր են մընում ինձ էնտեղ,
Ուրիշ մայրեր են կանչում անդադար...
Ներեցե՜ք, որ ձեզ թողնում եմ էդպես
Անկա՜ր, անխընդում, ծերության օրով,
Ներեցե՜ք ձեր խենթ, խելագար որդուն,
Մոռացեք նըրան ու մընա՜ք բարով...

VII

Որդու նամակը ծընկանը դըրած,
Արցունքը ցամքած էն մաշված դեմքին,
Խաղաղ իրիկվան դեմ ու դեմն ահա
Նըստած է մայրը իր դատարկ շեմքին։
Կատուն է կողքին մըռռում միալար,
Փոքրիկ Սերիկն էլ, կուչ եկած իր մոտ,
Էնպես միամի՛տ, տխո՛ւր, դալկահար
Պոբշկել է մոր դեմքին արցունքոտ։
Նայում է մայրը, նայում է հեռուն,
Էն անհայտ հեռուն, ահավո՛ր, անվե՛րջ,
Ուր գընաց իրեն զավակը սիրուն,
Գընաց «նրանց» մոտ, արյան ծովի մեջ...
— Ո՛վ քաղցրահայաց սուրբ Աստվածածին,
Ո՛վ արագահաս զինվոր սուրբ Սարգիս,
Դուք օգնեք խեղճին, հասնեք նեղվածին,
Դուք տաք հովությունն արար աշխարհքիս.
Հարեհաս լինեք «նրանց», ամենքին,
Ամենքի հետ էլ իմ ճար ու մեկին...
Աղոթք է անում իր մեկի համար,
Աշխարհքի համար, ամենքի համար,
Մինչև թըռչում է ճաճանչը եռին,
Մինչև որ մութը առնում է գետին...

VIII

Մըթնեց։ Կըտրել է ամեն ձեն ու ձուն։
Գիշերվան կես է, խաղաղ լըռություն։
Հին գինետանը, իրենց անկյունում,
Դեռ երեք հոգի զրույց են անում։
— Ի՞նչ ես միտք անում, Մարտիրոս ախպեր.
Լավ կըլնի վերջը՛... բաժակըդ մի բե՛ր...
Բեր մի մի բերան
Կյանք խընդրենք նրան...
Տեր աստված բարի ճամփա տա իրեն,
Նըրա բաց աչքը լինի միշտ վըրեն...
Վատ բանի համար հո չի գընացել...
Ի՞նչ ես մոլորված նըստած մընացել,
Բաժակդ էլ լիքը առաջիդ է դեռ...
Վերցըրո՛ւ, խըմի՛ր, Մարտիրոս ախպե՛ր...

ՀԻՆ ԿՈՒՒՎԸ

ԵՐԿՐՈՒՄ

ՆԱԼԵՐԳԱՆՔ

Հնքիաթն ասում է, թե՝ մի աշխարհքում
Բղխում էր առատ ջուրն անմահական,
Բայց ագահ վիշապն առաջը փակում,
Ծարավ էր թողնում աշխարհքն աննըման։

Նա զոհ էր ուզում սիրուն աղջիկներ,
Որ ջուր բաց թողնի ծարավ աշխարհքին,
Եվ, անմահության ջրրի փոխարեն,
Մարդիկ շատ դարեր արցունք խշմեցին։

Մինչև մի տղա, Լույս երկրից եկած,
Կըռվեց էն գերի աշխարհքի համար,
Հաղթեց, ազատեց աղբյուրը փակված,
Տանջվող հոգիներ փըրկեց անհամար։

Ո՜չ, հնքիաթ չի սա լիքը հըրաշքով,
Եղած թե չեղած մըթին աշխարհքում,
Ճըշգրիտ դեպք է՝ սա տեսած իմ աչքով,
Եվ հնքիաթ չկա մեր անբախտ կյանքում...

Մեր երջանկության աղբյուրը փակած՝
Մեր վարդ քույրերին հոշոտում է նա...
Ա՜խ, ի՜նչքան արյուն, արցունք է թափված
Մեր սիրուն երկրի սարերի վըրա...

I

«Լո՛-լո՛, լո՛-լո՛, մերն են սարեր,
Ծաղկոտ սարեր Տարոնի,
Ծաղկոտ սարեր, ազատ օրեր,
Սերն ու գըգվանք սիրունի...
Լո՛-լո՛, լո՛-լո՛»։

Գըլո՛ւխ տըվեք, գոռոզ սարե՛ր,
Անց է կենում Մուսաբեկ,
Գըլո՛ւխ տըվեք, վախկոտ հայե՛ր,
Ջընջին գյուղեր ու օբեք։
Ո՞ւր կա ոսկի, ո՞ւր սիրուն կին,
Առաջ բերեք ձըլխաբաց.
Ո՞վ կա ընդդեմ նըրա կամքին,
Ո՞վ է կյանքից կըշտացած...
Մըշու երկրում թուր է զարկում՝
Դողում են Վան իր թափից,
Դողում են Վան, մինչ Արզըրում,
Ահեղ թափից, սարսափից...

II

Գըլուխ տըվե՛ք, վախկոտ հայե՛ր.
Ջըրը՛նգ, եկավ Մուսաբեկ.
— Հե՛յ, դո՛ւրս արի, քեշիշ բաբա՛.
Ո՞վ կա տան մեջ, դուրս եկե՛ք...
Ու սըրահի կեսմութի մեջ
Գուճհուպ եկավ քահանան,
Դողդոջելով, ծերուկ ու խեղճ,
Բըռնած սարսափն իր մահվան։
— Հալա՞ն ես ինձ, քեշիշ բաբա՛,
Հապա նայիր մի վերև...
— Աստված է քեզ հավնել, աղա՛,
Աստված կյանք տա ու արև։
— Դե բե՛ր, հապա՛, որ հավան ես,
Աղջիկդ բե՛ր, տուր ինձ կին.
Դե՛հ, շո՛ւտ արա, քեշիշ բաբա՛,
Դուրս բեր սիրուն Շողիկին։

Լուռ կանգնած է ծեր քահանան,
Դեմքը դեղին, միրքի պես,
Միծաղո՞ւմ է լացի նըման,
Թե լալիս է ժըպտերե՞ս...
—Հա՛, հա՛, հա՛, հա՛... հավա՞ն չես ինձ...
Խընդաց խումբը՝ հա՛, հա՛, հա՛...
Ու սոսկալի էն ծիծաղից
Սարսափն ընկավ տան վըրա:

— Ո՛վ չի հավան Մուսաբեկին...
Մի Մուսաբեկ — մի աշխարհք...
Բախտավոր ենք՝ ես... իմ որդին...
Ո՛վ է տեսել էսպես փառք...
Միայն թե, ազա՛, գութ արա մեզ,
Ժամանակ տուր երկու օր,
Որ պատրաստվենք բեկին վայել.
Ոտիդ հողն ենք նորից նոր...
— Մի երկու օ՛ր... բայց իմացի՛ր,
Ետ եմ գալու ես նորից.
Երկինք թըռի՛ր, գետինն անցի՛ր,
Ջես ազատվիլ իմ ձեռքից...
«Լո՛-լո՛, լո՛-լո՛, մերն է Տարոն
Վայելքներով իր բոլոր...
Լո՛-լո՛-լո՛-լո՛...», հանգավ «լո՛-լո՛»-ն
Սարի ետև հեռավոր:

III

Ի՛նչ՛է ղողանջում զանգակը գուժկան,
Գյուղի զանգակը էս անվախտ ժամին.
Կարկո՞ւտ է գալիս մըթնած երկընքից,
Հրդե՞հ է ձըգել գյուղը թըշնամին...
— Ի՞նչ է պատահել, ծերունի տերտեր,
Ի՞նչ ես վըրդովում էս հոգնած խալխին:
— Եկե՛ք, իմ որդի՛ք, եկե՛ք, իմ որբե՛ր,
Երկինքը փըլավ իմ ճերմակ գլխին...

Ու լաց է լինում զանգակը ժամի,
Գալիս է կանգնում ամբողջ Տալվորիկ,
Ու ձայն է տալիս, գոչում ծերունի

Իրենց քահանան ձայնով զարհուրիկ։
— Եկե՛ք, ընկե՛ր-հարևաննե՛ր,
Իմ Շողիկի հարսնիքին.
Ծաղիկ բերե՛ք ալ ու կարմիր
Իր անթառամ պըսակին...
Դուստր եմ պահել ես նազելի,
Սըրտիս խընդում, աչքիս լուս.
Քուրդը եկավ դուստըրս խըլի,
Կյանքը խըլի ծերունուս։
Հայր եք դուք էլ, զավակի տեր,
Մի ճար գըտեք իմ ցավին...
Ու ծերերը՝ չո՛ր, ալեհե՛ր,
Հառաչում են խմբովին.
— Ափսո՛ս Շողիկ, սիրո՛ւն Շողիկ,
Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ...
Վա՛յ խեղճ ծնող, ծեր քահանա.
Քըրդի ճամփեն տառապանք դառնա...

Հընչում է դարձյալ զանգակը ժամի,
Կանչում է, գոչում հայրը ծերունի.
— Հավար ձըգե՛ք հեռու տեղեր,
Ազգ ու ազինք իմանան,
Դըրոշ բանան, զորքեր կապեն,
Թող գա՛ն, հասնեն օգնութեյան...
Եվ զուր ծերունու աչքերը անզոր
Հըրաշք են փընտրում մըշուշոտ հեռվում,
Լուռ են ու դատարկ ճամփեքը բոլոր,
Փոշի չի ելնում հայոց դաշտերում։
Լալիս է սակայն զանգակը կըրկին
Ու գոչում է ծերն առավել ուժգին.
— Լըսի՛ր, աստվա՛ծ, եթե մի օր
Բույր եմ խընկել քո անվան,
Թե դու էլ ես ծե՛ր, ալևո՛ր,
Ու գութ ունիս հայրական...
Բայց ծածկում է դեմքը աստվածն
Հայից դարձած ու խըռով,
Սև սև գիշերն իջնում է ցած,
Լիքը անքուն ցավերով...



Մի էջ «Հին կռիվը» պոեմի ինքնագրից:

IV

Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր,
Ցավի անդունդ անհատակ...
— Աղջի՛կս, ինչո՞ւ չես քընում դեռ,
Ի՞նչ ես լալիս տեղի տակ։
— Չիտեմ, մայրիկ, ինչու էսպես
Քուն չի գալիս էլ աչքիս.
Աչքըս քանի փակում եմ ես՝
Քուրդն է կանգնած առաջիս...
— Քնի՛ր, բալա՛ս, մի՛ վախենար,
Աստված կա դեռ երկնքում.
Քուրդ ու տաճիկ, զարկ ու ավար
Շատ ենք տեսել մեր կյանքում...
— Մայրի՛կ, մայրի՛կ, չե՞ս իմանում,
Ո՞վ է լալիս դուրսն անտեր...
Մայրի՛կ, մի տես՝ չի լուսանո՞ւմ...
Ա՛խ, ինչ ծանր է էս գիշեր...
— Քնի՛ր, բալա՛ս, Որբն* է մենակ
Իր Սըհակին որոնում,
Է՛, քեզ նըման, մի ժամանակ
Նա էլ աղջիկ է լինում,
Հավանում է չար տաճիկը,
Գալիս եղբորն ըսպանում,
Ճարը հատած հեգ աղջիկը
Աստծուն աղոթք է անում.
— Ո՞վ տեր աստված, թևեր տուր ինձ,
Թեթև թևեր թռչունի,
Թռչե՛մ, կորչեմ էս աշխարհքից,
Անգութ ձեռից դուշմանի...
Էն օրվանից ման է գալի
Թևեր առած, անդադար,
Կանչո՛ւմ, կանչո՛ւմ, ձեն է տալի
Իր Սըհակին ջրատար...
Քնի՛ր, բալա՛ս, աստված դեռ կա,
Աղոթք ասա մըտքիդ մեջ,
Հիմի շուտով լիսն էլ կգա,
Էս գիշերն էլ ունի վերջ...

---

* Թռչունի անուն է։

— Թրը՛խկ... Թրը խկ...
— Ով է ծեծում
Կես գիշերին դուռն էդպես...
— Թրը՛խկ-Թրը՛խկ...
— Հեյ, չի՞ս լսում,
Վեր կաց, տերտե՛ր, ներս Թող մեզ...
Ու անլեզու քրրդի նման
Սարսափն հանկարծ ընկավ տուն,
Տեղի տակին կըծիկ եկան
Մանուկները դեռ անքուն:
Մարեց մայրը լեղապատառ,
Աղջիկն հանգավ մոր գըրկում,
Իսկ դուռն ուժգին ու անդադար
Հա զարկում են ու զարկում:
Լույսը ձեռքին ծերը դունատ
Դողդողում է, երերում...
Ձեռքը փակին տարավ հանկարծ,
Դուռը բացվեց խավարում,
Շառաչեցին, շողշողացին
Ձենքերն լուսումն են աղոտ,
Ու զինավառ ներս խուժեցին
Երեք չահել անծանոթ:
— Օրհնյա՛ ի տեր, հայի լեզվով
Ողջունեցին ու մըտան.
Մութ խըրճիթը լըցվեց լուսով
Անակընկալ խընդության:
— Էսպես անժամ, զարիբ եղբա՛րք,
Ո՞ւակից եք դուք դալիս ինձ...
— Հեռու տեղից, Կովկասից...
— Բայց մեր երկիր ամեն անկյուն
Մահվան երկյուղ ու վտանգ...
— Դըրա համար մենք եկանք...
— Իսկ դուք չունե՞ք ձեր աշխարհքում
Տուն, տեղ, ծընող, քույր կամ կին...
— Ունենք, Թողինք ամենքին...

Հայի գիշե՛ր, անքո՛ւն գիշեր,
Լի՛ տանջանքով ու մութով,
Հայի գիշե՛ր, անհո՛ւն գիշեր,
Լի՛ ահավոր խորհուրդով...

ԱՐՁԱԿ

1907

ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ

1896-ի կոտորածի ձմեռն էր։ Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին։ Նրանց մեջն էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը։

— Հայրիկի աչքը կուզեմ համբուրել, խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին։

— Բարով, տեր հայր, աչքը մեկնեց հայրիկը. քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված։

— Ո՞րտեղից կուգաս։

— Սասունի կողմերին. ես Ա-ի տեր Սարգիսն եմ...

— Ա-ի տեր Սարգի՞սը...

— Այո, Հայրիկ։

— Է...

— Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին. մնացի այսպես...

— Է հիմի...

— Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, ես... այնպես, եկել եմ... եկել եմ Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում ...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում։

Երկուսն էլ լուռ էին։

— Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս, գլուխը վեր քաշեց կաթողիկոսը։

— Ամենքը միասին քսան, Հայրիկ։

— Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, պա-

տասխանեց Հայրիկը. այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր։

— Ո՞ւմ վիշտն է մեծ, տեր Սարգիս։

— Հայրիկինը...

— Դե է՛կ, տեր Սարգիս, մոտ է՛կ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ։

Ասավ ու գլուխը խոնարհեց։

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին...

Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը...

1894

ԲՈՐՉԱԼՎՈՒՄ

(Ճանապարհորդական նկատողություններ)

«...Եվ պարզ աչքով ես տեսնում եմ
Հայրենիքըս ծաղկավետ.
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ»։[1])

Լրագիրներում եթե կարդում եք՝ սպանեցին... կողոպտեցին... առևանգեցին... գողացան... կրակեցին... այդ Բորչալվիցն է գրած։

Այդպես է եղել հնումն այդ գավառը և այդպես է այսօր էլ։ Եվ ոչ մի ժամանակ խաղաղությունը տեղ չի գտել այդ սպանությունների և իմ հայրենիքում։

Բայց այնքան աղքատ չէ այդ երկիրը, որ մարդիկ իրար ուտեն։ — Ճոխ բնություն ունի Բորչալուն, ահագին անտառներ, արգավանդ դաշտեր, աղբերաշատ, դալար սարեր, ջերմ ու ջրառատ ձորեր, պղնձի, արծաթի, երկաթի և ապակու հանքեր ու գործարաններ և... աղքատ ժողովուրդ։

Բորչալվի լայնատարած անտառները մարդասպան ավազակների ապաստարաններ են, արգավանդ դաշտերում սոված է բազմատանջ երկրագործը, սարերում անասնապահություն չկա, քարերում մեղվապահություն, որ այնքան գալիս են այս գավառում, ոչ էլ կարգին այգեգործություն կա։ Ինքնաբույս բարատու ծառերի պտուղը համ իրանք են ուտում, համ արջը, սկյուռը, թռչունն ու մրջյունը. եղած այգիներն էլ մշակվում են Նոյ նահապետի սիստեմով։ Թողնենք հանքերն ու գործարանները, նրանք ուրիշին են պատկանում։

Այս ժողովուրդը թեև դեռ 20-ական թվականներին ապըստամբվել, ձեռք է բարձրացրել ճորտության դեմ[2]), բայց

ահագին մեծամասնությամբ այսօր էլ մնում է ակամա ճորտ, շնորհիվ այս գավառում եղած խոշոր կալվածատիրության։

Ամենալավ, բերրի հողերը պատկանում են զանազան իշխանների, թավադների ու աղալարների։ Այդ հողերի վրա բահրով ապրում է ռանճպար ժողովուրդը, հերկում, ցանում, հընձում... վաստակի մի քառորդը յուր տիրոջը տալու պայմանով։ Դեռ այդ տուրքի հետ գյուղացին կատարում է հողատեր աղայի հազար ու մի ծառայությունները, հրամանները և փեշքաշներ ու կաշառքներ է տալիս, որ ամուր լինի յուր հողի վրա։

Այս հողերը գլխավորապես գտնվում են Զորագետի ներքին հոսանքում։ Զորագետը որքան գիժ է Լոռու ձորերում, այնքան խաղաղ և համբերաթաց է յուր ներքին հոսանքում, և, իշխանների հողերը ոռոգելու համար՝ բազմաթիվ պատւյաններ է անում այնտեղ — Բորչալվի արևակեզ դաշտում։

Զորագետի վերին հոսանքում իբրև կալվածատեր հայտնի են Էջմիածնի և Հաղբատ-Սանահնի վանքերը։ Էջմիածնի Մարցա անտառապատ կալվածքը 20,000 դեսյատինից ավելի է։ Այս տարածության վրա մի քանի հայ գյուղեր կան, որոնք վանքին տասանորդ են տալիս ամեն տեսակ եկամուտից։ Այս կալվածքն ընկած է անօգուտ և անտառը թողած է գյուղացիների կացնի խընամքին։ Իսկ գյուղացին անտառի ու ծառի ամենաանգութ թշնամին է։ Նա չի հասկանում, որ այդպես անելով զրկում է յուր հայրենիքի բնությունը զարդից, ստերն աղբյուրներից, որոնք հետզհետե ցամաքում են անտառների պակասելով, սրանց հետ փոխվում է և կլիման։ Գյուղացին կլեպը (կեղևը) քաշում և չորացնում է դարևոր ընկուզենին մի չուխա ներկելու համար, հոնի ծառը ջարդում, ճղնակոտոր է անում հոնը քաղելու համար, և բոլոր պտղատու ծառերի հետ վարվում է ճիշտ Կռիլովի խոզի նման։ Հենց որ բացվում է գարունը, ծառերն սկսում են բողբոջել, գյուղացին կոտորում է ծառերի թարմ ոստերն ու բողբոջները՝ (բոխ) անասուններին ուտացնելու համար։ Եվ այն էլ ի՜նչպես է կոտորում, պետք է տեսնել ու զարմանալ, թե որքան այլանդակ գաղափար ունի գյուղացին անտառի մասին, որին պարտական է յուր հազար ու մի բարիքները... յուր առողջությունը։

Երանի Էջմիածինն ուշք դարձներ յուր այս նշանավոր կալվածքի և նորա մեծ անտառի վրա, որ ահագին եկամուտի աղբյուր կարող է լինել։

Կալվածատերերի ընդարձակ հողերին հարևան արքունի գյուղեր կան, որոնց վարելահողերն այնքան սակավ են, որ երկրա-

գործը չի կարողանում տարեմեջ հանգստություն տալ իրան հոգնած հողերին, և ամեն տարի միևնույն հողը ցանելով ուժասպառ է անում: Այսպիսի ուժասպառ հողերն արհեստական կերպով ուժեղացնելու (փեյնելու—անասունի աղբ ածելու) սովորությունն էլ նոր է մտել այստեղ: Բայց դուք տեսեք, թե որքան է հաստ գյուղացու գլուխը: Յուր աչքով տեսնում է, որ փեյնած հողը առատ բերք է տալիս, յուր դռանն էլ դիզած է այդ փեյնից. ասում ես — ախպեր, խո քու աչքով տեսնում ես, ինչ լավ բան է փեյնելը, իսկ դռանդ կիտած թողնելով այդ միևնույն փեյնը քեզ կհիվանդացնի, տար ածա արտդ:

Տես ինչ պատասխան ես ստանում — «Որ աստոծ տալու ըլի, փեյնի՞ն մարիկ կտա»: Ահա թե որքան ծանր է ընդունում հայ գյուղացին նույնիսկ տնտեսական որևէ բարեփոխություն:

Հողի կողմից ավելի բախտավոր են ռուսներն ու մալականները, որոնք թեև ուշ եկվորներ են, բայց լավ և ընդարձակ տեղեր են գրաված, և բացի ունեցածը համայնական ուժով նորանոր հողեր են գնում:

Սրանց օրինակին հետևելով հայ կաթոլիկներն ևս, իրենց Սարգին վարդապետ Յազըճյանի հորդորանքով 1892 թվին նշանավոր հողեր գնեցին:

Տոկուն և ժրաջան գերմանացի գաղթականներն էլ այգեգործությամբ և առհասարակ օրինակելի գյուղատնտեսությամբ ապահովել են իրենց և ապրում են քաղաքավարի, գեղեցիկ տներում, առանձնացած, ջոկված մյուս ազգություններից, սառն ու մռայլ բնավորությամբ:

Դեռ չի անցել նրանց ահը, բայց անցնում, թուլանում է ժողովրդի մեջ արիության ոգին: Ջքավորությունը խեղդում է բորշալվեցուն:

Բորչալուն Թիֆլիզի նահանգի բոլոր գավառներից ամենաաղքատն է: 1894 թվին ոչ մի գավառ Բորչալվի չափ (346,596 ռուբլի) պարտ (недоимка) չի մնացել գանձարանին, միևնույն ժամանակ և ոչ մի գավառում Բորչալվի չափ հանցանքներ չեն գործված: Հանցանքներն էլ գլխավորապես սուր տեսակի հանցանքներ են, որի մեծ բաժինը թուրքերին է ընկնում:

Ահա ձեզ շոշափելի եղրակացություններ Բորչալվի տնտեսական և բարոյական դրությունից:

Բորչալվում, մանավանդ Լոռի, հաճախ կրկնվող կարկուտը, հացի պակասությունը գյուղացուն ճտահար խեղդել է պարտքի մեջ: Սովը վաշխառու հարուստի ընկերն է: Սովն աղքատ գյուղացուն տանում է վաշխառու եղբոր դուռը, և այս բավական է...

Թեկուզ մի մանեթ առնի գյուղացին — էլ չի պրծնելու յուր պարտքի տակից: Զարմանալի խորամանկ են այդ վաշխառու հրեշները: Մի օր յուր ժամանակին գյուղացին տանում է յուր պարտքը ետ տալու. «Տո, ո՞վ ա քեզանից փող ուզում, տար բանացրու. մի ուրիշ ժամանակ կունենաս կտաս, հիմի էս սհաթին ինչ ես վռազում, ուրիշ պակասություն կունենաս, տար քու պակասությունն արա...» այսպիսի սրտացավ բարեկամի նման վաշխառուն ետ է տալիս փողը գյուղացուն անխիղճ տոկոսով, տոկոսը տոկոսին բարդում, մի քանի ամսում աննկատելի կերպով մեկ էլ տեսնում ես բանն այնտեղ է հասել, որ գյուղացու ունեցած չունեցածը վեր է գրում պարտքատերը:

Այսպիսի հրեշներին ժողովուրդը հաճախ «հայր» է անվանում: Հիրավի, որդուն արժանի հայր: Ինքը ժողովուրդն էլ ոչնչով պակաս չի հորից: Ընկած կլյավուզների և ինտրիգների ետևից: Որ խոզարածի մոտ էլ որ գնաս, զակոնի ու ստատյաների անունով է խոսում: Տգետ, անտեղյակ օրենքներին, և սակայն շարունակ հանցանքների մեջ բռնված նա դեգերում է ադվակատի, խնդիր գրող, ճանապարհ ցույց տվող, գործն առաջ տանող չինովնիկների, աղաների և պիսերների դռներին: Ամբողջ Բորչալուն լիքն է այդպիսի մեծ ու փոքր աղաներով ու մեծոլաններով: Դրանց բոլորին — իրենց շռայլ ծախսերով — ժողովուրդն է պահում, այն ժողովուրդը, որ չի կարողանում ամոթն ուրեսին պահել յուր ընտանիքը:

Իրան անհայտ, անծանոթ օրենքի և դատաստանի առաջ կանգնած բորչալվեցին ինչ ուզեք կտա ազատվելու համար, թեև ազատվելը նրան ավելի թանկ է նստում: Շատ անգամ մի որևէ անմեղ բանի համար պարտք են անում, ահագին փողեր մսխում, և դուք չեք կարող նրանց բան հասկացնել, այնքան կուրորեն հավատում են իրենց աղաներին ու մեծոլաններին:

Երեք տարի առաջ մի հայ «մեծոլան» լոռեցոնց հայտնել էր, թե ամեն մեկդ հարյուր մանեթ տվեք ինձ, բոլորիդ որդիք ես ազատեմ զինվորակոչից: Լոռուց զինվորակոչին կանչում են մի քանի հարյուր հոգի, և այդ մի քանի հարյուր հոգուց պետք է 10-15 զինվոր վերցնեն:

Հասնում է զինվորակոչի օրը: Ամեն մի լոռեցի տղատեր հարյուր մանեթ է տանում տալիս աղին: Անհնար է լինում համոզել այդ մարդկանց, թե բոլորին զինվոր չեն տանելու, մի քանիսին են տանելու, և թե՝ ում որ ընկնի, նա չի կարող ազատվել, ղուր են այդ փողերը տանում:

Չէ՞, ասում են ու տանում հարյուրանոցները:

Ջինվորակոչն անցնում է։ Որոշյալ թվով ընկածներին տանում են, մյուսներին թողնում։ Ժողովուրդը առանձին շնորհակալություն է հայտնում աղային և նոր պատիվներ անում, որ իրանց տղերանց ազատեց։ Ընկածների հայրերն էլ են շնորհակալություն անում աղին, իրանց մխիթարելով, թե «աղեն շատ չարչարվեց, ամա իրանց բախտը կարեց ոչ»։

Հիմա եկեք տեսեք այս ժողովրդի տանուտերը, քյոխվեն, գյուղական դատավորը..., որոնք հրապարակում իրենց անհայտ զակոնի անունով են գոռգոռում, իսկ իրանց տներում գողերի հետ են խորհրդակցում, որոնք ոչ մի օրենք ու արդարություն չեն ճանաչում ու հասկանում բացի կաշառքն ու մարակը։

Որքան էլ արդար լինի մեկի բողոքը, կարող է ենթակա լինել տուգանքի ու ծեծի, եթե հակառակորդն առաջուց յուղ է քսել տանուտերի դնչին։

Կորչում է մեկի ձին, գողանում են անասունները և այլն։ «Ի՞նչ կտաս, որ ապրանքդ գտնեմ, հանեմ», առաջարկում է տանուտերը։ Ապրանքատերն, իհարկե, մի բան է տալիս, ինչ որ ուզում է տանուտերը, և, հիրավի, ապրանքն նա է ստանում։

Ի՞նչ եք կարծում, ո՞վ էր գողացել այդ ապրանքը։— Անպատճառ տանուտերը կամ տանուտերի սեփական գողերը։

Դեհ, գնացեք բողոքեցեք այսպիսի տանուտերից, տեսնեմ ինչ կտանեք ձեր տունը։ Աղաներից ամենամեծերը սրանց հովանավորներն են, որովհետև սրանք ավելի յուղալի են, քան հասարակ գյուղացին։

Սակայն ժողովուրդը բողոքում է կառավարիչների ու դատաստանատների դռներին չոքած։ Բայց չկարծեք թե նրա բողոքը արդարություն է պահանջում։— Ո՛չ, այդ դեռ շատ հեռու է այսքան ընկած մի ժողովրդի հոգուց։ Այդ բողոքն էլ մի ուրիշ կուսակցություն է, դա էլ մի ուրիշ տանուտեր է ուզում, որ գուցե ավելի վատթար լինի, քան առաջինը։

Տվեք այդ արդարության անունով բողոքողներից ամենաթմբդին թեկուզ մի գզրի պաշտոն և կտեսնեք թե ինչ պատուղ է, կամ ինչ է նշանակում նրա բերանում «արդարությունը»։

Թողեք մարմնավոր իշխանության դռները, ձեզ ուրիշ աղմուկ ցույց տամ. տերտերների և տերտերացու տիրացուների գործեր։

Մի որևէ 10—20 տուն աղքատ, ողորմելի գյուղացիներ, համախոսական թերթ կազմած, դիմում են հոգևոր իշխանությանը, թե մեզ վրա քահանա ձեռնադրեցեք այս ինչ տիրացվին։ Համախոսականի մեջ հավատացնում են, որ ամեն կերպ ապահով է

իրենց ապագա քահանան, և խոստանում են ամեն բան տալ: Քահանայացուն էլ գոհ է: Այս խնդրի հետևից քարշ են գալիս սինոդի, կոնսիստորիայի ու հոգևորականների դռներին, էլ հանդրստություն չեն տալիս, անդադար կրկնելով իրանց սովորական սպառնալիքը, «եթե չձեռնադրեք — կթուրքանանք»:

Մյուս կողմից էլ տիրացուն է փորը դեմինը քսում, աղաչում, պաղատում, արագ խմացնում, միջնորդներ դցում, ունեցածը ծախում, կաշառքներ տալիս, պարտքի տակ ընկնում... վերջապես ձեռնադրվում է:

Հիմի ի՞նչ անենք:—

Ի՞նչ ուտի տեր հայրը, ինչով պահենք, ինչով գոնե մի փարաջա առնի իրան համար, որտեղից տա հոգևոր իշխանության ուղարկած շարականի 60 ռուբլին, «Արարատի» բաժանորդագինը, յուր ձեռնադրության պարտքերը...

Ադամն ինչ ուներ Եվին ինչ տար:— Սկսում են ժողովուրդ ու քահանա իրար ուտել. ժողովուրդն այսքան է տալիս, քահանան շատ է ուզում, ժողովուրդը չունի, քահանան բողոքում, աղերսելով ուրիշ ժողովուրդ է պահանջում կամ մեռելը վեր դրած թողնում է, մինչև յուր ուզած վարձն ստանա...

Սրանից հետո քահանան սկսում է օրհնանքի տեղ անիծել — հայհոյել, ժողովուրդն էլ յուր կարգին:

Եվ այսպիսի քահանաներ ավելանում են օրեցօր, և այսպիսի քահանայության համար գլուխ են պատռում ժողովուրդ ու տիրացու:

1893 թ. ամառը Թիֆլիզի կոնսիստորիայի անդամ բար. Հովհ. քահ. Մարտիրոսյանը քննում էր Լոռու վիճակում տասը դործ: Երկուսը երկու վանահայր վարդապետների (ընդամենն երկու վարդապետ կան այս վիճակում) վրա էր, որոնց վարք ու բարքից բողոքել էր ժողովուրդը, մնացածը տերտերների ու տերտերացուների դործեր էին: Այդ դործերն այնքան էին բարդվել և սուր կերպարանք ստացել, որ սինոդն ու կոնսիստորը վճռել էին տեղն ու տեղը քննել:

Ես հետաքրքրված ուղեկցում էի քննիչ տեր Հորը: Ժողովուրդը գյուղերում երկպառակված, բաժանված կռվում է իրար դեմ, ամեն մի կողմը մի տիրացվի է ուզում քահանայացնել:

Բայց ինչո՞ւ են սրանք մեկին ուզում, նրանք մյուսին: «Ընչի պտի», իրանց լեզվով պատասխանենք: Պարզ անձնական հաշիվներից են բխում այս ընտրողների համակրությունը կամ հակառակությունը, և բոլորովին չնչին է նրանց գաղափարը քահանայի մասին, որի պաշտոնի ձևական և մեքենայական կողմն է

նրանց միայն հասկանալի։ Նրանք զարմանում են, երբ որ լսում են, թե քահանան պետք է հոգա իրենց բարոյական և անտեսական դրության մասին։ Դառը փորձերից հետո թերահավատ են դարձել, չեն հավատում որևէ պաշտոնյայի սրտացավության, անկեղծ, անկաշառ ծառայության կամ անձնուրացության հօգուտ ժողովրդի. չեն հավատում, որ աշխարհքում կարող է այդպիսի բան լինել։ Այնպես որ նրանց համար մին է, ով լինում է լինի, մի բան որ, միևնույն բանը պետք է անի — ավելի լավ է, որ իրան բարեկամը լինի։

Փորձերով կազմած այս համոզմունքը շատ անարդարություններ և սխալներ է անել տալիս, մանավանդ այժմ, երբ հաճախ քահանայական ախտյանների բարոյական ուժերը շատ են իրարից տարբեր լինում։

«Քահանան թե ագետ ըլի, թե ուսումնական, երկուան էլ պետք է թաղեն, կնունք անեն, ժամ ասեն... ավել խո բան չեն անելու։ Երկուսի թաղածն էլ թաղած ա,— ուսումնականը խո խորը չի թաղում, ագետն երես, կամ ուսումնականը խո մեռոն չի քըսում, ագետը ձեթ»...

Այսպիսի դատողությամբ քանդում է ուսումնական և ագետ քահանայի միջի պատը և երկուսին էլ դնում մի տախտակի վրա։

Բայց այդ նույն գյուղացին քո առջև փիլիսոփայություններ կանի, տեսականապես կպաշտպանի ուսումնական քահանայի խնդիրը, քանի որ գործ չկա. հենց գործին եկավ թե չէ, կբարձրացնի յուր ահագին աղմուկը հիմար պատճառաբանություններով։ Այն ժամանակ գլուխ պետք է լինի, որ նրան բան հասկացնի։

Ա. գյուղացի[3]) պ. Տ. Վ-յանցը[4]), Ներսիսյան դպրոցն ավարտած և առանձնապես զարգացած մի պարոն, ուզում է քահանա դառնալ յուր հայրենի գյուղում, որ ընդամենը 55 տուն է։ Այստեղ հացի, սևիական կաշվի ապահովության խնդիրն արհամարհված է մինչև անգամ և բոլորովին ուրիշ ցանկություններ են առաջնորդում պարոնին. բայց դուք տեսեք, թե ինչ ժայռեր կան այդ վարդագույն ցանկությունների առաջին։

Գյուղի մի մասը երդված հակառակորդ է կանգնել երիտասարդին և նրա դեմ դուրս է բերել յուր ծերունի քահանայի որդուն — մի կատարյալ ագետ մարդ, մի իսկական հովիվ — իրանցից մեկը։

Բողոքել են սինոդին պ. Տ. Վ-ի դեմ, նրա խնդիրն անվանել կեղծ, արաղով գլուխ բերած, իրան անբարոյական և այլ հաղար

ու մի անասելի և անպատմելի վատ հատկություններ ուներ, որ իրանց քաջ հայտնի է, և որը կապացուցանեն երդումով։

Այս գործը ձգձգվել է տարիներով, մինչև սինոդը քննություն է նշանակել։

Հիմա քննիչը նստած, այդ բողոքարկուներին հրավիրում է երդվելու և հաստատելու իրանց խոսքերը։

«Մենք օրթում չենք ուտիլ, աղաղակում են գյուղացիք, էն ա մի անգամ ինչ-որ գրել ենք, հլե էն ա... գրել ենք, որ դա լավ մարդ չի, դրան ուզում չենք, էլ ինչ եք ևկել հարց ու փորձ անում...

— Խի՞ (ընչի) չեք ուզում, հարցնում է քննիչը։

— Խի պտի...

— Պատճառն ի՞նչ ա։

— Պատճառն էն ա, որ ուզում չենք։

— Էս, ձեր խոսքե՞րն են, ինչ-որ գրել եք թղթում։

— Հա՛, հլե մեր խոսքերն են...

— Դե ևկեք, երդումով հաստատեցնեք, եթե ձեր խոսքերը ճշմարիտ են։

— Մենք օրթում չենք ուտիլ, հլե ինչ-որ գրել ենք էն ա...

Տանուտերի օգնությամբ վերջապես քննիչը երդվեցնում է կամակոր գյուղացիներին. այստեղ արդեն երգերը փոխեցին. տես ինչ են ասում.—

— Դու ինչու չես Տ. վ-ին ուզում, հարցնում է քննիչը մեկին։

— Ես նրա համար չեմ ուզում, որ դա սաթևեան ութ հազար մանեթ փող ա ստանում, մեր եկեղեցուն ինչի չի մի նվեր տալիս, թե լավ մարթ ա։

— Ութ հազար չի լինիլ, գուցե ութ հարյուր է*, հարցնում է քննիչը։

— Չէ՛, ես գիտեմ—ութ հազար։

— Ա՞յդ է քո պատճառը։

— Հրամանք ես. մին էլ էն ա, որ դա խո տերտերի տղա չի, որ ինքն էլ տերտեր դառնա։

— Էլ ուրիշ բա՞ն ունիս նրա դեմ ասելու։

— Ո՛չ... էս միթե քիչ ա։

— Դո՛ւ ինչ ունիս ասելու, հարցնում է մյուսին։

— Ես էլ էն եմ ասում, որ դա թե տերտեր դառնալու միտք ուներ, ընչի չէր մի ստաքան արաղ վեր ունում, գալիս իմ տու-

---

* Պ.Տ. վ-ն մի տարի յոթ կնոջ հետ ուսուցչություն է արել Ալեքսանդրապոլ 800 մանեթով։

նը—հլա մի երկու հետ էլ խնդրվում, որ ես էլ իրան կողմն էի խոսացել։

— Էլ ուրիշ ինչ գիտես նրա մասին։

— Էլ ուրիշ բան չի գիտեմ։ Դե նա ուսումի գնացած էր, նոր ա եկել. իսկի թամամ ճանաչում էլ չեմ։

— Բաս ինչի ես խնդրի տակին ստորագրել—թե մենք բաջ ճանաչում ենք, անբարոյական է ևն։

— Նրա համար, որ խափանեմ դրա գործը։

— Ընչի խափանես։

— Դե էնա էնհենց խափանեմ էլի։

Մի ուրիշն է առաջ գալիս։

— Ես բան չի գիտեմ, տերտեր ջան, մեր տղերքն ասին արի ձերք քաշի, ես էլ ձերք քաշեցի. համի դու էլ ինչ-որ ասում ես, թող քու ասածն ըլի։

Գալիս է հետևյալը։

— Մեր տերտերը 50 տարի մեզ վրա քահանայութին ա արել. դրա խաթեր էլ ես ուզում եմ, որ նրա տղերանցից մենին քահանա շինենք, որ նրա ծուխը չկարի...

Այս բոլորից հետո հայր քննիչը դիմեց ժողովրդին, յուր զարմանքը հայտնեց, որ այսպիսի պատճառներով ժողովուրդը հակառակում է, ուզում է խափանել պ. Տ. Վ-ի ձեռնադրությունը, և որ ժողովուրդը չի հասկանում յուր օգուտը, առաջ է քաշում մի տգետ հովվի և չի ընդունում մի ուսումնական մարդու քահանայութիւնը։

— Ուսումնական ա, թող գնա իրան ուսումը կարդա,— աղաղակում է ամբոխը և յուր անմիտ, ծիծաղելի պատճառաբանութիւններով, որ հիշեցի (և որ մուծվում են քննութեան արձանագրութեան մեջ), գնում է սինոդ, գալիս կոնսիստոր—բան ու գործ թող արած, հույսերը կաշառքի վրա դրած։

Բորչալվեցին այնքան է սովորել կաշառքին, որ չի հավատում, թե առանց կաշառքի կարող է գործ առաջ գնալ աշխարքումը։ Նրա կարծիքով աստված էլ աշխարքը կաշառքով է ստեղծել։

Մի գյուղում քննչին կաշառք առաջարկեցին. քննիչը հրաժարվեց, միայն հավատացրեց, որ նրանց գործը լավ կերթա։

— Չէ՛, մեր գործը վատ կերթա, որ աջահամբույր* չես վեր

---

* կաշառքը զանազան անուններով են տալիս,— աջահամբույր, չայի փող, ճամբի ծախս և այլն։

առնում մեզանից, տրտնջում էին գործատերերը. քննիչը, դատավորը որ սաղվաթ, փեշքաշ չընդունի, ընչի ա պետք...

Այս խոսքերը ես լսել եմ իմ ականջով գյուղի առաջավոր մարդկանց բերանից: Ո՜րքան շատ բան են ասում այս մի քանի խոսքերը ժողովրդի տեսած արդարադատության մասին, ո՜րքան արդար ձայներ ու բողոքներ պետք է խեղդված լինեն այս տեղերում, ո՜րքան ճնշված ու տանջված չունևորը, ո՜րքան ընկած, մեռած խղճի և դատի նշանակությունը այնտեղ, ուր ստեղծվել են այս խոսքերը:

Եվ շատերը հրաժարվում էին քննությունների ժամանակ հանցավորներին մեղադրելուց:

— Ինչու չես ասում, ինչ որ գիտես, հարցնում է քննիչը:

— Ի՞նչ ասեմ, տեր հայր, ինչ մեղք էլ վրեն հաստատենք, էգուց կերթա բարձր կաշառք կտա, ինքը կպրծնի, դուր մենք վատամարդի կդառնանք:

Սրանք դատարկ խոսքեր չեն, անձնական փորձերից հետո է խոսում այս գյուղացին:

Այս քննությունների, աղմուկների ժամանակ հանկարծ առաջ են գալիս մի քանի գյուղացիներ: Բոլորը լռում են: Սրանցից մեկը երկյուղածությամբ ծոցից մի թուղթ է հանում, մեկնում հայր քննիչին: Այդ էլ ուրիշ խնդիր է. ժողովուրդը դրանով աղերսում է հոգևոր իշխանությանը, որ իրենց գյուղում մի ուսումնարան բացվի:

Այստեղ, այս անակնկալ րոպեին, մարդու սիրտ հանկարծ ճխում, թունդ է առնում և ակամա դուրս է թռչում — «ահա՛ քո խնդիրը, ամեն լուսից ու բարուց զրկված ժողովուրդ, ահա քո փրկության անունը»...

Բայց ի՞նչ... խոսում են, խոստանում, խնդրում, աղաչում, պաղատում և վարժապետին տարեկան հարյուր մանեթից ավելի չեն կարող վճարել, ուժ չունեն:

Արդյոք այսպիսի տեղերում լա՞վ չէր լինիլ բաց անել ուսումնարաններ էժանագին վարժապետներով, ուսումնատենչ գյուղացու երեխան դրաճանաչ անելու համար:

Վերջապես շատ է խավար, շատ է ուշադրությունից զրկված. այս ամենաազուրկ, ամենաաչքից ընկած վիճակն է Թիֆլիզի թեմի, թեև տված արդյունքովն առաջնակարգ:

Ուսումնարանները պռշավոր աստղի նման այստեղ այնտեղ երևում են ու կորչում: Հոգևոր իշխանությունը ուշադրություն չի դարձնում, իսկ ամբոխը ուսումնարան չի պահիլ. դուք միք հավատալ նրա աղերսալի խնդիրներին. նա ինքնիրան զոհաբերու-

թյուն չի անիլ իրան չհասկացած բաների համար: Նա չար խաղեր կխաղա այդ յուր խնդրած ուսումնարանի գլխին, կքանդի յուր ձեռքով, և դուք կզարմանաք:

Այն գյուղացին, որ տարին մի քանի անգամ յուր երեխանց բերանից կտրում փեշքաշներ է տանում դանդաղան աղաների, պարտք է անում—կաշառքներ է տալիս, փորացավ է ընկնում, երբ հերթը գալիս է ուսուցչի ռոճկին:

Թող մեր գյուղական ուսուցիչներն ասեն:

Դ. գյուղում[5]) ուսուցիչն ամբողջ տարին սրանից-նրանից մուրացկանի նման ալյուր ուղելով էր ապրել. ռոճիկը չէին տալիս գյուղացիք. երբ հ. քննիչը այդ մասին բացատրություն ուզեց հոգաբարձուներից, վերջիններս իրանց զարմանքն էին հայտնում, որ տեր հայրն այդպիսի «պարապ բաների» համար է ընկնում, այդպիսի «սարսաղների» համար գլուխը ցավացնում:

Օ. գյուղում[6]) ուսուցիչը արագ էր խմացրել հոգաբարձուին, որ կարողանա ռոճիկ ստանալ: Այս լսելով մյուս հոգաբարձուն էլ էր գնացել արագ պահանջել վարժապետից. վարժապետը մերժել էր սրանց ալ. հոգաբարձուն ծեծել էր հանդուգն ուսուցչին և ռոճիկի հաշիվը վերջացել էր սրանով:

Այդ գյուղի ուսուցիչներից շատերն են այսպիսի ռոճիկներ ստացել:

Հ. գյուղացիք[7]) ուսուցչին ռոճկի փոխարեն խոստացել էին կեսօրավար ցանած կարտոֆիլ և երկու այծ, հավատացնելով, որ այդ ռոճկից ավելի կբռնի: Խեղճ Թիֆլիզեցի երիտասարդն էլ հավատացել էր: Հակառակին կարտոֆիլն էլ այն տարի լավ չէր եկել:

— Դե քու բախտիցն էր, մենք ինչ անենք, վարժապետ ջան, վարժապետի սիրտն առնում են գյուղացիք ու ճանապարհ դնում:

Անբախտ ուսուցիչը ինձ պատահեց Ջալալօղլի՝ հետը երկու քոսոտ այծ, որոնց ֆուրգունչին չէր համաձայնվում վերցնել Թիֆլիզ տանելու:

Այսպիսի առակներ ուսուցիչներն ավելի շատ գիտեն: Իսկ ապառիկներ, որքան կուզեք:

Հայրենակիցներիս մեղքերը թեթևացնելու համար այստեղ դարձյալ հիշեցնում եմ նրանց աղքատությունը:

Աղքատություն եմ ասում, որ օրերով հունձ անես կիզող արևի տակին, դիշերը խորոմես, և տաժանելի աշխատանքից հետո հոգնած, ուժասպառ, երբ սիրտդ գնում է սուլածությունից, աստծուն փառք տաս քարից փափուկ ցամաք հացի համար, այն էլ այնքան չլինի, որ փորդ կշտանաս: Տանջվում են, մաշվում, և

անունդ չեն առնում, որ պակասած ուժերը կազդուրեն։ Ամիսներով յուղալի կերակուրի երեսը չեն տեսնում, իսկ մսով միայն այն ժամանակ են լիանում, երբ անասունների կոտորած է լինում. ուտում են անխտիր հիվանդացա՜ծ անասունի միսը, առանց մտածելու հիվանդության մասին։

Հիվանդություններն ու մոլությունները այս ժողովրդի կյանքի հարազատ եղբայրակցություններ են։ Սիֆիլիսը (տիրամոր ցավ) և օնանիզմը հայտնի են ամենախուլ անկյուններում, իսկ անառնամոլությունը զարմանալի տարածված է թե ամուրիների և թե ամուսնացածների մեջ։

Այս խորին ուշադրության և ցավակցության արժանի իրողություն է։ Դեպի յուր կրքերն անփույթ, տգետ, վայրենի ու մոլի ժողովուրդը քայքայվում է բարոյապես և ֆիզիկապես, հալվում, հյուծվում է յուր ծածուկ ախտերի մեջ և հոգացող չկա նրա մասին։

Ապրում են կեղտոտ, ավելի կեղտոտ, քան իրանց անասունները. մարդիկ կան, որ մկրտվելիս ավազանում են լողացել, մեկ էլ մեռած ժամանակ պետք է լողացնեն. նրանց մարմինը 50—70 տարվա ընթացքում երկու անգամ է ջուր տեսնում։

Հապա ինչպես չհիշենք արբեցողությունը, որ շարժողություն, և մի տեսակ ճիվաղային կյանք է տալիս այս այլանդակ պատկերին, թեև սա հավասար չի տարածվում ամեն կողմ։

Այս բոլորից հետո ձեր առաջ կանգնում է վտիտ, կորաքամակ և ապուշ նոր սերունդը, մի խիստ, աչքի ընկնող կոնտրաստ—հակապատկեր ներկայացնելով յուր հայրենիքի հսկայական բնության հետ։

Մինչդեռ նույն գյուղերում մեզ պատահեցին հարյուր տարին անցկացրած առույգ ու վիթխարի հին մարդիկ։

Այս ժիր ծերունիների զվարթ զրույցները, սուր հիշողությունը, կորով խելքն ու դատողությունը, գործի աշխույժն ու եռանդը բարձր աղաղակում են հին առածի մասին — «առողջ մարմնի մեջ առողջ հոգի»։

Ագ. գյուղում[8]) մեզ մոտ նստած զրույց էր անում մի հարյուր տարեկան ծերունի, երբ ներս մտավ նրա մեծ եղբայրը 105 տարեկան։ Փոքր եղբայրը վեր կացավ, տեղը տվեց մեծին, ինքը մնաց կանգնած մինչև մեծ եղբայրը հրավիրեց նստելու։ Մեզ հետ սկսեց խոսալ մեծ եղբայրը Պասկևիչից, Լիսանևիչից, Երևանու պատերազմից։

— Մենք իգրհատցի ենք բնիկ, պատմում էր ծերունին, Զավրովանց ճորտն էինք։ Մի օր կալ կասելիս մեր աղեն եկավ, թե

էս հադաղին եղնիքը բաց թողեք, բերեք իմ կալը կասեցնեք։ Ողորմածիկ իմ բիձա Ջիլավն ասավ, կացի, էսա մեր կալն էլելա, պրծնեմ, եանա բերեմ քունը կասեմ։ Նա թե հլե չէ՞, էս սհաթին ձեր կալը բաց թողեք, եկեք իմը կասեցնեք։ Էստեղ հակառակութինն ընկավ. իմ բիձա Ջիլավը եղանով տվուց աղին կալումը վեր դցեց ու թվանքը վեր կալավ ձորերն ընկավ։ Մենք էլ վերկացանք տանով տեղով եկանք՝ Երմալովն Երևանու կռվիցը եա գալիս Դվալումն առաջը կտրեցինք, մի եղը մորթեցինք, որ աջողութենով կռվիցը պրծել ա, եղնա խնդրվեցինք, լաց ու շիվան արինք, թե մեզ ազատ արա ճորտությունից...

Այս խոսակցության ժամանակ հանկարծ փոքր եղբայրը մի բան հիշեց. մեծը բարկացած դարձավ 100 տարեկան փոքր եղբորը «երբ որ տեսնում ես քու մենձը խոսում ա—դու մեջ մի ընկնի...» 100 տարեկան փոքր եղբայրը խոնարհեց յուր ճերմակ միրուքն ու պլուխն և լռեց։

Այսպիսի ծերեր պատահում էին մեզ գրեթե ամեն գյուղում։ Սրանց ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին զրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է։

Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերն եկած են հին դարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդներն են։

Ահա՛ թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա՛ թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա։

Բայց մեռնում են այս ծերունիները, իրանց հետ տանելով իրանց գիտեցածը, իսկ սրանց որդիքը հոգսերով ծանրացած, բարոյապես այլանդակված, նոր բառեր են սովորում, հինը մոռանում, նոր պատմություններ են սովորում, նոր բարքեր, նոր կարգեր,— մի բաբելոնյան խառնակություն։ Այս պատկերը կարելի է նմանեցնել մի հարսանիքի, ուր հարբած հանդիսականներն աղմկում են խառնիխուռն, և չեն լսում, թե ինչ է երգում երգիչը, որ շուտով պետք է լռի։

Ես ինչ խոսքեր, զարձվածքներ, զրույցներ սրանից 10 տարի առաջ լսել եմ Լոռի, ինչ սովորություններ տեսել եմ, այժմ դրժվար եմ տեսնում ու լսում. բոլորը նսեմացել, նոսրացել, անհետանում են։

Ժողովուրդը մի դրությունից անցնում է դեպի մյուսը ինքնագլուխ, առանց առաջնորդի և հսկողի, և այդ դրության մեջ շատ բաների հետ կորցնում է և մեր բանավոր գրականությունը։

Մասնավոր ապահով մարդիկ չկան, որ ժողովեն, այնպիսի հարուստներ չկան, որ ձեռնհաս մարդկանց միջոց տան ժողովելու, ընկերություն չկա, որ զբաղվի դրանով, իսկ մամուլը... ճգնում է եղած ողորմելի գրականությունն էլ խեղդել յուր հրապարակախոսական ցեխի մեջ, ուր մնաց այդ մասին հոգար յուր գավառներում ցրված աշխատակիցների միջոցով։ Եվ այսպիսով մոռացվում, թաղվում, կորչում են մեր ազգային հոգու ծնունդները—մեր գրականության հարազատ հողն ու պատվանդանը մաշվում, սպառվում, անհետանում։

Վերոհիշյալ դյուղերից որոշվում են այն դյուղերը, որ դրտնըվում են մենաստանների—մեծ վանքերի մոտ։ Որոշվում են ավելի մեծ անբարոյականությամբ ու ծուլությամբ։ Զղվելի պատմություններ կան սրանցից, բայց տեղս տեղ չի, որ օրինակներով խոսեմ։

Բորչալվի հնությունների հռչակավոր Հաղբատ-Սանահնի վանքերն են այժմ կանգուն, որոնք, կարծես, իրանց ժամանակը լրացրած աչքից ընկել են։ Այս վանքերը մի ժամանակ հայոց եկեղեցական լուսավորության չահերն էին համարվում, արևելքի բռնակալներից հալածված հայոց դպրությունն այս վանքերն էր ապաստանում ու ծաղկում։ Այստեղ են ուսել ու քարոզել Հովհան Իմաստասերը, Գրիգոր Տաթեորդին, Վանական մեծ վարդապետը, Կիրակոս պատմագիրը, շատ կաթուղիկոսներ և այլ հոյակապ, ուսումնասեր ու ժողովրդասեր հոգևորականներ։

Այժմ մի մի տգետ վարդապետ պարապ-սարապ նստած նրանց տեղը աղքատ ուխտավորների հետ վիճում են վանքի (իրանց) հասույթների, խաչահամբույրների, աջահամբույրների համար, մատաղի մորթիները հավաքում—կախ են անում բեմբասացության դահլիճում, ուր մի ժամանակ թնդում էին հայոց եկեղեցու հոգեխոս հռետորների ճառերն ու քարոզները, կամ թափում ածուխի կույտի վրա—թանդարանում, ուր պահվում էին հնության պարծանքները։

Այս դյուղերից հետո կարելի է հիշել աղնվականների դյուղերը։ Այս սնապարծ ու դատարկապորտ սովածներին տեսնելիս, սրանց անմիտ ու հիմար պարծենկոտությանն ականջ դնելիս, դեպի ռանճպար դյուղացին ու աշխատանքը տածած արհամարհանքը տեսնելիս, մարդ մտածում է,— ի՞նչ պատուհաս է աղնվականությունը մարդկության համար. դրանով կարելի է ազգեր այլասերել, մեռցնել ֆիզիկապես և բարոյապես։ Այս դժբախտներին ժողովուրդը անմահացրել է մի երկու խոսքով — «մեծ-մեծ տներ—սոված շներ»։

Այստեղ խոսքս մասնավորում եմ երկու գյուղի — Շուլավերի և Ջալալօղլու վրա, որոնք ազդում են Բորչալվի թե նյութական և թե բարոյական կյանքի վրա:

Բորչալվի գավառական քաղաքը Շուլավերն է համարվում, որ մոտ հազար բնակիչ ունի. Ջալալօղլին փոքր է նրանից:

Գեղեցիկ է երեք կողմից լեռներով պատած և այգիներում թաղված Շուլավերը, բայց Ջալալօղլին ավելի քաղաքի տպավորություն է անում և ավելի չքնաղ է: Ջալալօղլեցին գիտե ոգևորվել և յուր մաքրասիրությամբ կարող է համարձակ պարծենալ Թիֆլիզեցու առաջ, իսկ շուլավերցին աննման կոնծող է: Երկու գյուղի ժողովուրդն էլ զուրկ են համայնական ոգուց, խռովասեր, անբարիշտ, ինարիդան:

Ասում են, թե մեկը Թիֆլիզ գալիս ճանապարհին մի թուղթ է գտնում. վերցնում է տեսնում հարյուր ռուբլիանոց, և ցավելով բացականչում է — «ափսո՛ս, ես կարծեցի գանդաոի թուղթ ա»:

Հիմի վեճ կա, և դժվար է վճռել, թե այս մարդը շուլավերցի էր թե ջալալօղլեցի. երկուսն էլ հավասար շանսեր ունեն այս մարդը լինելու:

Գալով գարձյալ ընդհանուրին այս կասեմ.— առհասարակ դանդաղ ու կոպիտ է այս ժողովուրդը, ինչպես յուր սիրած գոմեշը, ինչպես յուր լեզուն, շարժվածքն ու երգը (թեև սեփական երգ էլ չունի):

Զուրկ է թե ապրելու և թե հոգևկան վայելչությունների ճաշակից. նա չի կարողանում գնահատել նույնիսկ յուր լեռնային բնության վայրենի գեղեցկությունը և անխնա այլանդակում է, շարունակ սպառելով ահագին անտառները: Դեռ վայրենու նման քաղաքակրթության արտաքին փայլերովն է շլանում: Այսքան դարեր ապրած, ծերացած ժողովուրդ և դեռ չի ըմբռնել կյանքի ներքին իմաստը, անցել է անթիվ ու անհամար փորձերի ու փորձություններով և չի հասկացել, խորամուխ չի եղել, եզրակացություններ չի դուրս բերել այդ փորձերից, չի ստեղծել մի անհատական — զուտ ազգային կյանքի օրենք — ադաթ, որ ավանդեր յուր որդուն: Դորա համար էլ ինքնուրույն ոչինչ չի զարգացել նորա մեջ...

Շարունակ ապրել է տարածության վրա և ժամանակի մեջ և դեռ որոշ գաղափար չունի ժամանակի և տարածության մասին:

Մի բան կպատմի քեզ երեկ մեկելօրից, և դուրս կգա, որ երեկ մեկելօրը 20—30 տարի է...

Հարցնում ես.— ո՞րքան է հեռու այս ինչ տեղը, որ ինքը հազար անգամ գնացել է եկել, այստեղ—մոտիկ առաջդ է, կպա-

առասխանի. և դու ամբողջ օրով կնրթաս ու չես հասնիլ, կամ ընդհակառակը կպատահի։

Պատվի զգացմունքը թույլ է նրա մեջ, ինքնասիրությունը ապականված, հոգու առաքինի հատկությունները սասանված, խախտված։ Շողոքորթությունը, կեղծավորությունը, խորամանկությունը, ստախոսությունը, քաությունը, գաղտասությունը... կազմում են նրա բարոյական աշխարհի տիրող մասը։

Եվ մակերևույթից խոր թափանցող աչքերը կտեսնեն, որ նրա բոլոր սրբազան զգացմունքները մատչելի են դարձել ամենակեղտոտ ձեռքերի, ականջները խլացել են մարդու ձայների համար և զգացմունքները բթացել. նա հաց է ուզում միայն, նվազած է նրա կյանքը, նվազած, ստորացած է և նրա պահանջը։

Ահա մի քանի աղքատ տեղեկություններ մեր ժողովրդից։ Ահա այն առաքինի, նահապետական ժողովուրդը, այն առողջ, հսկա ժողովուրդը, որ այնքան ոգևորում է մեր երազուն հայրենասերներին, այն մծանուն դատավոր «ժողովուրդը», որ իրանց կաբինետներում նստած հրապարակախոսներից յուրաքանչյուրը յուր կողմն է քաշում, իբրև մեծ բարոյական ուժ, հավատացնելով, թե իրան հետ է նա...

Ահա մենք...

Սակայն ինձ կասեն՝ դու մոռացար... չէ՞ որ այդ գավառում,— գյուղաքաղաքներում, օրինակ—Շուլավեր, Ջալալօղլի, և այլ մեծ գյուղերում լուսավորված նոր սերունդ, երիտասարդություն կա...

«Երիտասարդությո՞ւն...». ահա մի խաբուսիկ, փայլուն, փքուն բառ ևս, ինչպես «ժողովուրդը», սրան կասեն «անունը կա, համանունը չկա»։

Ահա՛ թե որտեղ կարելի է փոխ առնել Լերմոնտովի տողերը.

Печально я гляжу на наше поколение:
Его грядущее—иль пусто, иль темно.
...К добру и злу постыдно равнодушны,
В начале поприща мы вянем без борьбы;
Перед опасностью позорно-малодушны...[9])

Անտարբեր ու սառը դեպի շրջապատող ժողովրդի կյանքի կարիքներն ու չարիքները, զզված, վհատած, հավատացնում են թե «ոչինչ չի կարելի անել այսպիսի ժողովրդի մեջ». ահա թուլամորթ, փոքրոդի մարդկանց հավիտենական երգն ու ապաստարանը։

Այսպես լինելուց հետո, տաք վիճաբանություններով իրանե-

դական հոմռուլի վճիռն են պահանջում Անգլիական պառլամենտում կամ բանվորների խնդիրն են քննում ու պաշտպանում Ֆրանսիայում...

Ո՜հ, աղնիվ սրտեր...

Ջարմանալի ժողովուրդ ենք մենք:— Հայոց բանաստեղծին ավելի ապրում, վշտացնում է այն, թե ինչու են սև ամպեր կուտակվել Մասիսի ձյունափառ գագաթին—և նա շատ քիչ է նկատում կենդանի հայ գյուղացու ճակատի սև ամպերը: Հայոց հայրենասերն Արտաղը, Տարոնն ավելի է սիրում, քան Արտազում և Տարոնում ապրող ժողովուրդը: Հայոց հոգևորականը նախնյաց ավանդություններն է քարոզում, նրանց է պաշտոն տանում,— ապրող ժողովրդի բարոյական կյանքն ու հառաջադիմության պահանջները մոռացած...

Ահա՛ մի քրմական, կույր, կեղծ, անխելք հայրենասիրություն:— Մեր սգավորը, մեռելը թող արած, դագաղի համար է արտասվում:

Այս գավառի երիտասարդությունն էլ, ինչպես ամեն տեղ, a là Թիֆլիզ, մշակական ու նոր-դարական անունով բաժանված կռվում են, իբրև մոքի հակառակորդներ. բայց նրանց այդ դագաղարի կռիվն ուրիշ բան չի, միայն ասիական թշնամություն, որ արտահայտվում է ամեն մի դեպքում, ամեն մի գործի մեջ: Այդ նեղ, չինական հայացքի ու հոգու տեր մարդկանց իդեալներն ու կուռքերն անձնավորություններ են և «ԵՍ»-եր, սակայն նրանք չեն քաշվում միշտ պարծենալու, որ իրանք սկզբունքների ջինվորներ են, ոչ թե մի ուրույն տեսակի ստրուկներ ու մարդապաշտներ:

Նրանց վեճերի մշտական առարկան հոգևորականությունը, եկեղեցին է. կարծես, թե նրանց խելքին ու դատողությանը լայատղ ուրիշ բան չկա, բայց իսկապես, այս նրանց մոքի թշվառության և աչքերի կուրության ապացույցն է: Ինչ որ խոսեն, անգիր արած աշուղի նման, կգան կկպչեն եկեղեցուն, թեկուզ անտեղյակ այդ նույն եկեղեցու էությանն ու գոյությանը, լրության ու թերության:

Այդ պարոններին դուք տեսնում եք լրագիրներում.— կարդում եք նրանց գավառական թղթակցությունները. վրդովվելով, հանուն արդարության պահվիլներ, պամֆլետներ, տուտ-տուտ լուրեր են գրում իրանց անձնական հակառակորդներին անվանարկելու, կամ չարած գործերը փառաբանելով — գովում են իրանց քեռուն ու խնամուն. և այդ ամեն ձևով—լուր, հոդված,

վեպ, դուք էլ կարծում եք, թե հիրավի, մեր ժողովրդի կյանքը այդ է տալիս «աղնիվ» թղթակցին:

Եթե այդպես չի, հապա մի ասացեք, հայոց լրագիրների ընթերցողներ —դուք ի՞նչ գիտեք, ինչ տեղեկություն ունեք գալառի ժողովրդից: Բայց այս երիտասարդության և նրա կյանքի մասին մի ուրիշ անգամ:

Ժողովրդի բարոյական ու տնտեսական կյանքը ճանաչելու համար մի գեղեցիկ միջոց, մի հեշտ չափ կա—այդ կինն է:

Կնոջ վիճակը հայտնում, ցույց է տալիս, ինչպես անհատի, այնպես և հասարակության աշխարհայեցողության սահմանը, զարգացման աստիճանը:

Բորչալվում կինը դեռ դատապարտված է ավանդական արհամարհանքին, իբրև «առաջին մեղքի պատճառը», «դժոդքի դուռը», նզովված բոլոր սրբերից ու սրբուհյոնն երից:

Քրիստոնեության բարձր գաղափարն այլանդակող տգետ կղերը այսպես քարոզեց կնոջ դերը: Եվ այս առարկայական հասկացողությունը կնոջ մասին, այս անարգանքի մշուշը, որ ավելի թանձրացրել են միջնադարյան աշխարքից փախած, մենակյաց, խոտաճարակ ճգնավորները, դեռ ծանր չոքած մնում է այնտեղ Բորչալվում կնոջ վերա: Դեռ այնտեղ բարոյապես սահմանված ընդհանուր հարգանք չկա դեպի կինը. տղամարդի, անհատի բարեհայեցողության, քեֆին է թողած, թե նրան ինչի տեղ կդնի:

Այո,— «Մարդ գդակը վեր ա դնում հետը մասլահաթ անում, էս խո իսան (մարդ) ա», ասում է տղամարդը կնոջ մասին. «Մարդի ծեծած — վարդի ծեծած», ասում է ծեծված, նախատված կինը, և, այսպիսով, մեկից մի փոքր դիջում, մյուսից համբերություն՝ մեղմանում է տրադիցիայի խստությունը, բայց սա քիչ է, շատ է քիչ. սա դեռ մայրը, կինը, կյանքի ըկերը չի...

1916

ՀԱՆՅԱՎՈՐՆԵՐ ՈՒ ՎԱՆՆԵՐ

Շատ ցավեցի, երբ կարդացի Շուլավերի տանուտեր Արամ Դալլաքյանի սպանության բոթը: Սրանից առաջ երկու անգամ սպանության փորձ են արել նրա նախորդ տանուտեր և հայտնի հասարակական գործիչ Վախտանգ Մեհրաբյանի վրա, ամեն անգամ մի քանի գնդակ զարկելով: Այժմ էլ Դալլաքյանին...

Խե՛ղճ Արամ: Լավ էի ճանաչում: Մեր գավառական մաքուր, ինտելիգենտ, երիտասարդ գործիչներից մեկն էր: Վերջին ժամանակներս արդեն շատ էր զզվել և՛ իր պաշտոնից, և՛ տեղից, ուզում էր հեռանա մի ուրիշ գործով մի ուրիշ—ավելի հեռու տեղ:

Սրա համար հաճախ ինձ մոտ էր գալիս, և եթե ձգձգում էր, միմիայն գաղթականական ու հասարակական մի քանի գործերի պատճառով, որ շտապում էր վերջացնի, և գավառապետ Պ. Գավրիլովի հարգանքից, որ հիրավի, ամենքից հարգված ու շիտակ մի մարդ է և ընկերաբար խնդրում է գավառի ինտելիգենցիայից՝ օգնել իրեն:

Վերջին անգամ էլ, երբ մոտս էր, գրեթե աղաչում էր: Ասում էր՝

— Արդեն Գավրիլովն էլ է հոգնել, գուցե նա էլ շուտով հեռանա մեզանից: Ի սեր աստծո, մի որևէ գործ գտեք ինձ համար: Անկարելի բան է գործել ու ապրել մեր մթնոլորտում»...

Եվ ահա, մի քանի օր չանցած, երբ կարդացի նրա սպանության լուրը, ինչքան իրեն համար ցավեցի, ավելի ևս նրա համար, թե ինչու՞ է էսպես անհնար՝ շիտակ գործել ու ապրել մեր մթնոլորտում...

Ինչու՞ են մեր լավ գործիչները ենթարկված վտանգի — հալածանքից սկսած մինչև օրը ցերեկով կազմակերպած սպանությունը: Եվ ի՞նչպես կամ ե՞րբ է գալու սրա վերջը:

Ու պատասխանը շատ է անմխիթարական:

Թե սպասենք էս ժողովուրդը քաղաքակրթվի, դաստիարակվի ու փոխվի՝ էդ շատ է հեռու:

Թե հույսներս դնենք արդարադատության վրա, էդ էլ արդեն անթիվ փորձերով խրատված ենք ու գիտենք, որ զուր հույս է միանգամայն։ Գիտենք, որ արդարադատությունը մեզանում շատ է անզոր, և նրա անզորությունը հայտնի է ամենքին ու ամենքից առաջ և ամենքից լավ բոլոր տեսակի հանցավորներին, որոնք ամենացինիկ կերպով բացարձակ ծիծաղում են նրա վրա։

Նրանք գիտեն, որ վերջ ի վերջո ամեն բանի համար հարկավոր են վկաներ և ապիկա-ունկը։ Եվ վաշխառուներ լինեն, գողեր, ավազակախմբերի հովանավորողներ, թե մարդասպաններ — մենակ չեն երբեք, միշտ ունեն իրենց ընկերները, դեմն և իրենց սեփական վկաները իրենց տեղերում, այլև հաճախ իրենց կապերն ու հովանավորները քաղաքներում, և առաջուց տեսած են ամեն պատրաստություն։ Եվ էս բոլորը մի որևէ տուժած անօգնական մարդու դեմ, բայց ես կասեմ, թեկուզ ուժեղ մարդու դեմ։ Ի՞նչ է անելու տուժած կողմը։ Վկա՞ կբերի։ Բայց նրա մի վկայի դեմը դիմացից տասը կհանեն։ Եվ հանցավորը արդարանալուց կամ կարճ պատժից հետո, եթե վերադառնա՝ ո՞ւր է գնալու, ո՞նց է ազատվելու նրանից՝ դեմը դուրս եկած վկան։ Ո՞վ է գիժ՝ գնա սրանց դեմ վկա կանգնի, անցավ գլուխը գցի անվերջ ցավի մեջ։ Ու՞մ համար... ինչի՞ համար...

Ի՞նչ անի սրանց դեմ էս կամ էն խաղաղ գյուղացին։ Ուզի-չուզի, վերջ ի վերջո պետք է հաշտվի իր անզորության ու դառը ճակատագրի հետ և ծունկ չոքի չարի առաջին։ Եվ մեր ժողովուրդը, մանավանդ մեր երկրի ետ ընկած, խուլ ու խավար անկյուններում, չոքած տնքում է սրանց առաջին ու չի էլ համարձակվում բողոք բառնալու, որովհետև շատ փորձերով ու փորձանքներով խրատ է առել։

Էստեղ իմ աչքով տեսած բազմաթիվ դեպքերից մինը պատմեմ, ցույց տալու համար, թե ինչ բան են վկա ու արդարադատություն ասած բաները։

Իմ հերը քահանա էր ու մի ժամանակ գործակալ Լոռու շրջանում։ Մի օր, շրջագայության ժամանակ, գնում եմ նրան պատահում Կ. գյուղում։ Տեսնեմ՝ ամբողջ գյուղը հավաքված, հերս՝ իր սպիտակ միրուքով մեջտեղը նստած, ամեն մի կողմ մի-մի տանուտեր, մինը Կ. գյուղի տանուտերը, մյուսը մեր գյուղի, առջևն էլ մի տարօրինակ շիշ, զմուռսով կնքած։

Տեղ տվին, նստեցի։ Տեսնեմ՝ հերս հրապարակական դատ է սարքել։

Գյուղի պաշտոնյաներից (պատվավորներից, իշխաններից) մինը մի աղքատի աղջկա խաբել է, թե քեզ հետ կամուսնանամ,

բռնաբարել է աղջկան, հետո, տեսնելով, որ հղի է ու կարող է փորձանք առաջ գալ, մի շիշ թույն է բերել, իբրև ուրիշ դեղ՝ աղջկանը տվել, որ խմեցնի սպանի։ Եվ ահա էդ մի շիշ թույնն է, որ բռնվել է ու դրած է հորս առաջին։

Իր գործակալական կնիքով կնքել է, աղջկանը հարց ու փորձ արել, հանցավորն էլ չի կարողացել իր հանցանքն ուրանալ, որովհետև դյուղում ինչ որ կատարվում է՝ գրեթե ամենքն էլ գիտեն։ Եվ ահա կարճ ու համառոտ կայացել է քննությունը, դատն ու վճիռը։ Հանցավորը խոստովանել է ու խոստացել, եթե ինքը աղջկա հետ չամուսնանա, հոգում է նրա ամեն ծաղքերը մինչև ամուսնությունը, ամուսնության համար էլ տալիս է 500 ռ. փող և բոլոր բաժինքը։ Ու վճիռը գրվում է։ Ես հասել եմ հենց էս ժամին։

Հորս մի կողմ կանչեցի մի երկու մարդու հետ ու ասի, որ էս գործը չէ՞ որ իր գործը չի, գործակալի գործ չի, քրեական գործ է, պրոկուրորի գործն է։

Հերս թե՝

— Ա՛յ որդի, թեկուզ էդպես էլ լինի, սուս արա։ Ես որ չեմ հասկանում, սրանք ի՛նչ են հասկանում։ Թող մեր միջին վերջացնենք՝ գնա։ Բանը կընկնի պրոկուրորին՝ էս խեղճերի տունը կքանդվի...

Եվ շուտով ամենքն էլ իմացան, որ էս գործը գործակալի գործ չէ, պրոկուրորի գործն է, իմացավ և հանցավորը ու էն խեղճացած մարդը հանկարծ կենդանացավ, գազան կտրեց, սկսեց գոռգոռալ ու հոխորտալ.

— Էս ի՞նչ գործակալի գործ ա... էս ուգալովնի գործ ա... գանգատ ունի, թող գնա պրոկուրորին գանգատ անի... Հրե հա՛ — պրոկուրորը Թիֆլիզ, էն էլ ճամփեն. թո՛ղ գնա, տեսնենք ի՞նչ պտի անիլ...

Աղջկա հերն էլ, մի պատառոտուն սալդաթի շինել հագին, սկսեց իր կողմից սպառնալ։

— Հլա կաց՝ հրես գնամ պրոկուրորին գանգատ անե՞մ, էս շուշեն էլ էսենց պեչատած տանեմ առաջին գնեմ... Հալա կաց...

Իհարկե, և՛ հերս, և՛ հասարակությունը լռեցին, ցրվեցին, կիսատ գրած վճիռն էլ ես վերցրի հիշատակի համար դրի գրպանս ու մինչև օրս էլ մնում է մոտս։

Էս դեպքից թե քանի տարի անցավ, լավ չեմ հիշում։ Հերս էլ մեռավ, էս գործն էլ էի մոռացել, ու մի օր անցնում էի Թիֆլիզի պրոսպեկտով։ Ճանապարհին պատահեցին մի խումբ

Կ. գյուղի պաշտոնիներ։ Խմած, օրորվելով գալիս են իրար հաևվից։ Պատահեցինք, կանգնեցին։

— Օ՜, բարով, պ. Թումանյանց։

— Բարով, բարով։

— Պ. Թումանյանց, միտդ ա, ինչ էն տարին մենծ տերտերը (հերս) մեր գեղումը X-ի աղջկա խաթեր էս մեր X-ի գլխին էն թամաշեն սարքել էր։

— Միտս ա։

— Էն, որ դու եկար քանդեցիր։

— Միտս ա։

— Օղորմի քու հորը, որ քանդեցիր։ Բա խի՞ չես հարցնում, թե էն գործը ո՞նց վերջացավ։

— Ո՞նց վերջացավ։

— Դե հիմի հենց կոկրուժնի* սուդիցն ենք գալիս, պրակուրորի իրան կշտիցը, մի ջափա քաշի՝ գնա հարցրու, իմացի, թե ոնց վերջացավ։

Հարցրի, իմացա։

Եկել էին կանգնել մի կողմ մի խումբ պաշտոնիներ — վկաներ՝ հանցավորի հետ, մյուս կողմը մի աղքատ մարդ իր աղջկա հետ։

Վկաները, խաչ ու ավետարանի վրա երդվելուց հետո, իրար հաևից ցույց էին տվել, թե էս աղջիկը հայտնի պոռնիկ է, գյուղում էլ մարդ չկա, որ հետը հարաբերություն չունեցած, շատ լրբություններ է արել, այժմ էս պատմությունն էլ սարքել է, որ X-ից մի բան կորզի։ Եվ թե էդ էլ սարքովի բան է, դրան էլ վերահասու են ահա էս ինչ ու էն ինչ վկաները։ Եվ այլն, և այլն։

Հիմի վերջը տեսեք։ Երբ որ դատարանը կարդում է հանցավորի արդարացման վճիռը և մերժում է աղքատի ու իր աղջկա դանգատի ճշմարտությունը, սրանք, վկաները կանգնում են նորից մի բան խնդրելու դատարանից։

— Ի՞նչ։

«Թե շնորհակալ ենք, որ մեղավորն ու արդարը ջոկեցիք, բայց որովհետև մենք նահապետական վարք ու բարքի տեր ժողովուրդ ենք, էս տեսակ պոռնիկի չենք կարող համբերել մեր գյուղում, խնդրում ենք սրան դեղին բիլեթ տաք՝ պոռնկանոց ուղարկենք»։ Եվ ահա արդարադատության տանից դուրս են գալիս հաղթական պաշտոնիները, մտնում են մի պադվալ, քեֆ են անում, էնտեղից էլ գալիս՝ ինձ են պատահում Ճանապարհին։

---

* Окружной *բառի ապավաղումն է։* Խմբ.

Նրանց հետևից դուրս են գալիս և աղքատ գյուղացին ու իր աղջիկը...

Եվ նրանք իրար հանդիպելու են իրենց գյուղում...

Էլ չեմ ուզում խոսքս շարունակել էս առարկայի մասին: Ասելս էն է, թե մի համատարած դժոդքի մեջ է ապրում մեր գյուղացի ժողովուրդը, դանազան մութը կազմակերպությունների — շայխանների ճիրաններում, և էդ չար ու մռայլ բազմությունը թերևս կարելի լինի դնել մի ընդհանուր վերնագրի տակ — հանցավորներ ու վկաներ:

Սրանց դիմաց միանգամայն անզոր է եղած արդարադատությունը, ո՛չ միայն անզոր, այլև կորցրած ամեն հավատ ու հեղինակություն:

Եվ հանցավորները բացարձակ ուրախանում են, երբ բանն ընկնում է դատարանին, իսկ խաղաղ ժողովուրդը դատարանից նույնքան է վախենում, որքան հանցավորներից, եթե չասեմ ավելի:

ՓՐԱԳՄԵՆՏՆԵՐ

Ա՛ՆՈՒՇ Ը՛ՆԿԵՐ

Անցել են օրերն այն երանելի,
Հին հիշատակներ իզուր եմ կանչում,
Լռել են ձայներն ուրախ երգերի,
Եվ դաշտերն այնպես էլ չեն կանաչում.

Վիշտը չորացրեց լարերը սրտիս,
Ջեն դողում նրանք այլևս աշխույժ...

1920

<ԱՀԱ ՇԻՐԻՄ՛Ն>...

Ահա շիրիմն... իմ ընկերն էր... Մի սովորութիւն ուներ նա,
Գիշերն արթնում, լույս էր վառում, նայում՝ ժամը իմանա...
Հե՛յ, ի՛նչ դատարկ, ինչ խենթ խոսք է. ժամը կողքին էս շիրմի....
Հե՛յ, Անուշ ջան, ի՛նչ ես հարցնում, միևնույն է՝ ժամի
քանիան է հիմա...

30 Հունվարի

<ԻԼՅԱ ՍՈՒՐՈՄՑԻՆ ԵՎ ԿԱԼԻՆ-ՅՈՒՐԸ) ՌԻԼԻՆԱՅԻՆ>

[1]Ե՛տ դընա երկիր, ետ բացվիր, երկի՛նք,
Դուք էլ, սև ամպեր, մի կիսվեք մոայլ,
[2]Ննջվում է սիրտը հրսկայի

---

1 Նախապես այս տողի փոխարեն նրել են հետևյալ տողերը. Ո՛վ դու մայր երկիր, ետ դընա հապա || Ո՛վ կապույտ երկինք, ետ բացվի դու էլ...

2 Տողն անավարտ է. ավելացրել է դրա վրա. Ննջ է հսկայի ուժի համար։

Ու ցավ է հանդիպել ծերունուն,
Բարկացավ վըրեն իշխան Վլադիմիրը,
Հրաման տըվավ իր ծառաներին
Վեր գցեն նըրան խոր նըկուղներում...
...Ուներ իշխանին մի ջահել աղջիկ,
Մի ջահել աղջիկ, մի մատաղ աղջիկ.
Տեսնում է՝ փակեց իր հայր իշխանը
Սովամահ անի ծերին նկուղում,
Մինչ նա կըպահեր քաղաքը մենակ,
Կպահեր մենակ տաճարները սուրբ,
Կըպահեր... իր հայր իշխանին,
Կըպահեր... մայր իշխանուհուն:
Ու մորից թաքուն առնում է ահա
[1]Բանալիները խոր նըկուղների,
Փորել է տալի գողոմի անցքեր,
Տանում է ծերին անուշ ուտելիք,
Դընում է ծերին մեղրի խմելիք...
Իսկ հայր իշխանը ոչինչ չըգիտի:
Ղրկում է էստեղ Կալին թագավորն
Իր թաթարներին սուրբ Ռուսաստան.
— Հե՛յ, դուք,— ասում է,— իմ թաթարներ,
Գնացեք հապա սուրբ Ռուսաստան,
Գնացեք մի էն Կիև փառապանծ,
Գնացեք տեսեք, [2]մի բան իմացեք,
Ի՞նչ է կատարվում ռուսաց հողում:
Ձամբա են ընկնում թաթարները պիղծ
Սուրբ Ռուսաստան, Կիև փառապանծ,
Հասնում են Կիև—էն քաղաքը մայր,
Նայում են հեռվից գարշելիներն
Վլադիմիրին—արև իշխանին,
Ու նա են գնում թաթար արքային:
Ու Կալին արքան հարցմունք է անում.
— Ո՞ւր եղաք, տըղերք, ո՞ւր չեղաք,
Ի՞նչ տեսաք, տղերք, և ինչ չտեսաք:
Ու սև թաթարներն ասում են նրան.
—[3]Եղանք սրբազան հողում ռուսաց,

---

1 Ա վելացրել է. Ոսկի բալնիքներ, միաժամանակ պահելով նախկինը:
2 Հարց ու փորձ արևք:
3 Նախապես եղել է. Մենք եղանք սուրբ ռուսաց հողում:

Նշանք փառավոր Կիև քաղաքում,
Հրաշք ու տեսիլք տեսանք Կիևում,
Արմանք ու զարմանք տեսանք Կիևում.
Տեսանք թե ինչպես աստծու տաճարից
Գնում էր մի շատ մի սիրուն աղջիկ,
Գնում էր ձեռքին մի ավետարան՝
Էնքան չէր կարդում, երկու էնքան լաց էր լինում...
Ու Կալին արքան էսպես է ասում.
— Ա՛խ, դուք իմ ամխելք, անխելք թաթարներ.
Էդ վատ աղջիկ չի եղել գնալիս,
Աստվածածինն է եղել գընալիս,
Ձեռին տանելով ավետարան.
Կիևի գլխին փորձանք է տեսել,
[1]Էնդուր արցունքով լալիս է եղել։
Էն ալիքը չի վեր կացել ծովում,
Էն կապույտ ծովը չէ ծփում...
Ալեկոծվեց Կալին արքան,
Վեր կացավ շունը Կիևի վրա։
Ա՛խ դու չարագործ, շուն Կալին արքա։
Մտածում է նա չար մտածմունքներ,
Խորհում է դաժան ու վատ խորհուրդներ,
Ուզում է Կիև քաղաքն ավերի,
Ուզում է չարդի ռանճպար խալխին,
Սուրբ տաճարներ մատնի կրակի,
Իր տիկին Ապրակսիայի հետ
Արև իշխանի գլուխը կարի։
Ջորք է հավաքում քառսուն աշխարհից,
Քառսուն աշխարհից, քառսուն իշխանից,
Ամեն մինն ունի հարյուր հազար մարդ,
Իսկ իր—շան զորքին թիվ-համար չկա։
Պատրաստվում է շունը ողջ երեք տարի
[2]Ու չորրորդ տարին ելնում արշավի,
Տասնհինգ վերստ վրա—Կիև չհասած—
Կանգնեց իր զորքով Դնեպրի ափին,
Հրաման տվավ էն մեծ բանակին
Մի մի խիճ գցեց ամենը մի տեղ—
Դուրս եկավ ահագին մի լեռ...
Խավար է կարմիր արևը պատել

---

1 Ջնջված այս տողի վրա գրել է. Ու լաց է եղել էնդուր։
2 Նախապես եղել է. Վրա չորս տարին անում արշավանք։

Շող չի երևում, լույս չի երևում։
Էդ գարշ հոտից—թաթարի հոտից
Չի կարող շնչել մարդը մկրտված։
Փռվեց բանակը ընդարձակ դաշտում,
Վեր եկավ ինքը, շունը, իր ձիուց,
Իսկույն իր գործած աթոռին նստեց,
Հրաման գրեց արագությամբ,
Ոչ թե թանաքով, այլ կարմիր ոսկով,
Ապա թե կնքեց իր հրամանը,
Ընտրեց մի թաթար—ընտիրն ամենից,
Հասակը ուղիղ մի սաժեն,
Գլուխը ինչպես կաթսա...

ԱՄՐ ԻԳՈՐԻ ՃԱՆԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

<Հատված>

Հավը դառնամ թռչեմ Դունայի վրով,
Սամուր թևերս թրջեմ Կայալում,
Սրբեմ իշխանիս վերքերն արյունոտ,
Արնոտ վերքերը առնացի մարմնի։

<ՇԵՔՍՊԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻՑ>

1. Հպարտ հայացքդ ոչ ոքի չի գրավում, և այնտեղ սով ես տարածում, ուր լիություն էր լինելու։

---

3. Բնությունը չի ընծայում, այլ փոխ է տալիս։

---

6. Քո զավակներով դու կրկնում ես քեզ։

---

12. Երբոր տեսնում եմ, թե ոնց է մանիշակը հող դառնում և մազերում ալևույթն երևում, հիշում եմ քո գեղեցկությունը, որ թառամելու է և մեռնելու։

---

14. Իմ գիտությունը ես աստղերից չեմ վեր բերել, այլ փորձից։

---

25. Նրանց փառքերը թաղված են իրենց մեջ, ինչպես գերեզմանում:

---

27. Եվ մտքերս այստեղից ինձ ուխտավոր են շինում—քեզ մոտ են բերում:

---

28. Իմ օրհներգությունը կրկին սկսում եմ արշալույսին՝ երկընքի դռների առաջ:

30, 32

Օ՜, անջատում, դու մեզ սովորեցնում ես միանալ:

---

50. Նա հիշեցնում է, որ բախտն եռևն է մնացել՝ վիշտն է սպասում:

---

54. Ո՜վ, գեղեցկություն, ավելի գեղեցիկ է լինում, երբ խոսքի հուրը ցայտում է.— անկեղծությունը նրա մեջ. գեղեցիկ է վարդի տեսքը, բայց ավելի մեզ քաշում է բույրը, որ կա նրա մեջ:

55, 57, 66

Ով որ յուր սիրո դինը բարձրացնում է, նրան դարձնում է ապրանք (վաճառելի):

602

Առագաստս տվի նրանց հովերին:

Սրտիս վրա գրած են նրանց արարքները:

605

Ես կանգնում եմ իմ ապագայում. նրա համար չեմ երևում նրանց աչքերին, որոնք նայում են միայն այս օրերին:

Ես որ ծնվեցի, խմեցի տանջանքի աղբյուրից:

Մինչև կըմեռնի անվերջ սիրելով....

Կրքից դալկացած...

Ավելի քնքուշ, քան շուշանի բույրը։

Օդը սիրահարված նրան է կպչում, ետևից վազում։

Համբույր ալիքների հետ...

Ծաղիկների թերթիկներն ինչպես արտասուքներ թափվում էին։

Այդ երևույթը ոչ թե ավետաբեր է նոր բախտի, այլ վերջին նշանը անցած անբախտության. ոչ թե արշալույս նոր օրվան, այլ վերջալույս անցյալ օրվանից։

Որովհետև հանցանքն էլ մի տեսակ թուլություն է, ապա թուլությունը ամենամեծ հանցանքն է։

Նրանց լրբությունն ավելի մեծ եղավ, քան իմ համբերությունը։

Սիրտս պատռվում է, երբ մտածում եմ, թե ես էլ, որ դրախտըն ընկնեմ, պետք է այնուհետև այնտեղ մնամ հավիտյան, առանց փոփոխության, մի տեղ, միևնույն դեմքերը, նույն ձայները, նույն լույսերն ու բույսերը։

Միշտ ճշմարիտ ստեղծագործող և կատակերգող—ծնող խելքերը—դուրս են գալիս այն շրջանակներից, որոնք չեն գնում մեծ ճանապարհի ծեծված շավղով—արահետով։ Այդպիսիների համար ընդունված դրական ոչինչ չկա—նրանք ամեն բանի վերաբերվում են հարցով ու կասկածով։ Այդպիսի բնությունները անլուր հանդգնությամբ իրենց անձը դնում են ամբողջ մարդկության հակառակ, և ոչինչ չեն ճանաչում-ընդունում—ինչ-որ յուր ուժն ու իրավունքը ցույց չի տալիս այդ անձնավորության առաջ։

Սիրում եմ այն ամենը, ինչ որ չի արատավորված մարդկային ոչնչությամբ։

Հնացած հաստատութիւններ և օրենքներ՝ միացած մարդկային չարութեան հետ—ահա՛ [կեանքի] բոլոր տառապանքների աղբիւրը։

Եթե նա երես ունենար, ես նրան կապտակեի։

Էնպես մարդիկ և դեմքեր կան [մեծ մասամբ վաղածանոթ], որ երբոր տեսնում եմ, բոլորովին հիմարանում եմ։

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

90-ական թվականներ

ԳՐՈՂԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սիրելի ընկեր.

Ասում ես՝ ինչո՞ւ ես լռել, էլ չես գրում:

Ես այդ մասին շատ եմ մտածել, սիրելիս, թե ինչո՛ւ չեմ գրում կամ ինչո՛ւ այսքան քիչ եմ գրում: Մտածել եմ, և միշտ առաջին պատասխանն այս է եղել, որ հավես չկա, սիրտ չկա, եռանդ չկա: Չէ՞ որ ամեն բանի համար հավես պետք է լինի, իսկ բանաստեղծության մեջ՝ միմիայն հավես:

Բայց չէ՛ որ ես հավես ունեի, երբ նոր մտա հրապարակ, նոր սկսեցի երգել, երբ որ դեռ խակ ու խամ էի: Ի՞նչ եղավ այն անզուսպ հավեսը, այն աշխույժն ու եռանդը:

Կորավ...

Ի՞նչպես կորավ:

Ահա դրաման: Ամենավսեմ բանը, աստվածայինը, որ մարդը կարող է ունենալ — կորցրել է ու... էլ չի երգում: [Ով դու այն տխուր պատմությունն ես ուզում]:

Գիտես, սիրելիս, մարդիկ առհասարակ խոսում են իրանց կամքով, ի՛նչ կամենան, ե՛րբ կամենան և լռում են նույնպես իրանց կամքով: Սրանք «խելոքներն» ու «խոհեմներն» են, կյանքի մարդիկն են, օրինավոր մարդիկն են:

Բայց կան և տարօրինակ մարդիկ: Շատ սակավաթիվ մարդիկ, որոնք խոսում են ակամա, ազդված, ներշնչված, կամ ինչպես ժողովուրդն է ասում—մարդիկ, որոնց «խոսեցնում են»:

Այո՛, նրանք տարօրինակ մարդիկ են, նրանք իրանք չեն խոսում, նրանց «խոսեցնում են», և ուզեն չուզեն պետք է խոսեն, ինչ որ ազդում են, ներշնչում են խոսեցնողները։

[Պարզ չի՞ արդյոք]

Ահա, ես այդ տարօրինակ մարդկանցից մեկն եմ։ Հիմի դու կասես, հապա ո՞վ են խոսեցնողները, այդ ազդեցությունները, որոնք դառնում են գրողի ներշնչանքը, ոգևորությունը։

Դրանք շատ են։

Այն ընտանիքն է, որի մեջ առաջին անգամ մենք բաց ենք անում մեր աչքը ու առնում առաջին սովորությունները։ Այն անմիջական շրջանն է, որտեղ մենք անում ենք մեր առաջին քայլերը։ Այն հասարակությունն է, որի մեջ պտտվում ենք, նրա հարցերը, նրա մամուլը, նրա ձգտումները։ Այն ազգն է իր անցյալով ու ներկայով, որի զավակն ենք մենք մարմնապես ու հոգեպես։ Մեր տեսած բնությունն իր երևույթներով և դրանից հետո ավելի լայն՝ գարը բոլոր ազգերի ժամանակակից մտավոր ու կուլտուրական հոսանքի ազդեցությունը, եթե մեզ է հասնում։

(Ահա՛ թե որտեղ է կապված եղել մեր Պեգասը։ Հին հունական բանաստեղծների Պեգասը խմում էր [...] վճիտ աղբյուրից և ապրում էր [...] մեր Սասունցի Դավթի հրեղեն ձին իր հորեղբայր Ջենով Օհանը կապել է ախոռում—)...

Արժե խոսել սրանց մասին.

. . . . . * . . . .

Այն շրջանները, որոնց մեջ ես ապրել ու անց եմ կացրել իմ օրերը մանկությունից ի վեր, եղել են նեղ ու դատարկ։ Բամբասանքներ—դավադրություններ, ընկերական հարաբերությունների մեջ կեղծիք, խաբեություն, շահ, միմիայն շահ ձգտում։ Անտարբերություն դեպի ընդհանուր-ազգայինը, խոհեմություն է համարվել միշտ խուսափել «խալխի համար» գլուխը ցավացնելուց։ Արհամարհանք դեպի իր ազգային լեզուն և կապկի հափըշտակություն դեպի օտարը, անճաշակություն ամեն բանի մեջ. քաղաքավարությունը եղել է կեղծավորությունը, կարեկցությունը միշտ հայտնվել է իրենց չնչին փառասիրությունը հրապարակ դնելու առիթ և միշտ ոտնակոխ են արել [1 անընթ.] ինքնասիրությունը։

Դրանց քեֆը—մեծ զվարճությունը համարվել է հարբելը...

[...] Այդ տեսակ շրջաններում է բանաստեղծը հանդիպում կնոջը։ Մի՞թե կարող է այդ կինն—հայ կինը ոգևորել մարդու։

Ծածկամիտ, հաշվող, խելոք (իբր թե) պոլիտիկոս, դրան ավելացրու անճաշակությունը...

Ոչի՛նչ, ոչի՛նչ նրան չի թոցնում, նույնիսկ սերը, այդ կախարդական [դևը] չի կարող թափանցել ու լուսավորել, պարզել, թե ի՛նչ կա հայ կնոջ սրտում և չի կարող նրան թոցնել հաշիվների ցանկից դենը:

Սիրահարված երիտասարդը առաջարկում է իր սիրած աղջկան...

— Բայց էգուց մյուս օրն որ աղջիկ ունենանք, տրտեղի՞ց պետք է ուտում ու օժիտ տանք, պատասխանում է խելոք հայ աղջիկը:

Անիծվի այդ չոր խելքն, այդ չոր չարչու հարազատ աղջկա այդ չոր խելքը:

Ահա մի հանդիպումն, թե ինչպես է հանդիպում հայ աղջիկը իր կարոտ նշանածին:

Ֆարհադը պատմում է. «Չեմ կարող նկարագրել թե որպիսի ոգևորությամբ... և այլն մինչև՝ «Ախ, այդ ինչ է եղել քո շապիկը, ասավ նա ցավակցաբար — 48—49, «Խաչագողի հիշատակարանը»:

Այս Բաֆֆու ոչ հոգեբանական անթիվ տիպերից մեկն է, բայց այստեղ շատ է սազ գալիս համեստ ու խելոք հայ աղջկանը:

...Եվ դատողություններ զանազան—գնաս բարով, ավելի լավ, այնտեղ ինձ համար...

Իսկ «Записки из мертвого дома» Соня-ն հետևում է մինչև Սիբիր...

...Ասում ես՝ եթե չկա, նա պետք է ստեղծի:

Այո՛, նա ստեղծում է: Աստծուց հետո միայն բանաստեղծն է, որ ստեղծում է: Եվ նա էլ ստեղծում է նույն կարգով:

Այո, շատ ճիշտ է: Աստված և բանաստեղծն են ստեղծում: Եվ դրանց ստեղծագործության մեջ շատ մեծ նմանություն կա: Երկուսն էլ ստեղծում են ոչինչ բաներից մեծ բաներ, երկուսն էլ ստեղծում են իրանց պատկերի նման, երկուսն էլ հայտնվում են իրանց ստեղծածի մեջ, թեև իրանց չես տեսնում:

Բայց սկզբում քանի որ քաոս էր, աստծո հոգին շրջում էր նրա վրա և մարդ ստեղծելու մասին իսկի չէր էլ մտածում: Այժմ մեր կյանքն էլ մի քաոս է և բանաստեղծի հոգին շրջում է նրա վրա: Բանաստեղծ անհատն, իհարկե, անցավոր մարդ է. ես բանաստեղծության ոգին եմ ասում—շրջում է այս ժողովրդի քաոսային կյանքի վրա, և անշուշտ մի օր նա կասի իր արարչական

խոսքը—թո՛ղ լինի լույս—ու կլինի լույս, ու կլինի մի բանաստեղծական աշխարհ, իր բուրավետ ծաղիկներով, իր սավառնուն հրեշտակներով և նրանից հետո...

Ավանդությունն ասում է՝ երբ որ աշխարհքը ստեղծված պատրաստ էր իր ամեն զարդերով—աստված իր հրեշտակին ղրկեց, ասավ. գնա աշխարհքի չորս կողմից անարատ հող գտիր, բեր, որ նրանից ստեղծենք մեր պատկերի <նման> մարդ։

Ու հրեշտակը ցոլացավ...

Բայց ավանդությունը թողնենք։ Բանն այն է, որ անարատ հող կար և նրանից կարելի էր ստեղծել աստվածատիպ մի վսեմ արարած։ Ստեղծող աստծուն մնում էր միայն իր արարչական շնորհքը շնչել նրա մեջ, իսկ ձեզ նման ցեխից ի՞նչ կարելի է ստեղծել. այն, ինչ որ տեսնում եք հրապարակում—վաշխառուներ, չարչիներ, քյոխվաններ, պատլիկ-մատլիկ քաջիկներ, գողեր ու խաչագողեր, տերտերներ ու մղդսիներ։ Բանաստեղծը որքան էլ ճգնի վսեմ ձգտումներ դնել ձեր ցած հերոսների բերանում—նրանք դարձյալ կմնան խաչագողեր, որովհետև [կյանքում] կա մի մեծ օրենք, որ կեղծիք չի սիրում, իսկ բանաստեղծությունը ամենաանկեղծ արտահայտությունն է այդ անողոք տիեզերական օրենքի։ Որքան էլ իր շունչը փչի ձեր մեջ ձեզանից միայն ծիծաղելի փքվածներ դուրս կգան և ոչ [մեծ] հերոսներ և դա նման կլինի այն դատարկ տիկին, որ փչում են — ուռչում է, բայց դարձյալ նույն կպրոտ տիկն է։

Դուք չունեք աստվածական զգացմունք, դուք չունեք սրտի անկեղծություն, հոգու ազնվություն, կարեկցություն, ինքնաժանապատվության [զգացմունք] զիտակցություն...

Դուք սուտ փառքեր ունեք—նրանց պատվանդանները դողում, երերում են ամեն մի թեթև հողմից, որովհետև [2 անընթ.]։

Եվ ահա բոլոր այն մարդիկ, որոնց անունով պարծենում եք այսօր, նրանք բոլորը գերեզման իջնելուց առաջ թքել են ձեզ վրա։

...Ահա մամուլը—ձեր բերանը (ինչպես ասում են) խոսում է։ Տե՛ր աստված, ի՛նչ կեղտոտ բերան է, ի՛նչ ցոփու, ի՛նչ թեթև, անմիտ բաներ է խոսում այդ բերանը։

...Բայց մեզ ինչով եք խոսեցնում—վերցրեք մեջտեղից մեծ վիշտը, որ մեզ համար կանդրաբանդի ապրանք է...

Ի՞նչ է մնում...

Уездный բանաստեղծ...

Ընդհանուր կյանք չկա։

Ես շատ եմ մտածել, թե ի՛նչ ժողովուրդ է սա, որ անկարող է բանաստեղծ ոգևորել, բանաստեղծ խոսեցնել: Մտածել եմ, ինչպես մտածում են այն ամուլ ամուսինները, որոնք զավակ են ցանկանում ու չեն ունենում, միշտ մնում են ամուլ, չոր:

Այստեղ դժվարություն կա ամեն բան ասելու, բայց ինչ որ կարելի է, այդ էլ շատ բան է: <....>

<ԿՅԱՆՔ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>

...Մի հայտ <արարություն> [որ դասախոս չեմ], որ խոսում ենք հայոց կյանքի ու գրականության մասին—երկու նյութ, որոնք դեռ չեն ուսումնասիրված. երկուսի մասին էլ հակասական և ծուռ ու սխալ կարծիքներ կան ավելի շատ, քան պարզ ու բարեխիղճ ուսումնասիրություններ: Դեռ չկա նոր անցկացած կյանքի պատմությունը, այն օրերի, երբ սկսվեց գրականությունը, երբ խոսում են այդ օրերից — կարծես հին-հին դարերի մասին է խոսքը...

Գրականությունն էլ դեռ չի քննադատված. դեռ չի գնահատված, չի որոշված, թե սա ո՛վ է, ի՛նչ արժեք ունի, կամ մյուսն ինչու է մեծ հռչակված: Հետևաբար, երբ ամեն բան՝ և՛ կյանքի պատմությունը, և՛ գրական քննադատությունը դեռ չունենք, ամեն մարդ ինչ որ խոսի, մանավանդ թուրքիկ մի հայացքով, միշտ կլինի պակասավոր և ամեն մեկի հայացքն ու կարծիքը տարբեր կլինի մյուսից:

...Դրությունը, երբ ռուսները եկան—կամ ավելի ճիշտ բիրինք: (Ախալցխայի շուկա):

Երկրի նոր նշանակած կառավարիչը իր զեկուցման մեջ ասում է. «Սրանց համար ամեն բան (ինչ որ մենք ենք բերում) զարմանալի է, տարօրինակ է, մեզ համար ամեն բան նոր է»:

Անցյալ դարի առաջին քառորդին ռուսահայերն ունեին արդեն երեք ուսումնարան — Ազաբաբյան, Լազարյան և Ներսիսյան:

58 թվին «Հյուսիսափայլ»-ը. աշխարհաբարի և գրաբարի կռիվը:

Նրա գրողները. Նալբանդյան, Սմբատ Շահազիզ, Բաֆֆի:

Այդ ժամանակ և Գամառ-Քաթիպա:

Աշխարհաբարի հաղթությունը: Բարբառների իշխանությունը:

Արևելյան և արևմտյան բարբառները:

Հալածանքի և պանդխտության դրականությունը:

Հին, ժողովրդական:

«Ափսո՜ս քեզ, հայոց խեղճիկ ժողովուրդ»:
«Կռունկ, ուստի՞ կուգաս»:
«Կիկոն ի Գասմ բաշա». «Տաղեր ու խաղեր». 116.[1])

Բայց չի կարող դալ. վերադարձ չկա հայ պանդուխտին. ընդհակառակը — ամեն տարի, [հենց որ գարունը դալիս է ու ճամբեքը բացվում]—տեսնում ես, ինչպես ժողովրդի երդն է ասում.

Անցավ ձմեռ, եկավ գարուն,
Ճամբա բացվեց դարիբներուն[2])

Եվ պանդուխտները շարան-շարան ձգվեցին դեպի օտար երկիրներ:

Վերադարձ չկա, և ահա մնում են պանդխտության մեջ հուսահատուր ողբալ ընկերի հետ.

«Թո՛ղ, ախպե՛ր, թո՛ղ». (180, «Քնար»): [3])

Մի ժողովուրդ միշտ հալածված իր բնիկ երկրում, պանդխտության ճանապարհին ու պանդխտության մեջ:

Եվ ահա գալիս են նրա գրողները — նրա բանաստեղծներն ու վիպասանները:

Ինչո՞վ են գալիս.

Պանդխտության դանդաղներով ու բնիկ երկրի կարոտով, խաղաղ կյանքի, հանգստի, աշխատանքի տենչերով:

Պանդուխտ գրողներ
(և բնաշխարհիկ)

Եվ իրենք, գրողներն էլ պանդուխտ են իրենց ժողովրդի մի մասի նման:

Ահա Գամառ-Քաթիպան հյուսիսից գանգատվում է.

Հեռացել եմ իմ մայրենի աշխահից,
Սերտ բարեկամք անջատված են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բլսած ծաղկի նման դաշտումը:[4])

Ալիշանը Վենետիկից մրմնջում է.

Ո՜հ, լերունք ծաղկաց, ոհ, ջուրք ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերտ ի հիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք եկեք մոտ ի հիս,
Շունչ ու երգս առեք, տարեք ի Մասիս:[5])

Ահա Շահազիզը թափառում է հյուսիսի բերյոզաների տակ ու թախանձում.

...Ո՞վ կանաչ թփեր,
Ստվեր տվեցեք մի օտար հայի,
Որ այց է գալի ձեզ օր ու գիշեր:
Բայց ոչ, չեմ տեսնում ես ուրախություն,
Ժամ մի չզգացի նորա արձագանք,
Ճեմում եմ ձեր տակ, բայց ոչ հաճություն
Գգվում է կուրծքս. ո՞չ, սև օձ, կապանք:[6])

Ահա Պեշիկթալշյանը Սև ծովի մյուս ափից հառաչում է.

Հեռի ի քեն պանդուխտ գոլով,
Քոյովդ հար տապիմ անձկով:[7])

Վերջապես, ինչպես ասում է Խորեն Նարբեյը.

Թող լայցեն աչք, որ երբեք ոչ անձկայրաց
Ողջունեցին զվեհ բարձունս հայրենյաց:[8])

Այսպես էր ժամանակը, այսպես էր ժամանակի կյանքը: Եվ այս մի այնպիսի մեծ հանգամանք է, և սրա ուժն ու իշխանությունը այնքան մեծ է ու զորեղ, որ ոչ մի հանճար չի կարող նրան արհամարհել, անտես առնել նրա հաշիվները: Այդ անկարելի է, այդ կնշանակի չապրել այն ժամանակում, կամ ուղղակի — չապրել: Իսկ ապրող, կենդանի մարդու, ևս առավել բանաստեղծի վրա նա ազդում է հազար կողմից. արտացոլում է նրա հոգում յուր առանձնահատուկ երևույթներով և արտահայտություն է գտնում նրա ստեղծագործությունների մեջ:

Արդեն համառոտ տեսանք, թե երբ էին ապրում և երգում մեր նախորդ շրջանի բանաստեղծները, թե ինչ ժամանակ էր այն և ինչ հասարակություն: Ահա այսպիսի մի դարի և ժողովրդի բանաստեղծ գալիս է ու ասում.—

«Սառն է այս դարը, և ես ավելի
Քան թե մի այլ ոք, արհամարհում եմ
Նյութապաշտությունն նորա անհոգի,
Հակառակ դարիս, Սեր, քեզ երգում եմ»:

(Ս. Շահազիզ, «Լևոնի վիշտը» 31)*

---

* Սմբատ Շահազիզյան, «Լևոնի վիշտը», 1865 թ., Մոսկվա:

Բայց, դեռ բերանը նոր բաց արած, հանկարծ հրաժեշտ է տալիս այդ սերին.

«Այլ այժմ ներիր (սեր),— ճակատագիր
Վերաս դրեց լուծ սաստիկ...»

(Նույն, 46)

(Ահա մի նշանավոր և հետաքրքրական պատմություն):— Հարցրեք: Այս ի՞նչ «սաստիկ լուծ» է, որ բանաստեղծին բաժանեց յուր «սեր»-ից, որ դեռ նոր էր ուզում երգել, նոր էր ուզում գրկել, ամբողջ աշխարհն ու դարը արհամարհելով: Գիտե՞ք, թե այդ ինչ լուծ է և ով դրեց այդ լուծը բանաստեղծի քմահաճ ոգևորության վրա: Լսեցեք, նա կասի.

«Հայն գոսացել է, վա՛յ նրա օրին,
Անգութ խավարի գավազանի տակ.
Եվ նորա սիրտը և նորա հոգին[9])
Ապականվելով դարձել է փլատակ»:

Եվ ահա երգը փոխվում է.

(Նույնը, 56)

«Չէ՛, մեզ պիտո են ուսումնարաններ,
Այլ հնար չըկա սորա փրկության,
Ազգային դպրոցք և պանսիոններ
Կրծածկլեն այդ ցեխ, այդ հոդու ընդան...
Ակադեմիա — Մայր-էջմիածնում,
Նախագահ վանքի գավթին ու դրան,
Ուր եռ է գալի այս ներկա օրում
Ընչասեր արյուն, ախտեր անարժան:
Քանի դար անցավ, և մինչև այսօր
Չունենք մենք դպրոց, այդ բանն առաջին,
Գումար կազմվեցավ շատ նշանավոր,
Նորան սուրբ հայրերն անպատուլ արեցին:
Խեղճ ժողովուրդը յուր հետին լուման
Բերեց աստուծո գանձանակ ձգեց,
Հոգևոր ուսում չըտվեցին նորան,
Նա չըմտածեց և չըբողոքեց:
Հասավ ժամանակ. մենք բողոքում ենք,
Մենք աղզի անդամ և երեսփոխան...,

(Նույն, 127)

Ո՞րտեղից որտեղ: Սեր էր ուզում երգել, բայց այդ դարիս հակառակ էր և նա չկարողացավ յուր երգը շարունակել, նրան

ընկճեցին «ծաներ պիտույքը հասարակության». նա դարձավ «երեսփոխան», հաշիվ է պահանջում... ոտանավորով: Այս արդեն դարի—ժամանակի երգն է:

Մի ուրիշ բանաստեղծ այսպես է նկարագրում այդ նույն երևույթը:

«...Ազգի վիճակը ծանրացավ սրտիս....
Ապոլլոն տվեց ինձ յուր քնարը,
Որպես փարատող տրտում ցավերիս:
Ավա՜ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նույնպես լալագին, նույնպես վշտահար,
Որպես իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չգտա մի լար:
Լո՛ւռ կաց, դու քնար, այլ մի հնչեր ինձ,
Ապոլլոն, հետ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Ջոհ բերել կյանքը սիրած աղջկան:
Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի դոչեմ, պիտի բողոքեմ
Խավարի ընդդեմ պատերազմելով...»:

(«Մանկության օրեր» Կոմս Էմմանուել)[10]

Չլինի դուք կարծում եք, թե այս բանաստեղծն ընդունակ չէր կյանքը զոհ բերել սիրած աղջկան: Ո՛չ, սխալ կլիներ, եթե այդպես հասկանայինն: Նա ուրիշ օրերում այդ կաներ, բայց այժմ ազգի դառն վիճակը ծանրացել է սրտին և նա ժամանակին է հարկ տալիս: Այդ հեշտության, սիրո և քնարի օրեր չեն, խավար է շուրջը.

«Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար...»

(նույն երգ)

Այդպիսի ժամանակներում, այդ օրերում բանաստեղծն ուրիշ ցավ ունի.

«Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գըտներ աղբերքն համայր,
Ցամքիլ ծաղիկ հասակի մեջ.
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար:

Ջերմ համբույրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատս դալկահար՝
Հանգչեցունել հողե բարձին,
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Դեռ չըգրկած էակ փունջ մը
Ժպտե, գեղե, հուրե շաղյալ՝
Գրկել սա ցուրտ հողակույտը,
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Քաղցր երազով մ' հըղի մրափ մը
Զանգորրած գլուխըս մըրրկահար՝
Ննջել հողե վերմակի տակ,
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Հագնիլ հյուղին մուր-անունը,
Ծրծել նորա մրուր օդն հար,
Միշտ ցավիլը միանգամայն,
Ո՜հ, չէ այնչափ ցավ ինձ համար։

Հեք մարդկության մեկ ոսոը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ
Զօդնած անոր՝ մեռնիլ աննշան.
Ո՜հ, այս է սոսկ ցավ ինձ համար։[11])

...Նրանցից յուրաքանչյուրը «յուր վերա առնելով հրապարակի մեջ քարոզ լինել ճշմարտության բանին և սաստող ու հանդիմանող ստության, խարդախության և խավար գործերին, վաղուց գիտեր և լավ հասկանում էր, թե նորա հանձն առած պաշտոնը բացի կենսամաշ մտավոր աշխատություններից, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի դեպի կյանք ու մահ պատերազմ յուր սևփական աղգի մեջ կանուխ արմատացած սխալ ու ծուռ կարծիքները, որ դարավոր սովորությամբ աճելով և զորանալով դարձել էին նորա համար մի քաղցր բան, նրա կյանքի հարկավոր պայմաններից մինը» («Հյուսիսափայլ», 1860, № 1, Ս. Նազարյանց)։

Նրանք ասում են.

«Իջանելով հայ դպրության ասպարեզը, մենք գիտեինք, որ դարավոր տգիտությունը պատերազմ պիտի հայանի գիտությանը, որին լինելով մի լոկ սպասավոր, օրհնեցինք և ընդունեցինք այդ

պատերազմը («Հյուսիսափայլ», 1860 թ., 1-ին կիսամյակ, էջ 466, «Հիշատակարան» Կոմս Էմմանուելի)։

Հիրավի՛ ծանր պատերազմ։

Նրանց առջև կանգնած էր զգացմունքները բթացած, խավարի ու սարկուիչյան մեջ ծնված ու սնված մի ժողովուրդ, որի իմացական ընդունակությունները քայքայվել են.

«Մնացել է միայն մի բիրտ ու կոպիտ ձգտողություն դեպի մարմնավոր ստացվածքներ, և ինչ որ այսպիսի ձգտողություն չէ, ոչինչ է ամենևին նրա աչքումը» («Հյուսիսափայլ», 1860 թ., № 1, էջ 5, Ստեփանոս Նազարյանց)։

Մի ազգ, որի մեջ «չէ գնահատվում խոսքի արժանավորությունը, ամենայն քայլափոխում տեսնում ենք այնպիսի վարվեցողության օրինակներ, որ անվայել էին բանականության («Հյուսիսափայլ», 1858. երկրորդ կիսամյակ, էջ 30, «Նկատողություն», Միքայել Նալբանդյանց)։

Ուր «Ամենայն ինչ առանձին, բաժան-բաժան, ջոկ-ջոկ, ցան ու ցիր, վայրիվերո, անկարգ և վայրենի, այնպես, որ ամենափոքր գործը, որ կարող էր հասարակաց օգնության, իսկույն հանդիպում էր ամենասաստն, մեռած ու քարացած սրտերի և չախջախվում էր դոցա վերա հազար ու մի կսոր» («Հյուսիսափայլ», 1862 թ., երկրորդ կիսամյակ, էջ 46, Ստեփանոս Նազարյանց)։

Ուր «Մի ինքնըստինքյան չնչին և աննշան բան, միմիայն յուր արտաքին, թեատրոնական ձևավորության պատճառով նախընտիր է համարվում... քան թե մի այլ ծանր խնդիր, որի լուծանելուց կախված էր ազգի ստույգ և ոչ թե կարծեցած հառաջադիմությունը («Հյուսիսափայլ», 1858, երկրորդ կիսամյակ, էջ 31, Ս. Նազարյանց, «Երկու խոսք»)։

Մի ժողովուրդ, որի միջից անկեղծ հասկացողությունը ձայն էր տալիս.

«Ապրիլ հոգեկան և մարմնավոր զարգացողությամբ, ապրիլ ազգային և բարոյական կյանքով, ապրիլ ըստ քրիստոնեական մարդկային ազգի հոգվույն հետ միացած, ապրիլ ըստ լուսավորության՝ ազգային կամ ընկերական հանճարով, մեզ համար շատունց անիմանալի բաներ են եղած։ Ընկերության մեջ երիտասարդ աղջիկների հետ մի խելացի խոսակցությամբ բանալ, մի փոքր մխիթարվել նոցա սրտի և հոգու ազնիվ ու սիրարժան հատկություններով, այդ մի շլսված և չտեսնված բան է» (Հյուսիսափայլ, 1859 թ., առաջին կիսամյակ, էջ 55, Ս. Նազարյանց, «Նկատողություն»)։

Ահա՛ մի ողորմելի կյանք։ Պարզ բան է, որ խղճալի պետք

է լիներ և սրա գրականության ու գրողների վիճակը: Եվ ահա բողոքը.

«Մի աշխատավոր հեղինակ մեր մեջ, շատ տեսակ գեղեցիկ գրվածքներ ուներ տալու յուր ժողովրդին, բայց նրա ձեռքն ու ոտքը կաշկանդված են, որովհետև չկա մի հասարակություն, որ խելացի կերպով օգներ և քաջալերեր նորան,— մի աշխատավոր հեղինակ, ասում ենք, եթե հայոց մեջ լիներ մի խելացի հոգաբարձություն, ձեռք ու ոտք կստանար պիտանի լինելու յուր ժողովրդին, մինչ այս րոպեիս, ներկա պայմանների մեջ մեռած է նորա համար» («Հյուսիսափայլ», 1862, երկրորդ կիսամյակ, էջ 49, Ս. Նազարյանց, «Առաջարկություն»):

Եվ եթե «մի հեղինակ որևիցե ճանապարհով ձեռք է բերում այնքան արծաթ, որ կարող է հրատարակել մի գրվածք, հետո, երբոր գիրքը դուրս էր եկել տպարանից, չգիտե թե որպես տարածե յուր աշխատությունը, որովհետև հայերի մեջ չկա գրավաճառություն և գրավաճառական կարգ» («Հյուսիսափայլ», 1858, երկրորդ կիսամյակ, էջ 330, Ս. Նազարյանց, «Կրիտիկա»):

Նպաստող չկա, գրավաճառություն չկա, ընթերցող չկա, չկա քննադատող ու գնահատող, իսկ եթե կա էլ՝ չեղածից ավելի վատ է:

1840 թվին մի պարոն գիրք է տպում Թիֆլիզում, և ահա 1853 թվին մեկը քննադատում է այդ գիրքը և ի միջի այլոց, ասում է, թե «դորա հեղինակը պախարակելի էր, ըստ որում առաջ փակեղ է կրել, իսկ այժմ բոլորշի գլխարկ, կամ երբեմն լայն վարտիկ է հագել և այժմ նեղ, և այլ այսպիսի ցնդաբանություններ» («Հյուսիսափայլ», առաջին կիսամյակ, էջ 72, Միքայել Նալբանդյան, «Կրիտիկա»):

Այսպես է պատմում ու բողոքում Միքայել Նալբանդյանը: Բայց ոչինչ չօգնեց սրա և իր նմանների բողոքը. նույնիսկ իրանք— Նալբանդյանը և Նազարյանը մի արժանավոր բան չավին: Եվ «Հյուսիսափայլ»-ում չկար քննադատություն. «Կրիտիկական բաժինը—շատ ցավելով ասում է հրատարակիչը այս խոսքս, հետ է մնացել մինչև այսօր նույնպես անձեռնհասության պատճառով» («Հյուսիսափայլ», 1861, երկրորդ կիսամյակ, էջ 391):

Բայց այդ բավական չի դեռ:

Այս մութ, անձուկ, մառախլապատ աշխարհում՝ յուր ավանդական հարգով ու իրավունքով ապրում էր դիտնական — խալիֆաների մի բազմություն: Այս երանելի մարդիկը վանքերի ավերակների վրա հառաչելով ու հայի անցյալ մեծության առասպելները պատմելով, անկեղծ ճգնում էին ժողովրդին պահել յուր հին

ադաթների մեջ։ Հենց որ հորիզոնի վրա երևացին հայոց մտավոր և բարոյական վերածնության արշալույսի առաջին շողերը, վրդովվեցին այս մարդիկը, և՛ զարհուրած ի մի խմբվելով իրանց օրհասական ողբերի աղաղակը բարձրացրին, թե մոտ է հայի կորուստը, ահա մեզ լութերականություն են քարոզում, անաստվածություն են տարծում... Եվ փրփուրը բերաններին իրանց ծերության գավազանը բարձրացնելով՝ մի կատաղի պատերազմ հրատարակեցին լուսավորության նորեկ սակավաթիվ առաքյալների դեմ։ Եվ կռվեցին ամեն տեսակ զենքերով, ինչ որ կարող էր տալ խավարամտությունը և ասիական բթամտությունը։ «Գաղանական կատաղություն, որի մեջ արդեն վերջանում է ամենայն բանականություն և ամենայն բարոյականություն»։ Բայց հայոց նոր մտքի անվեհեր նահապետները համարձակ դուրս եկան այդ մեռելահոտ բանակի դեմ, օրհնեցին և ընդունեցին այդ պատերազմը՝ մեծ մարդու մեծ արհամարհանքով նրա դիշերատեսիլ զինվորներին կանչելով որբկուրանտներ, աբեղայամիտ մարդիկ, չքեր...

Եվ սկսվեց պատերազմը։

Մեծախորհուրդ և անհաշտ պատերազմ։

Էլ ի՞նչ ասես, որտեղից չշարժվեց այդ կռվում. կրոն, եկեղեցի, ազգություն, պատմություն, ընտանեկան կյանք...

Մի կողմից մեր նախնիքների անուններն և ուրվականները դուրս բերին, նրանց աստվածը կանչեցին իրանց օգնության, որպես թե կորչում էր նրանց հարազատ օրենքը,— մյուս կողմից լուսավորության քարոզչի խիստ և անողոք ձայնը որոտացնում է ճշմարտության խոսքը՝ մերկացնելով ու խարանելով բարոյական ախտերը և կանչելով դեպի լույս, դեպի հառաջադիմության ճանապարհը։

Այդ ժամանակ և վերջնականապես վճռվեց լեզվի մեծ խընդիրը։ Լեզուն մարդու իմացականության անոթն է, մարդկանց մըտքերի միջնորդն է, նա պետք է մատչելի լինի հասարակության և ընդունակ սնուցանելու ամեն մեկին,— մենք ընտրում և ընդունում ենք աշխարհաբարը, հայտարարեցին նորերը։ Այս առողջ ձայնից ալեկոծվեցան գրաբարի ջատագով հնասեր ծերերը, նզովեցին գռեհիկ աշխարհաբառն ու նրանով գրողներին, և գոչում էին.

Փրփուրը ժայթքեց մորուքի վերա,
«Վա՜հ, անմիտ կարծիք, վա՜հ, անմիտ խոսքեր,
Հե, անտես առնիք լեզուն Ադամա»։

(Շահազիզ, «Վանի վիշտը», էջ 11)։

Գրաբարյանների—հին սերնդի բանակի բերան հանդիսացավ յուր ժամանակին Հայոնի Առաքել վարդապետ Արարատյանը և դուրս եկավ Նազարյանի դեմ մի գրվածքով «Դիմագրաւ ընդդեմ սատան յարուցելոց ամենապատուական լեզուիս հայոց»։[12])

Այսպես հանդիսավոր է սկսում սա յուր «Դիմագրավը»։

«Հայք իբր անդրանիկ ազգ Ասիոյ և որպէս յաբեթասերունդ աւագապատիւ ժողովուրդ արևելեան ի սկզբանէ աշխարհի վիճակելոյ վերին շնորհաց ունին իւրեանց սեփական լեզու, որ ճիշդ միտ դնելով աներկբայելի պատմութեան սկզբնաւորութեան ազգիս՝ համարի մայր, վաղեմի, առաջին, երիցագոյն և հարազատ, ոչ մուրացիկ, ոչ կարկատեալ, ոչ ածանցեալ, և ո՛չ փոխառեալ յայլոց, այլ նախամարդոյն Ադամայ պարգև և պատակ բանականութեան շնորհեալ ամենիմաստ արարչապետին դեռ ի խանձարուրս նախածին կենաց և անմեղութեան վիճակի նորա...»։

Ապա հայտնելով, թե «չիք անտառ առանց ճագարի, չիք անդ անմոլեխինդ և անորոմն» և թե «ոմանք իբր լուսավորութեան աղագաւ և եղբարց իւրեանց օգնելոյ և բարիս առնելոյ նպատակաւ, սատան յարուցեալ են պանծալի լեզուիս մերոյ, մերժեն զնա ծայրագոյն արհամարհանօք, պարծենան նոր լեզու ըստեղծանել» (էջ 8)։

Մյուս երեսին ասում է. «Առաջին համախոհ, կուսակից, հետամուտ և ջատագով աղանդասարաս նորասիրացս է Ստեփան վարժապետն Նազարյանց՝ որդի Տփխիսայ Նորաշեն եկեղեցւոյ երբեմն միաբան հանգուցեալ Խոյեցի Սահակայ քահանայի, որ ծնեալ ի Հաւլաբար, սնեալ և ուսեալ ի Ներսիսյան ուսումնարանի հայոց քաղաքիս, և զամս վեց աշակերտեալ ինձ ի հայկական դրպրութեան ի 1832 թուին գնաց ի Դորպատ...» (էջ 9)։

Սա, ասում է «Դիմագրավը» «է զի՝ չեկեղեցին Աստուծոյ ձեռն արկանէ կարճել զսրբազան հօքն խորհուրդս նորա և ըստ կամաց իւրոց սահմանել և խօսիլ. և է՝ զի լեզուին մերոյ օձեաց տնի ջընջել զհնութիւն նորա յաշխարհէ, և նոր լեզու կարկատէ և տա անուն նորայ Հայախօսութեան։ Եթէ ամենայն ռուսահայք քաջ ուշադիր, նուրբ խորհմաց և յամենայնի վերահասու լինէին մտաց, խորհրդոց, բանից և գործոց վար. Նազարեան ուղղեալք հասարակօրէն՝ ի վնաս եկեղեցւոյ, կրօնի և լեզուի մերոյ, ոչ միայն օգնէին տպագրութեան գրեանց նորա.... խափանէին զնա մի ևս խօսիլ կամ գրել ինչ զազգէ, զկրօնէ և զլեզուէ մերմէ» (էջ 22)։

Այդ հնության փաստաբանը բերել է նաև այսպիսի նախա-

դասութիւններ գրաբարի օգտին, թե՝ «Դեռ ի բերանոյ հասարակաց ոչ ոք լուաւ և լսէ տրտունջ և գանգատ զմերոյ անստգիտ պատուական լեզուէ բաց ի գոհութենէ և ի գովութենէ (10). կամ թե՝ «Հասարակութիւն մեր ըստ մեծի մասին անդրադետ լինելով, մի և նույն է վասն նորա բան գրաբառ և աշխարհաբառ, ականջք նորա անսովոր ընթերցանութեան, նոյն է ասել.....» ...և խրատելով սպառնում է.

«Մի սերմանել իզուր երկպառակութիւն և փոխանակ օրհնութեան հնձել անէծս յամենեցունց մինչև ցվախճան աշխարհի» (էջ 14):

Այս անզորացած և մահամերձ ծերության վերջին խոսքն և ուժն էր, և սպառնալու ժամանակ արդեն նրա ոտները դագաղումըն էին:

Արդեն ասված էր, թե՝ «Հայոց լեզու ասելով հասկանում ենք մեր ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խոսքը, այն լեզուն՝ ձևերը, որով մեր ժամանակի հայերը լավ ու վատ հասկացնում են միմյանց իրանց միտքը, զգացողությունը և զգացողությունքը: Հայոց լեզու ասելով իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որ կյանք ունի մեր ժամանակումը, և ոչ թե ուսումնական, գրոց ասած լեզուն, որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել գիտնական հային, լեզվի նորաշինության համար, աշխարհաբար լեզվի թերությունքը լցուցանելու մայրենի աղբյուրներից» («Հյուսիսափայլ», 1858, № 1, Ս. Նազարյանց, «Հայկական լեզվի խորհուրդը»):

Սրանք այս մեծ վիճաբանության վերջին բանաձևերն էին:

Արդեն վճռված էր խնդիրը, արդեն գրված էր «Վերք Հայաստանին» և կյանքը ձայն էր տալիս հայոց բանաստեղծին.

«....Մանուկ, քեզ գալինի,
Գնա նոր խոսքով բան մի գրուցել»:

(Շահազիզ, «Լևոնի վիշտը», էջ 9)

Այո՛, բոլորովին նոր էր խոսքը, նոր էր բացվում «կենդանի ժողովրդի կենդանի բարբառի արշալույսը», և, որպես ամեն մի նորություն, ուներ յուր խակությունը, յուր թերությունը, յուր անկատարությունը: Չէ՛ որ հենց այդ նոր խոսքի դայակներն ու պաշտպանները երեկ մեկել օրը հին խոսքով էին խոսում, գրաբառ էին գրում: Եվ մեր նախորդ շրջանի գրողները բոլորն սկսել են գրաբառով:

Ստ. Նազարյանցը (այդ նոր խոսքի կնքահայրը), ցույց տա-

յու համար, որ ինքը գրաբար գիտի, 1851 թվին գրեց ու հրապարակեց գրաբառ «Յաղագս փորձնական հոգեբանութեան ճառ», և հառաջաբանի մեջ ասում է. «Գիտնական վաստակ մեր այս առաջին գոլով ի լեզու հայ, ի դեպ ելաներ մեզ դէթ սակաւուք ցնդել և փարատել զտարակոյս կասկածամիտ արանց ոմանց, որք չէ ևս գիտեն թէ և մեր ուսեալ է փոքր ի շատէ պաշտել զգրպրութիւն ի ժանգոտեալն աննորոգելի հնութեամբ լեզու առաջնոյն Հայկազանց» (Յառաջաբան, Գ)։

Մյուս երեսին ասում է.

«Բայց առ յապայս ոչ անփոյթ արասցուք ելանել ի հրապարակ նորոյ հայկաբանութեան, նոյն և մերկապարանոց առաջի աշս ունողացն կացուցանել՝ թէ սոյն այս աշխարհիկ բարբառ անտեսեալ մինչև ցայսօր ի մերայնոց... զորէ այո բացատրել զխորհուրդս լուսաւոր մտաց» (նույն տեղ)։

Նույն այդ թվին Միքայել Նալբանդյանը գրաբար ոտանավորներ էր գրում.

«Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերա ուսման».

«Յէ բանդագուշ ի սէր ոսկւոյ որ զհոգիդ հանես ձօն,
Ջաշխոյժ հոգի պարմանեկին քոյդ թակարդես ի ծուղակ,
Դմա թոյլ արա գարունագեղ լուսաւորիչ հոգւով ո՞ն,
Քան յորոգայթ ացնցել յիմար խէնէշութեան ի վանդակ»

և այլն («Արարատ», օրագիր, 1851, № 28)։

Անգլիայի մեծ բանաստեղծն է նա, թեկուզ և «Երրայական մեղեդիներ»-ի մեջ Սիոնն ու Երուսաղեմը երգի։ Անգլիայի մեծ դրամատուրգն է մյուսը, թեկուզ Հռոմի կյանքից առնի յուր ողբերգությունների բովանդակությունը։ Մի՞թե. Պուշկինն ու Լերմոնտովն էլ Կովկասի լեռների ու վայրերի վարքն ու բարքը չեն երգել. բայց ո՞ր վրացին կամ չիչենը նրանց յուր բանաստեղծը կհամարի։ Արդ, մի կարևոր հարց. ինչո՞ւ է այս այսպես.— որովհետև իրանց մայրենի լեզվով, ոճով ու ոգով են երգել։

[Ժամանակի հաշիվը տեսանք համառոտ. տեսանք ժամանակի և բանաստեղծի հարաբերությունը, տեսանք, որ հայոց ժողովուրդը բանաստեղծին դեռ կյանք ու ոգևորություն տալու ընդունակություն չուներ.

Ժամանակի հաշիվը տեսանք, այսպես և նոր էր աշխարհիկ լեզուն. և տակավին նոր է, դեռ ապրում է և պրում է այն մարդը, որ ասաց.

«Ժամանակակից գրում եմ լեզվով,
Որ ամենայն մարդ կարդա, հասկանա...

(«Հևոնի վիշտը», Շահազիզ, էջ 9)

Այս փոքր հանգամանք չի գրականության համար, որ միայն լեզվով, բառերով պետք է արտահայտվի. մանավանդ բանաստեղծության ճոխ գույների ու ձայների համար, այս վատ հանգամանք չէր: Բայց վատթարագույնն այն էր, որ նոր լեզվի դայակները նրանց հիմք էին տալիս օտար երկրում, լեզվի արգանդից—ժողովրդից հեռու, և փաթաթեցին օտար ու խորթ խանձարուրի մեջ: Եվ դուրս եկավ, որ ձայնը Հակոբինն է—մորթին Նսավինը,—խոսքերն հայերեն—ձևերն օտար. ձևերը հայերեն—ոգին օտար:

Մեր բանաստեղծներն ապրեցին հեռու:
Նրանց ժամանակն այսպես էր:

***

...Ահա վերցնենք նրանցից երկուսին, որոնց երգերում ավելի հասարակական տարր կա, որոնց ազդեցությունը մեծ է եղել, և որոնք նորագույն բանաստեղծների մեջ ունեն իրանց հետևողները. վերցնենք Գամառ-Քաթիպային և Սմբատ Շահազիզյանին:

Գամառ-Քաթիպայի «Շինականի երեկոյան երգ»-ի մեջ շինականի կինն ասում է.

«Մարդս եկավ դաշտիցը...
Շալկին խուրձ էր, խուրձ ցորենի արտիցը»: (9)[13])

Ո՞ր հնձվորը վերադառնալիս մի խուրձ կշալակեր տուն բերելու. ինչի՞ համար է դա, կամ որտեղ է դնելու այդ խուրձը: Ուրիշ բան է, եթե հեղի լիներ:

Բայց նա կրկնում է մի այլ տեղ այրի հայ կնոջ բերանով, որ որդուն ասում է.

«Երբ մեծանաս, երթաս դաշտը, ուզես վարել քու արտը,
Քու մոր համար ուսով բերել ցորենի խուրձը ու բարդը» (24):

Արտը անշուշտ եղներով է վարելու, և ինչո՞ւ այդ այրին որդուն թույլ չի տալիս նույն եղներով էլ յուր խուրձն ու բարդը կրելու, փոխանակ ուսով կամ շալակով բերելու:

Բայց մենակ խուրձը չի շալակին.

«Խուրձդ վե՛ր դիր, թո՛ղ բաղ անեմ թոկերը,
Մեջքիդ առնում սուր, այդ սուր դերանդին».[14])

Հնձվորը հնձատեղից տուն վերադառնալիս ուսին է դնում գերանդին, և ի՞նչպես կարելի է մեջքին կապել, ի՞նչ հարմարություն կա... Այն էլ ասենք, որ գերանդով հնձածը չի կարելի (գոնե մեզանում) խուրձ կապել, մանգաղ պետք է լիներ։ Բայց նա դարձյալ ասում է.

«Յորեն, գարին գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը (7)։

Այստեղ նկատելու արժանի է և այն, որ ցորնի ու գարու հունձը զանազան ժամանակներում է լինում (և գարու խուրձ չեն կապում, նա կարճ է լինում առհասարակ)։
Շարունակում է.

«Ես քեզ համար հաց թըխեցի, սիպտակ, փափուկ գարեհաց»։

Գարեհացն ընդհակառակը կոշտ է լինում և ուտում են միայն ճարահատած, հացի թանկության ժամանակ, և շատ է անհասկանալի, թե ինչո՞ւ այս կինը գարեհաց է թխել յուր մարդու համար, և դրել այն սեղանի վրա, ուր ասում է.

«...Պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր,
Գառան մսեն շամփրի վրա խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած,
Կուժը լիքը կարմիր գինին դրած է,
Իմ ձեռագործ կտավ սուփրան փռած է...» (10)։

Շատ կզարմանային գարեհացն ու շինականը, թե նրանց այսպիսի ճոխ սեղան բազմեցնեին. կասկարայով էլ չգիտեմ, թե ի՛նչպես են միս տապակում։ Կասկարան այն պղնձյա եռոտանին է, որ դնում են կրակին, ապա նրա վրա պղինձը։
Գյուղական այրի հայ կինը յուր երեխային օրորելով ասում է.

«Հայրդ զորեղ երիտասարդ, առավ բակեն գութանը,
Լծեց երկու զույգ եզները իր սրածայր արորը» (23)։

Եթե գութանն է լծել երկու զույգ եզները — քիչ են, իսկ եթե արորը—ապա գութանն էլ ինչո՞ւ է տարել. չէ՛ որ դրանցից ամեն մեկն յուր ժամանակն ունի և ամեն մի հայ գեղջկուհի այդ լավ գիտի։

«Հայոց գինի» երգի մեջ ասում է.

«Հայոց աղջիկ է քաղել,
Քնքուշ ձեռներով քամել» (13)։

Բայց իսկապես հայոց աշխարհում խաղողը ոտքով կոխոտելով, ջարդելով են գինի պատրաստում և հայոց աղջկա քնքուշ ձեռքերն այնտեղ գործ չունեն:

«Արաքսի արտասուքը» հռչակավոր երգի մեջ ասում է.

«Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մեջ քու ջրերին և այլն» (էջ 31):

Բայց այսպիսի ծառ չկա Արաքսի ափին...

Բանաստեղծն յուր հայրենիքը—Հայաստանը օտարուհու առաջ գովելով ասում է.

«Ուր որ չկա բորեաս...» (24):

Այն ինչ, սոսկալի բան է Հայաստանի բորեասը.
Եվ առհասարակ այսպիսի բաներ է ասում.

«Մարդս եկավ...
Կանաչ դաշտից, դալար դաշտից տուն եկավ...
Շալկին խուրձ էր, խուրձ ցորենի արտիցը» էջ 9):

Ապա տվեք նկարչին նկարելու մի դաշտ, որտեղ ցորենի հունձ կա, նա անկասկած դեղին կնկարի. և ի՞նչպես կարելի է կանաչ երևակայել այն դաշտը, որտեղից հնձվոր է գալիս և ցորենի արտիցը խուրձ է բերում շալակին: Այդ ժամանակ արտերը հասունացած, դեղնած են լինում և ժողովուրդը դաշտի համար գործ է ածում լիմը դաշտ կամ լիմը հանդ:

Կենդանիներն ունեն իրանց բնորոշ առանձնահատկությունները և բնավորությունները. օրինակ, գառն ու ուլը ջրասեր կենդանիներ չեն, հովիվները նրանց ուժով ու զորով են ջուրը կոխում, երբ այդ հարկավոր է, սակայն բանաստեղծը «Մայր Արաքսս»-ին ասում է.

«Գառն ու ուլը քո վրճիտ
Ջուրը մտնին միշտ արձակ» (31):

Նույն երգի մեջ Արաքսն ասում է.

«Լուսաբերը մինչև այգ
Ջրիս միջին էր լողում».

Լուսաբերը (Արուսյակ, Եղջերուն) մի աստղ է, որ դուրս է գալիս միայն այգին—լուսաբացին, ինչպես և ցույց է տալիս նրա անունը՝ լուս-ա-բեր կամ այգաստղ: Ուրեմն ի՞նչպես մինչև այգ կլողար Արաքսի ջրերում, քանի որ մինչև այդ ժամանակ նա չէր կարող երևալ երկնքում:

Նա մի տեղ ասում է*.

«Մարտն անցավ, հասավ ապրիլ գեղեցիկ...
Կռունկը թռավ, գնաց վերերն,
Սոխակն էլ փախավ մեր պարտեղներեն։

(«Միծեռնակ», էջ 7)

Իսկ մի այլ երգում տխուր երեխային այսպես է մխիթարում.

«Մի՛ տրտմիր տղա, թող անցնի Մարտը...
Նորից սոխակը պիտի գա հանդես»։

(«Աշուն», էջ 18)

Ո՞ր ասածին են հավատում այն երեխաները, որ այս երգերը երգում են և անգիր սովորում։

«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի մեջ լուսինը պատմում է.

«Ծագեց արևը. կատարք շողշողուն
Երևան եկան հայոց սարերում.
Անոսր ամպերը կարմիր, ծիրանի
Գույներով ներկած՝ զարդ էին երկնի (էջ 86)։

Եվ շարունակության մեջ նկարագրում է Վարդանանց պատերազմը, որ կատարվել է ցերեկով։

Այս մի՞թե լուսնի պատմելու բան է։ Ասենք կարելի է պնդել, թե ցերեկն էլ է լուսին երևում, բայց չէ՛ որ լուսնի գաղափարն ու կյանքը կապված է գիշերի հետ, և նրան խոսացնել ցերեկվա անցքերի մասին՝ շատ է անբանաստեղծական և նույնիսկ անբնական—բանաստեղծության տեսակետից։

Նա գրում է.

Նստան՝ հանգչիլ կաղինեներու հովումը (7).
Երբ աստվածանից հարցա.— (14).
Ի՞նչ ես ջարդում անձդ, է՛յ մարդ, ցավերով (16).
Ժանգ արծաթի խաթրին դու քեզ գերել ես (16).
Ա՛յ իմ չար բաղդ...
Կույր է և քու թշվառ կյանքը և այդ պաշտոն տըվողը,
Ոչ բաղդ, այլ աղբ քեզ չէի տալ՝ պարարտացնել կոշտ հողը (17).
Իմ վիճակին կարեկցություն մարդ չունի (19).
Թող սառ լինի իմ նոր տանը հատակը (20).
Կմամռոտած գերեզմանը այն քարի (20)։

* «Մանկական երգեր», Թիֆլիս, 1880 թ.։

Աչքդ փակի, այդ լուսափայլ աստղի նման փայլածը,
Որ մինչև այդ երկնքումը երևում է ցոլածը (23).
Շուտ կհասնիս դեպի ծով (31).
Մեռած, պատանքած գետնին կյանք տվար,
Տերևթափ ծառին սովերախիտ արար (38).
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը (43).
Համակ աշխարհ մոռացած, ունկս քու ձենին հառած (105).
Արցունքը...
Հեղհեղի պես ինչո՞ւ են ոռոգում քու աչմուռքը (107).
Թըշիս վրա չե՞ս տեսնում փայլած շուշանն ու վարդը (107).
Թող իմ աչքից հեղհեղա արտասուների աղբույրը (107).
Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով (108).
...Այն ապշեցած բազմության (119).
Սևին տված մի տնակ կար՝ նա այնտեղ էր վռազում (130):
Ո՛վ իմ դրբույկ ոսկեշունչ (133).
Ո՞ւմ հուսան հայքն, դեպ որի՞ն դիմեն,
Պաշտպան, ապաստան, ո՞րտեղ թող գտնեն (165).

Ամբաստ Շահազիզյանը գրում է.
Անհյութ, մանուկ խակության (10).
Դեռ ունիս ապդել թովիչ զորության (12).
Եվ սիրում էր շատ այդ ալևորը (մոր մասին է խոսքը) 22.
«Բարի գործել»,— այս, ասում էր, կյանքից
Է այն հազվագյուտ մեզ մավզոլէոն (25).
Եվ ցրտասառույց խավար դագաղի
Երբեմն ճակատին ալեկոծվում էր (26):

***

...Անգլիացի Մորիերի «Հաջի բաբա» վեպը[15]) այսպիսի թթու հայրենասիրության դեղեցիկ և ճշգրիտ պատկերն է: Մարդկային բնության ընկածին է սիրել, ամեն մերձավոր՝ ինչ որ իրան հարազատ է և հայրենակից. բայց այդ սերը կա և՛ անասունների մեջ, հետևաբար, ուրեմն մարդու սերը պետք է բարձր լինի: Անասնականի վրա մարդկային սիրո այդ գերազանցությունը կայանում է բանականության մեջ, որը մարմնականն ու զգայականը լուսավորում է հոգով, իսկ այդ հոգին ընդհանուր է: Պետրոս Մեծի օրինակը, որ ցուր հարազատ որդու մասին ասաց, թե՝ ավելի լավ է օտար լավը, քան սեփականն ու անպիտանը, ամե-

նից լավ է պարզում և արդարացնում մեր միտքը: Հարկավ, մասնավորից չի կարելի օրենք շինել ընդհանուրի համար, բայց համեմատության միջոցով կարելի է ընդհանուրը մասնավորելով բացատրել: Կարելի է չսիրել և հարազատ եղբորը, թեև նա վատ մարդ է, բայց անկարելի է չսիրել հայրենիքը, ինչ որ էլ նա չինի. բայց հարկավոր է, որ այդ սերը չլինի մեռյալ բավականություն նրանով, ինչ որ կա, այլ կատարելության կենդանի ցանկություն: Մի խոսքով սերը դեպի հայրենիքը միաժամանակ պետք է լինի սեր և դեպի մարդկությունը:

Եվ ահա կյանքի մասին մենք ասացինք բոլորը, ինչ որ ուզում էինք ասել, և թեև, ըստ երևույթին, դրա համար հեռացանք մեր խնդրից, բայց իսկապես միայն մոտեցանք նրա վճռին:

Բանաստեղծությունը կյանքի արտահայտությունն է, կամ ավելի լավ է ասել, ինքը կյանքն է: Այդ դեռ քիչ է. բանաստեղծության մեջ կյանքն ավելի կյանք է, քան թե իրականության մեջ: Այստեղից ծագում է նոր խնդիր, որի լուծումը կլինի և՛ բանաստեղծության մասին եղած խնդրի լուծումը.— եթե կյանքն յուր մեջ պարունակում է այնքան բանաստեղծություն, որ [իսկապես] կյանքն յուր էությամբ և բանաստեղծությունը համանիշ են,— [ապա] էլ ինչո՛ւ համար մի այլ բանաստեղծություն, և ի՛նչ անհրաժեշտություն կարող է ունենալ գեղարվեստը կամ ի՛նչ ինքնուրույն նշանակություն....

...Այս մի թռուցիկ հայացք էր, որով մենք տեսանք բանաստեղծին յուր բարդ կյանքի մի երկու ընդհանուր [դրության] մեջ, յուր ժամանակի և միջավայրի մեջ: Բայց այդ ժամանակն ու միջավայրը ուրիշ հազար ու մի իրանց հատուկ հանգամանքներ ու պայմաններ ունեն, որոնցից յուրաքանչյուրը ուժգին ազդել է բանաստեղծի հոգեկան կյանքի ու ստեղծագործություններին վրա: Հենց օրինակի համար նրանց նյութական դրությունը, որից ելնելով Մ. Նալբանդյանի պես մոլեռանդ գաղափարականը բացականչում է. «չարժե այս ժողովրդի համար գրիչ առնել»[16]), Խ. Աբովյանը անդադար այս-այն կողմ թափառելով, ասում է՝ «մտածում էի, թե գնամ մի հարուստի ոտքերն ընկնեմ, ասեմ՝ դու ինձ հաց տուր, ես նստեմ գրեմ», որի համար Գ. Քաֆիպային մուրացկան էին ասում, երբ որ նա նեղն ընկած ընդունում էր նպաստներ, կամ ստիպված էր լինում դիմել սրան-նրան, որի համար Պեշիկթաշլյանը [յուր ամբողջ կյանքը] մինչև մահ տնային վարժապետի ողորմելի պաշտոնի մեջ էր կաշկանդված,

Պ. Դուրյանը խուզին <....> ցամաքեցավ, և այլն [և շարունակությունը տես կենդանի մնացածների մեջ]։

Ինչ և իցե. ոմանք թողնին հայոց Պառնասը և ոմանք իջան գերեզման, ոմանք կյանքի հանգստության անկյունները քաշվեցին։ Եվ թող հավիտյան օրհնած լինի նրանց անունն ու հիշատակը, որոնք չարիքների ու կարիքների աշխարհքում հնչեց(ր)ին իրանց քնարը, լսելի արին երկնքի լեզուն և իրանք անմխիթար սառապելով, ուրիշների համար դարձան մխիթարանք և ողևորություն։ Ահա կյանք, տր արդանդից արդեն խոստացված ու նշանակված է ընդհանուրի համար։ Նրանք գնացին։ Նրանց տեղն եկավ նորագույն բանաստեղծների սերունդը, ոտանավորչների մի ամբողջ նախիրի հետ, որպես լինում է առհասարակ։

Մեր մամուլը, որ կարծում էր՝ թե բանաստեղծությունը Ս. Շահազիզի ու Գամառ Քաթիպայի հետ լռեց կամ Դուրյանի ու Պեշիկթաշլյանի հետ մեռավ, շատ զարմացավ ու զայրացավ այս ջահելների ձայնից և գլխարկը դրեց փայտի ծայրին ու այնպես դուրս եկավ այս նորելուկ խմբի առաջ։ Նա կենսական ոչ մի շարժառիթ չտրոնց, ներքին ոչ մի արժանիք չտեսավ կյանքի, դրաճանության և այս նոր [մարդկանց] հոսանքի մեջ ոչ մի կապ չնկատեց և այս երևույթը բացատրեց [շատ վաղուց ասված] փառասիրական տենչով և նրանով, թե հեշտ է ոտանավոր թխել, հանգերի տակ մթագնել, ծածկել ամեն մի հիմարություն ու... դառնալ բանաստեղծ։ Այս մի շատ [հին, մաշված ու] տգետ բացատրություն էր, որին իրանք խոր հավատալով, սկսեցին մի անողորմ արշավանք և՝ առանց մտածելու, թե մի արդարի համար կարելի է մի [1 անընթ.] խնայել՝ չորն ու գեջը միասին ձգեցին կրակի մեջ։ Էլ ֆելետոններ, էլ ակնարկներ, էլ հոդվածներ, էլ խառն լուրեր, քննադատություններ... բոլորը հուշտ էին անում, ով որ էլ հանդես գար բանաստեղծի անունով։

Սակայն ամեն տեղ և ամեն ժամանակ այդպես է եղել։ Բայրընի նման բանաստեղծը, երբ յուր երախայրիքը հրատարակեց՝ մամուլը դրեց, թե երիտասարդ լորդը կամեցել է յուր անունը տպված տեսնել... Այժմ արդեն ամեն մարդ գիտե, որ այն մամուլը շատ է սխալվել, և եթե կրիտիկոսը խելոք մարդ էլ է եղել՝ ոչինչ հասկացողություն չի ունեցել բանաստեղծությունից, որովհետև, ինչպես Բելինսկին ասում է, կարելի է շատ խելոք մարդ լինել և չհասկանալ, թե ինչ լավ բան կա «Իլիականի» կամ «Մակբեթի» մեջ։ Այս հանգամանքը կարող է մխիթարել մեր հալածված ու վշտացած, իհարկե շատ համեստ, բանաստեղծներին և թերևս արդարացնել մամուլի շատ վարմունքները, բայց կա մի

այլ կողմ, որ միայն չարամտություն ու ցած կրքերը կարող են բացատրել: Այդ մամուլն այսօր դրվատելով ու երկինք հանելով մի հեղինակի տաղանդ ու գործ, վաղը մեկ էլ տեսաք նույնը անպատկառ տողերով <դար>ձրեց ամբոխի ծաղրանքի առարկա, բարձրացրեց յուր տմարդի հալածանքի խարազանը, ընկավ հեղինակի հետևից և ընդմիշտ կարեց նրա հոգու խաղաղությունը. յուր բերանում մաստակ շինեց նրա անունը, գործը, վիճակը, մասնավոր կյանքը...

[Ինչո՞ւ: Այստեղ առաջ է գալիս կուսակցության խնդիրը, որովհետև այդ գրողը հանդգնեց չհամաձայնել խմբագրի հետ կամ թե հեռացավ նրա թևերից, նրա կուսակցությունից ավելի ճիշտը—ճորտությունից:

Սրանով պետք է բացատրել և այն երևույթը, որ մենք հաճախ ականատես եղանք, թե ինչպես մի հրապարակախոս բանաստեղծության մի բարձր չափ է դրել հրապարակում, մեծ մեծ պահանջների գոռյուն-գոչյունով վեր է կացել ու ծաղրել մի շընորհալի գրիչ, և նույն մարդը առաջնորդողի մեջ է դրվատել մի՝ շնորհազուրկ ոտանավորչու տաղանդ ու ծառայություն կամ մի պասկվիլյանտի դեղարվեստական (?) երկ...]:

Ավելի հեռու գնաց հայոց մամուլը: Նա խրախուսեց յուր կուսակից համբակին, մինչև առաջին կարգերն առաջ քաշեց յուր օգտին հաջող պասկվիլյանտներ, անաչառություն աղաղակելով տաղանդ հռչակեց մի որևէ սինլքորի, և նրա բերանով թքեց [իսկական բանաստեղծի ճակատին, որ վաղուց բարձր կանգնած, ամեն իրավունքով պսակի էր սպասում]:

Այս օրինակները պարզ ցույց են տալիս, թե ինչպես կյանքը, նույնիսկ բանաստեղծի կամքին ու քմահաճույքին հակառակ, յուր կնիքը դնում է նրա գործերի վրա, յուր ձայնը լցնում է նրա հոգին:

Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք. բայց թե ի՞նչ բան է այդ հայրենիքը, ի՞նչի մեջն է նրա թշվառությունը, ի՞նչպես են ապրում, ի՞նչպես են խոսում, լալիս, ուրախանում և այլն և այլն նրա ժողովուրդը, ահա, այդ է հարկավոր, այդ առավելությունը, այդ հատկությունը [միայն] կարող է նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ: Հա<կա>ռակ դեպքում, նրանք կմնան հայ բանաստեղծներ, ոչ թե հայոց բանաստեղծներ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Դեպի ժողովուրդը, դեպի բնությո՛ւնը, հայոց գրողներ <....>

1898

<ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ>

Մարդիկ երբ որ գործ են ձեռնում մի բան, որ դեռ խակ է, տհաս է, չի զարգացել ու կազմակերպվել յուր կոչման [ծառայելու], պահանջին բավականություն տալու համար, այդ համարվում է բռնաբարություն և հասցնում է վատ հետևանքների։

Այսպիսի մի հանցանքի մեջ է ուզում դցել մեզ պ. Ա<վետիք> Արասխանյանը յուր <....>

Մեր աշխարհիկ գրական լեզուն ընդամենը 50 տարեկան է. մի շատ մատղաշ հասակ, մանավանդ լեզվի համար։ Եվ չի կարելի ասել, թե նրա զարգացման գործը այս 50 տարվա ընթացքում դոնե բարեհաջող պայմանների մեջ է եղել։ Երբ լեզուն ճոխանում, կազմակերպվում է գեղարվեստական գրականության մեջ—այդ գրականությունն ինքը այնքան աղքատ է եղել, որ չուտ է դնացել համարյա լրագրական լեզվով։ Երբ լեզուն կանոնավորվում է գիտական ուսումնասիրություններով, ապա մեր մի ջուխտ ու մի կենտ լեզվագիտները դեռ վիճում են տարրական բաների վրա։ Եվ այդ դրությունն այնքան [խղճալի է], որ նույնիսկ ինքը, պ. Արասխանյանը, առանց մասնագետ լինելու <....>

Եվ նրա [տարակուսանքն][1]) ավելի հիմնավոր ու արդար է, քան երկու ամսից հետո արած առաջարկությունը։ Թե որքան իրար հակառակ են պ<արոն> Արասխանյանի միտքը և մեր լեզվի զարգացման գործն ու ճանապարհը, այդ կարելի <է> եղրակացնել հետևյալ պարզ օրինակից։ Ոչ ոք չի [կարո<ղ>] ասել, թե մեր գրական լեզուն տասը տարվա ընթացքում կատարելագործվել,

հասունացել է: Այժմ դուք երևակայեցեք, թե տասը տարի առաջ աննին պ<արոն> Արասխանյանի առաջարկը և վճռին խոսել գրական լեզվով: Այն ժամանակ շատերը իրենց քվեն կտային Բաֆֆուն, որովհետև նա էր կանդնած գրականության գլխին և նրա երկերն էին կարդում: Տեսնք թե ո՞րքան սխալ բառեր ու նախադասություններ պետք է քաղաքացիական իրավունք ստանային ու մնային մեր բերանում. և այդ որոշումն ընդունած լինելով, ով գիտի երբ կամ ինչպես պետք է ուղղած լինեինք: Այնինչ այժմ, տասը տարուց հետո, ազատ, մեր կամքին, թեև շատ դանդաղ հառաջանալով՝ մենք տակից մինչև գլուխ սրբագրում ենք Բաֆֆու լեզուն:

Այժմ գանք և ընդունենք պ. Արասխ <անյանի> առաջարկությունը մեր օրերում,— խոսենք այն լեզվով, ինչ լեզվով գրում ենք: Այն ժամանակ հարց է առաջ գալիս — ո՞ր գրողի լեզուն գերադաս, [օրինակելի], ուսանելի համարենք ու խոսենք: Իսկ անցյալ տարի «Մուրճի» մեջ պ. <....> գրական լեզու <....> պ. Շիրվանզադեի լեզուն, [իսկ] «Արձագանքը» օրինակելի է համարում պ. Մուրացանի լեզուն: Ա<ռաջին>, սրանք բոլորովին տարբեր լեզուներ են, երկրորդ, հենց իրենք — հեղինակները շարունակ փոփոխում և կատարելագործում են իրենց լեզուն: Արդ, կարե՞լի է այդպիսի մի լեզու գործածել կամ թե՝ կարե՞լի է թույլ տալ խոսել այն լեզվով, ինչ լեզվով գրում է ինքը,— պ. Արասխանյանը և յուր աշխատակիցներից շատերը:

Դե ասացեք ինչո՞վ խոսենք: Բաբելոնական լեզուների խառնակություն եք առաջ բերել [և] ցանկապատ եք քաշում շուրջը և մեզ ստիպում եք պտտվել այդ ժխորի մեջ:

Եվ ինչ անխոհեմ բան է, կենդանի լեզվի վրա առարկություններով այդպիսի չոր ու ցամաք հրամաններ արձակել և որոշումներով փակել նրա սահմանները: Եվ ո՞ր են նրա սահմանները. մեր գրականական լեզուն դեռ յուր կազմակերպության [զարգացման] այն շրջանումն է, որ տակ ու գլուխ չես [հասկանում], որ չես իմանում որտեղ է սկսվում, որտեղ վերջանում, որ և ակար է և անկերպարան, որ տակավին նյութ է առնում, միշտ նոր ու նոր ձևվեր ու բառեր է ընդունում: Իսկ այդ բառերն ու ձևերը մեծ մասամբ մանում են շնորհիվ այն բարբառների, որ կենդանի ապրում են մեր գավառացի գրողների բերաններում և հեղհեղվում են նրանց ամենօրյա խոսակցության մեջ: Այդ մարդիկը, ինչ որ մոռանալու բան է՝ հետզհետե մտահան են անում, ինչ որ պետքական է կամ ապրելու ընդունակ՝ գործ են ածում, արծարծում, և մըտցընում գրական լեզվի շտեմարանը: Տեսնում եք դուրս եկավ մի

ճուղուրյան և յուր «Մոռացված աշխարհ»-ով[2]) լեզվի համար նոր նյութեր բերեց Ղազախից. դուրս եկավ մի Ավ<ետիք> Իսահակյան, նոր ձևեր ու ոճեր բերավ Շիրակից, և այլն: Մենք ուրախանում ենք, մենք ողջունում ենք այդպիսի ամեն մի գրողի ձիրքի հետ և նրա լեզուն — իսկ պ. Արասխանյանը այդ ուզում է դարձնել կանդրաբանտի ապրանք:

Այսպես պատասխանելով պ. Արասխանյանցի կոչին, որ անում է հայոց գրականությամբ պարապողներին — ես կառաջարկեի չմոռանալ մայրենի բարբառի <1 անընթ.> ու մեծ նշանակությունը, գործածելով ինչպես և որտեղ ցանկանում է, և զորեղացնել այս հարազատ կենսատու հոսանքը, որ յուր զուտ ազգային դրոշմով, ոգով ու ոճով կարողանա մեղմացնել այն բարբարոսական համաճարակը, որ մեր նորահաս գրականական լեզվի մեջ անում է թարգմանական գրականությունը և լրագրությունը:

Ինչ վերաբերում է. պ. Ար<ասխանյանի> գրավոր առարկությանը, որի վրա բարձրացրել էր յուր առաջարկությունը <....>

Դա անհիմն բան է: Գրական —<1 անընթ.> գաղտնիքը այլ է բոլորովին: [Իսկ] եթե ուզում եք լեզվի միջոցով օգնած լինել, ապա աշխատեցեք պարզ ու հասկանալի լեզվով գրել, ուրիշ ոչինչ: [Ոչ թե հարկադրել, թե սովորեցեք այնպես, ինչպես որ մենք ենք գրում]: <....>

1899

ՄԱՄՈՒԼ

Լրագիր եք ստանում։ Այսօր կարդում եք մի դրպարտություն, վաղը հայհոյանք, մյուս օրը սուտ, չորրորդ օրը մի անճոռնի կարծիք, և այսպես շարունակ՝ օրեր, ամիսներ, տարիներ... Եվ բացարձակ ստախոսության հետ միասին պնդում է, թե ինքը մենակ է պաշտպանում ճշմարտությունը, անպատկառ հայհոյանքով ու անբարտավանությամբ լի հոդվածի վերջում մի քանի տող է կցում, թե համեստություն է սովորեցնում, մի հրեշավոր կարծիք հայտնելիս՝ բողոքում է՝ թե իրան ոչ ոք չի հասկանում, մենակ է մնացել։

Տպագրական խոսքը դարձել է մի ահագին չարիք, ապականում է ուղեղներն ու զգացմունքները, կամ՝ ավելի ճիշտ, ապականված ուղեղներն ու զգացմունքները խոսում են տպագրական խոսքի միջոցով։

Մարդկանց չղերը երկար չեն կարող դիմանալ։ Մեկ, երկու, տասը, քսան, հարյուր, հազար... այլևս չի կարելի տանել։ Ավազակը կողոպտում է մարդկանց ունեցած դույլն ու մարմինը կեղեքում և բողոք է հարուցանում, վատաբարո զրողը բռնաբարում է մարդկանց զգացմունքներն ու հոգին կեղեքում, այս էլ պետք է բողոք հարուցանի։ Եթե մեկը չարիք է, մյուսն ավելի մեծ է նրանից։ Գրականությունը, տպագրական խոսքը մի անհատի, մի ժողովրդի, մի ազգի հոգեկան կարողությունն է, որ հանդես է հանում։ Եթե այդ անհատը կամ ժողովուրդը ունի բարոյական մի կոչում, կյանքի մի վսեմ խորհուրդ, յուր մեջ կրում է աստվածային տարր, նրա խոսքն էլ անշուշտ կլինի արտահայտություն մաքրության, վեհության, ճշմարտության, բանական, անկաշառ դատողությունների, անկեղծ ու [վսեմ] մտածմունքների և զեղեցիկ զգացմունք-



«Համլետ»-ի հայերեն թարգմանության մասին գրած ֆենադասականի սևագրերից:

ներին։ Մեր կյանքի հրապարակում, գրական բարձունքից հայտնած մտքերն ու արտասանած խոսքերը մարդու հուսահատական եզրակացություններին են տրամադրում։ Այս խորհրդածություններն անելու տեղիք տվավ «Մշակ» լրագրի այսօրվա №184-ի «Մամուլ»-ի բաժինը,[1]) ոչ թե նրա համար, որ ինքնըստինքյան շատ է կարևոր, այլ նրա համար, որ շատ է բնորոշ և անվերջ։ Այդ թերթի խմբագրությունը, որ միշտ վրդովմունքի այսպիսի առիթներ է տալիս, զարմանում է, թե ինչո՞ւ են իրանից դժգոհ, ինչպես միամտաբար իմ մասին բացականչում է թերթի №164-ի մեջ, թե «չեն կարողանում հասկանալ, թե ինչից եմ ես ուռել» և «Տարազի» մեջ վերջին տարիներս «Մշակի» դեմ բաներ եմ ասում[2])։ Նրանք պատճառներն իրանց մեջ որոնելու սովորություն չունեն, որովհետև տրադիցիայով անսխալականության արտոնություն են ժառանգած։ Արժի միջանկյալ մի բացատրություն տալ, մի փոքրիկ խոստովանություն անել և կհայտնվի իմ վրդովմունքի ավելի խոր ու լուրջ պատճառը։ Տարիներ առաջ այդ թերթը մեծադղորդ աղմուկներով ու տենդային կռիվներով երիտասարդության ուշքը թովեց, և մենք նրա գոյության հետ կապեցինք լավագույն հույսեր։ Աղմուկը լռեց, իրարանցումը դադարեց, քրտնած կռվողները հեռացան իրենց իսկական գործին, մոլեռանդության փոշին իջավ և հրապարակում երևացին թողնված, ներքին զորությունից զուրկ կուռքերը, ոտնատակ ընկած սկզբունքներն ու գաղափարները,— իրողությունը պարզվեց և հիասթափության սև դրոշակն սկսեց ծածանվել դատարկ հրապարակի վրա, որին, ստոր մաքառումներով, ճգնում են տիրել հազար անգամ ավելի ողորմելի մարդիկ։ Բայց հիասթափության պաղությունը լրջացրել էր մարդկանց և գիտակցությունը անում էր յուր քննությունը։ [Ուրեմն ի՞նչ էր այն, որ անցավ։ Եվ ինչո՞ւ այնպես շուտ խորտակվեց]։ Այդ հիրավի մի մաքառումն էր, բայց այնպիսի մաքառում, ուր դատողության տեղ կույր մոլեռանդությունը, ինքնաճանաչության տեղ սանձակոտոր հանդգնությունը, գիտակցության տեղ անգիր արած անհասկանալի ֆրազներն ու բառերը, գնահատության տեղ՝ ամոթալի կռապաշտությունը, պայքարի տեղ՝ անզուսպ ատելությունը — բոլորը միացած շարժողության մեջ էին դրել մի տարօրինակ բազմություն, ուր համալսարանական գիտունն ու ամբոխի տգետ մարդը միևնույն երևույթի մասին մի տեսակ էին դատում, մի տեսակ վարվում, ուր արդարությունն ու ճշմարտությունը պայմանական բան էին դարձել, ամբոխային գոռոցը փոխարինում էր դատողության ձայնին, և կազմում, հորինում էր մի օրգիա, որ մոռացնում էր ու տոքում նույնիսկ այն մաքուր սկզբ-

բունքները, որ երբևէ հայտարարված էին: [Մտավոր կյանքի] մտքի ու գաղափարների մի հեղեղային, պղտոր հոսանք, որ որոշվում էր գահավեժ կարծիքներով, անհեթեթ, տենդային ցանկություններով, սանձարձակ, տարերային հարձակումներով, ուր այնքան քիչ են խոսում բանականությունն ու մարդավարությունը: Այս բոլորին ավելացրեք այն, դոնե ինձ համար, շատ կարևոր հանգամանքը, որ այն օրից, ինչ որ ես մտել եմ գրականության մեջ, այդ թերթում մի մարդավայել խոսք չեմ կարդացել մեր գրականության ու գրողների մասին: Այս նկատմամբ էլ նրա ուղղությունը եղել է անմիտ ու հոռի և հոդվածները անհեթեթ ու փողոցային: Պոլիտիական «մտրակը», որով նա պարծենում էր և մտրակելով հայոց ամբոխին քշում էր եվրոպական հառաջադիմության ճանապարհով, այդ մտրակը անխտիր շաչում էր և հայ գրողի դեմ, գրական պայքարների մեջ, ուր գրական մտքի ու շրջանի համար այնքան վիրավորական է հենց մտրակ խոսքն ու իր գաղափարը: Այդ մտրակը չի պատկառել հներից, չի խնայել նորերին և գրականության ու հասարակության մեջ միայն շփոթ է հարուցել ու զայրույթ, սկսած այն օրերից, երբ թերթն իր մտերիմ Տեր-Գրիգորյանց մի պարոնի հրատարակում էր հայոց միակ տաղանդավոր վիպասան, որի անունն այժմ իրանք էլ են մոռացել, և մըրակում էր այն վիպասաններին, որոնց այժմ նայում է հայոց ընթերցող հասարակությունը, սկսած այն օրերից, երբ առաջնորդողում հանգ<ուցյալ> Ք. Թադեոսյանին, մի հասարակ ոտանավոր գրողի, հռչակում էր հայոց ամենատաղանդավոր և օրինակելի բանաստեղծը, գծի տակ ծաղրում բանաստեղծներին, այն օրերից սկսած մինչև այսօրվան օրը:

Մի երկու տարի սրանից առաջ, երբ Բաքվի Մարդասիրական Ընկերության ընդհանուր ժողովում գրողներին նպաստ տալու հարց բարձրացավ՝ այդ թերթն եր միայն, որ դեմ խոսեց մի շարք առաջնորդողներով և իր հակառակությունը փաստաբանելու համար կուտակեց ամեն տեսակ անհեթեթություններ, միայն թե խոսքը դուրս տաներ: Եվ այդ այն թերթը, որ քարոզում էր, թե Թիֆլիզում, Թիֆլիզի քահանաների համար ապահովության դանձարան պետք է հիմնել, և երբ այդ դանձարանը հիմնվեց, այնպես սիրալիր ողջունեց, կարիքը բացատրեց և նույնիսկ այս տարի էլ խանդով զբաղվում էր քահանաների դանձարանով՝ ու նրանց կարիքներով: Այդ մարդիկ բազմեցին Հայոց Հրատարակչական Ընկերության, այդ միակ գրական ընկերության մեջ, և ահա... հարցրեք նրանց և գրողների հարաբերությունների մասին: Ահա այս և [գուցե] ուրիշ սրանցից էլ ավելի վատթար հանգամանքներն են ինձ վրդո-

վել, որ ես պատեհ դեպքում չեմ թագցնում. իսկ խմբագրությունը որ գաղափարական շարժառիթներին այնքան քիչ է նշանակություն տալիս առհասարակ, զարմացած «չի կարողանում իմանալ, թե ի՛նչից եմ ուռել ես»:

Մենակ ես չեմ ուռել, պարոններ, շատերն են ուռել, և, եթե այդպես գնանք, որ շատ հավանական է, կգա մի օր, որ բոլորն էլ կուռչեն և հառաջ կգա մի պայթյուն, որ դուք իսկի չեք նախատեսում, դուք, որ ձախորդ հանգամանքները ձեզ աջակից առած, զանց եք առնում այն ներքին էական հանգամանքները, որոնք միայն կարող են պայմանավորել և՛ թերթի գոյության, և՛ հառաջադիմության գործը: Իսկ եթե ես և ինձ նմանները ավելի են ուշում՝ այդ նրանից է, որ մենք սրտով ավելի մոտ ենք այն գործին, որ հարբսատհարում եք դուք, և ավելի շատ ենք ցավ զգում: Ահա օրինակ. շատերի համար աննկատելի կանցնեն, գուցե և հավանելի լինեն, ձեր այս տողերը, որ վրդովում են <....>

1902

Գ. ԱՂԱՅԱՆԻՆ

(Քառասունհամյակի օրը)

Այսօր, գրական հաղթանակի և փառավոր հիշողությունների օրն է։ Քառասուն տարվա հիշողություններ, որ զարդարում են Գ. Աղայանին։

Ես էլ, որպես նրա մոտիկներից մինը, ունեմ շատ ու շատ հիշողություններ նրա կյանքից, և հատկապես նրա կյանքի այն ծանր շրջանից, երբ որ նա Լիր թագավորի նման իր օրերի դեմ կարող էր որոտալ՝ ամոթ ձեզ, որ վեր եք կացել այսման ձեր ու սպիտակ մի գլխի դեմ։[1])

Բայց այդ հիշողություններն այժմ թողնելով, այսօր սիրելի է ինձ հրճվանքով շեշտել նրա երկու բարձր հատկությունները։

Նա ունեցել է խոր հավատ ու հարգանք դեպի իր գրիչը, գրելը համարել է մի սրբազան արարողություն, գրիչ առնելիս կարողացել է վերանալ, և նրա բանաստեղծական աշխատանքն էլ եղել է միշտ վեհ, իդեալական, մաքուր, մանկական։

Նա երբեք ընկճված չի եղել հոգով և որտեղ հայտնվել է, իր հետ տարել է երիտասարդական թարմություն և բանաստեղծական ոգևորություն։ Նա ոգևորվել է ամեն բանով, ինչ որ լավն է, գեղեցիկ է։

Եվ նրա հրճվանքն ու զայրույթը միշտ եղել են անկեղծ, սրբատալի։ Դրա համար էլ նրան շատ են սիրել, սիրել են նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք երբևիցե սխալ են համարել նրան։

Սակայն, այսօր երբ պետք է փառաբանել նրա 40 տարվա գործքերն ու գրվածքները և նրանց վրա ուրախանալ, ես մի տարօրինակ վշտով ափսոսում եմ նրա այն գործքերն ու գրվածքները, որ մնացին անկատար։ Քանի-քանի անգամ նա ոգևորված պատմել է այդ գրելիքների մասին։ Երկար տարիներով սիրած-փայփա-

յած հերոսներ ու գաղափարներ, միշտ պայծառ, միշտ բարի ու սիրուն...

Եվ մի՞թե բոլորը կմնան ծրագիրներ։

<ԼԵՈՅԻ «ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ>

...Այժմ ականջ դրեք պատմագիր պ. Լեոյին. «Մեր մանկավարժ և ժողովրդական գրող Ղ. Աղայանցը իր «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հիշողությունների մեջ վերին աստիճանի կոպիտ, անքաղաքավարի, քարասիրտ է դուրս բերում Նազարյանցին, այդ պատճառով էլ լավ հայհոյում է խեղճ Նազարյանցին, անվանելով նրան անասնական էգոիզմին հասած մարդատյաց և այլն» («Ստեփանոս Նազարյանց», էջ 367)[1]։

Սրա համար անշուշտ մարդ բավականին ռամիկ հասկացողության տեր պիտի լինի կամ սոսկ խաբեբա։ Այլ կերպ ինչպե՞ս կարելի է այն, ինչ որ մարդ չակերտների մեջ առած գրում է, թե դեպքի տպավորության տակ այսպես դատապարտում էի նրան, կամ իր խոսքով ասենք՝ հայհոյում էի նրան, այսօր գալ հավատացնել, թե այսպես է «դուրս բերել» Աղայանը Նազարյանցին։ Մինչդեռ Աղայանցը Նազարյանցին այդ նույն տեղում այսպես է «դուրս բերել».

«Այդ մարդը հիմք դրավ գրական լեզվի նոր ուղղության և նոր գրական դպրոց ստեղծեց, որով սարսափելի հարված տվավ ընդարմացած և թմրած ուղեղներին։ Նազարյանցի այս մեծ գործը դեռևս ըստ արժանվույն գնահատված չէ հայ հասարակության և նորագույն գրագետների կողմից, որոնք շատ թեթև աչքով են նայում նրա աշխատության և ուղղության վրա։ Նազարյանցի և Աբովյանցի նմանը դեռևս չի ծնվել մեր մեջ։ Առաքյալներ շատ ունինք, բայց հիմնադիրներ՝ և ոչ մեկը» («Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 51)[2]։

Թերևս ասող լինի, թե գուցե չի կարդացել այս տողերը պ. Լեոն։

Ո՛չ, կարդացել է և իր ծանոթությունների մեջ, էջ 404, նշանակած է, որ օգտված է այս երեսից։

Ուրեմն չի հասկացել կամ գուցե դիտմամբ է այդպես անում։ Ով գիտի։ Շատ է դժվար գլուխ դուրս բերել այս քառսից և որոշել, թե այս մարդը ավելի շատ տգե՞տ է, թե խարդախ։ Բայց թե տգետ է կամ խարդախ, այդ թող դատեն ընթերցողները, որոնք սիրում են ճշմարտությունը և մաքրությունը գրականության մեջ։

Աղայանցը 1864 թվին շարել է «Հյուսիսափայլը» և իր գրքի մեջ, 56 երեսում Նազարյանցի մասին գրում է. «Աշխատակից չուներ. ամեն ինչ ինքն էր գրում, ինքն էր թարգմանում, շատ անգամ ոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով: Մի հոդված միայն, որ կրում է «Ազգային թշվառություն» վերնագիրը, Նալբանդյանցի գրածն էր, թեև Նազարյանցի իսկական անունն է ստորագրված»: Այդ ժամանակ Նալբանդյանը բանդումն էր, և ով գիտի ինչ մտքով է այսպես վարվել Նազարյանցը: Բայց խնդիրն այդ չի: Եթե պ. Լեոն համաձայն չի կամ չի հավատում Աղայանցի վկայություններին, պետք է ավելի շուտ և ավելի շատ նրան վրդովեր այս հիշողությունը: Պետք է նա հերքեր: Բայց գիտեք ի՛նչ է արել: Բաց արեք նրա գրքի 208 երեսը: Իր ընթերցողների խորին ուշադրությունն է հրավիրում այդ հոդվածի վրա և գրում է.

«Հյուսիսփայլի»[3])...

Սակայն այստեղ էլ դուցե ասող գտնվի, թե դուցե չի կարդացել: Դարձյալ ոչ: Իր գրքի ծանոթությունների մեջ 404 երեսում նշանակած է Աղայանցի այս էջը—56:

Այժմ թող դատի ամեն մարդ, քանդի ամեն մարդ այսքան տեղը դատելու ընդունակություն պիտի ունենա: Օգտվել մի մարդու գրած-տպած վկայություններից, շահագործել, ինչպես շահագործում են մարդկանց կենսագրությունները ու ետ դառնալ ասել՝ «մենք չենք կարող նշանակություն տալ նրա վկայություններին»: Եվ այդ բոլորի հետ միասին գոնե մի սուտ վկայություն հանած լիներ, մի հիշողություն հերքած լիներ:

...«Պարոն Նազարյանց, բայց դուք չհասկացաք, թե ես ո՞վ եմ, ի՞նչ եմ, և ի՞նչ եմ ուզում,— գոչեցի ես նրա ետևից, բայց նա էլ ետ չդարձավ երեսը: Նա անհետացավ, իսկ ես մնացի մի առժամանակ տեղումս մեխված»[4]):

Երևի սա «Հյուսիսափայլի» խմբագիրը չէր, անցնում է զարմացած ու հուսախաբված երիտասարդի մտքով, և հետևում է փակ դռան առաջից, մտմտուքը դատափետելով, անվանելով նրան մարդատյաց, ո՛չ մարդասեր, ինքնասեր, բայց նույնիսկ ինքնասիրություն էլ անբան...

Եվ վերջապես, կետերի տեղն էլ ի՛նչ հայհոյանք որ կուզեք դրեք: Խնդիրն այն է, որ այդ խոսքերը բերված են չակերտների մեջ, թե այնտեղ, այն ժամանակ, այն բոպեին մտքում այսպես էի ասում: Եվ գրում է.

«Այս կերպ դատելով ու դատապարտելով Նազարյանցին, կրկին

գնացի տպարան և այնտեղ իմանալով էմինի հասցեն, ճանապարհ ընկա դեպի նրա բնակարանը...» («Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 40)։

Ընթերցողը պարզ տեսնում է, որ այստեղ «արարքի» մասին խոսք լինել չի կարող. մի անծանոթ, օտար երիտասարդ, աղքատ հագնված, մեծ մայրաքաղաքում բախում է մեկի դուռը և նրան չեն ընդունում։ Պրծանք։ Բայց այդպես հեշտ ու պարզ չի վերջանում գործը, երբ որ պատմությունը գրում են պ. Լեոյի պես մարդիկ։ Աղայանցը—մի պանդուխտ, անօգնական, գաղափարի հովերով մինչև Մոսկվա տարված երիտասարդ, Նազարյանցի անունով ոգեվորված, մտքումը նրան ճառ ասելու պատրաստած, միամիտ, երազելով, որ Նազարյանցն էլ, իր որպիսությունը ստուգապես իմանալուց հետո պիտի գրկե, ճակատիցը համբուրի, ինչպես երբեմն Խ. Աբովյանը Դորպատում մի պանդուխտ հայի—բախում է Ստ. Նազարյանցի դուռը։ Հայտնվում է նա ինքը—սրբազան մարդը։ Աղայանցն սկսում է իր ճառը.— «Երկու հայ երիտասարդ եկել ենք...»։

—Հա՜յ, հա՜յ, հա՜յ, զահլա տարաք այդ հայերդ. ես ի՞նչ անեմ, որ հայ եք...»։ Բարկանում է Նազարյանցը, ձեռքերը թափ է տալի դուրս անելու նշանով ու հեռանում։ <....>

1909

ՋԱՐՃՈՒՐԵԼԻ ՄԵՐ ՈՒ ՀԱՐԳԱՆՔ

Ամեն անգամ, երբ խոսք է լինում օտար գրողների կամ գրականությունների մեջ պատահած լավ երևույթների ու վերաբերմունքների մասին, մեր մամուլը, առանձնապես «Մշակը», միշտ կրկնում է. «Ահա թե ինչպես են օտարները սիրում ու պահպանում իրենց գրողներին ու գրականությունը—իսկ մենք ինչ ենք անում...»: Բայց ամեն անգամ, պարբերաբար, կարծես հենց շարած պահում են էդ տողերը: Եվ ամեն անգամ էլ, ու առանձնապես «Մշակը» էդ տողերից հետո դուք տեսեք թե ինչ է անում: Եվ բնականաբար, էսօր էդ թերթն ու հայոց գրեթե բոլոր գրողները թշնամական հարաբ<երության> մեջ են: Եվ էդ է պատճառը, որ ով մի որևէ գրողի դեմ մի անկարգ խոսք ունի ասելու, գնում է մտնում էնտեղ, կամ տուրիշ խոսքով էնտեղ մտնելուց հետո էլ չի կարող մնալ վայելչության սահմաններում, պետք է անպատճառ [կծի], բայց իհարկե, ավանդական սիրո ու հարգանքի հավաստիացումներն անելուց հետո: [Եվ ահա, հայոց գրականության ու գրողի համար հերիք չեն եղած դժբախտ հանգամանքները, դրանց վրա ավելացնում է և [մեր մամուլի] էդ [մարդկանց] սերն ու հարգանքը, որ ես ուրիշ կերպ չեմ կարող անվանել, եթե ոչ միայն զարհուրելի]: Ես իմ գրական կյանքում մի քանի անգամ դժբախտություն եմ ունեցել էդ թերթի «սիրո ու հարգանքի» դեմ ինձ պաշտպանելու: Իսկ շարունակ ականատես եմ եղել, թե ինչպես սրան ու նրան են աշխատել շարունակ խեղդել ու կեղտոտել իրենց սիրառատ ու մրառատ գրկի մեջ: Իսկ էսպես կոչված—ընթերցող հասարակությունը... նրանք լավ են ճանաչում էդ հասարակությանը—իսկ վաղվա մասին չեն հոգում: Վաղը—թեկուզ ջրհեղեղ:

Ահա հենց էս մոտիկ օրերից մի երկու նմուշ:

Տոնում են պ. Ա. Քալանթարի հոբելյանը։ Է՛, շատ լավ։ Էդտեղ հո հայոց գրողներին չպետք է վիրավորեն, մանավանդ որ նրանց «միշտ հարգում է» «Մշակը»։ Բայց դուք տեսեք ծերը որտեղ է գնում։ «Մշակը» Քալանթարի մասին լավ լավ բաներ է գրում։ Դարձյալ իրենց ու իրենց կարգացողների բանն է։ Մինն առաջարկում է գպրոց հիմնել պ. Քալանթարի պատվին, մյուսն առաջարկում է, կարծեմ Դենջյան, գպրոցների գպրոց հիմնել, մըրցութեյան մեջ պ. Տ. Նազարյանը գերազանցում է ամենքին—առաջարկում է հիմնել մի կոլոնիա Քալանթարապատ[1]), մեջը և՛ գպրոցների գպրոց, և՛ թատրոն, և՛... վերջապես (թեկուզ) ամենքը մեջը։ Պ. Գ. Բալասանյանն էլ անում է իր առաջարկը[2]) և գրում է, որ Ալյութականը չպիտի մոռանալ <...>

1900-ական թվականներ

ԹԱՐԳՄ<Ա՛ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ> ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶԱ՛ՆՈՒՄ

Վերաբացվեց Կովկասի Հայոց Հրատ<արակչական> Ընկերությունը և իր հետ բացվեցին շատ սրտեր։ Տխուր ու աղքատ է մեր իրականությունը և էդ տեսակ մի ընկերության բացումն էլ, որի<ց> հազար անգամ ավելի մեծերը ավելի բախտավոր ժողովուրդների մեջ անհատներն են կարողանում պահել, մեզանում մի ազգային ընդհանուր գործի բնավորություն է առնում։ Եվ ով գիտի, էն էլ ինչ ճարով ու հնարով է կարողանալու գործ տեսնի, չէ որ արդեն էս կամ էն հարուստին դիմելու վրա է մտածում, քանզի հայերեն գրքերի հրատարակությունը արդյունք չի տալ իրեն։ Եվ, վերջապես, ինչ կատանա հրատարակելու, ով գիտի։ Տարին անցնում է, հաշվում են, որ ամբողջ հայ գրականությունը գրեթե բան չի տըվել։ Չէ՞ որ գրողն էլ մարդ է, նա էլ կարող է հոգնել, կոտրվել, ծուլանալ, վերջապես դադարել։

Ու շատ բնական կերպով նորաբաց ընկերությունը խոսում է թարգմանություններից։ Լավ։ Մենք էլ թարգմանություններից կխոսենք։ Ծանր է ինքնուրույն գրականության խնդիրը և ծանր նրանից խոսելը։

Թարգմանություններ։ Իսկ էստեղ ինչ է պետք։ Ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն[1])։ Էս երեք պայմանը պետք է ունենանք։ Բայց հիմար խոսք է էս «պետք է»-ն ու հեշտ, ինչպես բոլոր «պետք է»-ները։ [Ինչ կնշանակի պետք է]... ավելի լավ է [նայենք] տեսնենք [թե] իրոք ունենք թե չէ—ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն։

[Դրա համար վերցնենք նախորդ Հրատարակչ<ական> Ընկե-

[1] *Էջի ներքև գրված է՝ Շեքսպիրի բառերից ամեն մեկը նշանակ<ություն> ունի։*

րությունը, որ արդեն կատարված, իրականություն ու դաս է մեզ համար: Անցյալ է. անցյալը հենց նրա համար է, որ մարդիկ դաս առնեն նրանից: Առնենք էդ Հրատ<արակչական> Ընկ<երությունը>, քննենք նրա գործերն ու գործունեությունը, օգավենք լավ փորձերից ու խուսափենք վատերից: Դրա համար արժեր վերցնել մեր հրատ<արակչական> մարմինների արդեն եղած հրատարակությունները ու նրանց վրա բարեխիղճ քննություն անել, առավելություններից օգտվել, սխալներից ու պակասություններից զգուշանալ: Ոչ ապագեն անցյալը նրա համար է, որ մարդիկ նրանից խելք ու խրատ հանեն իրենց ապագա գործունեությունների համար:

Ահա նախորդ Հրատարակչական Ընկերության գործերը, որի խմբագրականի և վարչության անդամներից շատերը մտնում են նորի կազմի մեջ, ահա Կուլտուրական Ընկերության հրատ<արակչական> սեկցիայի հրատարակությունները, ահա նվեր մանուկներին մանկական գրքույկների սերիան, որ ավելանում է տարեց տարի:

Ինչպե՞ս են թարգմանում և ինչպե՞ս են հրատարակում: Նայենք հերթով:

Առնենք Հրատարակչական Ընկերության հրատարակություններից երկուսը. «Համլետ», Շեքսպիրի, անգլիերենից թարգմանեց Հովհ<աննես> Խան-Մասեհյան[1]) և «Մակբեթ» նույն հեղինակի, բնագրի հետ համեմատ<ելով> գերմ<աներենից> թարգմանել է պ. Ստ<եփան> Մալխասյան:[2])

Ես էս գործերն եմ առնում առանձին սիրով, նախ որ Շեքսպիրն [իմ շատ սիրած] գրողն է, երկրորդ՝ թարգմանիչները քաջ հայագետ են, ու բարեխիղճ մարդիկ, երրորդ, որ նրանց քննության գործը Հրատ<արակչական> Ընկերությունը կատարել է առանձին զգուշավորությամբ, ու չորրորդ՝ տպագրությունը արել է առանձին խնամքով:

Իմ լիասիրտ հարգանքը պ. Հովհ<աննես> Խան-Մասեհյանին, որ անգլ<իերենից> հայերենի է վերածում Շեքսպիրը, [որ] հայկական աղբատ հողում պատվաստում է, Գյոթեի խոսքերով ասենք, էն հսկայական կաղնին, որի մոտ միանում ու որից բաժանվում են դրականության բոլոր ճյուղերը: Նվ առանձին հաճույքով պետք է ասեմ, իր գործերը [էնպես] կատարներ ունեն, էնքան կորովի ու թափով, որոնց հետ ռուսական լավագույն թարգմանությունները դժվար թե համեմատվեն: Ի՞նչ գեղեցիկ է ասած Լաերտի խրատը իր քրոջը՝ Օֆելիային, որ հաստատում է, թե Համլետի սերը [մի] դատարկ բան է, անհաստատ հաճույք, արյան ավյուն, մի քնքույշ մանուշակ նորածին բնության, կանխահաս, բայց վաղանց — [այլև վտանգավոր]...

Օֆելիա.

Լոկ այդքա՞ն։

Լաերտ.

Մի՛ կարծիր ավելի.

Զի բնությունն աճելիս չե՛ն աճում միայն
Ընդերքն ու ծավալը մարդկային մարմնի.
Այլ երբ այդ տաճարը ընդարձակվում է,
Ներքին պաշտամունքը հոգու և մտքի
Զարգանում են իր հետ։ [Եվ այլն], և այլն։
Վախեցիր, Օֆելիա, վախեցիր, քույրիկ,
Եվ քեզ պատսպարիր քո սիրույդ ետև՝
Ցանկության վտանգից և նետից ազատ.
Ամենազգոն կույսը շըռայլ է արդեն,
Թե բանա հրապույրքը լուսնի առաջ անգամ.
Եվ սրբությունն իսկ չէ կարող խույս տալ
Ստոր զրպարտության ժանտ սլաքներից։
[Եվ այլն]... <էջ> 33—34

Շեքսպիրի գործին արժանի մի լեզու, անբռնազբոս ու հարուստ։

[Կամ ասենք Պոլոնիուսն ինչպես է խրատում որդուն]։ Կամ՝ տեսեք, թե Պոլոնիուսն ինչպես է ծիծաղում իր միամիտ աղջկա վրա ու խրատում, երբ նրանից լսում է, թե Համլետը սիրո երդումներ է անում.

Հա, հա, որոգայթներ՝ թռչուն բռնելու։
Ես գիտեմ, արյունը երբ եռ է գալիս,
Ինչպես շռայլ կերպով հոգին զրկում է
Լեզվին երդումներ. այդ բոցերն, աղջիկ,
Առավել լույս կըտան քան թե ջերմություն,
և այլն, <էջ> 38.

Հապա իր <1 անընթ.> վեհափառ հոր ուրվականի առջև զարհուրած դժբախտ Համլետի աղաղակը. արժի գոնե մի կտոր ամբողջ արտագրեմ։

Սերովբե՛ք և միջնո՛րդք երկնային շնորհի,
Պաշտպանեցե՛ք դուք մեզ. և դու՛, ո՛վ տեսիլ,
Բարի ոգի լինիս կամ դև նզովյալ,
Թե բերես երկնքից անույշ բույր քո հետ,
Կամ թե գեհենից՝ ժանտաբեր խորշակ.
Բարի լինին թե չար քո դիտումները,
Գալիս ես այնպիսի մատչելի դեմքով,

Որ քո հետ կրխոսեմ։ Կանչում եմ քեզ, Համլե՛տ.
Արքա, հայր, տե՛ր Դանիո. Օ՛հ, պատասխան տուր.
Մի՛ թող անգիտությամբ տանջվիմ, այլ ասա՛,
Է՞ր օրհնյալ ոսկերքդդ, մահվամբ կնքված,
Պատռեցին պատանը, է՞ր գերեզմանը,
Որի մեջ քեզ տեսանք հանգիստ ամփոփված,
Բացավ իր ահագին, մարմար ծընոտը,
Քեզ դուրս վիժեց կրկին։ Այս ինչ միտք ունի,
Որ դու, մեռյալ մարմին, ամբողջ պողպատ հագած,
Կրկին այց ես գալիս լուսնի շողքերին,
Դարձնելով գիշերը այսպես ահռելի,
Որ մենք, բընության խեղկատակներըս,
Այսպես զարհուրանքով սարսենք մեր միտքը,
Եվ ահաբեկվենք այնպես խոհերով,
Որ մեր հոգիների սահմանից բարձր են։
Ասա. այս ի՞նչ բան է. ինչո՞ւ. ի՞նչ անենք։ <էջ> 41.
[Էս տեսակ մի ուժ է պ. Մասեհյանը]։

[Տեսնում էք] ի՞նչ արժանավայել ճոխությամբ խոսում է հայոց լեզուն Դանիայի արքայազնի բերանում, ինչ [պես] ուժով կարողանում է տալ Շեքսպիր կոչված տիտանի երկար շունչն ու մոունչը։

[Իմ հարգանքը և պ. Ստ<եփան> Մալխասյանին, որ մեր շատ սակավաթիվ հայկաբաններից մինն է, և առաջիններից, ու շատ դպուշավոր մի մարդ։]

Բայց էս ամենը ինձ արգելք չեն լինելու հրապարակի վրա դնելու նրանց և Հրատ<արակչական> Ընկ<երության> գործերի պակասությունների մի մասը ամենայն սառնությամբ, որպեսզի կարողանամ ապացուցանել, թե դեպի հրատարակչական գործն ունեցած մեր կարողությունը, [համառությունն] ու բարեխղճությունը դեռ քիչ են նույնիսկ էն դեպքերում, երբ հրապարակ ենք հանում մեր առաջնակարգ ուժերը, [և] մեր Հրատ<արակչական> Ընկ<երության> խմբագրականի և վարչական կազմերի քննության բովից անցկացնելուց, խնամքով տպագրելուց հետո[1]։

---

1 Հաջորդ ամբողջ էջը և մյուս էջից 3 տող չնջված է, որը և բերում ենք ստորև. Պետք է ասեմ, որ 3 ռուբլիանոց անդամավճարով ու դատ<արկ> խոսքերով կամ մեր մամուլի ավանդական վերաբերմունքով չի, որ պետք է մոտենալ գրականությանը, այլ ավելի մեծ սիրով ու լուրջ ուշադրությամբ [գիտակցությամբ], մի բան, որ չկա մեզանում։ Էլ [էն] չեմ ասում, որ էդ 3 ռուբլիանոց բաժանորդներն էլ են շատ քիչ ու մեծ մասամբ գտնվլի։ Էլ չեմ ասում ժողովրդի անհասկացողությունն ու հասկացողների անտարբերությունը։ Էլ չեմ ասում էն քշնամական վերաբերմունքը դեպի գրականությունը, որ իբրև մի շատ

Հարկավ ես լավ եմ հասկանում իմ խոսքի պատասխանատվության ծանրությունը, բայց ինձ ավելի սիրում են էն զգացմունքն ու էն միտքը, թե ավելի մեծ սիրով ու լուրջ ուշադրությամբ պիտի հետևենք նայինք գրական — հրատարակչական գործին, քան նայել ու նայում ենք սովորաբար։

Պ. Մասեհյանի Շեքսպիրից արած թարգմանությունները և հատկապես «Համլետի» թարգմանությունը մեր մեջ համարվել է օրինակելի և [հաճախ] կլասիկ գործ են անվանել։ Բայց, դժբախտաբար, մինչև օրս, էսքան տարվա ընթացքում, ոչ մի [գործին] հմուտ մարդ մտիկ չարավ դրանց, ճիշտ որ գործին վայել լրջությամբ։

Տարիներ առաջ ես «Տարազ»-ում տպեցի իմ նկատողությունները[3]), որ արել էի ռուսերեն մի քանի թարգմանությունների հետ համեմատելուց հետո։ Ոմանք իմ [նկատողությունները] քննածը գտան անխոհեմ, հատկապես նրա համար, որ ես առանց անգլիերեն իմանալու, ցույց էի տալի անգլիերեն բնագրից արած թարգմ<անության> սխալները։ [Իմ բարեկամներից մինը պ. Մ<խիթար> Տեր-Անդրիասյանը[4]) իր ժամանակին իմ նկատողությունները ստուգել էր անգլիերեն բնագրի վրա ու գտել էր ճիշտ]։ Այնուհետև ես ձեռք բերի անգլիերեն Շեքսպիրը և այժմ առաջվան նկատողություններիս ավելացնելով նորերը՝ [գնում եմ հրապարակ] տալիս եմ հատ<կապես><՞> Հրատ<արակչական> Ընկերության [ուշադրությանը], որ արդեն մտնում է գործի մեջ։

[Ձեռքիս ունեցել եմ Robert Inglis-ի Լոնդոնում տպած անգլիերեն բնագիրը, իսկ բառերը ստուգել եմ Александров-ի անգլերենից-ռուսերեն հայտնի բառարանով]։

Իհարկե գրքերի բովանդակության մասին խոսք չի լինելու, այլ միմիայն թարգմ<անության> և տպագր<ության>։

Այժմ ես [կտամ] կհանեմ իմ նկատած պակասությունները [կարդով]. [առաջ] էն սխալ բառերն ու նախադասությունները, որ

տխուր ժառանգություն մնացել է հայոց մամուլին ու սովորաբար արտահայտվում է լռություն պահպանելով]։ Էլ չեմ ասում քննադատության էն տգեղ ձևը, որ կամ պախարակում, ցեխն են կոխում, և, հաճախ, նույնիսկ հայհոյում ու վիրավորում ամենա[սուր] լեզի [ձևերով] կամ թե չէ՝ փառաբանում ու երկինք են հանում, առանց հաշիվ տալու, թե ինչո՛ւ են էդպես անում։ Ասում եմ, եթե էդ բոլորն էլ թողնենք, վերցնենք ամենալավ դեպքը, կտեսնենք, որ շատ է քիչ ու շատ ենք խեղճ։ Բայց եթե չենք զղում, նրանից է, որ պարզ աչքով չենք նայում, [ներհմուտ չենք լինում գործերին և մնում ու խոսում ենք միշտ դրսից։] Գրական ասպարիզում, ավելի ևս կլիներնք պահանջող [խիստ]։ Շեքսպիրին եք ձեռք տալի, [ավելի ևս խիստ], թե մեր մանուկների հետ եք խոսում, [մեր գրողներն եք տպագրում, թե օտար հեղինակներ եք տալի]։

իմաստն են սխալ տալի, հեղինակի տված էն ցուցմունքները, որ կարևոր են դրաման դնելու համար և չկան հայերենում, մութը, անհասկանալի մնացած կտորները, լեզվական անկանոնություններն ու սխալները, [դուրս մնացած կտորնե<ր>] [և] ապա տպագրական թերությունները — դուրս թողած տեղերը, մեկի խոսքերը մյուսին տալը, սրբագրական [խոշոր] սխալները, որ միտքը փոխում են, վերջապես սրբագրական սխալների սխալները։

Բայց առաջուց ընթերցողին հիշեցնում եմ, որ մենք գործ ունենք Շեքսպիրի հետ, մի գրողի հետ, որի ամեն մի խոսքը շատ է հաստատ ու իր իմաստն ունի <....>

1910

<ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈՒԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

Պ<արոն> Մ<ամբրե> Մատենճյանը «Հորիզոնի» <№> 181[1])-ում իբրև հանդիսական [կարծիք] հայտնելով իմ և պ. Ա.<րշակ> Մեղրյանի մեջ ծագած լեզվական վեճի վրա[2]), նկատում է, որ ես փաստական մի խոշոր սխալ եմ անում, գրելով թե օտար բառերի կողմնակից էր Խ. Աբովյանը։

Ամենից առաջ պետք է պ. Մատենճյանին հիշեցնել, որ իմ և պ. Մեղրյանի մեջ ծագած վեճը նրա վրա չի, թե «ո՛ր օտար բառերը կարելի է գործածել հայերենում և ո՛րը՝ ոչ»։ Կարդացեք պ. Մեղրյանի հոդվածները — էդ տեսակ խնդիր չկա. կարդացեք [իմը՝ դարձյալ չեք գտնիլ]։ Ընդհակառակը. մինչև անգամ ես իմ հոդվածում զգուշացրել եմ, որ էդպես չկարծեն, ինչպես դուք եք կարծում և պ. Մեղրյանն էլ իր «Ուշացած պատասխանի» մեջ («Հորիզոն», № 166)[3]) ինձ հետ համաձայն՝ հայտարարում է, թե, «Շատ ճիշտ է, որ խոսքը այս կամ այն օտար բառի փոխառության մասին չէ, այլ մեջտեղ դրված է սկզբունքային խնդիր։ Ալ ահա [պ. Մատենճյանը հենց իբրև հանդիսական էլ թեկուզ, սխալվում է, գրելով թե իբրև մեր վեճը նրա վրա է, թե «ո՛ր օտար բառերը կարելի է գործածել հայերենի մեջ, ո՛րը՝ ոչ», այլ] թե որն է մաքուր հայերենը, և ինչ աղբյուրներից պետք է նա ճոխանա. պե՞տք է օգտվել օտար լեզուներից ու ժողովրդ<ական> բարբառներից, թե չէ, և [կամ] ինչպես։

Էս մին, որ պ. Մատենճյանը սխալ է հասկացել ու սխալ էլ դրել հրապարակ, մի սխալ, որ չպետք է աներ նա, թեկուզ առայժմ իբրև հանդիսական։ Այնուհետև էս հանդիսականը ես լավ չեմ հասկանում, ասում է [թե] «Ես առայժմ չեմ հայտնում իմ կարծիքը, ուզում եմ դեռևս հանդիսականի դեր կատարել»։ Նա իսկի

հանդիսականի նման չի: Նա իր հոդվածում հանում է Աբովյանից էն նախադասությունները, որ մերժում են օտար բառերի գործածությունը, այլև վախենալով, որ ընթերցողն իրավունք կունենա առարկելու, թե ուրեմն էլ ինչու Աբովյանն ինքը բազմաթիվ օտար բառեր է գործածում, երբ դրանց հայերեն համանիշները շատ լավ ծանոթ էին նաև նրան, բացատրում է, թե 40-ական թվականներին նա ստիպված էր էդպես դրելու, որ ուզած ժողովուրդը հասկանա, ասում է «ակամա և այն էլ ժամանակավոր կերպով էր գործածում օտար բառերը, որոնց կողքին հենց ինքը Աբովյանը հաճախ դնում էր նաև հայերեն համանիշներ, որոնցից շատերն այսօր մեր գրական լեզվից դուրս են իրենց մոտ մի ժամանակ բազմած օտար հյուրերին»: Սրա վրա եթե ավելացնենք պ. Մատենճյանի «Հորիզոնի» № 167-ում տպած նրա հոդվածի հետևյալ նախադասությունը. «Նա ըմբռնել է, որ Հոմերոս թարգմանել չի կարելի սովորական աշխարհաբառով, որ ոմանք աշխատում են ճոխացնել մեր դավառական բարբառների կարկատաններով», միանգամայն պարզ կլինի նրա կարծիքն ու վերաբերմունքը թե՛ դեպի օտար բառերը և թե դեպի դավառական բարբառները: Կարծիք հայտնելն էլ ոնց կլինի, պոչավոր հո չի լինիլ:

Պարզ ու որոշ այս կարծիքն ու վերաբերմունքն ունենալով (որ և պ. Մեղրյանինն է), պ. Մատենճյանը էդ նույն կարծիքն ու վերաբերմունքը վերագրում է և Խ. Աբովյանին, նրանից տողեր է արտագրում ու հայտարարում «հարազատությամբ արտագրած այս տողերը շատ պարզ կերպով արտահայտում են Աբովյանի միտքը, որ բոլորովին հակառակն է պարոն Հովհ. Թումանյանի ասածին» («Հորիզոն» <№> 181):

Ես էս տեսակ հանդիսական չեմ հասկանում, սա արդեն շափազանց շատ է ոտն առաջ դրել ու մտել կռվի դաշտը և իմ իրավունքն եմ համարում բռնել պ. Մատենճյանի օձիքից: Դե էստեղ համեցեք, պ. Մատենճյան:

Վերևը ես ձեզ ցույց տվի արդեն, որ մեր վեճը դուք լավ չեք հասկացել. նա էս կամ էն բառի վրա չի, սկզբունքային է: Օտար բառեր կան, որ գործ են ածում ժողովուրդները. <անընդ. մի քանի բառ>, օտար բառեր կան, որ լեզուն արդեն որդեգրել է՝ գործ ածենք թե չէ, օտար բառեր կան, որ մտնում են օտար գաղափ<արների> հետ, գործ ածենք թե չէ:

Դուք Աբովյանի<ց> կտորներ եք արտագրում ու նրան եք բերում իմ դեմ: Ես հիմի ցույց կտամ, թե դուք ինչքան սխալ եք հասկանում Աբովյանին, թեկուզ և մի քանի տեղից արտագրեք ամենայն հարազատությամբ: Հարազատությամբ արտագրելը հո

հերիք չի, հարազատությամբ էլ պետք է հասկանալ ու բացատրել։

Այո՛, Աբովյանը գրել է, դուք էլ հարազատությամբ արտագրում եք՝ «Էնպես մարդ կա՝ տասը տասնհինգ լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենիցը լավ աշի, իր ազգի հետ խոսալիս, ամոթ ա համարում, կամ ուրիշ լեզվով իր միտքն ասի, կամ ուրիշ բառը հետը խառնի։ Խառնիր քո սիրեկան խաշի հետ՝ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն), չամիչ, չիր, խիզիլալա, տես ի՞նչ համ կունենա»։[4])

Բայց էս ինչ կնշանակի, պ. Մատենճյան։ Մի՞թե Աբովյանը սրանով հակառակ է օտար, միջազգային, օտար բառերի գործածությանը, արևելյան լինի թե արևմտյան, մի՞թե նա հակառակ է լեզվի արդեն որդեգրած օտար բառերի գործածությանը, մի՞թե դեմ է էն նոր օտար բառերին, որ մտնում են նոր գաղափարների ու գիտությունների հետ։

Ձեզ ո՞վ է էդպես բացատրել Աբովյանի միտքը և ո՞րտեղից եք հանել էդ Աբովյանին, որ էս վեճի մեջ բերում եք իմ դեմ։ Բարեբախտաբար Աբովյանը ինքը բացատրել է ձեր հարազատությամբ արտագրած տողերը, որ ես էլ արտագրում եմ ամենայն հարազատությամբ։ Եվ էս տողերը հետևում են ձեր արտագրած տողերին անմիջապես։ Կարդացեք ու տեսնեք, թե ինչ օտար բառերի և ինչ լեզվի դեմ էր խոսում Աբովյանը։ Ասում է. «Ախր որ ասում ես՝ փրոքուլիվաթսա արի, սքուչնա եմ, օփիժաթսա էլա, փրոշենի տվի, սանիաթիե շատ ունիմ, ղլուխս քրուժիթսա էկավ, փեղչեստանի մարդ ա, բազփոյնիք ա, եափեթնիք օքմին ես, գնանք քուփաթսա ըլինք, սոփրանիեմեն եմ գալիս, փրոիգրաթսա արին, ճամփին ֆսեթքի ութուփնա ա, շատ խլափոթ սլուշիթսա չի ըլում և այլն. աչքի լես՝ մի մտածիր թե՝ լսողն ինչ կասի»։ («Վերք Հայաստանի» 1858, թիֆլիզ էջ 92)։

Մի՞թե սա մեր վեճի առարկան է և մի՞թե սա էն Աբովյանն է, որ դուք դուրս եք բերում իմ դեմ։ Դուք սխալ եք հասկացել և՛ մեր վեճը և՛ Աբովյանին, որի հոգին անշուշտ շատ է վրդովված, որ ոչ միայն իրեն լավ չեք հասկանում, այլև հայոց աշխարհաբար գրական լեզվի շինության մասին էս տեսակ կարծիք եք հայտնում թե՝ «...ոմանք աշխատում են ճոխացնել մեր գավառական բարբառների կարկատաններով»։ Ես շատ եմ ցավում, որ էս կարծիքը դուք Ներսիսյան դպրոցն եք տանում, ինչպես գրականության ուսուցիչ։

Նույն հայացքի լինելով դուք, պ. Մատենճյան, նույն մոլորության մեջ եք, ինչ որ պ. Մեղրյանը։ Նա էլ իր հոդվածում («Հորիզոն», <№> 166) Գ<ամառ> քաթիպային բարբառ ծաղ-

րող մեկն էր դուրս բերել։ Արտագրելով ծաղր<ելի> բարբառներ և նման նախադասություններ, որ նա ծաղրել է.

«Ստարայա կոֆտաս մոդիստկային տվել եմ պերելիցովկայի։

Ջոնթիկիս ռուչկան սլոնովոյ կոստ է։

Սապախտան, պոժալստա, մեղի դոստի եկեք» և այլն[5])։

Սա կնշանակի լավ չհասկանալ, թե՛ հանգուցյալների և թե՛ մեր առաջ դրած խնդիրը։

Պ<արոն> Մեղրյանն էլ իրեն հարց չի տալի, թե Գ<ամառ> Քաթիփան եթե էսպես ծաղրում էր բարբառները, հապա ինչո՞ւ ինքը էնքան լուրջ վերցրել է ու գրել բարբառներով, որ նրա լավագույն գործերն են թերևս և ինչիցն է, որ լավ են դուրս եկել։ Ու Գ<ամառ> Քաթ<իպային> օգն<ության> կանչող պ. Մեղրյանը չի էլ ասում, թե պատճառն ինչ է, որ օտար բառերը ծաղրող բանաստեղծը [գործ է ածում էնպես] բառեր, [որ պ. Մեղրյանը հալածում է (էն էլ Գ<ամառ> Ք<աթիպային> վկա բերելով հանդերձ)]։

Օրինակ,

Գրում է —

Ես դարդ ունեմ, դարդս մեծ է ու պես-պես,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։

Կամ թե.

Շլինքը արևառ, քըրտինք երեսին, բեռը շալակած,
Ղարիբ Մըշեցին մայդանին միջին կանգ առավ հոգնած.[6]) <...>

<ԷՍ, ԷԴ, ԷՆ-Ի ՄԱՍԻՆ>

Մի երկու խոսք էլ «էս, էդ, էն,» ձևի վրա։ Պ. Մ. Ղազարյանը «Հորիզոնի» <№ 92>-ում[1]) նկատել էր, որ էդ ձևը դժվարացնում է երեխանց ուսումը։ Էդ շատ է զարմանալի։ [Ո՞րն է հեշտ էս գրելը, թե այս]։ Նախ, ոչ մի երեխա, ոչ մի հայկական գավառում այս չգիտի։

Ես էս, էդ, էն, փոխանակ այս այդ այն-ի, որ գործ եմ ածում, առաջինը մի հոդեբանական նուրբ պատճառ ունեմ. երբ [որ] ասում եմ էս մարդը, էն օրը, էդ [հիմարը] և այլն, էս շատ ավելի հարազատ լեզու է ինձ համար, անկեղծ ու սրտիս մոտ, իսկ երբ ասում եմ այս մարդը, այն օրը, այդ հիմարը, միևնույնը չի ինձ համար։ Սրա հետ եթե էն էլ ի նկատի առնենք, որ ես մեծ մասամբ ժողովրդական նյութեր եմ ա<ռ>նում մշակելու, ավելի ևս

հասկանալի կդառնա, թե ինչու էդ ձևն է տիրապետում իմ լեզվի մեջ։

Երկրորդ պատճառը. մի քանի հարյուր, կամ վերջապես մի քանի հազար մարդ, գրող, ուսուցիչ, հոգևորական և այլն գործ են ածում այս, այդ, այն ձևը, էն էլ մեծ մասամբ միայն գրելու ժամանակ, իսկ միլիոնավոր ժողովուրդը ասում են էս, էդ, էն։ Ի՞նչու պետք է դուք անպատճառ դատապարտեք նրա էս, էդ, էնը, և ձեր այս, այդ, այնը սովորեցնեք իբրև նոր լեզու նրա երեխաներին ու իրեն։ Մի՞թե դա ավելի դեղեցիկ է, ավելի հեշտ է կամ մի՞թե երբևէ գլուխ գալու բան է և ինչո՞ւ բաժանվել ժողովրդից։

Երրորդ, մի ենթադրություն ունեմ, հայտնի է, որ է-ն վերջնամուտ է, եղել է հնչյունը, բայց էդ հնչյունը նշանակվել է — այ, որ այս, այդ, այն ձևերը գրվել են միայն էդպես, իսկ կարդացվել, հնչվել են էս, էդ, էն։ Եթե էդպես չլիներ, մեր ժողովրդի մեջ կմնար էդ ձևը, մինչդեռ ամբողջ հայ ժողովրդի մեջ — Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան, — կա էս, էդ, էն, աս, ադ, ան, մինչև անգամ [իսիկ], հենց այս, այդ, այնն է, որ չկա։ Ասում են, մեր, վեր, ծեր, սել, գել, և այլն կամ մար, վար, ծար, գալ կամ գյուղ, բայց իսկի չկա մայր, վայր, ծայր, գայլ և այլն։ Ես կարծում եմ հնում գրվել է այ, ինչպես եվրոպական ai, հնչվել է է, և ահա հնչյունը ճիշտ մնացել է կենդանի լեզվի մեջ, իսկ գիրը [պահել է միայն ձևը, մնացել է հին ձևով և անհմուտ անգրագետ մարդիկ արտասանել են.— ա՛յ, փոխանակ է-ի] ապագայում մեր վանականները կարդացել են սխալ — այ ու էդպես էլ սովորեցրել են իրենց աշակերտներին։ Մի խոսքով, եթե էդպես էլ չի եղել, դարձել է էդպես, [հիմի պրծանք դնաց։ Եվ կարող է խոսք լինել աս, ադ, ան-ի վրա կամ էս, էդ, էն-ի վրա — բայց այս, այդ, այնը] <....>

1. Հոգեբանական պատճ<առ>, որ ավելի անկեղծ ու հարազատ է հնչում։

2. Ես ժողովրդից եմ առնում իմ նյութերը և լեզուն ու նրա հետ էլ խոսում։

3. Ժող<....>

4. Լեզվի զարգացման օրենքով հետզհետե բառերը, ոճերը ավելի ու ավելի սղվում են, սեղմվում, կարճանում։

5. Լեզվաբանական տեսակետից — aj — ai նե, այլև պարսկ<ական>փափուկ ա, ֆրանս<երեն> գրվում է in, և կարդացվում է ան։

Պարսկ<ական> փափուկ ա—ն մեզանում արտահայտել են այ—ով էն ժամանակ, երբ յ—ն պահում էր իր հնչյունը, իսկ այժմ, երբ յ—ն հօի կամ ինի հնչյունն է առել — դուրս է գալի այ —

դուրս է գալի աի: [Ճիշտ էնպես], ինչպես ռուսական ь գրում ենք տոյլկո<....>

6. Մտածել եմ էսպես. մի քանի հարյուր մարդ են, որ գործ են ածում այս,այդ, այն. իսկ միլիոնավոր ժողովուրդ — էս, էդ, էն: Եվ էդ մի քանի հարյուր մարդու մեծ մասն էլ միայն գրելու ժամանակն է ասում այս, խոսելիս ասում է էս: Եվ էդ մարդիկ պահելով ուսումնարանի ու գրականության մեջ էդ ժողովրդին խորթ ու անծանոթ ձևերը, նրա երեխաների ու նրա համար դժվարացնում են մայրենի լեզուն, դարձնելով մի տեսակ օտար լեզու և ամեն մի գյուղացի երեխա ուսումնարան գալով, նա, որ ավելի լավ հայերեն գիտի, հաճախ, քան իր ուսուցիչը, գալիս է ու դատապարտվում տանջվելով թողնելու, հետզհետե մոռանալու իր ավելի ուղիղն ու գեղեցիկը և սովորելու ավելի [տգեղն ու] <....> Հիմի ասացեք խնդրեմ, ինչո՞ւ պիտի դատապարտեք նրա էս, էդ, էնը ու ձեր այս, այդ, այնը սովորեցնեք իբրև նոր լեզու ժողովրդին ու նրա երեխաներին: Մի՞թե դա ավելի գեղեցիկ է, միթե [1 անընթ.] ավելի հեշտ է, մի՞թե գլուխ գալու բան է, և ինչո՞ւ բաժանել լեզուն ժողովրդից:

Բայց ինչն է խրտնեցնում, թե ինչպես կարելի է ասել օր <ինակ> հայր Աբրահամ, մայր աստվածածին. այո, խորթ է գալի, որովհետև դրանք գրքից են մտել ժողովրդի մեջ, բայց դրա դիմացն էլ էս կա. հապա ինչպես կարելի ասել — հայր օրհնած, կոճակդ մայր արա:

Սովորության բան է միանգամայն: Եթե ժողովրդական երգերում ասվում է.

Հերիկ, վեր կաց գերեզմանեդ,
Մերիկ, վեր կաց գերեզմանեդ

(Ս<ասունցի> Դավիթ): Շատ ավելի գեղեցիկ են էս հերիկն ու մերիկը, քան հայրիկն ու մայրիկը:

Գներ—գէր, (գնայր, գայր):

Օտարների մեջ նույն բառերը [վրաց <երեն> մգելի, հայերեն գէլ] թե պետք է է լինի, դրան ապացույց կարող են լինել և էն բառերը, որ մեր հարևան ժողովուրդներն են գործ ածում և մենք. օրինակ, վրացիք ասում են մգէլի, հայերեն գայլ. պարզ է, որ էդ գայլը էն գելն է, որ ասում է [ամբողջ] ժողովուրդը, և զանազան գավառներում փոփոխելիս ըստ իրենց հնչյունաբանության — գել, գալ, գյուլ, բայց գայլ՝ երբեք<....>

Էս տեսակ մարդիկ էլ կան, որ նախախնամությունից դատապարտված են [ցավով] արձանագրելու բախտավոր աստղի տակ ծնվածների երջանկությունը: Սրանցից մինը Դոն գետի վրա շինած Ն<որ> Նախիջևան քաղաքումն է տառապում և անունը Ավ. Տեր-Հարությյան[1]) է: Էս մարդը ռամ է դցել ու գտել է, որ «Պ. Հովհաննես Թումանյանը բախտավոր աստղի տակ ծնված մարդ է, ինչպես և մյուս Թումանյանները. ինչ որ գրում է, նորություն է համարվում մեր գրականության մեջ և ըստ այնմ էլ գողտրիկ հաճոյախոսալից գրախոսականներով վարձատրվում» [«Լույս», № 24]:[2])

Ինչ ասել կուզի, որ ես եթե հավատայի սրան իմ և բոլոր Թումանյանների կողմից շնորհակալություն պետք է հայտնեի ու բացականչեի.— շեն կենա ձեր օջախը, որ էդքան գնահատում եք կամ ով գիտի, գուցե էդքան էլ նեղություն չքաշեի, քանի որ ինչ որ կա — աստղիցն է:

Բայց չէ, ես երկար տարիների փորձով հաստատ գիտեմ, որ իսկի էդպես չի: Ես էլ, ինչպես հայոց բոլոր գրողները, ծնված են մի երկրում, ուր բախտավոր աստղը չի ժպտում և մի «հաճոյախոսալից գրախոսականի վարձատրության» հետ դատապարտված ենք շատ ու շատ Ավ. Տեր-Հարություն<յան> ների ծանր [շունչը շնչելու] <....>

Բայց ինչո՞ւ են տառապում էս մարդիկ: Թե ինչո՛ւ, պատասխանը մեզ հեռու կտաներ, բայց մարդասիրությունը ինձ հարկադրում է մեղմացնել էս դժբախտի ցավը ու մխիթարել:

Թող իմանա Ն<որ> Ն<ախիջևանի> բնակիչ Ա. Տ<եր> Հ<արությյունյանը>, որ իմ և իմ նմաններ<ի> համար «հաճոյախոսալից գրախոսականները» երջանկություն չեն: Երբե՛ք: Ինչքան ուզում են հաճոյախոսություններ ասեն — եթե անտեղի է — մեզ չի երջանկացնիլ, իսկ եթե մի որևէ լավ խոսք է ասված մեր էս կամ էն հաջող գրվածքի համար, [դրան էլ խնդրում եմ շատ չնախանձեք...]:

Նվ վերջապես ձեզ ավելի տրտմացնեմ: Օրինակ՝ ես, ձեր խոսքով ասեմ, «գրականությամբ հետաքրքրվող եմ»: Ահա գրում եմ ու հրատարակում: Ի՞նչ են խոսում հայոց թերթերը, քանի՞սն է խոսել: Եթե երբևէ մեկը խոսել է, էն էլ գլխավորապես իմ ընկերներից կամ բարեկամներից մինը. ուրիշ ո՞վ է խոսել: Դուք էլ թերթ ունեք, միթե ձե՞ն եք հանել: Իմ մանկական գրադարանի հրատարակչուհի իշխ<անուհի> Մ<արիամ> Թումանյանը հավաքել

է [ր] իր հրատարակ<ած> <գրքերի> գրախոսությունները, ցույց տվեց մի օր, և բանից ինչ դուրս <կգալ> գիտեք, ո՛վ հայ քննադատ, գրքույկների մասին խոսել ու գովել էին գրեթե միայն ռուս թերթերը. իսկ հայ թերթերը հազարից մի անգամ, էն էլ, կրկնում եմ, էս կամ էն իմ ընկերը:

Մի՛ նախանձեք, պ. Ավ. Տեր Հարությունյան, մի՛ նախանձեք: Դուք էլ կարծեմ «քննադատությամբ եք զբաղվում». և ի՞նչ եք գրել իմ մասին, միայն էն, թե ինչու են Հովհ<աննես> Թումանյանի «Սասունցի Դավիթը» համարում «Շահնամե»:

Ձեզ կարող եմ հավատացնել, որ ոչ ոք էդ տեսակ բան չի ասել: Վերջապես, ահա, ես ինքս էլ գրում եմ, որ դուք կարդաք — «Սասունցի Դավիթը» ես շատ թեթև եմ գրել, օգտվելով [ժող<ովրդական> նյութից], երեխաների համար, մտածելով երբևէ ավելի ընդարձակ վերցնել ու մշակել, բայց չեմ անում և ձեզ կհավատացնեմ, որ երբեք էլ չեմ անիլ, որովհետև շատ է խեղդում ձեր շունչը: Դե՛ հանգստացեք, պ. Ա. Տեր Հարությունյան, ու հանգիստ քնեցեք: Ձեզ հավատացնում եմ, ես նրա համար չեմ «գրականությամբ հետաքրքրվում», որ մարդկանց մաղձը խառնեմ ու քունները կըտրեմ. ընդհակառակը, միանգամայն ընդհակառակը:

Ձեր ցավին ավելացել է և մի նոր հանգամանք, որ ես էս մի քանի օր է «Հորիզոն»-ին հոդվածներ եմ տալի, և վախենում եք, որ ես «հռչակվեմ իբրև հրապարակախոս»: Դարձյալ ձեզ պետք է հանգստացնեմ, որ ես երբեք չեմ ուզեցել և չեմ ուզենալ հռչակվել իբրև հրապա<րակախոս...>

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ԳԵՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻՆ

Սիրելի բարեկամ պ. Բաշինջաղյան.

Հայ գրողները թե իրար ինչ են ասում վիճելիս՝ այդ մեզ զբաղեցնող առարկային չի վերաբերում. և եթե մի պարսավելի երեվույթ կա ու դուք հաշտվել եք նրա հետ և չեք բողոքում, դրա համար միայն պետք է ցավել:

Մենք խոսում ենք հայ գրողի այն րոպեի մասին, որ դուք անվանում եք «նշանավոր րոպե», երբ մի ժողովուրդ գրական հորելյան կատարելով, հարգանք է ցույց տալի իր տաղանդավոր ու վաստակավոր գրողին: Մեզանում սովորություն է դարձել՝ մանավանդ այդ րոպեներին՝ ցուցադրել ու ընդգծել նրա նյութական անապահովությունը: Դուք էլ նույնն արիք վերջերս: Ես ասում եմ՝ այդ վիրավորական է, դուք պնդում եք, թե՝ վիրավորական բան

չկա և ձեր նպատակը եղել է բարի։ Թե ձեր նպատակը բարի է եղած ու բարեկամի՝ ես դրա վրա մաղաչափ կասկած չունեմ, բայց թե առաջվա նման դարձյալ սխալվում եք դուք՝ այդ ցույց տալու համար մի պարզ օրինակ կբերեմ։

Երևակայեցեք, սիրելի Բաշինջաղյան, թե մեկին ճաշի եք հրավիրում և ասում եք. պարոն այսինչ, ես ձեզ շատ եմ հարգում և, որովհետև սուված եք, եկեք դնանք ճաշ տամ, կերեք։

Մի՞թե այսպիսի բան կասեք դուք ձեր հարգած մարդուն, մանավանդ՝ եթե նա իրոք մի նշանավոր մարդ է, տանում եք պատիվ ցույց տալու տաղանդավոր գործերի համար կամ տոնելու նրա «նշանավոր րոպեն...»։

Մի՞թե չեք նկատում, իմ սիրելի բարեկամ, թե ինչ է փչանում այստեղ՝ ո՛չ թե միայն գրողի համար, այլև ամենքիդ համար։

Խեղճ ու աղքատ... Ի՞նչ կնշանակի խեղճ ու աղքատ։ Նրանք են այդպես, որոնք ապրելու միջոց չունեն, իսկ հայ գրողները, ես ճանաչում եմ գրեթե ամենքին, ապրում են այնպես, ինչպես ապրում են իրենց ընկերները, հարևաններն ու բարեկամները։ [Մի մասը մինչև անգամ լավ են ապրում]։

Ուրիշ բան է, թե այդ ապրուստը խլում է նրանց ույժն ու ժամանակը և շեղում է իրենց ճանապարհից, կտրում է գրական զբաղմունքից։ Այո՛, սա դժբախտություն է և՛ գրողների համար, և՛ գրականության համար, և՛ հասարակության։ Պետք է հոգալ,ետ դարձնել նրանց այս կողմնակի ճանապարհներից, ապահովել իրենց ապագա և միանգամ ընդմիշտ կապել իրենց գործի հետ։

Այս միանգամայն ուրիշ խնդիր է։ Հայ ժողովուրդն իր մտավոր ու նյութական կարողություններով չի կարողանում վճռել այս խնդիրը ամբողջ գրականության և բոլոր գրողների վերաբերությամբ, և ամեն մի գրողի համար խնդիր է բարձրանում իր «նշանավոր րոպեին»։ Այժմ էլ նույն կարգով հրապարակի վրա դրված է մի հայտնի գրողի խնդիրը. համեցեք թող վճռեն։ Թե չէ՝ եթե այդ ժամանակ էլ վեր կենան՝ այս կողմից հայհոյելով, այն կողմից թշնամանալով, այդ բավական չի դեռ, տաղանդը հարգողն էլ տասը շահի տա ու տասն անգամ իր կարեկցությունը տպի, դրանց վրա հասկացող բարեկամն էլ մյուս կողմից, այո՛, հենց բարեկամավարի, դա խեղճության հառաչանքներով, էլ տեղն ի՞նչ մնաց, էլ ո՞րտեղ մնացին բարձր տաղանդը, հոբելյանական հարգանքն ու «նշանավոր րոպեն», էլ ի՞նչ գրականություն է սա, և ո՞ւմ եք ուզում դրանով ոգևորել։

1912

<«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Մի քանի օր սրանից առաջ «Հորիզոնին» մի քանի տողով մի առաջարկ էի ուղարկել[1]), որ մենք, հայերս, հայկ<ական> տրպագր<ության> 400-ամյակի տոնին հոգանք մի հայոց պատմություն ունենալու մասին: Իսկ թե ինչպես պիտի հոգացվի ու կատարվի գործը, դրա համար կարծիք կհայտնեն անշուշտ գործին հմուտ մարդիկ: Հայոց Պատմություն ասելով ես չեմ հասկանում մի նոր Պալասանյանի, Զագըճյանի կամ մինչև անգամ Զամչյանի նման մի բան, այլ պատմություն բառի լայն, գիտական, եվրոպական իմաստով, մի գործ, որ մի ձեռքով ու մի երկու տարում չի կատարվում: Մի գործ, որ կատարվում է արդեն, բայց ցաք ու ցրիվ ուժերով և շատ դանդաղ ու անապահով: Մեր պատմությունը չէ՛ որ թաղված է գետնի տակ, ավերակների մեջ, զանազան արխիվների ու դոկումենտների մեջ, լեզվի մեջ, բանավոր ու գրավոր, հին, միջին կամ նոր գրականության մեջ, օտար և հարազատ պատմագիրների մեջ... Պետք է այդ ամենը հանել գետնի տակից, <2 անընթ.> ուսումնասիրել, հետազոտել, համաքել, կանոնավորել: Եվ [մեր մեջ], թեև շատ սակավ, բայց մարդիկ կան, որ կկատարեն այդ գործը: Ֆոնդ կազմել, ազգային ֆոնդ ապահովել, ուժեղացնել ու կանոնավորել այդ գործը<...>*

---

* Պեղումներ են կատարվում, պատմ<ական> դոկ<ումենտներ> հրատարակում, լեզուն են ուսումնասիրում, նկարչությունը, երաժշտությունը, հին գրականությունը:

1913

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

«Հորիզոնի» մոտանցյալ համարներից մեկում[1]) Տ. Ա. Սայաթ-Նովայի արձանի մասին խոսելով ի միջի այլոց ասում է, թե արձանը գլուխ է եկել իմ առանձնակի ջանքերով և թե արձանի վրա փորագրվելու է և իմ բանաստեղծություններից։

Ճշմարիտ է, ոմանք ցանկություն էին հայտնել, որ Սայաթ-Նովայի երեկույթին ասած իմ մի քանի տողը — Սիրով եկավ, սրբով գնաց Սայաթ-Նովան և այլն — գրվի արձանի վրա, սակայն ես միանգամայն ավելորդ է և հենց Սայաթ-Նովայի իրեն երգերից մի երկու տող կգրվի իր արձանի վրա։ Գալով իմ «առանձնակի ջանքերին», պետք է ասեմ, որ ինչ որ կատարվել է, կատարվել է հավաքական ջանքերով։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ — ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Սայաթ-Նովայի մասին ինչ որ գիտենք՝ գիտենք հանդուցյալ Գևորգ Ախվերդյանի գրած կենսագրությունից և մինչև օրս էլ ոչ մի նոր տեղեկություն չի ավելացել նրա վրա։ Սակայն հենց Գևորգ Ախվերդյանի տված կենսագրությունը շատ է պակասավոր։ Ինքը Ախվերդյանն էլ է դանգատվում։ Ասում է.

«Թիֆլիզու հայոց, վրաց ու թուրքաց ուրախացնող երգչի կենցաղավարության վրա չկարողացա ոչովից իմանալ մեկ մանրամասն տեղեկություն. զարմանալի չէ։ Սայաթ-Նովեն իր կենաց վերջի քսանհինգ տարին կենում էր միանձնացած, Թիֆլիզից դուս, հեռացած սրա ժողովրդեմեն։ Նրա փառքի ու շքեղության ականա-

տեսնելիս մեկն էլ չկա։ Ժամանակն էն խնայել է մի քանի ցամքած ծերերուն, սրանք էլ Սայաթ-Նովուն՝ աշուղ են տեսել, երբ հենց իրանք էլ էլել են վեց կամ ութ տարեկան. բայց լավ միտն ունին, ինչպես՝ երբ նա իր կրոնավորության ժամանակն հազրեն մեկ անգամ գալիս է էլել Թիֆլիզ, խաղասեր էրեխերքն նրա էդնեն վազելիս՝ մատով մեկ մեկու շանց են էլել տալիս ասելով։ «Տո, գիդի՞ս, Սայաթ-Նովեն է», ու մեծերուց լսածն ասելով պատմում են, որ էս՝ էրեկվն թագավորի ու սրա արքունաց սիրեկան աշուղն՝ ըլում է մեկ անհոգ զող ու բեփ սիրող, սիրուն աղչկերանց ուրախացնող ու որբևերի կանանց մխիթարիչ, և ըլելով հիանալի քամանչա ածող, մանավանդ իր քաղցր ձայնի հետ՝ էլել է միշտ թագավորի ու ազդի խրախճանքներու պատվական ու անհրաժեշտ զարդն»[1])։

Գուցե թե, հիրավի, կարող էին Թիֆլիզում լավ չհիշել երգիչ Սայաթ-Նովային, որովհետև նա իր մահից էլ 25 տարի առաջ էր հեռացել Թիֆլիզից, իսկ Ախվերդյանը հասցնում էր հաջորդ դարի հիանական թվականներին, ուղիղ ութսուն տարուց հետո էն օրվանից, ինչ որ նա հեռացել էր Թիֆլիզից։ Էն ժամանակ թերևս նրան Հաղպատի ծերերը հիշեին, իբրև Հաղպատի վանքի միաբանի, ուր ապրել է նա մինչև իր մահը։ Եվ Հաղպատ էլ է դիմել հանգ <ուցյալ> Ախվերդյանն ու գրում է, թե.

«Սայաթ-Նովու վանական կյանքի վրա չունիմ ոչինչ տեղեկություն, Հաղպատում մի ծեր էլ չկա, որն որ իմանում ըլի գոնե մեկ ավանդություն էս աննշան կրոնավորի վրա»։[2])

Վերջապես գուցե մի գերեզմանաքար ունենա, մի տապանագիր, որ նրանից գոնե իմանանք, թե ինչպես էր կոչվում Սայաթ-Նովեն իր կրոնավոր ժամանակը։

Նույնիսկ էդ էլ չկա։

Ինքը Ախվերդյանն էլ վկայում է, թե Աղա Մամմադ խանի Թիֆլիզից հեռանալուց մի քանի օր հետո սպանված Սայաթ-Նովայի մարմինը վեր են առնում թաղում Մեծ Բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դռան առջևը, բայց գերեզմանը քար չունի։

Ընակելով էս վկայությանը՝ շատերը պնդում էին, թե Սայաթ-Նովայի գլխավերևը եկեղեցու պատի մեջ մարմարի քարի վրա մի արձանագրություն է եղել։ Եվ ահա վերջին օրերս, երբ գնացինք Սայաթ-Նովայի արձանի հիմքը դնելու, քանդել տվինք նրա գերեզմանի կողքի պատի երեսի գաճը։ Ոչ մի արձանագրություն չգտանք։ Հետո հայտնվեց, որ հիրավի, էդ պատի վրա մի երկու արձանագրություն են եղել, բայց վերջին տարիներս եկեղեցին վերանորոգելիս պատից հանել են տարել, պահել խորանում։

Դրանցից մեկն աշխարհականի էր, տապանագիրը վրացերեն ու ռուսերեն, մյուսը հոգևորականի էր, Ճակատին եպիսկոպոսական գավազան, գավազանի երկու կողմը երկու տառ Ջ և Վ: Արձանագրությունը կարդացինք առանձին-առանձին թե՝ Թիֆլիզի սրբազան առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը,[3]) թե՛ ես, և կարողացանք կարդալ միայն առաջին երեք տողը, որ հետևյալն է.

«Մարմնով տքնի ի տապանի
Եվ ակն ունող դատաստանի,
Առաջնորդ Թիֆլիզ քաղաքի...»:

Ես ամենը զուր անցնելուց հետո ես մտածեցի Հաղպատի միաբանության մեջ որոնել կրոնավոր Սայաթ-Նովային, որ անշուշտ անունը փոխած պիտի լիներ: Հաղպատի առաջնորդությունը, և ինձ առաջնորդ առնելով Ախվերդյանի էն ցուցմունքը, թե նա կրոնավորություն պետք է լինի ընդունած 1770 թվականին, սկսեցի որոնել էդ թվականների Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների կոնդակները Հայր Գյուտ ավագ քահանա Աղանյանի «Դիվան Հայոց պատմության» շատ դնահատելի հրատարակությունների մեջ:

Հայտնվեց, որ նոր բերած վերևի տապանագիրը Սայաթ-Նովայի ժամանակակից Թիֆլիզի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսի տապանագիրն է: Ապա թե կարճ դեգերումից հետո գտա նրան, ում որ մանէի գալիս:

«Դիվան Հայոց պատմության» ԺԱ դրքում դուրս եկավ, որ Սիմեոն կաթողիկոսը 1771 թվի դեկտեմբերի 25-ին Թիֆլիզեցի մի վարդապետ է ձեռնադրել Դավիթ անունով:[4])

Էս Դավիթ անունով կրոնավորը, ինչպես կտեսնենք, վայելում է վրաց արքունիքի առանձին սերն ու հովանավորությունը, և Աղա Մամմադ խանի Թիֆլիզն ավերելուց հետո, երբ սպանվեց Սայաթ-Նովեն,— էս անձնավորությունը էլ չի երևում:

Բայց մենք հետևենք տարիների ու դեպքերի կարգով, դոկումենտներով, թեև, ժբախտաբար, բոլոր դոկումենտները տպված չեն տակավին:

Արդեն տեսանք, որ 1771 թվին մի Թիֆլիզեցի Դավիթ վարդապետ է ձեռնադրվել և նշանակվել Հաղպատա միաբան: Հաղպատա և Սանահնա վանքերը դռնվում են իրար մոտ, մի քանի վերստ հեռավորության վրա: 1783 թվին Ղուկաս կաթողիկոսը հանդիմանում է Սանահնա առաջնորդ Աբրահամ վարդապետին, ասում է. «Մենք քեզ առաջնորդ ենք արել, որ դնաս վանքումը նստես, վանքը շինես, բարեկարգես, միաբան ժողովես, ժամերգություն հաստատես մեջը, իսկ դու մեր հրամանի հակառակ թողել ես

խեղճ վանքն անշուք, գնացել ես օրհնյալ քաղաքն Թիֆլիզ, մի եկեղեցի ես զավթել, քեզ համար շինել առաջնորդարան և հանգստյան տեղ, որ էնտեղ քո ծուռը (թյուր) դաստիարակի հետ նստեք և վարավորություններով ու հրճվանքով ձեր կյանքը զով-զով ու սաֆայով-քեֆով անցկացնեք»։[5])

Ապա խոսելով վարդապետի տված հրամանի մասին, որով թույլ է տալիս ամուսինը կենդանի մի կնոջ մի ուրիշի հետ ամուսնանալու, կաթողիկոսը նորից դալիս է անհայտ դաստիարակին, ասում է.

«Ո՛վ խելագար դու, կինը և քո խրատիչը, որին իբրև քեզ դաստատու ես պահում և որի փոքրավորն ու ծառան ես հենց, որ քեզ միանգամայն հանձնել ես նրան, և ամեն կողմից հետևում ես նրա կամքին ու անբարոյական (վատշվեր) բարքին։ Ինչպես շատերից լսել ենք և հենց ճշմարիտ էլ է, անբանի նման սանձդ տվել ես նրա ձեռը և հիացած, զմայլած նրա անճոռնի ճարտասանությամբ ու հիմարական գրչով—գրածդ չես էլ մտածում՝ թե ինչ ես գրում... Մեկի կինն առել ես քրեհով (իճարայով) տալիս ես մյուսի՞ն...»։[6])

Ես կարծում եմ, Աբրահամ վարդապետի էս դաստիարակն ու դաստատուն, որ նրան կրոնավորի ճամբից հանում է, տանում Թիֆլիզ քեֆ ու զովղի—Թիֆլիզեցի Դավիթ վարդապետը պետք է լինի, որի հետ առհասարակ չունի Ղուկաս կաթուղիկոսը, ինչպես կտեսնենք։

Հաղպատա վանքի միաբան Թիֆլիզեցի Դավիթ վարդապետը բացառիկ կերպով վայելում է վրաց Հերակլ II թագավորի և Գիորգի թագաժառանգի, հետագա Գիորգի XII թագավորի սերն ու հովանավորությունը։ Նույն 1783 թվին, որ Ղուկաս կաթողիկոսը Աբրահամ վարդապետին էնքան նախատում է իր դաստատվի ու դաստիարակի պատճառով, էդ նույն տարին թագաժառանգ Գիորգին, որ Սոմխեթի կառավարիչն էր, իսկ Հաղպատա վանքը գտնըվում էր Սոմխեթում, միջնորդում է Ղուկաս կաթողիկոսին և խնդրում է, որ վիճակավոր եպիսկոպոս ձեռնադրի Թիֆլիզեցի Դավիթ վարդապետին։ Եվ ահա կաթողիկոսն օրհնության կոնդակ է գրում թագաժառանգին և Դավթի ձեռնադրության մասին գրում է, թե. Ստացա քո սիրանիշ թուղթը, որ ղրկել էիր Դավիթ խոհեմամիտ վարդապետի և քո հավատարիմ ծառա Շաքարոյի հետ։ Ասում է Պոլսից, Երուսաղեմից ու ս. Կարապետից նշանավոր վարդապետներ էին եկել եպիսկոպոս ձեռնադրվելու, նրանց ձեռնադրեցի, հինգ օրից հետո Դավիթ վարդապետն եկավ, և ինքն իր աչքով

տեսավ, որ ուշացել էր: Այժմ կմնա մեզ մոտ, մինչև պատշաճավոր ժամանակ լինի — կձեռնադրենք ձեր խաթեր:

Նվ շարունակության մեջ ասում է, թեև ձեր խաթրը ամբողջ աշխարհքի հետ չեմ փոխիլ, նրան եպիսկոպոս կձեռնադրեմ ու կուղարկեմ, բայց մինչև ձեռնադրելը ուզում եմ ձեզ հայտնել, որ բոլոր քրիստոնեից կանոն է, որ եպիսկոպոսը պետք է մի հատուկ վիճակի վրա ձեռնադրվի և մի ժողովրդի, իսկ Դավիթ վարդապետը ոչ դիր ունի մի որևէ ժողովրդից, ոչ համախոսական (մահսար), որ ձեռնադրելիս բազմության առաջ կարդանք: Խորհուրդ է տալիս և խնդրում՝ իշխանության ուժով Հաղպատի վանքից հեռացնեն, էջմիածին դրկեն նույն վանքի առաջնորդ խոսվարար Իսրայել եպիսկոպոսին, որ Դավիթին եպիսկոպոս ձեռնադրի ու դրկի նրա տեղը Հաղպատա վանքի առաջնորդ, որ մեծ դիրք ու պատիվ էր էն ժամանակ:

Նույն իմաստով թուղթ է գրել տալիս և Դավիթ վարդապետին, ու Շաքարոյի հետ դրկում Թագաժառանգին:

Թե երբ է ձեռնադրվում Դավիթ վարդապետը եպիսկոպոս — չենք իմանում, տեղեկություն չկա մեր ձեռքին եղած դոկումենտներում, բայց մի քանի տարուց հետո, 1792 թվի հուլիս ամսին ահա թե ի՛նչ է գրում Ղուկաս կաթողիկոսը Գիորգի արքայորդուն: Ասում է.

«Մի ժամանակ, որ մեզ գրեցիր Հաղպատա միաբան կոչված Դավիթ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելու համար, թեև պատասխանեցինք, թե վանք ու վիճակ չունի, որ վրեն ձեռնադրենք, սակայն որովհետև մեզ ստիպելով խնդրեցիր, քո քաղցր խաթեր համար նրան ձեռնադրեցինք եպիսկոպոս: Հետո ժողովուրդն ու դու խնդրեցիք, որ Հաղպատա առաջնորդ նշանակենք, էդ էլ արինք: Թե գրով, թե բերանացի էլ պատվիրեցինք համետա ու խաղաղ կյանք վարի ու հոգ տանի վանքի շինության: Բայց նա էնպես մի ուղիղ ճանապարհ չբռնեց, որ հաճելի լինի թե աստծուն, թե մարդկանց: Լեզգիների հարձակումից հետո* վանքը դատարկեց, եկավ քաղաք ու էլ ետ չվերադարձավ: Շատ ավերակներ նորից շինվեցին, իսկ նա վանքի ուրիշների շինել աված շենքերն էլ քանդեց, բերեց էդտեղ (Թիֆլիզում) որջ հաստատեց իրեն համար,

* Անշուշտ կաթողիկոսը ակնարկում է 1785 թ. աշնանը լեզգիների հարձակումը, երբ Ավարի Օմար խանը 11 հազար ընտիր լեռնականներով Կովկասի սարերից իջավ, ոտնատակ տվեց Կախեթը, անցավ Բորչալուն, սեպտեմբերի 20-ին մտավ Լոռու ձորերը, ավերեց ու կողոպտեց գյուղերն ու վանքերը և հեռացավ սեպտեմբերի վերջին, երբ Հերակլ թագավորը խոստացավ տարեկան որոշ գումար վճարի նրան:

վանքը թողնց ամայի։ Եվ նրա անկարգությունների մասին, թե քանի քանի ամբաստանության թղթեր ու գանգատներ են հասել մեզ թե՛ մերոնցից և թե՛ ձերոնցից — էստեղ երկարելն անտեղի կլիներ։ Բայց մեր երկայնամտությունը ավելացրեց անզգամությունը մինչև էն աստիճան, որ նրա լկտի աբեղան, նրանից սովորած, Գորի քաղաքում, եկեղեցու մեջ, անարգանքով բերան է առնում մեզ ու մեր ս. Աթոռը, ժողովրդին ընդվզում նախատելու և ուրիշ դատարկախոսություններով աղմուկ ու շփոթ է գցում նրանց մեջ։

Ժողովրդի բողոքը հասավ մեզ, և հարկ եղավ, որ վանքի անունով առած արդյունքների հաշիվը պահանջենք էդ առաջնորդ կոչվածից, որ մինչև այժմ ոչ մի շինություն է շինել, ոչ էնտեղ նստել, ոչ նրա համար մի բան է խարջել, և դեռ խնդրում է արդյունքը շատացնենք։ Ուստի, ահա թուղթ ենք գրում օրհնյալ քաղաքդ (Թիֆլիզ), Հաղպատու թեմի քահանաներին ու ժողովրդին, խնդրում ենք նրանց մի քանիսին՝դան ս. Աթոռս, իսկ Դավիթ սևագլխին ու իր լիրբ աբեղային հեռացնում ենք եկեղեցուց, զրկելով իրենց կարգից, կարգալուծ անելով։ Նրանք էլ պետք է գան էստեղ, և Հաղպատի թեմականների հետ միասին վանքի արդյունքների հաշիվը պիտի պահանջենք Դավիթ սևագլխից և սուրբ տաճարի շինության համար մի հոգս քաշենք։

Դրա համար էլ էս թուղթը գրում եմ ձեր պատվականությանը, որ էս բանները ճշմարտապես իմանալով, ջատագով լինեք մեր օգտավոր կամեցողությանը, որ վանքի շինության և ժողովրդի խաղաղության համար է։ Եվ եթե էն անզգամ սևագլուխները, իրենց լրբության մեջ համառելու համար՝ ընկնեն ձեր դուռը, չընդունեք և նեղություն չըքաշեք մեզ բան գրեք էն անիծվածների գործի համար, և մեր սիրո պատիվը նրանց հետ մի փոխեք։ Այլ որպես իրավունքն է պահանջում և ձեր՝ դեպի մեզ ունեցած բարեկամության վայել է — էնպես արեք, հեռացրեք ձեզանից մեր երեսից ձգածներին և ընդունելության անարժաններին»։[7])

Կարևոր է հիշել, որ էս ժամանակ Դավիթ եպիսկոպոսը արդեն ութսունին մոտ կամ ութսուն տարեկան մի ծերունի էր, երբ կարգալուծ եղավ ու հալածվում էր կաթուղիկոսից։

Ղուկաս կաթուղիկոսը ինչ որ գրել էր Գիորգի թագաժառանգին, նույն թվին ու նույն ամսին, նույն իմաստով ու նույն ոճով մի թուղթ էլ գրում է Հերակլ II թագավորին, որ նա էլ իրազեկ լինի գործին և խնդրում է, որ թագավորը առանց էն «աշխատավորների», այսինքն առաջնորդ կոչեցյալ կարգազերծ Դավիթ եպիսկոպոսի ու իր չնչին աբեղայի սուտ ու պատիր պատճառա-

բանությունները լսելու՝ ուղղակի հրամայի, որ կատարվեն իր բարեմտորեն գրածները, որ միայն Հաղպատա վանքի օգտի համար են։

Սակայն, չնայելով Ղուկաս կաթուղիկոսի ցասումին ու գրությանը ծերունի Հերակլ II թագավորը գրում է, որ կաթուղիկոսը ների և բանադրանքից արձակի Դավիթ եպիսկոպոսին կամ վարդապետին։ Եվ ահա կաթուղիկոսը նույն 1792 թվականի հոկտեմբեր ամսին թագավորին գրած պատասխանի մեջ երկար տիտղոսներ ու հավաստիացումներ շարելուց հետո, ասում է.

«Դիվանբեք էշիղաղաբաշի Թեյմուրազի ձեռքով ձեր մեծության թուղթը մեզ հասավ, որ սիրով ընդունելով՝ իմացանք ինչ որ գրել էիք Հաղպատա առաջնորդ Դավիթ վարդապետի մասին, որ ներենք նրա հանցանքները և արձակենք հոգևոր կապանքից և այլն։ Սրա դեմ թեև մեծ էր մեր սրտնեղությունն ու վիրավորանքը, բայց ձեր գերհարգության միջնորդության պատճառով — իջանք մեր բարկությունից։

Դավիթ վարդապետի համար էապես իմացած եղեք, որ սրա հանցանքն ու գայթակղությունները շատ են և սակավ չեն սրա կողմից մեր կրած պլիսացավությունները։ Հարկավոր էր սրան երկար կշտամբել ու խրատել, որ զգաստանա։ Դրա համար էլ կամեցանք, որ նա էստեղ մի երկու-երեք ամիս մնա, հաստատ խոսք տալով, որ պատիժ չէինք տալ, բայց երբեմն-երբեմն խրատական խոսքերով կհանդիմաններինք, որ գուցե թե վարժվելով վարքը ուղղեր դեպի բարին՝ հետո վերադառնար, բայց էստեղ մնալը չեղավ, և իրենք կպատմեն թե՝ ինչու։ Ապա մենք նրան եպիսկոպոսների բազմության առաջ ատյան կանչեցինք ու իր երեսին ասինք իր պարտավորությունները։ Դրանից հետո ձերդ մեծության քաղցրագույն խաթեր համար նրան ոչ պատժեցինք և ոչ խայտառակեցինք, այլ «ողորմի» ասացինք գլխին ու արձակեցինք բանադրանքից, և շնորհեցինք դարձյալ վեղարն ու փիլոնը, և հաստատեցինք իր առաջնորդության մեջ։ Բայց եթե միանգամայն զանց առնելով նրան վերադարձնեինք, թերևս առաջվա պես, կամ առաջվանից էլ ավելի ծուռը, խոտորնակ ճանապարհով գնար, և վանքի շինությանն անփույթ մնալով քաղաքում ու գյուղերում ժամանակն անվայելաբար անցկացնելով նույն գայթակղությունն ու գլխացավությունը նորոգեր։ Մենք դրան եպիսկոպոս ենք արել, որ շեն անի ու նստի վանքում, որի արդյունքի մի բնիոնն էլ չենք ուզում մեզ համար։ Էդ մտքով էլ նրան ապաշխարության դեղ և զգաստության խայթ տալու համար՝ երկու տարվա ժամանակով զրկեցինք եպիսկոպոսությունից, որ իր ցուփ ընթացքից զգուշանա, գայ-



Սայաթ-Նովայի մասին կատարված գեղուցման իմքնագրի առաջին էջը:

թակղությունից հեռանա, և դեպի ամենքը, որ հանձնած են իրեն խոհական ու խաղաղ վարք առնի, և մանավանդ միաբաններուն հետ դնա վանքում նստի։ Եվ աստվածասեր օրհնյալ թագավորդ, որ Տիրոջ հաջողությամբ քո տերության թշնամիներին կորագլուխ ես արել, Հաղպատա ցրված գյուղացիներին էլ հրաման անես ետ իրենց գյուղը հավաքվեն վանքի հաստատության համար, նա էլ ճոխացնի էն սուրբ Տունն ու միաբանությունը բարեկարգի, ժողովըրդին մխիթարի, և երբ որ էս տեսակ դովելի վարք ցույց տալով բարի համբավ կհանի, երկու տարին լրանալուց հետո դա ս. Աթոռս դարձյալ իր եպիսկոպոսական պատիվն ընդունելու։ Էն ժամանակ, թեկուզ, աստծո կամքով, մենք կենդանի էլ չլինենք, մեր հաջորդը գործին տեղյակ եպիսկոպոսների վկայությամբ, անարգել կկատարի մեր պայմանը։ Էս էսպես արինք ճշմարիտ ապահովություն համարելով թե քեզ, մեծ Հերակլ արքայիդ և թե մեզ համար, և ահա արձակման և առաջնորդական կոնդակով, Թեյմուրազ բեկի հետ, ձեր մեծության հրամանով ճանապարհ դրինք մեր հոգևոր որդի Դավիթ վարդապետին»։[8])

Եվ Դավիթ վարդապետին տեսնում ենք առաջնորդ Հաղպատա և 1795 թվին, այսինքն Սայաթ-Նովայի մահվան տարին։

Էդ տարվա փետրվար ամսին կաթողիկոսը մի չհասի համար բանադրելով ու հանդիմանելով Ղազախի Կողբ գյուղի Վերան քյոխվին ու իր որդի Յարալուն՝ ասում է. «Չէ որ ձեր Առաջնորդ Դավիթ վարդապետը սաստիկ զգուշացրել է ձեզ, թե ապօրինի է»։ Եվ էս բանադրանքի թղթի տակ գրած է. «ի սարսափելի Աթոռս սուրբ Էջմիածին»։[9])

Իսկ 1795 թվականի սեպտեմբերից հետո, Աղա Մամմադ խանն Թիֆլիզն ավերելուց հետո այլևս չկա և չի հիշվում էս Դավիթ Վարդապետը։

Կասկած չկա, որ Թիֆլիզեցի էս ծերունի կրոնավորը, որ շարունակ իր վանքը թողնում է փախչում Թիֆլիզ և իրեն տալիս կրոնավորին անվայել՝ քեֆի ու զանազան գայթակղիչ արարքների, մեր Սայաթ-Նովան է։ Իսկ թե ինչու էր նա Դավիթ կոչվում, էդ հանելուկն էլ ինձ համար բացվեց հենց էսօր։ Թեև գիտեի, որ հանգ<ուցյալ> Ախվերդյանը ոչ մի տեղեկություն չունի կրոնավոր Սայաթ-Նովայի մասին, բայց այնուամենայնիվ մտածեցի նրա թողած թղթերն էլ նայել մի անգամ։ Գնացի նայեցի և մի պատառ թղթի վրա զանազան գրած ու ջնջած տողերի մեջ դտա էսպես մի տող.

«Դավիթ առաջնորդը ձեռնադրեց Սայաթ-Նովին»։

Իսկ հայտնի է, սովորություն էր, որ մեծ մասամբ ձեռնադրողը իր անունը տալիս էր ձեռնադրվող նորընծային։

Ահա թե ինչո՛ւ Սայաթ-Նովան էլ կրոնավորության մեջ կոչվեց Դավիթ։

Հանգուցյալ Ախվերդյանի գրած կենսագրությունից հայտնի է, որ Սայաթ-Նովան վարդապետ էր և Հաղպատա վանքի լուսաբար։ Էս տիտղոսներից ոչ մինը չի հակասում, եթե մեր Դավիթը կոչվում է եպիսկոպոս, Հաղպատա թեմի առաջնորդ և Հաղպատա Մայրավանքի Աթոռակալ։ Սրանք բոլորն էլ համազոր պատիվներ ու կոչումներ են։ Լուսարարությունը շատ մեծ պատիվ է եկեղեցական կարգերի մեջ, իսկ վարդապետ կոչվում էին սովորաբար նաև եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, ինչպես հաճախ կպատահենք հենց նույն դոկումենտների մեջ։

<ՆՁՈՒԹԵՐ, ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ>

Աշուղ.— *Սիրահար-բանաստեղծ. իր սազը ձեռքին անցնում է՝ իր յարն ու աշխարհը գովելով, իր ժողովրդի լավն ու ցավը պատմելով. վառ ու կենդանի անարատ սերն ու հերոսական գործերը սրտի, մտքի մեջ<....>*

Աշուղի լեզուն դրուստն է ասում...

Աշուղի լեզուն բլբուլ է —օրհնանք ունի, անեծք չունի։

Չէ՞ որ՝

Աստված դիփունանց մին հոգի էրիտ.

Սայաթ-Նովան.— *Արևելքի մեծ աշուղ բանաստեղծներից մեկը. Սիրո հոյակապ երգիչը.*

Գրական Ընկերության կոչով հավաքվել ենք՝ նրա հիշատակին մարմարե մահարձան բարձրացնելու նրա շիրիմի վրա....

Բայց նրա երգերը...

Բարձրացնել նրա փառքը, նրա անունը, նրա երգերը... Էնքան հարազատ, որ չի կարելի թարգմանել, փոխադրել ուրիշ լեզվով, ինչպես չի կարելի փոխադրել Թիֆլիզը, էն էլ հին Թիֆլիզը՝ ուրիշ տեղ։

Կովկասցի է —ռազմ<ական> ոչինչ չունի. 1851. Полонский. Полюби книгу, полюби перо, полюби тетрадь. *Էլ չեմ ասում սխալը, թեկուզ բառացի։*

Անցյալ դարու հիսնական թվականների գործիչներից մինը — մի աղնիվ հոգի, մի լուսավոր միտք — ինչպես էր հա-վաքում աշուղ<ական> երգերը։

Սայաթ-Նովան. հայր, մայր.

Ջուլհակ Արութինը ծնված 200 տարի առաջ 1712—1795.

Խաղի դավթարները —

Ախվերդյանի մոտինը. և 1823 թ. իր որդի Օհանի ձեռքով գրածը — Թեյմուրազի համար։

Մելիքսեթ, Օհան, Սառա, Մարիամ

*Ակնոցներս վատ էին.*ПБ. Академия Наук № 222.

Ինքը.

Խաղ իս էլի, Սայաթ-Նովա,
Դաղ իս էլի, Սայաթ-Նովա,
Բաղ իս էլի, Սայաթ-Նովա.
Գըլուխդ փիանդազ իս անում, կյանքդ փոում իս ուրիշների ոտի տակ.
Արի համով ղուլուղ արա, խալխի նոքար, Սայաթ-Նովա,
Ով քիզ լիզի պարքիվև, դուն տու շաքար, Սայաթ-Նովա.

Խալխը և ևս.

Ամեն մարթ չի կարա կարթա իմ գիրըն,
Ամեն մարթ չի կարա խըմի իմ ջուրն, և այլն

և

Համփերութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրըս՝ դուշման ին դառի,— յադերումն բեզարիլ իմ, 136.
Քըսանըն՝ մե ղուլ չին պահում,— աղերումեն բեզարիլ իմ.
Բայց դեռ կար մինը,—
Թեզուզ հազար դարդ ունենամ, ես սըրտումըս ահ չեմ ասի.
Իմ հուքմի հեքիմըն
Սայաթ-Նովեն ասավ. Ջալում, ես էն մահին (էլ) մահ չիմ ասի՝
Հենչափ ըլի՝ դուն վըրես լաս —
Բայց նա էլ.—
Որին նվիրեց իր սիրտն ու երգերը, <որին> ասում էր՝
Կրակի ծովեմեն դուս եկած՝ ոաշ-ջեյրան իս ինձ համա։
Որին ասում էր՝ դուն կրակ, հազածդ կրակ և այլն,
Որովհետև կրակի գույն էր հագնում։
Է՛յ բեմուրազ, մի՛ սըպանի, չունքի արիր սեր, նազանի.
Քիմեն ավել յադ յար սիրիմ, ումբրես չանիմ խեր, նազանի։

Աշխարոմըն դուն իմ ջան իս.
Դուն իմ Շահ իս, Սուլթան, խան իս.
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս,
Հազարեն մե ջեր, նազանի։
Բայց նա անուշադիր ու խնդալով գնում էր իր ճամփեն։
Անգամ արա, մատաղ իմ քիզ, մի քիչ կամաց գընա, գոզալ։
Աշխարըս ո՞ւմն է մնացի՝ վուր ինձ ու քիզ մընա, գոզալ—
Մե խոսկ ունիմ իլթիմազով և այլն. վերջին տունը—
Թեկուզ. էջ 58
Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն և այլն, էջ 67.
Ես մի փուքըր նավի
Հիդըս խոսի, մի՛ կենա խըռովի պես,
Տալղա տըվիր՝ գեմիս տարար ծովի պես.
Կու մեռնիմ,— չիս տեսնի Սայաթ-Նովի պես.
Աշխարըս՝ մե փանջարա է, էջ 136
Մըտիկ տըվողըն և այլն,
Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սաղըն և այլն, էջ 64
աշխարիս մալըն և այլն.

Վաեֆ—Հաղպատ.

Աղա Մահմադ խանի արշավանքը,
Գալիս է Թիֆլիզ 83 տարեկան, երեխաներին հեռացնելու։
Նախադգացումն.
Աշխարհումըն վարթն է էլի բըլբուլներու սիրեկանըն։
Բլբուլի լեզվով իմ ասում, Տեր, պահե վարթի նըմանըն։
Աշխարհումըն քանի սաղի իմ, Սայաթ-Նովու գերեզմանըն
Շահաբասի լալի նըման շահի վեր գալուն մընում է։
Հարձակումը աղոթքի չոքած.
Խաղով եկավ, ախով գընաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ, վերքով գընաց Սայաթ-Նովան,
Սիրով եկավ, սըրով գնաց Սայաթ-Նովան։

1914

ԱԶԳԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸՆ ՈՒ ԻՐԵՆՑ ԴՅՈՒՑԱԶՈՒՆՆԵՐԸ

Ինչպես որ մեծ հեղեղներից առաջ տոթը ճնշում է մարդկանց շնչառությունը, էնպես էլ մեծ պատերազմից առաջ գրեթե ամեն մարդու սիրտ ճնշում էր մի ծանր նախազգացում։ Պայթեց փոթորիկը, ծանր զգացումին հետևեցին ահավոր ցնցումն ու իրարանցումը, էս էլ կանցնի, կբացվի պայծառ արևն ու կժպտա խաղաղ օրը, բայց անցնելուց հետո էլ՝ երկար-երկա՜ր քաղաքակիրթ աշխարհը կզբաղվի էս չտեսնված պատերազմով և, թերևս, էս սեպտեմբերը, որ ապրում ենք, պատմության մեջ մնա «սոսկալի սեպտեմբեր»։ Ասես թե էլ սովորականի նման զորաբանակներն ու զորավարները չեն, որ վեր են կացել իրար վրա, այլ ժողովուրդները իրենց ամբողջ ազգային ուժով ու կարողությամբ։ Եվ որովհետև ամեն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ՝ ամենայն համարձակությամբ կարող ենք էսպես ասենք, թե ազգերի դյուցազունները՝ սերբական Մարկոն, գերմանական Զիգֆրիդը, ֆրանսիական Ռոլանդը, անգլիական Բեովուլֆն ու ռուսական Մուրոմցի Իլիան են առասպելների աշխարհից դուրս եկել մեր առաջ ու մենք հանդիսատես ենք էս հսկաների կռվին։ Եվ տեսեք թե ի՜նչքան հարազատ են գծված ու բնորոշված սրանցից ամեն մինը։

Ահա՛ գերմանական հուժկու Զիգֆրիդը, վեր է կացել՝ ձեռքին չեղած ամրության էն սուրը, որ դարբնել էր աշխարհքի անհուն գանձերը մենակ տիրապետելու համար…

Ահա ֆրանսիական քաջարի Ռոլանդը, որուտագին հնչեցնում է իր հսկայական օլիֆանտը (փողը), օգնության է կանչում ֆրանսիական ազգային զորությունը՝ պաշտպանելու չքնաղ Ֆրանսիան…

Ահա սերբական ըմբոստ կարիճը, արքայազն Մարկոն, իր Շարացի վրա, աջ ու ձախ չարդելով՝ խորը մխվել է սերբական ազգից շատ ավելի ուժեղ թշնամու բանակը, լողում է արյան մեջ ու աղաղակում է՝ էլ ի՞նչ անեմ, տե՛ր աստված...

Ահա անգլիական ազգային հսկան, ծերունի Բեովուլֆը, որ լողալու արտասովոր ընդունակություն ունի և մայր ցամաքն է դուրս գալիս՝ ժողովուրդներին իր հրեղեն շնչով սպանող մի վիշապի դեմ, նրան խորտակելու և նրա հավաքած անհուն գանձերը իր ազգին տանելու համար...

Ահա վերջապես և ռուսական վիթխարի գյուղացին, ծերուկ Իլյա Մուրոմցին, հայրենիքին սպառնացող վտանգի առջև Владимир Красное Солнышко-ից, իշխանավորից զուր տեղը իրեն հասած վիրավորանքը մոռացության տալով՝ իր հսկայական գուրգրն առած գնում է անմեղ ժողովուրդն ու երկիրն ազատելու վայրագ թշնամու արշավանքից: Գնում է անհոգ հանդարտ ու բարի, բայց հզոր ու հաստատուն: Գնում է իր «ախպերացուների» հետ:

Ի՞նչ խոսք, որ ցաք ու ցրիվ են անելու գերմանական Զիգֆրիդի տիրած ինչերն ու տիրապետելու տենչերը, և անգլիական Բեովուլֆը շատ գանձեր է տանելու իր կղզին: Ի՞նչ կասկած, որ էս հսկաների զարկերի տակ մասնատվելու են Եվրոպայի Թուրքիան՝ Ավստրո-Հունգարիան, և Ասիայի Թուրքիան, որոնք նույնիսկ էս դյուցազունների շարքում չունեն իրենց ներկայացուցիչը, և շատ բարիքների ու ազատությունների հետ միասին, որ հետևելու են մեծ պատերազմին, վերջնականապես պետք է վճռվի և Տաճկահայկական հարցը, կամ, եթե կուզեք, արդեն վռճված է: Չէ՞ որ Մուրոմցի հսկայի «ախպերացուների» թվում է և մեր Սասունցի Դավիթը, եթե միայն Մսրամելիքի փորած հորից լուս աշխարհ է դուրս եկել:

Սակայն ավելի մեծը կա: Ժողովուրդների էպոսներն առհասարակ վերջանում են խաղաղության սրբազան խոսքով: Եվ ճշմարիտ որ, էս պատերազմից հետո չտեսնված թափով ու ծավալով է բարձրանալու խաղաղության հարցը, այլև նրա հետ միասին մի ուրիշ մեծ հարց, քաղաքակիրթ մարդու հարցը, կամ ավելի ճիշտ, մարդու հարցը, որ իր գաղանություններով հարուցանում է լուսավոր գերմանացին ու դարձնում է լուրջ խորհրդածության նյութ աշխարհքի բոլոր ազգերի և բոլոր մտածողների համար:

1916

ԽՈՍՔ՝ ՈՒՂՂՎԱԾ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

Էս տարվա սկզբին մեր անմոռանալի բարեկամն ու ընկերը՝ Վ. Բրյուսովը, երբ Թիֆլիսում մեզ մոտ հյուր էր, գրույցների ժամանակ հայոց բանաստեղծության հանդեպ միշտ կրկնում էր իր անկեղծ հիացումը և զարմանքով ու ցավով հարցնում, թե ի՞նչպես են իրենք մինչև էսօր անծանոթ մնացել մի էս տեսակ հարուստ գրականության ու արվեստի։

Ու մի օր էլ, խնջույքի մեջ, դիմելով նրան, ես էսպես բացատրեցի նրա համար զարմանալի երևույթը, թե ինչպես է եղել, որ իրենք անծանոթ են մնացել մեր բանաստեղծությանը։ Ասի՝ մինչև էսօր Ռուսաստանից մեզ մոտ ոստիկաններ են ուղարկել, թե գնացեք գողեր բռնեցեք ու սրիկաներ։ Նրանք էլ եկել են՝ ավազակներ, գողեր ու սրիկաներ են գտել։ Դատախազներ են ուղարկել, թե մարդասպաններ ու ոճրագործներ երևան հանեցեք ու դատապարտեցեք։ Նրանք էլ եկել են, մարդասպաններ ու ոճրագործներ են գտել։ Ժանդարմներ են ուղարկել, թե արթուն հսկեցեք, հեղափոխականներ գտեք։ Նրանք էլ եկել են՝ հեղափոխականներ են գտել։ Եվ այլն, և այլն։ Ու լուրը գնացել է Ռուսաստան՝ թե Կովկասում ավազակներ կան, գողեր ու սրիկաներ կան, մարդասպաններ, խարեբաներ ու ոճրագործներ կան, հեղափոխականներ կան...

Բայց բանաստեղծներ չեն ուղարկել, թե գնացեք Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն որոնեցեք։ Ահա, առաջին անգամն է ռուս բանաստեղծը գալիս մեզ մոտ հատկապես մեր բանաստեղծության համար։ Առաջին անգամն են ռուս նշանավոր բանաստեղծները մեր բանաստեղծությանը մոտենում — և գըտնում են լի ու լի, և այժմ լուրը կերթա Ռուսաստան, թե Կովկասում կամ հայերի մեջ բանաստեղծություն էլ կա, բանաստեղծներ էլ կան...

Մեր ազնիվ հյուրը պատմում էր, թե առաջին անգամ, երբ նրանց ուշադրությունը խնդրել էին հայոց բանաստեղծության վրա, նրանք ինչ զարմանքով ու անկուրջ էին վերաբերվել էդ առաջարկին, իսկ երբ ծանոթացանք, ասում էր, գրեթե հենց առաջին ծանոթությունից, հենց առաջին դիշերից միանգամից ամենքս հիացանք ու դարձանք հայասեր: Եվ առաջ էր բերում էն տեսակ ականավոր բանաստեղծների կարծիքները, ինչպես Բայլմոնտ, Վ. Իվանով, Բլոկ և այլն: Բայց ամեն թյուրիմացություն փարատելու համար՝ էստեղ պետք է ասեմ, որ միշտ մեր միջնադարյան բանաստեղծությունն է եղած հիացման գլխավոր առարկան:

Էն ժամանակ նրանք էին հիացած, այժմ հերթը մերն է: Ես քննադատելու չեմ «Поэзия Армении» գիրքը: Քննադատներ շատ կան, նրանք կքննադատեն: Ամենաշատը ես ինչ-ինչ նկատողություններ եմ անելու, մեծ մասամբ մեր հին բանաստեղծության մութն ու վիճելի կետերի վրա: Սակայն չեմ կարող իմ բուռն ու անկեղծ հիացումը չհայտնել հրապարակով մեր լավագույն բարեկամների ու ընկերների էն շնորհքի ու սիրո հանդեպ, որ նրանք հանդես են բերում էս գեղեցիկ գործի մեջ, հաճախ անհաղթելի դժվարությունները հաղթահարելով: Մարդիկ կան, որ բանաստեղծների անհաջող գործերն են որոնում ու նրանցով են զբաղվում: Դրանք անգետ ու անճաշակ մարդիկն են, և նույնիսկ վատ հոգու տեր մարդիկը: Թերությունները պետք է նկատել, բայց բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պիտի գնահատել:

Եվ էս ճշմարիտ է ո՛չ միայն ինքնուրույն գործերի համար, այլև թարգմանության: Չէ՛ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՝ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգալ: Ինչքա՜ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ի՜նչքան սեր...

Եվ ի՜նչ խանդքով կազմած ու ճաշակով տպած գիրք է, ինչքան շքեղ իր պարզության մեջ: Դրա համար էլ ամեն մի ձեռքն առնող,— հայ լինի թե օտար,— համակվում է սիրով ու հարգանքով դեպի մեր շատ թշնամի ու քիչ բարեկամ տեսած ցեղը:

Այժմ ամենքի համար պարզ է «Поэзия Армении» գրքի նշանակությունը: Էն ժամանակ Բրյուսովին իրեն էլ էինք ասում:

Եվ բնավ չափազանցություն չէին էն բոլորը, ինչ որ դարձրին բրյուսովյան շաբաթը Թիֆլիզում՝ տոնական շաբաթ։

Եվ ահա էս ամենի համար պարտականություն եմ զգում եղբայրական համբույր ուղարկելու նրանց, Ռուսաստանի լավագույն զավակներին, որ կյանքում լավագույնն են փնտրում, ընտրում ու սիրում։

Վերջապես եկավ վաղուց սպասված գիրքը — Поэзия Армении-ն, Հայաստանի բանաստեղծությունը։ Եվ ռուսներից ու ռուսախոս հայերից նրանք, որ միայն Հայաստանի թշվառությունն էին լսել, կոտորածներն ու սարսափները գիտեին, այժմ կտեսնեն և նրա բանաստեղծությունը ու կսիրեն։ Չեն կարող չսիրել. որովհետև ինքը ամբողջ սեր է. իսկ, մեր անզուգական Սայաթ-Նովայի խոսքով ասենք, «Սերը սեր կու բերե...» և

«Աշուղի լեզուն բլբուլ է,
Օրհնանք ունի, նալաթ չրկա...»[1])

<ՇԵՔՍՊԻՐԻ ՄԱՍԻՆ>

I

Անգլիական ցեղը մեծանում, ցրվում, ծավալվում է ամբողջ աշխարհքովը մին — Եվրոպայից սկսած մինչև Ամերիկա,— Ավստրալիա ու զանազան հեռավոր կղզիներ։ Նա ոչ միայն փաստորեն կտրում է կապը իր մայրենի երկրի հետ, այլև ինքնուրույն իշխանություններ է հաստատում հեռավոր գաղթավայրերում։ Կառլ-<Հյլը> ասում է. Այլևս ոչ մի անգլիական թագավոր չի կարող էդ ցեղի վրա տարածել իր իշխանությունը, և իր գայիսոնի տակ պահպանել նրա ազգային միությունը։ Եվ միմիայն մի թագավոր կա, որ կարող է ու կարողանում է տիրել համատարած անգլիական ցեղին ամեն տեղ ու պահպանել նրա ազգային միությունը, որտեղ էլ որ նրանք լինեն,— դա Շեքսպիրն է։

Այո՛, էսպես է։ Բայց միայն անգլիական ցեղը չի, որ նա կապում է ու համերաշխության մեջ է պահում։ Նա իր ցեղի ոգու ամբողջականությունը պահպանելով հանդերձ, միաժամանակ բոլոր ժողովուրդներն է մերձեցնում՝ ինչպես անգլիական ազգին, էնպես էլ իրար։ Դրա մեջ է կայանում բանաստեղծության և առհասարակ գեղարվեստի աստվածային ուժը. ամեն մեկի բույրն ու հրապույրը պահպանելով հանդերձ, ամենքին բերել ի մի և բազմազանությունից հորինել մի ներդաշնակ ամբողջություն։

Բայց ո՞վ է ինքը, էս կախարդական զորությունների տերը, էս միանգամայն գեղեցիկ և անմերժելի թագավորը իր և մարդկային ցեղի: Մի համեստ ու աղնիվ հին ընտանիքի զավակ, որ իրեն մայրենի Ստրատֆորդ քաղաքում առել է շատ համեստ ուսում տեղական հասարակ ուսումնարանում: 18 տարեկան հասակում ամուսնացել է իրենից մի քանի տարով մեծ մի աղջկա հետ, և ապա թե, ըստ երևույթին, հալածված նաև դժբախտ ամուսնությունից, հեռացել, գնացել է Լոնդոն: Լոնդոնում ծառայել է թատրոնում, ուր ժամանակի ընթացքում դարձել է դերասան և ինքնազարգացմամբ պիեսներ է գրել:

Սակայն միշտ անմահ է մարդկային ամբոխամտությունը, որ աստծու որդիներին հրեղեն կառք[եր]ով ու զորք[եր]ով, շաչյունով ու շառաչյունով է սպասում, մինչդեռ նրանք հաճախ հասարակ փարախներում են ծնվում, [և շատ հաճախ նրանց հովիվների աղքատիկ փալասների մեջ են բարուրում][1]: Եվ թեև Շեքսպիրն ինքն էլ իր «Վենետիկի վաճառականի» մեջ ցույց է տալիս, որ հաճախ ամենապարզ ու անպաճույճ արկղի մեջն է լինում պահված ամենաթանկ գանձը, այսուամենայնիվ, մարդկային ամբոխամտությունը չհաշտվեց, որ Շեքսպիրը մի հասարակ մահկանացու լինի և կամ թե չէ մեծ գիտնականի դիպլոմ չունենա:

Սրանից էլ ծնվեց հռչակավոր Բեկոնական հարցը, թե Շեքսպիրի գործերը Շեքսպիրինը չեն, այլ Բեկոնինը, որ իր ժամանակին մեծ գիտնական էր ու բարձր դիրքի տեր մարդ:

[Սակայն թողնենք դրանց, որ Շեքսպիրին արժանավայել գգեստներ որոնեն, մենք դնանք Շեքսպիրի հետից]:

Բայց չէ որ ամեն մի գրողի գրվածքների մեջ, գոնե մասամբ, ապրում է ինքը, գրողը: Շեքսպիրի սոնետները էս տեսակետից առատ նյութ են պարունակում: Նրանցից մեկի մեջ Շեքսպիրն իր սիրածին — թուխ կնոջը ասում է. «Ո՜հ, եթե խոովում ես, իմ բախտից խոովիր, նա է մեղավորը իմ չարաբաստ, հոռի արարքների, նա, որ ավելի լավ պայմաններ չստեղծեց իմ կյանքի համար՝ քան էս հասարակ միջոցները, որոնք իմ մեջ հասարակ վարք ու

---

[1] [Եվ ահա ցանկացան, որ Շեքսպիրն էլ] [և երբ մարգարեն իջնում է սարից, նա հրճվանքով չոռում է իր անմիտ աչքերը.

— [Դու] տո, դու միթե մեր հարևան Զաքարը չես... դու ի՞նչ ես, որ մարգարե լինես...»:

— Այո, ձեր հարևան Զաքարն եմ: Ինձ համար հանգիստ արածացնում էի իմ հոտը, բայց ես ինչ անեմ, աստված ինձ հայտնեց և ուղարկեց, որ խոսեմ Իսրայելի հետ...»]:

[Ամբոխը չի կարողանում հասկանալ]:

բարքը զարգացրին։ Դրանից էլ իմ անունը արատավորվում է, և ես ներկարարի պես, զբաղված եմ իմ ձեռքով ինքս ինձ [ներկելով][1]։

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շեքսպիրի սիրած թուխ կինը եղ<իսաբեթ> թագուհու նաժիշտներից մեկն է եղած <3 անընթ.>։

Սոնետի մեջ նա գանգատվում է իր դերասանական վիճակից, որ արհամարհված մի վիճակ էր էն ժամանակ, մի խոսքով մի՝ խալխի նյոքար, ինչպես մեր Սայաթ-Ն<ովան> է ասում իրեն համար*, [որ ուրիշներին շատ է ուրախություն տալիս, բայց իրեն համար քիչ ուրախություն կա]։

Մի մարդ, որ ուրիշներին շատ բարձր հաճույքներ է տվել, իսկ ուրիշներն իրեն շատ վիշտ։

Էդպես է արդեն հանճարի ճակատագիրը, որ միշտ բարձր հաճույքներ տա ուրիշներին և սերունդ սերունդ ուրիշներին, անվերջ ուրիշներին... Իսկ ինքը երջանիկ է արդեն նրանով, որ ինչքան էլ տանջվի ու տառապի էս անցավոր կյանքում, իր ամբողջ էությամբ [գիտակցում է, որ] անանցի հետ է կապված, հավերժականի մասն է անմահ։

[Իսկ] թե ի՞նչ բան է ինքը հանճարը ըստ էության, ի՞նչ է Շեքսպիրն ինքը, մենք չենք իմանում, չենք էլ իմանալու, և էսօր դրանով զբաղվելու օրը չի, էսօր եկել ենք միայն երկյուղածությամբ գլուխ խոնարհելու նրա մահկանացու աճյունի [առջև] և նրա միշտ անմահ հոգու առջև, որ անդադար վարում է պատերազմներից ամենից մեծն ու սրբազանը [ահավորը]— անվերջ նվաճելով մարդկային սրտերը — արդարության, գեղեցկության ու ճշմարտության <համար>, անվերջ ընդարձակելով բանաստեղծության [թագ<ավորության>] պայծառ տիրապետության սահմանները՝ [գազանության] հանդեպ <....>

II

Վիլյամ Շեքսպիրը իր ծնողների մեծ տղեն է եղած և կենդանի մնացած զավակներից՝ անդրանիկը, և, անշուշտ, դրա համար էլ առանձին սիրո ու հոգածության առարկա։ Մեծացել է մի ընտանիքում, որ արդար աշխատանքով իր համար նյութական

---

[1] [Էսպես էլ, երբ նայում ենք՝ բոլոր սոնետների մեջ ինչ որ ասում է իր սիրածներին, նույնը ասում է և ամբողջ աշխարհքին]։

* Մի ուրիշ անգամ ցույց եմ տալու, թե ինչքան նման գծեր կան Շեքսպիրի սոնետների ու Սայաթ-Նովայի երգերի մեջ։

բարեկեցություն ու պատվավոր դիրք է ստեղծել Ստրադֆորդ քաղաքում։ Նրա հերը, Ջոն Շեքսպիրը, որ միաժամանակ զբաղվում էր և գյուղատնտեսությամբ և առևտրական գործերով, 1568—1569 թվականը Ստրադֆորդում առաջին դատավորն է եղել։ 1571 թվի սեպտեմբերին նորից ընտրվել է առաջին այլտերմանի [պաշտոնով]։ Մերը, Մերի Արդին Վարվիկի կոմսության տոհմական ազնվական ընտանիքներից մեկի աղջիկն էր։

Շեքսպիրը մեծացել է հասարակ, բավական նախնական պայմաններում։ Հորական տանը որևէ բարձր մտավոր զարգացում նա չի տեսել ու չի առել։ Իրենց քաղաքի հին ... ուսումնարանում ընտելացել է լատինական լեզվին, տրամաբանության ու ճարտասանության տարրական սկզբունքներին, և սրանց նման մի քանի բանի։

Էս շրջանում էլ իր ունեցած տեղեկությունների մեծ մասը նա ձեռք է բերել հետո ինքնազարգացումով։ Եվ հենց իր աշակերտական շրջանում էլ, հիմք կա ենթադրելու, նա շատ բան սովորել էր բնության հետ [շփվելուց] և իրեն շրջապատող Ստրադֆորդի փոքրիկ աշխարհից, քան ուսումնարանում։

Արդյոք էս դժբախտությո՞ւն պետք է համարել, թե չէ։ Կարող ե՞նք ասել, թե նրա զարգացման համար լավ կլիներ, եթե ստացած լիներ կանոնավոր գիտական կրթություն, եթե մանկուց գտնվեր հումանիստ զարգացած մարդկանց շրջանում, եթե պատանեկան հասակից նրա մտավոր շահագրգռությունը ուղղված լիներ դեպի գրականությունը։ Էս հարցերին պատասխանելու համար պետք է փորձենք վերականգնել մեր առջևը Շեքսպիրի հոգևոր պատկերը, էնպես, ինչպես որ նա հանդես է գալիս իր ստեղծագործությունների ուսումնասիրությունից հետո <....>

ԱՆՊԵՏՔՆ ՈՒ ՊԵՏՔԱԿԱՆԸ

Մի երկու երեք ամիս առաջ «Հորիզոնում» մի հոդված գրեցի, թե «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի»։[1]) Նրանից հետո էս առաջարկի վրա մի շարք հոդվածներ դուրս եկան, բայց քանի գնացին՝ խնդիրը ճյուղավորեցին ու հեռացան գրականությունից, վերջը «Ազգային պաշտպանություն» վերնագրի տակ սկսեցին արծարծել ամեն տեսակ հարց ու խնդիր և միայն գրականությունը մնաց դուրս։ Բացառություն կազմեց միայն մեկը, եթե չեմ սխալվում։ Բայց էս մասին հետո։

Այժմ խոսենք հայոց լեզվի մասին։

«Ազգային պաշտպանություն» վերնագիրը կրող հոդվածների մեծ մասը առաջ քաշեց լեզվի շատ կարևոր խնդիրը։ Ընդհանրապես շատ ցավալի ներկայացրին հայոց լեզվի վիճակը, թե գաղութներում և թե նույնիսկ հայրենի գավառներում, պարզեցին դրա պատճառները ու ճարեր առաջարկեցին։

Ես չեմ նկատած հայոց լեզվի վտանգը, այլ ընդհակառակը միշտ տեսել եմ ու այժմ էլ պարզ տեսնում եմ նրա անդադար ծավալումն ու զարգացումը և նրա ապագայի մասին բնավ տարակույս չունեմ, էս բոլոր անհանգստությունները շատ հասկանալով ու սիրելով հանդերձ, ուզում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի շատ հետաքրքրական հանգամանքի վրա։

Շատերը գրեցին, և այժմ էլ շատ ցայտուն կերպով նույն հարցն[է] հարուցանում «Հորիզոնի» № 163-ում Ջավախեցին[2]), թե հայոց լեզուն նրա համար է հայի տանից դուրս վտարվում, որովհետև անպետք է կյանքի մեջ, ապրուստի համար պետք չի գալիս, <հայը> էն լեզուն է սովորում, որը պետք է գալիս։

Ամենից առաջ ասեմ, որ հայոց լեզուն երբեք չի վտարվել հայի տանից և նրանից հետո հանգիստ խոսենք։ Խոսենք՝ գիտեք ինչի՛ մասին,— անպետքի ու պետքականի։

Ա՛յո, սա շատ կարևոր հարց է <....>

1922

<Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ>

Հայաստանի Լուսժողկոմը դեկրետ է հանել՝ փոխելու հայ լեզվի եղած ուղղագրությունը և ընդունելու պ. Մ. Աբեղյանի առաջարկածը։

Ես, որպես հայ գրող և Գրողների Միության նախագահը, գալիս եմ հայտնելու իմ զարմանքը և բողոքելու էն վարմունքի դեմ, որ ունեցել է Հայաստանի Լուսժողկոմը էս կարևոր խնդրում։

Պ. Մ. Աբեղյանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ։ Շատ լավ, բայց Հայաստանի Լուսժողկոմը որտեղի՞ց է իմացել, թե պ. Աբեղյանը և ինքը Լուսժողկոմն էլ նրա հետ միասին անսխալական են, որ առանց քննության ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել և միայն դրանով գրել ու տպագրել։

Եվ ի՞նչ կարծիք ունի Լուսժողկոմը հայ գրողների, հայ բանասերների, մանկավարժների ու հրապարակախոսների վրա։ Նա կարծում է, թե հայոց լեզվի խնդիրներում կարելի է նրանց արհամարհել և միայն հրամանագրել։

Ճշմարիտ, որ շատ է զարմանալի։

Պ. Աբեղյանի առաջարկը ընդունելի է, թե չէ, դա դեռ քննելիք խնդիր է. երբ դա քննելիք խնդիր է, հետևաբար Լուսժողկոմի հրամանը անընդունելի է. և քանի որ էսպես է, նրան մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր արած կարգադրությունը, խնդիրը համարել բաց և դնել քննության։

<ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ> ԼԵՋՎԻ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդին հասած պատմական հարվածներից ամենամեծը թերևս թուրք-թաթարական հարվածն է, որ մի քանի՝ իրար հաջորդող ալիքով եկավ զարկեց, տապալեց ինչպես շատ ուրիշ

ժողովուրդների, ինչպես էլ հայ ժողովրդի կյանքն ու կուլտուրան և նստեց նրա ավերակների վրա։

Դրանք կարելի է մի մեծ օվկիանոսի մակընթացության նմանեցնել, որ Ասիայի անծայր անապատներից հորձանք տվեց, եկավ անդիմադրելի հեղեղեց Հայաստանի բոլոր տափաստաններն ու բերրի հովիտները, շեներն ու քաղաքները, հորձանք տվեց մինչև նույնիսկ բարձր լեռնաստաններն, ուր ապավինած էր սարսափահար ու ջարդված, ջլատված, կտոր-կտոր եղած հայ ժողովուրդը, և ապա նստեց ընդմիշտ մեր աշխարհքում։

Ինչ որ խորտակեց՝ խորտակեց, այնուհետև էլ կենդանի մնացածի վրա ունեցավ մեծ ազդեցություն և տեղ-տեղ շատ, տեղ-տեղ քիչ թաթարացրեց—թուրքացրեց հայ ժողովրդի թե վարքն ու բարքը, սովորությունները, թե տիպը և թե լեզուն։

Դրանից առաջ էլ ազդեցություններ է կրել հայ ժողովուրդը — և Պարսկաստանից, և Հռոմից, և Հունաստանից, և Ասորիքից, և վրացիներից, ամեն մեկը իր երանգն է տվել ու իր բնավորությունը։ Պարսկաստանը շատ բազմակողմանի անշուշտ և հատկապես քաղաքացիական ու քաղաքակրթական շատ գծեր, հասկացողություններ, ոճեր ու խոսքեր. Ասորիքը՝ կրոնական, Հռոմը՝ զինվորական, Հունաստանը՝ գիտական-փիլիսոփայական, և այլն։ Բայց ամենամեծն, ասում եմ, թերևս թուրք-թաթարականն է <....>

Թուրք-թաթարական հարվածը խորտակեց մեր ամբողջությունը, մեր ազգությունը[1] ոչ միայն քաղաքականապես, այլև կուլտուրապես ու բարոյապես։ Իհարկե, դա միանգամից չեղավ, հայ ժողովուրդը միանգամից չընկավ, անկումը տևեց մի քանի ժամանակ, այնուհետև ընկած մնաց երկար ժամանակ, այժմ 19<-րդ> դարից սկսած՝ սկսում է նրա բարձրացումն ու կենդանացումը, նրա ամբողջանալու և առողջանալու, նորից ազգություն դառնալու գործը։

Եվ ահա նա կոչ է անում, կանչում է իր տարադիր պանդխտ մասերը հեռու աշխարհքներից, նորից հարուցանում է իր լեզվի, իր ինքնուրույն կուլտուրայի, իր սեփական գրականության ու դեղարվեստի հարցը, ուսումնասիր<ում է> իր ճարտարապետության նմուշները, հավաքում է իր ժողովրդ<ական>[2] երաժշտությունն ու երգերը, ժողովրդական բանահյուսության մնացորդները, մանրանկարչության մնացորդները, և լեզվի ցրված գանձերն

---

1 Ազգայնությունը։

2 [ազգային]։

է հավաքում, բարբառներն է ի մի բերում, և աշխատում է նորից մի կենդանի և ուժեղ լեզու ստեղծի։

Եվ, իհարկե, ինչպես շատ ուրիշ ազդեցություններից չի ազատվելու, էնպես էլ լեզվի խնդրում, նա ոչ կարող է և ոչ էլ պետք է իրենից թոթափի ժամանակի ընթացքում եղած զանազան ազդեցությունները, որոնցից շատերն արդեն հարազատացել են, որդեգրված են միանգամ ընդմիշտ։ Այլ հավաքելով թե հինը, թե նորը՝ էդ ամենից պետք է ստեղծի մի ուժեղ ու կենդանի լեզու, ազգային լեզուն, գրական լեզու։ Մարդիկ կան, որ կարծում են՝ մենք արդեն գրական լեզուն ունենք. ոչ, նրանք շատ են սխալվում. էս լեզուն հայ ազգի լեզուն չի և չի կարող լինել։ Էս մի խեղճ ու կրակ, սուտ ու սխալ իրար կցած բառերի մի ողորմելի շարան է, մի տերողորմիա, ուլունքի շարան, որ դժբ<ախտ> հանդ<ամանքների> բերմունքով [1 անընթ.] հայոց ազգի վզին են փաթաթել մի շարք հայերեն չիմացող մարդիկ։

Նոր ենք հավաքում մեր լեզվի տարրերը, մեր բարբառները, մեր ոճերը, լեզվական գանձերը. դեռ չենք գտել մեր շեշտը, մեր համաձայնությունը, նոր ենք հավաքում մեր ժող<ովրդական> երգերն ու եղանակները, նոր ենք հավաքում մեր ազգագրական նյութերը, առանց որի գրականություն չկա ինքնուրույն. նոր ենք հավաքում մեր նկարչության ու մանրանկարչության մնացորդները, մեր ճարտարապետության ձևերը, որ ջարդված ու ցրված են եղել, աղճատված ու խառնված են եղել, ինչպես և մենք ինքներս, որ ջարդված ու ցրված ենք եղել, և մենք ինքներս էլ նոր ենք հավաքվում ու նոր ենք ազգ դառնում վերստին, որովհետև մի ամբողջական ազգ չէինք վաղուց ի վեր <....>

Էդպես էլ գրական լեզու չունենք ընդհանուր, որովհետև էն խեղճ ու կրակ, աղքատ ու աղճատ բառերի շարանը, որ այժմ կա մեջտեղը — մեր հրապարակի և հրապարակախոսության լեզուն դեռ մեր գրական լեզուն չի, և մեր գրական լեզուն տակավին գտնվում է իր կազմակերպության շրջանի մեջ։

Եվ էսպես՝ մի ընդհանուր ներդաշնակություն կա ամեն բանի մեջ. ինչպես դեռ ազգ չենք կազմակերպված, չունենք ազգային երաժշտություն, ազգային գեղարվեստ, տարազ և այլն, էնպես էլ չունենք լեզու։

Նոր է հավաքվում ու վերաշինվում ամեն բան։ Վերաշինվում <է> և լեզուն. և ահա պ. Աճառ<յանի> հայ գավառ<ական> բառարանը[1]) առաջին լուրջ գործերից մինն է մեր լեզվի ուսումնասի<րության>, մեր լեզվական գանձերի — բառերի ու ոճերի անբարումի։

<....>[1] ինչպես սրանց, էնպես էլ տաճկահայ մասի — պոլսական գրականության ու մամուլի լեզուն — միանգամայն ենթարկված էր օտար լեզուների ազդեցությանը՝ ռուսական, գերմանական ու ֆրանսիական գլխավորապես։

Մայր երկիրը, բնիկ ժողովուրդը լողում էր կոտորածների ու արցունքի մեջ, տարտըբերվում ու տառապում էր հայկական հարցի ալեկոծությունների մեջ, և ոչ ժամանակ ուներ, ոչ էլ հնարավորություն՝ գրականությունով ու գպրոցի գործով զբաղվելու և մեջտեղ բերելու իր լեզուն՝ իր բոլոր ճոխ գանձերով ու առողջ գեղեցկությունով։

Նա մի քանի տաղաչյալներ դուրս ուղարկեց միայն, որոնք անկարող էին սակայն կատարելու էն, ինչ որ պետք է և կարող է կատարել ինքը, ժողովրդի ամբողջությունը։

Իսկ ժողովուրդը չէր կարող երևալ, մինչև չազատվեր «հայկական սարսափներից» — պարբերական կոտորածներից ու թուրքական խավարից։

Վերջը էնպես դուրս եկավ, որ հայերեն չիմացողները պետք է հայ ժողովրդին հայերեն սովորեցնեին և մշակեին նրա գրական լեզուն։ Էնպես մի ծիծաղելի ու հիվանդ երևույթ, ինչպես նկատել է մեր տաղանդ<ավոր> երգիծաբան Պարոնյանը Արծրունու կենսագրության մեջ («Ազգ<ային> ջոջեր»)։ Ասում է՝ երբ գրաքննիչը հարցրեց, թե՝ բայց դուք հայերեն գիտե՞ք, պ. Արծրունի, որ լրագիր եք ուզում հրատարակել, Արծրունին պատասխանեց, թե՝ ես չգիտեմ, բայց ընթերցողներս լավ գիտեն։

Եվ ի՞նչ դուրս եկավ վերջ ի վերջո։ Էն, որ ամեն մի գյուղացի խոսել, արտահայտվել գիտի, բայց հայ ինտելիգենտը, նույնիսկ հայ գրողն ու հրապարակախոսը չեն կարողանում իրենց միտքը պարզ ու կանոնավոր հայտնեն։

— Ինչո՞ւ։

Որովհետև բերաններումը լեզու չկա։ Երեխան դպրոց մտնելիս կարգին խոսում է իր մայրենի բարբառով, որովհետև էդ բարբառը կենդանի ու հյութալի մի լեզու է, հոգի է, շունչ է, իսկ դպրոցըն ավարտելուց հետո չի կարողանում մի քանի նախադասություն իրար անի։ Որովհետև իր մայրենի բարբառը խլել են ու տեղը տրվել մի քաոս, չոր բառերի անկարգ ու մեռած մի շարան, որ բնավ կենդանի մտքի արտահայտություն չեն կարող դառնալ։

---

[1] Սկզբից պակասում է մի էջ։

<....> Պահպան<ողական>-հետամնաց ավանդությունը մեծ տեղ է բռնում լեզվի խնդրի մեջ: Սկիզբը դրվեց հին լեզվի վրա, խալիֆաների ձեռքով, սաղմոսով ու ժամագրքով: Այնուհետև էլ, բնիկ երկրի ժողովրդի դժբախտության պատճառով — լուսավորության, դպրոցի, գրականության և մամուլի գործը ձեռք առան դաղութները, որոնք կտրված էին հայրենի հողից ու լեզվի աղբյուրից, և դեր խաղացին մարդիկ, որոնք հայերեն չգիտեին — Ստ<եփանոս> Նազարյան, Միք<այել> Նալբանդյան, Գր<իգոր> Արծրունի:

Եվ էս մարդիկ, որոնք միանգամայն անտեղյակ էին թե հայ լեզվին, թե հայ կյանքին, որոնց վիճակվել էր, սակայն, թե հայի վիճակը տնօրինել և թե նրա գրական լեզուն հորինել՝ գործի կացան:

Գիտեին, որ օտար երկիրներում ձգտում կա և շարժում դեպի կենդանի, ժողովրդի լեզուն, իրենք էլ խոսեցին էդ սկզբունքներից, բայց որովհետև էդ լեզուն չգիտեին, դրան փոխարինեցին իրենց չգիտեցած հայերենը, ու սկսեցին լեզու շինել հեռու և՛ հայ ժողովրդից, և՛ նրա լեզվից: Ճիշտ էն մարդու նման, որ ճոխ բուրաստանի շեմքին նստած՝ մեջքն արած նրա միջի հազարգունի ու բուրավետ ծաղիկներին՝ գույնզգույն թղթից ծաղիկներ է շինում, որ վաճառի մարդկանց: Կամ էն երեխաների նման, որ տոնածառ են խաղում: Մեծ անտառից մի եղևնու ճյուղ է ընկել ձեռքները, շրջապատել են ու զանազան զարդարանքներով ծանրաբեռնում են: Սակայն նա արդեն մեռած մի ճյուղ է, ոչ թե կենդանի ծառ, և չի ապրելու և զարդարանքներն էլ ոչ մի կապ չունեն իրեն հետ:

Դժբախտաբար մերոնց «յոլկի» խաղը և թղթի ծաղիկներ շինելու ձանձրալի գործը բավական երկար տևեց: [Այժմ] ժամանակն է, որ ծերունի հայ ժողովուրդը գա Վանից ու Երևանից, Լոռուց ու Ղարաբաղից, Շիրակից ու Ալաշկերտի հովիտից, Մուշից ու Սասունից, բռնի սրանց ձեռքից ու տոնածառի ճյուղի առջևից տանի, կենդանի մեծ անտառը մտցնի, թղթե ծաղիկների կողովի կողքից՝ հարուստ բուրաստանը տանի <....>

Մեր լեզվի գործով զբաղվողներից շատերը — Նազարյան, Արծրունի և այլն հայոց լեզվի ուսումնության հետ միաժամանակ ունեին եվրոպական, հատկապես գերմանականի համառությունը. իսկ հայոց լեզվից միայն խալիֆաների տված գրաբառից, միանգամայն հեռու, խորթ ու օտար ժող<ովրդական> կենդանի բարբառի շարադրության ու ձևերին:

Լեզու չէր կարող ստեղծվել, մանավանդ կար և էն էական ձախորդ հանգամանքը, որ ինչպես ազգի դրսից կուվելով էր մտնում Հայաստան, էնպես էլ նրա լուսավորությունը դրսից էր սկսած ու հետու, կարված իր լեզվի հարստության աղբյուրից, ակնից—Մոսկվա, Թիֆլիզ, Պոլիս և այլն։

Մի որևէ լեզվի բարբառները կազմվում են երկու ուղղությամբ — հորիզոնական ուղղությամբ, որ է՝ աշխարհագրական, տարածական իմաստով, ինչպես առանձին-առանձին տեղերի բարբառներ, և ուղղահայաց, իբրև շերտավորումն կամ ծալքատումն, որ է՝ զանազան կերպարանափոխությունները, ձևակերպումները միևնույն տեղական բարբառի իբրև հետևանք դասակարգային, արհեստների, պարապմունքների, կյանքի ձևի և այլն*։

Բառերն ու ոճերը, մեծ մասամբ եթե նշանակված են էս կամ էն գավառի անունով՝ էդ չի նշանակիլ թե միայն էն գավառինն ևն, այլ թե էն գավառումն է լսել պ<արոն> Աճառյանը կամ ստացել։

Բառերն ու ոճերը ընդհանուր են, և հայոց բարբառների մեջ մտնողը կզարմանա ներքին միությունից ու նմանությունից արտաքին տարբերության հետ միասին։

[Սովորաբար] մեզանում շատերը էնպես են մտածում, թե մեր գավառաբարբառները տարբեր [լեզուներ] են, գրական լեզուն է, որ պետք է մի լեզու ստեղծելու։ Սա մի սխալ է։ Եթե զարտուղի, առանձին բարբառներ կան, դրանք ռուսահայ և պոլսահայ գրական լեզուներն են իրենց խորթ կամ խառը համաձայնությունով։ Իսկ հայոց բոլոր բարբառները մի լեզու են, նույն համաձայնությունն ունեն և նույն ոճերը, արտաքին մի քանի հնչյունների ու ձևերի տարբերություններով։

Մեր լեզվի ստուգաբանության համար մեծապես շահավետ էր լինելու էն ժողովրդների լեզուների ուսումնասիրությունը, որոնք երբևէ որևէ ազդեցություն են ունեցել մեզ վրա։ Իմ ձեռքի տակ միայն արևելյան մի քանի բառարաններ կան և ես հմուտ չեմ լե-

---

* 541, Энциклопедия², Լեզվի արտաքին և ներքին պատմությունը, Լեզվական ընտանիքները։

զուներին, դրա համար էլ իմ արածը միայն մի շատ չնչին մասն է և գլխ<ավորապես> արևելյան։

Ինչ որ մի ընդհանուր աղբյուր ու արմատ չունի — շատ ավելի հեշտ կարող է թուրքական ազդեցություն լինել, քան հակառակը։ Դժվար է ենթադրել, թե հայը կարողանար ազդած լինել Ալթայի թուրք ժող<ովրդի> վրա։

Քաղաքակրթությունը լեզուները — բարբառները միացնում է։

Երբ ցրված է մի ժողովուրդ, հեշտ է ենթարկվում հարևան ուժեղ թե տկար օտարների ազդեցությանը։ Ստեղծվում է զանազան բարբառներ, զանազան տեղերում։

Ազգի ցրվելը, ցրիվ լինելը՝ գլխավոր պատճառը լեզվի խառնակ դրության։

Գիտությունն ու կրոնը լատիներեն էին խոսում մինչև XIV դ<արը>, միայն բանաստ<եղծությունն էր>, որ խոսում էր իր ժող<ովրդի> լեզվով։

Անգլ<երեն> 110.

Ոչ թե էն ճամփով պետք է գարգանա լեզուն, որ մի ազգ մյուսից որքան կարելի է ավելի հեռանա ու անջատվի, այլ ընդհակառակը, ավելի մոտենա ու <....>

Լեզվի մեջ ապրում է մի ժող<ովրդի> պատմությունը, և արևելքի մեծ ազդեցությունը լեզվի խնդրում մերժելու դուք ոչ մի հնար չունեք։

[Փոխառությունները և փոխազդեցությո՞ւն<ները>]

Հունականից — փիլիսոփայական, գրական, գեղարվեստական:

Հռոմեական — զինվորական, իրավաբանական:

Ասորական ու հրեական — կրոնական, բարոյական:

Արաբականից — բժշկական, տիեզերագիտական:

Թուրք-թաթարականից — անասնապահական, խաշնարածական

Պարսկականից — շատ ավելի բազմակողմանի<....>

Փոխառությունները և փոխազդեցությունները հարևան ազգերից, այլև էն ազգերից, որոնց հետ որևէ հարաբերություն ունի— սովորական վիճակն է ամեն լեզվի: Բայց դեպքեր են լինում, որ հանկարծական կերպով մի լեզուն ենթարկվում է մի ուրիշ լեզվի մասսայական հարձակման, ներխուժումի: Էդ էն ժամանակները հատկապես, երբ ինքը ազգն է ենթարկվում մի այլ ազգի հզոր հարձակման ու տիրապետության և նվաճվում է: Էդպես է պատահել մեզ հետ, ինձ թվում է մի քանի անգամ, բայց մանավանդ մի անգամ, երբ թուրք-թաթարական ցեղերը հորդեցին դեպի արևմուտք և մեր երկիրը հեղեղեցին ու նստեցին մեր կուլտուրայի ավերակների վրա, դրա հետ միասին և մեր լեզվի: Էդ ազդեցությունը առհասարակ վաղուց <էր> եղած, բայց մի անգամ մեծ չափով:

Էս արդեն ոչ թե փոխառություն էր կանոնավոր ու կամավոր, այլ հեղեղում:

Հայոց լեզուն որդեգրել է շատ բան, [1 անընթ.] ընդունել, յուրացրել ու մարսել: Արդեն դարձել են միս ու արյուն:

Լեզվի թե ստուգաբանությունը (բառերի կազմությունն ու փոփոխությունները) [և] թե համաձայնությունը (բառերի ու նախադասությունների հարաբերությունը) անկարելի բան է, որ մաքուր ու անաղարտ լինեն մի որևէ ժողովրդի մեջ: Լեզվի մեջ միշտ մնում են զանազան քարացած ձևեր, իր զարգացման, կյանքի ընթացքում որևէ շրջանից մնացած, այլև հազար ու մի փոխառություններ, ազդեցություններ, լեզվական հիվանդություններ և նույնիսկ հասարակ սխալներ:

Բայց սրա հետ միասին ամեն մի լեզու ունի իր ընդհանուր օրենքը, շարադասությունն ու բնավորությունը, իր շեշտն ու ոգին:

Ազդեցություն — հորիզոնական (աշխարհագրական — տարածական) և ուղղահայաց կամ շերտավոր (նույն տեղի դասերի արվեստի, արհեստի կամ ժամանակների հետքերը)։

Նախնական մարդու կարծիքով, խոսքը իր նշանակած առարկայի հետ խորհրդավոր կապ ուներ։ Խոսքն արտասանել՝ կնշանակեր առարկան շոշափել։ Խոսքով ցանկանալուն՝ օրհնանք թե անեծք, պետք է հետևեր գործողությունը։ Եվ շատ խոսքեր, որ այժմ մերկ, դատարկ խոսքեր են մեզ համար — մի ժամանակ ահռելի բնավորություն ունեին։

Սակայն մերկ խոսքը բարձր կուլտուրայի պարզաբանություն է. նախնական մարդը չէր կարող մերկ խոսքով բավական<ան>ալ։ Եվ ահա նա խոսքերի, այսինքն խորհրդավոր ուժերի հետ գործ ունենալիս գործ էր ածում և համապատասխան շարժումներ ու գործողություններ։

Եվ այժմ էն զանազանությունը, որ մեզ համար գոյություն ունի բանաստեղծության ու պրոզայի մեջ՝ նրա համար չկար։ Նա երգելով ու շեշտով, ռիթմով էր խոսում միշտ և ժեստերով։ [Երգելով կարդալը հատուկ է և հիվանդներից ոմանց — հոգեկան — և անգրագետներին]։ Ամեն ժող<ովրդի> բարբառն ավելի է մելոդիկ, քան գրական լեզուն։ Հին և նախնական լեզուներն ավելի են մելոդիկ։ Էդ մելոդիան չքացել է արդեն անգլիական և գերմանական տարածված լեզուներից։

Ինչպես մի ժամանակ իտալական օպերաներից եղանակներ էին առնում ու դնում փոխադրած կամ առանձին թարգմանած ոտանավորների վրա ու հռչակում հայոց ազգային երգեր, և մենք կարծում էինք թե «Մեղնից առաջը»[3]) կամ «Մեր հայրենիքը»[4]) «Կապույտ երկնքումը»[5]) և այլն հայկական երգեր են, [ու շատ հիասթափվեցինք], երբ իմացանք օտար են։

Եվ ինչպես նրանից հետո այժմ փորձ են անում հավաքելու հայոց ազգային ժող<ովրդական> երգերն ու եղանակները և նրանցից կազմել ազգային երգ ու երաժշտություն, էնպես էլ լեզվի գործին հասատատ ազգային դրոշմ [ու հիմք] տալու համար, պետք է հիմնվել ժողովրդի կենդանի լեզվի, նրա ոգու ու օրենքների վրա։

Այո, ավանդությունը, [1 անընթ.] շատ մեծ տեղ է բռնում լեզվի գործի մեջ, եթե մարդիկ, որ սկսել են իրենց գրական լեզուն սաղմոսի վրա կամ խառը, եթե մինն ու մինը սովորեցին — փոխանակ [ասելու՝ ես այլ եկա, դու այլ, նա էլ, ասեն ես էլ—դու էլ էլ նույն մարդկանց խորթ է գալիս, երբ այս<ի> փոխ<արեն> էս են ասում: Եվ էսպես շատ բաներ]:

Ասում են գեղեցիկ, աղնիվ լեզու պետք է լինի ինտել<իգենցիայի> լեզուն, գրականության լեզուն:

Բայց ո՞րն է աղնիվը:

Ահա մի հիմնական խնդիր: Դուք կարող էք աղնիվ ու գեղեցիկ անվանել ձեր մեջքի չափազանց բարակությունը և էդ գեղեցկության համար միշտ տառապել ձեր չոր կորսետների մեջ սեղմված, գեղեցիկ ու աղնիվ համարել ձեր բարձր կրունկներն ու դողդողալ նրա վրա, գեղեցիկ ու աղնիվ համարել ձեր խեղդուկ ու փակ սալոնները, ձեր դեմքի դալկությունն ու արհնպակասությունը, ձեր շինծու լեզուն, որ լեզու է կոչվում միայն էն պատճառով, որ բառեր ունի իր մեջ, այսինքն ամենաքիչը ինչ որ կարող է ունենալ լեզուն և բառերի մի շարան է, մի տեր ողորմյա, ու էն էլ հաճախ սուտ ու սխալ բառերի:

Բայց աղնիվն ու գեղեցիկը ընդարձակ տարածություն է, աղնիվն ու գեղեցիկը ազատ, մաքուր օդն է, աղնիվն ու գեղեցիկը առողջությունն է, կայտառ, էլաստիկ ու պլաստիկ ձևերն են, ազատ զարգացած մարմինն է, աղնիվն ու գեղեցիկը կենդ<անի> ժողովրդ<ի> կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր ու [տրամադրություն], շունչ է ու զգացմունք:

Հայոց լեզուն Սասունցի Դավթի հոր զենքն ու զրահն է, որ աչքից գցել ու անդուկում փակել է անշնորհք, թշվառական հորեղբայրը: Սասունցի Դավթի հոր նժույգն է, որ առանց խնամքի փակել է կեղտոտ ախոռում հավերի թառի տակ, մինչև էդ զենքն ու զրահով չզինավառվի հայ ժողովուրդը, մինչև էդ նժույգը չհեծնի — կմնա սրա նրա դառնը խեղճ ծառա:

---

1. Զանազան հարվածներ և նրանց հետևանքները նաև իրրև ազդեցություններ լեզվական ու խառնուրդներ: (Արևելյան և արևմտյան — Մասիս և Արարատ — ուրարտական և իրանական):

2. Վերածնունդ — հավաքել ունեցածը և ազգայնանալ: Դրա երևույթները:

3. Լեզվի կարևորությունը, հարստությունը, ազգային կենդանի լեզվի բառարանի կարևորությունը: Բարբառների ուսումնասիրությունը և լեզվական գանձերի հավաքումը:

Առաջին լուրջ փորձերը —

Ա. Ամատունու «Բառ ու բանը[6]) և

Բ. Աճառյանի «Գավառական բառարանը»

Խոսքի քերականական ձևը մտքի մեջ գալիս է անգիտակցորեն, ինքնաբերաբար: Բայց էդ էն լեզուն է, որին մանկուց ենք ընտելացած, որով հեշտ ու անաշխատ ենք մտածում, առանց աշխատելու գտնել էս կամ էն խոսքը, էս կամ էն ձևը: Դա մայրենի լեզուն է, ազգային ժողովրդակցության (общения), լուռ մտածմունքի և երազի լեզուն է: Էս տեսակ ինքնաբերաբար գործող լեզվով մտածելով, մարդ չի վատնում իր ուղեղայ<ի>ն ուժը ոչ շրթնային շարժումների, ոչ ձայնական ձևի վրա, և որ ամենակարևորն է, ոչ էլ խոսքի քերականական ձևի վրա: Ամենավատ դեպքում, եթե կորցնում էլ է, կորցնում է ամենաքիչ չափով:

Լեզուների պատմությունը՝ թե նրանց արտաքին, ձայնական (фонет<ический>) կողմից ուսումնասիրելով, թե ներքին՝ համաձայնության (синтаксическ<ой>) կողմից, մենք հասնում ենք հետևյալ հիմնական դրույթյանը (որ լեզվի և մտածողության հոգեբանության ուսումնասիրության համար ահագին կարևորություն ունի):

Լեզուների զարգացման և մտքի ընդհանուր զարգացման հետ, որ էնքան սերտ կապ ունի լեզվի կատարելագործության հետ, բառերի, խոսքերի արտաքին, ձայնական ձև, կազմը (այսինքն նրանց շրթնային գործողությունները և ձայնական ներգործությունները, տպավորությունը — эффект) պարզանում է, упрощается: Սրան հակառակ համաձայնության կողմը (синтаксическ<ой> стороны) և նրա հետ սերտ կապված մորֆոլոգիական (ձևախոսական, ձևաբանական, կերպարանաբանական) կարգերը, դասավորությունները, տեսակները — բարդանում են ու ճոխանում են:

էս ֆորմուլայի հոգեբանական միտքը հետևյալն է։

Շրթնային (գործողության) (артик<уляция>) և հնչական, ձայնական էֆեկտները ըստ էության չեն կարող հեռու մնալ գիտակցության շեմքից։ Նրանք շատ հեշտ են անցնում գիտակցության մեջ և նշուլում, փայլփլում են էնտեղ, մանավանդ ձայնական տպավորությունները։ Շրթնաշարժությունը (арт<икуляция>) մշտական, ինքնաշարժ ուղեկիցն է քերականական մտքի և, ինչպես օրգանների, գործարանների աշխատանք, թեկուզ և շատ աննշան, այսուամենայնիվ ուժ է ծախսում, վատնում։

Հետևաբար՝ հասկանալի է, որ, ուժի խնայողության համար, բառերի ձայնական կազմը պետք է պարզանա, ինչքան կարելի է կարճանա, որ, գիտակցության մեջ ցոլալով (мелькая), էնտեղ շատ երկար բարձր չհնչի։ Շրթաշարժն էլ (арт<икуляция>), սրան համապատասխան, և ինքըստինքյան որպես ֆիզիոլոգիական աշխատանք, պետք է զարգանա նույն ուղղությամբ՝ այսինքն պարզանա ու հեշտացնի էդ աշխատանքը։

Էստեղից է էն հանրածանոթ երևույթը, որ հին լեզուների արտաքին ձևերի ձայնական բարդությունները, ճոխությունն ու լիությունը անցնում է և նոր լեզուների մեջ դառնում սակավաթիվ, կարճ ու պարզ։

Եվ սրանից էլ, էս պատճառով էլ նոր լեզուները ձգտում են հեռացնել, ձգել հոլովային և ուրիշ վերջավորությունները։

Յապոնական գրակ<ան> լեզուն,— էջ 202, 203[7]) և այլն։

Կանդակուսիա — յապ<ոնական> գրողներն ու գիտնականները, որոնք սովորում ու տարածում են չինական գիտությունը։

Հին յապոնական լեզուն ավելի աղքատ էր գիտության, պետության ու նոր գաղափարների համար։ Ինչպես Եվրոպայում օգտվել են հունական ու լատինական լեզվից ու տերմիններից, էնպես էլ կանդակուսիան չինականի և հարստացրել է յապոնական լեզուն։ Խակուսիկի և Կյուսոյի նման գրողները ոչ միայն էսպեսով յապոնական բառարանը հարստացրին, այլև պարզացրին լեզուն և ուղղեցին (շիտակ), որ հին ճոռոմ լեզվին անծանոթ էր։ Իսկ Մակուրա կոտոբա և ինկարի կոտոբա և նման դատարկ ավելորդաբանությունները ոճը արհամարհեցին։

(Ապա գալիս է ժողովրդականը — 203)։

Лансон. *I*, էջ 517[8])

Զգտումն պարզացնել ու կատարելագործել ֆրանս<երեն> լեզուն։

Նաև ուղղագրությունը։

Ֆրանս<ական> Ակադեմիան և նրա բառարանը։

Վոժլան գիտեր, որ ամեն կենդանի լեզու շարունակ փոխվում է. բայց լեզվի ընթացքը կանգնեցնել չմտածելով հանդերձ՝ ուզում էր կանոնավորել, և դարձնել անփոփոխելի ոչ թե բազմազանությունը նրա ձևերի, այլ նրա զարգացման օրենքը և նրան ընդհանուր գծերով։

Ակադ<եմիական> բառարանը Ռասինին բավական էր, բայց Մոլիերի և Լաֆոնտենի համար աղքատ էր, որոնց պետք էին պատկերավոր ոճեր ու ավելի բնական զգացումներն արտահայտող լեզու։

Թեև արդեն Ակադեմիական բառարանը որոշել էր ֆրանս<երեն> լեզվի սահմանները, բայց Մոլիերն ու Լաֆոնտենը չկարողացան սեղմվել նրա սահմաններում և ժողովրդից առան կենդանի, պատկերավոր, հյութեղ շատ ոճեր, բառեր ու ձևեր։

Ист<ория> русской лит<ературы>, *I*, էջ 282։[9])

Պուշկինը նկատում է, որ ռուսերեն լեզուն չկա և գրական. չկա, ռուսաց գիտություն չկա։) Ասում է ֆրանս<երեն> լեզուն ավելի մոտ է ինձ։

Ասում է, 383։[10])

Հասարակ ժողովրդի խոսակցական լեզուն (որ, փառք աստուծո, չի փչացնում իր լեզուն օտար և հատկ<ապես> ֆրանս<երեն> կարդալով) արժանի է խորագույն ուսումնասիրության։ Չէ՞ որ Ալֆիերին իտալական լեզուն ուսումնասիրեց ֆլորենտինական բազարում։ Վատ չէր լինիլ, որ մենք էլ մե-մեն ականջ դնենք Մոսկվայի նշխարաթուխներին (просвирня), նրանք խոսում են զարմանալի պարզ ու մաքուր լեզվով։

Պուշկինը չէր քաշվում ոչ հին ձևերից, ոչ նորախոսություններից և ոչ փոխառություններից։ 387[11]) <...>

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1909

ՀՈՌ<ԵԼՅԱՆՆԵՐԻ> ԴԵՄ

«Մշակը» մի ոճ ունի. ասում է «չկարծեք մենք դեմ ենք Մ<եսրոպ> եպ<իսկոպոսի> ձեռնադրությանը կամ ընտրությանը, — ո՛չ, այլ դեմ ենք էդ տեսակ ընտրությանը». հիմի հոբել<յանի> մասին գրելիս՝ ես ուզում եմ նույն ոճով սկսել. չլինի կարծեք թե ես Քալանթարի հոբել<յանի> դեմ եմ — ո՛չ, այլ էդ տեսակ հոբելյանների դեմ եմ ուզում խոսել առհասարակ։

Գրող, դերասան, գյուղատնտես, հոգևորական — ինչու ոչ և՛ ինժեներ, և՛ փաստաբան, և՛ ման<ավանդ> ուսուցիչ, և՛ հոգաբարձու, և՛ վաճառական...

Եթե կուզեք ասեմ, այո՛, ամենքն էլ։ Ամենքն էլ, բայց իրենց տանը, իրենց շրջանում, իրենց արհեստակիցների, ծանոթների, բարեկամների շրջանում, ոչ թե դուրս բերել ամբողջ ազգի կամ աշխարհքի առաջ ու դարձնել վեճի առարկա։

Ազգովին հոբելյան ես հասկանում եմ, երբ տոնում են մեկի հոբելյանը, որին պսակելիս՝ ամբողջ ազգը կարող է ասել, թե քեզ պսակելով միևնույն է՝ թե ինձ եմ պսակում։ Որ դուրս է եկել ու վեր է բարձրացել իր ժողովրդի մակերևույթից էնքան, որ գլուխը երևում է ամեն երկրից և հարգանք ու հիացում է ազդել ամեն տեղ։

Ես հասկանում եմ, երբ ռուս ազգը ուզում է տոնել իր Տոլստոյին, բայց ի՞նչ դուրս կգար, եթե նա հերթով սկսեր իր գրողներին, խմբագիրներին, ուսուցիչներին, գյուղատնտեսներին, ինժեներներին, փաստաբաններին, և հերթ ու հնար կլիներ մինչե...

Տիգր<ան> Նազարյանն էլ ասում է՝ մի գյուղ հիմնենք — անվանենք Քալանթարապատ...[1])

Տեր աստված... դիտեք, շատ եղավ, և արդեն էլ մարդ չի կարողանում ծիծաղի <....>

ՄԵԾ ՅՈՎԸ

Անցյալները խոսեցինք էն մասին, թե մեր հարևան ժողովուրդները մեզ չեն ճանաչում, մենք էլ նրանց, ու հաճախ ընկնում ենք ցավալի թյուրիմացությունների մեջ («Հորիզոն», № 40):[1]

Բայց կա ցավի ավելի մեծը, ավելի ամոթալի մի դրություն: Մենք մեզ էլ չենք ճանաչում:

Երկիր ունենք — չենք ճանաչում, պատմություն ունենք — չենք ճանաչում, ժողովուրդ ունենք — չենք ճանաչում, դրականություն ունենք — չենք ճանաչում, լեզու ունենք — չենք իմանում:

Մտածում ենք. ի՞նչ մեծ պակասություն է դատարկ աշխարհագրական էն տգիտությունը, որ մեր երկիրը չգիտենք: Չենք հասկանում, թե չգիտենալով ինչքան բան չգիտենք: Չէ՛ երկիրն է իր առանձնահատկություններով, որ պայմանավորում է ու բացատրում և՛ պատմություն, և՛ դրականություն, և՛ գեղարվեստ, և՛ տնտեսական վիճակ, և՛ մարդկային հայտնի տիպ ու հոգի: Նա է որոշում ազգերի ճակատագիրը. առանց նրա բնավորությունը հասկանալու, ո՛չ կարող ես անցյալդ ըմբռնել, ո՛չ ներկադ հասկանալ, ո՛չ ապագադ տնօրինել:

Պատմություն ունենք — տգետ ենք: Եվ դժբախտաբար դեռ մի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք ունենք: Նախնական մշուշի մեջ թաղված դարերի մասին չեմ ասում, այլ էն ժամանակների ու անցքերի, որոնց վրա ընկնում է ճշմարիտ պատմության լույսը: Չգիտենք: Չգիտենք մենք ի՛նչ ենք եղել, ի՛նչ ենք արել, ինչո՛ւ և ինչպես, ի՛նչ օրով, ի՛նչ ճանապարով ենք էստեղ հասել:

Եվ ի՛նչ զարմանք, որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղին վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից: Կամ թե չէ կընկնի մյուս ծայրը, իր ցեղը կհամարի աստծո ընտրյալ ժողովուրդը, «12 խաչապաշտի, եթմիշլիքի միլլեթի գլուխը», և կույր ազգասիրական տենչով բռնված չեղած մեծություններ ու փառքեր կզառանցի՝ հասկացողություններ, ժամանակներ ու դեպքեր իրար խառնելով, մի վիճակ, որ հաջող քաղցկով ծաղրել է հանգ. Ռ. Պատկանյանը, թեև ինքն էլ ազատ չէր էդ պակասությունից.

«Հայկ ու Նապոլեոն մի գրոշի համար
Սաստիկ թունդ խոսքեր ասացին իրար.
Հայկն ուներ հրացան, Նապոլեոնն աղեղ.
— Ո՞վ հաղթեց.— անշուշտ մեր Հայկը ահեղ»։[2])

Հիմի ժողովրդից հարցրեք։ Մինը երդում է, թե նահապետական պարզ ժողովուրդ է, մյուսը հայհոյում է, թե փչացած խալխ է, մինը հավատացնում է թե ազատամիտ մշակական է ու ամեն հարցում իրեն հետ է համաձայն, մյուսը պնդում է, թե տիրացու ազգ է, եկեղեցուց ու հոգևորականից դուրս ոչինչ չի հարգում, այնինչ երրորդը ասում է՝ սոցիալիստ է...

Եվ մինչև էսօր չիմացանք ու չգիտենք, թե ի՛նչ բան է էդ խորհրդավոր սֆինքսը, որ ախուր նստած է Ուրարտուի հին արձանագրությունների կողքին՝ աչքերն արցունքով ու վշտով լիքը։

Հապա գրականությո՞ւնը։

Հայոց ամբողջ նոր գրականությունը հազիվ թե մի քանի ամսվա ընթերցանության նյութ լինի. և սակայն քանի՞ հոգի կգտնեք, որ ծանոթ լինեն իրենց մայրենի գրականությանը։ Միշտ կտեսնեք բերան արած կրկնում են էս կամ էն գրողի անունը, գովում, երկինք են հանում, կամ պախարակում, ցեխն են կոխում։ Հետաքրքրվեցեք, հարց ու փորձ արեք, կտեսնեք ծանոթ չի, կարդացել չի. էստեղից մի կտոր, էնտեղից մի բրթուջ, հաճախ ծուռն ու սխալ։ Եվ ո՜րքան գրական տգիտություն. ի՛նչ կոպիտ ճաշակ. ի՛նչ գռեհիկ վերաբերմունք դեպի գրականությունն ու գրողները։ Ի՛նչ վիրավորանք քննադատելիս, վիճելիս, օգնելիս, հոբելյանը կատարելիս, մինչև գերեզմանի եղերքը, մինչև թաղման օրը։ Իսկ գծծիությո՞ւնը... Ամբողջ նոր գրականության արժեքն ի՞նչ է, գիտեք։ Անշուշտ չգիտեք,— մի հարյուր ռուբլուց էլ պակաս։ Ամբողջ գրականության արժեքը... Եվ քանի՞ մարդու տան կգտնեք ամբողջ ժողովրդի մեջ... Հայը սովորաբար ցավում է փողը ծախսելիս, բայց գրքի տալի՞ս — էդ ծախսը ուղղակի չի հասկանում. մանավանդ երբ գրքի գինն էլ մի ռուբլուց ավել է։

Լեզուն հո... գրականության մեջ անկազմ ու անկերպարան, մամուլի մեջ աղքատ, ողորմելի մի երկու երեք հարյուր բառերի չոր ու ցամաք շարան, շատ անգամ էն էլ ծուռն ու սխալ։ Մի քիչ կրթված տուն եք մտնում, ներողություն են խնդրում, որ հայերեն չգիտեն, կամ թե չէ, ամենալավ դեպքում, եթե գիտեն, շարունակ լսում եք՝ «նրա մոտ ձայն չկա... հրացանից արձակեցին... Ձեզ կարելի՞ է ուտել...» («Вам можно кушать») ու նման մարգարիտներ։

էսպես է դրությունը։ Եվ եթե ճշմարիտ էսպես է, սրանից հետո էլ ի՛նչ ուղիղ ճանապարհի կարող է լինել էս դրության մեջ գտնվող ժողովուրդը. ի՛նչ արժանապատվության զգացմունք կարող է ունենալ և ի՛նչ հարգանք հենց դեպ իրեն։ Եվ ի՛նչպես կարող է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները, երբ պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բանականություն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը։

1910

ՏԽՈՒՐ Գ. Վ.-ԻՆ

«Մշակ»-ի 81 №-ում պ. Գ. Վ-ն[1]) արձանագրում է իբրև տխուր փաստ, որ ես, Պոլսի ս. Երրորդության եկեղեցու միտինգի դեմ բողոքելով, առիթ տվի «Սուրհանդակ»-ին մի առաջնորդող գրելու (№91), որի մեջ հոդվածագիրը միտինգ կազմողներին մեղադրում է, թե նրանք էդ ամենն արել են հեշտ ժողովրդականություն ձեռք բերելու համար և չբավականանալով մինչև այժմ իրենց շուրջը տարածած մահ ու ավերով, ուզում են սատանայական մի նոր դավ սարքել ռուսահայերիս գլխին:

Այժմ պ. Գ. Վ. ինձ հարցնում է, թե ես ի՞նչ զգացի, երբ կարդացի էս տողերը, որոնց առիթը ես եմ տվել:

Ամենից առաջ պ. Գ. Վ-ին պետք է ասեմ, որ ես, մի բան գրելիս, գրում եմ էն, ինչ որ ես եմ զգում, ու մտածում, իսկ թե ուրիշը իմ գրածի առիթով ի՛նչ կգրի, այդ միանգամայն իմ գործը չի, ես պատասխանատու չեմ ուրիշների գրածի համար, և նույնիսկ չի կարելի առաջուց ամեն բան նախագուշակել: Օրինակ, ես ի՞նչ կարող էի մտածել, որ իմ բողոքի առիթով «Սուրհանդակի» գրած առաջնորդողից պ. Գ. Վ-ն էդքան կտխրեր կամ «Մշակ»-ը կվշտանար, մի վիշտ, որ ինչքան անսպասելի էր, էնքան էլ ուրախալի է, որովհետև, հիրավի, մարդիկ գուցե սխալ են, բայց նրա համար հո չեն միտինգ արել, որ մեր գլխին սատանայական դավեր սարքեն:

Հույս ունիմ, պ. Գ. Վ.-ն չի մոռանալ և կարձանագրի իբրև ուրախալի փաստ, որ սրա առիթն էլ ես տվի ու «Մշակ»-ը վերջապես մի մարդավարի վերաբերմունք ցույց տվեց դեպի իր հակառակորդները:

Բայց կենտրոնական հարցն էն էր, թե ի՞նչպես ազդեց ինձ

վրա «Սուրհանդակ»-ի առաջնորդողը։ Համեցեք ասեմ։ Ճիշտ էնպես, ինչպես ազդել են մինչև օրս «Մշակի» նույն ձևի ասածները։

Դարձյալ, և ինձ թվում է գլխավորը, պ. Գ. Վ.-ին զարմացրել են իմ հոդվածի մի քանի «անտեղի մտքերը», որ ես թույլ եմ տվել ինձ, և նման բաներ։ Էստեղ արդեն պետք է դառնամ պարոնին.— պ. Գ. Վ., ես իսկի չեմ զարմանում, որ զարմացրել եմ ձեզ։ Մենք հենց նրա համար ենք, որ զարմացնենք ձեզ և ձեր նմաններին։ Դուք էս պետք է վաղուց գիտենայիք, և եթե չեք իմացել, այժմ իմացեք։

Օ՜, ես ձեզ լավ եմ հասկանում։ Բայց, որքան էլ տխուր լինի էս փաստը ձեզ համար, պ. Գ. Վ., ես իմ ողջ էությամբ ապրում եմ մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով, հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ մի որևէ վանդակի մեջ փակվելու, էն տեսակ երգեր երգելու, որ ձեզ դուր գամ։ Սակայն, եթե խոսքը կմասնավորեք կոնկրետ խնդրի վրա, կարողություն կունենամ իմ դիրքը որոշելու։ Ահա, այժմ խոսքը հայ ժողովրդի վիճակի վրա է, և ասում եմ. իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, սրա պատմությունը, էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն, ու էնտեղից են բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը։ Եվ ինձ մոտիկ ճանաչողները լավ գիտեն իմ վերաբերմունքը մոտանցյալ դեպքերի ժամանակ, որ եղել է շատ որոշ և ժամանակին դյուր չի եկել շատ շատերին։ Իսկ առաջիկայում եթե տպագրության տամ մի համառոտ պատմական տեսություն, որ արել եմ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի 50-ամյակի առիթով,[2]) դուք էլ, թեկուզ համաձայն չլինեք հետս, գոնե կտեսնեք, որ «անտեղի մտքերը» միշտ տեղ են ունեցել իմ մեջ և ես առաջ եմ գալի ոչ թե «տիրող հանգամանքներից», այլ մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովուրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը ու ներշնչել է անկեղծ լինել ամենից առաջ։

«ՄՇԱԿ»-Ի Պ. Գ. Վ.-Ի՜Ն

Պարոն Գ. Վ., եթե կարող եք պարզ պատասխան տալ, խնդրեմ պատասխանեք էս երկու հարցերին.

Առաջինը՝ ի՞նչ հիմնական հարց է, որ ես թողել եմ առանց պատասխանի։

Երկրորդ՝ էդ ի՞նչ տեսակ «սեր ու հարգանք» է, որ Ձեզ թելադրել է էն լեզուն գործածել իմ դեմ, որ Դուք գործ եք ածել Ձեր

նամակում: Մի շատ տարօրինակ սովորություն ու հանելուկ է սա: Ես ինչ որ աչքս բաց եմ արել՝ հայոց մամուլի մեջ շարունակ կարդացել եմ նման բաներ՝ «մենք սիրում ու հարգում ենք էս ինչ կամ էն ինչ զրական մարդուն, բայց...» հիմի դուք տեսեք ետևից ինչեր են գալիս: Ես էլ իմ զրական կյանքում մի քանի անգամ ստիպված եմ եղել եռանդով պաշտպանվելու էդ տեսակ սիրողների դեմ ու արյուն պղտորելու նրանց «սիրո ու հարգանքի» ոչ էնքան քնքուշ արտահայտություններից: Այժմ էլ դուք: Ով իմանալուց հետո թե Դուք ո՛վ եք, ճշմարիտն ասեմ, հավատում եմ Ձեր «սիրո ու հարգանքի» հավաստիացումներին, բայց էդ ի՞նչ զարդերով եք զարդարում Ձեր «սիրո ու հարգանքի» առարկան: Բա՞ն եմ գրել.— քննադատեցեք: Համաձայն չե՞ք: Խիստ քննադատեցեք: Կպարզվի, վերջը կերևա՝ ով է ուղիղ դատում: Բայց վիրավորական, ափեղ-ցփեղ զարձվածքներով վեր կենալ մի, ինչպես Դուք բարեհաճում եք վկայել, «սիրած ու հարգված» գրողի դե՞մ... Դուք երեն գիտեք ի՛նչ բան է սիրած ու հարգված գրողը, ի՞նչպես եք կարողանում միաժամանակ նրա հետ էդքան անվայել ոճով խոսել, երբ նա Ձեզ ոչ մի բառով առիթ չի տվել. վրդովել, զայրացնել մարդուն, ու մի օր էլ չքմեղ ձևանալով՝ կանգնել ու աշխարհքի առաջ աղաղակել, թե՝ տեսեք, մեր բանաստեղծը ի՞նչ հանդուգն խոսքեր է ասում ինձ: Սե՛ր, հարգա՞նք ու հետո էլ չգիտես ի՞նչ համեմներ... ի՞նչպես եք էդ երկուսն իրար գցում, պ. Գ. վ., խնդրեմ էս էլ բացատրեք:

МОСК<ОВСКИЕ> ВЕД<О>МОСТ<И>-ին

Պոլսի Բերայի ս<ուրբ> Երրորդություն եկեղեցու միտինգը, որ [դատապարտում էր] Ռուսաստանի հայերի դեմ եղած հալածանքները, շատ խնդրի հետ միասին միաժամանակ պատմական մի անարդարություն էր <պարունակում> իր մեջ, որ Տաճկաստանից են բողոքում Ռուսաստանի դեմ հայերին հալածելու համար, և էն էլ մեջքներն արած 20.000 ադանացիների վրա:[1])

Էդ միտինգի դեմ բողոք առաջ եկավ մեր մեջ, ի միջի այլոց բողոքեցի և ես: Այժմ «Моск<овские> ведом<о>ст<и>»[2]) խոսելով էդ բողոքների մասին, և առանձնապես ուշադրություն դարձնելով իմ նամակին[3]) ու առաջ բերելով, ուրախություն է հայտնում, որ հայերը էսպես են մտածում:

Այսինքն ի՞նչպես:

Որ հայերը գիտակցում ու գնահատում են իրենց քաղաք <ական>-կուլտ<ուրական> կապը Ռուսաստանի հե՞տ: Ով դուք

էդ եղր<ակացնում եք> էս դեպքից ու ուրախանում: Ա՛յ, ճշմարիտ որ մեզ համար ախրելու բան: Եվ դա ուղղակի դժբախտություն է մեզ համար ու անսպառ աղբյուր ամեն տեսակ թյուրիմացությունների, որ մեզ ուրիշ տեսակ եք ճանաչում: Եվ ճար ու հնար չկա այդ բոլորը պարզելու, մինչև անկեղծ ու բարի զգացմունքներով իրար չմոտենանք, իրար չհասկանանք:

Մենք պարզ ու անկեղծ ենք լինելու, որովհետև քաղաքականություններ անելու ոչ ուժ ունենք, ոչ կարիք: Թող քաղաքականություն անի նա, ով կարող է խաղալ իր ուժով ու խաղացնել ուրիշներին, իսկ մեր բանը շատ պարզ ու շատ է հասարակ: Մենք ջարդված, տանջված, ցրված մի ժողովուրդ ենք, մեզ հարկավոր է խաղաղություն, կուլտուրական կյանք և մի պայման, որ մեր ազգային ինքնորոշման դեմ [հարվածներ չլինեն]: Ով որ հային կատէդ պայմանները — տված կլինի ամեն բան: Այո՛, մեզ դուցե ավելի մեծ վտանգ է սպառնում ռուսական կուլտուրան, բայց դա արդեն ուրիշ բան է. դրա դեմ ո՞վ է բողոքելու, ընդհակառակը, մենք ինքներս ենք սիրով մեր տները բերում Պուշկ<ին>, Լերմ<ոնտով>, Գոգ<ոլ>, Տուրգ<ենև>, Տոլստ<ոյ> և այլն և այլն, ու հիրավի, նրանցով է, որ ռուսական ոգին նվաճումներ է անելու ու անում է, բայց դրա դեմ մենք խոսք չունենք. ընդհակառակը, էդ ճամփով սիրով կմոտենանք, և նույնիսկ կձուլվենք դուցե, ո՛վ իմանա, եթե բարո<յական> — հոգ<եկան> ուժ չունենանք մերը դնելու նրա հետ ու նրա նման: Մեր բողոքները միայն բռնի, ֆիզիկական ուժով արած ճնշումների դեմ է եղել, որ անշուշտ անմիտ է հենց ռուսական ոգու տիրապետության տեսակետից:

Դուք շարունակ խոսում եք մեր հեղափ<ոխության> մասին, և այնպես եք խոսում, որ էն տպավորությունն է արել, թե կարծես՝ առաջինը հայ ժողովուրդը ամբողջովին մի հեղափ<ոխական> կազմակերպություն է, երկրորդն էլ, էդ հեղափ<ոխությունը> ազգ<ային> քաղաք<ական> դավադրության բնավորություն ունի: Միանդամայն անմիտ ու անարադար: Ամեն ժողովրդի մեջ էլ կան հեղափոխականներ — սոցիալիստի մտքով, և ամենից քիչ հայ ժողովրդի մեջ: Ես էս ասում եմ իրողությունը ասելու համար: Եվ էն, իսկական հեղ<ափոխականներն> էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն ռուս քաղաքացիներ, որոնք միշև օրս ոչ մի տեղ անջատական ոչ մի խոսք կամ քայլ չեն արած, գոնե ինչքան հայտնի է մեզ... [Եվ] Տաճկաստանումն էլ բնակ հայերը անջատական միտք չեն ունեցել, այլ կյանքի, դույքի, և ազգային ինքնորոշման ամենաստորրական պահանջներ:

Էդ ժողովրդին մի ապատամբ տարր ներկայացնելը մի սոսկալի անարդարություն <է> իրականության առաջ և մի խոր անդիտություն պատմության առաջ։

Մի բանալի տամ մեր պատմության համար, և կտեսնեք թե ի՞նչ անսասան հիմքերի վրա են էս հարաբերությունները, որ ոմանց թվում են ձեռաց փոխելիք դրություններ։

Քրիստո<նեություն> ընդունելուց հետո հայ ժողովուրդը (և վրացի) [միշտ ստիպված] կրոնով ու կուլտուրայով կապվել են արևմուտքի հետ։ (Նրանից առաջ էլ, բայց քրիստո<նեությունը> վերջ<նականապես> ամրապնդեց)։ Եվ երեք անգամ նրանք դրսեվել են իրենց երկար խնդրած ապավենն ու ուժը — մի անգամ Հռոմը, մյուս անգամ Բյուզանդիոնը, երրորդը՝ ռուսն է։ Եվ Հռոմն ու Բյուզանդիոնը հաճախ ուժ են տվել էս արևելքում իրենց հարած ժողովուրդներին ու նրանց հետ միասին արյունալի մաքառումներ են մաքառել։ Էս ժողովուրդներն էլ միայն նրանց օրով են կարողացել հանդիստ շունչ քաշել ու մի առժամանակ շենանալ։ Եվ ամեն անգամ, երբ էդ մեծ հովանավորները հետևել են իրենց հովանուն դիմած ժողովուրդներին բռնի ձուլեն իրենց հետ — հասել են շատ տխուր հետևանքների։ Երկուստեք ահագին ուժեր են վատնել, թշնամություն ու քայքայում։ Հերիք է միայն, որ հիշենք բյուզանդական կայսրներից ոմանց համառ ցանկությունը՝ անպատճառ հայերին դարձնել հունադավան, զաութիկը կատարել տալ, հաղորդը ընդունել տալ հունական ծեսով և կամ չէ, հալածել հայկական ու վրացական գիրն ու լեզուն։ [Եվ էդ ճամփով նա էլ ուժասպառ արավ, փչացրեց իր բուֆերը արևելքում]։

Չէ՞ որ պատմությունը նրա համար է, որ մենք բան սովրենք։ Վերջապես լուսավորությունն, արվեստներն ու գիտությունն էլ նրա համար են, որ մենք ավելի մարդասեր դառնանք, ավելի լայն նայենք մարդկանց ու աշխարհքին։

Արդ, Ռուսաստ<անը> եթե անցել է Կովկասի շղթան՝ ունի իր պատմ<ական> խոր բացատրությունը ու իրավունքը և ամեն մարդ, որ էդ հասկանում է, գիտի Կովկասի պատմությունը ու ռուսաց տիրապետությունը, նա էն էլ գիտի, որ դա ամեն մի լրագրական հոդվածով կամ թռուցիկով մերժելու դեպք չի և չափազանց շատ է ամուր։ Էդպես է եղել ման<ավանդ> կովկասցիների համար ավելի՝ քան ռուսների։ Եվ եթե ռուսն ասում է Կովկասից գընանք — ես հասկանում եմ նրան, բայց կովկասցին կվախենա երեվակայել Կովկասը առանց ռուսների։ Էդպես է ներշնչել պատմությունն ու կյանքը։

Եվ ես չգիտեմ, Կովկասը ո՛րքան էր հարկավոր ռուսներին, բայց էն լավ գիտեմ, որ ռուսները շատ էին հարկավոր Կովկասին։ Եվ մենք ռուսներից ամենայն իրավունքով շատ ավելի լավ բաներ պետք է սպասենք, քան երբևէ ունեցել ենք։ Լուսավորություն, տնտեսական բարեկեցիկ դրություն, ազգային լայն վերաբերմունք, մարդասիրություն <....> նա պետք է ցույց տա մեծ ժողովրդին վայել վերաբերմունք։ Նրա ամեն մի մարդը պետք է ունենա էդ գիտակցությունն ու զգացմունքը։ Անվայել է նրա թե՛ ֆիզիկական թե՛ հոգեկան ուժին ակնածել փոքրիկ ժողովուրդներից և ձեռնամուխ լինել փակելու նրանց փոքրիկ ու խղճուկ դպրոցները, նրանցից վախենալ, երբ նրանց դեմը կանգնած են հազարավոր բարձր կրթարաններ — համալսարաններ, գիմնազիոններ, սեմինարիաներ ու ամեն տիպի ուսումնարաններ, երբ հեղեղում է մի ահագին գրականություն, և այլն և այլն <....> Դա փչացնում է ժողովուրդների լավ հարաբերությունները, փչացնում է Ռուսաստանի պատմության էն լավ էջերը, որ ստեղծել են լավագույն ուժերը ռուս ժողովրդի <...>

Նախնական առաքինություններ են դրանք — ազգային և ցեղական կույր սերն ու ատելությունը դեպի օտարները — անվայել ոչ ամոթաբեր է ժամանակակից մարդուն։ Մարդու կարեկց<ությունն> է ավելի ինձ առաջնորդում իմ զգացմունքն դեպի երևույթները <՞>։

<....>

ՎԱՐԱԳԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Վանից արևելք բարձրանում է Վարագա լեռը, ուր, ավանդության ասում է, ապաստան գտան հեթանոս Հռոմից հալածական քրիստոնյա Հռիփսիմե իշխանուհի օրիորդն ու իր ընկերուհիները և թաղեցին Քրիստոսի խաչափայտի մասը, որ բերել էին իրենց հետ։ Ահա էս սրբությունն է, որ տոնում է հայոց եկեղեցին Վարագա խաչի անունով և էս խաչի ու էս սարի վրա է կանգնած Վարագա հռչակավոր վանքը, ուր հնում թաղվում էին Վասպուրականի թագավորները։

Անցյալ դարի կիսերում Հայոց աշխարհի վրա մի արծիվ էր պտտվում։ Պտտվեց, պտտվեց ու Վարագա սրբազան բարձունքը, Վարագա հոյակապ վանքը ընտրեց իրեն բույն։ Նա, էն կորովի արծիվը, ապագա Հայոց Հայրիկը, արծվենի հայացքով նկատել ու չափել էր համատարած խավարը, որ տիրած էր իր հայրենի երկրին և գալիս էր ջահ վառելու Վասպուրականի բարձրությունների վրա, չորս կողմը լուսավորելու, և անելու ամեն բան, ինչ որ «ազ-

գին միության, հայրենյաց շինության, եկեղեցյաց բարեզարդության և հայ մանկտվույն լուսավորության կվերաբերին»։ Ու 1857 թվին ձգեց փրկարար գործի և գործունեության հիմքը։ Ուսումնարան բաց արավ, տպարանական մամուլ բերավ, որ առաջին անգամն էր տեսնում Հայաստանի հողը, և սկսեց ամսագիր հրատարակել «Արծվի Վասպուրական», որ «Թռուցյալ հայրենասեր թևոք յԱրծրունի մենաստանէն Վարագա» անդադար կանչում էր «լուսավորություն, լուսավորություն», քաջ գիտենալով՝ լուսավորյալ ազգերն են միմիայն, որ մարդավայել կապրեն և հավատալով, որ՝ «թե ուշ, թե անագան իր ձենը հայոց ականջին պիտի հասնի»։

Բայց աղքատ էր Հայոց Արծիվը և հաճախ ստիպված էր թևածելու դեպի հեռու հորիզոններ, դեպի պանդխտություն։ Եվ մի քանի անգամ նա հայտնվեց ցրված հայության մեջ, զանազան երկիրներում, ամեն անգամ սրտերը վառելու հայրենիքի սիրով, ամեն անգամ անունդ տանելու իր ճետերին, որ հավաքել էր Վարագա սարի վրա, ամեն անգամ ջանալով ավելի ու ավելի հիմնավորել ու մեծացնել իր՝ ճշմարիտ որ՝ հայրական գործը։

Ահա՛ էս պայծառ ու գեղեցիկ գործի սկզբնավորության հիսնամյակն է, որ լրացավ երեք տարի առաջ, բայց անկարելի եղավ իր ժամանակին տոնելու և նշանակված է այժմ, հունիսի 20-ին։

Հոբելյանն իր բարձր հովանու տակ է առել ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը, առանձնացնելով նրան ազգային հանդեսների մեջ և հռչակելով որպես տոն ժողովրդի կուլտուրականության, նրա անվերջ ձգտումի դեպի լույսն ու գիտությունը։

Նվիրակա՞ն տոն, նվիրակա՞ն վայրեր, նվիրակա՞ն անուններ ու հիշատակներ և, ի՞նչ կասկած, ամեն հայ սրտով կամ գործով մասնակից է լինելու էս մեծ հանդեսին Վարագա բարձունքների վրա։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆՔ

Թիֆլիզի առաջին արական գիմնազիայի V-րդ դասարանի մի աշակերտ դաշույնով սպանել է իր ուսուցչին։ Ինչու՞. որովհետև, ինչպես ինքն է առարկել ոստիկանատանը, ուսուցիչը 2 է դրել, որ կարող էր նրան դասարանում թողնել։ Բայց այդ ինչուն թող ոստիկանությունը հարցնի, իսկ մենք ասում ենք, ինչ ուզում է լինի դրդապատճառը, չի կարող արդարացնել մարդասպանությունը, չի կարող պահացում տալ մարդկային խղճմտանքի բողոքին և մենք ամենից առաջ դատապարտում ենք անպայման, որովհետև կատարվել է մարդասպանություն։

Ամեն սպանություն քստմնելի է ու գազանական գործ, բայց

մանավանդ զարհուրելի է տեսնել դաշույնը աշակերտի ձեռքին՝ ներկված ուսուցչի արյունով: Այս պատկերը արդեն չափազանց ուժգին է ցնցում նույնիսկ մեր բարբարոսական տեսարանների ընտելացած ուղեղը, այս դեպքը դուրս է գալիս իր նեղ դպրոցական շրջանակից ու շատ խորն է տանում մեր սարսափած միտքը: Այդ պատանի-աշակերտ մեղադրյալը՝ սպանչի խանչալը ձեռքին՝ մի ծանր դատապարտություն է մեր ամբողջ կյանքին, մեր կոշտ ու կոպիտ սրտերին, մեր վարք ու բարքին ու ադաթներին: Սա գոռում է մինչև երկինք, թե փչացած է մեր մարդը, մեր ընտանիքը, մեր դպրոցը, մեր հասարակությունը, և փչացած է ներսից, մինչև հոգու խորքը, մինչև ուղեղի ծուծը: Սա վկայում է, որ մենք քաղաքակրթված ենք միմիայն շորերով, լուսավորված ենք միմիայն վկայականներով, և ոճիրի պատասխանը պետք է տա մեր ամբողջությունը, որովհետև ծառիցն է ընկել պտուղը:

Ընտանիքը բարեկիրթ երեխա պետք է ուղարկի դպրոց, ոչ թե մի արարած, որ ընդունակ է խանչալ հանելու և կամ այլ գաղանական միջոցներով սարսափի տակ դնելու իր ուսուցչին: Այս տեսակ հարաբերություններով վարժապետի սպանությունից առաջ կնշանակի արդեն սպանված է ուսումնարանը, սպանված է նրա հոգին, նրա էությունն ու ազդեցությունը և մնում են միայն պատերըն ու արտաքին ձևակատարությունները:

Ասում է՝ ուսուցիչն անիրավ է եղել:

Ընդունենք թեկուզ, որ այդպես է եղել: Դա գալիս է միմայն մի սև գույն էլ ավելացնելու մեր կյանքի մոայլ պատկերին և ասելու, որ ուսումնարանն էլ դժբախտաբար զարգացնում և բորբոքում է այն վայրենի բնազդները, որ պետք է մեղմի ու կրթի: Բայց դա հո չի կարող արդարացնել մարդասպանությունը: Մարդասպանությունը այլևս անհանդուրժելի է կրթված մարդկության խղճմտանքի համար, որ արդեն աղաղակում է միլիոնավոր բերաններով աշխարհքի ամեն կողմից, թե չի՛ կարելի սպանել մինչև անգամ սպանչին և չպետք է սպանի նույն իսկ դահիճը, ուր մնաց աշակերտը ուսուցչին, զավակը ծնողին, ընկերն ընկերին, մարդը մարդուն: Չի՛ կարելի սպանել:

ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Մտածմունքներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք է՛ն ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները

կամ ժանտախտի թույնը: Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվեք, առողջանաք. ի հարկե, եթե էնքան արիություն ու հասկացողություն ունիք:

Էն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում:

Էսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հռչակում հիվանդ: Ամեն մինը ինքը չար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստախոս չի, թայֆայական չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: Ճշմարիտը էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդություններով:

Նայեցե՛ք:

Գյուղացի ռանճպար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում՝ մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «չարնով է ընկնում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարդ անում, ու, տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք — միշտ դժգոհ է, բողոքում է, դանդաղվում է անարդարությունից, և գիտե՞ք էդ անարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փչանում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտություն, է՛լ ափաշկարա

ատա, է՛լ չարախոսություն, կեղծավորություն։ Նեղ թայֆականությունն հո ոչ մի դյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ։ Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոստում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրատարակի, միշտ պետք է զարկել, ծաղրել կամ լռել, մի խոսքով ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի։

Էդպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ։ Մեկը մյուսի հռչակն ու հաջողությունը տանել չի կարողանում։

Հիմի եկեք ուսուցիչներին տեսեք։ Դասերից ավելի շատ էն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ձգտում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման չարության։

Ինչո՞ւ է էսպես։

Պարզ հասկանալու համար երևույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ։ Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը։ Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ։ Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում։ Էսպես է բնության օրենքը։

Էն հասարակ վարունկի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում։ Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք։ Էնպես դառնանում ու դաժանանում է և՛ մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարիզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան։ Նվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաջադիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «գրականություն», և՛ «դպրոց» և՛ «բարեփոխություն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տատապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի։ Էդ տեսակ կյանքը կտա և տաղան-

դավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան։ Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի։

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը։ Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը։

Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած։

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆԸ

Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթը մի շրջաբերականով հարցնում է մեր գրողներին ու գործիչներին, ի միջի այլոց և ինձ, թե.

«Հայկական տառերուն՝ արաբական տառերու փոխարեն՝ թուրքերու կողմեն թուրք լեզվի համար որդեգրվիլը, հայ լեզվին և գրականության օգտակար պիտի ըլլար, թե՞ վնասակար»։

Ես կարծում եմ էս հարցին պատասխանելու համար պետք է հարցնել, թե էդ երկու ժողովուրդներից ո՞րն է ավելի մեծ, որի՞ լեզուն ու գրականությունն է ավելի ուժեղ։ Նրանից հետո պարզ կլինի և պատասխանը, թե նույն տառերով գրել կարդալը որի՞ համար կլինի վնասակար և որի՞ համար օգտակար։

Եթե թուրքերը հայկական տառերը որդեգրեն, դրա հետևանքն էն կլինի, որ նրանք մեր լեզվով գրածը կկարողանան կարդալ, մենք նրանցը։ Սրանով կհեշտանա լեզվի, մտքի, ոգու փոխադարձ ազդեցությունը երկու կողմից էլ։ Եվ անշուշտ, որ ազգը, որ լեզուն, որ գրականությունը ավելի ուժեղ է, նա էլ ավելի է ազդելու իրենից թույլի վրա ու հետզհետե, ի հարկե դարերի ընթացքում, ձուլելու է իր հետ։ Մի գործ, որ առանց էն էլ կատարվում է, բայց դանդաղ, իսկ սրանով ավելի կհեշտանա ու ավելի արագ կկատարվի։

Բայց սրա դեմ մենք ի՞նչ կարող ենք ասել կամ անել։ Ոչինչ։ Ոչ ապաքեն էսպեսով կատարվում է ազգերի մեծ միության գործը։ Եվ գեղեցիկ է նա ու ցանկալի։ Մի բան, որ հին ժամանակները դժար էր կատարվում, որովհետև ազգերի հարաբերությունները էլ

ավելի դժար էր, իսկ նոր ժամանակներում էնքան արագ է կատարվում, որ էս կամ էն առաջադեմ ժողովրդի մի սերունդը իր լեզվով, սովորություններով, նիստ ու կացով, ուտելիքով, հագնելիքով նկատելի կերպով տարբերվում է իր նախորդ սերունդից, և որքան տարբերվում է նրանից, էնքան նմանում է իր հարևան ժողովուրդներին: Իհարկե, հեշտ ու դժար փոխվելիք բաներ կան. օրինակ, գլխարկն ավելի հեշտ կփոխվի, քան գլուխը, և վերջապես, էնպես առանձնահատկություններ էլ կլինին, որ կապված են կլիմայի և բնության այլ երևույթների հետ ու գուցե երբեք չեն փոխվելու:

Ասելս էն է, որ կուլտուրական մաքառումից փախչելը ապարդյուն բան է, էդ տեսակ խեղճը իրեն չի կարողանալու ընդմիշտ պատսպարի ոչ մի ցանկապատի ետև: Կուլտուրաների ու գաղափարների ազդեցությունները ոչ մի ցանկապատ չեն ճանաչում: Նրանք միշտ տարածվել են հողմի հետ: Իսկ այժմ, որ երկաթուղու, հեռագրի ու հեռախոսի նման հողմից արագ միջոցներ էլ են հայտնվել, ի՞նչ եք անելու: Մանավանդ որ դա համաշխարհային օրենք է և տանում է դեպի լույսը, դեպի լայնը, դեպի մեծը, դեպի ընդհանուրը:

Կուլտուրաների, լեզուների, օրենքների ու սովորությունների ազդեցությունները, ճիշտ է, ցավեցնում են, տգեղ են, պախարակելի են, բայց էն ժամանակ, երբ կատարվում են բռնությունով, ֆիզիկական ուժով: Մի բան, որ տգեղ լինելով հանդերձ, միաժամանակ անմիտ է, որովհետև տանում է միանգամայն հակառակ հետևանքի, հայտնագործում է թշնամական զգացմունք, վիրավորում է կոպիտ կերպով ու մարդկանց մղում է ետ դեպի իրենց սեփական, թեև նեղ, բույնը:

Էս տեսակետն ունենալով՝ ես ոչ մի վնաս չեմ տեսնում, եթե թուրքերը որդեգրեն հայկական տառերը, բայց մի՞թե, հիրավի, որդեգրում են, և եթե որդեգրում են, ես զարմանում եմ, թե ինչո՞ւ լատինական գեղեցիկ տառերը թող արած մեր ավելի տգեղ տառերն են ընտրել: Եվ եթե դիտմամբ են խուսափում լատինական տառերից, հետաքրքրական է, թե ինչո՞ւ:

<ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ԱԽՏԸ>

Խորապես ցավելով պետք է խոստովանենք, որ մեր ժողովրդի մեջ սաստիկ զարգացած է վրեժխնդրության զգացմունքը և մեր մարդը, վրեժ առնելու համար, հաճախ կանգ չի առնում ոչ մի միջոցի առջև: Եվ ավելի ևս զզվելին այն է, որ նա սիրում է

իր վրեժը լուծել ու հարվածը տալ ուրիշի ձեռքով, ինքը միշտ մութի մեջ։

Ասիական այս գարշելի հատկությունը առանձնապես աչքի ընկավ և շատ ոճիրների պատճառ դարձավ մանավանդ վերջին շարժման խառնակ տարիներում, երբ իրար թշնամի մարդիկ իրենց ձեռքին գործիք էին դարձնում այս կամ այն կազմակերպության մարդկանց ու «գաղափարի» անունով իրենց հաշիվները մաքրում ամենայն անդրդվելիությամբ։

Բայց միայն խառնակ տարիները չեն. միշտ էլ գործի վրա են այդ չար, անհանգիստ հոգիները և չեն քաշվում մոլորության մեջ ձգելու նույնիսկ կառավարության պաշտոնյաներին։ Եվ ո՛րքան ջանք ու եռանդ, ո՛րքան նույնիսկ նյութական միջոցներ են գնում դրանց սարքած դավերի վրա, թե ինչ է — այս ինչը ուզում է վրեժ հանել այն ինչից։

Եվ ի՜նչ խորամանկություն, ի՜նչ սուր հայացք, ի՜նչ խոր ծանոթություն է հարկավոր գործի ու սովորությունների՝ այդ բոլոր մեքենայությունների տակից ճշմարտությունն ու արդարությունը հանելու համար։

Եվ, հիրավի, արդարությունը մեր երկրում շատ է տուժում մեր այս ցած հատկության պատճառով, այլև կորցնում ենք մեր բարոյական վարկն ու խոսքի արժեքը արդարադատության առաջ։

Եվ ամենուրեք է այս ախտը մեր կյանքում ու լոկ մտածելն անգամ սաստիկ, սաստիկ ծանր է։

ԹԻՖԼԻԶԻ ԹՇՄԱՆԱՆ ԺՈՂՈՎԸ

Այսօր Թիֆլիզի հայոց առաջնորդարանում կայանում է թեմական ժողովը և թեմի ամեն կողմերից հավաքվել են պատգամավորները։ Ժողովի պարապմունքները լինելու են Ներսիսյան դպրոցի հաշվի քննությունը և նույն դպրոցի հոգաբարձության ու թեմական խորհուրդի ընտրությունը։ Եվ ահա այս կարևոր ժողովի բացման առաջ մենք միայն մի ցանկություն կհայտնենք, որ նա կարողանար իրեն ընտրող ժողովրդի իղձերի ճշմարիտ թարգմանը լինել — բարձր կանգներ ամեն նեղ թայֆայական միտումներից և անկեղծ զգացմունքով առաջնորդվեր իր խորհրդածությունների ու ընտրությունների ժամանակ։ Թեմի թե՛ ուսումնարանական, թե՛ տնտեսական վիճակը, չնայելով մի քանի անգամ եղել են ժողովների ու հանձնաժողովների քննության առարկա, միշտ մնում են խեղճ ու խառնակ դրության մեջ։ Անհրաժեշտ է ուսումնական ու

անտեսական մասին հմուտ մարդկանցից կազմված թեմական խորհուրդ, որ մի կարգ հաստատի, արժանավոր տեսուչների ձեռքով հոգա ուսումնարանների բարեկարգությունը և աչալուրջ հսկի թեմի եկամուտների վրա։ Նախորդ թեմական խորհուրդը, որ չկարողացավ ցանկալի գործունեություն ունենալ, անշուշտ ունի իր հարգելի պատճառները. նա չուներ նույնիսկ իր ձեռքին վեհափառ կաթողիկոսի այն Կոնդակը, որով գալիս է նորը։

Ինչ վերաբերում է Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը, նրա դեմ խոսք չունեն ասելու մինչև անգամ հակառակորդները։

Հետևաբար կարելի է հուսալ, որ թեմական ժողովի նիստերը կանցնեն առանց անախորժ աղմուկների, որոնք միշտ խեղդում ու խլացնում են մեր հասարակական գործերը։

ԽՐԻՄՅԱՆ ԵՎ ԻՉՄԻՐԼՅԱՆ

Երկար տարիներ ունեցել եմ Խրիմյանի մոտիկությունը վայելելու պատիվը, իսկ Իզմիրլյանի հետ, իր կարճ հայրապետության ընթացքում, միայն մի քանի անգամ եմ ունեցել տեսակցություն. բայց, իր բացսրտության պատճառով, մի քանի տեսակցությունն էլ բավական էին Իզմիրլյանին ճանաչելու։ Ես կարծում եմ հետաքրքրական կլինեն «Հորիզոնի» ընթերցողի համար նրանց բնավորության այն գծերը, որոնցով նրանք մոտենում էին իրար, կամ հեռանում էին իրարից։ Երկուսն էլ խոշոր հայ դեմքեր էին, գերազանցորեն հայ. երկուսն էլ շատ ապրած իրենց ժողովրդի տառապանքով։

Երկուսն էլ հոգևորական էին բառի լավ իմաստով, երկուսն էլ սիրում էին ս. Գիրքը ու նվիրված էին հայրենի եկեղեցուն։ Երկուսն էլ ունեին իրենց հավանած մարդիկը հոգևորականների մեջ, բայց առհասարակ չէին սիրում հոգևորականությանը։ Իզմիրլյանը մինչև անգամ զգուշացնում էր հոգևորականներից. իսկ Խրիմյանը առանձին թշնամություն ուներ աստվածաբանների դեմ։ Երկուսի մասին էլ կարծիք էր տարածված թե հեղափոխական մարդիկ էին, բայց երկուսն էլ ուրույն հայացք ունեին հեղափոխության վրա և առում էին արյունը։ Երկուսն էլ վշտով էին հիշում Գոլիցինյան օրերը և առանձին հաճույքով էին կանգ առնում ներկա փոխարքայի վրա։

Բայց ավելի շատ <են> այն կետերը, որոնցով նրանք տարբերվում էին իրարից։

Իզմիրլյանը պատկառում ու ճնշվում էր կաթողիկոսական գա-

հից, իսկ Խրիմյանը թեթև աչքով էր նայում գահի վրա և մինչև անգամ ոտանավոր էր գրում, թե Քրիստոսի հետևողին անվայել է գահը։ Իզմիրլյանը գահն էր իրենից բարձր նկատում, Խրիմյանը իրեն էր գահից բարձր համարում։

Իզմիրլյանը մի տեսակ քաշվում էր, երբ ասում էին՝ Ձերդ վեհափառություն, Խրիմյանը նեղանում էր, և սիրում էր, որ իրեն «Հայրիկ» կանչեն, հայոց Հայրիկ։

Իզմիրլյանը միշտ և միայն գործից էր խոսում, Խրիմյանը գործից չէր խոսում և ձանձրանում էր գործից խոսելիս։

Իզմիրլյանը մարդկանց մոտեցնում էր գործի համար, Խրիմյանը՝ զրույցի։

Իզմիրլյանը սիրում էր խորհուրդ հարցնել,՝ Խրիմյանը վիրավորում էր, երբ խորհուրդ էին տալիս։

Իզմիրլյանը աջը չէր տալիս համբուրելու, Խրիմյանը միշտ մեկնում էր համբուրելու։

Իզմիրլյանը ազնիվ մարդ էր որոնում, Խրիմյանը ջերմ երկրպագուներ։

Իզմիրլյանը մարդկանց հարգանքով էր վերաբերվում, Խրիմյանը հեգնանքով։

Իզմիրլյանը միշտ լուրջ ձևով էր խոսում, Խրիմյանը երբեմն էր լուրջ ձևով խոսում, իսկ միշտ հեգնելով ու կատակով։

Իզմիրլյանը պարզ էր ու բաց սիրտ, Խրիմյանը բարդ էր ոճ խորը։

Իզմիրլյանը դյուրազգաց էր ու հուզվող, Խրիմյանը քամահրող ու հանդարտ։

Իզմիրլյանը օրենքից էր խոսում, Խրիմյանը Ավետարանից։

Իզմիրլյանը սրտալի ու շիտակ գործիչ էր, Խրիմյանը խորամիտ փիլիսոփա։

Իզմիրլյանը անկասկած մաքուր էր, Խրիմյանը անպայման մեծ։

Ա.ՋՆԻՎ ՄԱՐԴԸ

Իզմիրլյանի անունը կապված է հայ ժողովրդի տագնապալի օրերի պատմության հետ։

Համիդյան հալածանքների ու կոտորածների արյունոտ պատկերի հետ միասին, «Հայկական սարսափներ» կոչված դժոխքի կարմիր լույսի տակ՝ մարդու հիշողության մեջ բարձրանում է նրա ազնիվ ճակատը, կնճռոտ ու տխուր, սակայն բաց ու

անվեհեր կանգնած այդ ամենի դեմ, որպես մի մաքուր մարմարյա աշտարակ, մի հզոր պատնեշ աշխարհավեր մրրկի դեմը կեցած հաստատուն։ Եվ ամեն կողմից ահաբեկված ժողովուրդը նրան էր հառած իր սգավոր աչքերը, նրան տեսնելով, խորտակված սրտերը լցվում էին նորից ապրելու հույսերով։

Մարդիկ կան, որոնց միմիայն սոսկ գոյությունը, ներկայությունն ավելի շատ գործ է տեսնում, քան թե հազարավորների գործը։ Այդպիսի դեմքեր էին վերջերս հայոց ժողովրդի մեջ Խրիմյանն ու Իզմիրլյանը։ Խրիմյանը իր անձի հոյակապ մեծությամբ, Իզմիրլյանն իր արտասովոր ազնվությամբ։

Բոլորանվեր սիրով նվիրված իր ժողովրդին, ուր էլ երևում, իր հետ տանում էր ազնվություն և հանդիսանում էր ազնիվ քարոզիչ, ազնիվ գործիչ, ազնիվ պատրիարք, ազնիվ մարտնչող, ազնիվ հովվապետ — մի խոսքով ազնիվ մարդ։ Ամենադժարն ու ամենաբարձրը, ինչ որ կարող է լինել մարդ-արարածը։ Եվ այս տեսակետից նա արժանի է առանձին հիացմունքի։ Ինչպես ամեն ժողովրդի մեջ, այնպես էլ մեր ժողովրդի մեջ հազվագյուտ են այսպիսի ազնիվ դեմքեր։ Այո՛, հայ ժողովուրդը ունեցել է և կուտա շատ խելոք մարդիկ, քաջ մարդիկ, տաղանդավոր մարդիկ, բայց անպայման ազնիվ մարդիկ դժար են երևում։ Եվ այսօր գերեզման դնելով Իզմիրլյանին, մենք գերեզման ենք դնում այդպիսի մի հազվագյուտ ազնիվ դեմք։

1911

ԳՐԵԳՈՐՅԱՆ ԳՐԵԳՄՈՒՏՔ

Սովորություն է մեզանում էջմիածնի միաբանությանը տեղի թե անտեղի նախատինք կարդալիս՝ ցույց տալ Մխիթարյան միաբանությունները և նրանց գրական-գեղարվեստական, գիտական-բանասիրական գործերը։ Կարծիք կար, որ մինչև անգամ էջմիածնի նոր սերունդը, Ռուսաստանի ու արտասահմանի միջին թե բարձր ուսում առած միաբաններն էլ չեն փոխելու այդ դրությունը։ Անկասկած պատմական աշխարհագրական պայմանները և հայոց մայր աթոռի վարչական բնավորությունը կարող են այստեղ շատ առարկություններ թույլ տալ նրա միաբանությունն արդարացնելու համար, բայց այդ օրինակ նախատինքից էջմիածինը փրկելու են նոր միաբանները իրենց գրական-գիտական գործերով և ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, խլելու են Մխիթարյաններից առաջնության պատիվը այդ ասպարեզում։ Եվ բացի այն աշխատություններից, որ արդեն դրված են հրապարակ, միաբաններից շատերն այժմ զբաղված են զանազան մեծարժեք գործերով։

Մեսրոպ եպիսկոպոսն այժմ կազմում է էջմիածնի, Երուսաղեմի և այլ տեղերի հայերեն ձեռագիրների մի այնպիսի հսկայական ցուցակ, որի տպագրությունը տասնյակ հազարներ է նստելու և մեծ նշանակություն է ունենալու մեր բանասիրական գիտության համար։[1])

Սահակ վ. Ամատունին արդեն տպագրում է (Ղուկասյան ֆոնդի հաշվով) իր «Բառ ու բան» խոշոր աշխատությունը[2]), *որի մեջ հավաքված են մեր կենդանի բարբառներից ու գրականությունից այն բոլոր ոճերն ու բառերը, որ չկան Հայկազյան բառարանում։*

Տիրայր վարդապետը Օքսֆորդի ու Մանչեստրի հայ ձեռագրների ցուցակն է պատրաստում և պարապում է միջնադարյան տաղարանների ուսումնասիրությամբ։[3])

Հանրածանոթ Կոմիտաս վարդապետը զբաղված է ժողովրդական երգերը գրի առնելով և հայկական հին եղանակները վերականգնելու նշանավոր գործով։

Եվ ահա հ. Գարեգին վ. Հովսեփյանը, որ հայտնի է իր մի քանի լուրջ աշխատություններով, այժմ գալիս է մի շատ կարևոր ուսումնասիրությունով — «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ»։[4]) Մի ուսումնասիրություն, որի նշանակությունը շատ է մեծանում իր հետևանքներով։

Շարունակ այն կարծիքն է եղել իշխողը, թե քրիստոնեական արվեստը իր սկիզբն առնելով հռոմեական կատակոմբներից, Արևմուտքից է եկել դեպի Արևելք և հայկական քրիստոնեական արվեստն էլ ազդված է նրանից բյուզանդականի միջոցով։ Հ. Հովսեփյանը գալիս է ապացուցելու, որ հակառակն է եղած, Արևելքից է գնացել դեպի Արևմուտք, ցույց է տալիս արվեստի և մանրանկարչության մի ընդհանուր հայրենիք առաջավոր Ասիայի երկրներում Պարսկաստանի գլխավորությամբ, որոնց շարքում Հայաստանը գրավում է ուրույն ու պատվավոր մի տեղ։

Նա ասում է, որ ինքը այդ ճանապարհով գնացել ու հաստատել է՝ առաջնորդ բռնելով այն ցուցմունքը, այն թելը, որ տվել են գերմանական պրոֆ. Ստրժիգովսկին[5]) և անգլիացի գիտնական Լեթբըի։ Ստրժիգովսկին, որ մասնավորապես հայոց արվեստով է հետաքրքրվում, և Լեթբըի, որ ուսումնասիրում է քրիստոնեական ճարտարապետության պատմությունը Կոստանդին մեծից մինչև 13—րդ դարի վերջերը, այն կարծիքին են, որ քրիստոնեական արվեստի ծագման և զարգացման գործի մեջ Արևելքը կատարել է առաջնակարգ դեր։ Նրանք ասում են, թե ռոմանական արվեստը և բյուզանդական ճարտարապետությունը շատ էլեմենտներ ունեն յուրացրած արևելյան ճարտարապետությունից և արվեստից։ Քրիստոնեության հետ արևելյան արվեստի տարրերը շարժվում են դեպի Արևմուտք երկու ճանապարհով։ Մի ճանապարհը հյուսիսից Հայաստանի վրայով, Բյուզանդիայով (Պոլսով) և սլավոնական երկրներով, մյուսը հարավից՝ Պաղեստինից Ասորիքով, Կիլիկիայով ու Միջերկրականի ափերով։

Եվ ահա հ. Գարեգինը այս գիտական ենթադրության իրողությունը գտնում է հայկական արվեստի ուսումնասիրության մեջ և հաստատում է, թե հիրավի, արևելյան արվեստը ունեցել է այդ ազդեցությունը։

Նա ասում է՝ հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իր ոճով, իր մոտիվներով ազգակից է պարսկական ու ասորական ճարտարապետական արվեստին։ Այդ

երևում է մանավանդ բազիլիկաներից, որոնք ասորական տիպի են և գոյություն ունեն բյուզանդական արվեստից շատ առաջ, և նրանց ամենաէական մի հատկությունից, մի գծից — պայտաձև կամարից, որ արաբներից 5—6 դար առաջ գործադրվում էր Հայոց ճարտարապետության մեջ: Նույնն է ցույց տալի և մանրանկարչության ուսումնասիրությունը:

Հ. Գարեգինը հայկական մանրանկարչության զարգացումը բաժանում է երեք մեծ շրջանի: Առաջին շրջանի՝ Մեծ Հայաստանի մանրանկարչությունը VI դարից մինչև XIII դ. նա գտնում է արևելյան՝ ավելի մոտ ասորականին և մասամբ կոպտականին (եգիպտական): Այդ բնավորությունը պահված է մինչև XIII դ. վերջերը, երբ թույլ կերպով սկսվում է բյուզանդականի ազդեցությունը:

Երկրորդը Կիլիկյան շրջանն է, որ ընդունում է բյուզանդական-արևմտյան և ավելի հեռավոր արևելյան արվեստի տարրեր և, այդ բոլորը միացնելով, ստեղծում է մի բարձր գեղարվեստ:

Երրորդը դարձյալ բուն Հայաստանումն է, երբ, թագավորության վերջանալուց հետո կաթողիկոսները Կիլիկիայից փոխադրվում են Մեծ Հայաստան: Այս շրջանում նորից ծաղկում է մանրանկարչության արվեստը արդեն պարսից, և արևմտյան, հատկապես իտալական ազդեցության տակ: Բայց այս արդեն անկման շրջանն է:

Հ. Գարեգինը այժմ այս վերին աստիճանի հետաքրքրական նյութի վրա դասախոսություններ է կարդում Թիֆլիզում և լուսաբանության համար ցույց է տալիս շատ գեղեցիկ գունավոր զարդանկարներ և հայ թագավորների, թագուհիների, կաթողիկոսների, իշխանների, հին մատենագիրների ու նկարիչների պատկերները, որ բնագրերից արտանկարել են նկարիչ Թադեոսյանն[6]) ու Պալտարացկին:[7])

Թիֆլիզի հայ հասարակությունը պետք է գնա այս դասախոսություններին, որ պատմության մեջ նոր հորիզոններ են բաց անում իր համար և նոր փառք են ավելացնում իր հին փառքերին:

Հ. Գարեգինը մտադիր է այս ամառ նկարչի հետ Երուսաղեմ անցնելու՝ այնտեղի հարուստ հայերեն ձեռագրերի նկարներն ուսումնասիրելու և արտագրելու:

Լիասիրտ հաջողություն ենք ցանկանում:

1912—1913

<ԴՊՐՈՑԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ>

Իմ թղթերի մեջ մնացել է ինձ համար շատ սիրելի մի հին դոկումենտ <18>79 թվականից: Դա էն պայմանն <է>, որ [առաջին անգամ] կապում է մեր գյուղը Սահակ վարժապետի հետ և առաջին անգամ կանոնավոր ուսումնարան է բաց անում, որի առաջին աշակերտներից մինը եղել եմ ես: Դրանից առաջ էլ կար, բայց ավելի անկանոն: Էդ պայմանաթղթի մեջ ի միջի այլոց ասված է. «Հոգաբարձուքս մեկ տարվան ժամանակում վարձ խոսացինք Տեր Հովհաննիսյանիդ հատուցանել մի հարյուր երեսուն մանեթ, իսկ թիվ աշակերտաց պետք է լինի 35 հատ:»

Էս էն ժամանակն էր, [երբ մեր գյուղը 4—5 անգամ ավելի փոքր էր այժմվանից], երբ մեր գյուղում քսանը հինգ կոպեկ ձու էին ծախում և առնող չկար, իսկ յուղը ֆունտը [10 կոպեկ] մի զալթուն (10 կոպեկ), ում տանը ինչ շարժվեր — պետք է ղրկեին վարժապետի փայը, և ոչ ոք ղոնախ չէր նստեցնում իր սուփրին, մինչև վարժապետը բազմած չիներ վերի ծերին:

Այժմ մեր գյուղը մեծացել է 4—5 անգամ, աշակերտների թիվը անցել է հարյուրից, ձուն ծախվում է 4—5—ը մի շահի, յուղի ֆ<ունտը> դարձրել են 50 կոպեկ, և ուսուցիչը ոչ թե չի մեծարվում առաջվա նման, այլ ստիպված է կռվել ուսումնարանի և իր գոյության համար: Իսկ ռոճիկ 350 տուն գյուղը հարյուրից ավելի աշակերտների համար չի ուզում վճարել 250ո<ւբլուց> ավելի, էն էլ 180 ռուբլին դրսից՝ կուլտուրականից[1]) ստանալով, ուրիշ խոսքով ինքը — գյուղը տալիս է 70 ռուբլի և էդ 250 [ն] էլ թե ինչպես է տալիս, վարժապետին կամ վարժուհուն է միայն հայտնի:

[Էս պատմությունը ես բերում եմ, որպես տիպիկական մի երևույթ: Համոզված եմ, որ մեծ մասով էսպես է մեր աշխարհքում, շատ տեղ ավելի վատ, իսկ ավելի լավը — շատ քիչ]: Բայց պարտավոր է վճարելու 350 ռուբլուց ոչ պակաս, սրա հետ միասին և

բնակարան, վառելիք ու ծառա, որի համար ստորագրություն ունի տված Կուլտուրական Ընկերությանը։

Միթե կարծում եք մեր գյուղը չի կարող կատարել իր կապած պայմանները, միթե չի կարող դրանից ավելին վճարել և ավելի լավ ուսումնարան պահել։ Կարող է անպայման։ Եվ նա հազար ու մի կողմի վրա մեծամեծ ծախքեր է անում։ Նույնիսկ գյուղի ամեն մի «պաշտոնին» ավելի թանկ է նստում գյուղի վրա, քան ուսումնարանը։ [Բայց ուսումնարանի գործը էս դրության մեջն է, որովհետև ուսումնարանը գլխին կանգնած տեր չունի և ուսուցիչը իրեն պաշտպան չունի։ Էդ պատճառով էլ, ոչ թե տասնյակ տարիների ընթացքում չի հառաջադիմում, այլ հետադիմում է հաճախ և ենթարկվում է ծանր վտանգների]։

Վերցրեք Թիֆլիզի թեմական տեսչի 1911/12 թ. տեղեկագիրը։

Երկդասյան դպրոցներ ունենալու իրավունք ունենք, և 98 դպրոցից միայն մինն է երկդասյան, Ախալցխայինը 6 ամյա դասընթացով։ Ասում է, շատ հետաքրքրվեցի, ոչ միայն գյուղերի, այլև քաղաքային ծխ<ական> դպրոցներում մանկավարժական գրքեր ու ամսագրեր գտա շատ աննշան քանակությամբ։ «Նոր-դպրոց» հաղիվ կարելի էր տեսնել էս կամ էն դպրոցում։ Դասարանային պիտույքներ չկան։ [Դպրոցների] շենքերը մեծ մասամբ անտանելի են։ Սրա հետ միասին լսեցեք և էն վկայությունը, որ ծրագրային նյութերը թերի են ավանդվում։

Հիմի նայեցեք [հայ] ուսուցչի դասագնի ցանկին, սկսվում է 5 ռուբլուց։ Ուզում եք 5-ն էլ թողնենք, 6<ն> էլ, 7,8<ն> էլ սկսենք 10-ից։ Գիտեք ի՞նչ կնշանակի սա։— Ոռճիկ։ Գյուղ <ական> ուսուցիչն<ները> առհ<ասարակ> 30 ժամից ավելի են պարապում, շաբաթը — 38։ էն էլ, ասում է, կանոնավոր չեն ստանում, և ստիպված ապառիկի դիմելով, ավելի թանկ են վճարում ու ընկնում նեղության մեջ (էջ 39), և էն մարդկանց գրեթե կեսը (117-ը) ամուսնացած մարդիկ են, ընտանիքի տեր։ [Ապա նրա բարոյապես անպաշտպան] ու անապահով<....>

Եվ շատ բնական կերպով էս վկայություններին հետևում են հետևյալ տողերը։

«Ուսուցիչների սրտերը տաք չեն դպրոցների վրա։ Գիտեն, որ մի քանի ամիս են մնալու <էջ> 20։ Կան հոգնածներ, որ մեծ պահանջ են զգում հանգստի, թոշակի, կան և դառն փորձառության տեր մարդիկ, որոնք տասնյակ տարիներ շարունակ դառնացրել են նաև դեռահաս սերունդների կյանքը <էջ> 38։

Սրան ավելացրեք պետական դպրոցների աճումը <....>

1913

ՋԱՏԿԻ ՍՈՒՐԲՈՎ

Իմ երեխաներից մինը մի Զատկից առաջ մի գառն ուներ։ Ամբողջ օրը գրեթե զբաղված էր նրանով։ Տանում էր արածացնում, խոտ էր քաղում նրա համար, ստիպում էր, որ ուտի, ստիպում էր, որ ջուր խմի, մի խոսքով միանգամայն մտերմացել էր հետը։

Եվ անհամբեր սպասում էր, որ Զատիկը պիտի գա, շուտ-շուտ հարցնում էր, թե քանի անգամ էլ պիտի քնենք, որ գա, իր գառանն էլ ասում էր, որ նա էլ ուրախանա, թե Զատիկ պիտի գա։

Զատիկն եկավ. և հենց Զատկի առավոտը գառան մայունը կտրեց մեր տանից։ Մորթեցին։ Ու երեխան շատ զարմացավ, որ Զատիկն էս է եղել ու Քրիստոսն էլ էսպես...

Զատկի ու Քրիստոսի ամեն տեսակ բացատրությունը նրան ոչ մի բավականություն չտվին և նա մնաց մի ծանր տպավորության տակ։ Ես ստիպված էի՝ Զատկի լավությունը ցույց տալու համար, ձեռքս մեկնել դեպի ետ բացվող ծաղիկներն ու զարթնող բնությունը, իսկ գառան մորթելու մեղքը գցել Քրիստոսի վրայից ու համոզել, որ դրա հետ ոչ մի կապ չունի։

Եվ ճշմարիտ որ, Զատկի տոնին երբ մարդ կանգնում է ու նայում է Զատիկը տոնող, «Քրիստոս հարյավ» աղաղակող բազմության վրա — զարմանում է։

Ի՞նչ կա էդ օրը և ինչո՞ւ են մարդիկ ուրախանում և կամ ո՞վ է ուրախանում նրանցից։

Էդ օրը, գրեթե ամեն տան, ով կարող է, պարտավոր է մի գառան մայուն կտրացնել, ճոխ սեղան պատրաստել, շատ ուտել ու խմել և լավ հագնվել։ Մի խոսքով՝ արյան, որկրամոլության ու

շաբաթյան օր։ Եվ ոչ մի օր աղքատի ու հարստի տարբերությունը էնպես չի շեշտվում, ինչպես էդ օրը։

Մի օր, երբ ամենից շատ ուրախ են քահանաները, որ տեն-դային եռանդով տնից տուն են վազում շտապով, կիսատ-պռատ մի երկու աղոթք ասելու, որ Քրիստոսի անունով փող առնեն։

Ի՞նչ կա էս ամենի մեջ գեղեցիկ ու գաղափարական։ Եվ ահա իմ երեխայի էն վշտի նման մի վիշտ, որ պատմեցի, պաշարում է մարդու։ Էս ամենի մեջ ո՞ւր է Քրիստոսն ինքը, ո՞ւր է նրա անսահման սերն ու բարությունը, նրա աստվածային մեղմությունն ու խաղաղությունը, նրա հեզությունն ու անբնչասիրությունը...

Եվ դարձյալ նույն պատասխանը, որ նա ոչ մի կապ չունի էս ամենի հետ, նա դեռ հարություն չի առել մարդկանց սրտերում. և միայն մի բան, որ հաստատ է, որ հարություն է առել Զատիկին ու հարություն է առնում ամեն Զատկի և միշտ դարձնում է Զատիկն էնքան տենչալի ու գեղեցիկ, դարձյալ բնությունն է։ Զատիկն է, որ ինչպես մեր Նաղաշ Հովնաթանն է ասում.

«Վերանա ձմեռն և գա ամառն,
Կանաչի խոտըն և ծաղկի ծառն
Տերևախառն...[1])

Կամ ինչպես մեր հներն էին երգում.

«Մարտն կուգար ծաղկըններով,
Երկնից հաւերն կարդալով...
Յորժամ հայոց Զատիկըն գայր»։[2])

Իսկ Քրիստոսը — ո՛վ գիտի քանի մարդկանց սրտում է հարություն առել։ Անշուշտ շատ քիչ մարդկանց սրտում։ Եվ ո՛վ գիտի որտեղ են նրանք, ի՞նչ անկյունում, ի՞նչ զգեստի տակ... ով էլ որ լինեն, ուր էլ որ լինեն — էնտեղ օրհնյալ է հարությունն Քրիստոսի։

ԱՆԳԻՏԱԿԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ

Վրացական «Закавк. речь» թերթը նեղացել է, թե ինչո՛ւ Հայ Գրողների ընկերությունը դիմել է ուր հարկն է, որ Թիֆլիզի մեծ երգչի արձանի բացման առթիվ Ալրի կամ Թուրքի մեյդան կոչված հրապարակը, որի կողքին թաղված է Սայաթ-Նովան, կոչվի Սայաթ-Նովայի հրապարակ։ Սրա մեջ նկատում է հայերի կողմից Թիֆլիզը զավթելու դիտավորություն և վատ կրքեր է հուզում

Նույն տեսակ աղմուկ է բարձրացրել ռուսական «Голос Кавказа» թերթը Խ. Աբովյանի արձանի համար, որ կանգնելու է Երևանում, և հորդորում է իշխանությանը՝ ետ առնել իր տված իրավունքը։

Սրանով, իհարկե, իբրև թե ամեն մեկն իր հայրենիքի ու ազգի շահն է պաշտպանում հայերի դեմ։ Մի կողմ թողնելով ավելի լայն հայացքը, ես ուզում եմ նկատել, թե էս մարդիկ լավ էլ չեն հասկանում, թե ինչի դեմ են խոսում, և հենց թեկուզ իրենց նեղ տեսակետից էլ եթե առնենք խնդիրը — դեմ չպետք է լիներին ոչ մեկը և ոչ մյուսը։

Ահա թե ինչո՛ւ։

Խ. Աբովյանը մի մոլեռանդ ռուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ՝ միաժամանակ մի ոգևորված ջատագովություն է ռուս ազգին ու նրա պետական ուժին, և առաջ քաշել Խ. Աբովյանին, կնշանակի հայերի մեջ արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ռուս ազգն ու ռուս պետությունը։

Եվ հանկարծ... էս մարդու հիշատակին դեմ է մի ռուս թերթ։

Ի՞նչ խոսք, որ սա չի հասկանում, թե ո՛րտեղ և ո՛ւմ դեմ է խոսում, և եթե չար է, նեղսիրտ ու փոքրոգի, ապա նաև անգիտակից է, և անգիտակից թշնամի ամենից առաջ իր ազգին ու հայրենիքին, որովհետև ուզում է ետ մղել իր ազգի ու հայրենիքի մեծ բարեկամներին և նրանց տեղը ստեղծել՝ թշնամիներ։

Նույնը պետք է ասեմ և վրացական «Закавк. речь»-ին։

Ո՞վ է Սայաթ-Նովան։ Մի երգիչ, որ համազո՛ր ուժով ու սիրով երգել է թե՛ հայերեն, թե՛ վրացերեն և թե՛ թուրքերեն։ Մի համակովկասյան երգիչ, որ ամենից քիչ երգել է հայերեն։ Մի երգիչ, որին վրաց գրականության պատմությունը անվանում է՝ Վրաստանի երգիչ։ Բաց արևք վրացի պրոֆ. Ս. Խախանովի վրաց գրականության պատմության երրորդ գիրքը, էջ 218, կտեսնեք Սայաթ-Նովա վերնագրով մի առանձին գլուխ, որ սկսում է հետևյալ տողերով.

«Աղա Մահմադ խանի Թիֆլիսն առնելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ Սայաթ-Նովան։ Նա Հերակլ II թագավորի պալատական աշուղն էր (трубадур)։ Հարյուր տարի սրանից առաջ Սայաթ-Նովայի անունը հին Թիֆլիզում հռչակված էր ամենուրեք, թագավորական պալատից սկսած մինչև արհեստավորի խրճիթը»։

Եվ վերջանում է հետևյալ խոսքերով։

Սայաթ-Նովան միայն վրացերեն չի գրել, այլ նաև հայերեն ու թուրքերեն, որ դեռ մնում են անտիպ»:

Սրա մեջ ասված է միայն, որ նա ծնունդով հայ էր, և գրել է նաև հայերեն:

Եվ էս տեսակ մի երգիչ, որին հենց իրենց—վրացիների ասելով ամենից շատ իրենք են երախտապարտ, մի երգիչ, որ հավասար թանկ է Կովկասյան բոլոր ազգությունների համար, մի երգիչ, որ միայն սեր է արծարծել դեպի վրացին, վրացական լեզուն ու Վրաստանը, մի երգիչ, որ Թիֆլիզ քաղաքի ամենամեծ պարծանքներից մինն է, հանկարծ իր հիշատակով, իր անվանը տված հարգանքով շարժում է վրացիներից ոմանց մաղձն ու զայրույթը:

Եվ էդ ոմանք, թեկուզ և ազգով վրացի, հայերին նեղսիրտ, չարակամ լինելուց առաջ Վրաստանի թշնամիներն են, որովհետև վեր են կենում ու խոսում նրա հոյակապ ու սիրելի երգիչներից մեկի — Սայաթ-Նովայի անվան ու հիշատակի դեմ:

Այո՛, սրանք անգիտակից թշնամիներ են ամենից առաջ հենց իրենց հայրենիքին ու ազգին, ռուս թերթը՝ ռուսին ու Ռուսաստանին, վրացական թերթը՝ վրացուն ու Վրաստանին:

1914

ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՅՍՆ ՈՒ ԴԱՐԵՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թե ինչ է քաշել հայ ժողովուրդն իր երկրում, մինչև էսօր դեռ ամբողջովին հայտնի չի՝ ոչ արևմտյան Եվրոպային, որ միայն վերջին ժամանակներս է զբաղվում հայերով ու հայկական հարցով, ոչ Ռուսաստանին, թեև հարյուր տարուց ավելի է նա տիրում է հայ ժողովրդի մի մասին և պատերազմներ է մղում Հայաստանում, ոչ էլ նույնիսկ հայ ինտելիգենցիային, որ տապակվում է հայկական խնդիր կոչված կրակի մեջ։ Դարավոր անլուր տառապ<անքների> բոլոր նյութերն ու դոկումենտները դեռ ի մի չեն բերված ու դեռ մի պատմություն չկա դրանցից գրված նույնիսկ հայերեն լեզվով։ Բայց ով որ շատից քչից ծանոթ է էդ ցաք ու ցրիվ վկայություններին, կհաստատի, որ էն տեսակ տանջանք ու տառապանք, ինչ որ հայ ժողովուրդն է տեսել արևելյան բռնակալներից ու բարբարոսներից, չի տեսել ոչ մի ժողովուրդ, ոչ մի աշխարհում։

Ու վաղուց էլ, անվերջ կռիվներից ու կոտորածներից, անսպառ թշնամի բազմություններից ուժասպառ եղած, ընկճված ու քայքայված հայ ժողովուրդը [իր հույսը իրենից կտրած] խաչակրաց արշավանքներից ի վեր իր աչքը ձգած է եղել Արևմուտքի քրիստոնյա լուսավոր ազգերին, նրանցից էլ սպասել իր փրկությունը։ Երբեմն Ֆրանսիա, երբեմն Գերմանիա, երբեմն Իտալիա, երբեմն Անգլիա — վերջապես նրա հույսը հանգել է Ռուսաստանի վրա։ Եվ էն օրվանից, որ իր հույսը դրել է Ռուսաստանի վրա ու նրա հետ վեր կացել, էն օրվանից մինչև էսօր հայ ժողովրդի ամբողջությունը առանց վարանումի ու անշեղ գնում է իր պատմական արյունոտ ճանապարհը։ Եվ իբրև հավաստիք իր ազգային զգացմունքների, տվել է «Վերք Հայաստանին», որ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հայ ժողովրդի վերքի մրմունի հետ միասին, մի հզոր ջա-

տագովություն ու օրհներգ ռուս ազգին ու իր ուժին, և որ սակայն դեռ անծանոթ է մնում ռուսներին։[1]) Մի գիրք, որ հայ ժողովուրդը պաշտում է տակավին ու իր նոր գրականության հիմնաքարն է համարում։ Նա մինչև էսօր իր եկեղեցիներում ծնկաչոք կարդում է Սիմեոն կաթողիկոսի արտասավախառն աղոթքը Ռուսաստանի հզորության ու ռուսական զենքի հաջողության համար։ Վերջապես մինչև էսօր նա, հայ ժողովուրդը, իր տանը բաժակը ձեռքն առնելիս բարեմաղթում է, որ աստված ոսի թագավորի թուրը կտրուկ անի։ Եվ Կովկ<ասում> վարած բոլոր պատերազմներում ամեն տեղի հայ ժ<ողովուրդը> ապացուցել է իր էդ զգացմունքի խորությունը, հաստատությունը բազմաթիվ առիթներով։

Դժբախտաբար էս ամենը լավ չեն նկատել ու ըմբռնել Կովկասում ծառայող ռուս պաշտոնյաներից ոմանք, և նրանցից եղել են էնպեսները, որ նույնիսկ իրենց հակառակ ընթացքով պատճառ են դարձել շատ թյուրիմացությունների ու ժամանակավոր սառնության։ Բայց նրանք, որոնք պարզ աչքով են նայել գործին ու ճշմարիտ գաղափար են կազմել, նրանց բոլորի վերաբերմունքը եղել է պարզ ու կտրուկ — հայասեր։ Նրանք ոչ միայն լավ են վերաբերվել հայերին, այլև [հաճախ], երբ պետք է եղել, որ իրենց ստորադրյալներից մեկն ու մեկից [աննպաստ] տեղեկություն են ստացել հայերի մասին, [նշանավոր] Երմոլովի նման չեն վարվել,[2]) [և] հրամանագրել են՝ ոչ թե դանգատվել հայերի վրա, այլ հավատալ հայերին։ Եվ էս մարդկանցից ոչ մինը, ինչքան մենք գիտենք, երբեք չի ղղջացել իր տածած հավատի ու [վերաբերմունքի] ընթացքի համար, [այլ ընդհակառակը փառաբանվել է իր գնացած շիտակ ճանապարհին]։

Էսքան բան անցնելուց հետո, <1 անընթ.> թե հայերի և թե ռուսների մեջ քիչ չի էն անտեղյակ մարդկանց թիվը, որոնք կարծում են, թե նոր բան են հայոց կամավորների խմբերն ու ռուս-հայկական լավ հարաբերությունները, փոխադարձ հավատն ու հույսերը։ Ահա հատկապես դրանց համար տպագրության ենք տալիս մի դոկումենտ, մի ճառ, որ սրանից գրեթե հարյուր տարի առաջ, հայ կամավորների խմբերը դեպի պատերազմ ճանապարհ դնելիս՝ արտասանել է իր ժամանակի նշան<ավոր> ուսումնական-բանաստեղծ Ալամդարյան քահանան՝ հետագա վարդապետ պիտանական և Ներսիսյան դպրոցի տեսուչ։ Էս դոկումենտը սիրալիր կերպով մեր տրամադրության տակ է դրել հ<այր> Գյուտ ավագ քահանա Աղանյանը, որ էս տեսակ դոկումենտների [մի] ահագին ժողովածու ունի, և որոնցից հրատարակել է մինչև էսօր տասը մեծ հատոր — Դիվան Հայոց Պատմության։ Ահա թե ի՛նչ է

ասում էդ դոկումենտը, որ գրված ու ասված է 1827 թվականի Մայիսին 15-ին։[3])

Եան ասացեալ յաւուր օրհնութեան, դրօշակի եւ երդմնեցուցանելոյ զինքնական գունդ զինուորութեանն Հայոց։

Շնորհիւ ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի, գիտութեամբն Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ Բ. Պետ. ա. 2։

Անցանէ դարն հինգերորդ՝ ո՛վ որբք Հայաստանի՝ յորմէ հետէ զ՛րկեալ կամք ՚ի թագաւորութենէ, ՚ի հայրենյաց և յամենայն ժառանգութենէ նախնեաց մերոց, հնծմք ընդ ծանր լծոյ Քրիստոսատեաց Պարսից, վշտացեալ թախծեալ ընդ անրով ծառայութեան այսոցիկ բարբարոսաց։ Կողոպտեցին սոքա ի մէնջ ոչ զարտաքին ստացուածս և եթ, այլ յաւար հարին և զբարոյական և զբնատուր ձիրս Հայկազանցս։ Մեք ստուերք եմք մերոց նախահարց. չե՛մք ժառանգորդք արութեանց նոցա և առաքինութեանց, այլ՝ ուրուական նոցա։ Յառեցե՛ք զաչս ձեր ի Հայրենի պատմագրութիւնս՝ գծագրեալս արիւնազանգ տառիւք՝ և հաւաստասջիք յայս դառնաղէտ ճշմարտութիւն։ Յանցուածք մեր զինեցին ի վերայ մեր զվրէժխնդիր աջ Արդարադատութեանն երկնից և ընկեցին զվատաբաղդն Հայաստան ի վիհ չքութեան։ Տէ՛ր Աստուած հարցն մերոց՝ արդա՛ր ես յամենայնի, զոր ածեր ի վերայ մեր, և ամենայն գործք քո ճշմարիտ են և ուղիղ են ճանապարհք քո, և ամենայն դատաստանք քո ճշմարտութիւն։ Ջի մեղաք և անօրինեցաք յապստամբ լինելն ի քէն, և առալել մեղաք յամենայնի։

Այժմ, Քրիստոսանուն զինուորութիւն՝ լցեալ է չափ սրամտութեանն Աստուծոյ։ Աչ Տեառն՝ որ ցարդ կուիէր զմեզ, այժմ սրբէ զարատասուս մեր. կանգնէ նմեզ յանկմանէս մերմէ. բանայ զդրռնս ճոխ ողորմութեանց իւրոց և գթութեանց ի ձեռն Գերամբարձ Օծելոյ իւրոյ Ամենաբարեպաշտ Օգոստոսապերճ Կայսեր մերոյ։ Դարձուցանէ զսուգ մեր յուրախութիւն, զերծու ի մէնջ զքուրձ մեր եւ զգեցուցանէ մեզ զուրախութիւն։

Սքանչելի է Աստուած ի շաւիղս իւր. սքանչելի է և Օգոստափառ Օծեալ նորա խաղաղութիւն և մխիթար որբացելոյն Հայաստանի։ Բարութիւնն Աստուծոյ և Օծելոյ նորա ոչ շատ համարի դարձուցանել մեզ զկորուստս մեր. ոչ բաւական համարի վերականգնել զմեզ յանարգութենէ մերմէ. ոչ շատանայ ապաքինել զվրէս մեր, այլ անգնին տնօրէնութեամբք իւրովք խրախուսէ զմեզ՝ զատապեալ որդիքս Հայաստանի ի գործակցութիւն ազատութեան մերոյ, նորոգութեան ամենասիրելի Հայրենեաց մերոց ի բազմադարեանն իւրոց փլատակաց։ Ա՛յս է նորոգումն աջոյ Բարձրելոյն։

Զայն Աստուծոյ, ձայն թագաւորի կոչեն զձեզ՝ Հո՛ս փոքրիկ՝ յասպարէզ փառաց և առաքինութեան: Արիացէ՛ք և դիմեցէ՛ք յայն հսկայօրէն քայլարկութեամբ: Դուք յառաջ մատչիք այժմ երդնուլ յանուն ամենակարողին Աստուծոյ յանդիման սուրբ Աւետարանի և Խաչի վասն հաւատարիմն ծառայութեան Ամենաբարեպաշտ թագաւորի և Կայսեր Նիկօլայ Պավլովիչի: Գործք ձեր, վարք, ջերմեռանդութիւն եւ փոյթ առ լրութիւն ուխտի՝ զոր ուխտէդ այժմիկ ի սրբութեան աստ՝ ընթացակի՛ց գտցին ձեզ ընդ բովանդակ կեանս ձեր:

Մի՛ խոտորեսջիք ի շաւղէ բարեպաշտութեան, արդարութեան և հաւատարմութեան Աստուծոյ, Ինքնակալ Կայսերն եւ Հայրենի աշխարհի ձերոյ: Գո՛ւն գործեցէք արեամբ չափ կատարել զամենայն պարտաւորութիւնս, զոր յանձն առիք այսօր առաջի երեսաց Աստուծոյ: Եւ Տէր Աստուած մեր՝ որ անտեսաբար հովանաւորէ զձեզ, և որ մերձն է առ ամենեսեան՝ ոյք կարդան առ նա, առ ամենեսեան՝ ոյք կարդան առ նա ճշմարտութեամբ, Առցէ զչէն եւ զասպար իւր և յօգնել ձեզ յարիցէ:

Դրօշակդ այդ՝ որ այսօր վերակարդալով զհաւատ անուն Տեառն սրբեցաւ և տուաւ փնդի ձերոյ՝ է առհաւատչեայ սիրոյ Աստուծոյ և Օծելոյ նորա առ ձեզ: Պահեցէ՛ք զայս անգին աւանդ իբրեւ զբիբ ական: Ահաւասիկ ամաչեսցեն եւ պատկառեսցեն ամենայն հակառակորդք ձեր. և եղիցին իբրեւ զչեղեալս, և կորիցե՛ն ամենայն դատախազք ձեր: Լուիցէ՛ ձեզ Տէր յաւուր անձկութեան. օգնակա՛ն եղիցի ձեզ անունն Աստուծոյ Յակովբայ: Առաքեսցէ՝ ձեզ Տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի Սիովնէ ընկալցի՛ զձեզ. Ամեն:

Ի Յարութիւն աւագ քահանայէ Ալամդարեանց:

Ի 15 մայիսի 1827 ամի:
Ի Տփխիս:

Այո՛, հին են թե՛ հուլսը, թե՛ էդ հուլսն իրագործելու ճանապարհը: Եվ երկար ժամանակի փորձը ցույց է տվել, որ նաև անսխալ է, որովհետև անհատները կարող են սխալվել, բայց ազգերը հեշտ չեն սխալվում: Հայ ժողովուրդը, որ ապավինել է հզոր Ռուսաստանին, ու [մարդավայել] կյանք է ուզում, ո՛չ թե նրա համար, ո՛չ թե միայն նրա համար, որ գոյություն ունենա աշխարհքում, այլ նրա համար, որ էդ գոյության մեջ կա մի բարձր խորհուրդ, որ թանկագին է դարձնում ամեն մի գոյություն: Թե չէ, եթե միայն լոկ ֆիզիկապես ապրելու խնդիրը լիներ՝ վաղուց ու

շատ հեշտ վճռված կլիներ խնդիրը — հարմարված ու ձուլված կլիներ նրանց, որոնց դեմ մաքառում է դարերով։

Նվ էդ մարդավայել կյանքը նա անպատճառ կունենա[1]։

Մյուս կողմից, եթե Ռուսաստանը վեր է կացել իր անծայր տափաստաններից ու հորդում է դեպի իր ափերը, դրա խորհուրդը չի սպառվում էս կամ էն մինիստրի մտածած քաղաքականությունով։ Ո՛չ, մի ավելի մեծ խորհուրդ կա դրա մեջ <....>

---

[1] [պետք է ստանա]։

1915

ԹՈՒՆԿ ՄԱՐԴՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Աղետալի գաղթականությունը, որ Տաճկաստանից գետացած եկավ ու ծովացավ Էջմիածնի շուրջը, շատ բաների հետ հանդես բերավ և մի երևույթ, թե ինչ խելագար անձնվիրության է ընդունակ հայ կինը — հայ աղջիկը։ Էջմիածնում գրեթե ամեն գործի մեջ ամենից առաջ հարկավոր էր սիրտ, սրտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ էր մանավանդ Մանուկների ապաստարանում, որ միշտ Որբանոց կոչվեց։

Ահա էստեղ էր, մի քանի հազար կեղտոտ, մերկ, սովալլուկ ու հիվանդ երեխաների մեջ էր, որ հայտնվեցին նրանք, և թե ինչ էին անում էդ Որբանոցի մեջն ու շուրջը՝ ամեն տեսանելիս հուզմունքից կուլ էի տալիս արտասուքներս և երբե՞ք, երբեք չեմ մոռանալու ահռելի աղետի մեջ՝ սովի, տիֆի, խոլերայի և ամեն տեսակ ցավի ու տանջանքի դեմ երես երեսի կռվի դուրս եկած էդ չքնաղ մարտիկներին։

Դրանցից ամենամոլեռանդներից մեկը եղավ օր. Սաթենիկը։[1])

Երբ Որբանոցի գործը վերջանալու վրա էր ու սեպտեմբերն էինք մտնում, ինքն էլ պիտի գնար իր վարժուհության պաշտոնին, նա տակավին աշխատում էր մնա էջմիածին ու շարունակի գործել հիվանդանոցներում։ Դիմեց դպրոց՝ արձակուրդ խնդրեց — մերժեցին։ Ինձ դիմեց, որ միջամտեմ։

Ես էլ, նկատելով, որ շատ է հոգնած, որ Որբանոցի երկու հարյուրից ավելի ծառայողներից մի քսան-երեսուն հոգի հաղիվ են ազատվել հիվանդությունից ու քանիսն էլ մեռել են — չմիջամտեցի ու խորհուրդ տվի, որ մի քիչ հանգստանա։

— Ի՞նչ հանգստանալու ժամանակ է... Ասավ ու գնաց պաշտոնից հրաժարվելու։

Մյուս օրն էլ, թե հետևյալ օրն էլ ճաշին նկավ, գրեթե ընկավ աթոռի վրա ու ծիծաղելով ասավ.

— Ճշմարիտ, որ էսօր շատ եմ հոգնած...

Մինչև ճաշի վերջը չկարողացավ նստի. ներողություն խնդրեց, կողքի մահճակալին պառկեց ու...

Հիվանդ էր արդեն։

Էս օրվանից ուղիղ մի ամիս է ասածս՝ և ահա թաղում ենք նրան։ Ու ես ինձ հարց եմ տալիս։ — Բայց ինչո՞վ էր նա նշանավոր, ինչո՞վ էր նա թանկ, ինչո՞ւ է ինձ հուզում նրա մահը։

Նա թանկ էր, որովհետև էն հազվագյուտ անձնավորություններից մեկն էր, որոնք ավելի շատ ուրիշների համար են ապրում։

Չէ՞ որ աշխարհքում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար. մարդիկ կան, որ ապրում են ուրիշներին տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար։

Եվ, ավա՜ղ, ամենից քիչը հենց սրանք են աշխարհքում։ Սրանցից, էս քչերից, էս թանկերից մինն էր օրիորդ Սաթոն։

ԿԻՆՆ ՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՆԿՈՒՄԸ

Եթե ժողովուրդների հարաբերությունների մեջ կինը հաճախ էական դեր է խաղացել, ապա մահմեդական պետությունների մեջ՝ մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների հարաբերությունների մեջ կնոջ խնդիրը եղել է կենտրոնական խնդիր։

Հայը կամ վրացին՝ իրենց կրոնի ոգով ու դարավոր տրադիցիաներով՝ տղամարդուն ու կնոջը մի մարմին, մի բարոյական ամբողջություն ընդունելով և կնոջը ճանաչելով իր գոյության կեսը՝ դրել է նրան իր օջախի գլուխը, ուր և կենտրոնացել է կյանքի վայելքներն ու երջանկությունը։

Մահմեդականն ընդհակառակը՝ կնոջն էլ նկատել է իբրև կյանքի վայելքներից մինը, փակել է հարեմում ու պահապաններ է դրել վրեն հսկելու։ Եվ աշխատել է՝ ինչքան կարելի է շատ ձեռք բերի էդ վայելքից, քանի որ իր կրոնն ու սրբազան ադաթն է թելադրում, թե կարող ես չորս օրինավոր կին պահես, իսկ հարճ՝ ինչքան կամենաս կամ միջոդ կների։

Հարկավ, շատ լուրջ պատճառներով, նրանցից ոչ մինը անշեղ ու անխտրոր չի իրական կյանքի մեջ, բայց ընդհանուր առումով էապես են նրանց բարոյական հայացքները, որ հիմք են ծառայել

գործնական վերաբերմունքների և էապես են նրանց ճանապարհները, որ առաջնորդել են մեկին՝ դեպի օջախը, մյուսին՝ դեպի հարեմ։

Առհասարակ կարծում են, թե հարեմը ստրկություն է կնոջ համար։ Դա սխալ է։ Հարեմը ստրկություն չի, այլ շատ ավելի ցած ու ամոթալի մի վիճակ։ Ստրուկը կարող է ասել, թե ես աշխատում եմ ու իմ աշխատանքով հա՛մ ուրիշներին եմ պահում, հա՛մ ես եմ ապրում և ավելի շատ ուրիշներն են ապրում իմ աշխատանքով։ Իսկ հարեմի կինը ոչ միայն չի աշխատում ու ոչ ոքի չի պահում, այլ ինքն էլ ապրում է իր էգության հաշվին. մի դրություն, որ, եթե չեմ սխալվում, չկա ամբողջ կենդանական աշխարհում և միայն մարդն է ստեղծել, զարգացրել ու վերջը պսակել հարեմով։

Էապեսով էլ հայտնի է, որ մահմեդականը կին չունի, կին չունենալով՝ տուն չունի, ընտանիք չունի, բարոյական հաստատուն, ամուր հիմք ու ապավեն չունի։ Մենակ ու անապավեն մարդ է, դրա համար էլ դրսից տուն չի գալիս, ձիուց ցած չի իջնում, զենքը վեր չի դնում, մնում է մի տեսակ դուրսը, միայն իր զենքին ապավինած, միշտ պատերազմի պատրաստ ու պատերազմասեր, հետևաբար և անհանգիստ ու վտանգավոր հարևան։

Շատ կսխալվեն նրանք, որ կարծեն, թե մեր «Վերք Հայաստանին» մի բացառիկ դեպքի պատմություն է, որ սկսվում է առեվանգվող քրիստոնյա աղջկա աղաղակով, որին հետևում են հայ ժողովրդի անեծքը, զայրույթը ու տաք գլուխ Աղասու, այսինքն երիտասարդության զարկը։ Ոչ թե հայության, ամբողջ Կովկասի պատմությունը էս տեսակ «Վերքերի» և սրանց մոտավոր ու հեռավոր հետևանքների պատմությունն է մեծ մասամբ։

Եվ զարհուրելին էն է, որ տուրիշ կերպ չէր էլ կարող լինել, անկարելի էր։ Պետք է լիներ էն, ինչ որ եղավ։

Ստատիստիկան ցույց է տալիս, որ բոլոր ազգերի մեջ գրեթե հավասար են մարդ ու կին։ Հազար տղամարդու դեմ գալիս է հազար ու վեց կամ յոթը կին։ Եթե կան ազգեր, որոնց մեջ կինը պակաս է տղամարդուց, էդ էլ գլխավորապես հենց էն մահմեդական ազգերն են, որոնց օրենքով ամեն տղամարդ կարող է մի քանի կին ունենա, հարեմ պահի։

Արդ, հարց է առաջ գալիս. եթե իրենք չունեին՝ ո՞րտեղից էին էդքան կին հավաքում իրենց հարեմները։

— Իրենց հարևան ու հպատակ ժողովուրդներից։

— Կամքո՞վ...

— Ո՛չ, ջարդում էին, խլում, զոռով տանում։

Եվ էսպես էլ դարերի ընթացքում մահմեդական տիրապետության տակ վրացի ժողովրդի հուշակավոր գեղեցկությունը պատիժ դարձավ իրեն համար: Նա ստիպված էր, իր պարտության դեպքում, տարեկան հազարավոր վրացուհիներ ղրկի մահմեդական հարեմները, իբրև տուրք: Վրաց Թեյմուրազ թագավորի վկայությամբ միայն Գուրիայի արքեպիսկոպոսը տարեկան տասներկու հազար աղջիկ էր ուղարկում Թուրքիա, ուրիշներն էլ սուլթանին նվեր: Եվ դեռ մինչև էսօր էլ մահմեդական զորքերին, Կովկասյան պատերազմների ժամանակ, «Գյուրջիստանի գյոզալների»՝ Վրաստանի սիրուհիների անունով են ոգևորում: Իսկ ոտի տակ ընկած Հայաստանում շարունակ աղջիկներ էին ժողովում ու դուրս քաշում, և հայերը ստիպված էին իրենց աղջիկներին տներում փակել, կանանց երեսը ծածկել, գեղեցկուհիներին տգեղացնել, այլանդակել, կամ տղի շորեր հագցնել, թեև տղան էլ չէր ապահոված էդ համատարած հարեմում:

Էլ չեմ ասում գերեվաճառությունը հարեմին կին մատակարարելու համար, և գերեվաճառության շուկաները՝ Երևանը, Բայազեդն ու մանավանդ Ախլցխան, ուր միայն 1829 թվականի ռուսների հաղթանակից հետո Ադրիանապոլսի դաշնագրով մեղմացավ հայ ու վրացի գերիների առևտուրը:

Բայց չէ՞ որ աղջիկների ու կանանց հափշտակություններով ու հարեմները լցնելով պատուհասը չէր վերջանում: Էդ հարեմները պետք է պահվեին: Հարեմն ինքն իրեն պահել չէր կարող, որովհետև նա ինքը պարապ ու անգործ կանանց մի բանտ էր կամ տուն, ինչպես կուզեք: Հարեմի տերն էլ ոչ վաճառական էր, ոչ արհեստավոր, ոչ երկրագործ: Վերջապես ինչ էլ որ լիներ, անկարելի բան էր մի մարդու արդար աշխատանքով էս ամենի ծախքը հոգալ: Եվ ահա անխուսափելի կերպով սկսվում էր մի նոր արշավանք. այժմ էլ պետք էր ապրուստ կողոպտել:

— Ո՞րտեղից:

— Իհարկե, դարձյալ նույն տեղից, չորս կողմից, կողքի հարևանից...

Սկսվում էին նոր կեղեքումներ, նոր անիրավություններ, նոր բողոքներ ու նոր ընդհարումներ:

Եվ եթե էստեղ Կովկասի պատմությունից, գրականությունից ու դոկումենտներից էս առարկայի վերաբերյալ փաստեր առաջ բերեի՝ ընթերցողը միանգամայն պարզ կտեսներ, թե ինչո՛ւ էին հայն ու վրացին դարերով անդադար դիմումներ անում Ռուսաստանին՝ գալ իրենց ազատել մահմեդական տերությունների լծի

տակից. ինչո՞ւ էին հանձն առնում ամեն զոհաբերություն և ինչո՞ւ էր նրանց հարցի անունը «կյանքի, գույքի ու պատվի» հարց:

Եվ, պատերազմ սկսելով մահմեդական աշխարհի հետ, ճիշտ էին ասում ռուս դիվլոմատները, թե մեզ պրոպագանդիստներ չեն հարկավոր Պարսկաստանում ու Տաճկաստանում. մեր ամենալավ պրոպագանդիստները իրենք պարսիկներն են, թուրքերն են:

Էս բանը չէր նկատվում միայն հարեմում հյուծված, մեղկության մեջ միտքն ու հոգին թմրած, ու, ոչ թե պետական իմաստությունը, այլև հասարակ մարդկային խղճմտանքն ու առողջ դատողությունը կորցրած մահմեդական տիրող ու կառավարող դասակարգը: Մինչև որ զզվեցրեց ու զայրացրեց վերջնականապես, մինչև որ տանել տվեց միանգամ ընդմիշտ, և բոլոր ժողովուրդները իրար հետևից կարվեցին, ազատվեցին անիծելով ու նզովելով:

Եվ էսօր, երբ մենք էլ ամենից վերջը արյունաթաթախ ու ծվատված, նրանից միանգամ ընդմիշտ պոկվելու, ազատվելու վրա ենք, ասես թե նորից լսում ենք մեր հազար հազարավոր հերարձակ քաշքշվող անբախտ աղջիկների ու կանանց ծղրտոցը ու նորից ամրանում ենք մեր պայքարի ճանապարհին մեր հզոր պաշտպանի ու դաշնակցի — մեծ Ռուսաստանի հետ և պարզ գիտակցում ենք, որ անխուսափելիորեն էստեղ պետք է հասնեինք, որ անկարելի էր ապրել նրա հետ:

Եվ նույնիսկ նա ինքը, մահմեդական աշխարհը, նրա ամեն մի ազգն ու պետությունը, եթե ուզում է ապրի, պետք է հրաժարվի ո՛չ թե հարեմից արտաքուստ, այլև հարեմական հայացքից — ներքուստ: Անկարելի բան է և՛ հարեմ պահել, և՛ առողջ պետություն, անկարելի բան է և՛ հարեմն ունենալ, և՛ հառաջադիմել ու մտնել հառաջադեմ ազգերի շարքը: Մի հանգամանք, որ արդեն զգում է մահմեդական աշխարհքի առողջամիտ մասը և ձգտում է կանգնել նոր ճանապարհի: Եվ անշուշտ նրանից հետո նոր ճանապարհին հետզհետե հաղթվելու, մոռացվելու են անցյալի բոլոր դառնությունները ու դժբախտ դեպքերը և ստեղծվելու է իրար հետ, կողք-կողքի եղբայրորեն ապրելու հնարավորություն:

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿՆԵՐԻ ՇՇԱՐՀՈՒՄ

Տաճկահայաստան...

Տեսանք...

Գոնե մի մասը: Թուրքիկ կերպով, բայց թեկուզ թուրքիկ՝ ինչ որ չի կարելի հասկանալ երկար ու բարակ պատմություններից:

Եվ [միայն] տեսնելով կարելի է հասկանալ, լսելով բան չի դառնալ։

Ջտեսանք միայն նրա երեկվա տիրողին — թուրքին ու քրդին։ Նրանք մեր սահմանից սկսած գրեթե ամեն տեղից խուսափել են ռուսական բանակի ու հայ կամավորների առջև թողնելով իրենց հետքը։ Եվ ինչ է իրենից հետքը — հրկիզված գյուղեր, ավերակներ, ամայություն, սով ու դիակներ ու դիակներ... քրդի ու թուրքի հետք — Տեսանք նրանց հռչակավոր բեկերի — հայ ժողովրդի մշտական սարսափների որջերը, մի մի ցեխից ծեփած խղճուկ օթախներ, եռևները կամ կողքներին էլ կուչ եկած իրենցից ավելի խղճուկ օթախ նեղլիկ ու վանդակապատ լուսածակերով։ [Էս] մինը Ալի բեկի ամարաթն է, մյուսը Վալի բեկի, երրորդը Ահմադ բեկի, չորրորդը Մահմադ բեկի, Հասան բեկի կամ Հյուսեին բեկի... կողքներն էլ իրենց կանանոցը։ Եվ ինչ են դրանք, էդ բեկերը, մի-մի կեղտոտ, կիսավայրենի թշվառական, որոնց բոլոր ուժը նրա մեջ է կայանում, որ արտոնություն ունեին ամեն լրբություն անելու... Կանանոցումն էլ էս ինչ ու էն ինչ տեղից, [ավելի] հաճախ հայերից, փախցրած հարս ու աղջիկներ են, որոնցից ամեն մինը ունի իր սրտաճմլիկ պատմությունը։ Տեսանք և էդ «ամարաթների» չորս կողմը կուչ եկած <1 անընթ.> ավեր մկնաբները, էդ բեկերի մարդկանց, էսպես ասած, բնակարանները։ Դեպք եղավ, տեսանք և էդ մարդկանցից — տաճկական հովանավորությունից դուրս — իր սանձարձակությունից դուրս,— անձնատուր եղած, զինաթափ եղած, անճար ու խեղճ մի խուժան... որ մինչև էսօր թալանելով է ապրել, այժմ էլ ուզում է թալան տալով գլուխն ազատի... որոնք պատերազմի սկզբից մի երկու ռուս կազակների հետ վարվեցին էնպես, ինչպես [միշտ] հայերի հետ էին վարվել...

[Քուրդն ու թուրքը] հայի գյուղերն են ավերել, մյուս կողմից հայր՝ նրանցը։ [Բայց] իհարկե ավելի հայերն են տուժել, որովհետև նրանք՝ քուրդն ու թուրքը իրենց զորքի հետ քանդելով ու ջարդելով ետ են գնացել և [մենք գնում էինք նրանց հետքերով][1]։ [Նրանք ավելի ապրանքով ու ապրուստով են տուժել]։ Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերի, գլխավորապես տղամարդկանց, ու հետները տարել գեղեցիկ կանանց, և եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի ու հայ կամավորների սարսափը շատ չի մոտ եղել, բարբարոսական գործողություններ են հորինել։ Երեխաների ճակատներին մեխ են զարկել, խաչել են, կենդանի մարդկանց դանակահան

[1] Լուսանցքում գրված է՝ [Եվ նրանց հետքերը... ամեն կողմ ավերակ է ու դիակների գարշահոտություն։ Ճանապարհների վրա դիակներ, գետափերին դիակներ։ Վանա լիճը չորս կողմից դիակներ է դուրս ձգում]։

մասեր կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացրած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Մնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ ծնողներին:

[Եվ] էսպեսով դազանության են հասցրել նաև շատ հայերի, ու կործանել են մեր ցեղը ոչ միայն ֆիզիկապես այլև բարոյապես: Ասում են, իբրև թե թուրք ու քուրդ ժողովուրդը համաձայն չի եղել հայերին կոտորելու, թուրք կառավարությունն է սարքել... Մի, և կարծեմ միակ, հայտնի քուրդ ինտելիգենտն ասել է՝ քրդերին պետք է ներել էդ բոլոր չարությունները — նրանք ջահել ժողովուրդ են, ջահելություն են անում...

Մի բարեհոգի անձնավորություն էլ էն կարծիքին է, որ մեղքը քրդերն են[1]...

Բայց թողնենք առայժմ էս խաղաղ ժամանակի վեճը, թե ով է եղել սկզբնապատճառը կամ ով ինչքան է տուժել — գանք իրականությանը: Իրական պատկերն էսպես է: Այժմ էնտեղ, Տաճկահայաստան կոչված դժոխքում գոյություն ունի երեք բանակ:

Առաջին բանակը պատերազմող բանակն է:

Երկրորդ բանակը անտեր կանանց ու երեխաների, զանազան տեսակի հիվանդների, քաղցածների, մերկերի ու փախստականների բանակն է, որ և ամենամեծ բանակն է:

Երրորդը՝ գործիչների և օգնողների բանակն է, որ ամենափոքրն է ու ամենաթույլը:

Պետք է ուժեղացնել քաղաքացիական գործիչների ու օգնողների փոքրիկ ու թույլ բանակը և նպատակահարմար կազմակերպել օգնության գործը[2]:

Տեղն ու տեղը ամեն բան տեսնելուց հետո եք համոզվում, թե խելացի և նպատակահարմար կազմակերպություններով ինչքան բան կարելի էր փրկել, երբ դեռ կարելի է փրկել:

---

[1] Լուսանցքում գրված է՝ Ռուսական պետության և Համաձայնության Փոքր Ասիայում արած ամենամեծ բարիքներից մինն էլ էն է լինելու, որ միանգամ ընդ միշտ իրարից բաժանի էդ իրար խեղդող ու տանջող ժողովուրդներին: Եվ արդեն բաժանվել են, կարգադրի ու հաստատի: Կգան Եվրոպա, Աֆր<իկա>, Ամերիկա ու Ասիայի կողմերում գաղթած հայերը Ռուսիայից, Կովկասից:

[2] Լուսանցքում գրված է՝ կամավորների նշանակությունը— ավելի քիչ է եղել կոտորածը: Մի տող ցած գրված է՝ քրդական գյուղեր, թրքական գյուղեր— խաչեր, եկեղեցիներ, հայ գերեզմանատուն, ահա Բայազեթի ու Ալաշկերտի հովիտները, Աբաղայի դաշտը, Բերկրու շրջանը. ամեն տեղ—ամեն տեղ—...և զուր չեն վերջին դարերում հայերի թիվը 95 % հաշվել ճանապարհորդները:

Մենք սովորաբար փող ենք ուղարկում։ Բայց ամեն բան չի կարելի փողով անել մի տեղ, ուր չեն վաճառում էն, ինչ որ պետք է։ Որտեղի՞ց առնես։ Ախթամարում մեկը սուված փախստականներին երբ փող էր բաժանում, նրանցից ոմանք ետ դարձրին փողը...

— Ինչո՞ւ ես ետ տալիս...

— Հապա [փողն] ի՞նչ անենք...

...Պետք է ուժեղացնել գործիչների բանակը տեղում և միշտ կենդանի կապ ու հարաբերություն պահել նրանց հետ։

Բայց կա ավելի մեծը։ Ուժ տալ ու ամեն կերպ պաշտպանել պատերազմող բանակը։ Մեր երկրում կազմակերպված օգնության հասնել նրա մատակարարության գործին։

Էս երկու բանակները հոգալուց հետո միանգամայն ապահովված կլինի երրորդ մեծ բանակը, ժողովրդի բանակը։ Ապահովված կլինի և՛ սովից ու տիֆից, և՛ թշնամու սրից։

ՄԻ ԵՐԿՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Закавказская речь» թերթում բացվել է մի շատ ապարդյուն, տգետ ու տգեղ աղմուկ։ «Грузин» ստորագրությունով մի պարոն, հայ ժողովրդի էս անպատում աղետի հանդեպ, վեր է կացել ու ազգային քաղաքական զալմազալ է սարքել։[1]) Հայ գաղթականության մեջ նա ռուսների կողմից հովանավորված մի քաղաքականություն է տեսնում, մի քաղաքականություն, որ ուղղված է Կովկասի բնիկ ժողովուրդների դեմ, իսկ Կովկասի բնիկ ժողովուրդներ համարում է միայն վրացիներին ու թուրքերին։ Ասում է հայերը ռուսների գալուց հետո են հանդես գալիս Կովկասում՝ իբրև նոր, երրորդ ժողովուրդ։

Ես չեմ խոսելու էն մասին, թե էս վեճն ինչո՛ւ է տգեղ ու ապարդյուն, այլ միայն ուզում եմ մի թեթև փորձ անեմ, ցույց տալու, թե ինչքան է տգետ։ Եվ սրա համար միանգամայն մի կողմը թողնելով հայ ժամանակագիրների ու Եվրոպայի գիտնական ճանապարհորդների բոլոր վկայությունները, որոնք գուցե թե վիճելի համարվեն կամ աշառու, վերցնելու եմ միմիայն վրացական աղբյուրներն ու կառավարական պաշտոնական արձանագրությունները։

Ահա վրաց շատ հայանի պատմագիր ու աշխարհագիր արքայազն Վախուշտը, Վախթանգ VI-րդի որդին, որ ծնվել է ռուսների Կովկաս գալուց մի դար առաջ և որը ո՛չ միայն Վրաստանն ու

սահմանակից երկրներն էր քաջ ուսումնասիրել, այլև էդ երկրներում ապրող ժողովուրդների լեզուները լավ գիտեր, ինչպես և հայերենը։

Տեսնենք ինչ է ասում մեզ զբաղեցնող առարկայի մասին էսքան արժանահավատ ու լուրջ մի վկա, որի խոսքը, կարծում եմ, բանկ պիտի լինի ամեն մի «Грузин»-ի՝ վրացու համար։

Վախուշտը իր շատ նշանավոր «Վրաստանի աշխարհագրությանն» մեջ Բերդուջ գետն է դնում սահման պարսից և վրաց տիրապետության։ Բերդուջը էն գետն է, որ գալիս է Ղարաղաչի սարերից, Ջալալօղլու ձորովն անցնում, Քոլագիրան կայարանից ներքև Փամբակա ջրին միանում ու կազմում Դեբեդը։ Եվ խոսում է էդ գետից դեպի հյուսիս, դեպի Թիֆլիս գտնվող երկրի մասին։

Ինչպես տեսնում եք, խոսքը ոչ թե Արարատյան երկրի, Շիրակի ու Ղարաբաղի վրա է, այլև մի երկրի, մի շրջանի, որ անմիջապես կպած է Վրաստանին, հետևաբար և մեր վեճի տեսակետից ամենախախուտը։

Ահա թե՝ էս երկրի գավառները թվելով ու նկարագրելով՝ ինչ է ասում Վախուշտը։

Առնում է Սոմխեթը։ Սոմխեթը արդեն վրացերեն բառ է և կնշանակի Հայաստան։ Սոմխեթը բռնում էր Դեբեդի ու Ալգեթի միջի տարածությունը։ Ասում է՝ էս տեղերում ապրողները հայկական դավանության են և քչերը կան վրացական դավանության։

Առնում է Տաշիրը, որ իր մեջ ամփոփում է Լոռու դաշտը և Բերդուջ գետի, Ղարախաչի ու Լոքի լեռների միջի տարածությունը։ Ասում է՝ բնակիչները հայեր են։

Առնում է Աբոցի շրջանը, որ ընկնում է Տաշիրից արևմուտք, դեպի Ախալքալաք, գարձյալ բնակիչները հայեր են եղել։

Առնում է Դումանիսի շրջանը, որ Սոմխեթից ու Տաշիրից հյուսիս է ընկնում։ Ասում է՝ բնակիչները մեծ մասամբ վրացի են։ Հայ ազգաբնակությունը չի տրոշում, բայց կա, և Տաշիրի հայ ժողովուրդը սրա — Դումանիսի հովվության է պատկանում։

Թիֆլիզի մասին խոսելիս ասում է՝ Բերդի ու Սեյդաբադի բնակիչները մահմեդականներ են։ Բերդից դուրս գլխավորապես հայեր են և սակավաթիվ էլ վրացիներ։

Թուրքերին թվելիս հիշատակում է բորչալու ցեղը, որ Շահ-Աբասը բերեց բնակեցրեց Քոի ափերին, որոնց անունով կոչվեց և երկիրը Բորչալու, ինչպես եկվոր զազախ թուրք ցեղի անունով էլ մյուս երկիրը կոչվեց Ղազախ։ (Царевич Вахушти, География Грузии, пер. М. Джанашвили, Записки Кавк. отд. Имп. русск. геогр. общ., кн. XXIV, вып. 5).

էս ռուսների գալուց առաջ։ Իսկ ռուսները որ եկան, ի՞նչ տեսան։

Ռուսները եկան թե չէ՝ Վրաստանում կազմեցին մի վարչություն, որ կոչվում էր «Վրացական բարձրագույն կառավարություն» (Грузинское верховное правительство), որի մեջ մտնում էին վրացի նշանավոր իշխանները։ Վրացական բարձրագույն կառավարությունը 1802 թվի մայիսի 8-ին Վրաստանը (որի մեջ արդեն մտնում էին և սահմանակից Փամբակն ու Ղազախ-Շամշադինը) բաժանում է հինգ շրջանի. 1) Լոռու, 2) Գորու, 3) Դուշեթի, 4) Թելավի և 5) Սղնախի։

1) Լոռու շրջան, Թիֆլիզ քաղաքով, որի մեջ մտնում են Մցխեթից սկսած մինչև Բորչալու ընկած տարածությունը, ապա Բորչալուն, Ղազախը, Շամշադինը, Փամբակը և Լոռին։

Բնակչությունը նշանակված է՝ վրացի, հայ ու թուրք։

2) Գորու շրջանը, Գորի քաղաքով։ Բնակչությունը՝ վրացի, հայ, օս և հրեա։

3) Դուշեթի շրջան, Դուշեթ քաղաքով։ Բնակչությունը՝ վրացի, հայ, օս, փշավ և խևսուր։

4) Թելավի շրջան, Թելավ քաղաքով։ Բնակչությունը վրացի, հայ, օս, շատ քիչ մահմեդական և թուշ,

և 5) Սղնախի շրջան, Սղնախ քաղաքով։ Բնակչությունը վրացի և մասամբ հայ։ (Акты, собр. Кавк. археогр. комм., т.I. стр. 461, § 575. Ведомство о разделении Грузии на пять уездов, мая 8-го, 1802 г.)

Բայց էս հերիք չի, որ էսքան հայ կար Վրաստանում՝ վրաց արքայազն Իվանն էլ, հենց նույն 1802 թվականի հուլիսի 24-ին, դիմում է Կովկասի կառավարչապետ գեներալ Կնորրինգին և նրա միջոցով բարձրագույն թույլտվություն է խնդրում, որ Վրաստանի սահմանակից երկիրներից հարևան ժողովուրդներին, նրանց հետ նաև հայերին գրավի ու գաղթեցնի, ներս բերի Վրաստան — Քարթալինա ու Կախեթ և բնակեցնի ազատ հողերի վրա, որտեղ նրանք կհավանեն։ (Акты, т. I, стр. 500, Выписка из прошения царевича Иоанна от 24 июля 1802 г.)

Ես կարծում եմ՝ մարդ, որ ստորագրում է Грузин — Վրացի և էսքան կրքոտ կերպով հետաքրքրվում է էս տեսակ խնդիրներով, ամենաքիչը պետք է ծանոթ լիներ էս աղբյուրներին, իր ազգային նշանավոր պատմագիրների ու ժամանակագիրների տված տեղեկություններին։ Նա պետք է հաստատ գիտենար, որ վրաց թագավորները, ինչպես Դավիթ III Վերաշինողը XII դարում, կամ հռչակավոր Թամարը, էնպես էլ շատ ուրիշները, միշտ հայ ժողո-

վերդին քաշել են դեպի Վրաստան, առանձնապես Թիֆլիս, և միշտ Վրացիներին հավասար իրավունքներ են տվել ու պաշտպանել ամեն կերպ, երկիրը ավելի շենացնելու համար: Եվ նրանց մեջ եղել են թագավորներ, որ իրենց տիտղոսի մեջ գրել են՝ թագավոր Հայերի, ինչպես Գիորգի VIII էր անում XV դարում:

Պ. Грузин-ը պետք է գիտենար, որ նույնիսկ Շիրվանի շրջանում 1829 թվականից առաջ հայերի գյուղեր կային մի քանի տասնյակ (Опис. Ширванск. пров. сост. в 1820 г. г. ш. кн. Мадатовым и д. с. с. Магилевским). իսկ Ղարաբաղը 1823 թվականին 164 զուտ հայաբնակ գյուղ ուներ, բացի էն գյուղերը, ուր ապրում էին հայ ու մահմեդական խառը, և մահալներ (շրջաններ) կային, որ զուտ հայաբնակ էին, ինչպես Տաթևի մահալը, Թալիշի մահալը, Խաչենինը, Ջրաբերդինը, Վարանդայինը, Դիզակինը և այլն (Опис. Карабагской провинции, сост. в 1823 г. д. с. с. Магилевским и полк Ермоловым 2-м):

Ինչպես ափաշկարա տեսնում եք՝ էս կողմից հո տգետ է պ. Грузин -ը, որ ասում է հայերը նոր, երրորդ ժողովուրդ են Կովկասում և ոտաներն են բերել Կովկաս: Այժմ տեսեք, թե նա որքան է տգետ մյուս կողմից, որ կարծում է, թե դա հայերի կողմից մի քաղաքականություն է՝ գալ, լցվել Կովկաս կամ Վրաստան: Նա միանգամայն անտեղյակ է հայոց ամբողջ նորագույն դրականությանը, որ կոչ է անում դեպի հայրենիք — դեպի Հայաստան, անտեղյակ է մեր մտավորականության էն հոսանքին, որ իր կյանքի գնով ճամփա է բաց անում ցրված հայ ժողովրդի համար դեպի Հայաստան, անտեղյակ է հայոց բոլոր հիմնարկությունների ջանքերին ու կոչերին, որ հայ ժողովուրդը մնա իրեն հայրենիքում, որ հեռացածներն էլ ետ վերադառնան: Անտեղյակ է նույնիսկ էս վերջին դժբախտ գաղթականությանը, որի առիթով աղմկում է, և չգիտի էլ, թե սա ի՞նչ զայրույթ ու ցավ պատճառեց ամբողջ հայությանը: Չի՛ էլ իմանում, թե ինչպես էր կոչ անում ամբողջ հայ մամուլը՝ ետ վերադառնալ դեպի երկիրը, և կոչ էր անում մի բազմության, որ երկար փախուստից հետո դեռ չէր կարողացել մի տեղ նստի, շունչ առնի, մի ջարդված, սոված ու հոգնած ժողովրդի, և էդ ժողովուրդն էլ տասնյակ հազարներով հորձանք տվեց ու հորձանք է տալիս ետ — դեպի հայրենիք՝ կոտորվելով, կոտորվելով...

Եվ էս համատարած դժգոհության ժամանակ, թե ո՞վ գաղթեցրեց, էս աղեկտուր կոչերի ու ճիչերի հետ՝ թե ետ վերադարձեք, էս լաց ու կոծի ու կոտորածի մեջ, էս զարհուրելի մակընթացության ու տեղատվության օրերում, հանկարծ, առաջ է գալիս հարևանդ իր խոսքով — Грузин-ը իր էս տեսակ հոդվածներով...

Грузин-ը հավատացնում է, որ հայերը Անդրկովկաս են գաղթում նաև էն պատճառով, որ իրենց հայրենիքը աղքատ երկիր է, կլիման սոսկալի, բուսականությունից ու անտառից զուրկ, կենդանիները սակավ, թռչուն գրեթե չկա, և սրանց նման չկաներ։ Եվ էս վկայությունն էլ հանում է «Петроград. вед.» թերթից. մի օֆիցերի հոդվածից։[2])

Իհարկե, նրա առջև կարելի էր բաց անել ու փռել տարրական աշխարհագրության դասագրքերից սկսած մինչև նորագույն երկրաբանական ու աշխարհագրական ուսումնասիրությունները և ցույց տալ թե ինչքա՞ն է հարուստ Հայաստանի բնությունը և ինչքա՞ն ժողովուրդ կարող էր պահել նա, և կամ ինչքա՞ն է առողջ նրա կլիման, և կամ ինչքա՞ն է հարմար երկրագործության ու անասնապահության. սակայն, էդ բոլորը թողած մի կողմ, ես ուզում եմ մի ուրիշ գիրք բաց անեմ և մի ուրիշ վկայություն բերեմ նրա դեմ։

IX դարի մահմեդական ժամանակագիր և պատմաբան Ահմեդ Իբն Ֆազլհ ասում է.

«Չեմ տեսել ավելի հարուստ ու կենդանիներով լիքը մի երկիր, քան Հայաստանը» (Сб. мат. для опис. местн. и племен Кавказа, т. 31, стр. 23)։

Անկասկած, պ. Грузин-ը պետք է հավատա մահմեդական պատմիչի վկայությանը։ Եվ այնուհետև թող ասի՝ հապա ինչպե՞ս եղավ, որ էդքան լիքն ու հարուստ մի երկիր ամայացավ, զրկվեց և՛ անտառներից և՛ կենդանիներից, և՛ այլ ամեն տեսակի հարբուսություններից, և՛ բնակիչներից, ու եղած բնակիչներն էլ էսօր թողնում փախչում են, ինչպես ինքն էլ տեսնում է...

Թո՛ղ մտերմորեն հարցնի հենց իրենց մահմեդականներին ու պատասխանը մեզ ասի։

Իսկ մինչև էդ պատասխանն ստանալը՝ ես ահա թե ի՛նչ եմ ասում։ Հայերն ու վրացիները, Կովկասի բնիկ, եղբայր ժողովուրդները, որ միշտ միասին էնքան տառապել են քաղաքակրթության ու քրիստոնեության համար, անցյալներումն էլ են ունեցել անմիտ ու դատապարտելի վեճեր, մեծ մասամբ դավանաբանական։ Վիճել են, օրինակ, նրա համար, թե Քրիստոսը ե՞րբ հարություն առավ՝ կեսգիշերի՞ն, թե՞ լուսադեմին, և էս տեսակ վեճերի համար նույնիսկ իրար գլուխ են ջարդել. բայց էս անմիտ սխոլաստիկ վեճերից էլ հազար անգամ ավելի ծանր է ու ամոթալի էս վեճը, որ վարում ենք էսօր, ապացուցանելու՝ թե հայերը նոր, երրորդ ժողովուրդ չեն Կովկասում, թե տաճկահայերը եւին մարդով չի, ոչ էլ իրենց հայրենիքի բնության դաժանությունից ու աղքատությու-

նից, որ Տաճկաստանից փախչում՝ գալիս են Կովկասում դռնե դուռն ընկնում ու կոտորվում, և, վերջապես, թե Հայաստանի դատարկվելը դեմ է հայերի ցանկությանը, թե դա մի գաղտնի քաղաքական դավադրություն չէ հայերի կողմից...

ՍԳՆԱՑ Է, ՈՉ ԹԵ ՀԱՅԱՀԱՆԱՀՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես անցյալ հոդվածում պարզ ցույց տվինք,[1]) ռուսների գալուց ու 1829 թվականից առաջ էլ հայերը հանդիսանում էին մի ամբողջ ժողովուրդ ոչ թե միայն Կովկասում, այլև հենց նույնիսկ Վրաստանի սահմաններում, և վրաց թագավորները հրովարտակ արձակելիս առանձնապես շեշտում էին հայ ժողովուրդը: Հետաքրքրվողը կարող է տեսնել Акты Кавк. Археогр. Комисс. т. VI. ч. II. стр. 777 և 798: Իսկ հետագայում, թե ռուսական կառավարությունը քաղաքականություն է ունեցել հայ ժողովրդի նորանոր բազմությունները գրավել ու ներս բերել իր պետության սահմանները՝ պետք է իմանալ ու ասել, որ ռուս կառավարությունից առաջ էդ քաղաքականությունը ունեցել է վրաց կառավարությունը: Վրաց թագավորները ոչ միայն մահմեդականի հալածանքից փախած հայ գաղթականներին են միշտ սիրով ընդունել ու տեղ տվել, այլև միշտ էլ հայերին գրավել են դեպի Վրաստանի սահմանները: Էդպես է եղել XI—XII դարերից՝ Դավիթ III Վերաշինողից սկսած, որ Անիի կողմերից ու Շիրակից շատ հայեր բերեց ու՝ թե՛ հայ, թե՛ վրացի և թե՛ մահմեդական պատմիչների վկայությամբ, առանձին սիրով էլ վարվում էր հետները — մինչև վերջին Հերակլ ու Գիորգի թագավորները, որ բերին Վրաստանի սահմաններում տեղ ու արտոնություն տվին Ղարաբաղի մելիքներին իրենց ժողովուրդներով, շուլավերցիներին ու բոլնիսցիներին և ուրիշ շատ հայերի:

Մի խոսքով, թե՛ ռուս, թե՛ վրաց կառավարությունները արել են էն, ինչ որ առհասարակ արել են մյուս պետությունները՝ պարսկական, արաբական, բյուզանդական և այլն, և ինչ որ մի ժամանակ էլ իրենք՝ հայերն են արել ուրիշներին:

Տարբերությունն էն է էս ամենի մեջ, որ մինչդեռ մյուսները, դրավելով թե բռնի, հայերին դուրս են տարել իրենց երկրից ու օտարացրել, ռուսները մեծ մասամբ հայերին կամ Պարսկաստանից են հանել ետ բերել իրենց հայրենիքը՝ Արարատյան երկիրը, կամ թե չէ Հայաստանի թուրքական մասից բերել են ռուսական մասը ու էսպիսով էլ ստեղծել են ռուսական Հայաստանը, որ այժմ հան-

դիսանում է հայ ժողովուրդի ազգային գոյության գլխավոր ապավենը ամեն կողմից։

Եվ հենց ռուսական Հայաստանովն էլ պ. Грузин-ը ուղում է վախեցնի Ռուսաստանին։ Ասում է՝ էսպես զորանալով հայ ժողովուրդը կարող է հեգեմոնիա — գերիշխանություն ձեռք բերի Կովկասում և իր ցանկություններն առաջադրի կառավարությանը, և կառավարությունն էլ ստիպված կլինի հաշվի առնելու էդ ցանկությունները։

Դոնե ես էն կարծիքին եմ, որ պ. Грузин-ը զուր է վախեցնում Ռուսաստանին, և Ռուսաստանի լեղին սրանից չի պատռիլ։ Եթե Վրաստանը (Քարթալինայի ու Կախեթի միացյալ թագավորությունը), որ ընդամենը 150 հազար ժողովուրդ ուներ և սակայն տեղ էր տալիս հայ գաղթականներին և կամ գրավում, ներս էր բերում հայերին իր երկիրը ու չէր վախենում նրանց ցանկություններից ու առաջադրություններից՝ 150 միլիոն ժողովուրդ ունեցող Ռուսաստանը ինչո՞ւ պիտի վախենա։

Եվ ահա Ռուսաստանը ո՛չ թե չի վախենում հայ գաղթականներից ու չի հետևում պ. Грузин-ի խորհրդին, այլ միլիոնների նպաստ է բաց թողնում նրանց։

Մյուս կողմից՝ ի՞նչ դատապարտելի կամ զարմանալի բան կա, եթե հայերը իրենց ցանկությունները առաջադրում են ռուս կառավարությանը։ Չէ՞ որ դա և՛ հայերի կառավարությունն է։ Մի ժողովուրդ, եթե իր կառավարությանը չառաջադրի իր ցանկությունները, հապա էլ ո՞ւմ առաջադրի։ Եվ ի՞նչ կլինի, եթե կառավարությունն էլ հաշվի առնի իր էս կամ էն ժողովրդի ցանկությունները։

Մի՞թե վրացի ժողովուրդը չի առաջադրում իրեն ցանկությունները։ Ահա սեղանիս վրա է դրված մի գիրք, որ առաջադրած է ռուս կառավարությանը և որի վերնագիրն է «Памятная записка о нуждах грузинского народа»։ Մեջը թված են վրացի ժողովրդի կարիքները և առաջադրած նրա գրեթե բոլոր ցանկությունները՝ դրականություն, դպրոց, եկեղեցի, ազգար խնդիրներ, դատարան, ավտոնոմիա և այլն, և այլն։

Ի՞նչ կա որ...Եվ շատ լավ են արել։ Ո՛ղ ամեն մի ժողովուրդ պարզ ու անկեղծ մեջտեղը դնի իր ցանկությունները, որ պետությունն իմանա ու հոգա։ Պետությունը մի ամբողջություն է, որ պետք է հոգա իր բաղկացուցիչ մասերի կարիքները և ապահովի ո՛չ միայն նրանց ֆիզիքական գոյությունը, այլև էն ամեն իրավունքները, որ չեն խանգարում ուրիշների և ամբողջի բարեկեցությանը։ Եվ երանի թե միշտ էլ կատարվեն ինչպես վրաց ժողովրդի,

Ինչպես էլ ամեն մի վրացու լավ ցանկություններ։ Աշխարհքում երեք ժողովուրդներ կան, որոնք իրենց դարավոր ազնիվ մաքառումների, վսեմ ձգտումների և սրտի պարզության համար արժանի են լավագույն օրերի՝ անկասկած դրանցից է վրացի ազգը։ Ու ինչո՞ւ հայը նրա երջանկության ցանկացողը չպետք է լինի։

Էս ամենը առաջ է գալիս նրանից, որ պ. պ. Грузин-ը, Скальпель-ը և իրենց ընկերները կարծում են, թե ռուսներից հովանավորված մի քաղաքականություն կա հայերի կողմից՝ իրենց երկրից գաղթել, գալ լցվել Կովկաս, հեղեղել ու կործանել Կովկասը... Եվ ահա էստեղից էլ հայ գաղթականությունը նրանց աչքում դառնում է վտանգ, որ բռնկելու է հարևան ազգերի բարի հարաբերությունները («Закавказская Речь», № 227)։

Էս տեսակ հասկացողն ու էս տեսակ մտածողը իհարկե, կբռնկի։ Մարդիկը չեն իմանում, թե ինչ որ իրենց համար վտանգ է, մեզ համար՝ կրակ է, և միշտմեն էրվում ենք։ Չեն իմանում, թե ինչ որ իրենց աչքում քաղաքականություն է երևում՝ իրոք մի տոկալի աղետ է ու համահայկական դժբախտություն։ Բնավ չգիտեն, թե հայերը իսկի չեն ուզում իրենց երկրից գաղթել, գնալ ուրիշ երկիրներ լցվել, որ, ընդհակառակը, հասարակական-քաղաքական գործիչներից սկսած մինչև իրենց բանաստեղծները՝ հայերը մի տենչ ունեն միայն, որ ցրվածներն էլ եւ վերադառնան դեպի Ալաշկերտի, Վանի ու Մուշի հովիտները, որ

«...Ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմեն դեպ յուրանց սիրուն հայրենիք.....[2])

(Րաֆֆի)

Հայրենի՞ք...

Եվ ազմուկն էլ հենց էս մի բառի վրա է վերջ ի վերջո։ Պ. Грузин-ը ասում է՝ հայերը, ռուսների հովանավորության տակ, Տաճկաստանից գալիս են, լցվում Կովկաս ու ճնշում բնիկներին— վրացիներին ու թուրքերին։ Իսկ պ. Скальпель-ը ասում է՝ վրացիներն ու թուրքերը հո չեն կարող իրենց սեփական վարելահողերը տալ հայ գաղթականներին, թե ինչ է՝ նրանք Քրիստոսից առաջ, 323 թվին իրենց Վահն թագավորն են ունեցել։ Եվ շատ իրավացի էլ ավելացնում է, թե պատմական վկայություններով էս տեսակ խնդիրները չեն վճռվում։

Այո՛, եթե դիտեք, որ պատմությունն էս տեսակ խնդիրներ չի վճռում, ապա ինչո՞ւ եք թույլ տալիս շարունակ առաջ քաշել պատմությունը և էն էլ էդքան անզգույշ ու վիրավորական ձևով, էդ-

քան անգետ ու անարդար: Պատմությունը թերևս անզոր է կոնկրետ իրական ու իրավական խնդիրներ վճռելիս, բայց նա շատ է զորեղ ժողովուրդների հոգեբանության մեջ և կարող է խորապես վրդովել: Եվ, եթե դիմում են պատմությանը, չեն սահմանափակվում Վահեով, այլ Վահեից բռնում են՝ գալիս մինչև մեր վիճաբանության օրը, և հարցնում են.— Էն հողի վրա, որ Վահեից սկսած մինչև էսօր ապրել է հայը, մի՞թե թույլ չեք տալ, որ էն հողի վրա էսօր սրից փախած հայ գաղթականը հանգստանա... և ուզում եք նրան դուրս վտարել, հալածանքից անմիջապես հետո նորից հալածել՝ էդ երկիրը հախուռն կերպով անվանելով Կովկաս...

Էն ժամանակ, ասացեք խնդրեմ, Կովկաս ասելով ի՞նչ եք հասկանում դուք: Սիվերս, Ռեկլյու և տուրիշ գիտնականներ Կովկաս ասելով հասկանում են Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմն ընկած երկիրները և նրա հարավային մասի, այսինքն Անդրկովկասի սահմանը դնում են Արաքսը, Մասիսը, Բարթող լեռները ու նրանցից դրեթե ուղիղ դեպի Սև ծովը: Ուրիշ խոսքով, այժմյան ռուսաց տիրապետության սահմանները: Էդպես է ընդունում և ռուսական պետությունը: Եթե էդպես եք ընդունում և դուք, ապա անպատճառ պետք է իմանաք, որ էս սահմանների մեջ ընկնում են՝ Այրարատ, Շիրակ, Սյունիք, Գուգարք, որոնց վրա վիճելն անգամ մեծ ամոթ է, ուր մնաց գրելն ու պնդելը, թե հայերն էնտեղ նոր, եկվոր, երրորդ ժողովուրդ են, և կամ հայ գաղթականը էնտեղ նեղություն կտա բնիկներին — վրացիներին ու թուրք սակավահող ժողովրդին...

Թե վրացին սակավահող է, մենք էդ գիտենք, պաշտոնապես էլ դրված է հրապարակ, և առանց ընդհանուր սակավահողության խնդիրը նայելու, միանգամայն համաձայն ենք, որ սակավահող վրացի ժողովրդի մեջ երբեք հայ գաղթական չտանեին...

Բայց ո՞վ է տանում...

Վրացի ժողովուրդն ապրում է Թիֆլիզի և Քութայիսի նահանգներում և Բաթումի, Սուխումի ու Զաքաթալի շրջաններում: Դեռ նկատեցեք, որ Թիֆլիզի նահանգի հարավային մասումն էլ վրացի չկա: Եվ ասացեք, ի սեր Աստուծո, ո՞ր վրացական շրջանն են հայ գաղթական տարել, էն էլ լցրել...

Չեն տարել, և չպետք է տանեն էլ: Հայ գաղթականը պետք է իր երկիրը վերադառնա և վերադառնում է նույնիսկ էս րոպեին էլ, երբ ամեն ճանապարհի վրա նրան միայն մորթողներ են սպասում: Եվ եթե հայկական քաղաքականություն եք որոնում — ահա՛ ձեզ հայկական քաղաքականությունը: Հենց էն, ինչ որ դուք եք ուզում: Եվ դեռ ավելին: Մենք կուզենայինք, էն հայերն էլ, որ հնուց ցրված

են Վրաստանում, նրանք էլ մի օր ձեզ թողնեն ձեր արգավանդ հողերն ու հովիտները, եւ գան իրենց «դաժան» հայրենիքը...

Էլ ի՞նչ եք ուզում: Առանց մեզ ու մեր իղձերին, մեր ձգտումներին, մեր տառապանքներին ու մաքառումներին ծանոթ լինելու, ինչո՞ւ եք էդքան կոշտ ու կոպիտ դիպչում մեր էսքան թարմ ու խոր վերքերին՝ էդքան մոտիկ ու հարազատ ձեռքով...

Ես շատ ավելի բարձր կարծիքի եմ վրացի մարդու և վրաց ժողովրդի վերաբերությամբ, դրա համար էլ խոսքս վերջացնում եմ նրանով, ինչով սկսեցի, և մնում եմ միշտ էն կարծիքին, որ էս ամենը արդյունք են ոչ թե չարության, այլ կատարյալ անտեղեկության ու ցավալի թյուրիմացության: Եթե մեզ մոտիկից ճանաչեին ու վերահասու լինեին ամեն անց ու դարձի, ես հավատացած եմ, որ ոչ մի ինտելիգենտ վրացի գրիչ չէր առնելու իր ձեռքը ու էս տեսակ հոդվածներ չէր գրելու:

Պարզ կտեսնեին, որ հայ գաղթականությունը մի ծանր աղետ է, ոչ թե հովանավորված քաղաքականություն:

1916

Ի՞ՆՉ ԵՂԱՒ ԱՍՈՒՄ...

Անցյալները մի երկու անգամ՝ ինչպես վրացական մամուլից, էնպես էլ ռուսաց մի թերթից թարգմանած քաղվածքներ տպվեցին հայոց մամուլի մեջ, իբրև թե Մեսրոպ եպիսկոպոսը զենքեր է ատանում ու բաժանում հայերին, Անդրանիկն էլ խմբեր է կազմում վրացիների դեմ։

Թե էս տեսակ մի բան գրողը, թե սրա տպողը, անշուշտ, երկուսն էլ կամ շատ կարճամիտ ու աշխարհքից անտեղյակ մարդիկ են և կամ սոսկ չարախոսներ։ Ես միշտ հակված եմ առաջինը տեսնելու։ Սակայն, ինչ էլ որ լինի, մի քշվառական միամիտ թե չարախոս դավադիր, երկու դեպքում էլ գրածը պետք է հերքվեր։

Զարմանալի է, թե Մեսրոպ սրբազանին վերաբերյալ դեպքը, որ պաշտոնական հանգամանք ունի, ինչպես է որ չի հերքվել մինչև օրս հենց պաշտոնապես։

Ինչ վերաբերում է Անդրանիկին, երբ էս գրածը կարդացինք, նա զարմացավ, որ մի որևէ վրացի, թեկուզ նրանց միջի ամենահիմարն էլ, կարող է մտքովն էս տեսակ բան անցկացնել։

— Խե՛ղճ մարդիկ, բացականչեց. Անդրանիկը եթե խումբ կազմելու լինի, ոչ թե ձեր դեմը գալու համար կկազմի, այլ ձեզի օգնելու, եթե երբևիցե դուք էլ նեղության մեջ լինիք մի էնվերի ձեռքից, ինչպես մեր ժողովուրդն է... էսպես գրե՛ նրանց...

Էսպես ասավ Անդրանիկը։ Բայց ո՞ւմ գրեմ, որ տեղ հասնի, և ի՞նչպես ասես, որ հավատա ու ամաչի ու լուի նա, որ, ինչպես ասի, կամ մի քշվառական տխմար է կամ անսիրտ չարախոս։

Եվ վերջապես նրանք ո՞րտեղից են ճանաչում Անդրանիկին, և իսկի կարո՞ղ են երևակայել, թե նա ինչ զգացմունք ունի դեպի նույնիսկ քուրդը, խաղաղ քուրդը, թե ինչպես է խոսում Շեդրատան և

նման ուրիշ ցեղերի մասին, և ինչպես է վերաբերվում նրանց... ո՞ւր մնաց մտածեր վրացիների դեմ, ինչպես գրում ու տպում են հրապարակավ...

Էս տեսակ հոդված կարդալուց հետո մարդ լցվում է անհուն ցավով ամեն անգամ, երբ լսում է նրա, Անդրանիկի սիրած խոսքը, որ հաճախ կրկնում է. «Երբ իրիկունը գլխներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին։ Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...»։

Մարդ, ասում եմ, լցվում է ցավով, որովհետև գիտես՝ դիմացինը կամ տխմարի մինն է, կամ չարի մինը, երկու դեպքումն էլ անհուսալի, թե պիտի զղջա ու ետ առնի իր թունավոր խոսքը։ Բայց ավելի ևս ցավալի է, որ վրացի ինտելիգենցիան թույլ է տալիս իր մամուլի մեջ էդպես խոսքեր տպվեն անպատիժ ու անպատասխան։

Չէ՞ որ նրանք, վրացի մտավորականները, նախանձախնդիր են իրենց ժողովրդի առաջդ կյանքին։ Եթե Անդրանիկը խումբ կազմեր վրացիների դեմ, անկասկած, երբեք էնքան վնաս չպիտք է տար վրաց ժողովրդին, ինչքան վնաս են տալիս էս տեսակ հրապարակախոսները, որ թունավորում են ժողովրդի միտքն ու հոգին։

Չէ՛ որ նրանք էլ են սպանիչներ, և ամենավատ սպանիչները, որ մարդկանց մեջ սպանում են ամենաազնիվն ու ամենագեղեցիկը՝ սերն ու հավատը դեպի իր նմանը, իր ընկերն ու հարևանը։

Ի՞նչ են ասում սրանց մեր վրացի ընկերները — վրաց գրողներն ու հրապարակախոսները։

ԿԱՐԵԼԻՆ ԵՎ ՅՈՒՆԱԼԻՆ

I

Մեծ պատերազմը սկսելուն պես դաշնակից մեծ պետությունները Բնդանրների առաջին որոտի հետ միասին հայտարարեցին ի լուր համայն աշխարհի, թե իրենց միահավան ընդգրկած նպատակներից մինն էլ փոքր ու ճնշված ազգերի իրավունքների պաշտպանությունն է և նրանց ազատությունը։

[Եվ] գրեթե բոլոր փոքր ազգերը ցնծագին ընդունեցին էս պայծառ հայտարարությունը ու, որը սրտով, որը սրտով, հարեցին սրանց, փարվեցին սրանց դրոշակներին։

Հայ ժողովուրդն էլ, որի թե՛ փոքրությունը, թե՛ տառապանքը Թուրքահայաստանում վեր է ամեն կասկածից, ամենաշատ ոգե-

վորվողներից մինը եղավ և հենց առաջին օրերից, առանց երկար ու բարակ մտածելու, երեսին խաչ հանեց ու նետվեց կրակի մեջ հանուն ընդհանուր գործի, այլև իր արյունոտ դատի [և իր] կամավորական դրոշակի վրա գրելով — մահ կամ ազատություն...

Եվ հենց պատերազմի առաջին օրերից էլ հայոց մամուլը խորհրդածության ու քննության նյութ դարձրեց հրապարակով խոստացված անորոշ ազատությունը և [կայծակի արագությամբ երկրից երկիր տարածվեց հայկ<ական> ավտոնոմիայի լուրը [հազար ու մի ձևով,] հախուռն ու անորոշ]։

Էդ ժամանակ ռուսական մամուլը թե՛ մայրաքաղաքի, թե՛ գավառական, [դրանց թվում և К<авказское> сл<ово> թերթը] ավելի պատերազմի ընթացքով տարված և ավելի մեծ խնդիրներով, շատ թույլ արձագանք տվեց հայոց մամուլին, որով և շատ էլ զարմանք ու տարակուսանք պատճառեց իր ժամանակ։

Անցավ ժամանակ։ Թուրքական անլուր կոտորածների ու կոտորած<ից> մազապուրծ եղած գաղթականության վշտի ու հոգսի տակ ճնշվեց ու ճմլվեց հայոց միտքն ու մամուլը։ Ահա հենց էդ ժամանակ К<авказское> сл<ово>-ն հրապարակ հանեց հայոց ավտ<ոնոմիայի> խնդիրը և էն էլ պ<արոն> Մագիստ<ր>անտի[1]) ձախորդ հոդվածով, և հրավեր կարդաց խոսել հայկ<ական> ավտ<ոնոմիայի> մասին։[2]) Այժմ էլ հայոց մամուլը, ոչ միայն անժամանակ գտավ դրա մասին խոսելը, այլև ծանր վշտեր ու հիասթափություններ ունեցած մամուլի ջղայնությամբ մերժեց խոսել էդքան լուրջ մի առարկայից, որ հրապարակ էր դրվում [էդքան] բացասաբար նախորոշած, ու թեթև կերպով [և անվանեց պրովոկացիա]։ Մի խոսք, որի հետ ես բնավ համաձայն չեմ։

К<авказское> сл<ово>-ի խմբագիր պ<արոն> Սիմյոնովը թերթի №№ 189 և 190-ում «Россия в Малой Азии» հոդվածով[3]) մի բացատրություն տվեց և հայտնեց իր կարծիքը, թե խնդիրը վերջ ի վերջո մի լուծումն ունի, և էդ լուծումն էն է, որ Ռուսիան հայկական վիլայեթները անեքսիա կանի (միացնի իրեն)։ Եվ ապացուցանելու համար, թե հայերի մեջ էլ, և նույնիսկ «Հորիզոնում» արտահայտված է նման տրամադրություն, ցիտատներ է բերում նաև [իմ] 1912 և 1913 թ<վականներին> գրած հոդվածներից։

Սա մի պարզ թյուրիմացություն է, որի մեջ ընկել է պ<արոն> Սիմյոնովը։ 1912 և <19>13 թվականներին գրված իմ հոդվածները երեք էսօր առաջ են բերվում, կարող են առաջ բերվել իբրև ռուսական օրիենտացիայի մի մարդու հոդվածներ, որ քաղաքական ու հասարակական ամեն տեսակի վարուվերումների մեջ էլ անխոտոր տարել է իր գիծը ու չի քաշվել իր կարծիքն ու հայացքը

պարզորոշ հրապարակելու [նույնիսկ իր հայրենակիցներից շատ շատերի տրամադրությանը հակառակ]։ Եվ, հիրավի, չէ՛ որ իր ժամանակին էդ ամենի համար ինձանից շատ շատերը շատ են վըշտացել և, ո՞վ գիտի, ինչ բացատրություններ են տվել։ Բայց ես դրելիս հո էն չեմ գրում, ինչ որ ուրիշներն են զգում ու մտածում, այլ են, ինչ որ ես եմ զգում ու մտածում։ Եվ հո՛ նրա համար չեմ գրում, որ ուրիշները հավանեն, այլ որ ես հավանեմ ամենից առաջ։ Եվ կարծում եմ այժմ, տարիներ անցնելուց հետո, իմ հայրենակիցները [շատ] պետք է ուրախ լինեն, որ իրանց բանաստեղծը պատերազմից դեռ շատ առաջ՝ էնքան ճիշտ ըմբռնած ու պարզ ասած է եղել էն ամենը, ինչ որ հետագայում կատարվեց։ Եվ եթե իր ժամանակին նեղացել են ինձանից, այժմ պետք է խոստովանեն, որ ինձ առաջնորդողը եղել է բանաստեղծի հանխատեսությունը, ուրիշ ոչինչ, և ամենաքիչը պիտի անպարտ նկատեն ինձ։

Հիրավի, թեկուզ էլ հետոն չգնանք, վերցնենք միայն պ<արոն> Սիմյոնովի բերած 1912—13 թվականների հոդվածները։ Հայ ժողովրդի քաղաքական [անորոշ] տրամադրությունների աղջամուղջի մեջ ես պարզ զրել եմ, թե մենք ամբողջ ժողովրդով հարելու ենք Ռուսաստանին։ Խոսք եմ արել գերման ու սլավոն ցեղերի ներհակության նորագույն սաստկության վրա, Ռուսաստանի ակամա պատերազմի մեջ ընկնելու վրա, և մեզ ավանգարդ եմ անվանած, և նրա հետ, Անգլ<իայի> ու Ֆրանս<իայի> հետ միասին կանգնած ենք Գերմ<անիայի>, Ավստ<րիայի> ու Թուրքիայի դեմը և հայոց հարցը գերազանցորեն ֆիզիք<ական> գոյության խնդիր է, նրանով է լուծվելու, որ Թուրքիան հայոց հարցը վճռելու է բնաջնջումով և Հայ ժող<ովրդին> բաց պիտի թողնի միայն իր վերջին շնչի հետ ու պիտի դիմի ամեն հրեշավոր միջոցների և այլն (բառացի)... թե Ռուսաս<տանը> երևանի, Կարսի և այլն նման կտրի և Տաճկ<աստանի> հայկ<ական> մյուս մասին... թե Անգլ<իան> ու Ֆ<րանսիան> երբ դաշնակից են — հայոց հարցի լուծումը դիջանելու են Ռուսաստանին... և այլն և այլն... ինչ որ ինձ կարելի էր թվում։

[Ինձ համար բնավ զարմանալի բան չկա, բայց թերևս ոմանք զարմանան, եթե ասեմ, որ պատերազմի նախընթաց ամիսներին ես էնքան պարզ էի զգում պատերազմը, որ հատուկ բանաստեղծություն ունեի, մինչև անգամ ուզում էի տպել «Նոր Հոսանք» ամսագրում, բայց ինչ-ինչ պատճառներով անհարմար գտանք։

Ահա նույնիսկ մեկի առաջին տունը, որ հիշողության մեջ է դեռ.

Հրացաններ են ճայթում սըրտիս մեջ,
Հրացաններ են ճայթում անդադար,
Եվ լաց են լինում [անըսփոփ] ու խեղճ
Որբ երեխաներ անթի՛վ, անհամա՛ր...]

[Էսպես էլ էն ժամանակվա իմ հոդվածների մեջ ես ասել եմ էն, ինչ որ իմ կարծիքով սպասելի էր, կարող էր կատարվել: Դրանց հետ միասին հույսեր եմ տածել, թե ռուսական սահմանադրությունը քանի գնա և այլն — <...>

Կամ ռուս<ական> դուման և այլն <....>

Հայ ժողովրդի համար էլ «մարդավայել ազգային վիճակ և ցանկալի ապագա», ազատ կուլտուրական կյանք և այլն, և նման նախադասությունները միայն տրամադրություններ են ու ոչ մի կոնկրետ քաղաքական ազգային իդեալ չեն պարզում:

Էսպեսով, էն թվականներին ես ասել եմ էն, ինչ որ իմ կարծիքով 1912—13 թվականին, պետությունների ու պատմական դեպքերի հարաբերություններից դատելով, կարող էր պատահել...

Էն ժամանակ նույնիսկ էն մեծ պետություններն էլ չէին խոսում փոքր ազգերի ավտոնոմիայից կամ ազատությունից, որոնք էսօր կռվում ու ոգևորում են ժողովուրդներին նաև էդ դաղափարով: Եվ էն ժամանակվա իմ հոդվածներն էլ, ինչքան խորաթափանց ճշմարտություններ պարունակեն իրենց մեջ, չեն կարող առաջ բերվել որպես վկայություն էն տրամադրությունների ու դրությունների, որ առաջ բերեց մեծ պատերազմը: [Նրանք խոսում են կռիվի, հնարավորի մասին, ոչ թե իդեալի, [ցանկալիի]: Իսկ Кавк<азское> сл<ово>-ն հենց էդ խնդիրն է դրել հրապարակ, թե հայերն ի՛նչ են ցանկանում և ի՛նչ են ակնկալում Ռուսաստանից և ապա նրա դաշնակիցներից էս պատերազմի պատճառով և սրանից հետո]:

II

Երբ խոսքն էն մասին է, թե ի՛նչ են ակնկալում հայերը մեծ պատերազմից — Ռուսաստանից ու իր դաշնակիցներից և դրա համար հարկավոր էր ի միջի այլոց նաև իմ վկայությունը, ապա պետք էր ցիտատներ բերել իմ էն հոդվածներից, որ գրված են պատերազմը բացվելուց հետո:

Պատերազմի հենց առաջին օրերում, (1914, Հոկտ<եմբեր> 31, № 242) «Հորիզոնի» մեջ խոսելով կովկասյան ռուս-թուրքական

պատերազմների մասին[4]) հայ ազգի պատմության տեսակետից[1] ես առանձնապես ընդգծել եմ նրանցից երեքը — 1827—28 թվի Երևանի պատերազմը, 1877—78 թվի Կարսի պատերազմը և այժմյան պատերազմը։ Ասել եմ՝ «Առաջինը հայ ժողովրդին ազատեց մի անհույս դժոխքից և ազգովին ապրելու հույս ներշնչեց։ Երկրորդը դրեց ինքնավար Հայաստանի հարցը։ Եվ նշանակել եմ, թե՝ ինքնավար Հայաստանի հարցը թուրքահայերի խնդիրքով, առաջին անգամ ռուսները դրին Ադրիանոպոլիս, բայց անգլիացիների պահանջով ստիպված եղան փոխել ու դնել բարենորոգումների հարցը, սակայն հայերին հուսադրելով, թե ապագայում նորից կընդլայնեն ու կիրագործեն։ Իսկ երրորդ պատերազմը, ասել եմ, բերելու է թուրքահայերին ազգային ինքնավար կյանք»։

Թե՛ էս հոդվածում, թե՛ սրանից առաջ գրած մի ուրիշ հոդվածում[5]) («Հորիզոն» 1914 թ. № 194), ես իմ հույսերը կապել եմ Ռուսաստանի հետ։ Էդպես և՛ պատերազմից տարիներ առաջ գրած իմ հոդվածներում, էդ նույն կարծիքին եմ մնում և էսօր։

Էդ նույն կարծիքին եմ մնում, թեկուզ և էս կամ էն ռուս քաղաքագետը հրապարակավ դրան միանգամայն հակառակը հայտարարի. և նույնիսկ դրա իրական արտահայտությունները տեսնենք կյանքի մեջ։ Ինձ համար էս կամ էն քաղաքագետը չի որոշում պատմության ընթացքը, էս կամ էն ազգի պատմական ճանապարհն ու միսիան։ Դրանք հաճախ ներս են սպրդում պատմության մեջ, որպես բացարձակ վրիպակներ։ Դրանցից ամենալավերն էլ՝ ո՛չ թե տևական ընթացք են տալիս կյանքին, այլ հասկանում են պատմության ընթացքն ու շարժվում ըստ այնմ։ Հետևաբար ասում եմ, էս կամ էն քաղաքագետի հոռի հայտարարությունը կամ ընթացքը էական արժեք չունի ինձ համար։ Ուրիշ բան է իրեն՝ ազգի հայտարարությունը, որ անում է իր լավագույն զավակների բերանով. իսկ Ռուսաստանի լավագույն զավակները երբեք դաժան հոգի չեն հանդես բերել, և ուրիշ բան է ազգի իրեն ընթացքը, և իր ընթացքով էլ Ռուսաստանը դեռ ազգեր չի խորտակել, այլ միայն ազգեր է ազատագրել ու կյանքի կոչել, ինչքան էլ ետամնաց լինի, որպես պետություն, և ինչքան էլ խավար։

Խավարն ու ետամնացությունը բնավորություն չեն, հոգի չեն։ Խավարն ու ետամնացությունը հեշտ է փարատել լուսով ու հառաջադիմությունով, բայց չարությունը դժար է փոխել բարության։ Դրա համար էլ, ինչպես տարիներ առաջ գրած իմ հոդվածներում, էն կարծիքն եմ հայտնել, թե ռուսական սահմանադրությունը... մյուս կողմից, իմ խորին համոզմունքով, դեռ արևելքում չի դադարել հին տակն ու վրան և Հայաստանի չորս դետերի մեջ դեռ չի

վերականգնել հին եղեմը, որ գառն ու գելը խաղաղ ապրեն ու արածեն իրար կողքի։

Ես չեմ հավատացել ու չեմ հավատում թուրքի բարի հայտարարություններին, ինչպես որ չեմ հավատացել ու չեմ հավատում ռուսի չար հայտարարություններին։ Մեր առջևն է երկիրների ընդհանուր պատկերը։ Մեր առջևն է նրանց անցած ճանապարհները, մեր առջևն են ժողովուրդների պատմությունները։

Ես ասել եմ՝ ռուսը կատա էդ ազատությունները — ո՛չ միայն հայերին, այլև շատ ազգերի. էդ է ճանապարհը։

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

КАВКАЗСК<ОЕ> СЛОВО ԹՈՒՐՔԻ Պ. ԽՄՐԱԳՐԻ ՀԵՏ

Հարգելի Յուրիյ Ֆեոդորովիչ

Ինձ էնպես է թվում, թե ես բավական պարզ եմ տեսնում հայ ժողովրդի պատմական ճանապարհը և զգում եմ նրա ներքին ձգտումը։

Հաստատ էսպես է, թե մոլորության մեջ եմ, էդ հետո պիտի երևա, բայց սա ինձ որոշ ինքնավստահություն ու անկեղծություն է ներշնչում իմ խոսքը համարձակ ասելու և իմ ճանապարհը անխոտոր գնալու։

Էդ է պատճառը, որ ես տարիներ առաջ էն տեսակ հոդվածներ եմ գրել, որոնցից, իր ժամանակին՝ վշտացել են իմ հայրենակիցներից շատ շատերը և որոնցից էսօր դուք ցիտատներ եք բերում («Кавказск<ое> слово», № 190)։

Ես կարծում եմ՝ իմ հայրենակիցներն այժմ պետք է շատ ուրախ լինեն, որ իրենց բանաստեղծը պատերազմից տարիներ առաջ էնքան ճիշտ ըմբռնած ու պարզ ասած է եղել՝ գրեթե մանրամասնություններով՝ էն ամենը, ինչ որ հետագայում կատարվեցին. և եթե իր ժամանակին նեղացել են ինձանից, այժմ պիտի անպարտ նկատեն։ Սակայն էդ հոդվածները, որ գրված են տարիներ առաջ, չեն կարող էսօր առաջ բերվել իբրև վկայություն էն տրամադրությունների ու խնդիրների, որ առաջ բերից մեծ պատերազմը, օրինակ, փոքր ազգերի ազատության կամ ավտոնոմիայի, որից էն ժամանակ իսկի էն մեծ պետությունները էլ չէին խոսում, որոնք էսօր էդ անունով են կռվում ու ոգևորում ժողովուրդներին։

Պատերազմը բացվելուց հետո մի քանի անգամ ես էլ իմ կարծիքն ու հավատն եմ հրապարակ բերել, թե էս պատերազմը ազա-

տություններ է բերելու ժողովուրդներին, նրանց թվում և հայ ժողովրդին[1]: Էդ հոդվածները նույնիսկ թարգմանված ու տպված են «Кавк<азское> слово»-ում:

Իսկ 1909, 1912 և 1913 թվականներին գրած իմ հոդվածները եթե առաջ են բերվում՝ պետք է առաջ բերվեն միայն մի նպատակի համար, թե հայերը, ինչպես առաջ, էնպես էլ էսօր, հարած են Ռուսաստանին և նրա հետ էլ նրա դաշնակից պետություններին:

Բայց Ձեր թերթում այժմ էն խնդիրն է քննության հանած, թե մենք ի՛նչ ենք ակնկալում Ռուսաստանից և ապա նրա դաշնակիցներից:

Սրա պատասխանը էսպես է:

Էն ենք ակնկալում, ինչ որ նրանք խոստացել են պատերազմի սկզբից ու շարունակ խոստանում են փոքր ազգերին և մանավանդ պատերազմից տուժած ազգերին: Իսկ հայ ազգը էն գրեթե միակ փոքր ազգն է, որ ամենից շատ է տուժել պատերազմից և իր խնդիրն էլ միշտ դրված է եվրոպական դիվանագիտության սեղանի վրա, հատկապես Ռուսաստանի ձեռքով:

Էդ ակնկալությունն այժմ որակում են[2] ավտոնոմիայով: Ավտոնոմիան շատ տեսակ է լինում: Հայերի համար էլ ի՞նչ տեսակ, ե՞րբ և ինչպե՞ս կլինի՝ էդ ջոկ խնդիր է, բայց ինչպես ամբողջ աշխարհի, էնպես էլ հայերի համար՝ ավտոնոմիան ուտոպիա չի, այլ շատ հասարակ մի հասարակական կարգ: Ուտոպիան էն է, որ չկա և չի լինելու, իսկ ավտոնոմիա կա, լինում է և կլինի, և ազգերն էլ էդ կողմն են դնում, էդ կողմն է գնում և՛ Ռուսաստանը, ինչպես պարզ վկայում է Լեհաստանի խնդիրը: Սվ չէ՛ որ ավտոնոմիան բնավ սեպարատիզմ չի ենթադրում: Ձեզ ավելին ասեմ. եթե Ռուսաստանը մեզ ավտոնոմիա տար ու ասեր՝ «դե՛, մնաք բարով, ես դնում եմ», դոնե ես շատ կվախենայի...

...Ահա՛ մենք էլ էսօր Ռուսաստանի համար ասում ենք՝ մեր պետությունը, մեր զորքերը, մենք հաղթեցինք, մենք կհաղթենք, և այլն և այլն, և ցանկալի է, որ էս կապն ավելի կենդանանա ու ամրանա: Մանավանդ նկատեցեք, որ մի որևէ թեկուզ Մենեի կամ Տրինիդատ շրջապատված են եղել ու շրջապատված են ջրի ծովով, իսկ մենք, ինչպես և մեզ ընկեր ժողովուրդները, միշտ շրջապատված ենք եղել արյունի ծովով, որի մեջ դեռ լողում է մեր կեսը, և միշտ կարոտ ենք հզոր բարեկամի, վաղուց ազդովին ընտրել ու փարվել ենք էդ հզոր բարեկամին և նրա իմաստուն ու բարյացա-

---

1 Շարունակության մեջ, տողատակում մատիտով գրված է. «Չէ՛ որ նրանք այսօր չեն ասում»:

2 Այս բառի վերև գրված է՝ «մեր մեռելներն են հաշվի առնում»:

կամ վերաբերմունքը մշտական ապահով ու ամուր կապ պետք է լինի մեր մեջ։

Ես համաձայն չեմ, թե Ձեր առաջադրած խնդիրը կարող է պրովոկացիայի թեկուզ հեռավոր միտքը ունենալ։ Չպետք է իրար վիրավորել։ Կառավարական մարդկանցից ավելի գրչի մարդիկ են պարտավոր օբյեկտիվ ու հանդիստ մոտենալ էս տեսակ խնդիրներին և լուրջ ու բազմակողմանի քննության ենթարկել՝ միշտ առաջնորդված ինչպես համապետական, էնպես էլ առանձին ժողովուրդների կենսական շահերի պաշտպանության ազնիվ զգացմունքով և բոլորից մի մեծ ներդաշնակություն ստեղծելու բարձր գիտակցությամբ։

Առ այժմ։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

«Հորիզոնի» № 9-ում պ. Վարանդյանը իր «Ամոթալի երևույթ» վերնագրով հոդվածում, նկատելով ռուսների ու վրացիների քչությունը Վ. Բրյուսովի դասախոսության ժամանակ, ասում է՝ վրացիներն էլ եկել էին հրավերով։

Սրա մեջ մի փոքրիկ թյուրիմացություն կա, որ հարկավոր եմ համարում պարզել։

Եկող վրացիները ո՛չ թե չէին հրավիրված, այլ մինչև անգամ վաղօրոք էին գրվել դասախոսության, երբ դեռ տոմսակ չէր էլ վավաճառվում և խնդրել էին տոմսակներ պահել իրենց համար։ Հրավիրված էին միայն մամուլի ներկայացուցիչներ, որոնցից ոմանք էլ առաջուց խնդրել էին՝ իրենց չմոռանալ[1])։

Ինչ վերաբերում է ռուսներին, ռուսերեն հայտարարությունը ինչ-ինչ պատճառներով ուշ լույս տեսավ, մինչև լույս տեսավ ու ռուսներն իմացան՝ շատ ուշացին տոմսակ գնելու՝ էլ տոմսակ չկար։ Շատ ցավեցին, մինչև անգամ նեղացան, և դիմեցին թե պ. Բրյուսովին, և թե՛ Հայոց գրողների ընկերության վարչությանը՝ եթե կարելի է կրկնել, որովհետև իրենք զրկվել են իրենց սիրելի բանաստեղծին ու քննադատին լսելու հաճույքից։

Սրան պետք է ավելացնեմ, որ հայերից էլ մեծ բազմություն բուռն ցանկություն են հայտնում, որ նորից կրկնվի դասախոսությունը, և շատ են դժգոհ, որ տոմսակ չեն գտել։

Շատ ուրախանալով, որ էսքան նեղացել են, և ի սրտե ցանկանալով, որ շատ լինեն էս տեսակի դժգոհությունները, կարող եմ հայտնել, որ պ. Բրյուսովը Երևանից վերադարձին, Մոսկվա վե-

բադառնալուց առաջ՝ թերևս մի նոր դասախոսություն կարդա «Հայոց պատմության մասին», մեջ ընդ մեջ հյուսելով հայոց գրականության պատմությունը։[2])

ԱՐԵՎԵԼՔԻ ԵՒՄ ԴԱՐԱԳԼՈՒԽՔ

Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով, Արևելքն ու Արևմուտքը չոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլև տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ։ Հազարավոր տարիների ընթացքում էդ աշխարհներից ամեն մինը հանդես է բերել իր էս կամ էն գերազանց ուժը՝ իբրև իրեն ներկայացուցչությունը մյուսների հանդեպ։ Եվրոպա կամ Արևմուտք ասելով մի ժամանակ Հունաստան են հասկացել, նրանից հետո Հռոմ և կամ Բյուզանդիա, ինչպես որ Ասիա, և հատկապես Արևմտյան Ասիա կամ Արևելք՝ երբեմն Բաբելոն կնշանակեր, երբեմն Ասորեստան, երբեմն Պարսկաստան և երբեմն արաբական խալիֆայություն։

Եվ մինչդեռ քրիստոնյա Արևմուտքի ժողովուրդները ժամանակի ընթացքում վեր են կենում հեգեմոնիայի դեմ ու ձգտում են հավասարակշռության, մյուս կողմից իսլամական Արևելքը արաբական գերիշխանությունից հետո ընկնում է թուրքի գերիշխանության տակ և XIV դարից սկսած Թուրքիան հանդիսանում է Արևելքի ներկայացուցչությունը արևմուտքի հանդեպ մինչև էսօր։

Եվ Բաբելոնից, Ասորեստանից, Պարսկաստանից ու արաբական իշխանությունից հետո Արևելքը երբեք չէր ունեցել էսքան վայրենի, էսքան անկուլտուր ու անարժան մի ներկայացուցչություն։ Մինչև թուրքական գերիշխանությունը՝ Արևելքը, որ կրոններ էր տվել աշխարհքին, փիլիսոփայական սիստեմներ, շատ մեծ բանաստեղծներ ու գիտություններ՝ մեծ էլ հարգ ու հմայք ուներ և միշտ կենդանի ապրում էր ավանդական խոսքը թե՝ Արևելքից է լույսը։ Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացողություններ։

Նա ոչ միայն ինքը չստեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չավեց աշխարհքին, այլև դրսից չընդունեց ոչինչ և շմշակեց։ Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող։ Եվ եթե արգելենք նրան իսլամ ընդհանուր անվան տակ զարդարվելու պարսիկ, արաբ կամ հնդիկ հանճարների անուններով՝ կմնա մեջ տեղը կանգնած իր նոմանդական մերկությամբ՝ ձեռքին միշտ արյունոտ սուրը։

Եվ ահա էդ արյունոտ սրով նա մորթից Արևելքի կուլտուրական ժողովուրդներին, խորտակեց նրանց հին ու փառավոր կոփ-

տուրանները և, վերջին մահացու հարվածը տալով բյուզանդական պալեոլոգոսներին, էդ սպանիչ սուրը մեկնեց Եվրոպայի սիրտը:

Չորս հարյուր տարի շարունակ գրոհ տվեց Եվրոպայի դարպասների վրա, որ խորտակի ու ներս խուժի՝ սպանելու արևմտյան քաղաքակրթությունը, ավերելու բարեշեն քաղաքները, ավարելու դարերով դիզած բարիքները, իր ձիանների սմբակների տակ տրորելու հումանիզմն ու վերածնությունը, կոտորելու Ռաբլեին ու Տասսոին, Շեքսպիրին ու Սերվանտեսին, Ռուբենսին ու Ռաֆայելին, Կոպեռնիկին ու Գալիլեյին, Կոլումբոսին ու Գուտեմբերգին և նմաններին:

Չորս հարյուր տարի Արևելյան Եվրոպան ահով ու սարսափով դիմագրավեց Նրա դժոխային արշավին, մինչև որ XVII դարում, Վիեննայի պատերի տակ, վերջնականապես կարեց նրա առաջ անցնելու հույսը:

Այնուհետև կռիվն իրեն վրա առավ նոր գորացող Ռուսաստանը, որ երեք հարյուր տարի է՝ անհաշտ ու անդադար պատերազմ է վարում էդ դաժան ու խավար ուժի դեմ՝ հետզհետե կտրատելով ու կրճատելով նրա լայնածավալ տերության սահմանները և էսօր էլ, ահա, տալիս է վերջին հարվածը:

Մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհքի առաջ, և երբեք նրա կառավարության հոգի կոդմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթության համար:

Տոն է մանավանդ էն ազգերի համար, որոնք դարերով կրել են թուրքի անտանելի լուծը և դարերով լալիս են իրենց անվերջ կորուստները նրա ձեռքից:

Եվ ահա էսօր նա՝ ռուսական հզոր բանակի առջև պարտված ու ջարդված հարյուր հազարավոր անմեղ մանուկների, տղամարդկանց ու կանանց արյունով արյունոտ իր սուրը ձգելով հաղթողին՝ տեղի է տալիս դեպի իր հին բունը, դեպի Անդորայի հովիտները, որտեղից դարեր առաջ սկսեց իր քամնելի ասպատակությունը աշխարհքի վրա:

Արդեն անցավ Վերին Եփրատից դենը, և հեռադիրն աշխարհքին ավետում է, թե Մեծ Հայաստանը վերջնականապես մաքրված է թուրքական տիրապետությունից: Վերջին գրհն էլ՝ հոշոտված ու ծվատված՝ արդեն ազատված է նրա ճանկերից:

Պատմական ի՞նչ հոյակապ ավետիս: Բացվում են Արևելքի ոսկի դռները ազատ ժողովուրդների, լուսավորության ու քաղաքակրթության համար և սկսվում է մի նոր դարագլուխ Արևելքի պատմության մեջ:

1918

ՀԱՆԳՑՐԵՎ ՀՐԴԵՀԸ

Պատերազմն ինքն արդեն մի վայրենի ու բարբարոսական երևույթ է։ Բայց եթե սա համարվի վիճելի, ապա մենք, հայերս ու թուրքերս, ունենք միանգամայն անվիճելի ապացույց մեր վայրենության ու բարբարոսության, երբ խաղաղ ժողովուրդները վեր են կենում իրար վրա՝ հաճախ իրենց կանանց ու երեխաների հետ և իրար կողոպտում ու կոտորում ամենադաժան կերպով։ Դա հայ-թուրքական ընդհարումներն են։ Եվ էս երևույթն էլ դառնում է ավելի զարհուրելի էն հանգամանքով, որ տեսնում ենք, թե ի՞նչ անտարբերությամբ են սրան թամաշա անում էդ ժողովուրդների ինտելիգենցիաները, որոնք հաճախ նույնիսկ իրենք են դրդապատճառ և դառնում են դրան մասնակից։

Կար ժամանակ, որ ես կարծում էի, թե միայն թուրքերն են ընդունակ էս վայրագություններին. ավա՞ղ, ժամանակն ու դեպքերն եկան անհերքելիորեն ապացուցելու, որ ոչ մեկս մյուսիցս ետ չենք մնում և դեռ ավելին՝ աշխատում ենք իրար գերազանցել։

Եվ ահա էսօր էլ, երբ ամեն կողմից մեր երկրի վրա բանակներ են շարժվում, արևելքից՝ Անգլիան, արևմուտքից՝ Գերմանիան, հարավից՝ թուրքը, և սրանց առաջընթաց շահսևաններ, քրդեր, չետնիկներ և զանազան ագռավների խմբեր, մեր «ազատ», «հասարակապետական» խաղաղ ժողովուրդները, հայերն ու թուրքերը վեր են կացել իրար գյուղեր քանդելու և իրար կոտորելու։

Եվ մինչդեռ մի կողմից մութ ուժերը տենդորեն աշխատում են էս ժողովուրդներին ավելի ևս կատաղի իրար դեմ հանելու, մյուս կողմից տեսնում ենք, թե ինչքան քիչ են էն մարդիկ, որ վրդովվեին էս ահռելի կործանիչ ու խայտառակ երևույթից ու դուրս գային սրա դեմ։

Մտածում եք, թե՝ ո՞ւր են հապա էն բազմաթիվ մարդիկ, որ դեռ երեկ մարտնչում էին ժողովրդի անունով։

Ես ստիպված եք բացականչելու. Ո՞ր եք դո՛ւք, ժողովրդի բարեկամներ, ամեն տեսակի և ամեն կուսակցության սոցիալիստներ և ոչ սոցիալիստներ, միթե չե՞ք նկատում էս հրդեհը, որ լափում է մեր ժողովրդին, մի՞թե չգիտեք, որ ժողովրդին ամենից առաջ իր կյանքն է հարկավոր, և մի՞թե չգիտեք, որ նրան կրակից հանելը ավելի բարձր ու ազնիվ գործ է, քան ամեն հեղափոխություն ու հասարակապետություն։

Դո՛ւրս եկեք միացյալ ուժերով հանգցնենք էս օրեցօր ծավալվող հրդեհը։

Հայտարարենք հրդեհաձիգներին թշնամի կովկասյան բոլոր ժողովուրդների և ամենից առաջ ազատության, ու միահամուռ կուվենք նրանց դեմ։

Կատարենք մարդասիրական ու ինքնապաշտպանության նվիրական մի գործ։

Երևակայենք, թե մեր հարազատները, մեր կանայք ու մեր երեխաներն էլ են էն կրակի մեջ և էնպես շտապենք։

Ես համոզված պիտի լինենք, որ եթե ուշանանք, մեր հարազատներն ու մենք ինքներս էլ պիտի զոհ դառնանք էս հսկայական հրդեհին՝ անիծելով մեր հեղափոխությունն ու ազատությունը։

ՀԱՅՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՊԸ ԴԵՐՄԱՆԻԱՑԻ ՀԵՏ

Մի ազգ մի ուրիշ ազգի հետ շփվում ու կապվում է իր քաղաքական խնդիրներով կամ կուլտուրական փոխադրեցություններով։

Նոր հայությունը քաղաքական կյանք չի ունեցել և իբրև մի քաղաքական մարմին չէր կարող հարաբերություն ունենալ մի որևէ պետության հետ։ Հայկական հարցն էլ, այն օրվանից, որ առաջ է եկել, երբեք չի եղել հայ ժողովրդի՝ իրեն ձեռքին, այլ միշտ եղել է այս կամ այն մեծ պետության ձեռքին։ Ես հայկական հարցի մի ձեռքից մյուսը անցնելու հետ էլ հայ ժողովուրդը տարուբերվել է այս կամ այն պետության օրիենտացիայի միջև։

Այս տարուբերումների ժամանակ նա հաճախ է ընկել ակընհայտնի սխալների մեջ, մոլոր ճանապարհների վրա և ունեցել է մեծ հիասթափումներ ու ծանր կորուստներ։

Հայկական հարցը երբ կապված էր Ռուսաստանի հետ, այն ժամանակվա Ռուսաստանի հակառակորդ Անգլիան Ռուսաստանի դեմ գնալով՝ դեմ գնաց և հայկական հարցին, ու ստեղծվեց 1877—78 թվականների պատմությունը։

Նրանից հետո, Բեռլինի դաշնագրությունով հայկական հարցն ընկավ եվրոպական մեծ պետությունների ձեռքը, բայց իրոք Անգլիայի ձեռքը, և ահա այժմ էլ ընկանք Ռուսաստանի աչքից, և 1880-ական թվականներից սկսած փչացան հայ ժողովրդի և ռուս կառավարության հարաբերությունները, և շատ աղետալի հետևանքներ ունեցան մեզ համար: 1912 թվականից նորից անցավ Ռուսաստանի ձեռքը, առաջ բերից նոր խլրտումներ ու նոր դառնություններ: Եվ այդ ամենի ծանր հետևանքները կրեցինք ներկա մեծ պատերազմի ընթացքում:

Եվ այսպես, հենց այն գլխից միշտ եղել ենք զանազան СКВОЗНЯК-ների մեջ: Հայկական հարցը ժամանակավորապես ընկել է սրա կամ նրա ձեռքը, հայկական հարցի հետ էլ մեր մեղն է թեքվել այս կամ այն կողմը, ու ամեն մեկի հետ էլ ժամանակավորապես բարեկամանալով, բոլորից էլ կտրվել ենք մշտապես ու շատերի հետ էլ թշնամացել:

Եվ ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Խորովածը չկերանք՝ ծուխից քոռացանք»:

Բայց մենք ունեցել ենք մի ուրիշ կյանք, որի տերն ու տնօրենն եթե ոչ ամբողջովին, գոնե մեծ չափով մենք ենք եղել: Դա մեր կուլտուրական կյանքն է, մեր գրականությունն է, մեր դպրոցն ու մեր մամուլն է, թեկուզ և համեստ, բայց մերը:

Ահա այս կողմից է, որ մենք ազատ ու հաստատուն թանկագին կապեր ունենք մի քանի ազգերի հետ, որոնց մեջ Ռուսաստանն ու Գերմանիան շատ մեծ տեղ ունեն:

Առ այժմ խոսքս Գերմանիայի մասին է: Ինչպես մի ժամանակ հայերը, թեև ենթարկված էին Պարսկաստանի ազդեցությանը, բայց բարձր կուլտուրայի համար դիմում էին հին Հունաստան, այնպես էլ նոր հայությունը, թեև Ռուսաստանի սահմաններում ու նրա կուլտուրայի ենթակա՝ բայց բարձր զարգացման համար միշտ դիմել է Գերմանիա:

Եվ սկսած Խ. Աբովյանից ու Ս. Նազարյանից, մեր նշանավոր գրողներից, հրապարակախոսներից և մանավանդ մանկավարժներից մեծագույն մասը ստացել են գերմանական բարձրագույն կրթություն և հանդիսանում են Գերմանիայի հոգեզավակները:

Սա էլ մի ուրիշ բարձր տեսակի աշխարհակալություն է, որ անում են մեծ կուլտուրական ժողովուրդները, և անում են ոչ թե իրանց դրեդնոուտներով, թնդանոթներով ու ցեպպելիններով, որոնք կարող են փչանալ, ծովում խորտակվել կամ երկնքից ցած ընկնել, այլ իրանց մեծ բանաստեղծներով, մեծ գիտնականներով ու մեծ դեղարվեստագետներով, որոնք՝ միշտ հզոր ու սիրելի՝ տիրում են

ժողովուրդների մտքերին ու սրտերին և թանկագին ու հարազատ կապերով կապում են իրանց հայրենիքների հետ։

Եվ ահա Գերմանիան, որ այսքան անսպասելի հայտնվել է մեր երկրում, հայ ժողովրդի մեջ իրան հարազատ ու թանկագին շատ բան է գտնելու և հոգեկան ու բարոյական շատ ամուր կապ է տեսնելու։

Մի կապ, որ հաղար անգամ ավելի նվիրական է, քան ամեն քաղաքական դաշնագրություն։

Ինչ խոսք, որ այս բարձր կապով լուսավոր Գերմանիայի հետ կապված հայ ժողովուրդը միշտ կմնա նրան երախտագետ ու բարեկամ։ Սակայն մյուս կողմից էլ բնական ու վայելուչ է, որ Գերմանիան այս թոհ ու բոհի մեջ հովանավորի իր լուսավորության ավազանում մկրտված ժողովրդին, իրան հետ այսքան բարձր կապով կապված ժողովրդին, և դա լինելու է ոչ միայն ըստ ամենայնի օգտակար, այլև միաժամանակ վերին աստիճանի մի զեղեցիկ գործ այս խելագար վերուվարումների մեջ։

<ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

Երբ հանուր աշխարհի ականջին ընդհանուր խաղաղության ավետիսն է հնչում, երբ պատերազմից տանջված վրաց և հայ ժողովուրդները պատրաստվում են նոր, հանդիստ և անկախ կենցաղի արշալույսին դիմավորելու, հենց այն ժամին՝ մի առավոտ՝ երկու դեմոկրատ հասարակապետության դեմոկրատները զարթնելով իմանում են, որ իրար կոտորելու հրամանն են ստացել։

Ամեն մի պատվավոր անձ, հայ թե վրացի — այս միևնույն է — անկարող է չհասկանալ, թե որչափ սոսկալի, անմիտ և աղաղակող է երկու ժողովուրդների այս ընդհարումն։

Երկու կողմից արձակած գնդակները թափանցում են այսպես մտածող մարդու սիրտը։ Չկա ոչ մի արդարացումն այս պատերազմի պատճառիչների — կամա թե ակամա, որովհետև նույնիսկ ամենաանմեղը նրանցից պարտավոր է պատասխանատու լինել երկու ժողովուրդների դիմաց։

Սակայն այժմ մեղավորներ գտնելու և նրանց դատելու ժամանակը չէ։

Այս ժամին պետք է ամբողջ ուժը գործ ածել արյունահեղությունը դադարեցնելու և պատճառը վերացնելու համար։

Բայց ինչո՞ւմն է պատճառը։

Սահմանագծային վեճ՝ Լոռու և Ախալքալաքի ոլոնների հարցը։

Պատերազմական գործողությունը դադարեցնելուց հետո անհապաղ պետք է լուծել այս հարցը։ Եվ դաշնակիցները՝ հայտնելով, թե կվերականգնեն Սև ու Կասպից ծովերի միջև խաղաղություն, պետք է ի նկատի ունենան, որ ամենացավոտ ու ամենաբարդ հարցն է այս, որովհետև բացի բնական, այսպես ասած, տեղի բնակչությունների կամավոր ներգաղթման և տեղափոխության, ամեն մի եկվոր տիրապետողն աշխատում է ամեն կերպ խառնել իրար հետ բոլոր ժողովուրդները, խեղաթյուրել սրանց էթնիքական և տերիտորիական ամբողջությունն այն դիտավորությամբ, որ իր դեմ չունենա առողջ և կենսունակ միություններ, հաստատել և ապահովել իր տիրապետությունը մեկուսացրած ժողովուրդների անդամահատված երկրամասերի վրա։

Ինձ թվում է, թե քաղաքական, ստրատեգիական և նույնիսկ էթնոգրաֆիական սկզբունքները կմնան խախուտ և անգործադրելի ժողովուրդների կողմից։ Իբրև հաստատ, անդրդվելի միակ հիմքը պետք է լինի կուլտուր-պատմական սկզբունքը։

Ժողովուրդները շատ բան կարող են մոռանալ, բայց իրենց պատմությունը, իրենց կուլտուրան չեն կարող մոռանալ։ Ու իրականությունն ապացուցանում է, որ կուլտուր-պատմական սկզբունքները ժողովուրդների համար առավել թանկարժեք են, քան թե էթնիքականն անգամ։

«ԶԻՆՎՈՐԱԳՐՎԵԼ ԵՆ»

«Ժողովրդի ձայնի»[1]) հրատարակության առիթով իր ընթերցողներին հաշիվ տալիս «Աշխատավորը» շարել էր նոր թերթի աշխատակիցների անունները, որոնց մեջ կան մեր հայտնի գրողների, նրանց թվում և իմ անունը, ու հայտարարել էր, թե՝ «զինվորագրվել են...»։[2])

Իհարկե, սա կուզող կուսակցականի լեզու է, վրդովված աղանդավորի տոն է, բայց ես ուզում եմ էս առիթով մի երկու խոսք ասել։

«Հորիզոնը» իր հաշվետվության մեջ, էն էլ միայն իմ մասին ճիշտ էր նկատել, ասել էր, թե իր տեղը չի։[3])

Իհարկե «Ժողովրդի ձայնը» լրագիր է, էն էլ որոշ կուսակցության բերան. ինձ նման մի անկուսակցական բանաստեղծ մարդու համար ի՞նչ տեղ է սա։ Շատ-շատ ես կարող եմ հյուր լինել էստեղ, թեկուզև պատվավոր հյուր։ Եվ եթե հոդված գրեմ, կարող է էն տեսակ հոդված լինի, որ խմբագրությունը ստիպված լինի տակը ծանոթություն դնելու։

Բայց էդպես եմ ես և՛ «Հորիզոնում», էնտեղ էլ իմ տեղը չի։ Էնտեղ էլ հաճախ իմ հոդվածների տակը ծանոթություններ են դրել և կարող են դնել։ Էդպես է եղել և էդպես կլինի նաև ուրիշ լրագիրներում։ Դրանցից ոչ մեկը իմ տեղը չի, ինչպես և իմ նմանների։

Այո՛, էսպես մարդիկ կան, որոնց տեղը չեք գտնիլ, թեկուզ որոնելով գնանք հասնենք մինչև իրենց տունը։

Ես դրանցից մեկն եմ։

Ահա լրանում է երեսուն տարին՝ ես շարունակ զանազան տեղեր եմ ընկնում, որոնցից ոչ մեկը իմ տեղը չի։ Երեսուն տարի է, ես որոնում եմ իմ տեղը, դեռ չեմ գտել, և երեսուն տարի է, ես միայն պատրաստվում եմ իմ գործով՝ գրականությունով զբաղվելու։ դեռ չեմ սկսել...

Հիմի շատերը կզարմանան թե՝ ինչպե՞ս թե դեռ չեմ սկսել... հապա որ էնքան գրել եք...

Այո՛, ճիշտ է, գրել եմ, բայց ոտի վրա, ի միջի այլոց։

Գրել եմ, երբ իբրև հիվադ կամ հոգնած մարդ, մի երկու ամսով գնացել եմ որևէ ամառանոց հանգստանալու և կամ ավելի հաճախ, երբ հիվանդ անկողնում պառկած եմ եղել։ Սրանից էլ սովորություն է դարձել, եթե մի քանի օր հիվանդանում եմ, մտերիկ ծանոթներս ու ընկերներս հարցնում են, թե ի՞նչ եմ գրել։

Բայց ի՞նչն է պատճառը, որ ինչպես իմ նմանները չեն գտել իրենց տեղը, էնպես էլ ես իմ տեղը չեմ գտել, չեմ նստել ու իմ գործը չեմ սկսել, այլ դեռ պատրաստվում եմ...

Սրա պատճառը կասեի, եթե մինը լիներ, և, վերջապես, էս խնդրով զբաղվելու ժամանակն էլ չի։

Էս հոդվածով ես միայն ուզում եմ մի բարձր տեսակի ծանր դրամայի վրա ակնարկել և զգուշացնել, որ էն լեզվով չխոսեն էս տեսակի մարդկանց վրա, ինչ լեզվով խոսում էր մեր նախորդ մամուլն առհասարակ և այժմյան մամուլը մասամբ, որից մի նմուշ հանդես է բերում դժբախտաբար «Աշխատավորը», հայտնելով, թե «զինվորագրվել են...»։

Թերևս մեր մեջ բացառություններ լինեն, բայց մենք զինվորներ չենք և չենք կարող զինվորագրվել որևէ թերթի կամ կուսակցության։ Եթե դրանց մեջ ու դրանց շրջանում էլ լինում ենք, էդ միայն աշխարհագրական հանգամանք է, ուրիշ ոչինչ։ Հոգեկան կապ ու աշխատակցություն չկա ընդհանրապես։

Ես ինքս անցել եմ գրեթե բոլոր կուսակցությունների միջից



«Հանգցրեմ հրդեհը» հոդվածի ինքնագրի առաջին էջը:

(թեև շատ արագ ու թեթև), և չեմ կարողացել մերվել, ձուլվել ոչ մեկի հետ։

Եվ սրա պատճառը հենց նրանց վատությունը չի եղել։ Ո՛չ, և ոչ էլ նրանցից հալածվելը, և գլխավորը թերևս էն, որ ես ուրիշ եմ. ես չեմ կարող մի ծրագիր ընդունեմ ու 40 տարի դրա վրա նստեմ ու պարծենամ, ճիշտ էնպես, ինչպես պարծենում են «Մշակի» մարդիկը, թե 40 տարի մենք մնում ենք հավատարիմ Արծրունու գաղափարներին և նույն ուղղությանը։ Էդպես էլ ուրիշ հին կուսակցություններ։ Մարդիկ ուզում են սրանով պարծենան ու աշխարհք զարմացնեն, իսկ ես ապշում եմ, թե ինչպես կարելի է 40 տարի նույն կարծիքի լինել ու չփոխվել։

Սրանք ինձ հիշեցնում են Մոլլա Նասրադինին, որ սաղի մի տեղից բռնել էր ու անդադար զարկում էր լարերին միօրինակ։ Երբ կինը հարցնում է, թե՝ ա՛յ մարդ, ախր սաղ ածելու ժամանակ ուրիշները մատները ման են ածում. մոլլեն պատասխանում է, թե՝ նրանք ման են ածում, որ գտնեն ու չեն գտնում տեղը, իսկ ես գտել եմ։

Եվ շարունակում է զարկել նույն ձևով, նույն տեղը, նույն լարերին։

Պատահում է, որ ոչ միայն 40 տարվա, այլ նույնիսկ 40 օրվա ընթացքում մարդու մեջ հիմնական փոփոխություններ են կատարվում։ Դեռ ավելի արագ։

Իհարկե, էն մարդը, որի միտքը անդադար գործում է ու որոնում։

Այո՛, նա կարող է և շատ սխալների մեջ ընկնել, բայց մի տեղ 40 տ<արի> նստել չի կարող։ Եվ որովհետև ես դրանցից մեկն եմ, ինչպե՞ս կարող եմ զինվորագրվել էս կամ էն կուսակցությանը կամ նրա թերթին։

Դարձյալ ասում եմ։ Ես սրանով բնավ չեմ մեղադրում ուրիշներին կամ քամահրում, այլ իմ հոգեբանությունն ու իմ դիրքն եմ պարզում։

Նրանք, և՛ կուսակցությունները, և՛ նրանց թերթերը կարող են շատ կարևոր ու շատ լավը լինել, բայց դարձյալ «իմ տեղը» չեն լինիլ և ես ինձ նրանց զինվորը չեմ համարիլ, նրանց անունով ինձ չեմ մկրտիլ։

Ահա քրիստոնեությունը. ինձ համար էնքան աստվածային է, բայց ես քաշվում եմ ինձ քրիստոնյա անվանելու։ Մարդու աշխատանքի ու վաստակի արդար բաշխման գաղափարը ինձ համար էնքան սուրբ է ու վսեմ, բայց ինձ սոցիալիստ չեմ անվանիլ երբեք։

Մի կողմից քաշվում եմ, որովհետև ոչ մեկը չեմ կատարել- Քրիստոսն ասում է՝ երկու շապիկից մեկը տուր չունեցողին, իսկ ես մի քանի շապիկից մեկն էլ չեմ տալիս հաճախ։

Մյուս կողմից էլ վախենում եմ, որովհետև մեզանից լիքն են կեղծ ու [այլանդակ] քրիստոնյաներով ու կեղծ սոցիալիստներով։ Էսպես կոչված գայլերից քրիստոնյաների ու սոցիալիստների բազմությունից, քրիստոնեության ու սոցիալիզմի զինվորների բազմությունից, քրիստոնեության և սոցիալիզմի գաղափարագարներից։

Միտքս պարզեմ։

Գաղափարները մեծ բաներ են։ Մեծ գաղափարները մարդկանց մեծացնում, զորացնում ու ազնվացնում են, մի խոսքով մարդը դառնում է գաղափարական։ Բայց դրա համար պետք է մարդու գլուխը էնքան մեծ ու բանական լինի, որ մի որևէ մեծ գաղափար մտնի նրա մեջ ու մերվի։

Դժբախտաբար մեծ մասամբ էսպես չի լինում, գաղափարը չի մտնում գլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ։

Այո՛, սովորաբար փոքր գլուխներն իրենք են մտնում մեծ գաղափարների մեջ, ինչպես մեծ ծովի մեջ ու էս տեսակ մարդիկ հոգեպես, բարոյապես, մտավորապես խեղդվում են ու դառնում են ո՛չ թե գաղափարական, այլ, եթե կարելի է էսպես ասել, գաղափարագար։ Իսկ սա նունքան դժբախտ երևույթ է, ինչպես խելացիի հանդեպ խելագարը։

Էս տեսակ մարդիկ ո՛չ թե առողջ գաղում են, այլ դուրս են տալիս, և հավատալով, որ իրենք գաղափարի զինվորներ են, իրենք իրենց տաքանում են ու դառնում են վտանգավոր և մինչև անգամ դաժան և գարշելի արարածներ. մինչդեռ գաղափարի մարդը միշտ զրավիչ է և ազնիվ։

Եթե հոգևորական է՝ լինում է մոլեռանդ, անգիր արած դուրս է տալիս ավետարանի նախադասությունները, որոնք ոչ մի կապ չունեն իր սրտի հետ, իր ներքին մարդու հետ, և մի՛ սպանաներ ասելով, միշտ կարող են ինկվիզիցիա սարքել։

Եթե սոցիալիստ է՝ անգիր գիտի ի՛նչ են ասել Մարքսն ու Էնգելսը, բայց բնավ չգիտի թե ո՛ւմ, ո՛րտեղ, ի՛նչ պետք է ասի ինքը, դուրս է տալիս նրանց բառերն ու նախադասությունները և վերջ ի վերջո տեսորն է իր իդեալը՝ անհատական թե մասսայական, իբրև իր ներքին անկարողության ապոֆեոզը։

Էսպես։ Ո չ սրանցից եմ, որ սրանց հետ լինեմ, ո՛չ էլ, ինչպես ասի, իբրև քրիստոնյա կամ սոցիալիստ էնքան [կատարյալ],

որ թեկուզ սակավաթիվ սոցիալիստների ու քրիստոնյաների հետ լինեմ, որոնք պակաս չեն կյանքում։

Վերջապես, ինչքան էլ վերջիններիս հարգեմ ու սիրեմ, մենք մի տեսակ հոգեպես տարբեր կլիմաների մարդիկ ենք։ Մինչդեռ մեկի պաշտամունքի կենտրոնը բարոյականությունն է, մյուսի իդեալը ազատ ու արդար հասարակակարգը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է։

Գեղեցիկը, որ ասում եմ՝ շատերը գեղեցիկ կին կհասկանան, ինչպես բարոյականություն, որ ասում ենք՝ լոկ սեռական ողջախոհություն են հասկանում։ Բայց ես քչերի հասկացած գեղեցիկն եմ ասում։

[Սրանից հետո ես ինչպե՞ս կարող եմ դինվորագրվել որևէ կուսակցության կամ նրա թերթին։

Միթե՞ աչքեր չունեք դուք]։

Եզրափակումը։

Կուսակցության մարդը հիրավի կուսակցության զինվորն է, կուսակցական մարմնի ամբողջության մի անդամն ու մասը և մշակ է հասարակական կամ քաղաքական պարզ ու որոշ սահմանած մի գործի, մի ծրագրի, իսկ բանաստեղծը իր խառնվածքով ի ծնե ազատ ու սավառնուն մի հոգի և ինքնիշխան ստեղծագործող — եթե կուզեք ամեն մինը մի ջոկ ու առանձին կուսակցություն, եթե առանց կուսակցության բանը յոլա չի գնում։

Ես ինչպե՞ս կարող եմ դինվորագրվել որևէ կուսակցության կամ նրա թերթին։

Բայց ես ինչո՞ւ եմ աշխատակցում «Ժողովրդի ձայնին», ճիշտ էնպես, ինչպես «Հորիզոնին» և ուրիշ թերթերին <. . . .>

1920

ՎԵՐՋԻՆ ՎԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգեվարքին հասած Տաճկաստանը իր վերջին վատությունն է անում հայ ժողովրդի հետ։

Տաճկաստանը էտեղ ես ասում եմ նրա էն վատթար կառավարությանը, որ միշտ զբաղված եղավ ուրիշների տները քանդելով և իրեն համար էլ երբեք տուն չշինեց։ Եվ բնավ ես ի նկատի չունեմ տաճիկ հասարակ ժողովուրդը, որ պիտի ապրի, և ավելի լավ պիտի ապրի էս օրվան կառավարության մահից հետո։

Իմ կարծիքով ժողովուրդները լավն են առհասարակ, ինչպես որ կառավարություններն էլ վատ են առհասարակ։ Եվ ավելացնեմ՝ հիմար են առհասարակ։

Իսկ տաճիկ կառավարությունը, որ ամենավատն է կառավարությունների մեջ՝ հետևաբար և ամենահիմարն է։

Ու աստծու ողորմություն է, որ վատերը հիմար են լինում, թե չէ ինչ կլիներ աշխարհքի դրությունը։

Մի րոպե երևակայեցեք, որ Տաճկաստանը իր ոճրագործ էնվերներով ու Թալեաթներով էնքան հիմար չլիներ, որ չմտներ մեծ պատերազմի մեջ և էսօր պահած ունենար իր պատերազմից առաջվան բանակն ու կարողությունը...

Ի՞նչ կլիներ մեր և շատերի դրությունը։

Հերիք չէր, որ մտավ մեծ պատերազմի մեջ ու խորտակվեց, այժմ էլ փոխանակ խելացի կերպով իր փշրանքները հավաքելու և իր սահմաններում կազդուրվելու մասին հոգալու՝ նորանոր ավանտյուրաներ է անում Անատոլիայում, հաղթական հակառակորդներին շարունակ չղայնացնում ու ստիպում թե՝ եկեք վերջնականապես դուրս ջարդեցեք։

Եվ հարվածները իջնում են հունական բանակի ձեռքով։

Անատոլիայում իբրև թե արդեն մեծ բան արին, այժմ էլ ձի են քշում դեպի Հայաստան։

Ի՞նչ պետք է անեն։

Մի քիչ քանդեն, մի քիչ թալանեն ու մի քիչ էլ կոտորեն, բայց ավելի շատ վրդովեն ու կատաղեցնեն։

Արդեն դաշնագիրն ստորագրված է, և ստորագրող մեծ պետությունները չեն կարող այժմ անտարբեր նայել, թե ինչպես է արհամարհվում իրենց ուժն ու իրավունքը։ Եվ մի նոր պատիժ էլ կարող է սրա ետևից հասնել...

<ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ>

....Բայց պատճառն ի՞նչ է, ինչու՞ է էդ ողբալի դրության մեջ մեր գյուղի ուսումնարանը, որը շատ ավելի թշվառ վիճակ ունի, քան դրել եք և շատ ավելի քամմնելի պատմություններ, որ չգիտեք։

Պատճառն ի՞նչ է։

[Ժողովո՞ւրդն է վատ։

Ո՛չ, քեզ պետք է ասեմ, որ մեր ժողովուրդը լավ ժողովուրդ է եղած, ինչպես և մեր հարևան գյուղերի ժողովուրդները]։

Պատճառը մինն է, գյուղական բոլոր ցավերի պատճառը, գյուղական բոլոր աղետների ստեղծողը՝ գյուղի «պաչոտնին»։ Ով իմանա-չիմանա, դու հո լավ ես իմանում, թե ինչ բան է գյուղի պաչոտնին։ Հազարից մի անգամ է նա լավը լինում, և որտեղ լավն է լինում՝ էնտեղ էլ լավ գործեր են կատարվում։ Սովորաբար նա մի հրեշ է, որ նստած է մեր ամբողջ ժողովրդի վրա և նա է տիրում ու կառավարում ամեն տեղ։ Դու գիտես, որ մեր աշխարհքը գյուղեր են ու գյուղացիություն, իսկ գյուղերը կառավարում են տանուտերերն ու քյոխվաները։ Տանուտերերն ու քյոխվաներն էլ գյուղի պաչոտնիներից են կամ նրանց ձեռքին են, փուճ տասը հազարից մեկի բացառությամբ։ Եվ ժողովուրդը ո՛չ հասկանում է, ո՛չ էլ կարողանում է նրանց ազդեցության ու իշխանության տակից թեկուզ մի քիչ հեռու գնա։ Եվ հազարավոր ծանր փորձերով գիտի, որ նրանց կամքի դեմ ըմբոստանալը կամ նրանց դեմ դուրս գալը վերջանում է ոչ թե ապարդյուն, այլև շատ աղետալի։ Եվ առհասարակ ամեն մի ուժ, ամեն մի հիմնարկություն, ամեն մի երևույթ, որ հայտնվում է գյուղական մթնոլորտում, կամ պետք է հարմարվի պաչոտնիների կամքին ու

ծառայի նրանց օգտին կամ պետք է վերանա, հետևյալ մեջտեղից։ Հաշտություն չկա։ Էդ տեսակ մի հիմնարկություն է և՛ դրպրոցը, որը չնայելով իր բարի ու չեզոք բնավորությանը, այսուամենայնիվ նրանց թշնամին է իր ուսուցչով կամ ուսուցիչներով միասին, և եթե ուսումնարանը իր կազմով ու իր ամեն հանգամանքով չի հարմարվում նրանց, չի բարձրացնում նրանց դիրքը կամ նյութական օգուտը չի ավելացնում՝ կռիվը կռիվ է, ամեն ճանապարհով, ամեն ձևի և անվերջ ու անհաշտ։

Հիմի ասող կլինի, թե ի՞նչ բարոյական դիրք կամ ի՞նչ նյութական օգուտ...

Այո՛, նա, պաշտոնին պետք է իր շրջավայրում ամենակարողի դիրքի մեջ լինի և առանց նրան ոչ մի բան չպետք է կատարվի։ Էս պայման է։ Նա կխառնվի ամեն բանի մեջ, և ամեն տեղ ու ամեն անգամ էլ նրա դեմ առարկություն չպետք է լինի։ Իսկ նյութական օգուտ... ուսումնարանի շինություն է, նրա ձեռքով պիտի կատարվի (ով պետք է հակառակի) էնպես, ինչպես ինքը կուզի։ Ուսուցիչը նրա միջոցով ոռճիկ պիտի ստանա, և եթե մի մասն էլ իրեն վերցնի ու առաջարկի ամբողջի համար ստորագրել... ավել հավաքի՝ պակաս տա... ուսուցչին առաջարկի իրենից գնել ինչ որ հարկավոր է, վերջապես իրեն նվերներ անել, իրեն համար ծառայություններ անել... խնդիրներ գրել տա գյուղացիների համար ու փողն ինքն ստանա... և այլն, և այլն, և այլն...

ԳՈՐԾՆ ՍԿՍՎԱԾ Է[1]

...Բոլոր երիտասարդ սրտերը ծփում են մի տենչանքով, բոլորը ձգտում են դեպի մի նպատակ՝ դեպի մեր գավառը, դեպի մեր հողը, մեր երկիրը, գործել ժողովրդի մեջ...

Ի՛նչ ենք մենք այստեղ — քաղաքում,— թշվառ պանդխտականներ, կամավոր աքսորականներ, որ իրանց համար պաշտոնների անունով պատիժներ են որոնում, հյուծվում, մաշվում ֆիզիկապես ու բարոյապես... [Այն ինչ մեր գավառում մենք հարկավոր ենք, մեր հարազատների կարիքը այնտեղից ձայն է տալիս մեզ... Մեր գավառն է մեր փրկությունը ու մեր նշանակությունը]։ Գավառը, դեպի գավառը, մենք հարկավոր ենք այնտեղ...

---

[1] [Խնդիրը լուծված է]

<ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՓՈԽՍԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

Հայաստանի բարձրավանդակը (քաղաքակիրթ) ժող<ովուրդ-ների>համար հրապարակ չի եղել, բայց գտնվելով Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի մեջտեղը, հանդիսացել է նրանց մեծ արշավանքների, վաճառականական հարաբերությունների, մշտական անց ու դարձի և մեծ շարժումների կամուրջը — մանավանդ նավագնացության զարգանալուց առաջ, և լիքն է ինչպես նրանց թողած ավերակներով, էնպես էլ նրանց կուլտուրական ազդեցությունների [հետքերով], թե՝ եգիպտա-ասորա-բաբելական քաղաքակրթության, թե՛ հունա-հռոմեական, թե՛ միջին ասիական ու իրանական, թե՛ չինական ու հնդկական, թե՛ նոր-եվրոպական: Սրանք բոլորը անցել են Հայաստանի վրով, հեղեղել են Հայաստ<անը>, եթե մեկն էլ <1 անգամ.> չի անցել՝ նրա էլ շորշոփին է հասել:

Խառն ազգաբնակություն ունեցող քաղաքներից ո՛րն էլ դրնաք, [ո՛ր ծերից էլ մտնեք], կտեսնեք սովորաբար փղերքներին, ետ ընկած թաղամասերում առանձնապես առանձին ցեղերի պատկանող բնակիչներին՝ նստած իրենց հատուկ բնակարաններով, նիստ ու կացով, լեզվով ու տարազով: [Ապա թե] ներս մըտնեք, կտեսնեք՝ խառն են, բայց դարձյալ ամեն մի թաղում որոշ ազգի բնակչություն է գերակշռում. իսկ երբ հասնում եք քաղաքի կենտրոնի հրապարակներին կամ կամուրջներին, էնտեղ արդեն խռնված են ամենքը ու իրար են անցնում [խառն ի խուռն] ամեն լեզվի ու տարազի մարդիկ:

Աշխարհքն էլ էսպես է:

Քաղաքակրթության մեծ օջախներից ու հաղորդակցության մեծ ճանապարհներից հեռու ժողովուրդները երկար դարերով մընում են անխառն՝ իրենց հատուկ կյանքով ու կերպարանքով, տարազով ու լեզվով. իսկ ժողովուրդների համար կենտրոնական հրապարակ կամ կամուրջ հանդիսացող երկրները անվերջ հեղեղման մեջ են եղել և ներկայացնում են խառնուրդ հնուց անցած գնացած կամ նրանցից հետո նոր եկած զանազան ցեղերի և նրանց ամեն տեսակի ազդեցությունների <....>

<ՀԱՋԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Այո՛, անկախությունը լավ բան է: Դրա մասին չխոսենք: Բայց եթե ինքը՝ հայ ժող<ովուրդը> ֆիզիկապես, ֆինանս<ապես>, բարոյապես անկարող է իր անկախությունը պաշտ-

պանելու, ոչ մի պետություն էլ հանձն չի առնում նրան հովանավորելու և պաշտպանելու,— ինչ պետք է անես։ Ձենք ուզում։

Եթե անկախությունը թոկ է դառնալու հայությունը խեղդելու համար — չենք ուզում։

Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փոքրիկ վանդակ ամեն կողմից դռները փակած և միակ դուռն էլ, որ բաց է— բաց է տաճիկ ասկյարի համար, չենք ուզում։

[Անկախությունը] <....>

<ՄՏՔԵՐ ՕՐԱՏՏՐԻՑ>

Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է։ Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են։ Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը — երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը։ Ինչ դեր ունի ամեն մի ժողովուրդ։ Նեղ ազգայնականությունը և այլն ինչքան են վնասում, կառավարություններն ինչքան են վնասում, աղանդները և այլն։

Մեծ պատերազմի հաղթությունը եղավ ռուսական բոլշևիզմը։ Նա եղավ էն ցնցումը, որ նոր հոգեբանություն ու նոր կյանք է առաջ բերելու։ Նոր ճամբի վրա է գցում։ Հնի խորտակումն է, որ արդեն զզվեցրել էր ամենքին. իմպերիալիզմի և կապրտալիզմի դեմ բողոքել են բոլորը — ցրիվ և դժգոհ են եղել բոլորը — սա միանգամից էդ զայրույթը հավաքեց և զարկեց։ Եվ ստիպում է [նոր] մտածել ու նոր ճամբա բռնել...

...Մենք մեջ տեղն ենք— հոգևոր Արևելքի և գործնական Արևմուտքի։ Արևելքը — մարդը հասցրել է աստծուն, տրեզերքին, Աթմանին խառնել։ Իսկ Արևմուտքը — ամենաշատը մինչև դասակարգը։ Եվ տնեցել է էնպես թռիչքներ — ինչպես ֆրանսիական հեղափոխությունը — հավասարություն, եղբայրություն, և կամ անգլ[իական] մեծ խարտիան — մարդու իրավունքը...

Երկուսի սինթեզը։

Իրենց մեծ էնցիկլոպեդիստներից հետո ֆրանսիական հեղափոխությունը — ընդհանուր եղբայրություն, հավասարություն և ազատություն։

Անգլ[իական] մեծ խարտիան — մարդու իրավունքը։

Ռուսը — նոր կոմունիզմը — իսկ Արևելքը — վաղուց ի վեր։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՒՎԸ ԵՎ Խ. ԱՌՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն ԻՐԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Շատ քիչ ազգեր են ունեցել[1] էն դաժան ճակատագիրը, որ ունեցել է [և ունի] հայ ժողովուրդը։ Նրա պատմության բոլոր էջերն ու շրջանները[2] եղել են անընդհատ հալածանքների ու կոտորածների արյունոտ հանդես։ Եվ[3] զարհուրելին էն է, որ էդ ճակատագրի պատճառները պատահական չեն[4] ու վաղանցուկ, այլ մեծ մասամբ[5] մշտական, հաստատուն[6] բնության օրենքների նըման, ուստի դրանց հետևանքներն էլ մնում են ու գալիս են անվերջ։ Եվ ահա էս ազգի պատմագիրները էն գլխից իրենց տարեգրությունների մեջ սխուր[7] խոսքերով են որակում ու որոշում[8] երկիրը. Խ[1])... սպանդարան մարտիրոսաց,[2]) արևելքից սուր, և այլն, Լաստիվերտցի,[3]) <.....>

<....> մինչև մեր օրերը։ Եվ ահա էսօր էլ, երբ ռուսն իր հայրենիքն անվանում է «Св<ятая> Русь», տաճիկն[9] իր երկիրը՝ «ալ Օսման», ֆր<անսիացին>՝ «գեղեցիկ Ֆրանսիա», և այլն, և այլն, հայը անվանում է իր ծննդավայրը՝ «թշվառ Հայաստան», «սպանդարան մարտիրոսաց», «զուլումի երկիր»։

[Ճշմ<արիտ> որ թշվառ]։

[Աշխ<արհքի> երեսին մի ազգ չկա, որ ասեին՝ այս ինչ ազգի որբերը, բայց ասում են՝ հայոց ազգի որբերը]։ Մինչև այ-

---

1 [Դժվար թե աշխարհքի երեսին մի որևէ ազգ ունեցած լինի]
2 [տարիները]
3 [որովհետև]
4 [եղել]
5 [հավիտենական]
6 [մարդկային կարողությունից դուրս, մեծ մասամբ անփոփոխելի]
7 [նախ<ատական>]
8 [էն]
9 [թուրքը]

սօր լուսավոր Եվրոպան մեզ ճանաչում է հայոց որբանոցներով ու [միայն] մեր [սարսա<փելի>] կոտորածներով, որ անվանում են «հայկական սարսափներ»։

...[1]Եվ աշխարհքների կամուրջի վրա կեցած[2], մեծ ժողովուրդների մաքառումների ճանապարհին ոտի տակ գնաց[ած], մեծ բանակների ձիանների սմբակներից մաշված էդ ժողովուրդը անշուշտ պետք է մի քաղաքականություն մշակած լինի իր համար ու մշակել է գլխապահության, ինքնապաշտպանության քաղաքականություն։ Եվ լավ փորձելով ու տեսնելով, որ ինքը անկարող է իր գլուխը պահել, միշտ աշխատել է ունենալ մի հզոր դաշնակից կամ ավելի ճշմարիտը՝ հովանավոր։ Մի ժամանակ, հներում Պարսկաստանն էր էդ հովանավորը, որ կապված էր կրոնով, կուլտուրայով ու տիրող Արշակունի տան՝) արենակցությամբ։ Երբ եկավ քրիստո<նեությունը> ու բաժանեց հոգեպես ու բարոյապես, Արշակունի տոհմն էլ ընկավ Պարսկաստանում և բարեկամ երկրները դարձան թշնամի, այնուհետև ապավենը դարձավ քրիստոնյա Արևմուտքը— մինչև էսօր։ Բայց արևմուտքն էլ երկար դարերի ընթացքում միայն երկու անգամ է կարողացել իր ուժը տարածել Կովկասի ու [Փոքր Ասիայի վրա] — մինը՝ բյուզանդական կայսրությունը, մյուսը՝ ռուսականն։

Եվ ամեն անգամ, երբ էդ խաչապաշտների բանակները, իրենց խաչանիշ դրոշակներով, շարժվել են դեպի Արևելք, հայոց նահատակ ժողովուրդը [ապր<ել>], ոգևորվել ու վեր է կացել իր բոլոր նվիրական հույսերով ու զգացմունքներով, ամեն անգամ էլ դիմավորել է[3] նրանց խանդավառությամբ, ամեն անգամ էլ [հանել է իր էդ բոլոր զգացմունքների թարգմանը] — արտասանել է իր սրտի խոսքը։

Վերջին դարերում պարսիկ բռնակալությունը մեր երկրում իր գաղանություններով անցել էր ամեն չափ ու ամեն երևակայություն։ Երևանը հայ ժողովրդի համար սպանդանոցի, դժոխքի նշանակություն էր առել, իսկ նրա կողքին Քանաքեռ գյուղը հայ կեղեքվող [գյուղի խորհրդանշան էր դառել]։

Հայ ժողովուրդը [երկար դարերով] աչքը կթած Արևմուտք՝ օգնություն էր ակնկալում մերթ մի, մերթ մյուս եվրոպական քրիստոնյա պետությունից։ Դարերի փորձը, պատմության ընթացքն ու ժամանակի մատը ցույց տվին, որ այդ հույսն ու ապավենը Ռուսաստանն էր լինելու, որ օրեցօր զորանալով ու իր սահմերից դուրս

---

[1] [Եվ հավիտենա<կան>]

[2] [ապրող, ոտի]

[3] [որպես իր փրկության։ Ու]

հորդելով, իր դիվիզիաներով հորձանք էր տալիս դեպի Արևելք։ Եվ Հնդկաստանից մինչև Կովկաս, ամենայն հայոց կաթողիկոսից մինչև վերջին շինականը՝ հայ ժողովրդի հայացքը կենտրոնացավ Ռուսաստանի վրա։ Հիրավի, հզոր Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն ու տանջվող հայ ժողովրդի հույսերը զոնտում էին իրար։ Այստեղից էլ առաջ եկավ այն մոտիկությունն ու այն ջերմ հավատը, որ գոյություն ուներ ռուս պետության ու հայ ժողովրդի մեջ և որ [անաղարտ ու] անսասան մնում էր մինչև ութսունական թվականները։

Այդ հավատն ու սերը երկուստեք արդարացան կովկասյան պատերազմների մեջ, իսկ կովկասյան պատերազմների մեջ՝ հայոց պատմության տեսակետից՝ առանձին կարևորություն ունի 1826—1827 թվականների ռուս-պարսկական պատերազմը։

Շատ պատերազմներ են եղել Հայաստանի հողի վրա, բայց 1826—1827[1] թ<վականների> ռուս-պարսկական պատերազմը կմնա հայ ժողովրդի հիշողության ու պատմության մեջ երբևէ կատարված ամենամեծ պատերազմներից մինը։

[Հոյակապ է տեսարանը][2], երբ Ջիրավի մեծ դաշտում[5]) մի կողմը իր խաչանիշ դրոշակներով Հայաստանին օգնության եկած Բյուզանդական բանակն էր կանգնած «իբրև լեառն ադամանդեայ»[6]), իսկ նրա դեմ պարսկական զորքն էր ծփում «իբրև ծով իմն ահեղ»,[7]) և ներքև, լայնատարած դաշտում, Արևելքի ու Արևմուտքի այս ահագին զորություններն ահեղա[սաստ] իրար հակած մինչդեռ պատերազմի ելքն ու հայ ժողովրդի ճակատագիրն էին վճռում, այնտեղ, Նպատի[8]) սրբազան գագաթին Հայոց մեծ Ներսեսը աղոթում էր «առ տէր բազկատարած հայցմամբ խնդրելով ի Նմանէ հայիլ ի խաչակիր դրոշակ իւրոյ ժողովրդեան»,[9]) որի աշխարհքը դարձել էր «սպանդարան մարտիրոսաց»։[10]) [3]Շատ դարերից հետո էլ, երբ ռուսաց բատալիոնները Կրասովսկու առաջնորդությամբ Աշտարակի ու Օշականի վրով՝ Աբբաս Միրզայի բանակի կրակի[4] տակ ձգվում[5] էին դեպի էջմիածին, [ուր] մի ուրիշ նոր Ներսես [Հայաստանի սուրբերի մասունքները հանած] Լուսավորչի գերեզմանի առջև տարածված[6] առ աստված էր աղաղակում իր դժոխքի[7] մեջ այրվող ժողովրդի փրկության համար։ Եվ [ավելի ևս սրտաճմլիկ է,

1 Բնագրում՝ 1828 թվականի։
2 [վեհ ու սրտառուչ է այն պատկերը, որ մինչդեռ]
3 [նույնքան սխրալի ու սրտաշարժ է, երբ] [նույնպես]
4 [ու ծխի միջով]
5 [էին]
6 [ըն<կած>]
7 [կրակի]

երբ] աչքները հանած, լեզուները, ձեռն ու ոտները կտրած հայ մարդիկ Մայր տաճարի զանգակների ղողանջյունի վրա սողում են[1] դեպի էջմիածին կամ դեպի քրիստոնյա բանակը:

[2]Օրհասական ճիգը [մի ամբողջ] տանջվող ժողովրդի:

Հայ ժողովուրդը ազատվում էր մի դժոխքից, որ նրա համար ստեղծել էր պարսկական[3] [կոպիտ ու խավար] բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ խնդիր, ո՛չ աղաչանք, ո՛չ [կրոն], ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կյանք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ խղճմտանք...

Եվ այդ դժոխքի միջնաբերդը Երևանն էր: Այդ պատերազմն էլ հայ ժողովրդի մեջ հայտնի է [այդ դժոխքի —] Երևանի անունով — «Երևանի կռիվը»: Նրան առնելը հայ մարդու երևակայության մեջ հավասար էր դժոխքի քանդվելուն, կամ ինչպես Խ. Աբովյանն էր ասում՝ «...դժոխքի քանդվիլը մեղավորների համար էն դինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար:[11])

Երևանի առումով Ռուսաստանին միացավ[4] Մասիսի էս կողմը գտնվող հայությունը ու այդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան: Կատարվեց (Կովկասի) [հայության դարավոր տենչանքը]: Ցնծությունը ընդհանուր էր, սրտալի ու մեծ, ինչպես ընդհանուր ու մեծ էր դարավոր «վերքի» ցավը: Այդ ցավի և այդ ցնծության [անպաճուճ, սակայն] հրաշունչ[5] արտահայտությունը եղավ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»: Այդ գրքի մեջն են ամփոփված հայ ժողովրդի վերջին ժամանակների[6] տանջանքներն ու տենչանքները և գաղտնիքն էլ հենց սրա մեջն է, որ նա մեզանում համարվում է մի սրբազան գիրք[7]:

Դրա համար էլ առանձին արժեք ու կարևորություն ունի «Վերք Հայաստանիի» ուսումնասիրությունը: [Իմ նպատակն է ռուսական գինվորական տարեգրություններից վկայություններ բերելով՝ մի համառոտ տեսության մեջ ցույց տալ, թե ինչքան ճշմարտապատում է «Վերք Հայաստանին» և իբրև մի պատմական վեպ, ինչքան մոտիկ ու հարազատ է կենդանի իրականության[12])

---

[1] [էին]
[2] [Այո՛, սրտաճմլիկ է]
[3] [ասիական]
[4] ռուս[ի ձեռքն անցավ]
[5] [բայց հոյակապ]
[6] [դարերի]
[7] [նրա մեջն են մեր ցեղի վերջին ժամանակների տանջանքն ու տենչանքը] [արտահայտությունը]:



«Վերք Հայաստանի» վեպի ուսումնասիրության սևագրերից:

Ա. ՍՐՈՎՅԱՆՑԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն[1] ԵՎ <18>26 Թ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ[2]

Կովկասում եղած ռուս-տաճկական կամ ռուս-պարսկական պատերազմները իրենց հետևանքներով, գուցե այնքան նշանավոր չեն եղել կովող կողմերի համար, որքան կովկասյան ժողովուրդների [համար], [մասնավորապես հայերի համար]:

Այդ պատերազմներից էր 1826[3] թվականի ռուս-պարսկական պատերազմը, որ մեր մեջ հայտնի է «Երևանի կռիվը» անունով:

Այդ պատերազմի առիթը սահմանի խընդիրն էր, որ չէր որոշվում, [չնայելով ռուսների խաղաղասիրական ջանքներին]: Սահմանի խնդիրը, սակայն, միայն պատրվակ էր, ավելի ճիշտը՝ [4]Պարսկաստանը պահանջում էր Ղարաբաղի ու Թալիշի խանությունները: Ռուս կառավարության համար Ղարաբաղն ու Թալիշը տալ, այդ միևնույն էր, թե տալ նաև Թիֆլիզը ու հետանալ Կովկասից: Եվ [հենց] այդ էլ ցանկանում էր պարսիկը: [[Բայց] Ռուսաստանը մի քանի խաղաղասիրական փորձեր արավ, ապարդյուն: Պարսիկները պնդում էին իրենց պահանջի վրա]:

Стр. *16(22)*[1])

Հենց այդ ժամանակ ռուսաց մայրաքաղաքում բռնկվել էր հեղափոխությունը[5], որ հայտնի է «դեկտեմբերյան» հեղափոխություն անունով: Ստեղծվել էր մի ծանր վիճակ:

Ռուսաս<տանը> աշխատում էր գործը խաղաղ<ությամբ> վերջացնի. Պարսկաստանը ուզում էր օգտվել [Ռուսաստանի էդ]

---

[1] *<18>25=<18>26*

[2] *[իր ժամանակի պատմությունը]*

[3] *Ջնագրում՝ 1825*

[4] *[Սահմանադծի խնդրի հետ միասին]*

[5] *[և դեկաբրիստների]*

խառնակ դրությունից և հույսը դրած Ռուսաստանի ներքին խռովության, Կովկասի մահմեդական խաների ու ժողովուրդների աջակցության, անգլիացիների օգնության և Կովկ<ասի> մահմեդ<ականների> աջակցության [վրա,] վճռել էր դուրս գալ կռվի[1]։

Ու թեև երկու կողմից էլ բարեկամական ցույցեր էին անում, հավատացնում էին, թե պատերազմ չի լինի, սակայն երկու կողմից էլ անքուն՝ պատերազմի պատրաստություն էին տեսնում, և հենց էն ժամանակ, երբ ռուսաց կայսրը՝ Մենշիկովի հետ ապակե մահճակալ էր ուղարկում շահին, միաժամանակ երկու կողմից էլ շտապում էին զորքերը սահմանը հավաքել, և խաղաղության ու հաշտության դեսպան Մենշիկովը իր ընծաներով դեռ Թեհրան էր, որ կռիվն սկսվեց[2]։

[Ճշմարիտ է, Ռուսաստանը գտնվելով խառնակ դրության մեջ, անկեղծ խաղաղություն էր ցանկանում և որոշ զիջումներ արավ, բայց անկարելի եղավ, ու բռնկեց պատերազմը[3]]։

Հիրավի, անգլիացիները օգնեցին պարսիկներին, Կովկասի մահմեդականությունն էլ ոտի կանգնեց, բայց պատերազմը այնպես չվերջացավ, ինչպես երազում էր արքայազն Աբբաս Միրզան։

Այդ պատերազմը վերջացավ Թուրքմենչայի դաշնադրությունով, որով Ռուսաստանի[4] ձեռքի տակ հաստատվեց ոչ միայն Դարբաղը և այլ գրաված երկիրները, այլև վերջնականապես Ռուսաստանին միացան Երևանի ու Նախիջևանի խանությունները, ամբողջ Արարատյան երկիրը։

և դեռ Մենշիկ<ովը> Թեհրան էր, որ սկսվեց. Описание вторжения персиян в Грузии в 1826 г. *(Кавк. сб. 22,14)*

[Էս ժամանակին էր, հունիսի-ին 1825-ին [(«Վերք)»], և մյուս էջից քաղվածք. Սավարսամիձեն կասկած չէր տանում. «Վերք» 129 2)

Вдруг, неожиданно, среди мирных сношений, *և այլն։* Кавк. сб. *1. 9.* 3)

---

[1] [պնդում են իրենց պահանջի վրա]

[2] [<2 անընթ.> կարդագրում էր, որ զորքերը մոտ լինեն սահմանին]

[3] [որ պատերազմը հեռացնել, անում էր խաղաղասիրական փորձեր ու]

[4] *Ռուսաստանին միացան=*

Դրա հետ էն օրվանից ռուսի ձեռքն անցավ Մասիսի էս կողմը գտնվող հայությունը[1]։ Մեծ ու նշանակալից մի շրջան հայ ժողովրդի պատմության մեջ[2]։

Ահա էս մեծ պատերազմի ժամանակից է խոսում «Վերք Հայաստանի»-ն, էս ժամանակից է փաստեր ու տրամադրություններ տալի և հետաքրքրական է քննական մի փորձ անել, տեսնելու, թե որքան համաձայն[3] են նրա տված պատմական տեղեկությունները ու տրամադրությունները իր ժամանակի պատմության հետ[1])։ Եվ «Վերք Հայաստանին» ամենից առաջ նրա համար է սիրելի[4] մեր ժողովրդին, որ հանդիսանում է [5]հրաշքի բերան ամբողջ ազգի բողոքի ընդդեմ ասիական կոպիտ ու խավար բռնակալության, հարազատ թարգման հայի պատմական տրամադրության, մի հին ցանկության՝ տեսնել ոսին իրենց գլխին տեր — պատմությունը էդ անմոռանալի ժամանակին։

«Ռուս» բառի տակ հայ<ը> հասկանում էր «փրկություն», ապատություն։

Եվ ճշմարիտ արձագանքը այնքան նշանավոր [մի] ժամանակի [ու] դեպքերի, որ հայի համար բերին մի նոր դրություն, մի նոր օր ու կյանք։

Նրա սիրված լինելու գաղտնիքը, ես կարծում եմ ավելի սրա մեջն է։ Իսկ այն հանգամանքը, որ աշխարհաբար է գրված — դա երկրորդական բան է. նրանից առաջ շատերն են գրել աշխարհաբար և նույնիսկ ավելի լավ, քան Խ<աչատուր> Աբովյանի լեզուն է[6]։

Անտանելի ծանր էր պարսկական լուծը, չափ ու սահման չէր ճանաչում տաճկի վայրագությունը, դրա վրա ավելացրեք

---

1 [մեզ համար կատարվեց պատմական մի շատ մեծ ու նշանավոր]
2 [մի նոր կյանք]
3 [ճշմարիտ]
4 [թանկ]
5 [թարգման մի պատմական տրամադրության] բերան (մի կրակոտ)
6 [աշխ<արհաբարի> ու գրաբ<արի> խառնուրդը]

կովկասյան լեռնականների անընդհատ ասպատակ<ություն>ներն ու արշավանքները։ Բայց այսուամենայնիվ մեր ժամանակի[1] մարդը դժվար[2] թե կարողանա երևակայել կովկասյան էն դժոխքը, որի մեջ մի քանի տասնյակ տարի առաջ ապրում էին մեր պապերը։

Դրան ասում են «ահ ու փախի ժամանակ»։

Եվ ժողովուրդը փախած, շարունակ փախած, իր ունեցած չունեցածը գետնի տակ հորելով, սարի որսի նման փախած ապրում էր անտառներում ու այրերում։ [էսպես է նկարագրում ռուս ականատեսը].

«Перейдя кавказскую линию, вы не встречаете почти нигде постоянной оседлости...— պատմում է ռուս ականատեսը։ Привыкнув бояться друг друга, грабить один другого — обитатели несчастных этих стран, сообразно с тем, устраивают и хозяйство свое. Земля служит хранилищем всех их сокровищ, ямы готовы, лишния вещи всегда в них спрятаны; при малейшей опасности, остальные туда-же зарываются, и семейства, забравши только самое необходимое, уносят в неприступные горы, ущелья, непроходимые леса и жизнь, и страх свой». («Кавказск<ий> сборн<ик>, т. I, стр. 129, [Лачинов][5])

... թեև էն անմատչելի թագստոցներում էլ չէին ազատվում հալածանքներից. թե ինչպես էին անում էստեղ էլ (տե՛ս Դիվան հայոց պատմ<ության>, Դ. Ղուկաս <կաթողիկոս,>, 717) և խտիր չկար — կաթողիկոս, մեծ-փոքր[6]) <....> <....> քաղաքները՝ Բայազետ, Ղարս, Երևան, Ախալցիխան հայտնի շուկա — բա-

Գերավաճառություն[7]) և հալածանքի նմուշ-

[1] ժամանակակից

[2] [հազիվ]

դար էին, ուր ամեն կողմից գերված կովկասցիներին տանում էին ծախելու, գեղեցիկներին Արևելքի հարեմները, տգեղներին՝ սարկության։ Խղճմտանք չկար գազան տիրողին[1], չէր հագենում նրա անկուշտ ագահությունը, խիղճ չկար նրա խավար կրոնական մոլեռանդության, և հալվում ու սպառվում էին ոտի տակ ընկած քրիստոնյա ժողովուրդները [մանավանդ]։

Ամեն մի հայի ու վրացու բնազդ էր դառել իրենց կոտորողների ահը, նրանց առածների մեջ է մտել, անեծքատեղ է դառել իրենց մաշողների վայրագությունը, նրանց սրտերում, լեգենդներում ծովացած են անվերջ կրած դառնություն<ներ>ը և նրանց երգերն ու պատմություննները լաց են լինում... [Եվ] էդպես է եղել դարերով։ Այստեղ մեծ հարց է առաջ գալի։ Եթե այդպես է եղել և այն էլ երկար դարերով, ապա մի՞թե էս ժողովուրդները իրենց էդ ապրած տանջանքներից ու աղետալի պատմությունից մի իմաստություն չեն հանել, մի քաղաքականություն չեն մշակել իրենց համար։ Ինչպես կարելի էր, որ հանած չլինեին։ Հանել են և էն էլ շատ պարզ ու կարճ։ Դարերի փորձով տեսան, որ փոքր է, տկար է ու անկարող շրջապատող այլակրոն ու բարբարոս ցեղերի դեմ, և մի հզոր ձեռք է հարկավոր էս բարբարոսական հեղեղի դեմ։

Եվ սահմանեց[2] իր քաղաքականությունը՝ ունենալ միշտ մի հզոր դաշնակից, կամ ավելի ճիշտը՝ հովանավոր Արևմուտքի կուլտուրական քրիստոնյա պետություններից. մի ժամանակ Հռոմն էր, ապա՝ Բյուզանդիան. հերթը եկավ Ռուսիային։

Հայերի հետ քրիստոնյա Վրաստանն էլ ուժ չունեին, ճար ու ճանապարհ չունեին։ Ամեն տեղ դիմել, ամենքին փորձել էին ու

ներ, առևանգումներ — տագնապ և не бойтесь, т. 1, 157.[8]) <Ամենայն> Հայ <ոց> կաթ<ողիկոսությունը> և Կովկասի հայք 19-րդ դարում, <Մասն> Ա. 181, 227, 228, 225, 186.[9])

[1] [չափ չկար նրա]
[2] [ունեցավ]

հասկացել, որ միայն Ռուսաստանն է լինելու իրենց էդ դժոխքից փրկողը։

Եվ դիմում էին ու դիմում, աչքները հյուսիս հառած Կովկասի նահատակ քրիս-տո<նյա> ժողովուրդները, սպասում գալիք փրկարար օրին ու հարվածին։

[Դեռ Պետրոս Մեծի ժամանակից հայերը բռնել էին ռուսաց մայրաքաղաքի ճանապարհը և անդադար թախանձում էին — հանուն մարդասիրության, ի սեր Քրիստոսի, գալ, ազատել էս դժոխքից։

Տկար ու դժբախտ Վրաստանն էլ[1] արտաքին ավերումներից[2] ու ներքին խռովություններից հոգնած, մյուս կողմից էր ըշտապեցնում ռուսներին՝ գալ, գալ, գալ...

Խավար ու անմիտ մահմեդական բռնակալությունը, իհարկե չէր հասկանում, թե ի՛նչ է անում և ի՛նչ է գնում իր ձեռքից]։

Եվ ահա զարկեց ժամը, մեծ ու խորհրդավորը՝ համայն Կովկասի համար։

17<99 թ.>[3]-ին ռուսաց մի վաշտ[4] [թիվը] պատերազմական փողերով մտավ Թիֆլիզ։[10])

Իսկ հետևյալ՝ 1801 թվին Աղեք<սանդրը>I կայսրը հրովարտակ արձակեց Վրաստանի ժողովրդին։[11])

«...Вникая в положение ваше и, видя, что посредство и присутствие войск российских в Грузии и доныне одно удерживает пролитие крови нам единоверных и конечную гибель, уготованную вам от хищных и неверных сопредельных вам народов...[12])

«...մտնելով ձեր դրության մեջ, և տեսնելով, որ ցարդ միակ ռուսական զորքերի միջամտությունն ու ներկայությունն է Վրաստանում արգելում մեր հավատակիցների արյան թափվիլը և դիշատիչ անհավատ <արիմ> սահմանակից ժողովուրդների ձեղ պատրաստած վերջնական կորուստը...»։

Եվ Կովկասը մին էլ տեսավ

[1] [*մյուս կողմից*]

[2] [*թշնամիներից*]

[3] *բնագրում՝ 18...*

[4] [*զորքը*]

Идут все полки могучи,
Шумны, как поток.
Страшно, медленны, как тучи,
Прямо на восток.
(Лермонтов)[13]

[1]Եվ [2]հայի ու վրացու համար նորոգվեց հին պատմությունը, Հռոմի ու Բյուզանդիոնի կռիվը Պարսկաստանի հետ, ուրիշ խոսքով՝ Արևելքի ու Արևմուտքի կռիվը — մեջ տեղը ուր տակի էս դժբախտ[3] ժողովուրդները, որոնք սակայն միշտ հարած են եղել Արևմուտքին: [Կարծես] տարբերությունը [միայն] էն էր, որ Սև ծովի փոխարեն Կովկասի շղթայի մյուս կողմից էր գալի, և հռոմայեցու կամ հույնի փոխարեն — ռուսն էր:

Եվ [եթե սա մի սխալ չի], եթե կրկընվում էր նույնը, ինչ որ եղել էր դարեր առաջ ու դարերով, ապա մի՞թե էս ժողովուրդներն իրենց էդ ապրած կյանքից ու աղետալի պատմությունից մի իմաստություն չեն հանել, մի դաս չեն առել, մի խելք չեն սովորել:

Ինչպե՞ս կարելի էր, որ առած չլիներին: Առել են և էն էլ՝ ինչպես: Ամեն մի հայի ու ամեն մի վրացու սրտում բնազդ է դառել իրենց դարերով տանջող ժողովուրդների ահը, նրանց առածների[4] մեջ է մտել, անեծքատեղ է դարձել իրենց մաշողների վայրագությունը: Նրանց սրտերում [դարերով կուտակված են], ծովացած են անվերջ կրած դառնությունները, նրանց երգերն ու պատմությունները սերնդե սերունդ լաց են լինում [էն սև բախտի ձեռքից, որ դարձնել էին պարսիկն ու տաճիկը, անդադար արշավող, անվերջ ասպատակող, անողորմ կոտորող ժողովուրդները: Էդպես մինչև «Վերք Հայաստանի»-ի օրերը:

---

1 [իսկ հայ ժողովրդին]
2 [սկսվեց]
3 [էդ փոքրիկ]
4 [առած է դառել]

Ինչպես կարելի էր էդ բոլորն անդիտանալ ու մոռանալ։

Էս ամենից հանել էին մի իմաստություն[1], մի ազգային տենչանք—թե մի հզոր ձեռք է հարկավոր իրենց պաշտպանելու էս բարբարոսական հեղեղի դեմ, մի մեծ բարեկամ[2] էս գազան թշնամիների դեմ։
Եվ ահա էդ համազգային տենչանքի ու իմաստության բերանն է Հանդիսանում մեր աշխարհքում «Վերք Հայաստանին», մեծ տանջանքի, մեծ պատերազմի ու մեծ հույսերի ժամանակի վեպքը։

«...Հայաստանու հողն, որ հազար տարուց հետ սկսած՝ դառել էր գողի ու ավազակի բնակարան. ...էն օրհնյալ հողը, ուր Ասորիք, Պարսիկք, Հոնք, Ալանացիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Արաբք, Օսմանցիք՝ չրհեղեղի պես վրա էկան, հարյուրավոր ազգ ու աշխարհք ոտնակոխ արին, չնչեցին, սրբեցին, թրի, կրակի մատաղ արին, ուր տեղ որ սար չի մնացել, որ արին չտեսնի, քար չի մնացել, որ մարդ տակովը չանի, [ու հարիր մեզ հարևան ազգեր էնպես են հողի հետ հավասարվել, կորել որ էսօր ոչ նրանց շունչը կա, ոչ անունը, բայց սուրբ Հայոց աղգը], անհաղթելի՝ Հայկա որդիքը՝ իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխանությունը, զորքը՝ կորցնելեն եղև, որ տեսան թե էն աշխարհակործան չրհեղեղին, էս գազան ազգերին, [որ մեկը մյուսի ոտիցը ճոլոլակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա, թե Ասիա, Հայոց հողովը,[15]) պետք է անց էին կացել], չեն կարող դիմանալ, աչքները երկինքը գցեցին, գլխները գոգները դրին, ու հազար թրի տակից, հազար կրա-

մի մեծ ու հզոր դաշնակից կամ ավելի ճիշտը՝ հովանավոր ոմանելու և իր գլուխը պահելու քաղաքականություն է ունեցել։

Մելիքների դիմումից (էլ շունչ չմնաց, ձեզ ենք սպասում)[14])

---

[1] [Եվ եկել էին մի եղբակացության] դարձել էր [մի իմաստություն, մի անվիճելի ճշմարտություն]

[1] [հովանավոր է հարկավոր]

կի միջից՝ սիրտ սրտի տված, հոգի հոգու կպցրած, մինչև էսօր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հավատը, իրանց սուրբ օրենքը՝ էն վեհանձնությունովը պահպանեցին, որի օրինակը աշխարհքում տչ էլել ա, ոչ կլի.— էն աշխարհքը, էն անօրինակ ազգն էր էս վերջին ժամանակը՝ շունչը բերանը հասած՝ աչքը երկինքը կթել, որ Ռուսաց հզոր արծիվը գա ու իրանց հողն ու զավակը իր թևի տակովն անի»։

[«Վերք Հայաստանի» <85>, 86—87)]

[Եվ պատերազմի սկզբում «Երևան թևին տվեց, երբ ռուսաց զորքը իր մեջը մտավ. էջմիածնի խնկի, մոմի հոտը ու զանգակների ձենը երկինքը հասավ։ Քաջահաղթ հսկա կոմս Երևանի՝ Տոբիթա հրեշտակ Ներսես արքեպիսկոպոսի ձեռիցը բռնած՝ մտավ Վաղարշապատ...

«Կարելի է աշխարհք աշխարհքով դիպչի, ազգեր գան ու էլ ետ ոչնչանան, բայց քանի որ հայի շունչն ու լեզուն կա, ե՞րբ նրանց մտքիցը կերթա էն ավետալից սահաթը, որ իշխանն Վարշավի, ղեներալն Կրասովսկիյ մեր անմահ Ներսեսին հետները՝ խաչ, ավետարան ձեռին՝ մտան բերդը, որ հայոց աշխարհքի ազատության տոնը կատարեն...»։

[«Մեծ էր հիրավի ու անմոռանալի ռուսաց Փարեժ մտնիլը, բայց ե՞րբ գալիացիք էն հոգվովը իրանց բախտավորությունը կվայելեին, ինչպես հայք էս արժանահիշատակ օրը]։

Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուքը էլ չէին թողում, որ մարդի բերան բաց ըլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ էն ձեռներն, էն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին

сб. 4[16])

Տեսնել Երևանի վերցնելու պատմությունը։ <269>

<271>

[1] Բնագրում 76—78։

մտիկ տալիս, առանց խոսքի էլ ասում էին, որ դժողքի քանդվելը մեղավորների համար էս դինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնելը հայերի համար»։ [Վերք Հայաստանի, 258-60] <271—2>

Եվ հայ ժողովուրդը խաղ հանեց.
«Սար ու ձոր սասնամիշ էլան, զարմացան,
Պասքովիչ Սարդարի ոտի տակն ընկան,
Մեր Մասիան, Ալագյազ փիանդազ[17]) էլան.
Անիրավ, էս բաղին բաղմանչի ունի,[18])
Յարալու սրտիս էդ քարը մի քցի...
[Մենք քամակ քամակի կոտանք, վեր կկենանք,
Ռսին, մեր աշխարհքը, կյանքը զուրբան կոտանք,
Հասան խանն կատվի պես քարե-քար ընկավ,
Շահզադի ղոնշունը ցիրուցան էլավ։
Մեր խաչին, անհավատ, արի, ճանաչի,
Անաստվածՙ հայիցը ձեռք քաշի, կորի,
Անիրավ, հայերի արինն մի խմի, <269—70>
Միտք արա,[19]) էս բաղին բաղմանչի ունի,
Յարալու սրտիս էդ քարը մի քցի։ («Վերք Հայաստանի» 258)

<....> և ոուս ժամանակակիցը գրում է.

«Армяне[20]) <народ промышленный, оборотливый, за честность их не ручаюсь, но в искренней преданности к правительству нашему нельзя сомневаться. Выгоды, замеченные ими в новой перемене, слишком велики: вместо угнетения — кротость, вместо грабежей — покровительство, вместо пренебрежения — справедливость, кто не захочет сделать столь удачный обмен. И армяне от души желают принадлежать России, и здесь, как в Эривани, малютка, едва начинающий лепетать, видя наших, кричит по русски:— «здравствуй»> («Кавказский сборник» <том> 1, <стр.> 186)[21])

[Խ. Ա<ովհաննի> «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԵՎ ՌՈՒՍԱՑ ՋԻՆ<վորականի>ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ]

1813 թ<վականի> ռուս-պարսկական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով և Պարսկաստանը ստիպված էր կնքել Գյուլիստանի դաշնագրությունը։ Այդ դաշնագրության մեջ ասվում է.

«Նորին մեծություն Շահը, ի նշան իր անկեղծ բարեկամության դեպի նորին մեծություն ռուսաց Կայսրը, սրանով, ինչպես իր, նույնպես և պարսից հաջորդների կողմից, հանդիսավոր Ռուսաստանի սեփականությունն է ընդունում Ղարաբաղի ու Գյանջի խանությունները, որ այժմ դարձրած են նահանգ Ելիզավետպոլի նահանգ անունով, նույնպես և Շաքվա, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները, էն հողերը էս (Թալիշի) խանության, որոնց այժմ տիրում է Ռուսաստանը, այլև ամբողջ Դաղստանը, Վրաստանը՝ Շորագյալի նահանգով, Իմերեթիան, Գուրիան, Մինգրելիան և Աբխազիան, նաև այն բոլոր կալվածքներն, (владения) ու երկիրները, որ կան այժմ որոշած սահմանի ու կովկասյան գծի <վորական> գծի մեջ տեղ (кавк <азская> линия) վերջինիս և Կասպից ծովին կից (прикосновенный) երկիրներով ու ժողովուրդներով»։[1])

«Անկեղծ բարեկամությունն» ու «մշտական խաղաղությունը» [դատարկ] խոսքեր էին այստեղ, [ճշմարիտն այն էր, որ] Պարսկաստանը դժգոհ էր այս պայմանագրից։ Այս թուղթն ստորագրելու օրից [սկս<ած>] պատրաստվում էր նոր պատերազմի իր կորցրած երկիրները նո՛ր առնելու համար [և պատերազմի հարմար առիթ էր որոնում]։ Ֆաթ Ալի շահը՝ ինքը թուլլ էր։ Նա ավելի շուտ ուզում էր Անգլ<իայի> միջնորդությամբ, որպես նվեր նո՛ր ստանալ Ռ<ուսական> կայսրից Ղարաբաղի և Թալիշի խանությունները։ Բայց նախ Պ<ետեր>բուրգում, 1815 թ<վականին> անհաջ<ող> անցավ[1] այդ խնդիրը, ապա՝ 1817 թ<վականին> Երմ<ոլովը> Թեհրան դեսպան գնացած ժամանակ, վճռական կերպով հայտնեց, որ Ռուսաստանը ոչ մի մասը հող չի զիջանիլ։ Այն օրից միակ միջոցը մնաց պատերազմը։

Պարսկաստանի այս տրամադրության կրողն ու արտահայտիչը հանդիսացավ [շահի երրորդ որդին]՝ Թագաժառանգ Աբբաս Միրզան, որ եվրոպական ձևի զորք ստեղծեց այդ նպատակի համար։ Զպահասեցին և նպաստավոր հանգամանքները։ Հնդկաստանն ապահովելու համար՝ Անգլիան մի կողմից էր պարսիկներին

[1] [մերժվեց]

դրդում Ռուսաստանի դեմ, (դաշն — [2]) Պարսկ<աստանի> վրա հարձ<ակվելու> դեպքում՝ պաշտպանել զենքով), Կովկասի մահմեդական խաներն ու ժողովուրդները մյուս կողմից էին խոստանում իրենց պատրաստակամություն ու աջակցություն, վրաց Ալեքսանդր արքայազնն էր փախել Պարսկաստան, նա էլ իր ուժն ու ազդեցությունն էր առաջարկում, վերջապես այդ միջոցներին մնում էր ռուսաց կայսրը՝ Ալեքսանդր I, հրապարակ նկալ գահաժառանգության խնդիրն ու դեկտեմբերյան խռովությունը,[3] որ վատահություն տվեց Աբբաս Միրզային ու իր համախոհներին՝ հարմար ժամանակը հասած համարել ու սկսել ցանկալի պատերազմը: (XXII, IV, 37. Պարսկ<աստանի> ներկ<այացուցչի> հանդուգն խոսքը — եթե ռուսները չեն ուզում մեզ բարեկամանալ):[4] Առիթն էլ պատրաստ կար: Այդ էլ սահմանագլխի խնդիրն էր, որ ձգձգվում էր երկար տարիներ ու չէր վճռվում: Աբբաս Միրզան ուզում էր՝ ինչ ձևով ուզում է լինի, իրեն մնա Թալիշի խանության հարավային մասը, իսկ Երևանի Սարդարը վիճում էր Սևանի հյուսիս-արևելյան հողերի վրա, որովհետև այստեղից հեշտ էր հարաբերություն ունենալ Ղազախ-Շամշադինի թուրք աղալարների հետ ու նրանց միջոցով Դաղստանի հետ: Պետք էր Կովկասի մահմեդականներին գրգռել ռուսների դեմ և այդ պաշտոնը տված էր Երևանի Սարդարին, իսկ նա ուզում էր[1] ձեռքից չթողնել իրեն հարմար դիրքերն ու սահմանները:

Այս ամենը լավ էին տեսնում Երմոլովը, Կովկասի ռուս կառավարիչներն ու զորավարները, որոնք իրենց լրտեսներն ունեին ամեն տեղ, մինչև Սարդարի ու շահի պալատը, ամեն գաղտնիք իմանում էին ու ոչ թե հավատում, այլ օր ավուր սպասում էին պատերազմին: Եվ միշտ պատրաստություններ էին տեսնում ու խնդրում էին ուժեղացնել կովկասյան զորքը, բայց չէին կարող իմանալ, թե երբ [և ինչ առ<իթով>] կսկսվի պատերազմը և մանավանդ չէին կարող ևնթադրել, թե կսկսվի առանց իմացնելու՝ հակառակ ընդունված կարգի: [Բայց] Պ<ետեր>բուրգ<ում> ամենևին չէին հավատում պատերազմի հնարավորությանը ու շրջունակ համոզված պարսիկների խաղաղասիրությանը՝ հորդորում էին Երմոլովին՝ անխախտ պահել խաղաղությունը: Կարծում էին, թե նա է պատ<երազմ> ուզում փառասիրությունից: Մանավանդ Նիկ<ոլայ> կայսրը ամեն կերպ աշխատում էր պատերազմը առաջն առնել ու պահպանել խաղաղությունը*: Խստագույն հրա-

---

1 [պահանջում էր]

* Երմ<ոլովը> հունվարի 1-ին 1826 թ<վականին>, գրում է, «Верность данному слову[5]») и т. д. Потто. Кавк<азская> в<ойна>

մայում է այդ միտքը ներշնչել սահմանագլխի բոլոր պաշտոնյաներին, սահմանագլխի վեճը կարգի դնել, դրա համար ուղարկված պարսիկ մեծավորին անմիջապես պատվով ուղարկել Պե<տեր> բուրգ, դիջանել Թալիշի խանության մի մասը, հովանավորել ու օգնել գործով Հաշտարխան երթևեկող պարսիկներին՝ արագ ու արդար դատաստան անել նրանց գանգատի դեպքում, վերջապես բարեկամական նամակով ու նվերներով դեսպան է ուղարկում Թեհրան — Ֆաթ Ալի Շահին... Եվ բարեկ<ամական> խոսքը շրթունքին՝ դեսպանը դեռ Թեհրան — պատերազմը պայթեց։

Պատերազմը պայթեց իբրև թե սահմանագլխի այն հողերի համար, որ ռուսները տիրում էին ապօրինի։ Այսպես ասում է ինքը՝ Աբբաս Միրզան կռվի սկզբում իր այն գրության մեջ, որ ուղղված է Շուշու բերդում փակված ռուս զորքի գնդապետ Ռեուտին, 1826 թ<վականի> հուլիսի 25-ին, թե.

«Հիմնվելով ռուսաց տերության կառավարչապետի[6]) և սահմանի գլխավորների վարմունքի վրա, որոնք վարվում էին խաղաղության դաշնագրին հակառակ, պարսից տերության աստիճանավորները ստիպված էին ետ առնելու իրենց իրավունքները» (К<авказский> с<борник>, XXIV, 63)։

Այս գրությամբ նա առաջարկում է Ռեուտին՝ անձնատուր լինել ու հանձնել իրեն Շուշու բերդը, խոստանալով խնայել զորքի կյանքն ու ազատ ճանապարհ տալ։ Ռեուտը պատասխանում է.

«Ռուսաց և պարսից տերության միջև եղած խաղաղության խանգարվելու[1] մասին ես ոչ մի տեղեկություն չունեմ իմ իշխանությունից, ոչ մի բանակցության մեջ մտնել չեմ կարող, իսկ իմ պաշտոնը պետք է կատարեմ, ինչքան իմ պատիվը պահանջում է»։[7])

Ճշմարիտ որ ռուս զորքերն ամբողջ սահմանի վրա տեղեկություն չունեին։ Հանկարծակիի եկան... Պատերազմի լուրը առաջին անգամ, երբ Ղարաքիլիսից Թիֆլիզ հասավ, Երմոլովն էլ կարծում էր, որ դա միայն Երևանի Սարդարի լրբություն է Երևանի կողմից, սովորական մի չափազ<անցություն>, բայց երբ լուր եկավ, որ Աբբաս Միրզան էլ մտել է Ղարաբաղ,— պարզվեց, որ պատերազմը սկսված է, այն պատերազմը, որին սպասում էր, բայց ոչ այդպես անակընկալ։

Այսպիսով Արովյանը ճշմարիտ է ասում, երբ գրում է, թե. «էս<քան>բան անց էր կացել, խորամանկ պարսիկքը իրանց բանը էնպես էին գողի պես սկսել, որ մեր կողմը ոչինչ խա-

---

1,20 թե ինչու էր ուզում կայսրը խաղաղություն. Потто. Кавк<азская> в<ойна> 120

[1] «խանգարվելու» բառի վերև գրված է՝ разрыв, խզվելու։

բար չկար: Էսպես անօրենություն շա՜տ էր պատահում: Շատ տարի՝ Ղարսա կամ Բայազըդու վրա գնալիս՝ էս օրը հազիր էր: Աբրանը ամեն տարի էր դուրս գալիս Սարդարը իր դռնշոմովը, երեք ամիս մնում, Փամբակու մեծավորին փեշքաշ ուղարկում, իր մոտ հրավիրում ու հազար օրթումով հավատացնում, թե՝ Ռուսը քանց նրան էլ մեծ բարեկամ չունի: Էս էր պատճառը, որ Փամբակու իշխող՝ մեծավոր իշխան և զորապետ Սավարզամիրզա ոչինչ կասկած չէ՛ր տանում: («Վ. Հ.», 130—140)

Մի ուրիշ տեղ.

«Ո՞վ չգիտի, որ էս հադաղին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմտից, Աբ[բ]աս Միրզեն արևելքից՝ ավազակի պես հանկարծ էկան, մեր սահմանը (սնոը) կոխեցին, մեր կողմը ամենևին խաբար չունեին: (Նույն՝ 186)[8])

Ինքը Սեվարսամիձեն (գեն<երալ>) Վելյամինովին ուված իր հաղորդագրության[1] *մեջ (1826 հուլիսի 18, Ղարաքիլիսա) ասում է.*

«Вашему превосходительству рапортовал[9]) <я об отправлении моём в Мирак, куда прибыл 15-го числа вместе с полковником Фридрихом и артиллерии подполковником Долгово-Сабуровым. На 16-е число перед светом слышно было на Пикетах выстрелов пять, и я тот же час вскричал Рагим-агу, заведывающего пикетами, который и поскакал туда для узнания, а с ним вместе и татарин, при мне находящийся для посылок в Персию. Сей татарин возвратился ко мне назад ограбленный и легко раненный, а Рагим-ага, сын гумринского владельца Мамад-Ассан-бека, был взят персиянами. Видя такие наглые поступки персиян, написал я вежливое письмо Сардару о неприличных поступках его людей, послав с оным письмом дворянина Калантарова, чтобы пересказал бы он о том и штабс-капитану Ростованову, ранее посланному мною к Сардару, Отъехал он весьма малое расстояние, как бросились на него персияне и взяли в плен с криком; что Сардарь не имеет надобности в наших письмах, по причине разрыва между державами, о чем он имеет сведение от Аббас-Мирзы через посланного курьера и, угрожая мне, что я через час с малым числом людей буду истреблен Сардарем. И точно, прошло немного времени, как персидская конница бросилась на наши пикеты, где схватила девять человек казаков и несколько жителей, отбила лошадей

---

[1] [*հայտագրի*]

казачьих; а от Мирака начала выежать новая конница, атаковать лагерь. Я, видя дерзость бесчестных персиян, приказал тот же час снять лагерь и заложить орудия, поставил людей в боевой порядок и двинулся к дороге, которая уже была ими занята и Сардарь шел туда же> с баталионами сарбазов». XXIII, 10—11[10]):

Սրանից հետո երմոլովը հայտարարում է[11]) <....>

Պատերազմի բեմը, [որ] բռնում էր 700 վերստ տարածություն, [երեք թև ուներ]: Աջ թևը Փամբակն ու Շորագյալն էր ամփոփում իր մեջ, կենտրոնը՝ Ղարաբաղը, ձախը՝ Շիրվանի և Թալիշի խանությունները Կասպիական ծովի ափին:

Աջ թևի պաշտպանության գլխավոր կետը Թիֆլիզն էր: Զորաշարժի գիծը՝ Թիֆլիզից Շուլավեր, Ջալալօղլի, Համամլու, Աբարան, Սուդագյան, Էջմիածին, Երևան: Պահեստները Շուլավեր և Ջալալօղլի: Հարձակման նպատակակետերը՝ Երևան, Սարդարաբատ, Աբասաբատ, Նախիջևան, Խոյ, Թավրիզ, Թեհրան:*

Կենտրոնի պաշտպանության գլխավոր կետը՝ Շուշին: Զորքէ շարժման ու փոթորոտության ասպարեզը՝ Թիֆլիզից և Գյանջից Շուշու վրով Աղ-օղլան ամրոցը տանող ճանապարհները: Պահեստները՝ Աղ-օղլան և Գորիս: Հարձակման դեպքում Զարգոբի անցալ Աղ-օղլան, այնտեղից երկու ուղղությամբ՝ Գորիսով ու Ղարաբաղով Նախիջևան ու Խոյ և Ահարով Թավրիզ, Թեհրան:

Ձախ թևի պաշտպանության գլխավոր կետերը՝ Բաքուն, Ղուբան, Շամախին: Զորաշարժի գծերը՝ Շամախուց Ջավաթի անցով դեպի Ասլանդուզի ծանծաղուտը տանող ճանապարհները և Շամախուց ու Բաքվից Սալյան միացնող, այնտեղից էլ՝ Լենքորան, Արտաբիլ ու Ռաշտ տանող ճանապարհները: Հարձակման դեպքում Լենքորան, Արտաբիլ, Էնզելի[1], Ռաշտ, Թեհրան:

Պատերազմի գլխավոր նպատակը աջ թևն էր: Աջ թևի դեմ էին կանգնած Սարդարն ու Հասան-Խանը, աջ թևի վրա էր պատվում Պարսկաստանի արծիվը, թագաժառանգ Աբբաս Միրզան, աջ թևի դեմն էին ուղղված ռուսաց գլխավոր ուժերը:

Այնտեղ էր Երևանի բերդը: Երևանի բերդը, պարսկական բռնակալության ստեղծած դարավոր զնդանը, հայ ժողովրդի դժոխքը:

Այնտեղ, աջ թևումն էր գտնվում և Խ. Աբովյանը: Այնտեղից

---

* *Ռուսները Սուդագենդ սխալ անունն են տալիս*

1 «Արտաբիլ, էնզելի» բառերի վերև փակագծերում գրված է՝ (Զենզել)

էլ առել է նա «Վերք Հայաստանիի» նյութը և վեպի գրեթե բոլոր գործողություններն էլ կատարվում են աչ թևում: Եվ իր պատմությունն անում է ոչ լսողանց[1], այլ իբրև ականատես [ու ականջալուր] մեկը, տեղ-տեղ հիշատակելով իր հետ պատահած դեպքերն օրագրական ճշտությամբ ու մանրամասնորեն:

Երևանի բերդի վերևը[2], 5 վ<երստ> հեռավորության վրա հնուց կուչ է եկած Քանաքեռ հայ գյուղը, հայ տանջված ու կեղեքված գյուղի տիպարը: Այստեղ էին ամառանոց գալի Երևանի [գաղան] խաները, և նրանց ու նրանց մարդկանց անվերջ ու աննկարագրելի վայրագությունների[3] ու քմահաճույքների տակ դարերից ի վեր տառապում ու արյունաքամ էր լինում այս մի [բուռն շինական ժողովուրդը], ամենից մոտ գտնվելով այդ դժոխքի կրակին, ամենից էլ շատ այրվել[4] ու այրվում էր դարերից ի վեր:

XVI դարու մեր ժողովրդական շատ գնահատելի պատմիչներից մինը, Զաքարիա սարկավագը,[12]) որ այս գյուղից է, պատմելով թե պարսիկ հարկաց վերակացուն ինչպես էր ժողովրդի «գլուխը գրում», մարդահամար անում, ասում է. «Եւ ելն նախ ի Քանաքեռ յաւուրս ձմերայնոյ... Իսկ հայրն իմ Մկրտիչ շալակեաց զիս զՋաքարիայս, և զեղբայրն իմ զԽաչատուր առաջի արկեալ՝ գնաց. և իբրև եհես զմեզ փոքր և կաղ և թիւր ոտամբ, բարկացաւ՝ և ասէ, զառողջ որդիսն քո պահեալ ես, և զանդամալոյծդ բերեալ ես. և հրամայեաց արկանել չերկիր ի վերայ երեսացն. և բերեալ ջուր թափեցին ի վերայ անձինն, յոտաց մինչև ցգլուխն՝ ջրողղ արարին. և նստոյց այր մի ի վերայ գլխոյն և այր մի ի վերայ ոտիցն. և հրամայեաց չորից զինուորաց՝ Բ կողմամբ հարկանել. և այնքան հարին, մինչև զի մորթն ի մարմնոյն ի բաց ոստեաւ և ինքն անշնչացաւ. և համարեցին զնա՝ մեռեալ և ապա քարշեալ զնա թաղեցին ի մեջ փայինի: Եւ այր մի՝ Բարսեղ անուն, և այր մի՝ Ղազար անուն՝ հան զի եղնգունան. և այլ ոմն Մարուգ անուն՝ երևանցի, կախեցին զմիոյ ձեռանէն, և այնքան հարին, մինչև յօդւածքն ամենայն խախտեցան[13])»: Աղջիկներն այս գյուղում այնպես են եղել փակված ու թագցրած, որ մի դեպքի մասին պատմելիս՝ այս նույն պատմագիրը զարմանքով բացականչում է, թե մինչև անդամ «տեսարգել աղջկունքն ևս» դուրս եկան տեսնելու[14])

Զաքարիա սարկավագից հարյուրավոր տարի հետո նույն գյու-

---

[1] [իբրև աս ու լիս]

[2] [կողքին, այդ դժոխքի կրակի մոտ]

[3] [գաղանություն<ների>]

[4] [տանջվել ու տա<ռապել>]



«Վերք Հայաստանի» վեպի ուսումնասիրության սևագրերից:

ղում աչքը բաց արավ Խաչատուր Աբովյանը և տեսավ միևնույն դժոխքը[1]։

[2]«Վեռ քարափի վրայից գլուխը բարձրացնում, թամաշա ա անում հանդարտ՝ հազար գլխանի դևի պես»՝ նույն Երևանու բերդը... որի «հողի ու ջրի շատ փայը հենց բռնիր՝ հայի արընով ա շաղախած»։

«Երևանու բերդն, Երևանու բերդն՝ ա՜խ, որ առավոտը բացվելիս՝ նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէր ընկնում,[15]) <հենց իմանաս՝ թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները ղրճատացնում ու իր ապականյալ, թունավոր դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փռնչացնում, որ կարենա՝ իր հոտած աղկների կերած, լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուբարա քցի, էլի հազար անմեղ, արդար հոգի՝ անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի։ Արեգակը մտնելիս հո՝ հենց իմանաս՝ թե Սադայելի որդիքն ու զավակները, նրա զորքն ու զորապետներն ըլին իրանց դիվական խաղը խաղում, իրանց դժոխային քեֆն անում ու բրջերի գլխին՝ մեկ կտրած գլուխ էս տեղ էին ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էն տեղ էին կտոր կտոր անում, վրեն թքում, ծափ տալիս, ծիծաղում, հրհռում, քրքռում ու թրով, մզրախով, չա փետով մեկ մեռած մարմին էս կողմն, էն կողմն գլորում, քացի տալիս ու ներքև քցում։ Ճաշվա ժամանակին՝ հենց իմանաս՝ մեկ կրակի սար ըլեր էնտեղ կանգնած, փոր, ծոց տաք քուքուրթով, բոցով լիքը՝ ծխում, բորբոքում էր, որ բիրդանբիր ճոնչա, բացվի, տրաքի ու ինչ կա չի կա տակովն անի, լափի։ Ամեն մեկ բուրջը, ամեն մեկ բարդանը՝ ոսկոռով, ջամդաքով, չա անմեղ դուխաղներով լիքը, քած խոզի պես՝ հենց իմանաս՝ ծանրացել՝ փորըներն՝ էլ չէին կարում քաշել, էնպես ուռել էին, որ բիրադի ճաքին, պատռին, կտոր կտոր ըլին։ Մեչդների ոսկեվարաղ գլխներին արեգակի շողքը դիպչելիս, պլպլալիս, հենց իմանաս՝ էն իրանց միջի անսիրտ նամազ անողների անխղճմտանք հոգու շնչովը փքված, ուզում ըլեին՝ աստծուն փառաբանություն, աղոթք անելու տեղը՝ որ երկրին խաղաղություն, դինջություն տա, Սոդոմական կրակն ըլեին ուզում՝ երկնքիցը վեր ածիլ տան, որ սար, ձոր էրեն, խորովեն, տակով անեն։ Հայի թշնամին՝ մոլլեն, որ գիշեր ցերեկ ուզում էր, որ չա քրիստոնեության անունը վերանա, չա հայ ազգի, մինարեն որ չէր նի ըլում՝ որ աղան տա ու իրան հավատացյալ ժողովուրդը գան՝ իրանց իմամներին, իրանց Ալուն, Մուրթուզալուն աղոթք անեն, որ էն դինումը դժոխքի փայ չըլին, սա

1 [դժոխային] [պատկերն ու վիճակը]
2 [Տեսավ] [նույն Երևանու բերդը]

ձեռն ականջին որ չէր դնում ու ծվում, հենց իմանաս՝ հայի համար սադայելյան փողն ըլի փչում, որ իրանց գլուխը լան, չունքի շատ անգամ էր պատահում, որ մեկ խեղճ, անճար գեղջցի հայ, որ բազարն էր գալիս էս հադալին, որ իր առըտուրն անի, մեկ քանի շահի ձեռք քցի՝ որ տանի իր քյուլֆաթներին պահի, էն տեղն էին քցում, էնքան էին ոտին, գլխին վեր հատում, որ հացն էլ էր մոռանում, եկած ճամփեն էլ, իր օղլուշաղն էլ, չունքի բեզաֆիլ մեկ թուրքի շորի դիպած, մուռտառած էր ըլում: Աշխարհքի գլխին հենց գիտես՝ կրակ պեռք էր վեր գար, էնպես էր ամեն մարդ սասանահարվում, սարսափում, որ իր գլուխը պահի, բալի տակ չընկնի: Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ՝ կըլի որ իսկ սադայելյան փողն ու դատաստանի օրը էնքան սարսափելի չըլին, չունքի Աստծո ողորմության հույսը էլի կա, ինչքան էս օրերը, որ րիգունը գալիս՝ մարդ չէր իմանում, թե երբ առավոտը կհասնի, լիսը բացվելիս՝ ումուդ չուներ՝ թե սաղ-սալամաթ՝ մթանն աչքը խփի, էնպես ահում, դողում էին երկրի խալխը:

Երևանու բերդը՝ Երևանու բերդը, ա՜խ, աչքը դուս գա, քանի՜-քանի՜ ողորմելի հայի միս ա կերել, քանի՜-քանի՜ անմեղ հոգի՝ տարիներով չարշարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփջի տանելուց, համբերելուց եղը, կամ թոփի դյուլլի հետ ա թռչել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն ատամներով կոծելով, աչքերը դուս տրաքելով, փոթորիկելով հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը: Քանի՜-քանի՜ ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն-մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը գլուխ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած դալար հասակին, իր ըմբրի ու արևի նոր բաց էլած ժամանակին՝ կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել, որ երկնքումը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արյնին էր ծարավ՝ որ շուտով խմի ու բալքի կշտանա»:

Ապա էջ 99

«Է՛ս սիրտը, է՛ս հոգին, է՛ս սերն ուներ հայ ազգը, որ թշնամու, գաղանի ձեռի՝ երկիր, աշխար, աղատություն, թագավորություն, իշխանություն, մեծություն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հավատին մատաղ տվեց, աղքատություն, նոքարություն, գերություն, ղարիբություն, տանջանք, չարշարանք, սով, մահ հանձն առավ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսավորչադավան օրենքը՝

ամուր, հաստատ ու անխախտ պահի: Էս ա հսկայություն, սրտապնդություն, մեծություն, քաջություն, կամաց հաստատություն, հոգու կարողություն ու զորություն, որ աշխարքիս վրա ջրհեղեղիցը դեսը՝ մեկ ազգ էլա մինչև էս օր՝ չի կարաց ու չի էլ կարող ցույց տալ: Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալվեր, կմաշվեր, ծով ըլեր՝ կպակսեր, կցամաքեր. բայց աստվածասեր Հայ ազգը՝ մինչև էսօր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլոր տու իր անունը պահեց:

Թողանք էն խեղճ, քոթրոմած, աչքից, ձեռքից, ոտից ընկած, էն սիրուն տղամարդ երիտասարդ հայերը, որ էս օր էլ Երևանումը՝ որը ջուխտ աչքով քոռացած՝ ախ, ոխ քաշելով մաշված ա իր հարսի, օղլուշաղի երեսին մատիկ տալիս, որը ոչ գդալով ա հաց կարում ուտիլ, ոչ ձեռով՝ տուրիշը պետք է՝ երեխի պես բիքեն բերանը դնի, չունքի ոչ պռոշներ ունի, ձեռներն էլ ուսաբերնիցն են կտրել, որը քոթրոմացել, անդամալույծ ա դառել, սելով են մանածում, որը քիթ չունի, որը՝ լեզու, սրտերն ուզում ա տրաքի, որ ուրիշը խոսում ա, երեխեքը լալիս՝ յա ծիծաղում են, բալքի թե մեկ ազար, մեկ մուրազ ունի սրտումը, լալի (մունջ) պես, մանուկ օրորոցկանի պես տխին, գլխին պետք է անի, որ միտքը հասկանան, բայց ինքը ուրըշին ոչ մեկ չոռ ա կարում ասիլ, ոչ մեկ ջան: Քանդվի էսպես տերությունը, հաստատ մնա Ռսի թագավորությունը, որ մեր ազգն ու աշխարքը գերությունից ազատեց...

<99>

Աչքը բաց արավ՝ տեսավ աղջիկ դուրս քաշելու նույն գազանային սովորությունը.

«Հերի՛ք ա, հերիք՝ ասող կըլի ինձ, ձեռք վերցրու էդ գժոխքիցը, ի՞նչ էլավ քեզ: Ա՜խ, ինչպե՞ս ձեռք վերցնեմ, բաս ո՞ւր թողանք մեր ազգի էն սիրուն, սիրուն լուսաշաղախ աղջկերքը, բաս մեկ ողորմի էլ ա չի պետք է ասե՞նք, որ երեսների վրա, քարի, ավազի, փշի, տատասկի վրով՝ մազերներիցը բռնած՝ քարքաշան անելով, գլխներին խփելով, մեջքներին ղամչելով շատ անգամ փորըների վրա պար գալով, քացի տալով, թրևելով, թուր քաշելով, տրորելով, թվանքի ոռքով, լափչընի նալչավ տալով, յա կխշրելով, ձեռըները կապած, ոտըները բխոված, շատ անգամ հարիր վերստ տեղից՝ հերնը մերն եղևներիցը ընկած, քիր, ախպեր բոբիկ տռով, յա գլխաբաց, քեռի, փեսա, ազգական՝ դողընները ծեծելով, մազըները պոկելով, հող ու քար գլխըներին տալով, ինչպես մեկ սուրու գառն ու մերը կորցրած ոչխար* տանում էին, բերդն ածում,

* սխալ 17)

տր... հարանացնեն, թուրքացնեն: Շատը հենց տանն էր հոգին տալիս, շատը ճամփին հորն ու մոր աչքի առաջն էն կյանքը գնում, ուր ցավ, ուր վիշտ էլ չկա» («Վերք Հ.» <այաստանի>, 98):

Տեսավ նույն գազանային աշխարհավեր բռնակալությունը և նույն հրեշավոր սովորությունը թշնամու հետ պատերազմի բռնված դեպքում իր երկիրն ավերել, ժողովուրդը տնավեր ու բնավեր քշել, որ ոչինչ չընկնի թշնամու ձեռքը, ինչ որ դարեր առաջ, Շահ Աբբասի ժամանակ, նկարագրում է Առաքել Դավրիժեցին:[16]) (էջ 131, «Վ. Հ.»)

Տեսավ նույն տանջված, նահատակ ժողովուրդը իր մշտական գանգատով. «Հայր սուրբ, գլխիդ դուրբան... էս անօրենքները մեզ հավատից էլ են դցել, հալից էլ. մալ են տեսնում մեզանում՝ խլում են, աղջիկ են գտնում՝ քաշում են. մեզ կրակն են դրել, սաղ սաղ էրում են, փոթոթում. թե մեկ խոսք էլ ասում ես հո՝ վա՛յ քո օրին-արևին, գլխիդ էնքան բռնցկում են, որ աչքդ բուրդ ա ընկնում: Տունդ էլ քանդեն՝ ձեն չըպետք է տաս. ախր որ մեր միսն էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կըլի: Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա ա բարձրացնում: Չի ըլում՝ որ մեկ օր գնանք ջուրը թափենք պրծնենք: Ախր էս հո օր չի, որ մենք քաշում ենք: Մնացել ենք եթրմի պես շըլինքներս ծռած: Սրա վերջն ախըր ի՞նչ պետք է ըլի. գիր չե՞ք բաց արել, ի՞նչ ա ասում. էս աշխարքըս քանի՞ տարի էլ պըտի մնա, վախտը հասել չի՞, որ մեկ Գաբրիելյան փողը փչեր, աշխարքս հայլու պես դղվեր, էնպես որ՝ մեկ պստիկ ասեղ էլ՝ մեկ օրվան ճամփից երևեր... [(Վերք Հ <այաստանի> 124—125)]: «Թողություն արա, ծառա եմ սուրբ աջիդ, գիտում եմ, որ դուք էլ կցավիք, ընդուր համար եմ ասում, թե չէ մեկ պուճախ էլ ես կճարեմ, որ միջումը ձգվեմ, մեկ բուռ հող էլ հալբաթ կըլի որ մեկ օր աչքս խփելիս՝ երեսիս քցեն»:

«Լավ ես հրամայում, լավ, աղա Պետրոս, պատասխանեց արբաղանը...[18]) Բաս թե իմանաք մեր գլուխը ինչ են բերում... էն ժամանակ դուք ձերը կմոռանաք:[19]) <Ամեն մեկ բեկ, մեկ խան տերը Աթոռը գալիս, մեզ կրակն ա դնում, էրում, շամփրի պես պատում: Ոչ հացն ու ջուրն ա նրանց փորը կշտացնում, տչ պատիվն ու փեշքաշները նրանց աչքը բռնում: Շարթով նստում են մեզ վրա, ինչ որ ուզում են, տալիս ենք, էլի ոազի չեն ըլում: Սարդարն ու Հասան-խանը գալիս հո՝ երկինքը մեր գլխին փուլ ա գալիս, աշխարքն աշխարքով դիպչում. էլ շունը տերը չի ճանաչում, էնքան գել են մեր գլխի թոփ ըլում: Քչիցը, քչիցը, ամեն մեկ գալիս՝ չորս-հինգ հարիր մարդ էղևիցն ընկած՝ տուն են թափում,

ո՞ւմ առաջը բռնես: Խան, բեկ, ծառա, մեհտար, աշչի, զուշչի, զայլանչի, էրկու էնքան էլ ձի, ջորի, ուղտ, բարգ, բարախանա՝ հետքները զցած գալիս մտնում վանքը, դե արի, նրանց կառավարի: Ինչ օր որ նրանց ոտքը մեզ մոտ պետք է մտնի, հացըներս էլ ա հարամ ըլում, ժամըներս էլ: Սաղ օրը յա ժամի ծերին, յա ճամփի մեջ տեղը՝ շոքում, անձրևում, թողում պիտի կանպնինք, մտիկ տանք, որ նրանք գան: Իրենք, չորս եպիսկոպոս պտին առաջը գնալ: Բոլոր միաբանությունը դուս ա գալիս, մեկ վերստաչափ տեղ էլ՝ գլխաբաց, խաչով, խաչվառով, շուրջառով, բուրվառով, խնկով, մոմով առաջ գնում ու շարական ասելով, վազելով, ձիանոնց առաջին քափ ու քրտինքները կոխած՝ նրանց ներս բերում: Շատ անգամ վանքի դուռը մտնելիս՝ պետք է զառ ճոթից, ղումաշից, խասից փիանդազ քցած՝ որ էս անօրենների ոտը խերով ըլի, մեկ վնաս մեզ չհասնի, թե չէ ամենիս էլ կկոտորեն: Փիանդազը ֆառաշների փայն ա, դե արի, նրանց սիրտը շահի: Էսպես գալիս են վանքը լցվում: Վեհարան, խցեր, Ղազարապատ, էլ տեղ չի մնում, որ միջումը կուչ գանք: Հլա Սարդարի, խաների սիրտը փեշքաշներով, փողով ենք առնում, ու կաթողիկոս, եպիսկոպոս՝ գիշեր, ցերեկ գլխներովը պտիտ գալիս: Ամա ինչ որ մեր խեղճ միաբանի ու նոքարների գլխին ա գալիս, դուշմանդ չը տեսնի: Փետի, թրի առաջ արած, սաղ օրը ուշունց տալով, ծեծելով՝ հազար մեկ բան են ուզում: Յա ձիանոնց տեղն ու խոռակը լավ չի՛, յա իրանց սրտի ուզածը բանի պետք չի՛: Մեր ձիանքն էլ են դուս անում, տավարն էլ: Խոզերին հո՝ վա՞յ նրանց օրին, որտեղ որ տեսնում են, թրատում, միջիցը կես են անում, ախար խոզի թշնամի են, բաս ի՞նչ կըլի: Մեր թխած հացը, էփած կերակուրը, մորթած միսը, ձեռը տված զատը հարամ ա ու հարամ: Իրանք են ամպարը մտնում, մառանը ընկնում, դռները կոտրատում ու ինչ սիրտներն ուզում ա, շատ փայը շաղ տալով, ոտի տակ քցելով, կոտրելով, ջարդելով, փշացնելով՝ իրանց ձեռովը դուս բերում, ուզածները շինում, էլի մեր յախիցը կպչում: Էսպես մոյդա ասես՝ ղարաչի, քյամանչի, սազանդար՝ սաղ գիշերը՝ որը պար էր գալիս, որը՝ ֆալ բաց անում, որը բերնին զոռ տալիս, որը՝ գլխին, որ էս անիրավի սիրտը շահվի: Գինի խմելն էլ հո՝ նոր են սովորել, էլ ի՞նչն ա պակաս: Աստված ոչ շհանց տա, մենք էլ ձեռըներս դոշըներիս՝ սաղ գիշերը նրանց առաջին, յա պետք է չոքինք, յա կանգնինք, որ քեֆըները թամամ ըլի: Շատ անգամ վարդապետ էլ ա թրատվում, յարալու ըլում: Էսպես ընչանք մենք նրանց մեր հասարիցը դուս ենք տանում, մերը մեզ ա հասնում:

«Ախր մեզ որ էս են անում, ձեզ ի՞նչ կանեն: Պտի համբե-

րենք. համբերությունը կյանք ա։ Կարելի ա, որ մեկ օր աստծո ողորմության դուռը բացվի, յա էն ա, բոլորս էլ կկոտորվինք, կփշանանք ու Աստծո սուրբ տեսությանը կարժանանանք, կամ թե չէ մեկ ճար կըլի մեզ։ Քրիստոնեն սրով չի պետք է՝ իր բանը յոլա տանի։ Նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա։ Էսպես արեց մեր էն էշ գեղջցի հիմար Աղասին էլ, որ մեկ աղչկա խաթեր՝ սուր քաշեց ու խեղճ Քանաքռցիք էնքան ջարդմա տվին ու նրա հալևոր հերը ու գեղի քեղխուդեքը՝ էս ա, բանդումը քոթկումը չորանում, մաշվում են ու աստված գիտի՝ թե վերջըները ի՞նչ կըլի։ Ոչ Մելիք Սահակի, ոչ Կաթողիկոսի մունաթը՝ մեկ օգնություն չարին։ Ինքն էլ գժի պես ընկել ա սարեսար, չափմիշ անում, ճամփա կտրում ու իր թշվառ օրը էսպես անց կացնում։ Ո՞վ ա գիտում, թե ո՞ր քարի վրա գլուխը վեր կդնի ու ի՞նչ տեղ շներոց, գելերոց կըլի։ Լավն է՞ն չի, որ մարդ գլուխն իրան քաշի, ու տազ անի։ Չէ՛, չէ՛ սիրելիք, քանի կարանք, մեր գլուխը պահենք. հա՛ կասեն, հա՛ ասենք, չէ՛ կասեն, չէ՛ ասենք. կասեն՝ նստի՛ր, նստինք. վե՛ր կաց՝ վեր կենանք. մինչև տեսնենք՝ թե բանն ի՞նչ տեղ կհասնի։ Ասում են՝ թե Ռուսներն էկել՝ Աբարան կեն հասել. ո՞վ ա խաբար, բալքի նրանցից մեկ ումուդ ըլի, Աստուծո բանն անքննելի ա»։

Այսպես, դարեր շարունակ մեր թշվառ աշխարքում տիրում էր նույն բռնակալությունը, նույն հալածանքը, նույն դժոխքը։ Եվ դարերից հետո էլ՝ Զաքարիա սարկավագից հետո՝ նույն Քանաքեռ գյուղում աչքը բաց անելով Խ<աչատուր> Աբովյանը իր աչքով տեսավ նույն զարհուրելի վիճակի պատկերներն ու նույն դժոխքը, որ և ամենայն հարազատությամբ պատմեց ու ողբաց իր «Հայրենասիրի ողբի» մեջ։ [Սակայն նա տեսավ այդտեղ և՝ առաջին հանդուգն [բողոքն ու] ապստամբությունն այդ բռնության դեմ (Աղասու խոսքերը),[20] որ հայ ժողովրդի բացարձակ ու բարձր բողոքն էր պարսից կառավարության դեմ, որի պատկերը «Վերք Հայաստանի»-ի մեջ հանդիպանում է Աղասին... Տեսավ փրկության հույսը, որ բապատում էր հայ ժողովուրդը Ռուսաստանից*, տեսավ և այդ դըժոխքի ավերումը Երևանի առումով։ Այս է պատճառը, որ նրա «Վերք Հայաստանի»-ն և հայրենասիրի ողբ է՝ կսկիծով ու հառաչանքով լիքը, և ազգային դյուցազներգություն է, որ ուժ ու հըպարտություն է շնչում և բարերարվածի ու փրկվածի ներբող՝ ողողված ուրախության արտասուքներով, երախտագիտական բա-

[1] [այդ դժոխքի քանդվելը]

* մյուս էջերը ժող<ովրդի> օրհնանքը ուսս կայտեր.

ցականչություններով ու օրհնություններով։ Եվ ամենը, ինչ որ դուրս է գալի նրա սրտից, նրա բերանից, նրա գրչի տակից՝ անկեղծ է, լիասիրտ ու ճշմարիտ, որովհետև ինքն [է] ապրել, աչքով տեսել, ականջով լսել ու պատմել։ Իսկ եթե տեղ-տեղ չափազանցություններ ու սխալներ կան,— դրանք էլ հեշտ են բացատրվում։ Չափազանցությունները արված են ցավի սաստկության տակ կամ ոգևորության տենդի մեջ, իսկ սխալները առաջացել են այն հանգամանքից, որ նա իր ողբը[1] գրել է Երևանի պատերազմից 13—14 տարի հետո։ Շատ բան կարող էր լավ չհիշել, այլև դեպքեր ու անցքեր կան, որ նա անկարող էր վերահասու լինել իր ժամանակին իբրև քաղաքական գաղտնիքների, պաշտոնական ծածուկ գրագրությունների [և տվել է միակողմանի[2] մեկնություն]։ Բայց այսուամենայնիվ դրանք քիչ են և չեն նսեմացնի նրա արժանիքը հենց պատմական տեսակետից, այնքան ճշմարտապատում է նա ու հարազատ իր ժամանակին և քաջածանոթ[3] դեպքերին ու դեմքերին։

Մինչև տասը տարեկան հասակը Նա իր մանկությունը անց է կացրել Քանաքեռ՝ իր հայրենի օջախում։ Տեսել ու ապրել է նրա չարն ու բարին, ուրախությունն ու տխրությունը, լավ ու վատ օրը, նրա նահապետական կյանքը, որ այնքան վառ գույներով փռում է իր գրվածքում։ Հիացել է իր ապագա հերոսի — Աղասու վրա, որի ծնկներին շատ է նստել ու խաղացել։

Տասը տարեկանից դնացել է էջմիածին կարդալու ու մնացել է այնտեղ 5-6 տարի։ Տեսել է, թե ինչպես են գալի էջմիածին պարսիկ մեծամեծները — Սարդարն ու Հասան խանը իրենց մարդկանցով, և այնպես կենդանի[4] պատմում է իր ողբի մեջ՝ էջ 128—131։[21]) Էջմիածնից 16—17 տարեկան գնացել է Թիֆլիզ, ուր մնացել է մինչև 1826 թվականը։

Տեսել է, թե ինչպես Թիֆլիզ եկավ Աղասին և ինչպես է քաղաքի ժողովուրդը հետաքրքրվել իր քաջ հայրենակցով։ Այնտեղ էլ Աղասին շատ անգամ է Աբովյանին ցույց տվել մի թղթում փաթաթած իր ոսկորները։

«Դեռ վարժատան աշակերտ էի ու ինչպես էսօր կենդանի է

---

1 [պատմու<թյունը>]

2 [սխալ]

3 քաջահմուտ

4 [գեղեցիկ]

մտքում՝ Աղասին ինչպես մտավ Թիֆլիզ։ Երևելի իշխանի որդի չէր, որ նրան մեծ փառքով ներս բերեին. բայց ով նրա արածն իմացել էր, ուզում էր ոտներն ջուր անի՝ խմի։ Մեկ թղթի միջում ծալած իրա ոսկորները քսան անգամ* հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կռիվներումը կոտրել՝ հանել էին» (<«Վ<երք> Հ<այաստանին>», 267)։

Այնուհետև շատ է եղել Լոռու ձորերում [Հախպատ, Սանահին], որ այնքան հարազատի սիրով ու կարոտով պատմում է այդ ձորերից ու նկարագրում։

20-21 տարեկան էր, որ ավարտեց Ներսիսյան դպրոցը, գնաց Հախպատ Եփրեմ կաթողիկոսիցը թուղթ առնի, որ անցնի արտասահման, գնա Վենետիկ, բայց գնաց ընկավ ռուս-պարսկական պատերազմի —[Երևանի կռվի չերանը և] Դարաքիլիսա։ Ասում է՝ «երկու օրից հետո հենց մտա Դարաքիլիսեն՝ խլղարաքիլիսու եսրներն եկան». «Վ<երք> Հ<այաստանի>», 170։ Այս գուցե այն եսրներն են, որ Հասան խանի ձեռքից ազատել էր Սարգիս եպիսկոպոսը. (Акты Кавк<азской> Арх<еографической> комис<сии>, VII, стр. 252)։[22])

Սրանց էլ իր աչքով տեսավ ու իր ականջով լսեց խլղարաքիլիսու կոտորածն ու ավերածը, որ այնքան սրտաճմլիկ ու ամենայն մանրամասնությամբ տալիս է իր ողբի մեջ։ Նույն մանրամասնություններով, ինչպես ականատես, պատմում է Դարաքիլիսու շուրջը կատարվող բոլոր պատերազմական դեպքերն ու ժողովրդի դրությունը։ Ասում է. «Դարաքիլիսեն, ինչ տեղ որ իշխան Սավարզամիրզա կենում էր, դառել էր սքատուն, գողադարան։ Անօրեն պարսիկքն ու թուրքերը ձորից, սարից օրը ճաշին, մեր աչքի առաջին՝ մեկ թվանքի մանգղիլ տեղ՝ վրա էին տալիս գազանի պես ու տավար, մարդ եսիր անում, կամ տանում, կամ գլուխը կտրում։ Ոչ ցերեկն ունեին քուն, ոչ գիշերը։ Մեկ ձիու ոտի կամ թվանքի ձեն մերուցը գալիս՝ աշխարքն աշխարքով էր դիպչում» (<«Վ<երք> Հ<այաստանի>, 191)։ Այդ ժամանակ ռուսաց զորքը Ցիցոլովի հրամանով ստիպված էր ժողովրդին էլ հետն առած՝ նահանջելու Փամբակից դեպի Լոռի։ Ի<աշատուր> Աբով-

---

* Մոսկվայի՝ ժամհարյանի հրատ<արակության> մեջ կենսագրականն ասում է. «Պարսկա-ռուսական պատերազմը սկսվում էր, երբ Աբով<յանը> 1829 թ<վականի> փետր<վարի> 24-ին վերջացրեց իր ուսումը ներս<իսյան> դպրոցում (էջ 18)։ Եվ [նկարագրում է] անում է նրա վենետիկ գնալու պատմությունը։ Ակնհայտ սխալ է. [երևի] պետք է լինի 1826. (խլղարաք<ւիսա-յի> պատմ<ություն>, հենց իր՝ Աբով<յանի> խոսքերը մյուս երեսին, թե՝ 1826-ին վերադարձա ս<ուրբ> աթոռը և մնացի չընթացս երից ամաց և այլն)։

յանն էլ այդ ժողովրդի հետ՝ ու այդ զորքի հետ՝ չորս կողմից անդադար հարձակվող պարսիկների գնդակների տակ՝ Ղարաքիլիսից անցնում է Ջալալօղլի[1]: Ասում է. մտքիցս չի գնալ էն դառն օրը, որ հրամանն էկավ թե անպատճառ քոչենք:

...Հաջաթ, զարդ, տան կայինք[2], ինչ կար չկար՝ բոլորը կըրակ տվին, ինչ ժամանակ ոսի ժամի մուխը տեսան, որը որ մեծավորը իր ձեռքով կրակ տվեց, ու սկսեցին լալով, սքով իրենց քաղցր սիրեցյալ գերեզմանը համբուրել, բարով մնա ասիլ իրենց հողին, ջրին, թափի սալդաթի մեջն ընկնիլ ու Դվալի սարի էն կողմն անցնիլ: Դեռ կիսաճամփին էինք, որ Նաղի-խանը իր զոնշունովն էկավ, մտավ Ղարաքիլիսա ու սարի գլուխը,[23]) ամեն մարդ իր տան կրակի ծուխը տեսնելով, քթի ծուխն էլ հետն էր դուս գալիս, ու աչքը խփում էր, որ էս կսկիծն էլ չտեսնի: Քոչվորի մեկ տուտը Ջալալօղլի էր հասել, մեկը դեռ հլա սարի էն կողմն էր: Թուրքերը՝ ջամդաքակեր գելի պես գլխներիս պտիտ էին գալիս, ու սարից, ձորից թվանքները մեզ վրա կրակում: էն օրը գնա, ոչ եդ գա՝ ինչ մեր հալն էր: Լացի, սքի ձենը երկինքն էր հասել, լսողի, տեսնողի սիրտը էրում, փոթորիկ: Խալխը սար ու ձորը լցվել, իրար վրա էր թափել. ոչ տուն կար, ոչ տեղ, ոչ հաց, ոչ ապրուստ: Ով բարեկամ կամ ծանոթ ուներ Լոռի՝ գնաց, նրա մոտ վեր եկավ. ով հարուստ էր՝ գլուխը պահում էր. ով մեկ Աստուածածսերի ռաստ էր գալիս՝ գեղարենքումը իր քյուլֆաթին մեկ տաք գոմ էլ ա ճարում, նրանց տեղավորում էր, ով չէ՝ սարում, ձորում, էրում, քարափում բուն փորում, մեջը մտնում ու գլուխն ու մեջքը լեռ քարին տալիս: Լոռվա ձորի մեջը էս գլխից էն գլուխը՝ գալիս էր, որ իր վրա վեր էր թափվել. շատը հողն էր ծակել՝ մեջը մտել. շատը փեդեր իրար վրա տվել՝ տակին կուչ էկել, բայց հաց, շոր, ապրուստ ո՞րդիանց ստանալին ողորմելիքը: Հացի կտոր դառավ օխտը տաֆ մանեթ, էն էլ չէր ճարվում: Սարերումն էլ՝ բանջար, խոտ չէր մնացել, քաղել, կերել էին: Ջուկը բռնելով, ֆորս անելով՝ ի՞նչպես կարելի էր տուն պահել, քչիցը ամեն մեկ տան տասը ջան կըլեին: Էլ սատկած տավար չմնաց, որ չմորթեն, չուտեն: Շատ հետ, շատ ախտեր իրանց օղլուշաղի, քուռիա երեխեքանց ձենին չդիմանալով, տասնով, քսանով հավաքվում, գլխները փեշերներն էին դնում, էլ եդ թաքուն Փամբակ գնում, որ հաց բերեն. բայց, ա՛խ, որը եսիր էր ընկնում, որը գլուխը թշնամուն տալիս, իր տունը քանդում: Ջմեռն էլ եկավ, վրա հասավ: Մարդ անասուն

---

[1] [Լոռի]

[2] կայանք—կայինք

սովի, ցրտի ձեռիցը ազար ընկան. Աստված ոչ շհանց տա ինչ էս խեղճերի հալն էր, որ գերեզման էր դառնում, հող էր, որ ջիվան ջիվան երեխեք՝ երեք, չորս օր տված, թաղաթը կտրած՝ տակովն անում: Մեկ հացի ֆոտ դուս գալիս, հազար աղքատ՝ շլինքը ծուռը դուռդ կտրում, չտայիր՝ սիրտդ էր էրվում, տայիր՝ երեխեքդ մնում սոված. կարոտ էինք մնացել, որ ցամաք հացն էլ ա կուշտ փորով ուտենք: Ով ինչ զարդ, զինքս ու զարդարանք, արծաթեղեն կամ մարգարտեղեն ուներ, որը ծախեց, որը գրավ դրեց: Շատը որդիքը տարան Շուլավեր, Բորչալու եսիր տվին: Իմ տան տերը վերձակ էր, որ գնում չէր, բռնում, ու մեկ քանի շաբթից եղը մեզ համար հաց բերում, հենց իմանում էինք, թե երկնքիցը հրեշտակ է գալիս: Էսպես հազարավորք մեռան, սովամահ էլան ու շատ փայն էլ էկավ, ընկավ Վրաստանու հողը ու գլուխը պրծացրեց»>:

Եվ այսպես, պատերազմի բռնկման առաջին օրից մինչև վերջը Նա գոնվում էր պատերազմի բեմի վրա, մասնակից էր տանջվող ժողովրդի տանջանքին և ականատես բոլոր սարսափներին ու անցած դարձածին: Պատերազմից հետո էլ մի երկու տարի մնում է էջմիածին: Կամենում էր վարդապետ ձեռնադրվի, այդ ժամանակ 1829 թվին դիտական նպատակով՝ հատկապես Մասիսի կատարը բարձրանալու համար, էջմիածին է գալիս Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտը, որը և սիրում է Աբովյանին ու պատճառ է դառնում նրան Դորպատի համալսարանը տանելուն: Համալսարանից ոգևորված վերադառնում է 1836 թվականին, բայց լավ ընդունելություն չի գտնում, և ոչ աջակցություն ու գնահատություն: Ընդհակառակը, նայում են որպես խորթ մարդու վրա, խորշում ու հալածում, և դառնացած ու հիասթափված նա մտածում էր շարունակ իր հայրենի երկրի վրա ծանրացած խավարի, իր ժողովրդի թշվառ վիճակի մասին: Բայց ո՛չ, նա նոր չէր մտածում այդ մասին: «Ոչ—քսան՝ երեսուն տարուց ավելի ա, իմ ազիզ հեր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա. գիշեր ցերեկ լացն ու սուրը իմ աչքիցս, ախն ու ոխը՝ իմ բերնիցս չի պակսում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի» «Վ<երք> Հ<այաստանի>», Հառաջաբան: Այսպես է ասում նա 1841 թվականին և այդ թվականին էլ բացվում է հրաբուխի նման ու դուրս է հեղեղում իր սրտում քսան-երեսուն տարուց հավաքած, կուտակած ցավն ու կսկիծը, կարոտն ու փափաքը, որ կորում էին նրա հանդիսատը, այժմ էլ պետք է գային կորելու գալոց սերունդների հանդիսատը:[24])

Նա իր «Վերք Հայաստանին» գրել է 36-37 տարեկան հասակում, Երևանի կռվից [13-] 14 տարի հետո: Բայց մարդ զարմանում է, թե այդ 14 տարուց հետո էլ ինչքան բան է մնացել նրա միտը և ի՜նչ թարմությամբ ու ի՜նչքան կենդանի պատմում է դրվածքի մեջ, իսկ թե, սակավ բացառությամբ, ի՜նչքան հավատարիմ ու հարազատ են այդ ամենը իրականությանը, նույնիսկ իրենց մանրամասնություններով, այդ կատուգինք, կտեսնենք պատմական դոկումենտներով, որ առնում ենք ռուսաց զինվորական տարեգրությունից:

1827[1] թ<վականի> ռուս-պարսկական պատերազմն բացվեց աջ թևից, 1826 թ<վականի> հուլիսի 16-ին: Այդ օրվա առավոտը պարսիկները հանկարծական հարձակում գործեցին աջ թևի երեք դիսավոր կետերի վրա՝ Միրաքի ամրության, փոքր Ղարաքիլիսա կամ Խըղարաքիլիսա գյուղի և Համզաչիմանի պահակի վրա: Միրաքի վրա հարձակվեց Երևանի Սարդարը վեց թնդանոթով, երեք հազար ձիավորով և երկու բատալիոն սարբազ: Այդտեղ պատահմունքով գտնվում էր սահմանի դիսավոր գնդապետ իշխ<ան> Սեվարսամիձեն գնդապետ Բարոն Ֆրեդրիքսի և փոխգնդապետ Դոլգովո-Սաբուրովի հետ 650 մ<արդով> և երկու թնդանոթներով: Ետ մղեց թշնամու եռակի հարձակումը, բայց նրա գերազանց ուժի առջև տեղի տալով Աբարանից նահանջեց Գյումրի:

Համզաչիմանի պահակի վրա հարձակվեցին [(Նազի-խանը)] 1000[2] հոգի ձիավոր* զարափափախները <....>: 15 զինվոր գըլխատեցին, մնացածը փախան Ղարաքիլիսա: (Потто, 37.[25]) Ըստ երևույթին քնած են եղել):

Ամենից զարհուրելին եղավ փոքր կամ Խըղարաքիլիսի հարձակումն ու ավերումը: Եվ այդ դժբախտ օրին ու գյուղին են նվիրված «Վերք Հայաստանի»-ի ամենասրտաճմլիկ[3] էջերից մի քանիսը[26]) Խըղարաքիլիսի վրա հարձակվեց Հասան խանը 5000 ձիավորով [քուրդ ու զարափափախ]:

Այժմ թող խոսեն Աբովյանն ու պատմությունը.

«Պարսկի գեղը, Գյումրի, որը բերդ ուներ, պատերը շինել,

---

1 Բնագրում՝ 1828 թ.

2 [200]

* [Վերք Հ<այաստանի>] Աբ<ովյանը> Նազի խանին, Սվանդուզի խանին [ու Օբյուդ աղին] ցույց է տալի Խըղարաքիլիսի հարձակման մեջ սխալ [պատճառներ], նա 1000 ձիավորով այն ժամանակ գտնվում էր Գյորչու Սվանդուզի խանը (Սոյուն Ղուլի) <. . . .> Համզ<աչիման> 1000 ձ<իավոր>, XXIV, 327):

3 [ամենաողբերգական, սրտառուչ]

4 [Ահա գիշերը պաշարված Խըղարաքիլիսայում]

մեջն էին մտել։ Խըլղարաք<իլիսեն> բերդ ու էր չունենալով՝ սելեր ու գութան իրար վրա էր դրել, սանդար կապել, ունեցած-չունեցած էնտեղ դայիմացրել, գեղարինքն էլ իրանց մեջն առել, ինչ հին ժամանակից թուր, թվանք ունեին հավաքել, տղամարդիքը գիշեր ցերեկ ասպաբավորված [օղլուշաղը էնտեղ էին հավաքել, տավարը բերդի տակն արել]... ղարավուլ էին քաշում... («Վ<երք>Հ<այաստանի»>, էջ՝ 140)։

Ու վրա է հասնում վերջին գիշերը պաշարված գյուղին։

«Տղե՛րք, օյա՛ղ կացեք, թվանքներդ հազրեցեք, երեխեք, օղլուշաղ բերեք՝ մեր տունն ածեցեք։ Ասեց Խըլղարաքիլիսի իշխան պարոն աղա Սարքիսը[1]։ ...Թող մեզ բարութ ու թվանք չըտան, մեր տղամարդությունը մեզ համար բարութ էլ ա, պարիսպ էլ։ Լավ նայեցեք, որ սելերը ղայիմ ըլին։ Մեկ դասեղ դնա գեղի էն կողմը, մեկը էս կողմը, թե կարաք՝ մեծ ու պստիկ խառը կանգնեցեք, որ թշնամին հենց իմանա թե մենք շատվոր ենք ու սիրտ չի անի մոտենա... Սուրբ Սարգսի անունը տվեք, աղոթք արեք, հրես աղոթարանը որտեղ որ ա, կըբացվի...— Վարդանի Աստված, Վահանի Աստված, ով սուրբ Լուսավորիչ... Տերտեր ջան՝ պահպանիչդ ասա, Ավետարանը կարդա, մեկ կարճ աղոթք անենք աստուծու էս տուրբ երկինքի տակին, բալքի թե դհա շուտով մեր ձենը տա աստված հասնի։ Երեխեք, չոքեցեք. ծունր դրեք. ձեր՝ էս սահաթի ամեն մի շունչը՝ Աբելյան պատարաքի պես երկինքը կըվերանա։ Հանեցեք թրները, թող տեր հայրն օրհնի»։

[28]) Տան կըտրըներին, հայաթի միջին,
Դաշտի երեսին, հողի բաց դոշին,
Երկնից առաջին, աստղերի տակին,
Նրանք չոքեցին, նրանք կանգնեցին։
Էրեխանց ձենը, տղայոց լացը,
Մնողաց սուգը, նրանց մաղթանքը
Իրար հետ խառը երկինք վերացան։[29])

Հերը որդին օրհներ, մերը զավակն հանձներ։ Մութն ու խավարը քիչ-քիչ հեռանար, լիսն ու արևը՝ ծանր մոտանար։ Երկիրը նրանց արտասունքը սրբեց, երկինքը նրանց աղոթքը լսեց։ Ուրախ երեսոք տեղից վեր կացան. տերտերի ձեռը, խաչն, ավետարան ճակատին դրին նրանք, համբուրեցին. ձեռ ձեռի տված՝ իրար սիրտ դրին. աչքները սիրով երկինքը քցեցին. թե մահ էլ, թե կյանք նրանց հանդիպին՝ իրար հետ մեռնին, իրար հետ արին

[1] [(«Վերք Հ<այաստանի>», 148), խոսում է Հայաստանի վերքը։ Սուրբ Սարգսի անունը տվեք, աղոթք արեք, հրես աղոթարանը որտեղ որ ա կը բացվի...]։

թափեն ու կուվեն, իրար հետ թաղվին, իրար հետ պսակվին։ Ահ ու սխրություն՝ էլ չէր երևում. երեսն արև, լիս դառած՝ փայլում, արինն սրտիցը կրակի պես վառվում, հոգին մարմնիցը ձեն տալիս, ասում՝ էլ մի կորցնեք դուք մեր ժամանակն, գրվեց երկնքումը ձեր սուրբ հիշատակն։ Սար ու ձոր հրեն ոտն են վերցրել, գալիս ձեզ վրա՝ տոնատակ անել. բայց ձեր քաջությունն, երկնից զորությունն՝ կարեն աշխարքումս թողալ ձեր անունն. թե սերն ու հավատն, հայրենյաց նախանձն, որքան զորավոր են ու շնորհապանծ, որ մինն հազարին կարա խորտակիլ, երկուսը բյուրին կոտրիլ, նուաճիլ։ Ձեն տվին միմյանց, սիրտ տվին միմյանց՝ օրհնությունն առան, գնացին ի բաց։

Եվ ահա «սելավը վրա պրծավ... թվանքը տրաքեց... լիսը բացվեցավ...[30])

...Շորագյալի դոշը, մթնեց, սևացավ, խըղդարաքիլիսեն մխումը կորավ...

[31])Ինչպես մեկ կաթիլ գարնան անձրևի՝
Սաստիկ մրըրկի, քամու ձեռ ընկնի,
Կամ մեկ անմեղ գառ հարիր գազանի
Ռաստ գա ու մնա կանգնած նրանց միջի,
Ինպես մնացին չորս կողմը պատած,
Վերևն երկինքը, ներքևն հողը սառած։

...Խղդարաքիլիսեն էն խավարն էր բռնել, էն շամանդաղն էր պատել, որ աչքը իր առաջը բռանց էր տեսնում։ Թվանքի ձենը, թշնամու գոռոցը, ձիանոնց խրխինջը, տավարի բառանչը, գետնի թողը ու դումանը Շորագյալու դաշտը բռնել՝ կապել էին... Հարյուր անգամ Պարսից սևագունդ զորքը զու արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանք իրանց լաշերի վրովը էլի եդ փախան. շունչ առան՝ էլի կըրկին էկան. էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով եդ դարձան...»։[32])

Բայց ինչքան էլ քաջ դիմադրեր, ինչ կարող էր անել մի խեղճ գյուղ 5000-անոց զորաբանակի դեմ։ Հասնում է հուսահատական վերջին րոպեն։

«Կրակ տվեք, տուն, օղլուշաղ էրեցեք, վրա թափեցեք. տղերք, էրեխեք, մնաք բարով։ Ամպեր թափեցեք, երկինք՝ գոռացեք, հողեր, դաշտեր, ձորեր, սարեր վկա կացեք...»։

[33])Խոտի դեղերի կրակն ու բոցը,
Խեղճ օղլուշաղի հարայ հրոցը,
Դարմանի ձուխը,

Կալերի մուխը
Ամպի պես ելին,
Օրը խավարցրին,
Գեղի չորս կողմը ելավ[34]) ալավը,
Տների մեջ ծուվ դարձավ լացը.
Էլ ոչ հեր կարաց որդուն համբուրի,
Էլ ոչ մեր կարաց տղին մեկ տեսնի։
Հարսի սրտումը իր սերը մեռավ,
Փեսի բերնումը լեզուն չորացավ։
Քիրն ուզեց ախպորն ջան էլ ա ասի,
Ախպերը՝ քրվորն իր խըտիան առնի։
Մերն ու խեղճ հարսներ՝ իրանց երեխեք,
Տղերք, ծերունիք, իրանց սուրն ու զենք
Դոշին կպցըրին, երկինք նայեցին,
Աչքները խփեցին ու ախ քաշեցին։
Մեկը դուռը փակեց, որ կրակումն էրվի,
Մեկն աչքերը խփեց, որ ցավ չը տեսնի։
Տղերքը գեղից դուրս թռան դաշտը,
Տանըցիք փախան, որ ընկնեն կրակը։
Էլ լաց չէր գալիս նրանց կարոտ աչքը,
Նրանց բուրջ, բադան մնաց երկինքը։
Տունը քանդեցին տանըցոց գլխին,
Սելը քանդեցին, վրա թափեցին...[35])

Եվ այս արյուն արցունքով լի գրքի այս զարհուրելի գլուխը վերջանում է Հասան-խանի խոսքերով՝ «Փշրեցեք, ջարդեցեք, [քանդեցեք]...»[36]) ու Աբովյանի կսկծալի մրմունջով.

Հանգիստ ու խաղաղ մնաք, սիրելիք,
Մինչև օրն վերջին, լիսն գեղեցիկ,
Անմեղ երեխեք, արդար դուք հոգիք[37]):

Պատմական դոկումենտներն այսպես են հաստատում ու լրացնում այս հրեշավոր դեպքի նկարագիրը։ Ճիշտ որ հարձակումը եղել է լուսաբացին, ինչպես գրում է Աբովյանը, և ժողովուրդը հուսահատ կռվով ուժեղ դիմադրություն է ցույց տվել 5000-անոց զորաբանակին ամբողջ 7 ժամ։ Այս մասին սահմանապահ գրքի հրամանատար իշխ<ան> Սևարսամիձեն, ահա թե ի՛նչ է հաղորդագրում Կովկ<ասի> կառավարչապետ գեն<երալ> Երմոլովին 1826-ի օգոստ<ոսի> 5-ին։

«Спешу довести до сведения вашего Высокопревосходительства подробно на предписание Ваше от 16-го числа № 241. Гасан-хан со всею Эриванскою и макинскою конницей напал в 5-м часу по полуночи на Малый Караклис, в котором жители защищались до двенадцати часов. Со стороны персиян убито и ранено до четырехсот человек («К. с., XXIII, 102)[38]:

Գեներալ Կոցեբուն իր օրագրության մեջ Խլղարաքիլիսի ավերման մասին խոսելիս ասում է.

«Жители армяне (700 дворов)* и даже жены их отчаянно защищались несколько часов, выстрелы слышны были в Гумрах, и малейшая помощь спасла бы жителей М. Караклиса, но командующий в Гумрах Тифлисского пехотного полка подполк <овник> Дехтерев, имея в распоряжении своем 700 человек и два орудия, ничего решительного к спасению их не предпринял» («К. с. XXII, 123[39]:

Օգնության պատմությունն այսպես է. Փամբակի և Շորագյալի կողմերը եղած պատերազմական գործողությունների օրագրության մեջ ասված է.

«Тифлисского пехотного полка подполковник Дехтярев, узнав о нападении на М <алый> Караклис выходил с 80 <-ю> человеками пехоты и двумя орудиями из Гумров, но по причине малочисленности отряда своего, сделав несколько выстрелов, возвратился в Гумры». («К. с. XXIV, 2)[40]:

[1826 թ<վականի> հուլիսի 16-ին պարսիկները միաժամանակ հարձակվեցին երեք գլխավոր կետերի վրա. Միրաքի, Փոքր Դարաքիլիսայի կամ Խլղարաքիլիսայի և Համզաչիմանի պահակի վրա]:

«В одно время с нападением на Мирак, Гассан-хан с пятью тысячами конницы учинил оное на армянское селение Малый Караклис, в коем находилось 700 семейств. Жители и даже жены их защищались несколько часов отчаянно, но наконец должны были уступить многочисленности неприятеля. Изверг Гассан-хан излив сперва на несчастных жителей все ужасы войны, зажег селение и повлек в плен всех, которые еще в состоянии были за ним следовать, людей же перестарелых приказано было умерщвлять. Отступающий из Мирака отряд проходил через Малый Караклис несколько

[* *Սխալ է, պետք է լինի՝ 70*]

часов спустя по отходе Гассан-хана, надлежит умолчать об ужасном зрелище, которое там представилось глазам воинов наших; оно делает стыд роду человеческому». («К. с. XII, 106[41]):

Երկու օրից հետո, 18-ի երեկոյան[42]) իշխ<ան> Սևարսամիձեն մտավ Խղարաքիլիսի ավերակները: [Տեսարանը սարսափելի էր]: Այսպես է պատմում ականատեսը, Հոռոմ գյուղի հերոս Դալի-Ղազարը:

«Սարսափելի էր Ղարաքիլիսին նայելը <...>, երբ Դալի-կնյազը (Սևարսամիձեն) մտավ էդ դժբախտ գյուղը: Քուչեքը լիքն արյունով, գլխատված թափված դիակներով, մեռողների հառաչանքներով, կենդանիների հևկեկանքներով, որ իրանց սպանում էին հարազատների դիակների վրա: Հենց ռուսական զորքը երևաց թե չէ՝ Սևարսամիձեն կառքով առաջին՝ կանայք ու երեխաներ վրա վազեցին ու սկսեցին նախատել, թե ինչո՞ւ չհկավ իրանց փրկելու: Ամբոխի կատաղությունը այնքան մեծ էր, որ կանայք քարեր էին շպրտում իշխանի վրա, որոնցից մինը դիպավ նրա գլխին: Խելակորույս ժողովրդից պաշտպանվելու համար, իշխանը թագնվեց կառքի տակին ու կանչեց Ղազարին. «էդ հիմարներին հասկացրու. ասա՝ ես մեղավոր չեմ, որ նրանց գյուղը քանդել եմ: Ես էլ չեմ տեղեկություն ունեցել ղզլբաշներից. նրանք մեզ կռիվ չեն հայտարարել, ավազակի նման հարձակվել են մեզ վրա. ես էլ, Երևանի Սարդարի հետ գործս վերջացրել եմ ու իսկույն շտապել ձեզ օգնության: Ցավում եմ, որ ուշացել եմ, բայց երդվում եմ, որ ձեր վրեժը կառնեմ»:

(**Потто**, Кавк<азская> война. том 3. в<ыпуск> 1, стр. 41):

Այս դեպքի մասին խոսելիս, թե գնդ<ապետ> իշխ<ան> Սևարսամիձեն իր հաղորդագրության[43]) մեջ, թե գեն<երալ> Սերգեյ Երմոլովը գեն<երալ> Ա<լեքսեյ> Երմոլովին ավերումից երկու օր հետո հենց Խղարաքիլիսից գրած իր նամակի մեջ— ասում են, թե ինչո՞ւ է ետ դարձել Դեխտերևը Գյումրի,—անհայտ է, իսկ գեն<երալ> Պոտտոն[44]) բացատրում է այն երկյուղով[1], թե՝ Գյումրին կարող էր պաշարվել:

Նույն օրը Հասան խանի հեծելազորքից մի մասը հարձակում գործեց Բայանդուր գյուղի վրա. բայց օգնության գնացած ռուսական զորքը կարողացավ ժամանակին ազատել թե այնտեղ գտնվող գինվորներին, թե բնակիչներին:

«Վերք Հայաստանին» այսպես է հիշատակում այդ դեպքերը: Խղարաքիլիսի կռվի տաք միջոցին, ասում է. «Գյումրու դղիցը

1 [հանդամանքով]

տուսի բալաբան, քաջ սալդաթների դաստեն, կապիտանն արծվի պես հասան, թշնամուն մեջն առան։ Թուփը մեկ կողմից են, թուրը մյուսից, մինը առաջից, մինը ետևից հնձեցին թշվառ թշնամու զորքը, ջարդեցին բերին էլ եդ[45]) թուփը կողքը» («Վ. Հ.», էջ 158)։

Ինչպես տեսանք՝ գործն այսպես չի եղել, և այս[1] մնում է միայն դժբախտ հայրենասերի սրտի փափագը, որ այսպես լիներ, ինչպես և սրան հետևող առասպելը, թե ինչպես Աղասին այդ դժոխային օրը Հասան խանին ոտի տակը դրեց, բայց խնայեց ու բաց թողեց։ Սակայն Ալղարաքիլիսի կռվից խոսելիս[2] շարունակության մեջ (էջ՝ 164) ասում է.

«...Ալղարաքիլիսեն էլ եդ կոխեցին. Բորչալվի թուրքերը կապիտանին գլխից հանեցին՝ թե ղզլբաշը Գյումրու բերդը կառնի, թուփ ու թուխանա հետներն առնեն՝ ետ դառնան»։[46])

Սա միանդամայն զարկ է պատմությանը, և այն բացատրությանը, թե գնդ<ապետ> Դեխտերևը ետ դարձավ, որովհետև վախենում էր Գյումրին տանուլ տար։

«Կարելի ա թե Երևան էնպես բարի, աղնիվ, խալխի ցավին հասնող, աշխարհաշեն մարդ չէր տեսել, ինչպես որ Սարդարն էր, բայց ինչքան նա բարեսիրտ էր, էնքան չար, գազան, դժոխք էր նրա ախպերը (Հասան-խանը), որ ոտը փոխելիս՝ սար ու ձոր դողում էին։ Նրա համար հո մարդի, հո տախի գլուխը, բոլոր մեկ էր («Վեպք Հ.» 91—92)։

«Сардарь был человек необыкновенных дарований и считался одним из умнейших людей в Персии. Он совершенно самовластно управлял своим ханством и, обращая главное внимание на развитие сельского хозяйства, привел Эриванскую область в то цветущее положение, каким не могла похвалиться ни одна из персидских провинций. Брат же его Гасан-хан, состоящий при нем начальником конницы, пользовался, по словам Берже, репутацией горького пьяницы» («Утвержд<ение> русского влад<ычества> на Кавказе>» т. IV, ч. 1 <стр.> 13):

Նույն վկայությունն է տալի և Ջեյմս Մորիեր հայտնի անգլիացին իր հռչակավոր «Հաջի Բաբայի արկածները» գրքում, թե արտաքինի նկարագրի, թե բնավորության դաժանության վերաբերությամբ միանդամայն համաձայն Աբովյանին և ռուսական աղբյուրներին։

[1] [ավելի]
[2] [մի ուրի<շ>]

Ասում է. «Աշխարհումս նրանից ավելի ժանգերես մարդ չկար։ Նրա ոգևորված ժամանակ՝ նրա աչքերը, որ իրանց սովորական արտահայտությամբ նմանում էին անթափանցիկ ապակու կտորների, վառվում էին այնպիսի մի բոցով, որ մարդ սարսափում էր նրա երեսին նայելիս, և երբ նրա դեմքը այդպիսի ահավորություն էր ստանում, նրա շրթունքների վրա, միևնույն ժամանակ, խաղում էր մի համապատասխան ժպիտ, որը Շահի բանաստեղծին ասել էր տալիս, թե՝ «Հասան-խանի դեմքը նմանում է Աղբը Դաղին։ Երբ ամպերը ծածկում են նրա գագաթը, և դաշտի վրա փայլում է արևը, դա նշան է, որ սաստիկ փոթորիկ պիտի լինի»։

«Նրա թշերի վրա ժամանակը փորել էր երկու խոր ակոսներ, որոնք չէին ծածկվում նրա ցանցառ մորուքով, թեպետ և նա բավական հոգ էր տանում, որ իր մորուքը խտանար և ակոսները չերևային։ Նույն թշնամին զրկել էր նրան իր բոլոր ատամներից, բացի մեկից, որ դուրս էր ցցվել իր բերանից։

Հիրավի, բոլորովին դժվար է ասել թե՝ արդյոք նա դեմքով ավելի նման էր այծի՞, թե՞ վագրի, սակայն ամենայն վստահությամբ պիտի ասած, որ ոչ մի մարդկային կերպարանք այնքան նման չէր գաղանի դեմքի, ինչքան էր Սարդարինը (Հասան-խան)։

Նրա բնավորությունը համապատասխանում էր իր դեմքին, ոչ մի օրենք — երկրային կամ երկնային — չէր կարող արգելք դառնալ նրա հեշտասիրությանը, և երբ նրա կրքերը գրգռվում, բորբոքվում էին, էլ նրա խստությանն ու անիրավությանը չափ ու սահման չկար»։

Խոսում է և նրա գինեմոլության մասին. ասում է. «Ամբողջ Պարսկաստանում չկար նրա պես ազատ ու համարձակ գինի խմող, բացի, թերևս, դահճապետից, որը կարծես թե հավիտենական դաշն էր կնքել գինու տակի և իր բերանի միջև։ (էջ 171—172. Թարգմ. Մ. Կ.)[47]։

[48])Կառ<ավարչապետը> կարգադրել[49]) էր, որ Փամբակից ու Շորագյալից[50]) զորքն ու ժողովուրդը եւս քաշվեն-մտնեն Լոռի։ Եվ օգոստ<ոսի> 9-ին կատարվեց այդ գաղթն ու նահանջը Ղարաքիլիսից Դվալի սարով դեպի Լոռի, զորքը Գյառգյառ ու Ջալալօղլի, ժողովուրդը Լոռու գյուղերն ու ձորերը։ Դրանց մեջն էր և ինքը՝ Աբովյանը։ Ձորքն ամբացնում է Լոռու հին բերդը, իսկ ժողովուրդն, ինչպես Աբովյանն է ասում, «Լոռվա ձորերի մեջը էս գլխից էն գյուխը՝ խալխ էր, որ իրար վրա վեր էր թափել. շատը հողն էր ծակել, մեջը մտել, շատը փետ էր[51]) իրար վրա տվել՝ տակին կուչ էկել...» (192)[52])։

Այս ժամանակ Ցարդարը ետ էր քաշվել Երևան։ Մենակ Հ<ասան> խանը իր ձիավոր զորքով անում էր, ինչպես ուզում էր։ Հասան խանը այնուհետև աշխատում է Խլղարաքիլիսի <1 անընթ.> Լոռու գյուղերի գլխին բերի։[53]) Հարձակումներ է անում Լոռու գյուղերը քանդելու, ինչպես ասում է և Աբովյանը և ռուսաց տարեգրությունը։ Ասպատակներ է ղրկում ամեն ուղղությամբ (Մարց, Ուզունլար)։ Այդ հարձակումները, սակավ բացառությամբ, վերջանում են անհաջող թե զորքի, թե ժողովրդի դիմադրության պատճառով։ Բայց այդ հարձակումներից մեկը Լոռու կողքից անցնում հասնում է Բորչալու՝ տալիս ավերում է գերմանացի գաղթականներ<ի> Եկատերինենֆելդ գյուղը, որ ժողովուրդը անվանում է նեմեցի կալոնիա։

Օգոստոսի 14-ին, գիշ<երվա> ժ<ամի> 2—3-ին զարափափախների ու քրդերի մի ձիավոր բազմություն (տմանք 600 են ասում, ոմանք՝ 1000) հարձակվում է գերմանական գյուղի վրա։ Հարձակվողներին միանում են և Բորչալուի թուրքերն ու տակն ու վրա են անում գյուղը. ծերերին կոտորում, ջահելներին գերի[1] տանում. կայք ու հարստ<ություն>, ինչ կարելի էր, առնում են հետները, ինչ որ չէր կարելի՝ այրում են, քանդում, ոչնչացնում։ Այս աղետին էլ ժամանակին օգնության չեն հասնում — ոչ Ջալալօղլուց (50 վ<երստ>) կնյա<զ> Սեվարսամիձեն, որ դեռ ամսի 13-ից տեղեկություն ուներ, թե՝ այդպիսի հարձակում էր լինելու, ոչ նույնիսկ 10 վ<երստի> վրա գտնվող Բելիյ Կլյուչից, գնդապետ Ավենարյուսը, որ ամեն բան իմացավ հենց դեպքի առավոտը իր մոտ փախած կազակից ու գյուղական թարգման Լորենցից։ Միայն Բորչալվի պրիստավ իշխ<ան> Օրբելիանին <1 անընթեռնելի> է [Շուլավերից (30 վ<երստ>)] օգնության գալի մի խումբ հայերով, վրացիներով ու հույներով և թեև քրդերի բազմությունը արդեն հեռացած էր իր ավարով, բայց ետ մնացած խմբերի հետ կռվի է բռնվում Քվեշի գյուղի մոտ։ Այդ կռվի մեջ սպանվում են և Շուլավերցի Սոսի աղեն ու Մելիք Օհանջանը։ Սրանց գովքն անելով, այսպես է պատմում «Վերք Հայաստանին». ...ինչ ժամանակ խաբարը նրանց[54]) է հասնում, թե նեմեցի Կոլոնիեն տվին, քառասուն կտրիչ տղերք քամակին, իրանց մովրովն էլ միջըներումը՝ էն վախտն են վրա հասնում, որ քյուրդ Օքյուզ աղեն վաղուց Կոլոնիեն քանդել ու երեք հազար մարդով եսրների կեսը կոտորել, կեսը առաջն արել՝ տանում ա։

Արինն աչքներն առած՝ ընկնում են էս մեկ բուռը զորքը՝ էն

---

[1] [ունեցած չ<ունեցած> գերի]

անթիվ բազմությունի եղևիցը: Քուրդ ու ղարափափախ՝ եսրները տալիս են մեկ քանի մարդի ձեռք ու իրանք ետ դառնում: Էս միջոցումը մովրովը հայի ղոնշունն առնում, փախչում ա, որ իր գլուխը պրծացնի, միմիայն քաջն Սոսի մեկ քարի տակի իր կտրիչ ընկեր Մելիք Հոհանջանի հետ՝ ղայիմանում ու մեկը մեկին ձեն են տալիս. «Նամարդությունն ու թուլությունն տղամարդի համար ամոթ ա. քաջությամբ մեռնենք, որ մեր որդիքն էլ իմանան, թե մենք էլ ենք սիրտ ունեցել ու մեր երկրի թասիբը քաշել, մեր աշխարի սիրով մեռել: Էս մուռտառ արինն էլ ընչի՞ ա պետք, որ էսպես օրը չենք թափիլ: Չոլումը մեռնիլը տղամարդություն է»: Ճանանչ թուրքեր ձեն են տալիս. «Սոսի աղա՛, քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կբռնի, թե քեզ վրա թուր բարձրացնենք: Մենք քեզ կտանենք, սաղ սալամաթ ճամփու կքցենք. մի՛ անիր, գլուխդ մահու մի՛ տար, քեզ ենք ափտս գալիս, արի՛, քեզ խնայիր»: Բայց հսկան Սոսի՝ կասկած ունելով, թե իրանց կբռնեն, եսիր կանեն, նրանց խոսքին չի նայում, ու առաջի թվանքը որ չի քցում, Օքյուզ աղի տղեն ա սֆթա ձիու շլնքովն ընկնում: Կատաղած հարամին ընչանք վրա կհասներ, մեկ տասնըհինգ մարդ էլ սպանում են էս կտրիչ հսկայքը ու թուրքները հանած՝ երբ բարութները հատնում ա, ընկնում են գազանների մեջը առյուծի պես: Ընչանք իրանց հոգին կտային, մեկ տասը հոգի էլ թրի են մատաղ անում, ու իրանք աստծուն մատաղ ըլում:

Հանգի՛ստ ձեր սուրբ ոսկերացը՝ ո՞վ քաջ նահատակք: Ձեր ջիվան ջանի արինն ա, որ էսպես սիրտս կրակում ա: Ի՞նչ հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր հիշատակը իր սրտումը չգրի: Մի՛ իմանաք, թե ձեր ազիզ արինը նհախ տեղը թափվեցավ: Էդպես պատվական արինն էր, որ աստուծու սիրտը գութ քցեց, մեր աշխարն ազատեց ու էս օր էլ՝ էն ձեր նահատակության քարի տակիցը ձեն ա տալիս. «Հա՛յք՝ մեզ պես մեռե՛ք, որ անուն ճարեք»: («Վերք Հայաստանի» 189—190):

Նույն դեպքի մասին գեն<երալ>Կոցիբուն ասում է. Օրբելիանին գտնվել է Եկատ<երինենֆելդից> 30 վ<երստ> հեռու (Շուլավեր).

«Положение его стало критическ<им>[55]).

որ սպանել է նրանց նաչալնիկին ինքը՝ Օրբելիանին.

К<авказский> сб<орник>. 115.[56])

Այս դեպքի մասին այսպիսի տեղեկություն է տալիս գնդ<ապետ> Կոստինին ինքը Բորչալվի գլխավոր պրիստավ իշխ<ան> Օրբելիանին օգոստ<ոսի> 18-ին Քվեշ գյուղից. «Այս ամսի 14-ին և այն. К.С. XXIII, 132.[57]):

<1 անընթ.>... բռնված քուրդը ցույց է տալիս, Քվեշի մոտ սպանվել է գլխավոր Հյուսեյին աղի որդին — Ղահրաման աղեն ու երեք մարդ։

K. сб. XXIII, 126—7[58]):

Կուվկ<ասի> կառավարչ<ապետ> գեն<երալ> երմ<ոլովն> այս մասին գրում է Պ<ետեր>բուրգ, XXIII, 167[59])

Ինչպես տեսնում ենք, Բորչալվի մուվրովը — իշխան Օրբելիանին է գնացողը և իրան օգնության է կանչել ի միջի այլոց և շուպավերցիների, որոնց մեջ էին Սոսի աղեն ու Մելիք Օհանջանը։ Այդ էլ է ճշմարիտ դուրս գալի, որ մուվրովը փախավ, որ Բորչալվի թուրքերը հարձակվողների հետ էին, որ նրանք իրենց ճանանչներին չէին խնայում, նույնիսկ՝ որ գլխ<ավոր> բազմությունը գնացել էր, խումբ էր ետ մնացել. բայց զին<վորական> հիշատակարանների[1] մեջ Օքյուզ աղի ու նրա տղի մասին խոսք չկա։ Խոսքը Հյուսեյին աղի մասին է և սպանվողը նրա որդի Ղահրաման աղեն է։ Սպանողն էլ ինքը՝ իշխ<ան> Օրբելիանին է։ Ժամանակի քաջերի թվում հիշատակում է Շամշադինեցի Գրիգոր եպիսկոպոսին, որ եպիսկոպոսության շորերը փոխած, չերքեզի շոր հագած, յարաղ ասպաբը կապած Շամշադին, Ղազախ, Բորչալու իր մարդկանցով կռվում[2] էր թշնամու դեմ հսկայաբար, մինչև երմոլովի հավատարմություն[3] ու սիր<ո>ը գրավեց և արժանացավ արքայական պատիվին ու թոշակին (էջ 186—7)[60]։

Սրան հաստատություն գեն<երալ> երմ<ոլովին> գրած իշխ<ան> Մադաթովի թղթի մեջ կարդում ենք.

«Сего числа выступил[61]) <с вверенным мне отрядом к Таузу, имею ночлег на р. Гасан-су по большой дороге, откуда и отправляю донесение сие с здешним архиепископом Григорием, имевшим желание быть у вашего высокопревосходительства, чтобы изъяснить лично об обстоятельствах здешнего края. Старец сей, не взирая на преклонные лета и свой сан, всегда находится при войске нашем в полном воинственном вооружении и в деле при речке Афик находился в стрелках с ополчением и шамшадинскими армянами>. («Кавказский сборник». XXIV, 230)։

Մեկ դաստա սալդաթ ու մեկ քանի ղազախ, որ գնացել էին

---

1 [տարեգրություններ]

2 [պաշտպանում էր]

3 [ատացավ]

ճամփեն բռնեն, էնպես ջարդված, յարալու, փարալու ետ եկան, որ մարթի գլխի կրակ էր վառվում («Վ. Հ.» 191)։

«Между тем полковник князь Севарсамидзе, возвратясь из с. Гумри в с. Большой Караклис, узнал, что войска, расположенные на Балик-чае, нуждались в провианте и даже в снарядах; по поводу сему он отправил 26-го числа из Большого Караклиса 166 человек Тифлисского пехотного полка, под командою штабс-капитана Воронкова, с провиантом, снарядами и шанцевым инструментом при инженером офицере. Призванный для сего в Караклис казахский пристав с небольшим числом татарской конницы должен был сопровождать штабс-капитана Воронкова, навьючив на лошадей часть посылаемого провианта и снарядов. 27-го числа отряд сей был атакован на походе в дефиле неприятельской конницей и баталионом сарбазов.

Солдаты наши защищались отчаянно и несколько раз опрокидывали неприятеля штыками. Но наконец принуждены были уступить превосходной ежеминутно возрастающей силе неприятеля, к чему немало способствовала измена сопровождавших их казахских татар, обративших против нас оружие при самом начале дела. В сражении сем взят в плен штабс-капитан Воронков, убит инженер-прапорщик Хрупов и большая часть солдат, остальные захвачены в плен. Пристав казахской дистанции обязан спасением нескольким приверженным армянам и прыткости лошадей, он скрывался в лесах и через несколько дней трудными и малоизвестными путями достиг до Тифлиса» (Опис<ание> вторж<ения> перс<иян> в Груз<ии> в 1826 г. 3 ап<реля> М. Е. Коцебу, «Кавк. сб. XXII, стр. 107—8)։

Իսկ Սևարսամիձեն գեն<երալ> Երմոլովին տված իր ռապորտի մեջ, Ղարաքիլիսա (29 հուլ<իսի>, 1826), ասում է.

«...при сем были убиты шт<абс> кап<итан> Воронков и поручик Попов, ранен прап<орщик> Хрупов, убито много солдат, небольшая часть захвачена в плен, другие же из них скрылись в удобных местах при замешательстве неприятеля с командою и приходят со вчерашнего числа по 5 и 8 ч<еловек> сюда в ночное время». («Кавк<азский> сб<орник>», XXIII, 65)[62]։

[63]) *Խալխը քոչիլ չէր ուզում, չունքի սրրի ձեռիցը սովի ձեռը պետք է ընկնեին, ու չէին ուզում էլ, որ իրանց քաղցր հողիցը բա-*

ժանվեն: Մտքիցս չի գնալ էն դառն օրը, որ հրամանն եկավ թե անպատճառ քոչեն: Ո՞վ կուզեր ախար էն տունն էրել, որտեղ որ իր հերն մերը կացել, իրան կաթը տվել, պահել, մեծացրել, մեռել էին: էն իգին իր ձեռովը քանդիլ, որ դառը քրտինքով բհամ բերել, էն-տեղն էր հասցրել: Հաջաթ, զարդ, տան կայինք, ինչ կար-չկար՝ բոլորը կրակ տվին, ինչ ժամանակ ոսի ժամի մուխը տեսան, որը որ մեծավորը իր ձեռովը կրակ տվեց, ու սկսեցին լալով սքով, իր<անց> քաղցր աղիզ սիրելյաց գերեզմանը համբուրիլ, բարով մնա ասիլ իրանց հողին, ջրին, թոփի, սալդաթի մեջն ընկնիլ ու Դվալի սարի էն կողն անցնիլ: Դեռ կիսաճամփի էինք,[64]) որ Նաղի խանը իր զոնշունով էկավ մտավ Ղարաքիլիսա ու սարի դոշիցը ամեն մարդ իր տան կրակի ծուխը տեսնելով՝ քթի ծուխն էլ հետն էր դուրս գալիս, ու աչքը խփում էր, որ էս կսկիծն էլ ա չըտեսնի: Քոչվորի մեկ տուտը Ջալալօղլի էր հասել, մեկը դեռ հլա սարի էն կողմն էր: Թուրքերը ջամդակակեր գիլի պես գլխներիս պտիտ էին գալիս ու սարից ձորից թվանքները մեզ վրա կրակում» («Վերք Հ<այաստանի»>, 191-192):

«9-го числа (августа)[65]) во 2-м часу по полудни выступил из Караклиса в Гергеры главный отряд с остальными тяжестями... Князь Севарсамидзе с арьерградом оставался в Караклисе, пока вся колонна вытянула по дороге к Гергерам, потом, зажгла все строения, присоединился он к отряду. Неприятель со стороны Гамзачимана наблюдал наши движения, но не подъезжал близко; войска без выстрела дошли до селения Кишляка, здесь неприятельская конница начала показываться от сел. Дарбаза и, подъезжая по ущелью реки Бамбака, вступила в перестрелку с нашими застрельщиками» («Кавк. сб.» XXIV, 10)[66]):

«Մեկ օր Նաղի-Խանը էսպես վրա տվեց. Ղշլաղ ասած գեղն էրեց ու Ղարաքիլիսու վրա էկավ: Էլած չելած զոնշունը թոփերն առած քաղաքի առաջը կտրեց, խալխն էլ տուն ու տեղ բաց թողին ու իրանց էրեխեքանց ձեռը բռնած գնացին թոփի տակը մտան: Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց: Վաղուց էինք սրբություն առել ու մեր սև օրին աչքներս կթել» (Վ<երք> Հ<այաստանի>, 191):

«26-го (июля) ...полк<овник> кн<язь> Севарсамидзе увидел рой персидской конницы, которая подвезла с собою и сарбазов; все они спустились с горы от селения Дарбаза к Кишляку; князь начал ретироваться; персидская конница старалась окружить его и отрезать от Караклиса, но не ус-

пела, и князь с несколькими пушечными и ружейными выстрелами дошел до Караклиса; персияне зажгли несколько копен хлеба и хутор в одной версте от Караклиса, потом возвратились к Кишляку, который также сожгли[67])... князь[68]) Севарсамидзе отошел в Караклис, который начали приводить в оборонительное состояние».

(«К<авказский> с<борник>» XXIV, Мат<ериалы> к ист<ории> Персидск<ой> в<ойны>, 1826—1828 г. стр. 4):

Աղասին Տաճկ<աստանի> [գաղթ<ած>], հայերին (որ քրդերը գերել են) խնդրում, համոզում է, որ մնան Անի, շենացնեն։

«Բայց ինչքան Աղասին խրատեց, ասեց, խնդրեց, չելավ, չելավ, Հայքը եւ չի՛ դարձան, անիծած տեղը չուզեցան մտնիլ. ու շատը երեսները է՛լ եւ դեպի Ղարս շուռ տվին։ Աղասին շատ ուզեց, որ Ռսի հողն էլա գնան, չեղավ. որը կամենում էր, որը՝ չէ։ Ընչանք էսպես կըղովռային, Ղարսա փաշեն ղոնշուն հավաքած գալիս էր, որ իր ռահաթը եւ դարձնի։ Պետք է ասած՝ որ թե Ղարսա, թե Բայազդու փաշեն հայերուն իրանց որդու պես էին սիրում (Վերք Հ<այաստանի>), 261)։

Եվ եւ են դառնում իրենց բնակավայրը։

Այս մասին գեներալ Կրասովսկին հաղորդագրում է գեն<երալ> Պասկևիչին 1827 թ<վականի> հոկտ<եմբերի> 16։

«...Жители возвращаются на прежния жилища как из-за Аракса, так и из владений турецких, в чем после известия о взятии Эривани со стороны нашей Карсского и Баязетского никакого препятствия не делается; последний по получении моего отношения строго также подтвердил о выдаче пленников наших грузин и армян под строгою ответственностью за неисполнение».

(«Кавк. сб.» XXVIII, 169).[69]):

ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ[1])

I Գլ. Յարևելից սուր, յարևմտից սպանումն, ի հիւսիսոյ հուր և ի հարաւոյ մահ [բարձանուրախութիւնք յերկրէ]։
Պատմ<ութիւն> Արիստ<ակեայ> վ<արդապետի> Լաստիվերտցւոյ»[2])։

[3]) «Վերք Հայաստան»-ի 50-ամյակի առիթով նվեր Խ<աչատուր> Աբ<ովյանի> հիշատակին[1]

(«Վերք Հայաստանի»-ի տպագր<ության> 50-ամյակի առիթով)

Բնական[2] իր երկնահաս բարձրությունները չորս կողմի վրա իջնելով՝ լեռնաշղթաներով՝ ասես թե պարիսպներով՝ կտրատում է Ասիայի ցամաքը ու ստեղծում է վեց տարբեր հսկայական հարթավայրեր—չինական, հնդկաչինական, հնդկական, [ասորական], արաբական, սիբիրական և բուխարական։

Риттер[5])

7?[6])

Էս մեծ հարթավայրերից հինգը նայում են մեծ ծովերին ու օվկիանոսներին և ոռոգվում են 4 զույգ մեծ գետերով։ Միայն մեկն է — Արաբիան, որի միջին մասը[3], Բուխարիայի հարթավայրը, որ ամբողջովին փակված է օվկիանոսի կենդանարար շնչի առջև։

Բուխ<արական> հարթ<ավայրը> ձմեռը 30° ցուրտ է, իսկ ամառը՝ մայիսից սկսած՝ այրում ու խանձում է ամեն ինչ։

արաբ

էս երկիրը, որ այժմ կոչվում է Արալ-կասպյան, ծածկված է ավազոտ անապատներով ու աղոտ (չոր) դաշտերով։

---

[1] *Վերք Հայաստանին և հայոց պատմություն=Վերք Հայաստանիի 50-ամյակի առիթով նվեր Խ<աչատուր> Աբ<ովյանի> հիշատակին։*

[2] *[Ասիական լեռնաշխարհը] Հիմալայան։*

[3] *[Կենտրոնական մ<ասը>]։*

[4]) Սրա գետերի մեծ մասը իրենց ճանապարհին կորչում ու կուլ են գնում ավազի մեջ, լճերն աղի են ու հոտած. եղած բույսը օշինդր է, փուշ (տատասկ) ու галофит:

Սրա մասերը նշանակվում են էս անուններով. սև ավազ, սպիտակ ավազ, դեղին ավազ, կարմիր ավազ, սուված անապատ... էս անապատներում տեղ-տեղ կան օազիսներ, ուր կարելի է ջուր խմել ու կանաչ գտնել, և[1], դրանք կոչվում են «աստղեր»—«յուլդուզ»:

Մնացածը անապատներ են, և այդպիսի զարհուրելի[2] անուններով իրար հետևից ձգվում են արևելքից արևմուտք՝ Մոնղոլական մեծ անապատից մինչև [Պարսկաստան, Եփրատի ու Տիգրիսի հովիտը], Ուրալի ու Հայաստանի լեռնաշղթաները, և էս սուված անապատները իրենց լերկ ու աղքատ կուրծքը բաց արած՝ ադահ նայում են Եփրատի ու Տիգրիսի ճոխ հովիտներին և Ուրալի դալար արոտատեղերին:

Նայեցեք բուսաբանական քարտեզին — Սահարայից հետո մին էլ Ասիայի [Պարս<կաստանի>?] սիրտն է չոր ու ցամաք:

Իրենց օազիսներում բազմանալով էդ երկրի ցեղերը[3] չէին գտնում էնքան պաշար, որ բավականանար իրենց ու իրենց հոտերին և իրենց խանձված երկրում պատմում ու երազում էին հեռու հարուստ, դալար, շեն ու լի, հով ու զով երկիրները...

Տեղ ու հնար չկար այլևս. մի ցեղ շարժվում էր տեղից, հրում էր մյուսին, նա էլ իր հերթին տեղահան էր անում իր հարևանին, և շարժման մեջ էին ընկնում բոլոր ցեղերը, անվերջ անապատների անհամար ցեղերը ու շարժվում էին դեպի ափերը: Իրենց չոր երկրի ափերից դուրս էին փախչում սուված օրդուները իրենց սուված հոտերով դեպի դալար արոտներն ու շեն երկիրները,

---

1 ժողովուրդը

2 գույներով ու

3 [ժողովուրդները] [նրանք]

հնդկելով ու ոռնատակ տալով ճամփին ամեն ինչ։

Էդ կարճահասակ ու պճեխված քթով, ցանցառ մորուքով, նեղ ճակատով, արագաշարժ, անսանձ ցեղի մասին Ամմիան Մարցելլին ասում է. «Իր վայրենությամբ գերազանցում էր ամեն հասկացողության» (I 188, Гань)[7]։ Իսկ Կլավդի Կլավդիան (395 թ. Ք<րիստոսից> հ<ետո>, ասում է. նրանք ապրում են միայն ավարով, [երկրագ<ործությամբ> չեն պարապում], (Ган. 1, 196)[8]։

Առասպելական է նրանց զորքի թիվը։ Որ<ինակ>, Զինղիզխանի տրդին — Ուխաթոյ — դեպի արևմուտք արշավելիս՝ առաջնորդում էր 1 և 1/2 միլիոնանոց բանակի։ Զորքը բաժանվում էր 100-յակի, 1000-յակի ու 10-հազարյակի։ Զորքի առջևից տանում էին ձիու պոչերից շինած դրոշակները, իսկ զորքի ետևից գալիս էր բեռնակիր բանակը, հոտն ու ընտանիքը։ Միշտ ձիու վրա, հաճախ նույնիսկ ուտում խմում քնում էին ձիու վրա, նույնիսկ ձի նստելու դյուտը նրանց են վերագրում (Ист <ория> К<ультуры>, 1,13)[9]։

Թափառական կյանքը նրանց ընտելացրել էր բնության ամեն [արգելքներին], որոնց համար արգելք չէին ոչ բարձր սարերը, ոչ լայն գետերը, ոչ խոր ձորերը։ Դրանց օրդուները պատերազմական բանակներ էին, որոնց միշտ պետք էր գործ տալ, կռիվ ու ավար։ Անկարելի էր զսպել ու պահել խաղաղության մեջ։ Գնում էին, անցնում էին նրանք լայնածավալ փոթորկի նման, և Կարպատից մինչև Բալտիկ ծովը, Խաղաղ օվկիանոսից մինչև...<....>ամբողջ այդ տարածության վրա դաշտերը գնացին նրանց ձիանների ոտների տակ... շեն գյուղերն այրվեցին։ Նրանք վինված էին նետ ու աղեղով, դրա համար է, որ մեր պատմիչները

նրանց անվանում են և ազգ նետողաց։[10]) Եվ լավ նետաձիգներ էին։ Կռվում էին անկանոն, եռանկյունի խմբերով և անվերջ հարձակումներով ու նահանջներով հոգնեցնում էին հակառակորդին։ Ամենից շատ վտանգավոր էր նրանց փախուստը, երբ խաբես էին տալի փախչում և հանկարծ ետ դառնում մի նշանով ու հարձակվում։

Արևելքում Չինաստանը ստիպված եղավ նրանց դեմ քաշել իր մեծ պարիսպը իր երկրի ամբողջ երկարությամբ։ Հարավում Հնդկաստանը շատ անգամ ենթարկվեց նրանց հեղեղի ավերածությանը։ Հյուսիսում՝ Սիբիրիայում այսօր էլ կան էդ անապատների արտաքինը (սերունդները)։ Իսկ արևմուտքում... ահա՛ էս մասին է լինելու մեր խոսքը։

Քանի ու քանի անգամ են պատմության ընթացքում թուրքական ու թուրքմենական ձիավոր հրոսակախմբերը շաժվել արևելքից դեպի Արևմուտք, Արալի ու Վոլգայի ավազանների տափաստաններով (изменностям) խուժել Եվրոպա և Ամու-Դարիայի ու Սիր-Դարիայի տափաստաններով՝ Պարսկաստան, Աղվանքստան ու Հնդկաստան—էդ չի կարող որոշել [և] ոչ մի ուսումնասիրություն (исследование) «Ист<ория> человеч<ества»>, том 5, стр. 121[11]։

Եվ անհաղթելի էին էս անապատներից դուրս [խուժող] թշնամիները, ասում է Է<լիզե> Ռեկլյուն («Արաքսի հովիտը». Թարգմ<անության> Միսաքյանի, էջ՝ 127)[12], որովհետև անընդունելի էին։ Նրանք սպասում էին հաջող դեպքի և երևում էին հանկարծակի՝ քաղաքները հիմնահատակ տապալելու, ժողովուրդները սրի քաշելու կամ գերելու։ Գալիս էին օրդուն օրդուի հետևից զանազան անուններով՝ հոներ (հուն-նու), քուշան (քու-չանգ), սկյութ (սա-կա) և այլն, և անվե՛րջ, անվե՛րջ, անհատնո՛ւմ։ Այնպես Риттер[13])

որ Արևմուտքում՝ Եվրոպայում, նրանց երկիրը սկսեցին անվանել «մարդկային ցեղի լաբորատորիա» 327[14]։

Հին Պարսկաստանը միշտ կանգնած է եղել նրանց հեղեղի առջև, որպես մի հզոր պատնեշ[1]։

Պարսկ <աստանի>, Իրանի ու Թուրանի կռիվը։ Պարթևական թագ<ավորություն>։

Եվ կատաղի ու անհաշտ կռվի մեջ էին միշտ Իրանն ու Թուրանը [Ռուստեմ և այլն]... Բայց երբ նրանք կարողանում էին խորտակել Պարսկաստանի ուժը, ոտնատակ տալով անցնում էին դեպի Արևմուտք — դեպի Եվրոպա՝ Ուրալյան շղթայի ու Կասպից ծովի արանքով, կամ Դարիալի ու Դերբենտի կիրճերով։

Եվ նրանց հաղթական արշավանքները ամեն անգամ իրենց անցած ճանապարհներին ու հասած աշխարհքներում մեծապես ազդում էին ժողովուրդների կուլտուրաների ու կառավարությունների վրա։ Բայց իրենք էլ ձուլվում էին, որովհետև նստակյաց ազգերը ավելի ամուր էին ու հաստատ, քան այս փոթորիկը։ [Նրանք էին, որ Պարսկաստանում, Սելեվկյան իշխանությունից հետո հիմնեցին պարթևական տան իշխանությունը [իրենց Արշակներով (Արշակունի)]][2]։

Նետողաց ազգը։ Այստեղ այլևայլ վկայություններ և հայոց պատմ<իչներ> նրանց մասին։

«Էս ձիավոր թափառական ցեղերի և ցեղատեր երկրագործ ժողովուրդների կռիվն է, վայրենի աղատության մաքառումն է կուլտուրայի դեմ, որ կապված է տեղի հետ, ծանր ստեղծագործական աշխատանքի և հանկարծական ավերումի (внезап<ным>

Արիական և մոնղոլական ցեղերի կռիվը* — Իրանի-Թուրանի։

---

[1] [և Պարսից պատմ<ությունը>] [բայց ամեն անգամ, երբ նրանք կարողանում էին]

[2] [իսկ Եվրոպայում <...> նրանք գալիս էին [զանազան ցեղերով] անվերջ ցեղերով ու զանազան անուններով — Հոններ (Հունները), թուշան (թուշագ), սկյութ (սա-կա)։ Եվ անվե՛րջ, անվե՛րջ էին ու անհատնում։ Եվ Արևմուտքում, նրանց եկած երկիրը, նրանց հայրենիքը անվանում էին «մարդկային (ցեղի) լաբորատորիա»։ Էս էր Աատիլլայի, Չինգիզխանի, Լենկթեմուրի և այլնի հայրենիքն ու ժողովուրդը]։

* Հնդկաևրոպական և մոնղոլ<ական>, հրնդկ<ական>, սեմիտների մասը, կենտրոնը՝ արաբ և արիական վերին մասը, կենտրոնը Միջագետքը։

Риттер[15])

разрушен<ием>) պայքարն է, որ կըրկընվում է Հալիտյան...»:

«Այդ միշտ կրկնվող ավերածությունների հետևանքն այն եղավ, որ քաղաքակըրթության[1] երեքմնի օրրանը — արևմտյան Ասիան, այժմ տկար, անկյալ վիճակի մեջ ընկած է ծաղկած Եվրոպայի առջևը և իր ուժերով չի կարողանում նորից բարձրանալ:

Ակներև է, որ երկար ժամանակ ու շատ ահռելի հարվածներ էին հարկավոր նրան էդ վիճակին հասցնելու համար. թերևս կարելի է ասել, որ աշխարհքում ոչ մի երկիր չի կրել էն հարվածները, ինչ որ կրել է արևմտյան Ասիան. բայց այսուամենայնիվ էդ երկրի ամենամեծ տառապանքների շրջանը սկսվում է միայն արաբների տիրապետությունից: Նա էր, որ երկար ժամանակով խորտակից պարսիկ ժողովրդի ազգային ուժը և դրանով Միջին Ասիայի անապատների ժողովուրդների համար դուռը բաց արավ (доступ) դեպի Արևմուտքի հարուստ երկիրները, որոնք առաջ ենթարկվում էին հաճախակի, սակայն անհետևանք հարձակումների· («Ист<ория> чел<овечества»>, III, 247)[16]:

Արաբները...

Դարձյալ անապատն ու իր զավակները:

Արաբական թերակղին իր ժեռուտ (ու) լեռնոտ ափերով ու իր չոր, այրված անապատներով միշտ մնացել է մեծ աշխարհակալների ու լուսավորությունների ճանապարհներից դուրս, մի կողմ: Եվ անծանոթ է նա կլասիկ պատմիչներին, [հին] պատմությունը չգիտե արաբ ժողովրդի ծնունդը: Նա իր [ներքին մասերում] ոչ գետ ունի, ոչ լիճ: Ավազաններ են շինում անձրևաջուրը հավաքելու և [ջրհորներ են փորում]:

Նրա անապատները գալիս՝ հյուսիսում հասնում են Եփրատի ճոխ հովիտները...

արաբները.

Аравия
Лависс и Рамбо, Всеобщ<ая> история. т. первый[17]:

[1] [կուլտուրայի]

Եվ ամեն անգամ, երբ իր երկիրը նեղ է եկել կամ իր ու իր հոտերի կերակուրն է պակասել — հովիվ արաբն էլ կամաց կամաց շարժվել է դուրս՝ դեպի հարևան երկիրները, ուր առատ արոտներ է գտել իր սոված հոտերի համար ու շեն քաղաքներ իր ագահության[1] ու թալանի համար:

Ուտելիք ու թալան — էն պիտից: Եվ նա մի քանի անգամ իր խանձված արգանդից մարդահեղեղ է դուրս վիժել[2] դեպի չորս կողմը, մանավանդ դեպի հյուսիս, դեպի Եփրատի ու Տիգրիսի հովիտները:

Ժամանակի ընթացքում էս գաղթականությունները հաստատվելով ու բազմանալով հարևան երկիրներում, հետագայում, 7-րդ դարուց, սաստիկ հեշտացրին ու օգնեցին արաբական հաղթանակներին, երբ էդ ցեղը կրոնական ֆանատիզմով վեր կացած՝ իր հայրենիքից դուրս խուժեց աշխարքի վրա՝ սրելու և սրով ու հրով տարածելու «մի ճշմարիտ աստծու կրոնը — իսլամը»:

Նրանց առաջին հարվածը իջավ զրադաշտական Պարսկաստանի վրա: Մեր Պարսկաստանը չդիմացավ անապատի հովիվների սրբազան ոգևորության թափին՝ ընկավ ու խորտակվեց հզոր պատնեշը, որ միշտ կար արևելքի բարբարոս ցեղերի հեղեղի դեմ: Եվ էսպես դեպի Տիգրիսի ու Եփրատի սրբազան հովիտները, դեպի կուլտուրայի հին օրորանը, բացվեցին (արևելքից ու հարավից) բոլոր ճանապարհները կոտորածների, կողոպուտների, ավերածությունների ու գերությունների և ամեն անլուր աղետների, ինչ որ տեսան էդ երկիրները էն օրերից սկսած:

Էսպես էր արևելքից ու հարավից: Այժմ տեսնենք հյուսիսից, (ու արևմուտքից):

Կովկասյան մեծ լեռնաշղթայի ծերպե-

էջ 23[18])
Զրադաշտական

վկայություններ օտար և հայ պատմիչների («այսուհետև դառն են պատմ<ություն>հայոց)[19]): Լեռնականները: Նրանք հրոսակներ էին, որ գալիս

[1] [ընչաք <աղցություն>]
[2] [հոսել]

ռում ու լանջերում և շղ[թ]այի հյուսիսային կողմի տափաստաններում (Թերեքի ու Դոնի շրջան) հնուց ապրում ու թափառում էին ռազմական ու վայրագ ցեղեր:

Դեռ Քրիստոսից 7 դար առաջ, երբ Ասորեստանի և Ուրարտուի երկարատև ու մեծ կռիվը նրանով վերջացավ, որ Ուրարտուն կործանվեց ու վերացավ մեջտեղից — էդ թափ<առական> ժողովուրդները՝ կիմերացիք, սկյութները և այլք, այլևս արգելք չտեսնելով իրենց ճամփին, հեղեղեցին Ասորեստանը ու շատ նպաստեցին նրա արագ կործանման:

(Որի ժառանգությունը քաղդեացիների միջոցով անցավ Պարսկաստանին) Никольский. «Древн<ости> восточные».[20])

Հռոմի պատմիչ Ամմիան Մարցելիուսը, Ք<րիստոսից> 330 տ<արի> հետո էդ ցեղի մասին ասում է. նրանց բավականությունը պատերազմն է: Ոչ տաճարներ ունեին, ոչ սրբություն: Մերկ սուրը տնկում են գետնին ու երկրպագում... կողոպուտի համար նրանք հարձակվում են հարևան երկիրների վրա, գնում են մինչև Հայաստան ու Մարաստան: К. Ган. Изв<естия> древн<их> греч<еских> и рим<ских> пис<ателей> о Кавк<азе>. т<ом> 1. <стр>, 190: Ասում է. սրանց վայրագությունը անցնում է ամեն հասկացողությունից:

Հարձակվում էին անակնկալ և այլն <....>[21]):

Նրանց հարձակումների առաջն առնելու համար՝ Պարսից թագավորները, որ տիրում էին Կովկասում, պարիսպներով ու ամրոցներով փակեցին Կովկասի շղթայի երկու անցքերը՝ շինելով Դարիալը կամ Դարիալլան, որ կնշանակի դուռն ալանաց (արաբ<երեն>՝ Բաբ-ալլան). Իսկենդար շահը Վշտասպի որդին և Դերբենդը, և Դերբենդը (Դեր—դուռը, բանդ—փուլ—բանդանել) կամ էին ավարտում, ավերում ու գնում:

Պարսկաստանն էր միայն, որ միշտ տիրելու ձգտումն ուներ և կռիվը և Արաբիան կարճ միջոցով: Արևմուտքից եկածները նրանց հետ էին մրտնում պայքարի: Եվ Կովկասի ժողովուրդների պատմությունը դրանց՝ էդ հզորների մրցության պատմությունն է [գրեթե] միաժամանակ:

ալաններ, խազարներ, հոներ, սկյութ<ներ> կիմեր (?), որոնց դեմ պարիսպներն ու դռները <....>

Աղվանից դուռը, Ճորա կամ երկաթի դուռը, կամ ինչպես արաբներն էին անվանում՝ դրռների դուռը (բաբ-ուլ աբվաբ) կամ վրացերեն (զղվիս կարի) ծովի դուռը։

Դերբենդին մոտիկ Ջրբ լեռան վրա ամեն տարի հավաքում էին մեծ[1] քանակությամբ փայտ, ու էդ ցեղերի շարժման[2] դեպքում՝ վառում էին ու հսկայական խարույկով նշան էին տալի Աղվանք, Հայաստան ու Ատրպատական [և] իմացնում էին վերահաս վտանգը։

Մինչև վերջին ժամանակները, մինչև ռուսների գալը։

Ծուխ?

ԿՐՈՆԸ

Բնության ու բնավորության վրա ավելացավ կրոնի կռիվը՝ ավելի սոսկալի դարձնելով ժողովուրդների պայքարը[3]։

Եվ էս դժոխքը դառնում է ավելի զարհուրելի, երբ էս ամենի վրա ավելանում է և կրոնների ընդհարումը, երբ հայտնվում է էն վարդապետությունը, որ ասում է. «եկի ի հուր արկանել...», որ Արևելքն ու Արևմուտքը հանեց իրար դեմ։

Քրիստոնեական վարդապետությունը մարդկանց ուղեղների մեջ մի հեղաշրջում առաջ բերավ, որի նմանը պատմությունը չգիտի։ Էդ հեղաշրջումը ո՛չ քաղաքական էր, ո՛չ ազգայնական, այլ ուներ կուլտուրական և հասարակական նշանակություն։ Նրա առաքյալներն ու քարոզիչներն առաջ էին եկել ժողովրդի ներքին խավերից (և հատկ <ապես> երրայական ծագումից, որ չուներ ոչ քաղաքական ոչ հաս<արակական> մեծ նշանակություն)։

Ист<ория> ч<еловечества>, том> III, <стр.> 260, 262, 274[22]։

[1] [ահագին]

[2] [հարձակման]

[3] [էս ամենի վրա ավելացավ [կրոնի առանձին] տարբեր կրոնների մոլեռանդ մաքառումը և ամեն բան նղավ կատարյալ]։

տանը կրոնով ու քաղաքակրթությունով մոտեցավ Արևմուտքին՝ Հռոմին ու Հունաստանին, սրա վրա ավելացավ դրերի գյուտը, և ահա՝ աշխարհքը բաժանվեց երկու բանակի — Արևմուտքի ու Արևելքի, որ արաբների գալուց հետո, կարելի <է> ասել՝ մահմեդական Արևելքի, և քրիստոնյա Արևմուտքի։ Եվ Հայաստանը, որ կանգնած էր Պարսկաստանի դեմ — իրեն տեսավ կանգնած մահմ<եդական> արևելքի դեմ։ Էն օրվանից (IV դարի սկզբում), որ Կոստանդինոս մեծի օրով քրիստոնեությունը դարձավ Հռոմի, Պարսկաստանի մշտական ախոյանի — պետական կրոն, հայերն ու վրացիներն էլ հայտնի ընդունեցին ու հրատարակեցին իրենց երկրում, որպես պետական կրոն ու մտան նրա հովանու տակ ու վերջնականապես կտրվեցին Պարսկաստանից։ Պարսից մեծ արքաները չէին կարող սառը նայել էս մեծ իրողությանը [և] իրենց տերության մեջ հրատարակեցին մահվան պատիժ քրիստոնեության համար ու զգալով վտանգի մեծությունը, վեր են կենում նրա դեմ։ Էդ մեծ հալածանքի ու մաքառման սկիզբը դրեց Շապուհ երկրորդը։ Հայաստանում Շապուհը երկարատև կռվից ու մեծ ջանքերից հետո, որ գրեթե նրա կյանքի մնացած մասը կլանել են, հաջողվեց միայն ընդունել տալ պարսից գերիշխանությունը, բայց քրիստոնեությունը վերացնել չկարողացավ։ (388 <թ.>)[29] (Թեև միաժամանակ ստիպված էին դիմագրավելու միջին Ասիայի նոմադ ցեղերի և Հյուսիսային Կովկասից ալանաց և հոնաց արշավանքներին)։ [(Համակապես Հայաստանը եղավ գլխավոր ասպարեզը էդ կրոնա-քաղաքական կռվի, որ էն ժամանակ բորբոքվեց պարսից պետության ամբողջ արևմտյան սահմանի երկարությամբ,— քրիստոնեության և կրակի պաշտամունքի կռվի, հռոմեական և պարսկական ազդեցությունների կռվի)]։

Ист. ч. III, 275[25])

Ист. ч. III, 369[26])

Ист. ч. III, 263[27])
Սամուել[28])

Շապուհի հաջորդներից մեկը՝ Հազկերտ II, միտք հղացավ միանգամից վերացնել նոր կրոնը Հայաստանում և առաջ բերավ էն կռիվը, որ հայոց պատմության մեջ հայտնի է «Վարդանանց պատերազմը» կամ «Ավարայրի ճակատամարտը» անունով։ Եվ ահա էն օրվանից, որ երկու ժողովուրդը էդ դաշ<տ>ում հանդիպեցին իրար ճակատ առ ճակատ, որպես երկու թշնամի կրոնների ներկայացուցիչներ — էն օրվանից իրար պիղծ համարեցին, էն օրվանից, ինչ Վարդանը իր սուրը մերկացրեց Պարսկաստանի դեմ հանուն քրիստոնեության — էն օրվանից էդ կռիվը դեռ շարունակվում է էդ դրժբախտ երկրում, և էդ է պատճառը, որ մոռացվել են շատ մեծ պատերազմներ, թագավորներ, զորավարներ ու հերոսներ, բայց Ավարայրի պատ<երազմը> ու Վարդանը միշտ մնում են կենդանի։

Ист. ч. III, 369[30])

Քանի դեռ Հռոմի [հաջորդը] — նոր Հռոմը՝ Բյուզանդիան իր ձեռքին ուներ Տավրոսի գիծը, և քանի դեռ Հայաստանն ու Վրաստանը պետք է պաշտպաններին միայն թևերը, հայ ժողովուրդը, էն ժամանակ դեռ ռազմական, կարող էր հաջող կռվել, չնայելով իր պետության քաղաքականորեն կատարյալ լինելուն։ Վտանգը եկավ, և նրա հետևանքները երևացին էն ժամանակ, երբ աբբասյան խալիֆայության անկման շրջանում, թուրքական (турецкие) օրդուները լցվեցին Ատրպատական ու Քուռ ներքին հոսանքը և սկսեցին ոչ [թե] միայն անդադար անհանգստացնել Հայաստանը, այլև նրա միջով ճամբա բաց արին դեպի Փոքր Ասիա։ Ատրպատականը դարձավ թափառական[1] ցեղերի (кочевный) — և նրանց առաջնորդների սիրելի բնակավայրը, իսկ Հայաստանը — էն երկիրը, որի [միջով] անց ու դարձ [էլ ն ամում] ու որը թալանում, սելջուկների

[1] [թափառաշրջիկ]

ետևից եկան Հուլավույի մոնղոլները, նրանց ետևից Թեմուրի օրդուները: Ապա թե՝ նրանցից հետո էլ էդ թշվառ երկիրն ավերեցին թուրքմենների, օսմանցիների ու պարսիկների պատերազմները: Հայաստանը դառավ դժոխք, որից կարելի էր ազատվել միմիայն փախչելով... (Ист. ч. III, 369)[31]:

Գաղթե՜լ, գաղթե՜լ, գաղթե՜լ...
[ո՜վ հայոց գաղթականություն]
Ափսո՜ս քեզ, հայոց խեղճիկ ժողովուրդ[32])
[ո՜վ հայոց գաղթականություն]
Բայց սա ուրիշ պատմություն է:
Ով գաղթեց գլուխն ազատեց էս դժոխքից, պրծավ:
Հապա նա, ով մնաց, նա ի՞նչ արավ, ինչ ճար ու հնար մտածեց էս տեսակ տարորեն[1] դաժան ճակատագրի հանդիպած մի ժողովուրդ, եթե էսքան անողոք է եղել նրա վիճակն ու անողոքությունը հաստատուն՝ դարերով, դարերով: Մի՞թե էս ժողովուրդն իր ապրած տանջանքներից ու աղետալի պատմությունից մի իմաստություն չհանեց, մի քաղաքականություն չմշակեց իր համար:

Իհարկե հանեց ու մշակեց և էն էլ շատ պարզ ու կարճ: [Դարերի] փորձով տեսավ, որ անկարող է էս [բարբարոսական] թշնամական և այլակրոն հեղեղի դեմ կանգնելու և ապրելու և մի հզոր ձեռք, մի մեծ բարեկամ, մի ուժեղ ապավեն է հարկավոր իրեն՝ իր գլուխը պահելու համար, իր ինքնուրույնությունը չկորցնելու համար: Եվ սահմանեց իր քաղաքականությունը — ունենալ միշտ մի հզոր [դաշնակից, ավելի ճիշտը —] հովանավոր, մի ապավեն Արևմուտքի մեծ[2] պետություններից, որոնց հետ

[Նոր մահմ<եդական> ճնշումներ ու դիմումն արևմուտք. Հռոմ, Բյուզանդիոն, Ռուսաստան.]

Պարսկ <աստանից> կտրվելուց (4 դ <ար>) հետո դիմումներ. Սահակ կաթողիկ<ոս>.
Գյուտ. քրիստ<ոնեության> և Հռոմի հետ կապի համար կանչվում են պարսից դուռը:
Դիմում Հունաստան, Վարդանանց պատ<երազմը> և Եղիշե.[33])
Բյուզանդ. Ա<րշակ> Բ. կայսրին գրած թուղթը —Չամչ<յան>I, 456[34])
Այնուհետև դիմումներըն [ապարդյուն]
IX <դ.> Ղևոնդ. 1. գլ. ԼԳ 135 և այլն,

[1] [անօր<են>]
[2] [քրիստոնյա]

Հայկ<ական> դպր<ություն>, էջ՝ 305. թե ինչու գնում <է> Հռոմ և ինչո՞ւ է նրանց մասին 40):

կապված էր կրոնով (և հետագայում նաև՝ կուլտուրայով—)։ Ինքնապաշտպանությունը։

[Այժմ տեսնենք, թե հ<այ> ժ<ողովըրդի> էդ ցանկությունը ինչ հիմք ունի իր պատմության մեջ [և էդ օրերն էլ որքան էին նման հին պատմության օրերին]]։

ԼԴ. ռուս. 96 և այլն.[35])
Հովհ. Կաթ. պլ. խթ և հառաջաբանը։[36])
10 դ. Ասողիկ.[37])
11 դ. Արիստ. Լաստ.[38])
12, Մատթ. Ուռհայեցի[39])։

Հունաստ<անի> սըխալը, որ կրոն<ական> հալածանք սկսեց և ինքը ու թուլացրեց իր բուֆերը։ Տաճիկները. նրանք ու պարսիկները. նոր տանջանք, նոր հույս. Ռուս<աստան> նոր դիմումներ ռուսների դալը.

Պատմության մեջ դեպքերը կրկնվում են, իհարկե, ընդ<հանուր> գծերով։ Ինչո՞ւ։ Որովհետև պատճառներ կան, որ ընդմիշտ մնում են նույնը և միշտ էլ առաջ են բերում միևնույն հետևանքը [և պատճառներ էլ կան, որ տևում են երկար և երկար էլ ազդում են ազգերի կյանքի[1] ընթացքի վրա]։ Դրանից է, որ պատմությունն էլ կրկնվում է, իհարկե, ընդհանուր առումով։

Վերջ —
Եվ ահա իր պատմական վիճ<ակի> մեջ («Վերք Հայաստ<անիի»> օրով) ենթակա ավերումների, կրոնով հակառակ մահմեդական <1 անընթ.> բռնության[1] տակ կրկին տրոնում էր իր «զորեղ բարեկամը»։ Ռուս բառի մեջ հայը հասկանում էր էն ուժը, որ փրկելու է իրեն ու պաշտպանելու։
Պատմությունը, դիմումն և դրություն.

[1] [պատմության ու]

[1] [իշխանության]

[Օրինակ. ահա ձեզ հավիտենական մի պատճառ]: Լեռները պահպանողական բնավորություն ունեն: Նրանց շարքերով ասես թե աշխարքը վերջանում է ու նրանց մեջն է ամփոփված լեռնցու համար ամեն լավ բան, նա հեռու չի գնում, չի թողնում իր հայրենիքը, և աշխարհակալ չի առհասարակ: Կրոնների վնասակար ազդեցությունը. բաց տարածությունը, դաշտն ու ծովը, ընդհակառակը, քաշում է մարդուն, հետաքրքրում է հեռու հորիզոններով ու տանում է դուրս՝ արկածների ու ընդհարումների: Կամ թե չէ այս ինչ երկիրը գտնվում է հյուսիսային գոտում, մի անկյունում, կամ[1] մի կղզի է մեկուսացած, իսկ մի ուրիշ երկիր ընկած է ժողովուրդների պատմական ճանապարհի վրա:

Նրանցից դուրս ամեն բան չնչին է ու անարժեք <3 անընթ.>:

Այս առանձնահատկությունները միշտ ազդելու են ժողովրդի կյանքի վրա, նրա հոգու վրա և բացատրում են նրա պատմությունը[2] թե ինչու այսպես է և չէր կարող լինել ուրիշ տեսակ: Պատճառներ էլ կան, որ տիրում ու ազդում են երկար ժամանակ: Դրանք էլ մեծ գաղափարներն են, որ ապրում են դարերով ու ազդում են դարերով: Օրինակ, կրոնական գաղափարները. ժողովուրդների [մտքի ու հոգու] վրա իշխում են երկար դարերով և մարդու հոգին հրապուրում են դեպի երկինք կամ դեպի երկիր, դեպի վայելք կամ դեպի անձնուրացում:

Եվ վերջապես ազդում են ժողովուրդների հարաբերության վրա:

Հայաստանը իր աշխարհագրական դիրքով ընկած է Արևելքի ու Արևմուտքի ազգերի ճանապարհին, միշտ մեծ ազգերի ոտի

---

[1] [թե չէ]

[2] [բնավորությունը]

տակ, ենթակա արշավանքների ու [1]ավերումների, անվերջ, անվե՛րջ, անվե՛րջ.

և՝ ինչպես պատմությունը գեղեցիկ որոշել է — մաշվեց զորաբանակների ձիերի սմբակներից:

[2]Եվ այս երկիրը վերջ ի վերջո իրեն անվանեց «Թշվառ Հայաստան»: Թշվա՛ռ... բառեր կան, որ մի ամբողջ պատմություն են: Ռուսն իր երկիրը անվանում է «Святая Русь», գերմանացին իրը՝ «ամենից վե՛ր Գերմանիան», անգլ<իացին>, <...>, թուրքը՝ «ալ կարմիր օսմանլի», իսկ հայը իր հայրենիքը կոչեց «Թշվա՛ռ...»:

Այստեղ մի հարց է առաջ գալի, թե այսքան սոսկալի ճակատագիր ունեցող մի ժողովուրդ էսքան դարերի փորձերից[3] ու փորձանքներից հետո մի՞թե իր ապրած տանջանքներից, իր աղետալի պատմությունից մի իմաստություն չի հանել, մի խելք չի սովորել, մի քաղաքականություն չի մշակել իր համար: Անշուշտ պետք է ունենա մի ազգային քաղաքականություն, և ունեցել է միշտ: Տեսնելով որ անվերջ են հարձակումներն ու հարվածները և տեղը վտանգավոր, անապահով — նա միանգամ ընդմիշտ[4] ըստիպված է եղել մտածելու իր գլուխը պահելու մասին և ստեղծել է մի քաղաքականություն, որ [եթե] կարելի է ասել, գլխապահության կամ ինքնապաշտպանության քաղաքականություն: Եվ միշտ գնացել է այդ ճանապարհով: Ճիշտը՝ հովանավոր, որ ամեն անգամ իրեն օգնի [5]ու պաշտպանի նրանց դեմ:

Հայի բախտը կախված է եղել այդ «մեծ բարեկամից», և հայոց պատմությունը այդ Ռուսներն ունե՛ն արդյոք և ուրիշները ոտի տակ ընկած երկիր — այս ճամբաների վրա — Թշվառ Հայաստանը:

Բառերը պատմություններ են: Պատմությունը հաճախ խըտանում ու հավերժանում է մի բառի մեջ, պետք է նա մեկնես, բաց անես, և մի բառից դուրս կգա մի պատմություն:

Բայց, այսուամենայնիվ, նա ապրեց շնորհիվ իր լեռնոտ դրության [Աշխարհքում ամենից] հարթավայրերից վերացան — լեռնաշխարհները պահեցին: Նույնիսկ Հայաստանում էլ ամեն հեղեղի ժամանակ դաշտավայրերում կոտորվում էին կամ գերվում, լեռները պահում էին ու նորից սերում: [Երբ] Կիլիկիան՝ Ռուբ<էնյան>, Ղարաբաղը, [նաև Սասունը]՝ Սյունյաց մելիքներ, Լոռի՝ Կյուրեկյան տոհմը:

---

1 [կոտո<րածների>]

2 [այստեղ մի մի<տք>]

3 [կյանքից ու տանջանքից]

4 [ամեն միջոցներով]

5 [ու պաշտպանի անընդհատ հեղեղի ու ավերիչների դեմ]

արշավանքների[1] և հովանավորների[2] հետ ունեցած հարաբերության պատմությունն է գրեթե:

Մի ժամանակ, երբ ամբողջ Կովկասում ազգերի վրա թագավորում էր Արշակունի տունը՝ ազգակցական (և կրոնական) կապերով կապված Հայաստանը միշտ դիմում էր Տիզբոն՝ Պարսկաստան և առնում էր նրա թե՛ օգնությունը և թե՛ ազդեցությունը: [Քրիստոնեության գալուց հետո...]

Վերցնենք. ժամանակի տիրողները՝ Հռոմն ու Պարսկաստանը: Հայաստանը Հռոմից կտրված[1] է և՛ կուլտուրայով, և՛ կրոնով, և՛ ծովով: Ամեն անգամ, երբ Հռոմը հայտնվում է Հայաստ<անին>, որպես թշնամի:

Հայաստ<անը> իր հարևան Պարսկաստանի հետ և կրոնակից է և տիրող դինաստիային ազգակից:

Քրիստ<ոնեությունը>, որպես մի մեծ ծով ընկավ Պարսկաստանի ու Հայաստանի մեջ, տիրող տան ազգակցությունն էլ մեջտեղից վերացավ և ահա նոր բարեկամություն, նոր կռիվ:

Պարսկական ազդեցությունը,
Հռոմեական,
Հունական — այժմ գալիս է ռուսականը, որ իրեն հույնի ժառանգն է համարում:

---

1 [նեղությունների]
2 [թարեկամների]

[1] [բաժանված է]

<....> ապավեն է որոնում։

[Այդ ապավենը նրա համար], քանի Պարսկ<աստանի> հետ կապված էր տիրող դինաստիայի ազգակցական կապերով (կրոնով և այլն) ու քաղաքական շահերով, հարևանությամբ, նա էր միշտ ապավենը և դաշնակից։

Բայց այն օրից, որ եկավ քրիստոնեությունը, խորթություն դցեց Պարսկաստանի և Հայաստանի մեջ և ընդհակառակը մոտեցրեց Հայաստանը արևմտյան քրիստոնյա ազգերին, այն օրվանից պատկերը փոխվեց։

Հայաստանը նրանց փարեց, որպես իր գոյության և իր կրոնի պաշտպանների, իսկ նրանք Հայաստանից օգտվեցին, որպես իրենց [համար] առաջապահ գնդի և եղավ բուֆեր մի երկիր, [ևվ] Պարսկաստանը շատ ջանք գործ դրավ մեջտեղից վերացնելու այդ խոչընդոտը՝ քրիստոնեական կրոնը և այդ մաքառումի ամենամեծ արտահայտությունը եղավ Ավարայրի պատերազմը։

Բայց դրությունը մնաց նույնը — Հայաստանի աչքը միշտ դեպի Արևմուտք։

<....>

... Դեպի քրիստոնյա Հռոմ. Բյուզանդիա։

Կոստանդինը 4 դ<արի> սկզբին (308 թ.) ընդունում է քրիստոնեություն և հրատ<արակում> պետական կրոն։ Տրդատն ապավինում է նրան։ Գնում է իր մեծամեծների ու Լուսավորչի հետ, հետը սիրո դաշն է կապում։ Դառնում է Հայաստ<անը> բուֆեր՝ Հունաստ<անի> համար, Պարսկ<աստանի> և մահմ<եդական> աշխ<արհի> դեմ։ Պարսից թագ<ավոր> Շապուհը արշավում է Հայաստան, իր հետ դաշնակից է անում Կովկ<ասի> լեռնականներին ու խռովություն է հարուցում երկրի ներսը — նախարարների մեջ (Սղուկ Սլկունի)։ Նույն հարձակումը և Տրդատի հաջորդ Խոսրովի օրով, (որը նույնիսկ հաշտություն էր խոսել Շապուհի՝ հետ), ապա Խոսրովի հաջորդ Տիրանն ու Վրթանես կաթողիկոսն են դիմում Կոստանդնուպոլիս կայսրին։ Եվ նորից հարձակում Պարսկաստանից։

(Ապա Հուլիանոս կայսրը, որ հալածում է քրիստ<ոնեությունը>, իր պատկերը տալիս է, որ պաշտեն եկեղ<եցում>, որ տեր Հուսկան խորտակեց)։

Պարսից թագ<ավորը> կուրացնում է Տիրանին՝ հույներին հակվելու համար։ Նույնը Արշակ 2-ի հետ, (Արշակի նամակը Վաղես կայսերը, էջ 456. Ա հատ.)[41]), որ ինքն իրեն սպանեց բանտում։

Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնյան՝ զզված էս ամենից, վեր են կենում քրիստոնեության և պալատի դեմ։ Եկեղե-

ցիները քանդում, հունարեն գրերը կրակում և արգելում հունական ուսումը։ Մյուս կողմից՝ պարսից մոգերը։

Եվ եղավ յայնժամ աշխարհ մեր իբր սպանդարան մարտիրոսաց, ասում է հայոց պատմությունը[42])։

Ապա Թեոդոս կայսրը Ներսես մեծի աղաչանքներին անսալով՝ Արշակի տղին է ղրկում թագավոր հայոց, և հունաց ու հայոց զորքերը պարսից զորքերի դեմ տալիս են Ջիրավի նշանավոր պատերազմը. (ապա Թեոդոս նրան սպանել է տալի ապերախտության ու ապստամբության համար)։

Նրանից հետո Թեոդոս մեծը թագավորեցնում է Վարազդատ Արշակունի իշխանին, որ Պարսից երեսից փախած ապավինել էր կայսեր։ Սրա ժամանակ էլ հունաց զորավարներն, իբրև «երախտավորք ու տիարք», շատ էին վատնում «ըստ հաճույս», սա էլ գաղտնի ուզեց դաշն կապել Պարսից արքայի հետ, նույնպես բռնվեց՝ Պոլիս տարվեց ու աքսորի մեջ մեռավ։

Ապա Թեոդոս մտածում է երկու թագ<ավոր> դնել հայերի վրա, որ եթե մինը իր դեմ գլուխ բարձրացնի, մյուսը մնա հավատարիմ։ Թագավորացրեց Պապի երկու որդիներին — Արշակին ու Վաղարշակին։ Հունաց զորավարները հայոց երկրից դուրս վանեցին Պարսից զորքերը, որոնք իբրև թե Վարազդատին օգնության էին եկել։

Նորից հայոց երկիրը բաժանում են իրար մեջ հույներն ու պարսիկները, բայց պարսից բաժնից հայոց թագավորը փախչում է հունաց բաժինը՝ [բոլոր իշխանների][1] հետ՝ «լաւ համարելով նաւղոք շատանալ ընդ բարեկամութեան քրիստոնեա թագաւորի, քան ստուերօք լիանալ»...

<....> Հագարացվոց (արաբ<ների>, արշավանքի սկիզբը. Ջամչ<յան> Բ. 340 և այլն[43]) 345-ում, թե ինչպես էդ ժամանակ (645 թվին) եկեղեցական վեճերի համար, թե՝ ինչ շարական երգեն և այլն, կռիվ ընկավ ու ժողովներ էին անում և այլն։[44])

347-ից դառն են այնուհետև պատմությունն հայոց գրեթե մինչև ի կատարած...[45])

Արաբացիք եկան։ Հայերը անկարող դեմ գնալու՝ հպատակվեցան ու հարկ խոստացան։ Հունաց կայսրը բարկացավ, եկավ կործանելու. առաջը գնացին հպատակ<ու-

Ասողիկ[46])
Հովհ<աննու>[47])
Սամուել[48])
Մամիկոն[49])
Վարդան[50])
Կիրակոս[51])

[1] [նախարարների]

թյուն> խոստացան: [Բայց] կայսրը Քաղկեդոնի ժողովին ստիպեց ընդունեն և հաղորդություն առնեն իր ներկայությամբ էն կարգով:

Այնուհետև (նույն գլուխ) սկսվում է խըստություններ էդ հողի վրա, ամբաստանություններ Կ. Պոլիս, մինչև զղվեցնում են հայերին, հայերը հակառակ են կանգնում, բայց և դժվար դրության մեջ գրում են առաջին նամակը. Բ. 350[52])

ԱՐԱԲՆԵՐԸ

229—[53])

Царство персиян при аршакидах. III, 250[54])

Պարթևների թագ<ավորության> հիմք դրել են թուրանցիք թափառական ցեղերը, անապատներից դուրս եկած ու բնակած Պարսկաստանի ներքին անապատներում:

254, Արշակ<ունիների> տունը — Արշակունի թագավորությունը (Արշակը պատահ <....>)

(15 դարում նոր աղանդը տիբետ) Լյութերի հետ <1 անընթ.> (1781)

Նուն — տիտղոս մեծ թագավորների:

(Հայկական հարցը. միշտ. 259)

262[55])

ՍԱՍԱՆՆԵՐԸ — 259[56])

Պարթևները օտար ու խորթ. Թուրան — Սասանները իրանական — հարազատ ու պաշտպան զրադաշտական կրոնի: 260.

Դրոշակները ձիերի և (թոկ<թ>) եզների պոչից էին, խանին[1] սև ձիու պոչ, իսկ ամենից մեծը 9 ձիու պոչից մոնղոլական 9 կորպուսի դրոշակները:

Նրանք պատերազմական բանակներ էին, որոնց պետք էր միշտ գործ տալ, կռիվ ու ավար: Խաղաղության համար վտանգավոր և դժվար պահերին գնում էին՝ փոթորկի նման անցնում, բայց չէին

[1] [իշխանինը]

դիմանում. և թեև նրանց չէին կարողանում դիմադրել խաղաղ երկրներն ու պետությունները, բայց ավելի հաստատ էին և հիմունքներն ավելի խոր ու ամուր:

ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ

Որպես խալիֆների վարձկան զորքեր, սկզբում սակավ, ապա թե ախորժակն<եր> զրգռված՝ ամբողջ ցեղերով միջին Ասիայի անապատներից շարժվեցին դեպի արևմուտք, նրանց միացան թաթարական այն ցեղերը, որոնք թափառում էին Արալ լճի հյուսիսային ափերին: Եվ Պարսկաստանի թուլանալով՝ ներս խուժեցին ու անցան. արաբական խալիֆաթը խոնարհեց իր դրոշը, Հայաստանը և Վրաստանը ոտի տակ գնացին (1037—63) և Բյուզանդիան ստիպված էր տեղի տալու[1]: Նա էլ արդեն քայքայված էր և անկման մոտեցած:

Ист. ч. III. 333[57])

11 դարում սելջուկները Ատրպատականի կողմից ներս խուժեցին Հայաստան: Հայաստանն ու Վրաստանը համարվում էին կարևոր[2] նեցուկներ Բյուզանդիայի համար: Բայց Բյուզանդիան այդ բանը շատ լավ չէր հասկանում ու գնահատում: Այդ ժամանակ Հայաստան 10-ից ավելի իշխանություն կար առանձին: Նրանց մեջ նշանավոր էր Բագրատունյաց տունը — Անիի թագավորությունը:

Հայերը չդիմացան սելջուկյան հեղեղին, քաշվեցին դեպի հարավ, Կիլիկիա՝ Բյուզանդիայի հարավային սահմանները, որի համար Բյուզանդիան ուրախ էր, որովհետև ուժեղանում էր: Բայց հայերը այստեղ էլ ոչ մի օժանդակություն չստանալով Բյուզանդիայից, վերջապես կտրեցին իրենց կապերը, կազմեցին առանձին իշխանություն — Ռուբինյան, (և [մոտեցան] դաշն կապեցին նույնիսկ սելջուկյան իշխանների հետ) ու այսպիսով Բյուզանդիան այդ էլ առանձին կորցրեց: Հայաստանն ու Վրաստանը, այդ պարիսպները ընկան ու դարձան բաց դռներ, որոնցով անց ու դարձ էին անում բարբարոս ցեղերը:

---

1 [հարկ խոստանալու]

2 [անհ<րաժեշտ>]

Պարսկաստան և այլն.

Բաղդատը քանդեցին վերջնականապես և ընկավ կուլտուրան ու պարսկ<ական> բանաստեղծությունը։ Մոնղոլները հիմնահատակ կործանեցին այն ամենը, ինչ որ խնայել էր սելջուկ թուրքը։

ՕՍՄԱՆՆԵՐԸ

13 դարում մոնղոլների ու սելջուկների ավերակների վրա, Փոքր Ասիայում թուրքական թափ<առական> ցեղերից աճեց ու կազմակերպվեց մի թուրքական թափառական ցեղ, որոնք կոչվեցին օսմաններ՝ իրենց մեծի անունով։ Նրանց Անգորայում արոտատեղ էր տվել սելջուկ սուլթանը՝ Քոբաթ[1]։ Հետզհետե իրենց սահմանները ընդարձակելով, հողեր խլելով բյուզանդական սահմաններից, ուժեղացան և այսպիսով պատրաստվեց Բյուզանդիայի կործանող ուժը։

ՌՈՒՆՆԵՐԸ

Աղա Մահմադ խանը...

Դժբախտ Վրաստանը, որ ապավինել էր Ռուսաստանի հովանավորությանը, անողորմ ավերվեց։ Ռուսաց զորքերը դրանից հետո հայտնվեցին Վրաստանում և սկսեցին սպառնալ Ատրպատականին (Ադրբեջան)։

Այսպիսով՝ հյուսիսից շարժվեցին ռուսական բատալիոնները և նրանց առջև ընկան, և տափաստանների թափառաշրջիկ ցեղերը, և վայրենի ու քաջ լեռնականները։

Նրանցից հետո Պարսկաստանը երկու անգամ փորձ արավ Կովկասի շղթայի մյուս կողմը հետ տա արևմտյան կուլտուրայի և քրիստոնեության ներկայացուցիչ ուժը, բայց երկու անգամն էլ ապարդյուն և միշտ կորուստներով[2]։

1813 թվականի պատերազմից հետո Ռուսաստանին մնաց Պարսկաստանի կովկասյան կալվածքների[3] մի [մեծ] մասը, իսկ 1828 թվին նաև պարսկական Հայաստանը Երևանի հետ միասին։

---

1 [քեյ<բաթ>]

2 [տխուր հետևանքներով]

3 [նահանգների]

Շատ ու շատ անգամ հայերը ենթարկվել են աղետների այդ հարաբերությունների մեջ՝ մեկին կամ մյուսին ցույց տված համակրանքի համար (Սուլթան Բայազետ և Թեմուր)։

Ռուսների գալուց հետո սկսվեց մրցություն Անգլիայի և Ռուսիայի մեջ առևտրական և աշխարհակալական տեսակետներով։

ՀԱՅԱՍՏԱՆԸ III, 368[58])

Երկրի լեռնոտ դրության պատճառով միշտ իրարից անջատ ու անկախ իշխանություններ ունեցավ, որոնց ներքին խռովությունները շատ ու շատ անգամ դրսից միջամտություն էին հրավիրում[1]։ (Թեև լեռներն էլ պաշտպանում էին), երբեք մի ուժեղ միություն չկազմեց։

[Քրիստոնեությունը ընդունելուց հետո եղավ Բյուզանդիոնի նեցուկը, բայց և նպատակակետը բոլոր հարվածների, որ գալիս էին քրիստոնեության և արևմտյան հռոմեական կայսրության վրա։ Վերջապես ընկավ այդ հարվածների տակ և պաշտպանություն էլ չգտավ արևմտյան քրիստոնյաներից և դարձավ դժոխք, որից կարելի էր ազատվել միայն փախչելով...

Գաղթականություն։]

(— Ист. ч. III,
Византия, 28[59])
Восточные элементы Визан<тийской> культ<уры> 49
Византийское влияние на Армению 58.
» » на Кавказ и Перс<ию>60.
и следующия главы.
Турки—наслед<ники> Визант<ии>, 112.
Европейская Турция и Армения 121 (208—10)
Россия в Азии — 593.

ԹՈՒՐՔԵՐԸ

«Сколько раз в течение хода истории полчища тюркских и тюркменских наездников продвигались с востока на запад по низменностям Аральского и Вольжского бассейнов в Европу и по Аму-дарийской и Сир-дарийской низменностьям в

---

[1] [թեր<ում>]

Персию, Авганистань и Индию, этого не может установить никакое исследование (Ист. ч. 5,121)[60]:

Կիսալուսինը այն ժամանակից, երբ անապատում աստղերն էին պաշտում: Տաճկական զորքի և ռազմական բանակի սկզբնական ձևը — 123[61]) Տաճկաստանն իր ուժն ու մեծությունը պարտական էր քրիստոնյաներին, որոնց հավաքում էր, որպես տուրք ու թուրքացնում և պաշտոնների մեջ պահում և որոնք ավելի խիստ ու անխիղճ էին հպատակների հետ (140)[62]:

Պոլսի առման տպավորությունը Արևելքում և Արևմուտքում *140[63]) (հայերեն ողբը<....>):*

ՌՈՒՍՆԵՐԻ ՀԱՅՏՆՎԵԼԸ

Սուլթան Մահմուդը (177/5) գրում է մեծ վեզիրին՝ շունչը հավաքի, Собери весь свой дух — ибо опасность велика. *և ռուսների դեմ հրովարտակը — (նայել)*

Անգլիան ջրից, ռուսը ցամաքից իրար՝ հակառակ և նրանց հակ<առակ> ի միջի այլոց տուժեց և հայի դատը:

ԿՐՈՆԸ

Ист<ория> чел<овечества> III, 260.

262. Կրոնական պատերազմները:

274. Քրիստոնեությունը Զրադաշտի դեմ, ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար:

Հայաստանը որպես «буферное государство» *III,* Ист<ория> ч<еловечества> *267[64]):*

Միշտ եղել է այդ բուֆերի վիճակի մեջ:

Բուֆեր մեքենայի այն մասն է, որ իր վրա ընդունելով հարվածներ, ամբողջ մեքենան ապահովում է փչանալուց[1]: Այս դերի մեջ է եղել Հայաստանը միշտ:

Բյուզանդիան ուժից զցեց իր այդ սահմանապահին և տուժեց:

---

[1] [և ոչնչացնում է նրանց վնասակար ազդեցությունը ամբողջ մեքենայի վրա]:

III, 373[65])

Պարս և լեռ

Քանի որ պարսկական բանակը հսկում էր Կովկասի կիրճերին, ապահով էր Վրաստանն ու Հայաստանը հյուսիսային բարբարոս ցեղերի արշավանքից, բայց հենց որ այդ պահպանությունը թուլանում էր, դյուղերի ծուխն ու... հիշեցնում էին մեծ թագավորներին իրենց պարտականությունը (275)[66])

Դերբենդի դռան պարիսպը, պարսից թագավորը, Բյուզանդիան էլ օգնեց։

ՄՈՆՂՈՒՆԵՐԸ

Ист<ория> монголов, вып. I, Патканов

История Магакия[67])

Вардан Бардзрабердци[68])

Стефанос Сюнийский[69])

Смбат Коннстабл[70])

Киракос[71])

Հայ պատմիչները խոսում են մոնղոլներից՝ նրանց առաջին Հայաստան արշավանքին (V пред.) 1220 թվականին և տալիս են 70—80 տարվա նրանց պատմությունը։

Ապա գալիս է Թոմա Մեծոփեցին, որ տալիս է Հենկիսխանի պատ<մություն>։

Մոնղոլների, թեև կարճատև, տիրապետությունը Պարսկաստանում եղել է գեղարվեստի, բանաստեղծության ու գիտության ամենածաղկած շրջանը։

Стр. 2. Вардан[72])

С наступлением и т. д.

Տեփ. 29—30[73]) նկարագիր

Ջահան—ամու—մոտան—Ամուդարիա. Գետոն։

Պատմության մեջ շատ սակավ ազգեր են ունեցել էն դաժան ճակատագիրը, որ ունեցել է հայ ժողովուրդը։ Նրա կյանքի[1] բոլոր շրջաններն [ու բոլոր էջերը] եղել են անընդհատ կռիվների ու կոտորածների արյունոտ հանդես և նրա պատմ<ության> [բոլոր էջերը] մի հսկայական ողբերգություն։ [Եվ զարհուրելին էն է, որ էդ վիճակի, էդ ճակատագրի պատճառները պատահական չեն, այլ մեծ մասամբ մշտական ու հաստատուն, բնության օրենքների նման, ուստի և նրանց հետևանքներն ու ազդեցություններն էլ եղել են ու մնում են անվերջ, անփոփոխ]։ Աշխարհքների կամուրջի վրա, մանավանդ մինչև ծովային ճանա<պարհների> բացվելը, հզոր պետ<ությունների> ու [մեծ] ժողովուրդների արշավանքների ու մաքառումների ճանապարհին, հարևան անապատների [աղքատ ու] ընչաքաղց օրդունների պարբերական հարձակումների ասպարեզ, ոտի տակ գնաց[2] Հայաստանն ու մաշվեց մեծ բանակների ձիանների սմբակներից, ինչպես ասում է պատմագիրը։ [Ճիշտ նման Իսրայելի ժողովրդին, որ գտնվում էր մի կողմից հզոր Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի մեջ, մյուս կողմից Եգիպտոսի ու Հռոմի միջտեղը, և մին Եգիպտոս էր գերի ընում, մին՝ Բաբելոն, մին Պարսկաստանն էր ավերում, մին՝ Հռոմը, և նրա մարգարեն իր [աշխարհասփյան] ողբի մեջ աղաղակում է՝ «ո՜վ դու, հայրենիք, ձոր կոտորածի... մինչև որ դատարկվեց վերջապես։ Այսպես էր Հայաստանը]։ «Յարևելից սուր, յարևմտից սպանումն, ի հիւսիսոյ հուր և ի հարաւոյ մահ...» աղաղակում է հայոց Լաստիվերացին։[1])

Հայ ժողովուրդը [երկար դարեր] աչքն արևմուտք կթած՝ փրկություն էր աղերսում մերթ մի, մերթ մյուս եվրոպական պետու-

[1] [պատմության]

[2] [ու մաղվեց հայոց երկիրը]

թյունից։ Դարերի ապստամբական<ՙ> փորձերն ու պատմության մատը[1] ցույց տվին, որ այդ հույսը[2] Ռուսաստանն էր լինելու։ Եվ Հնդկաստանից մինչև Կովկաս, ամենայն հայոց կաթողիկոսից մինչև վերջին շինականը՝ հայացքները կենտրոնացան Ռուսաստանի վրա։ Հիրավի, օրեցօր զորացող Ռուսաստանի քաղաք<ականությունը> և դարերով տանջվող ժողովրդի հույսերը բռնում էին իրար։ Այստեղից էլ առաջ եկավ այն մոտիկությունը և այն ջերմ հավատը, որ գոյություն ուներ ռուս պետության և հայ ժողովրդի մեջ, որ անաղարտ ու անսասան գոյություն ուներ մինչև 80-ական թվականները։ [(Մինչև այն օրերը, երբ տաճկահայերը ռուսական հայերի ուշքը ու հայացքը գրավեցին դեպի Անգլիա մի կողմից, մյուս կողմից Կովկասում ռուսական իշխ<անավորներից> ոմանց մեջ առաջ եկավ ու զարգացավ այն կասկածը դեպի հայերի անկեղծությունը ու հավատարմությունը, որ հետզհետե հրեշ<ավոր> չափեր ընդունեց։ Այդ ամենը պարզելու և թյուրիմացությունը տեսնելու, պատմական սխալները, իրեն իսկական պատկերն ու ճշմարիտ ճանապարհը գտնելու ամենալավ միջոցը նորանոյալ պատմության ու ներկա դրության ամենակողմանի ուսումնասիրությունն է։

Այդ կողմից առանձին արժեք ու կարևորություն ունի «Վերք Հայաստանիի» ուսումնասիրությունը, որովհետև նա է հանդիսանում հայ ժողովրդի էն հրաթափ լեզուն, որ մինչև երկինք բողոքում է էն բարբարոս բռնակալության դեմ, որի տակ արյունաքամ էր լինում նա և նա է հարազատ թարգմանը այդ ժողովրդի պատմական տրամադրության, հին դարևոր ցանկության—տեսնել որսին իրեն աշխարհքում)]։

Այդ հավատն ու սերը երկուսակը արդարացան [մի<այն>] կովկասյան կռիվների մեջ, իսկ կովկասյան կռիվների մեջ առանձին կարև<որություն> ունի հայոց պատմ<ության> տեսակետից 1828 թվականի [3]ռուս-պարսկ<ական> պատերազմը։ Իսկ այդ պատերազմը հայ ժողովրդի մեջ հայտնի է «Երևանի կռիվը» անունով։ Երևանը հ<այ> ժ<ողովրդի> կյանքի ու երև<ակայության> մեջ ու բերանում էն դժոխքն է, որի մեջ այրվում էր նա։ Իսկ նրա կողքի Քան<աքեռը>՝ հայ տանջ<վող> դյուղի տիպարը։ Երևանի առնելը հ<այ> ժ<ողովրդի> երևակ<այության> մեջ հավասար էր դժոխքի քանդվելուն կամ ինչպես Վ<երք> Հ<այաստանին>[4] է ասում.

---

[1] [իմաստն]

[2] [էդ փր<կությունը>]

[3] [նրա բովանդակությունը]

[4] [Ար<ովյանն>]

«...Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էն դինը չէր ումենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար» «Վերք Հ<այաստանի>»[1]: Երևանի առումով ուսի ձեռքն անցավ Մասիսի էս կողմը գտնվող հայությունը ու էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան: Կատարվեց ժ<ողովրդի> գարավոր տենչանքը[2], ցնծությունը ընդհանուր էր, սրտալի ու մեծ, ինչպես մեծ էր ու ընդհանուր գարավոր «վերքի» ցավը: Այդ ցավի և այդ ցնծության արտահայտությունն եղավ «Վերք Հայաստանին», և հենց դրա մեջ է[3] այն պաղտնիքը, որ նա մեզանում համարվում է մի սրբազան գիրք:

Սխալ է. պատերազմը սկսվել է 1826 <թվականի> հուլիսի 16-ին՝ Խըղարաքիլիսայի վրա եղած հանկարծական հարձակումով: Ինագիրը:

Դրա համար էլ առանձին արժեք ու կարևորություն ունի «Վերք Հայաստանիի» ուսումնասիրությունը: Իմ[4] նպատակն է գլխավորապես ռուսական գին<վորական> տարեգրություններր վկա բեր<ել>, մի համառոտ տեսության մեջ ցույց տալ, թե ինչքան ճշմարտապատում է «Վերք Հայաստանին» և որքան հարազատ է իրական<ությանը>, որպես մի վենդանի պատմություն:

[Ինքը՝ Խաչ<ատուր> Աբ<ովյանը> եղել է կովի բեմի վրա. փախել է (քանի՞ տարեկան է եղել, ծանոթություններր իր մասին), աչքով տեսել է. իր եղբայրը մեռել է սովից. գրել է 14 տարի հետո. դրանից էլ մի շարք սխալներ են մտել]:

Գրել է 14 տարի հետո.

Օրինակ, էջ 138 ասում է. «Էս ժամանակին, հոմնիսի *-ին 1825-ին, որ արինկեր Հասան-խանը, Սարդարի փոքր ախպերը, որ հազար անմեղ գլուխ կերել, հազար տուն քանդել, գեղ ավերել, Դարս ու Բայազետ հինգ ու վեց անգամ ուռի տակ ավել՝.... ուր բարձրացրեց, որ գնա Պ<ետեր>բուրգն էլ առնի, ավերի, Թիֆլիզու սիրուն օղլուշաղը իրան գաղան զորացը մատաղ անի...»:

---

[1] [գա եղավ իրականացումը հ<այ> ժ<ողովրդի> գարավոր տենչանքի]

[2] [կսկիծը]

[3] [նրա սիրված լինելու]

[4] [Մեր]

*) «Վերք Հայաստանիին» վերցնում ենք Բ<աքվի> Կուլտ<ուրական> Մ<իության> հրատ<արակությունը>, որովհետև շատ է տարածված:

<Ծանոթ. հեղինակի>:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԵՎ <18>27 Թ<ՎԱԿԱՆԻ> ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Էն ժողովուրդը, որ իր պատմությունը չդիտե, նա ուրիշ բան էլ չի իմանա։

Կովկասում եղած ռուս-տաճկական կամ ռուս-պարսկական պատերազմները իրենց հետևանքներով, գուցե էդքան նշանավոր չեն եղել կովող ոկղմերի համար, որքան կովկասյան ժողովուրդների համար։

Այդ պատերազմներից էր 1827 Թ<վականի> ռուս-պարսկական պատերազմը, որ մեր ժողովրդի մեջ հայտնի է «Երևանի կռիվը» անունով։

Պատերազմի առիթը սահմանի խնդիրն էր, որ չէր որոշվոեմ։

Բայց սահմանի խնդիրը միայն պատրվակ էր։ Ճշմարիտն էն էր, որ Պարսկաստանը, հատկապես Աբբաս Միրզա Թագաժառանգը, ուզում էր ետ առնի 1813 Թ<վականի> Գյուլիստանի դաշնագրով ռուսների տիրած Ղարաբաղի ու Թալիշի խանությունները։ Ռուս կառավարությունը լավ գիտեր, որ Ղարաբաղն ու Թալիշը տալ — միևնույն էր թե տալ նաև Թիֆլիզն ու հետո նալ Կովկասից։ Պարսկաստանն էլ հենց այդ էր ուզում և ժամանակը համարում էր պատեհ։

Այդ օրերում ռուսաց մայրաքաղաքում բռնկել էր հեղափոխությունը, որ հայտնի է «դեկտեմբերյան» անունով։ Ստեղծվել էր մի ծանր վիճակ։ Ներքուստ խառնված ռուս կա<ռավարությունը> աշխատում էր խուսափել և արտաքին կռվից ու գործը վերջացնել խաղաղությամբ։ Մինչև անգամ մի քանի զիջումներ արավ*։ Սակայն Պարսկաստանը վճռել էր օգտվել հենց այս խառնակ դրու-

*) Թագաժառանգի խնդիրը. сб<орник>, XXII, V. 5)

Азия, Сиверс-ի, հայերի մասին[1])

Будков[2])

մեևել էր կայսրը[3]), պահաժառանգության խնդիրը[4])։

Նիկ<ալայ> կայսրը 1826 <թվականի> հուն<վարի> 11-ին գրում է Երմոլովին՝ խաղաղությունը պահի. «Верность данному слову и существенные выгоды России того от меня требуют. Ныне, когда поч-

Թյունից, մանավանդ անգլիացիներն էլ խոստացել էին օգնեն, իսկ Կովկասի մահմեդական խաներն ու ժողովուրդները խոստացել էին վեր կենալ Պարսկաստանի հետ։

Եվ ահա ռուսաց կայսեր պատգամավոր Մենշիկովը, որ կայսրից բարեկամական ողջույններ ու նվեր էր տարել Շահին, դեռ Թեհրան իր բարեկամական և խաղաղասիրական ճառն էր ասում, ֆաթ Ալի շահն էլ իր կողմից էր հավատացնում, որ պատերազմը սկսվեց։

«Вдруг, неожиданно, среди мирных сношений, без объявления войны, персияне сделали вторжение в наши владения со стороны Эривани»*,

ինչպես ասում է ռուսաց դիվանագիտական հրատարակությունը (Кавк. сб. *1,9*)**

կամ ինչպես երկրի կառավարիչ՝ գեն<երալ> երմ<ոլովն> է ասում կովկասյան զորաբանակին արձակած իր հրամանի մեջ.

[«Недавно возвратился я с Кавказской линии, где наказал возмутившихся чеченцев, но здесь персияне гораздо бессовестнее, с большею гораздо наглостью начали делать нападения на войска [наши]] .

Они прервали мир, когда со стороны нашей были употреблены все средства продолжать доброе согласие, прервали тогда, когда посланный от госуд<ария> Имп<ератора> для переговоров о границе ген<ерал> <Князь> Меньшиков находился в Персии и самим шахом был принят благосклонно. Со стороны Эривани вошел с войском Сардар и разбойнически грабит и истребляет

ти все горские народы в явном против нас возмущении, когда дело в Европе, а особенно дела с Турцией заслуживают по возможности своей внимательнейшего наблюдения, неблагоразумно было бы помышлять о разрыве с Персией или умно<жать> взаим<ныя> неуд<овольствия> (Потто, *1,20*)[6])

*) Потто, *1,37*) *վաճառականական տեսակետներ.* [*Օստ.*] *Արևել<յան> Ընկերություն Ռոմը*[8])

[1] [պաշտոնական]

** «Кавк. сб.» т. 1, 1876 г. ст. 9, 13. Андреев, «Воспоминания из Кавказской страны».

мирных жителей, поданных госуд<аря>, возмущает и других и подговаривает к измене.

В Карабаг вступили войска персидския, и один из сыновей шаха, Аббас Мирза, издавна дружественно принявший к себе всех бежавших от нас ханов и изменников, ведет их с собою, обещая им возвратить прежния их владения. («Кавк<азский> сб<орник>, XXIII, мат<ериалы> к ист<ории> Персид<ской> войны 1826 <18>28 г. стр. 68—69. Приказ по отд<ельному> Кавк<азскому> корп<усу>).

կամ ինչպես «Վերք Հայաստանին» է ասում.

(«Էս ժամանակին էր, հունիսի -ին 1825-ին, որ արինակեր Հասան խանը, Սարդարի փոքր ախպերը... ոտը բարձրացրեց, որ Պ<ետեր>բուրգն էլ առնի ավերի, Թիֆլիզու սիրուն օղլուշաղը իր գազան դորացը մատաղ անի. հրամայեց Նաղի-խանին, որ իր զարափափախներն ու մըսկլլոմ[9]) վերցնի, գնա Ղազախու բերանը բռնի, քրդերի գլխավոր Օքմուզ աղին էլ ղրկեց (որ գնա) Ղարս արնըռը[1], ու ինքը իր սարվազներովը, ղոշունովը գնաց Աբարան, որ Փամբակու վրովը, Ֆրանդ[10]) ճարածին պես, ռուսի սահմանը անց կենա։ Բերդերը բոլոր ղայիմացրին, Երևանում ու Սարդարապատումը, որքան հարկավոր էր զորք ու ջաբախանա թողին ու մնացածը հետները վերցրին... էսքան բանըն[11]) անց էր կացել), խորամանկ պարսիկքը իրենց բանը էնպես էին գողի պես սկսաել, որ մեր կողմը ոչինչ խաբար չկար։

....Փամբակու իշխող մեծավոր իշխանն

*) Կռիվն սկսվեց ոչ թե 1825-ին [այլ] հունիսին. այլ 1826, հուլիսին 16-ին Աբ<ովյանն> իր «Վերքը» գրել է անցքից 14 տ<արի> հետո։ *1826 հուլիսի 16-ին։*

[1] [բռնի]

ու զորապետն (ռուսաց) Սավարզամիրզա՝ ոչինչ կասկած չէր տանում (էջ՝ 129—130)[12]:

Հիրավի, անգլիացիները օգնեցին պարսիկներին, Կովկասի մահմեդականությունն էլ ոտի կանգնեց, բայց պատերազմը այնպես չվերջացավ, ինչպես երազում էր ու ծրագրել էր արքայազն Աբբաս Միրզան: Այդ պատերազմը վերջացավ Թուրքմենչայի դաշնադրությունով, որով Ռուսաստանի ձեռքի տակ հաստատվեցին ոչ միայն Ղարաբաղն ու մյուս՝ առաջուց գրաված երկիրները, այլև վերջնականապես Ռուսաստանին միացան Երևանի ու Նախիջևանի խանությունները—ամբողջ Արարատյան երկիրը: Այսպիսով էն օրվանից ռուսի ձեռքն անցավ Մասիսի էս կողմը գտնվող հայությունը: Մի պատերազմ[1], որ հայ ժողովրդի պատմության մեջ բաց արավ մի նոր շրջան[2], բերավ մի նոր կյանք ու եղավ իրականացումը հ<այ> ժող<ովրդի> դարավոր տենչանքի: Մեծ տենչանք, որ շատ էր սրտալի ու ընդհանուր, որովհետև բխում էր այդ ժողովրդի կյանքից ու պատմությունից:

Ահա էս մեծ պատերազմիցն է խոսում «Վերք Հայաստանին», պատերազմ[3], [որի մեջ կարծես Պասկեվիչը նոր Վարդան է հանդիսանում, խաչը ձեռքին Ներսեսը՝ մի նոր Ղևոնդ ու ինքը՝ Աբովյանը՝ Եղիշեն]:

---

*) Սխալ է, պետք է լինի Սավարսամիձե,[13]) որ սահմանպահ զորքի (погр<аничный> пост) գնդապետ Սավարսամիձե գլխավորն էր: Նստում էր Ղարաքիլիսա: Միևնույն անունը «Ս<ավարզա> միրզա», լսել եմ Լոռի: Երևի մեր ժողով<ուրդը> այդպես էր ասում:

[1] [Մեծ ու նշանավոր մի դեպք, որ շրջան]

[2] [դարավոր ազգային տենչանքի իրագոր<ծումը>, իրականացավ հայ ժողովրդի դարավոր տենչանքը]

[3] [Որ եկավ վերջ դնելու հայ ժողովրդի անլուր տանջանքին ու կատարելու նրա մուրազը—հանդիսանում է հայի [էն] հրաթափ լեզուն, որ բորբոքում է ասիական բարբարոս բռնակալության դեմ և հարազատ թարգման իր ժողովրդի պատմական տրամադրության մի հին ցանկության՝ տեսնել ռսին իրենց աշխարհքում]:

Եվ ես կարծում եմ ավելի սրա մեջ է «Վ<երք> Հ<այաստանի>» սիրված լինելու գաղտնիքը: Իսկ էն հանգամանքը, թե աշխարաբար է գրված, երկրորդական բան է: Նրանից առաջ շատերն են գրել աշխարհաբար, և նույնիսկ ավելի պարզ, քան Աբ<ովյանի> լեզուն է, և վերջապես, «Վերք Հայաս<տանիի>» հրատ<արակության> ժամանակ, <18>58 թվին, մեղանում [արդեն] աշխարհաբար լեզվով օրագրեր ու ամսագրեր էին հրատարակվում:

1825 թվականի ձմեռը Պարսկաստանի թագաժառանգը՝ Աբբաս Միրզան գալիս է Երևան 12 հոգով[1]: Տանջված, կեղեքված ժողովուրդը արդարադատություն էր սպասում: Ռուսները վախենում էին, թե արքայազնի՝ սահմանի վրա հայտնվելը, կարող է մեծ տպավորություն անել Վրաստանի ժողովուրդների վրա (Վրաստան ասելով պետք է էն ժամանակվա մտքով հասկանալ—) ի վնաս ռուսական ազդեցության: Եվ ահա ռուս սահմանապահ զորքի գլխավոր իշխ<ան> Սեվարստամիձ<են> հաղորդագրում է իր իշխանությանը.

«Теперь же он (Аббас Мирза) своим прибытием так много сделал нам пользы, что по званию своему должен бы получить подарки от главнокомандующего... Как только он прибыл в крепость Эриванскую, то и начал действовать с большим успехом в свою пользу: от Сардаря взял двенадцать тысяч туманов, также наложил на всех ханов, старшин и кевхов денежные подарки по состоянию, а их женам тоже приказал быть с приличными у его жен подарками, которые состояли в деньгах; свита его тоже брала по возможности... Посему имеет он полное право требовать награду, ибо он избавил нас от труда и успокоил народ в Грузии, а свой сделал к нам привязанным и принудил его иметь к нам доверия более, нежели к ним,— каковой услуги кажется из нас ни кто не в состоянии был бы сделать.

Вся щедрость и милость его в Эривани — пожаловал одного Измаил-бека на Абаране ханом, а армян удостоил

[1] [ռուսները վախենում են, չլինի թե պարսից գահաժառանգի՝ սահմանի վրա մեծ շուքով հայտնվելը մեծ տպավորություն անի ժողովուրդների վրա: Մանավանդ]:

тем, кто имел хорошую дочь, взял к себе в сераль, с принятием магометанского закона.

(«Кавк<азский> сб<орник> т<ом> XXI, материалы к ист<ории> персид<ской> войны 1826—1828 г. № 133, Рапорт кн. Севарсамидзе ген. Вельяминову, от 21-го дек<абря> 1825 г<ода>, № 692 — сел. Караклис <стр. 156>)

Ահա «Վերք Հայաստանին» էլ[1], որ իր պատմությունն[2] սկըսում է պատերազմի նախօրյակից, որպես սկիզբ[3] առնում է Երևանի կողքին—քանաքեռցի «Աթոյենց աղջկա Թագուհու դուրս քաշելու տեսարանը...», ու էստեղ է, որ արյունը գլուխն է տալի [ու] իր սուրը դուրս է քաշում «աստծու գառը» Աղասին։

Բայց Աղասու ու Թագուհու պատմությունը չի, որ անում է Աբովյանը։ Գեղեցիկ Թագուհին հավիտյան լռում է պարսկ<ական> հարեմի մի անհայտ[4] անկյունում [ու] կորչում անհիշատակ, ինչպես կորել էին իր նման շատ-շատերը։ Աղասին էլ սար ու ձոր ընկած թափառում է՝ սիրտը մխալով ու տկար, ինչպես տկար հայ ժողովուրդի բողոքը, ու առաջ է գալիս մեծ պատերազմի պատկերն ու պատմությունը և հայ ժողովրդի վերքի կսկիծը ու հառաչանքը[5], որ ծխում է գրքի մի ծերից մինչև մյուս ծերը։ Եվ ինքը՝ պատանի խաչատուր Աբովյանը էդ «խառը, դառը, ալեկոծյալ ժամանակին» միշտ մեջը, մին ինքն է երևում, մին իր աղեկտուր ձենն է լսվում թնդանոթների գոռոցի ու ժողովուրդների վայնասունի միջից։

<.....>Իրենց ձեռքի մեջ տանջվող ժողովրդի փրկության համար, նույնքան <1 անընթ.>, երբ աչքները հանած, լեզուները, ձեռն ու ոտները կտրած հայերը մայր[6] տաճարի զանգերի զողանջյունի վրա տողում են դեպի էջմիածին կամ դեպի քրիստոնեական բանակը։

Օրհասակ<ան> ճիգ մի ամբողջ ժողովրդի։

Հայ ժողովուրդը ազատվում էր մի դժոխքից, որ նրա համար ստեղծել էր ասիական կոպիտ ու խավար բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք (ո՛չ կյանք, ո՛չ պատիվ),

[1] [բաց է անում]
[2] [խոսք]
[3] [հանգույց]
[4] [մթին]
[5] [կոծը, որ]
[6] [որ լուր տանեն]

ո՛չ խնդիր, ո՛չ աղաչանք, ո՛չ կրոն, ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կյանք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ խղճմտանք....[14])

Պատմությունն էնպես էր բերել, որ մեծ Ռուսաստանը իր դիվիդիաներով հորձանք էր տալի դեպի արևելք, և հայ ժողովուրդը, Բյուզանդիայից հետո, դիմեց նրա հովանավորությանը:

Բայց սրա մասին ուրիշ տեսության մեջ կխոսենք ավելի երկար[15]), այժմ դառնանք մեզ զբաղեցնող առարկային:

Ահա էդ մեծ դեպքի, հայ ժողովրդի անօրինակ տառապանքի ու կաթոգին իղձերի ճշգրիտ ու կենդանի արձանագրությունն է հանդիսանում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին»: Ել ես կարծում եմ «Վերք Հայաստանիի» մեծության գաղտնիքն էդ է[1], ոչ թե էն, որ նա գրված է առաջին աշխարհաբարը, մի հանգամանք, որ մինչև անգամ առաջ է ու նրանից շատ ավելի լավ աշխարհաբարով գրում էին իրենից առաջ[2]: [Առնենք մի քանի տեղեր և դուք տեսնեք թե որքան հարազատ է պատմությանը նրա իր ժամանակը: Հարկավ], կան և մի քանի չնչին սխալներ, [որ նույնպես ցույց կտանք իրենց տեղը], որոնք, սակայն, ուժ ու զորություն չունեն նվազեցնելու էն մեծ պատմական արժանիքը, որ ունի էդ հրաշալի գործը[3]: Օրինակ, ասում է՝ 1825 հունիսին էր, որ կռիվն սկսվեց, մինչդեռ 1826 հուլիսի 16-ին սկսվեց: Ասում է՝ ամսի 25-ին (որ թվականի՝ չկա) Երևանը առնվեց, մինչդեռ <2 անգթ.> էր: Ռուսաց սահմանապահ[4] զորքի գլխավոր իշխ<ան> Սևվարսամիձևին անվանում է Սավարզամիրզա [և այլն]:

[Բայց էս] թվականների շփոթությունը առաջ է գալի, անշուշտ, նրանից, որ Խ. Աբ<ովյանը> իր հիշողություններն ու տպավորությունները գրի է առել դեպքից՝ Երևանի կռվից (1826—28) 14 տարի հետո, 1840 թվին, վերջապես 25-ին էլ գրելն սկսվելու վրա էր. իսկ Սևարսամիձևին անվանում է էնպես, ինչպես ինքը լսել է, որովհետև էդպես էր անվանում նրան ժողովուրդը ու ես ինքս էլ էդ անմտավ եմ լսել տեղի[5] ծեր մարդկանցից—Սավարսամիրզա: Կամ չէն մասին, թե Սավարսամիրզեն տեղեկ<ություն> չուներ[16]):

---

[1] [դրա մեջն է]

[2] [ինքը ականջալուր ու ականատես է եղել]

[3] [սխալները առաջ են գալի նրանից, որ հեղինակը իր [գործը գրել] հիշողություններն ու տպավորությունները գրի է առել դեպքից, Երևանի պատերազմից (1826—28) 14 տարի հետո, 1840 թ. ու մի քանի թվականներ խառնում է]

[4] [սահմանագլխի հրամանատար]

[5] [տեղի ժողովրդի, Լոռու հին մարդկանցից]

Ամեն ազգի պատմության բոլոր ազգերի ընդհանուր պատմության մի մասն է և մեկի շարժումով՝ բացատրվում է մյուսի դրությունը։

Ազգերի պատմության մեջ մեծ տեղ են տալի պատերազմներին և հերոսացնում մեծ ավազակներին. այդ պատմություններըը սովորեցնում են [երեխաներին] ու ոգևորվում նրանցով, մինչդեռ հայկական պետք է լիներ — խաղաղ կուլտուրական ժամանակները պիտի ավելի մեծ տեղ բռնեին և կռիվները նկատվեին, որպես վայրենի երևույթ ու դժբախտություն։

Եվ I, 7[17])

Ճանաչել այն պայմանները, որ առեղծել են որոշ ուժ, և ճանաչել այն ուժը, որ շարժել է պատմական դեպքերը. բնության և մարդու հարաբերությունը, առեղծում է [պատմության մեջ] օրինքներ[18])

Թափառական ցեղերի հիմնած թագ <ավորությունները> վերջացել են միշտ ու ձուլվել թեկուզ հաղթված այն ժողովուրդներին, որոնք ամուր հիմք ունեն մի երկրում (Ист<ория> чел<овечества>, I, *104*)[19]):

Ամու Դարիա և Սիր Դարիա։

[Օդը այնքան չոր է, որ շաբաթներով դուրսն ընկած երկաթը փայլում է ( )]

Ջմեռը մինչև 30° ցուրտ, ամառը, մայիսից՝ անտանելի շոգից այրվում ու խանձվում է ամեն ինչ։ [Առավոտ սովերում մի ժամից հետո—

Այդ երկիրը, որ այժմ հայտնի է Արալ Կասպյան <անունով>, ծածկված է ավազոտ անապատներով ու աղադաշտերով. ու նրա մասերը նշանակվում են այսպիսի անուններով — սև ավազ, սպիտակ ավազ, կարմիր ավազ, դեղին ավազ, սուված անապատ և այլն

Գետերի մեծ մասը տեղ չեն հասնում ու կորչում են այս ավազների մեջ, լճերն աղի են — անկարելի է խմել, գործածել։

Եղած բուսականությունը օշինդր, փուշ ու галофит.

[1]Երկրի միայն 10 % է պետքական, էն էլ՝ լավ մշակելու պայմանով։

Եղած օազիսները, ուր կարելի է ջուր խմել ու անասուն պահել, ժողովուրդն անվանում է «աստղեր» (յուլդուզ)։

Ահա այս չոր ու աղանձված երկիրը իր լերկ ու աղքատ կուրծքը բաց արած, դեղին երեսը դեպի արևմուտք, նայում է Կովկասի դալար ստորոտներին, Եփրատի ու Տիգրիսի ճոխ հովիտներին։

Նայեցեք բուսաբանական քարտեզին — մոնղոլական ու թուխարական անապատները հետևում են իրար մինչև Հայաստան և մինչև Ուրալի կանաչ արոտները։ Այս է չինգիզխանների, լենգթեմուրների, աա<տ>իլլանների ու... հայրենիքը։

Ահա այս անապատից են դուրս փչել սուված օրդունները, <....> նրանք[2], օազիսների մեջ ժամանակի ընթացքում բազ-

[1] [Միայն տեղ-տեղ]

[2] [ժողովուրդը]

մանալով, դուրս են հոսել նրա չոր ափերից ու հեղեղել շրջակա երկրները, ուր անասունի համար արոտ կա ու իրենց համար թալան։

[Ահա այս անապատներում, օազիսների վրա բազմանալով ու իրար հրհրելով, իրենց չոր երկրի ափերից դուրս են փչել սոված օրդունները, իրենց սոված հոտերով դեպի դալար արոտատեղեր ու շեն երկիրները, հեղեղելով ու ոտնատակ տալով երկիրներ ու ժողովուրդներ։ Եվ հեղեղի նման էլ հոսել են դեպի ցած, դեպի հեշտ ճամփեն։ Հին ժամանակներից նրանք շարժման եկել են ու զարկել Պարսկաստան, և Պարսկաստանը միշտ հանդիսացել է պարիսպ մարդկային այդ հեղեղի առջև։ Հյուսիսից ու հարավից նրանց պատում էին մի կողմից անմարդաբնակ սարը տարածություններ, մյուս կողմից երկնամերձ Հիմալայի շղթան իր ճյուղավորություններով։ Եվ ահա նրանք հոսում էին դեպի Չինաստան ու դեպի Արևմուտք։ Նրանք են դրել և պարթևական թագ<ավորության> հիմքը (250) (սելևկացիներից հետո)]։

Չինաստանը ստիպված էր նրանց ճամփին քաշել իր մեծ պարիսպը։

Իսկ մյուս ծայրից Կովկաս և Ուրալյան շղթայի[1] ու Կասպից ծովի արանքով կամ Կովկասի վրայով Դարիալի ու Դերբենդի կիրճերով՝ հետու դեպի Արևմուտք։

Հայոց պատմությունը սրանց մասին այսպես է ասում.

<....>

Կանգնյալ ի նեղ և ի դառն ժամանակի խստությանց <?> «...հարուածք յանակրնկալ վայրաց՝ և ի ծաղաց աշխարհի յայլայլեզու և յայլատարազ ազանց, որովք տառապեալ ազգս մեր՝ որպէս և ամենայն

[1] [թռնանցքներով]

արևելեայք, իբրև ի հնձանս հարան և տրորեցան։ Այսր նորոգ հարուածոց սկիզբն եղև ի զորաց սկիւթացւոց՝ այսինքն՝ թաթարաց, [որք յարձակեցան բազմութեամբ բազում անգամ յաշխարհ մեր՝ ի զորանալ անդ ճինկիզ Խանին, մանավանդ յետ մահու նորա]։ Այ լգիտել արժան է, զի ազգք սկիւթացւոց, որք կոչին թաթարք, բազում են, և ի բազում ցեղս և ի թագաւորութիւնս բաժանեալ, և ունին այլ և այլ անւանս. ոմանք ասին քերաթիք կամ ղալմուխք, ոմանք մողոլք կամ մուղալ, խատայք կամ հիւթայիք, ոմանք քոքոնորք կամ սիփանք. այլք նայիմանք, Թիպետք (Տիբետ).[20]) թուրփանք, թուրք, թուղարք կամ թուխարիք. խարախատայք, խարախրումք (кара корум)[21]) խաղախք, մաղրութք, հոնք կամ խուչախք, որք և ասին վերին քուշանք և այլն. զորս առ հասարակ կոչեմք սկիւքթացիս կամ թաթարս։ Բազումք ի սոցանե ընդ ժամանակս ժամանակս բազմութեամբ հատուածեալ յայլև այլ աշխարհս, մանավանդ յԵւրոպիա, ևս ի պարսս և ի հնդիկս և ի փոքրն Ասիա և յայլ տեղիս, և ըստ իւրաքանչիւր ազգաց փոփոխեցան ի պէս պէս կրօնս, և զոմանս փոխարկեցին յօրէնս իւրեանց...» (Զամչ., Գ. գլուխ ԻԶ 197)[22])

[ու բազմանալով հարևան երկրներում, հետագայում (7 դ<ար>), սաստիկ հեշտացրին ու օգնեցին արաբական հաղթանակներին, երբ էդ ցեղը կրոնական [հավաքական] ֆանատիզմով վեր կացած իր հայրենիքից դուրս խուժեց աշխարհքի վրա՝ տիրելու և

արաբ.
լեռնական
Հռոմ. պատմություն, մեծ պետ<ություններ> պատ<երազմի> դաշտ
Երեք մեծ մայր ցամաքների մեջտեղը, ուր նրանց ճանապարհները գալիս են միանում
(III, 248 վերջը.), 249,[23]) ուր պարթևական գոչած հեծելագնդերը [զորքը] Հռոմի լեգեոնների հետ Միջագետքի արևակեզ դաշտերում։
(Հանգամանք, որին զոհ գնացին շատ ազգեր, նրանց թվում և Իսրայիլը) 269—3[24])

Հայաստ<անի> ընդհ<անուր> դրությունը և ապա սելջ <ուկների> և արաբ <ների> մասին հայոց պատմագիրները։

սրով ու հրով տարածելու մի ճշմարիտ աստծու կրոնը՝ իսլամը։ Ու նրանց առաջին հարվածը իջավ Պարսկաստանի վրա. ծեր[1] Պարսկաստանը չդիմացավ անապատի հովիվների[2] սրբազան ոգևորության թափին[3], ընկավ ու խորտակվեց [էն] հզոր պատնեշը, որ միշտ կար Արևելքի բարբարոս ցեղերի դեմ։

Ու դեպի Տիգրիսի ու Եփրատի սրբ<ազան> հովիտները բացվեցին բոլոր ճանապարհները կոտորածների, կողոպուտների, ավերածությունների և ամեն անլուր ագետների, ինչ որ տեսավ[4] էդ երկիրը էն օրից սկսած։

[5]Դրանց մեջ էր[6] Հայաստանը։

Եվ նա դոնվելով այդտեղ, ուր երեք մայր ցամաքների — Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի Ճանապարհները գալիս են միանում — էն պիտից եղել է ասպարեզ համաշխարհային մեծ դեպքերի, ընդհարման, պատերազմի դաշտ՝ հզոր ազգերի ու մեծ աշխարհակալների։

Այդտեղ են արշավել ու կռվել մեծ Ալեքսանդրի ֆալանգները, հռոմեական լեգեոնները իրենց արծիվներով, պարսկական բանակները իրենց փղերով, բյուզանդական գունդերը խաչապսակներով, արաբական [...], թաթարական օրդուները իրենց ձիու պոչից շինած դրոշակներով, խաչակիրների բանակները՝ մինչև ռուսական ու տաճկական դիվիզիաները։ Էդ երկրում են իրար հանդիպել, միմյանց զարկվել կիսալուսինն ու խաչը։ Այդտեղ են ճակատ ճակատի իրար դեմ դուրս եկել կուլտուրական ժողովուրդ-

թևև նավերի, շոգենավի դյուտով էդ ճամփեն կորցրեց իր առաջվան մեծ նշանակությունը

[1] [ու հին]
[2] [որդինելի]
[3] [զարկին]
[4] [գիտի]
[5] [Հայաստ<անը> դոնվում է] [ընկած է]
[6] [Այդտեղ էր]

ներն ու Արևելքի թափառական նոմադ ցեղերը։

[Սրան եթե ավելացնենք Կովկասի լեռնականների — ալանների... անընդհատ արշավանքները, որ տևում են մինչև 19 դ. սկիզբները, ապա՝ կրոնի հակառակություն] <....>

(Խաչն ու կիսալուսինը.)

Հանգամանքներ կան, որ ընդմիշտ, և կան որ երկար ժամանակներով ազդում են ազգերի ճակատագրի վրա։

Օրինակ՝ մի ժողովրդի հայրենիքի աշխարհագրական դիրքը, ծավալով ու այլ բնական առանձնահատկություններով, միշտ ազդում է նրա[1] կյանքի վրա և միշտ բացատրում է նրա պատմությունը, թե ինչու այսպես եղավ և ոչ այլապես։

[Ազգի քանակը]

[Նրա դավանած] մեծ — կրոնական գաղափարները, որ ապրում ու իշխում[2] են երկար դարերով <....>

(լեռնոտ երկրների ժողովուրդները աշխարհակալ չեն եղած, ավելի պահպանողական են եղած միշտ ու [ավելի հաստատ նըստակյաց]։ Դաշտային վայրերինը, ընդհակառակը, և ծովափներինը — ծովն ու դաշտը բաց տարածություն է, որ քաշում է նրան, հետաքրքրում հեռու հորիզոններով. իսկ լեռնականի համար լեռների շարքով աշխարհքը վերջանում է արդեն և նրանց մեջն է ամփոփված ամեն լավ բան)։

1) Ի՞նչ հիմք ունի պատմության մեջ, և

2) ի՞նչ դրության մեջ էր էդ պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը։

---

[1] [ազգ<ի>] [ժողովրդի]

[2] [տիրում են]

Այժմ տեսնենք, թե ի՞նչ էր այդ դրությունը և այն ցանկությունը և ինչ հիմք ուներ նա հայի հոգում. որքա՞ն էր բխում նրա կյանքից ու պատմությունից։

Այժմ ո՞րն է էն պատմական տրամադրությունը, որ այդքան հասկանալի ու [սիրելի] ցանկալի էր ամենքին և որ բխում էր հայ կյանքից — պատմությունից։

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՒԻՎԸ ԵՎ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԻՐԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նյութերը.

1. «Վերք Հայաստանի». Հրատ<արակություն> Բաքվի Հ<այոց> Կ<ուլտուրական> ընկ<երության>, 1908 թ., համեմատ<ել> հնի հետ, 1858 թ. Թիփ<լիզն>[1])

2. Кавказский сборник[2])

3. Утвержд<ение> русск<ого> влад<ычества> на Кавказе[3])

4. Кавказск<ая> война. В. Потто, т. III,[4])

5. Акты[5])

6. [Эзов] Сношен<ие> Петра великого <с армянским народом>, Эзов[6])

7. Հայոց կաթողիկ<ոսության>. Ա. Երիցյան[7])

8. Դիվան հայոց պատմ<ության> Գյուտ ք. Աղանյանց[8])

9. Հաջի Բաբայի արկածները. Մորիեր[9])

10. Ճանապարհորդութիւն ի Հայս. Մեսրովբայ Թաղիադեան, հատ. I, 1847, Կալկաթա։

«Վերք Հայաստ<անին>» գրված է պատերազմից — դեպքերից 14 տարի հետո, 1840 թվին, նրա համար էլ մի քանի թվեր խառնում է. օր<ինակ> ասում է հունիսին էր 1825, որ սկսվեց կռիվը, մինչդեռ 1826-ի հուլ<իսի> 16. ասում է ամսի 25-ն էր, որ Երևանը առնվեց։

Ինքը ականատես է եղել շատ դեպքերի։ Դարաքիլիսի քոչվորի հետ է անցել Դվալ ամբով Լոռի ապաստանելու և պատահմամբ է ազատվել Խլղարաքիլիսա տաճկաստանցի տերտերի հետ սպանվելուց, որի հետ պետք է դնար, եթե դերձակը շորերը հասցներ։ Տես և 170 ծանոթությունը։[10])

Անուններից երբեմն էնպես է ասում, ինչպես ժողովուրդն է ասում — Սեվարսամիձնին ասում է Սավարսամիրզա։ Էդպես են սեպհականում Լոռու ձերերը։

«Վերք Հայաստանին» իրեն նյութ է առնում պատերազմի քեմի աջ թևը, աջ կողմը, ճակատը, II, 57 կոց <եբու>[11]: Էդ մասի քրիստ<ոնյա> [(հայ)] տարրն էլ ամենից ուժեղն էր. 68.780 դինված քրիստոնյաների դեմ 35.000 դին<ված> մահմեդ<ական>, (կենտր<ոնում> 54.600 թ<ուրք>, 19.400 քրիստ<ոնյան>, ձախը՝ 61.150 թ<ուրք>, 6850 ք<րիստոնյա>:

1828 մարտի 21 կայսեր հրամանով Ռուսաստանին միացած Երևանի և Նախիջևանի խանութթյունները կոչվում են հայկական նահանգ (Арм<янская> область):
(К. сб. XXIX, 160)[12])

Հայերն ազատում են գերմ<անացիներին>, XXII, 113, Коцебу [13])

ՀԱՅԵՐԻ (ԵՎ ԿՈՎԿԱՍԻ) ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՆՄԻՋ<ԱՊԵՍ> ԱՌԱՋ

«Երեխա եմ էլել՝ որ էն տեղանց (Երևանից) դուս եմ էկել, ամա էսօր էլ որ մտածում եմ, թե Զանդվի վրովը և այլն, վախենում են խոսել, այգում քանի անգամ իրար վիրավորել են իրենք ու պարսիկները» 92: [14])

«Երևանի բերդը, լիքը անմեղ զոհասպաններով, ուզում են ուրացնեն քրիստ<ոնեությունը>: Թուրքի դիպած հարամած է լինում:» Եվ այլն. 93—94. [15])

Աղջիկների դուրս քաշելն ու տանջելը. 98 [16]) Հայի Բարա I, 138 [17])

Մարդկանց խեղանդամ էն անում, պռոշ, լեզու, քիթ, կուռը կարում: 99:[18])

Ժողովրդի մարդը պատմում է իրենց դրությունը, հոգևորականն՝ իրենց, 124 և

Перейдя Кавк<азскую> линию вы не встреч<аете> почти нигде постоянной оседлости и т. д. Кавк. сб. т. I, 129, до и жизнь, и страховой.[23])

Այնքան օտարացան ի քաղաքաց և յընչից իւրեանց և այլն. մինչև ճոպաքաղ առանէին զմոլորեալս անապատի.

Դիւան հայոց պատմ<ութեան>, Դ. Ղուկ<աս> կաթ<ողիկոս> էջ 717: [24])

Հայոց եպիսկոպոսներին փակում են, որ կոտորեն սուլամահ (իբրև դատաստան),

այլն 128. [19]) Հաջի Բաբա. I, 170:[20])

Հայաստան աշխարհքը շատ վախտ էր նեղութեան, ավերման տակ ընկել և այլն, 185, [21]) հայերին սպառնում են, որ ոսից ձեռ քաշեն:

տանջանք. իսկ կաթողիկոսին ծեծում կամ սպառնում խեղդել, որ ոսաններին համակրում է: Հայոց կաթ<ողիկոսության>. Երիցյան: Ա. 181. և 227: [Պարտք] փող էին պահանջում շարունակ. 185 և այլն[25]):

Անօրեն պարսիկք ու Թուրքերը օրը ցերեկով վրա են տալիս, թալանում, սպանում, վերում և այլն. 191 [22])

Նույն պատմ<ությունը> Հաջի Բաբայի մեջ, Մարիերի, I, 170 (Հասան խանը), Սարդարն ու դահճապետը կարծես թե և այլն (Հասան խանի մասին է խոսքը)[26]):

Ճան<ապարհորդութիւն> ի Հայս, Թաղիադեան, I, 29 կաթ<ողիկոսը> շարունակ գնում ու ազատում էր հայ գերիներին[27]):

Եփրեմ կաթ<ողիկոսը> Երևանի Սարդարից փախչում է Շուշի, ճամփին քնում է այրում, ձմեռը, 1821 թվին. Թաղիադեան ճանապ. I, 274 և այլն[28]):

Աբբաս Միրզան Երևան զանազան պատրվակներով կողոպտում է և իշխաններին և ժողովրդին 21, 152[29]) իր մարդիկն էլ նույնպես.

Ար<բաս> Միրզան երևան. կոզոպտում է 21, 156[30]*).*

Ար<բաս> Միրզան դժգոհ է Սարդարի ընծայից (1000 թուման), XXI, 159[31]*)*

ՌՈՒՍ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽՔԱՆ ԿՈՒԼԸ

Աբարանը ամեն տարի էր դուրս գալիս Սարդարը և այլն, ուստ տահմանապահ գլխավորին հրավիրում երգում, սեր և պարգևներ տալի և այլն. 140 [32])

Հայերը կասկածում են և պատրաստություն են տեսնում. նույն:[33])

Մեկ դաստա սալդատ ու մի քանի զապախ, որ գնացել էին Ճամփեն պահեն, ջարդված յարալու-փարալու ետ եկան. 191:[34])

Армяне, боявшиеся разгрома и т. д. Потто I, 34[37])
XXI, 112[38])
XXII, 108 Коц<ебу>[39])
XXIII, 65[40]).

XXIV, 4,[41][42])
[XXII, 110, Коц<ебу>][43]).

Մեկ օր էլ էսպես Նազի խանը վրա տըվեց, Ղշլաղն էրեց ու Զարաքիլիսու վրա էկավ. Զարաքիլիսից փախուստը. 191:[35])

Ու նրանց ազալարները էնպես էին Սավարզամիրզի սիրտը ձեռք զցել, որ ինչպես ուզում էին էնպես էին շուռ տալիս—140[44])
մի մասը
[սխալ][45])

К. сб. XXIII, 68, 91, 92.[36])

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼԱՌԻՆ ՈՒ ՍԿԻԶԲԸ

Потто. *1,35*[59])

Ժամը դեռ կես չէր էլել, Տարայ-Հրոցն աշխարհքս բռնեց. ուսանները գալիս են, և

Պատերազմը հանդարծ սկսվեց, բայց ուսանները անտեղյակ

պարսից կառ<ավարութիւնը> հայ ժողովրդին քշում է, հեռացնում Պարսկաստան։ 131—158.[46])

[Էս ժամանակին էր→Հունիսի և այլն, 138.][47])

չէին։ Էդ լավ գիտեին և Երմոլովը (XXI, сб <орник>) և Մազոովիչը (32.11 авг. 1825[60]) մայոր Իլինսկի (рап<орт> ген<ералу> Ермолову, 17 июня 1825. № 417 стр. 38)[61]

" Էսքան բանն անց էր կացել, խորամանկ պարսիկը և այլն, 139.[48])

...Փամբակու իշխող մեծավոր Սավարզամիրզա կասկած չէր տանում, և այլն. 140.[49])

որ ասում է Թալիշի ժողովուրդը պարսից հարձակումից վախեցած անտառներն է փախել, և մինչև անգամ որոշում է [էդ] հարձակման ժամանակը—(ուղիղ մի տարով սխալ)

Ո՞վ չգիտի, որ էս հազարին ինչ ժամանակ Հասան խանը և այլն, մեր կողմը ամենևին խաբար չունեին. 186։[50])

20 рап. кн. Мадатова. ген. Вельяминову, 10 авг. 1825. сел. Чанахчи. стр. 44. К. с. 1.[62])

Էս ժամանակին էր՝ Հունիսի —ին 1825-ին, որ արինկեր Հասան խանը [վեր] և այլն, 138.[51])

21 рап. штаб. кап. Черноглазова подполк. Швецову, 6 авг. 1825 стр. 45 К. С. XXI[63])

Սխալ. [չէին սպասում]. К. сб. XXI, стр. 73[52]) Սեվարսամիձեի ռապորտը. նույն էջ՝ 80, 83.[53]) զորքն ուժեղացնում է դեռ մի տ<արի> առաջ. 84[54]) [պետք է 1826 լինի Հուլիսի 16] 94, 134, 135,[55]) ժամանակ են վատատում. 149, 151, 154.[56]) XXII, 45, 46, 48[57]) պետք է լինի 16 Հոկ<տեմ>բեր 1826.

[Պիտի լինի Հուլիսի 16, 1826] 49,96 և շատ ուրիշներ, 97

Կայսրը չէր հավատում պարսիկների հարձակման հնարավորությանը. XXI, стр. 50—51. Письмо графа Нессельроде к ген<ералу> Ермолову 2 сент. 1825.[58])

Կայսրը հաստատ խաղաղ<ության> է ուզում, XXI, 123,[64]) *XXII, 52, 62*[65]) Потто. Кавк. 1,20[66])

К. Сб. *1. 9. Հանկարծ հարձակումը:*[67])

Рап. Кн. Севарсамидзе. ген. Вельям 26 августа, 1825. с. Караклис, стр. 51.[69])

կովի պատրաստությունների մասին. տեղեկություններն ստանում է Սարդարի մոտիկներից:

XXIV, 36, 39 և առաջ, որ գիտեին հուլիսի 10 և այլն, սկիզբը:[70]) *XXII, 3.* гр. Симонич *պատմ<ական> տեսություն:*[71])

Մյուս կողմից շարունակվում է սահմանագլխի որոշման աշխատանքը. стр. *53 (XXI) և 54*[68])

Սահմանի առիթով պարսից ներկայացուցիչը (XXII, IV, 37) հանդուգն պատասխ<անում> է գեն<երալ> Վելյամինովին. եթե ռմներդ մեզ հետ չեն ուզում բարեկամ լինել, մենք էլ դրա կարիքը չունենք:[72])

Երմոլովը հայտարարում է (հանկարծակի պատ<երազմ>) XXIII, 68.[73])

Հուլիսի 16-ին (Խլղարաք<իլիսա>) աջ թևը շարժվեց պարսից, [5000] Հասան խանը, 18-ին կենտրոնը Ղարաբ<աղ> 60.000 ղ<ինվոր> 30 թնդ<անոթ> Աբ<աս> Միրզա։

Սարդարը Սևանի հյուսիս արևելյան սահմանի վրա է վիճում (թե արտատեղ շատ ունեն), որովհետև այստեղից Ղազախ. Շամշադնի թուրք աղալարների հետ և նրանց միջոցով Դաղստան<ի> հետ հարաբ<երություն> կպահեն. XXI, 160։[74])

Կովկասի մահմեդ<ական> ժողովուրդներին միշտ Պարսկ<աստանը> աշխատում էր դրդռել ռուսների դեմ և էս պաշտոնը դրված էր Երևանի Սարդարի վրա։ II, 11, Կոցեբու։[75])

Որ պատերազմ սպասում էին, բայց չէին իմանում, թե երբ կսկսվի։ XXII, мат. 38—39,[76])

XXIV, 63, Շահզադեն, առիթը։[77]) XXV, 99, Отчего война возгорелась? *Օզուրլու խանի ցուցմունքը։[78])*

Աբ<աս> Միրզան Բաքվի խանին. XXVII, 107. էգուց մեծ զորքի եմ սպասում, որով պետք է գնամ Թիֆլիզ, բայց առաջ դեռ Ելիզավետպոլը կառնեմ։[79])

Տե՛ս «Վերք Հ<այաստանի>», 264[80])։

ԹՈՒՐՔԵՐԻ, ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ով էս սհաթը Երևան և այլ—Ղազախ Բորչալուն դոնմիշ էր էլել. հայերին թալանում են և այլն 139.[81])

Շահից, Սարդարից ֆարման-ֆարմանի [նեվի<ց>] վրա էր գալիս, բայց հայոց արդար սիրտը, ուղիղ սերը ռուսաց հետ ունեին և այլն. 186։ Եվ սպառնալիք։

Ինչ որ պարսից կովի ժամանակին հայք արին և այլն. 186.[82])

Ով չի զարմանալ, որ սրա ախպեր Գալուստը—գերի է, խոստացան շատ բան, բայց մահն աչքի առաջն առավ ու թղթերը տվեց Մադաթովին։[83])

Թուրք փաշաների համակրանքը հայերին. 261.[84])

Թուրքերը ցավում են.[85])

XXII, 112, Коцебу *(Ելիզավետպ<ոլի> մասին) նույնը ինչ որ Ղազախ Բորչալու։[86])*

XXII, 108, Коц<е-бу>[87])

XXII, 108, Коце-б<у>[88])

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԿՌՎԻ ԺԱՄԱՆԱԿ

Ով էս սահաթ Երևան մտներ և այլն 139.[89]*) թուրքերը ջամդաքակեր գիլի պես և այլն,—Լոռու ձորերում ժող<ովրդի> դրությունը 192,*[90]*)*

Հասան խանը Ղարսա հայերին քոչացրել՝ ուզում է Երևան տանի, ճամփին Անու դզումը Աղասին (հայերը) հարձակվում են խլում: 261.[91]*)*

Հայերը Տաճկ<աստանից> անցնում են Ռուսաստանը, թուրք փաշաները լավ են վերաբերվում, 261,[92]*)*

Հասան խանը ուզում է Լոռու գյուղերը քանդի. XXIII, 167[93]*)*

XXVIII, 169[94])

XXVIII, 2. Сев. *Ներսես. 112* (этапный пункт.)[95]*)*
*Красовск<ий>
Էջմիածին, XXII, 13, Кр. *19, ինքն էլ է տեսնում դժվարությունը. 24, 26 37.*[96]*)*

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲ<ԵՐՄՈՒՆՔԸ> ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏ<ԵՐԱԶՄԻ> ՍԿԶԲՈՒՄ

Բարեխնամ կառ<ավարությունը> տեսնելով որ աշխարհին էսպես և այլն—Փամբակ, Շորագյալ, քոչեն Լոռի: Ժող<ովուրդը> քոչել չի ուզում, սրից—սովի ճանկն էր ընկնելու:

Պարսիկները մոտենում են մեծ ուժով: Հրաման է գալի կառ<ավարությունից> քոչել: Այրում են տները:

Ինչ ժամանակ ռսի ժամի մուխը տեսան, որ մեծավորը իր ձեռովը կրակ տվեց, և այլն Դվալով քոչում են Լոռի:

XXII, 111. Коцеб <у>[100]*)*
Լոռըցիք հաց են տալի փամբակցիներին և շորագյալցիներին XXIII, 147[101]*)*

XXIII, 92. Երմ <ոլովի> հրամանը. [102]*) թողնել Փամբակը, որ մեզ ոչ մի օգուտ չունի, [վատ եղա-*

---

*) *Լենդթեմուրի թուրը, որ Երևան ընկավ Կրասովսկու ձեռքը, զրկեց կայսեր.* XXII, 61, Красовск<ого>[97]):

Դեռ կիսաճամփի էինք, որ Նալչի խանը մտավ Ղարաքիլիսա։ Նկարագիր։ 192.[98])

(Ինքն անձամբ է տեսել աչքով. էջ 170. ծանոթությունը)[99])

Գլխ<ավոր> պահեստը Ջալալօղլի, երկրորդը՝ Շուլավեր։

նակին] սեպտ<եմբեր>ին՝ <1 անընթ.> Բղավզան անանցանելի կդառնա։ Անցնել Ջալալօղլի և 96, [103]) հայերը կարող են ձորը մտնել. XXII 110 Коцеб<у>, [104]) XXIV, 11[105]) XXII, 121 Коц<ебу>[106])

Շուլավերից Աղղի-Բեյուկ 30 վ<երստ> 10—12 օրումը զոռով էին անցնում պաշտ<պանության> XXII, 5. Красовский[107])։

[108]) ԲԱՆԱԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էս ժամանակին էր և այլն. արինակեր Հասան խանը... ոտը բարձրացրեց, որ գնա Պե<տերբուրգն> էլ առնի, ավերի Թիֆլիզն և այլն. Նադի խանը Ղազախու բերանը, Օքյուզ ագին Ապարան—Փամբակ Սարդարաբադ ու Երևան և այլն։ 138—9[109])

[Кавк. Сб. XXIII, 36][110])

[Ադաատ պատմությունը նման Հաջի Բաբա. էջ 138 հ. I.] [111])

ՍՂԱՍԻՆ

Սղասին Ղարաքիլիսա<յում>. Կնյազ Ս<եվարսամիձեն> հույս է տալի, մի կերպ Սարդարի սիրտն առնի, չունքի շատ բարեկամ էին. 214։ [112])

Քաջ լսրցիք էլ որ իմացան, էլ դինջություն չունեին. տարան իրենց մեջ, պատիվ տվին. մի ամսաչափ էլ էստեղ մնաց։ [113])

Ապացույց, թե ինչպես էին ուզում ռուսները հարաբ<երությունները> չիչանան պարսիկների հետ։ К. сб. XXI, X, 76. Резолюция Ермолова. [121])

«Քաջերի կյանքից», «Հորիզոն». ինչպես լսած եմ[122])

Աղասու՝ Թագուհուն ազատելու պատմությունը։ [114])

Հայր սրբազան... մի հայ աֆիցերի սպանեցին իր հոր հետ.... Աղասին էր, որ Կրասովսկի գեներալի հետ և այլն. 277—8. [115])

Մելիք Սահակն էլ թե այդտեղ էր, ասում է ինքը Կրասովսկին. [116])

Էջ 267, նշանածը ռսի հողն է բերել։ [117]) 193, էս խառը, դառն, ալեկոծյալ ժամանակին. (1826 թվին — հուլիսի) 5 տարի էր) Հասան խանը*։ [118])

Ուրեմն 21 թվականին է Աղասին փախել. Աբովյանը եղել է 15—16 տարեկան.

Աղասին. 201 [119])

[22] 253. հուլիսի 23-ին 1821 էր, որ հայոց երևելի հին քաղաքն Անի <....>[120])

Հաջի Բաբա I, 138[123])

Красовск<ий> Коль скоро և այլն XXII, 32 Красовск<ий>33[124])

К. сб. XXII, 33...[125])

ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՊՔԵՐ ՈՒ ԴԵՄՔԵՐ

Կարելի ա թե Երևան էնպես և այլն, Սարդարն (Հյուսեին) ազնիվ, ախպերը՝ Հասան Խանը՝ գազան. Վերք Հայաստ<անի>, Բաքվի, էջ 91.

XXI, 132, [135]) Սարդ<ար> ցած. [առաջ] վախկոտ, 136 [136])

... Гусейн [(хан. упр<авляющим> Эриван<ским> ханством... Сардар был человек и т. д., брат же его Гасан хан... горькая пьяница. (Утвержд<ение> русского влад<ычества> на Кавк., IV, т. ч. I. стр. 13)[137])

Էս միջոցումն ա ըլում, որ Նախչվանու քոռ Քյալբալի խանը և այլն — Ղարաքիլիսա ընդհարվում է <1 անընթ.> ռուսների հետ և ետ գնում։ 90. [126])

Հաջի Բաբա I, 171. Հասան խան Սարդարի նկարագիրը և 172. գինի խմող։ [Հաջի

*) Ինքնագրում՝ Սար<դար> խանը։

Բաբան տեսնել.]
Հայի Բաբա I, էջ՝ 180 և այլն:

Օվագիմի պատմությունը. [127])

Օթարի (արգվեցի) ու ագարակի Տեր-Սահակի պատմ <ությունը> և փաստաթղթերը:

Խլղաթաքիլիսու պատմությունը. 148—159, 168—[128])

Акты К<авказской> Арх <еографической> К<омиссии>, VII т. стр. 252.

Ներսեսի նամակը Պասկևիչին:

Սարգիս Եպիսկ<ոպոսը> ականատես է, թե պարսիկներն ինչպես էին տանջում (կոտորում) հայերին: 60 հոգի է ազատում: Գերին 1500 է:

Բայց էջ 158, [129]) Գյումրու դպիցն ասի բալաբան և այլն. սխալ է. ասները ուզեցին գնալ, վախեցին եւ դառնան, К. С. XIV, 2, [130]) XXIII, 14, 36 [131])

К. С. XXII, 106, [138]) Коцебу, 123, [139]) XXIII, 102 [140]) XXIV, журнал и. т. д. [141]) Потто. К. в. I 41.[142])

«Բորչալվի թուրքերը կապիտանին խաբեցին, եւ սվին. Վ. Հ. 164 К. С. XXIII, 103 [132])

(Հասան խանի) էն թաք-թաք ասամնները, մերքի տեղ՝ չանեն, և այլն. 163: [133])

Հասան Խան — հաճախ զորքը թողնում փախչում է.

Եկատերինենֆելդի պատմությունը, 189[131])

Հայի Բաբայի պատմ <ության> մեջ նկարագիրը, էջ 171,[143]) XXVIII, և Աբ<աս> Աբադ 139, [144]) XXII, 114 Коцебу, նույն 125—6[145]) (XXIII, рап <орт> Ком<андира> Б<елый> Ключ 119, 122, 124, 125 հույն, վր<ացի>, հայ) բոնած քրդե

ցուցմունքը XXIII, 126—7։[150]) Պրիստաւ Օրբելիանու ցուցմունքը XXIII, 132 Երմ<ոլո-վը> Պետերբ<ուրգ> 167[151]) 13-ին տեղեկ <...> XXIV, 13, 16[152]) XXIV, 225, 237[153])

Սվանդուլ<ի> խանի բարութիւնը 195. և 196, 153—54[146])

Աղաստ՝ ֆարրաշին սպանելուց հետո դյուղի դրութիւնը։[147])

[Իւահակ Մելիքով (որի տղեկա վրա պատակված էր. Ալեքս<անդր> Թագ<ավորը>)][148])

XXII, 9, Красовск<ий>, 14[154])

Սարդարը Սեվարսամիձի մասին 139, XXI, [149])

Երմոլովը Սարդարի դեմ 149, XXI[155])

Պարսիկ<ներին> չի կարելի հավատալ— 151 [157])

141, XXI, [156]) XXII, 125, 138,

Սեվարսամիձեն — Միշտ իր մասին գրում է (Երմ<ոլովին>) «Как честный офицер».[158])

Սխալ անվանվում է Սավարզամիրզա. (Թուրքերը կանչում էին «Փամբակու կընյազ»)։[159])

Թուրքերին առանձին ուշք էր դարձնում (XXIII, 91) հակառակ Երմ<ոլովի> տրամադրութեան։[160])

Գրիգոր եպիս<կոպոսը> շորերը փոխած (Ղազախեցի)։ Շամշադինի մովրովը չկարաց Մատուշկի կամուրջն անցնի, եպիսկոպոսն անցավ. Սիմոնիչին իրենց տանը պահեց երկար. կառ<ավարութիւնից> ստացավ — [161])

XXIV, 230, 231 [165])

XXIV, 123, Մարտ <իրոս> եպիս<կոպոսը> Տաթևի. [166])

...Գնդը երբ որ պարսիկք քանդեցին 70 տ<նից> ավելի էր. [162])

Էս միջոցումը Ալեքս<անդր> Վալին ու

Զուրաբ խանը Շամշադինը կոխեցին ու քիչ մնաց տակն ու վրա անեն։ Գր<իգոր> եպիսկ<ոպոսը> արգելք հանդիսացավ, ու արժանացավ արքայական թոշակին. 186—7. [163]) (Դուլալի, Հասանսու, Թոուզ (Շամքոռ, Զիգամ. IXVI, 108, Տաթևի թալանը։ [164])

XXII, 18—19 Симонич [167])

1827 թ. ձմեռը (Երևանը տիրելու տարին) Երևանա Սարդարի պալատում սիրողները առաջին անգամ խաղացին Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիան՝ «Горе от ума» հեղինակի ներկայությամբ։ Потто, III, 610* . [168]):

ԻՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՑ [170])

Աստված կյանք տա էն ծնողացը, որի որդիքն ինձ մոտ են և այլն. 102[171])

Դեռ վարժատան աշակերտ էի և այլն, Աղասին Թիֆլիզ մտավ. 267 [172])

Դու էլ սրանց հետ դնացիր, սիրելի եղբայր իմ Մոսի, իմ գառնուկ ախպեր. և այլն. 136. [173])

Էս ժամանակին էր՝ վարժատնից դուս էկա և այլն 170. [174])

Իմ տան տերը դերձիկ էր, հայ էր բերում 193. [175])

Թուրքերը ջամդաքակեր պիլի պես գլխներիս 192.[176])

(Հասան խանի միրզան — գրագիրը հայ էր՝ Թաթոս անունով և ոտաններին փողով հայտնում էր պարսից գաղտնիքները. Акты К. арх. К. т. IV, 698) [178])

(Դեռ վարժատան աշակերտ էի)[177])

Դեռ վարժատան աշակերտ էի ու ինչպես էսօր կենդանի է մտքումս՝ Աղասին ինչպես մտավ Թիֆլիզ։ Երեվելի իշխանի որդի չէր, որ ետան մեծ փառքով ներս բերեին, բայց ով նրա և այլն։ 267 [179])

191, ոչ ցերեկն ունեինք քուն, ոչ գիշերը. [180])

---

*) Նաղար Ալի խանի պատիժը. XXII, 25, Симонич[169])

92. երեխա եմ էլել, որ էնտեղանց դուրս եմ եկել, ամա <...>[181])

Լենգթեմուրի թուրը Կրասովսկին ղրկում է կայսեր.[188])

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԸ

Երևան թեվին տվեց, երբ ռուսաց զորքը իր մեջը մտան և այլն 269. ժողովրդական երգեր.[182])

Ամսի 25-ն էր. 270. բերդի առման օրը:[183]) 5 օր տևեց. Потто, 508, 512, 518, 519, երգը.[184])

XXVIII, 138 Աբ<աս> բադը առաջ տիրել իր պաշարով:[189]) 141 Աբ<աս> Միղդա ու Սարդարը քաշվել են խոյ:[190]) 143, XXIX, առամը զորքին, կայսրին ավերը,[191])

XXII, 32 և 33 Красовск<ий>[192]) Դարբասից ներս և Հ<ասան> խանին զինաթափ է անում: 61 Լենգ<թեմուրի> թուրը.[192]):

Էջմիածին, Թավրեզ, Աբասաբաթ, Սարդարաբաթ ռուսաց օրհնյալ ոտի հողին արժանացան, բայց դեռ երևան իր անճար գլուխը դեմ էր տվել ու հետին շունչն ընկած և այլն, էջ 270.[185])

Չի ասում ո՛ր ամսի [կամ որ տարուն:] [1827 թ.] սեպտեմբերին է (1827):

120. осада крепости и т. д. գլուխը. первая ночь, На высоте Муханнат тапа поставлены были две двухпуд<овые> мортиры.

Հոկտ<եմբերի> մեկին առնվեց: (Кавк. сб. XXVIII, стр. 145) 167—8[194])

6397 զարկ (выстрел), 171, 173. [195]) *գոնդը Երևան, սխալ է. Թավրիզն առնվեց Երևանից հետո:*

«Նհախ <Հ<ասան> խանը> որքան բերնումը լեզու կար, ձեռին՝ հունար՝ բանացրեց, որ իր աղդին սիրատա, իրանց գլուխը ձեռ չդցեն: Հինդ օրվանից հետո խալխը, որ տեսավ ճար չկա, իրան միջի մեծամեծներիցը մեկ քանի մարդ ընտրեց, <ու հենց էն ա վերջին սհաթն էր մնացել, որ բերդը հոդին տա, կենդանները իրանց իրանց դուրս էկան բրջերի գլուխն ու բալանըքները ձեռներին բռնած> ռայի էկան»: 271. [186])

Ղարսա, Բայազդու փաշեն հայերին իրանց որդու պես էին սիրում: էջ 261 [187])

[Письмо генерала Паскевича] Всеподан<нейший> рапорт ген<ерала> Паскевича, от 16 окт<ября> 1827 г., г., Маранд.

Счастье имею поздравить В. имп. Вел. со взятьем Тавриза, посл. 13 числа с. месяца и т. д.

(К. сб. XXIX, ч, II, стр. *II)* [196])

XXIX, 8,1 окт. после и т. д. [197])

XXVIII, 1 окт. поутру и т. д. стр. *164* [198])

XXVIII, 165[199])

Հնդկահայերի սրախոսությունը.

Հայերը գաղթում են ոսի հողը. Թուրքը չի հակառակում. Потто. Акты К. арх. Ком. *VII, 266* [200])

ՍԽԱԼՆԵՐ[201])

[*Սառւգելը*]

[*Հասան խանն էր արդյոք Խլղարաքիլիսեն այրողը. Վերք, 173 և այլն.*][202]

154 և այլն:[203])

Աբարան ամեն տարի դուրս էր գալի Սարդարը իր ղոնշունովը, փեշքաշ ղրկում, իր մոտ հրավիրում և այլն, սէր հավատացնում. էս էր պատճառը, որ Սավարզամիրզան ոչինչ կասկած չէր տանում և այլն. 140[204])

Սավարզամիրզա — *դնդապետ Սեվարսամիձեն*

էջ 153, [205]) *ասում է Խլղարաքիլիսեն քանդել են Նաղի խանը, Օքյուզ աղեն, Ավանդուլի խանը և այլն: Մինչդեռ Նաղի խանը Համզաչիմանի կողմն էր:*

255. [206]) *Հուլիսի 23-ին 1821 թվին էր և այլն, Աղասին Անի.* *Սխալ է, պետք է լինի 1826, այդ ժամանակ [Աղասին չէր կարող] էր միայն, որ Հասան խանը ուզում էր գաղթեցնի, Ղարսա փաշեն եկավ, և այլն, 261,* [207])

Խառը [լեզու] ոճ ու բառ. 119. կուտա[208]) *Նույն <տեղը.> ջուրն ածիր, հրամյա*

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ[209])

էջ 109, խառը վեր ածելով, հնի մեջ էլ [210] *100, նույնը, երևի խոտը պետք է լինի:*

Նույն, աչքն. հնում 101 աչքդ.

120 դիբա — դիբա (հնումն էլ սխալ).

121. կես սհաթ անց չքաշեց.... անցը չկա բնագր<ում>.111 124. մերն ա էն սև քար. Մոսկ<վայի>[211]) *123 քարը. հնում, 114*

Նույն Մոսկ<վայի>, 123, մենք էլ լավ գիտում... մենք էլ լավ (հնք) գիտում.

հնումն էլ սխալ 115
մենք էլ լավ գիտենք.

129. Մոսկ<վայի> 129, պար էր գալիս... պար ա գալիս, հնում 120

(131. բոլոր սուտ բան ա — ինչու չի կարելի ուղղել. բնագրի սխալ)

133. կուիզեռան,— կուզեռան.

138. վտանգավոր, Մոսկ<վայի> 137, ճամփերով — [ճամփեքով.] երկու սխալն էլ հնինն են պահել.

Նույն Մոսկ<վայի> 138, մօկլուն. մսկլուն. հին 129.

Նույն ուրիշի — ուրշին.

Նույն. համամի — հարամի. (Մոսկ<վայրի> և հին ուղիղ)

139. Մոսկ<վայի> 139, էս բանն — էսքան բանն 130 հին.

140. գեղարինքն — գեղարենքն

141. Մոսկ<վայի> 141, սասանեցնում էին. սասանեցնում էր [Մոսկ<վայի> հին 132.]

142. Լոռըցունց. լոռըցոնց

143. Մոսկ<վայի> 143, աղբյուրը ձորի.— աղբյուրն ու ձորն, հնում աղբյուրը, ձորի ու էրն էին և այլն. 134

144. Մոսկ<վայի> 143 տրամադրության — պատմության. հին 135

151. Մոսկ<վայի> 151 — չեմ-չեմ. հին 142

155. Ջաւար — Ջաֆար

180 Մոսկ<վայի> 180 պաշտել եք — պաշտելիք. հին 171.

210. [Ղայիմցրա —] ղայիմցրած.

210. Մոսկ<վայի> 210. գլուխը գալը — գլուխ տալը. հին 201.

221. որ դեղ — որտեղ.

Առհասարակ «Վերք Հ<այաստանի»-ում> շատ սխալներ կան:

224. խոտ էի հնձում — խոտ էին հնձում.

Նույն. հերդ — հէրդ

Նույն. էլ ա — էլա

Նույն. ածի — ածա.

(227 կարելի էր ուղղել — սիրտս իրան հանեի և այլն)

միայն կուլտուր<ական> 212)

228. Աղասին էլ՝ կարմիր չի կապել.— չի կապիլ.

միայն կուլտուր.

229. միտս գալիս ա — միտդ գալիս ա

231. Մոսկ<վայի> 231 հանգչեր — կհանգչեր.

257. չորս հինգ գյադի մեկի ձեռք տված — չորս հինգը գյադի մեկի ձեռ.

269. Քեանդազ — (փիանդազ). 258 հնումն էլ քյանդազ — սխալ է — նույնիսկ բառթերթում չեն դրել. բայց կա փիանդազ, ոտի տակ ձգած գորգ.

Գիրքն արտատպած է 1897 թ. Մոսկվայում, պ. Ստ. Տեր-Սարգսյանի խմբագրած Ի. Ժամհարյանի հրատարակությունից, մի հրատ<արակություն>, որ ուղղած է հեղինակի ձեռագրի պատճենի վրա ու լրացրած: Բայց ինչ է դուրս եկել. [ընդհակառակը, ավելի շուտ լցվել է սխալներով,] ոչ թե եղած սխալները չի ուղղել, էն էլ էսպես ակնհայտնի ու պարզ սխալներ, ինչպես «էրկու ջանիցը հինգն էլա չմնացին», Մոսկվա, 137. կամ՝ սիրտը իրան և այլն. էջ 227, այլ և ավելի լցրել են սխալներով:

Խոռը

Մոսկվայի ուղղակի մեջ, էջ 38 պասորդ

Մսկլլու — թե Մօկլու: Մոկլու — Макинок — конница.

Մսկլլու, Мешкинские шахсеванцы 1000 ձիավոր են տալի. К. сб. XXIX, 105 [213])

[ստուգել] Կուիզեռան, հնում էջ 121 Կուզերան դոշը.

Թաղիադյան, I, էջ՝ 123[214]) Կուզեռայ լեառն

Щербатов. К. сб. 22,[215])

Бекан-Бек-кенти.

стр. 43 (№ 43), т. XXI. [216])

Հուլիսի 23-ին 1821 թվին Աղասին: Երևի 1826 պետք է լինի: Անի — 300 կտրիչ հայ զորք: 255.[217])

[Хозоуртск<ий> магал 12 XXI, [218]) խասավ — յուրտ]

Архаман — Архашан, XXII, 71 և այլ տեղեր[219])

Баран — поле փոխ<անակ> Абаран, XXVIII, 2, 3, 4, севр.[220])

Горначай — Գառնիչայ. XXVIII 76 [221])

Нуракав — Նորագավիթ, 77, [222])

Сирбанлакт (գյուղ) — 78 [223])

Мугпраш — Мугаррем, XXIII, 102 [224])

в Муше — в Шуме, XXVI, 126—127.[225]) և չի ուղղած.

Ղազախի թուրքերին 20 փ<ութ> վառոդ են թողնում և արճիճ, որ իրենց օգնեն: I, 105 [226])

Թուրք պահակները փախչում են I, 130 [227])

Թուրքերը վեր են կենում XXII, 111, Коцеб<у>[228])

Թուրքերը դեմ, Աբ<բաս> Միրզա XXII, 113 К<оцебу> առաջնորդում են 115, 132, 134,[229]) XXII, 15—16, Симонич 30[230]) XXIII, 81—82, 87, 95 [231]) 102 Եր<մոլով> 156, XXIV,[232]) 48, 177, 247 [233])

Ժողովրդին (քրիս<տոնյաներին>) զենք ու վառոդ են բաժանում, XXIII, սկիզբը [234])

Սեվարսամիձեն հայերին армяшек, XXIII, 68[237]) թուրքերին լավ էր վերաբերվում, XXIII, 91.[236]) իսկ Երմ<ոլովը> գրում է,

որ հայերին լավ վերաբերվի» XXIII, 92, [237]) «Վերք Հ<այաստան>ի» էջ 140 ասում է Ս<ավարսա>միրզի սիրտը թուրքերն էնպես էին ձեռ գցել և այլն։

[Հայերը տուժում են] XXII, 164, [238]) Կ. XXIII, 182, 194 հայերի մասին՝ թե վախկոտ են XXIII, 84[239]) (Շորագյալ) XXIV [240]) 72, 97, 113, 123, 170, 174, 206, 211, 213, 219, 236, 240, 241, XXV, 116, 130.[241]) Հայերին երմ<ոլովը> XXVI, 99, 106, 107[242]) XXVIII, 104, [243]) XXIV, 16 [244]) վարդ<ապետ> հաց 2000 սոմար — 34, երմոլ<ով> 37, երմոլ<ով> 38, 42, 43, 47, 49, 50, 52, 53, 54, 55, 56, քաջ (Ղարաբաղ) վախկոտ, 58, ռուսները թուրքերին վինաթափ<ում> են, հայերին վինում ու հաշվում զորքի մեջ. XXII, 137,[245]) Коцебу (XXIV)[246]) 72, 187, 197, 199, հայը. 138, 145, 150 Աբ<բաս> Միրզի թարգման հայն էլ է փախչում. 152 [247]) XXII, 9 Красовск<ий>[248]) 12, 26 (Симонич)[249]) XXII, 29 [250]) мат<ериалы> 27, XXIII, 140, 171, 175, վարդապետ 182, [251]) XXVIII, 52 Սիմոն արքեպիս<կոպոս> 75, 84, Ներսես և 85, 87, 89, [252]) XXIX, 68, [253])

Սարդարի թուղթը Ղազախի պղպատներին և նրանցը և այլն. XXIII, 102, 109, 111, 113, 147—8, 159, 160, 162, 163. [254]) Պարսիկներին թղթերը — գրած՝ զրգռելու համար ռուսների դեմ Շահզադեից և այլ խաններից։

Գեներալ Դավիդով XXIII, 180, арм<янской> пехоте и коннице. Քանդում է թուրք և քյուրդ գյուղերը ի վրեժ «մեր գյուղերի» 182, [225])

Գնդապետ Սեվարսամիձեն թեև (XXIII, 101) [256]) ասում է ոչ թուրքերը, ոչ հայերը մեր զորքերը գալուց հետո էլ չեն գնում լըրտեսելու, բայց էջ 106, ասում է իմ ղրկած փամբակեցի հայը եղել է Հասան խանի բանակում և այլն։

Պասկեվիչը Ներսեսի դեմ — Կրասովսկու Օշականի կռվի մասին, թե ինչպես Ներսեսը մոլորության մեջ ձգեց. Акты К. арх. К. ом. VII, 258—у. [257])

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍԻ ԲԱՌԱՐԱՆԻՑ

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՑՔ

Էն ժողովուրդները, որոնք աշխարհքում ապրել են լայն կյանքով ու բարձր ձգտումներով, միշտ ունեցել են իրենց դյուցազնական ու հերոսական դարաշրջանները՝ լիքը հրաշքներով ու առասպելներով։

Էս տեսակ ժողովուրդներն են, որ ունեցել են նաև քաղաքական ու քաղաքացիական մեծ կյանք ու կուլտուրա։

Ժամանակի ընթացքում սրանք ի մի հավաքելով իրենց հերոսական դարերի առասպելներն ու իրենց պատմության մեծ հիշողությունները՝ հյուսել են իրենց ազգային էպոսները։

Ամեն մի ժողովուրդ չի ապրել աշխարհքում էս տեսակ կյանք և ամեն մի ժողովուրդ չունի համաշխարհային գրականության մեջ իր ազգային էպոսը։

Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հայելապակ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհքի առջև։ Դեռ չեն գտնված հայկական էպոսի բոլոր ճյուղերը, գտնվածն էլ քիչ է ուսումնասիրված և շատ մթին տեղեր[1] ունի, որոնց լուսաբանության վրա պիտի մանավանդ բանասերներ և թե սիրողներ։

Դեպք է եղել, սրանից մի քանի տարի առաջ, ես էլ, իբրև սիրող, խոսել եմ հայկական էպոսի երկու մութ բառերի մասին — Խաչ պատռագին և առյուծաձև Մրհեր («Հորիզոն», 1916, № 114)։

Այժմ էլ, նույն ձևով, ուզում եմ խոսել մի քանի նոր վիճելի անունների վրա ու հանձնել իմ դիտողությունները մեր բանասերների ուշադրության։

Հայկական էպոսը հայտնի է Սասունցի Դավիթ կամ Սասմա

[1] [անուններ ու բառեր ունի]

1 Ծռեր (Սասունի խենթեր) անունով: [Բայց ամեն մի լուրջ բանասերի համար պարզ է, որ դա Հայկի առասպելն է]:

Սկիզբն առնելով հնագույն ժամանակներից՝ նա անցել է հայ ժողովրդի կյանքի ու կուլտուրայի զարգացման բոլոր շրջանները, և իր մեջ կրում է էդ բոլոր շրջանների լայն շերտերը, խոր ազդեցություններն ու մեծ հիշողությունները: Հայկ, Արա և Շամիրամ, Արտաշես և Սաթ<ենիկ>:

Առհասարակ էպոսը իր սկզբնական շրջանում ոչ միայն ցեղերի մաքառումն է հանդես բերում, այլև նրանից շատ ավելի մեծ մի մաքառում — ցեղական ադաթների ու բնական օրենքների մաքառումը և կամ ազգայնական ու հանրամարդկային իդեալների մաքառումը:

Սկզբնական շրջանում տիրական է միշտ ցեղական տարրը: Ժամանակի ընթացքում, կյանքի զարգանալով, հաղթանակում են բնական ու հանրամարդկային հակումները[1] ու էպոսն էլ, ինքն իր մեջ զարգանալով, ենթարկվում է կերպարանափոխության:

Հետզհետե փոխվում են [նաև] գաղափարները, անուններն ու սիմվոլները: Դիցաբանականը դառնում է դյուցազնական, ապա թե դյուցազնականի տեղն էլ բռնում են պատմական դեպքերն ու դեմքերը: [Մի ժամանակ արև էր, մտնում էր ամպի տակը. դարձավ դյուցազուն, որ ընկնում է հորի մեջ, ապա թե դյուցազունն էլ դառնում է մահկանացու մի հերոս, որ մտնում է բանտը:]

Էս մեծ պրոցեսի ընթացքում ժողովուրդը նյութերից օգտվում է միանգամայն ազատ կերպով: Մանավանդ որ էպոսն էլ պատմվել է[2] բերանացի: Ամեն մի սերունդ փոփոխել ու պատմել է իր ճաշակով և ավելացրել է իր ժամանակինն ու իրենը:

Էս պատճառով էլ անախրոնիզմը սովորական երևույթ է էպոսի մեջ, որ, սակայն, չի խանգարում նրա ամբողջությանը: Ընդհակառակը, դա բխում է նրա էությունից ու բնավորությունից: Նա չի կարող և չի սահմանափակվում պատմական որևէ մոմենտով: Նա ընդգրկում է ժողովրդի կյանքի ամբողջությունը սկզբից մինչև վերջը և ստեղծում է էն բարոյա-գաղափարական աշխարհքը, ուր անձնավորվում ու կենտրոնանում են ամբողջ ժողովրդի դարավոր մաքառումներն ու հեռավոր իդեալները, բոլոր հոգեկան ու բարոյական կարողությունները:

Բայց աշխարհքում ոչ մի ժողովուրդ չկա, որ ապրի պարփակված ինքը միայն իր կյանքով:

---

[1] [օրենքները]

[2] պատմվել [իս] է [եղել]=

Ամեն մի ժողովուրդ շփումներ ու հարաբերություններ ունի ուրիշ ժողովուրդների հետ, որ ասել է թե [մասամբ] ապրում է և ուրիշների կյանքով։

Էս փոխհարաբերություններով էլ, [երկար] դարերի ընթացքում, զանազան միջոցներով, հաղար ու մի բաների հետ, ժողովրդից ժողովուրդ անցնում են նաև էպոսական էս կամ էն մոտիվները, որոնք ավելի ընդհանուր գծեր ունեն, և կոչվում են թափառական մոտիվներ։

Ընդունելով ու որդեգրելով էդ թափառական մոտիվները՝ ամեն մի ժողովուրդ հարմարեցնում է իր բնությանն ու բնավորությանը։

(Էն վիշապը, որ Հայաստանում հայտնվում է Սասունի լեռներում ու ճանապարհորդներին կլանում, որին և դնում է սպանում Սասունցի Դավիթը, նույն վիշապը անգլիական էպոսում հայտնվում է ծովի մեջ, նավերն ու նավորդներին է վնասում և Բեովուլֆը դնում է սպանելու՝ հինգ օր ծովում լող տալով)։

Էպոսի էս ընդհանուր ճակատագիրն է ունեցել և հայկական էպոսը, և թերևս ավելի մեծ չափով, քան որևէ ուրիշ էպոս, որովհետև մեծ չափով են եղել կողմնակի ուժերի ազդեցությունները հենց իրեն — հեղինակի, հայ ժողովրդի կյանքի վրա։

[(Բայց ինձ թվում է, թե հաստատուն ու անփոփոխ են մնացել հայկական էպոսի էն հիմնական գծերը, որ Հայկից են գալիս։

Հոմանական էպոսից սկսած՝ մինչդեռ էպոսների մեծ մասի գլխավոր մոտիվը կինն է, հայկական էպոսի գլխավոր մոտիվը կռիվն է բռնության դեմ — Բելի թե Մըսրա Մելիքի։

Երկրորդ գիծը, որ Հայկից մինչև Դավիթ՝ հայկական էպոսի թուր-կեծակին ուղղված է միշտ դեպի հարավ[1], որ կնշանակի թե հայ ժողովուրդը իր ամբողջության վտանգը միշտ զգացել, սպասել ու տեսել է հարավից[2]։

Երրորդը՝ էն ազնվական գիծն է, որ հայ դյուցազնը, Հայկից սկսած մինչև Դավիթ, հասարակ ռանճպար ժողովուրդը ջոկում է տիրողից, թագավորից, բռնակալից, և սուրը բարձրացնում է միմիայն բռնակալի դեմ, և երբեք ժողովրդի։

Չորրորդ, ընտանիքի կամ օջախի սերն ու պաշտամունքը և ապա — հինգերորդ.

Աշխատանքն ու աշխարհաշինությունը)]։

XII—XIII դ<արերումն> են իրենց վերջնական ձևն առել

---

[1] հարավ [—արևելք]

[2] հարավ [—արևելքից]=

էպոսների մեծագույն մասը: Հայկական էպոսն իր վերջին կերպարանքն առել է միջին դարերի[1] թաթար-սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանում և էդ ձևով է, որ հասել է մեզ:

II

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԵՏՔԵՐԸ

Հայկական էպոսը պատմում է Սասունցի Դավթի կռիվը Մըսրա Մելիքի դեմ:

Մըսըր կամ Մեսրայիմ կոչվում է հին Եգիպտոսը:

Մըսըր կամ Մուսուր է կոչվում և հին Ասորեստանը իր Ասսուր աստծու անունով: Մատ — ասորական լեզվով կնշանակի երկիր: Մատ-Ասսուր — Ասսուրի երկիր: Մատ-Ասսուրը դարձել է Մուսուր, Մուսուրն էլ Մոսուլ, որ այժմյան Մոսուլն է[2]:

Եվ մեր էպոսումն էլ Մըսրա Մելիքը երբեմն կոչվում է Մըսլա Մելիք:

[Կարելի էր զարմանալ ու հարցնել, թե ինչ կապ կարող էր ունենալ Սասունցի Դավիթը — այսինքն Հայաստանը Եգիպտոսի հետ:

Որտեղի՞ց որտեղ...

Բայց գիտության պեղումները հողի տակից հանեցին ու մեր առջևը դրին մեզանից հազարավոր տարիներ առաջ կատարված անցքերը: Դուրս եկավ, որ]

Հնագույն Հայաստանը, մեզանից մի քանի հազար տարի առաջ, դեռ հեթիթների օրով, [մի հզոր պետություն է եղել, որ իր սահմանները տարածել է հեռու և] սերտ հարաբերություններ ու մեծ ընդհարումներ է ունեցել հին Եգիպտոսի, այսինքն Մըսրա աշխարհի հետ:

Եգիպտոսը I ու II Ռամզեսների օրով տեղի է տվել Հայաստանի խետասար թագավորի առջև, հաշտության դաշն է կապել նրա հետ ու դաշնագիրն էլ, արծաթի տախտակի վրա փորագրած, մնում է մինչև էսօր: (Халат<яниц>, Ист<ория> Арм<ении>, <էջ> 52)[2]

[Էսքան հեռվից է արձագանք տալիս հայկական էպոսը]:

---

[1] [*XI—XIII*]

[2] Религия древн. нар. Арх. Хрисанфа, стр. 29.

Մանոր. հեղինակի

Լուքսորի պալատի պատերի վրա մինչև էսօր մնում է հինգ հազար տարի առաջ փորագրած եգիպտական Պենտաուրա պոեմը։

Պենտաուրա պոեմը պատմում է Ռամզես II փարավոնի պատերազմն ու սիրագործությունը՝ հեթիթների — Հայաստանի հին բնակիչների հետ։

Մենակ է Ռամզեսը։ Շրջապատված է թշնամու 2,500 պատերազմական կառքերով։ Սիրտը երկյուղ է ընկնում։ Դիմում է Թեբեի Ամմոն-Ռա-ին, եգիպտոսի վերագույն աստծուն։

Ասում է. «Ամեն կողմից շրջապատել են ինձ անծանոթ ու անհամար ժողովուրդներ։ Բոլորը միացել են իմ դեմ և ես մենակ եմ նրանց մեջ, ու ոչ ոք չկա ինձ հետ...»

Խնդիրք է անում Ամմոն Ռա-ին, որ իրեն օգնի, ու, աստծու օգնությամբ զորացած, ընկնում է թշնամու անհամար բազմության վրա և մենակ ինքն ու իր ձիանքը ոտի տակ են տալիս թշնամու զորքն ու կոտորում հազարներով։ Կենդանի մնացածները փախչում են, գլուխներն ազատում (Халат<янц>, Ист<ория> Арм<ении>)։

Ճիշտ նույն պատկերը հայկական էպոսի մեջ։

Մենակ է Սասունցի Դավիթը։ Առաջը ծովացած է Մլսրա Մելիքի անհամար զորքը։ Երկյուղ է ընկնում դյուցազնի սիրտը։ Դիմում է աստծուն ու Մարութա բարձր Ասվարածնին[1]։ Ապա թև, աստծու օգնությամբ զորացած, ընկնում է թշնամու բանակի վրա։ Ինչքան ինքն է կոտորում, էնքան էլ իր Քուռկիկ Ջալալին է ոտի տակ տալիս։ Կենդանի մնացածները փախչում են, գլուխներն ազատում։

Բայց հնագույն Հայաստանի հարաբերությունները շատ ավելի սերտ են եղել հարևան Ասորա-Բաբելական աշխարհի հետ, և շփումներն էլ ավելի զորեղ ու ճակատագրական։

Դա եղել է Նայիրիի, Բիայնայի կամ Մանանայի և կամ Մինանի[2], Ուրարտուի, Արմինիայի կամ Հայաստանի լեռնաշխարհի և Ասորա-Բաբելական և նրանց կից մեծ հարթավայրերի անվերջ կռիվը, սարի ու դաշտի անհաշտ կռիվը, հայ ժողովրդի հին կռիվը։

Էդ անապատներից են ելել մեծագույն հարվածները էն բոլոր իշխանություններին ու ինքնուրույն կյանքին, որ երբևէ առաջ են եկել ու զարգացել Հայաստանի բարձրավանդակի վրա — Բելից սկսած մինչև Թաթար-Թուրք-Մոնղոլական ցեղերը։

Որոնք ներս խուժելով երկիրը — ներս են խուժել և լեզվի ու սովորությունների մեջ, և էպոսի մեջ։

---

[1] Ասովածածնին

[2] [Արմենիայի]

Հնագույն տեղեկություններից մեկը, որ կապ ունի մեր էպոսի հետ, Աստվածաշնչի տված տեղեկությունն է (Չոր<րորդ> թագ<ավորաց> ԺՀ., ԺԲ. և երկրորդ Մնաց<որդաց> Լ.Բ):

Ասում է. երբ Ասրհատանի Սեննեքերիմ թագավորը երկրպագություն էր անում Նեսրաք աստծուն, իր Ադրամելիք և Սարասար որդիքը սրով զարկեցին, սպանեցին իրենց հորը ու փախան երկիրն Արարատա:

Մովսես Խորենացին էլ, անշուշտ Աստվածաշնչից առած, տալիս է նույն տեղեկությունը:

Նույն դեպքը պատմում է և հրեական հին ավանդությունը „(Идолопокл<онничество> у древи<ых> евреев, Пальмова, *1897*, СПБ. стр. *373*):

Բայց հրեական ավանդությունը տալիս է մի մանրամասնություն, պատճառը, թե ինչու թագավորի որդիքն սպանեցին իրենց հորը: Դեպքը պատահել է էն անհաջող պատերազմից հետո, որ Սեննեքերիմը վարել է հրեից Եզեկիա թագավորի դեմ և ժանդախտից կորցրել է հարյուր հազարից ավելի մարդ, որի պատճառով և մեծ զայրույթ է առաջ եկել երկրում: Ավանդությունն ասում է. ժողովրդի զայրույթից իր կյանքը փրկելու համար թագավորն ուղում էր Նեսրաք կուռքին զոհաբերի իր որդիներին. նրանք էլ իրենց կյանքը փրկելու համար սպանեցին իրենց հորը ու փախան:

Եվ էս կարևոր մանրամասնությունը, որ չունեն ո՛չ Աստվածաշունչը, ո՛չ Խորենացին, ոմի հայկական էպոսը: Եվ նույնիսկ շատ ավելի մանրամասն, քան հրեական ավանդությունը, թե ինչու և նույնիսկ ինչպես են սպանում իրենց հորը ու փախչում գալի[ս] Սասուն:

Սրանով էլ սկսվում են մեր էպոսի մի քանի վարիանտները:

Բայց կա սրանից ավելի մեծ ու խորը դպ: Դա ասորա-բաբելական էպոսն է, Իզդուբարի կամ Գիլգամեշի էպոսը:

Գիլգամեշը հովիվ է: Գիլգամեշը զրկված ու հալածված թափառում է իր մեփական հայրենիքում, մինչև կարողանում է կռվով ձեռք բերել իր հոր իշխանությունը:

Բառացի [էնպես, ինչպես] Սասունցի Դավիթը:

[Էդ հերիք չի]:

Գիլգամեշն էլ է առյուծի հետ կռվում ու հաղթում:

Եվ դեռ սրանից էլ դենը:

Գիլգամեշի հաղթությունից հետո Իշտարը, ասորական Աստղիկը, սիրահարվում է Գիլգամեշի վրա, աշխատում է դյուցազնի սիրտը գրավի ու առաջարկում է, որ ամուսնանա իրեն հետ:

Էնպես, ինչպես Սասունցի Դավթի հաղթանակից հետո Խան-

դուխ խանումն է սիրահարվում հայ դյուցազնի վրա, աշխատում է հրապուրի ու առաջարկում է ամուսնանա իրեն հետ[1]։

Էստեղ բաց ևմ թողնում շատ ուրիշ մանրամասնություններ, ինչպես բաց եմ թողնում և հնդկական, պարսկական, հունական և ուրիշ էպոսների մեջ եղած նմանությունները, դրանց առաջիկա դրույցներում՝ իրենց տեղը՝ վերադառնալու մտքով։ Առայժմ, էս ազգնությունների թելը բռնելով և էս ուղղությամբ ավելի հեռու խորանալով[2] ուզում եմ մեր Հայկին կամ մեր Դավթին Ասիայում գտնելու մի փորձ անեմ։

Ես էսպես եմ մտածում։ Եթե էս մեծ նմանությունները մեզ տանում են դեպի Արևելք։

Եթե մեր Մայր գետի՝ Արաքսի անունը հնում պատահում ենք Արևելքում (Սիր-Դարիա)։ Եթե մեր մայր սարի — Մասիսի անունը պատահում ենք Արևելքում (Հիմալայան լեռներում). [ապա] կարող է պատահել, որ նույն երկիրներում գտնենք և մեր Հայկին, հետևվաբար և մեր Դավթին։ [ու մեր էպոսի հետքերը։]

III

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԿ

Հայկ անունը չի պատահում ուրիշ ազգի հին պատմության կամ դրույցի մեջ։

Միմիայն Խորենացու Հայոց պատմության մեջ, էն էլ մի անգամ, սկզբում հիշվում է Հայկ անունը, իբրև նախահոր անուն, էպոնիմ-անվանադիր, որից, ասում է, իրենց անունն առան մեր ազգն ու մեր երկիրը — հայ և Հայաստան։

Նրանից հետո եկող Արմենակ, Արմայիս, Ամասիա, Արա, Տիգրան, Վահագն և այլ անուններից և ոչ մեկը չի կապվում Հայկի անվան հետ։

Եվ էդ անունը էլ չի կրկնվում ոչ մի տեղ։

Կասկած է ծագում, թե մի խորթություն կա մեր նախահոր ու իր հետնորդների մեջ, թեկուզ և առասպելական նախահոր։ Եվ հարց է առաջ գալիս, թե ո՞րտեղից են և ի՞նչ կնշանակեն հայ կամ Հայկ անունները։

Հայաստանը բացի խաոերի կամ հեթիթների անունն ու ար-

---

[1] Շարունակության մեջ գրել է՝ ցույց տալ մի քանիսը։

[2] [առաջ գնալով ուզում եմ մեր ավելի]

ձանագրությունները դեռ ուրիշ նյութ չի տվել էս [մեծ] առեղծվածը լուծելու համար։

[Օգնության] պետք է դիմել նաև հարևան երկիրներին ու ավելի հեռուն։

[Սկսենք մեր հարևաններից]։

Վրաստանի պատմության սկզբում վրաց ազգային ավանդությունն ասում է, թե Հայոսն ու Քարթլոսը եղբայրներ էին և Հայոսից առաջ եկան հայերը[1]։

[Հիշեցնեք, որ ասում է Հայոսը, ոչ թե Հայկը]։

Վերև բերած Ասորեստանի պատմության էն կտորի մեջ, որ ասում է՝ Սեններիբիմ թագավորի որդիքն սպանեցին իրենց հորն ու փախան [Հայաստան] Արարադա երկիրը — ասում է սպանեցին էն ժամանակը, երբ թագավորը երկրպագություն էր անում Նեսրաք անունով աստծուն[2]։

Էդ Նեսրաք աստվածը ասորա-բաբելական բարձրագույն աստվածների երրորդության մեջ հաչտնի է Այոս անունով։ Անու, Բել և Իա կամ Այոս։

Առաջին դարի հրեա պատմաբան Հովսեփ Ֆլավի ասելով, Այոսը հավասարապես պաշտված էր ինչպես Ասորեստանում, էնպես էլ Արեմտենիայում, որի բնակիչները դիմում էին Այոսին իրենց չարից ու փորձանքից ազատ պահելու համար[3]։

Այոսը երկրի ու մարդկային ուժի ներկայացուցիչն էր, ժողովրդի բարօրության տվողն ու հավանավորը. բայց իսկապես նա օդերի (այերի) շարժման, [հողմերի] մարմնացումն էր և սկզբնական ջրերի շարժման պատճառը, և կոչվում էր ջրերի տեր։

Հետևաբար նա բնակվում էր էնտեղ, էն բարձր աշխարհքում, որտեղից սկիզբն են առնում ջրերը. հսկում էր ջրերի ակունքներին ու էնտեղից ներքև էր ղրկում ջրերը, Եփրատն ու Տիգրիսը, որ իջնում — կյանք էին տալիս ասորա-բաբելական ծարավ[4] ամապատանին։

Էնտեղ ապրում է նա — Այոսը — Արմինիայի բարձր լեռներում, որտեղից սկիզբն են առնում ջրերը։

Էնտեղ է ապրում նա, որ միաժամանակ օդերի շարժման

---

[1] Քարթլիս ցխովրեբա 3), Մաճոր. հեղինակի։

[2] [կուռքին]

[3] Հովս<եփ> Ֆլավ. Հին Հրեաստ<անի> պատմ <ություն> I. 3. 6)։ Մաճոր. հեղինակի։

[4] [այրվող]

պատճառն է: Ու էնտեղից, Արմինիայի[1] լեռներից կենսարար հով ու զով է ղրկում դեպի ասորա-բաբելական կիզիչ անապատները:

Պատկերն ավելի կատարյալ անելու համար պետք է պատասխանենք նաև մի հարցի:

— Բայց ի՞նչ բան են իրենք ջրերը, ի՞նչ են ներկայացնում աղբյուրներն ու գետերը հին Ասորեստանի ու Բաբելոնի հասկացողությամբ:

Ահա դրա պատասխանը:

Բելը, Այոսին հակառակ, երկնքի աստվածն էր ու միահեծան տերը Փոքր Ասիայի բոլոր աստվածների: Եվ որովհետև Բելը (Ուրան) երկինքն է ներկայացնում — ջրերը ոչ այլ ինչ են, եթե ոչ Բելի արյունն են — այսինքն երկնքի անձրևը: Դրա համար էլ աղբյուրներն ու գետերը սուրբ են ու նվիրական ասորա-բաբելական աշխարհքում:

— Բայց ինչո՞ւ է թափվում Բելի արյունը:

— Որովհետև զարկված է Բելը...

— Որտե՞ղ...

— Արմինիայի լեռների վրա...

Եվ էսպես, հսկայական նետերով զարկված Բելի արյունը, այսինքն, կայծակներով հերձուտված երկնքի ջրերը՝ դարձել են աղբյուր ու գետ, Եփրատ ու Տիգրիս և իջնում են ներքև — ջրերի ոիրոջ բնակավայրից, Այոսի երկրից...

Եվ ամենայն հեշտությամբ նրա անունը կարող էր մնալ էդ երկրի վրա, ինչպես մնացել են նրա մյուս հաջորդների անունները — Իսվարի և Մարուտուկի:

Իսվարը ասորա-բաբելական գերագույն աստվածներից մինն էր: Եթե հիշենք, որ Ի — հաճախ Ա — է դառնում — Իշտար — Աստարտա և էնպես կարդանք — Իսվարը — Ասվար, ապա կտեսնենք, [որ] դա մեր աստված բառն է, որ հենց էդ ձևով — ասվար — մինչև էսօր մնում է մեր ժող<ովրդի>մեջ, մանավանդ Սասունի կողմերը — ասում են ասվարածին — հենց էդպես էլ գրի է առնված էպոսի մեջ — ասվարածին:

Մի ուրիշ մեծ հետք: Ասորա-բաբ<ելական> [դիցաբանության մեջ] աստվածների շարքում Այոսին հաջորդում է [իր որդի] Մարուդուկը կամ Մարդուկը, որին հետագայում և բոլոր աստվածները տալիս են իրենց գերագույն իրավունքները:

Մարուդուկը, որ Այոսից է ծնված, Տիգրիսի ու Եփրատի ստեղծողն է ու նրանց ճանապարհ ցույց տվողը, լեռների ու կենդանի-

---

[1] [Հայկական]

ների հովանավորն է։ Հողմերի ու հովերի աստվածն է հատկապես և հյուսիսային հողմով[1] քշում է ասորա-բաբելական աշխարհքի ծանր ու մռայլ քառսը — Թիամաթը[2]։

Եթե էսօր ասորա-բաբելական աշխարհքից ուղիղ բարձրանաք դեպի վերև — հյուսիս, կհանդիպեք Մարաթուկ սրբազան լեռանը Սասունի լեռներում։

Մարաթուկ կամ ավելի ճիշտը Բանցրիկ Մարաթուկը [իր սուրբ նշանով] կենտրոնական տեղ ունի մեր էպոսում։

Նրա վրա է կանգնած մեր Չարխափան վանքը, որ դիմողին ազատում է ամեն չարից ու չար փորձանքից։ Նա է հաղթություն տալիս, և մեր էպոսի դյուցազունները նրան են աղոթում[3] պատերազմ գնալուց առաջ։ Նա կոչվում է Բանձրիկ Մարաթուկի չարխափան Ասվարածին։

Նրան ավերում է թշնամին։ Բայց նրա ավերակների քարերի միջից էլ կեսգիշերվա մթնում[4] բարձրանում է լուսը քուլա-քուլա ու երևում պատանի Դավթի աչքին։ Նրա սուրբ նշանն է ուժ տալիս Դավթին։ Եվ նա, Բանձրիկ Մարաթուկը՝ Ասվարածինը մինչև էսօր էլ նվիրական է ո՛չ միայն Սասմա հայ ժողովրդի համար, այլև հարևան օտար ցեղերի համար։

Բայց Այոսը կենդանի[5] էր ու պաշտվում էր Քրիստոսից դարեր առաջ, երբ Սենեքերիմն էր թագավորում Ասորեստանում։ Էն ժամանակ, երբ Արմինիայի լեռնաշխարհում էլ ապրում էին հեթիթները կամ խատերը, որ վաղուց անհետացել են մեջտեղից։

Արդյոք ո՞ւր անհետացան, ո՞ւր գնացին իրենց աստվածների հետ միասին։

Ենսեն և ուրիշ գիտնականներ կարծում են, թե խատը, ձայնաբանական օրենքով հայ պիտի կարդալ և հին խատերը էսօրվան հայերն են որ կան։

Պրոֆ. Մառը ապացուցանում է, որ էսօրվան Հայաստանի բնակիչները հին հայերը չեն։ Էսօրվան հայությունը նա համարում է երկու ժողովրդի — արիական և հաբեթական ժողովուրդների խառնուրդ։ Ասում է հին հաբեթական ցեղը, որ Հայական կամ Հայկականն է եղած, հաղթվել ու տեղի է տվել եկվոր արիական

---

[1] [հո՞ւշ, հիւսիսային հողմով]

[2] Ասորեստանի ու Բաբելոնի ժողովուրդներին նա է ազատ պահում չարից ու չար փորձանքից, նա է հաղթություն տալիս ու պաշտպանում ժողովուրդներին։ Նա թշնամի ժողովուրդներից էլ է հարգված։ Ծանոթ. հեղինակի։

[3] [դիմում]

[4] [մութի մեջ]

[5] [ապրում]

ցեղի առաջ, իսկ նրա մնացորդները խառնվել են տիրող արիական ցեղի հետ[1]։ Ըստ Մասպերոյի՝ հին Հայաստանը բաղկացած էր մի քանի մանր պետություններից. Նայիրի, Մաննայի (Մեննե, Վան), Մուսասիրի (Մուշ), Մելիտե (Մալաթիա) և Ուրարտու (Արարատյան)։

Երեմիա մարգարեն իր հայտնի կոչի մեջ Հայաստանը ջոկում է առանձին մասերի, «Հրաւիրեցէք ի վերայ նորա զթագաւորութիւնս Արարադայ, Միննւոյ և Աղքանազայ»[2]։ Ստրաբոնն ասում է. Այնանք մասամբ բնակվել են Ույտի, մասամբ էլ արմենների դենը[3]...

Եվ հիշում է Բարիկի սրբավայրը։

Ամենայն հավանականությամբ Այնանք ասելով հայերին է ակնարկում, Ույտին — Խույթի լեռներն են Սասունում, իսկ Բարիկի սրբավայրը — Մարութա սրբավայրն է Սասուն։

Հույն ու արաբացի պատմիչներն էլ հայերի մեջ միշտ տարբեր ցեղեր են նկատում։ Առանձին ցեղ են նկատում հատկապես սասունցիներին ու խութեցիներին[4]։

Վերջապես մեր պատմիչներից ոմանք էլ հաստատում են էս կարծիքը[5]։ Թոմա Արծրունին Սասունի ու Խույթի բնակիչների մասին ասում է. «սոքա են գռեահք Ասորւոց»[6]։

Էս բոլորից հետո առանձին նշանակություն է առնում Սեյս գիտնականի կարծիքը։

Եգիպտական հին շինությունների պատերի վրա մինչև էսօր անեղծ մնացել են խատերի կամ հեթիթների գունավոր պատկերները։ Սեյսը, էդ պատկերների վրա մանրամասնորեն քննելով նրանց զգեստները ու դիմագծերը, ճակատները, այտերն ու մարմնի գույնը, եկել է էն եզրակացության, թե խատերը կամ հեթիթները մոնղոլական ցեղին են պատկանում[7]։

Եվ ահա մի նոր, մի մեծ աշխարհք է բացվում մեր առջև։ Ուրեմն, դեպի Մոնղոլիա...

---

[1] Н. Марр. Кавказ и помятн<ики> <его> духовн<ой> культуры, 1912, СПБ, стр. 80. Ծանոթ. հեղինակի։

[2] Երեմ<իա>, ԾԱ. 27 Ծանոթ. հեղինակի։

[3] Услар, Древн<ейшие> сказ<ания> о Кавказе,[4]) <էջ> 109. Ծանոթ. հեղինակի։

[4] Հյուրշման, Հին Հայոց անունները[5]), էջ 55.

[5] [հանգամանքը]

[6] Ս. Պ. Բուրգ. 1887, Բ. Դպր <ություն> Զ և է։ Ծանոթ. հեղինակի։

[7] Իսկական պատմ <ություն> հայոց, Բասմաճյան[6]), էջ 45. Ծանոթ. հեղինակի։

Դժբախտաբար ձեռքիս տակ չեն եղել ո՛չ հարկավոր աղգագրական նյութերը, ո՛չ թուրք-մոնղոլական[1] մեծ էպոսը, և օգտվել եմ [ձեռքիս տակ] եղած հատ ու կտոր աղբյուրներից:

Բայց մտածել եմ, որ իմ արածը միայն մի մատնանշում է առայժմ, և որ էստեղ թանկ են մեզ համար ամեն թեկուզ չնչին տեղեկություն և ամեն մի շշուկ:

Մեր առաջին հարցը էս նոր աշխարհքում էն պիտի լինի, թե ինչ են ասում [իրենք], էս երկրի՝ Մոնղոլիայի բնակիչները — որտեղացի <են> իրենք, բնիկներ են թե եկվորներ:

Սակայն, նախքան էս հարցին պատասխան կտան նրանք, պարզենք մի [զարմանալի] երևույթ, որ նկատված է ժողովուրդների մեծ շարժումների մեջ:

Թե՛ հնագույն գրավոր հիշտակարանները, թե՛ բերանացի ավանդությունները ցույց են տալիս, որ գրեթե ո՛չ մի ժողովուրդ ի սկզբանե չի մնացել իր տեղը նստած, և որ ժողովուրդները որոշ ուղղությամբ գնացել ու ետ են եկել, ծովի ալիքների նման, իհարկե, իրենցից մի մասը և իրենց հետքերը թողնելով գնացած ու թողած տեղը: Եվ զարմանալին ո՞րն է.— սեմիտական ցեղերը գաղթել են հարավից հյուսիս և նորից շարժվել հյուսիսից հարավ, իսկ արիական ու հաբեթական ցեղերը՝ արևելքից արևմուտք ու ետ արևմուտքից արևելք: (Русск<ая> народн<ая> поэзия, <էջ> 377)[7])

Եվ ահա Միջին Ասիայի թուրք, թաթար, մոնղոլ ցեղերը, ինչպես և չինացիք, թե՛ իրենց պատմության մեջ, թե՛ ավանդություններով, մեր էն հարցին՝ թե որտեղացի են, պատասխանում են՝ թե բնիկներ չեն, հին եկվորներ են, և ցեղեր կան, որ ցույց են տալիս, թե եկել են արևմուտքից:

Ես էստեղ չեմ մտնելու նրանց լեզվի ու սովորությունների մեջ, որ վերին աստիճանի հետաքրքրական պատկեր է բաց անում մեզ համար, և անմիջապես անցնում եմ մեր մասնավոր խնդրին— խատերին, որոնց կորցրել ենք Հայաստանում:

Մոնղոլիայի բոլոր լեռները, հովիտներն ու գետերը ունեն իրենց ոգիները, որոնք կոչվում են խատեր[2]:

Խատ հին Արմենիայի Միննեում կնշանակեր տեր:

Խատ էստեղ էլ Մոնղոլիայի Մենում, կնշանակի — տեր[3]:

---

[1] [թաթարական]

[2] Очерки Сев<еро>-запад<ной> Монголии. Потанина[8]), միայն II ու IV գիրքն եմ ունեցել. Ծանոթ. Հեղինակի:

[3] Հետաքրքրական է, թե ինչ կապ ունեն սրա հետ մեր հին քաջերը, կամ վրաց խատին, <1 անընթ.>: Ծանոթ. Հեղինակի:

«Հայկական Էպոսի բառարանից» ուսումնասիրության առաջին էջը:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱ

Բայց էս բավական չի դեռ։ Գրեթե բոլոր մոնղոլական ցեղերը մի ընդհանուր պաշտամունք ունեն, իրենց մեծ աստծու, մեծ դյուցազնի կամ նախահոր պաշտամունքը։ Դա, [համարձակվում եմ ուղղակի էսպես անվանել,] Հայկի պաշտամունքն է։

[Ասում եմ՝ համարձակվում եմ ուղղակի Հայկ անվանել, որովհետև] մոնղոլական ցեղերի մեջ մի քիչ տարիշ տեսակ է հնչում —Ջայկ, Եայիկ, Այրկ, Ըյիկ և Հրիկ։

Հայկը Միջին Ասիական ցեղերի բարձրագույն աստծու — Բայ Ուլյաղան կամ Ղայրաղան, այսինքն արարիչ աստծու որդին է, նույնպես կրտսերը, ինչպես մի ժամանակ ասորական[1] Այտսը, հեթիթների ժամանակ։ Եվ էստեղ էլ, ինչպես ասորա-բաբելական շրջանում Հայկն ու Բելը կանգնած են իրար դեմ, ամեն մինը նույն բնավորությամբ ու նույն պաշտամունքով։

Բելը (Ուլը, Ուլու կամ Ուլու ղայրաղան[2]) երկնքումն է իշխում և ապրում է արևի ու լուսնի հետ։

Ձմեռը իջնում, ձմեռում է բարձր սարերի գլխին, [իսկ] ամառը կրկին վերևինք է բարձրանում ու կայծակներ է ղրկում դեպի ներքև։ Հայկը երկիրն է ներկայացնում։ Եվ ձմեռը, երբ գետինը դուրս է գալիս ձյունի տակից, մոնղոլներն ասում են՝ Հայկը դուրս եկավ ձյունի տակից։ Հայկը, երկրին տիրելով, երկրի վրա ապրող մարդկանց ու անասուններին է հոգում ու հովանավորում, ինչպես Այսը Արմինիայում։ Նրա նման էլ սիրում է ապրել լեռներում ու անտառներում և միաժամանակ կոչվում է Այրգ, որ կնշանակի արջ և ունի նաև Այր ձևը։ (Потанин, «Оч<ерки> С<еверо>-З<апад<ной> Монг<олии>», *IV, 77, 139*)։

IV

ՀԱՅԿԻ ՏՈՏԵՄԸ[3]

Եվ ահա հայտնվեցինք[4] տոտեմների աշխարհքում[5]։ Հասանք էն ժամանակներին, երբ մարդը ավելի գազան էր կամ կենդանի,

---

[1] Ասորեստանում=

[2] Այս բառի վերև գրված է՝ Իլ, Ալլահ

[3] Հայկական տոտեմը= [և Այ ձևը]։ Էջի տակին հեղինակը ծանոթություն է տվել՝ [Потанин, Оч<ерки> Сев<еро>-зап<адной> Мон<голии> IV, <էջ> 77, 139], որը ըստ երևույթին, կապ ունի ենթավերնագրի [Այ] բառի հետ։

[4] [էսպեսով եկանք ընկանք]

[5] Աշխարհքը=

Հետևաբար ավելի էլ մոտիկ գազանին ու կենդանուն, և մարդ ու գազանը հեշտ կարող էր շփոթել իրար հետ ու ասել՝ արջ ախպեր, գել ախպեր և այլն։ Երբ մարդը իրեն շրջապատող բնության երևույթների մեջ միևնույն կենդանի հոգին — կենդ<անի> շունչն է տեսնում[1] և իր ծագումը կապում բույսերի, ծառերի ու գազանների հետ...

(Երկներ երկին և երկիր... Եվ եղեգնից մարդ է ծնվում, ու մարդու տոհմը կապվում է եղեգնի հետ։ Եղեգնը դառնում է տոհմի տոտեմը[2], այսինքն խորհրդանշանը, հետագայում գերբը։ Եվ տոտեմը, որ երբեմն տոհմի կամ ազգի նշանն էր միայն, ժամանակի ընթացքում դառնում է ազգը կամ ազգի անունը[3]։)

Իր ծագումով կապվելով բույսերի ու գազանների կամ կենդանիների հետ՝ մարդը, բնականաբար, ավելի շատ կապվել է շրջապատի հետ —[գազանների ու] կենդանիների հետ, իր կլիմայում գտնվող, հարկավ։ Կենդանիների մեջ էլ նրանց հետ, որոնք իրեն շատ ավելի օգտավետ ու սիրելի են եղած և կամ ավելի ուժեղ ու աչքի ընկնող, և ավելի մարդու նման։

Արդ, բարեխառն ու հյուսիսային կլիմաներում ո՛ր կենդանին է, որ ավելի աչքի է ընկնում, ավելի ուժեղ է ու ավելի մարդու նման։

Իհարկե արջը։

Նա իր խոշորության հետ միասին, ինչպես ժողովուրդն ասում է, 12 ձիու ուժ ունի։ Նա կարողանում <է> ետի երկու ոտների վրա կանգնել ու մարդ գալ մարդու նման։ Փնթփնթացնել, թքել ու ապտակել մարդու նման։ Էնքան, որ նրան սովորաբար շատ ժողովուրդներ արջ ասելու տեղ — պապի են ասում, արջ պապի։ Ինչպես որ շատ մարդու էլ նմանեցնում են արջի։

Եվ ժողովուրդներին արջը հայտնի է ոչ որպես գազան, այլ որպես մարդ-գազան կամ գազանամարդ։

Նրա խելքն ու իմաստությունը մինչև անգամ խղճմտանքը՝ հնուց ի վեր շատ է հռչակված ժողովուրդների մեջ։

Ժողովուրդներ կան, որ արջի մասին խոսում են առանձին երկյուղածությամբ և երբեք անունը չեն տալի, այլ ասում են «նա», «ինքը»։ Եվ նա, ասում են, իմանում է իր մասին խոսածը, որտեղ կուզեք, խոսեք։

---

[1] Մի տող վերև, տողատակում ավելացված է՝ «քամին ու իր շունչը նույնն են նրա համար»։

[2] [նշանը]

[3] Այս պարբերության վերջում դրված է հարցական նշան։

Նա աստծու որդի է՝ արջի կերպարանքով երկիր իջած ու նվիրական։

[1]Մասնավորապես մեծ է արջի պաշտամունքը ռուս ժողովրդի մեջ, բայց առհասարակ հյուսիսային և բարեխառն կլիմաներում։ Էս կլիմաների ժողովրդական հին ըրուչյներում արջը[2] նույն դերն ունի, ինչ դեր որ ունի առյուծը հարավային երկրների ժողովուրդների ըրուչյների ու առասպելների մեջ։

Դեռ հնուց Արիստոտելը հյուսիսային երկնքի ամենանշանավոր համաստեղության մեծ կամ փոքր արջի անունով ճանաչելը բացատրում է էս երկիրներում եղած արջի պաշտամունքով։

Աշխարքի ամենահնագույն դրավոր հիշատակարաններից մինն էլ, որ կա կենդանիների մասին, բարոյախոսը (ֆիզիոլոգ), արջին անվանում է զգայուն ու մարդասեր, և առանձնապես ընդգծում է նրա ձմեռվան հողմը շնչելուն պես քուն մտնելն ու գարնան շնչի հետ զարթնելը։

Ասես թե էսպեսով նա որոշում է ժամանակն ու եղանակի չափը։

Եվ էստեղ նկատեցնք, որ Հայկն էլ մեզանում «առաջին տոմարագիր կըսվի, որ է ժամանակի և տարվո չափ ու շրջան որոշող» (Ալիշան, «Հին հավատք հայոց», <էջ> 119)։[9])

Եվ ահա էսպես ազգի տոտեմն ու դյուցազնը խառնվելով, ձուլվելով ու նույնանալով մի բառի մեջ միացել են, միասին պաշտվել, աստվածացել, աստղ դարձել ու երկինք վերացել — դարձել Հայկ համաստեղությունը։ Եվ մեր ժողովուրդը, որ Հայկ աստեղատունը (Օրիոն) անվանում է շամփուր քշերք և կամ քար ու քշերք՝ տեղ-տեղ մինչև էսօր պահել է հին Հայկ կամ Նեք անունը։ Այդպ են անվանում և թուրք-մոնղոլական ցեղերի մեջ, որ և արջի իմաստն ունի և որսկան[3]-դյուցազունի։

Մոնղոլական մի ավանդությամբ Հայկը որսորդ է եղել։ Նրա նետերից չէին կարողանում ազատվել գազաններն ու թռչունները։ Ճարնեերը կտրած՝ դնացին դանդատ արին աստծուն։ Աստված հալածական կենդանիներին թռիով երկինք բարձրացրեց ու աստեղացրեց։ Նրանց հետից երկինք բարձրացավ և Հայկը, որ իհարկե, նույնպես աստեղացավ, (Потанин, Очерки С<еверо>-з<ападной> Монг<олии>, II)։

Էսպեսով էլ բոլոր ժողովուրդները իրենց ազգային տոտեմներն ու ազգային դյուցազունները իրար խառնելով, աստվածացնե-

[1] [Նվ]

[2] արջի=

[3] Այս բառի դեմ՝ մատիտով գրված է՝ աղեղն

լով ու երկինք հանելով՝ երկինքը լցրել են աստեղակերպ դյուցազոններով։ Դրանից էլ առաջ է եկել կրոնների ու հոգևոր երգերի մեջ հիշատակվող երկնային զորքը — զորություններ երկնից[1]։

Դրանցից մինն է և Հայկ համաստեղությունը — Հայկը, որ իր մեջ ամփոփում է երկու զաղափար, մինը աղգի տոտեմի, մյուսը աղգի նախահոր ու դյուցազնի։ Բայց, ինչպես ասինք, ժամանակի ընթացքում տոտեմը մոռաց<վ>ել, ձուլվել է դյուցազնի հետ, ինչպես, երբեմն և ձուլվում է ժողովրդի կամ երկրի անվան հետ։

Օրինակ առնենք Արկադիան։

Արկադացիք իրենց ծագումը կապում են արջի հետ։ Արջը հովվական երջանիկ Արկադիայի տոտեմն է եղած։ Եղած է ժողովրդի նախահայրը, ապա դյուցազնը, ապա թե երկինք է վերացել ու աստղ դարձել, որ արջաստղն է, Արկտուրը։ Արջ կամ արկ սանսկրիտ<երեն> կնշանակի արջ, միաժամանակ և ցոլում, փայլուն։ Նույնը և հունարեն ու լատիներեն[2]։ Իսկ Արկադիա կնշանակի արջաստան կամ արջանոց[3]։

Էս բոլորից հետո մի հարց է ծագում, տեղին ու կարևոր մի հարց՝ էս մասին եղած մեր խոսքն ամփոփելու համար. թե արդյոք հնագույն Հայաստանի բնակիչները ինչքան են կապված եղել երկնային լուսատուների հետ, արդյոք աստղերի պաշտամունքն ու դիտությունը զարգացած է եղել նրանց մեջ, և կամ աստղերով զբաղվելու և աստեղացնելու սեր ու հակում են ունեցած թե չէ։

Բարեբախտաբար էս հարցի պատասխանն էլ մեծ աստեղագետներն ու դիտնականները տալիս են ավելի քան դրական։

Հնագույն Հայաստանի բնակիչները, որսկան, հովիվ ու անասնապահ, միշտ բաց երկնքի տակ, իրենց բարձր երկնամերձ աշխարհքում միշտ խոսել են աստեղազարդ երկնքի հետ։

Եվ դիտնականները հաստատել են արդեն, թե էն հնագույն շրջանը, որ աստեղատունները որոշել ու աստղերին անուններ է տվել, եղել է Փոքր Ասիան և Փոքր Ասիայի մեջ հատկապես հիշատակում են Հայաստանը։ (Олькотт, Легенды звезды, стр. 7)[11])

[Եվ], ասում են, աստղերի հնագույն անունները կրում են էն դործիքների անուններն, որ դործ են ածվել էդ երկիրներում, էն

---

[1] Идолопокл. у древн<ных> евр<еев> Пальмова, <էջ> 216. Տանոր. ճեղինակի։

[2] Այս վերջին երկու նախադասությունները ձեռագրի նախորդ էջի վրա գրված է որպես ծանոթություն, ապա չնչված։

[3] Канг. Миф. <էջ> 167[10]) Потанин, Очерки С<еверо>-з <ападной> Монголии. Տանոր. ճեղինակի։

կենդանիների անունները, որ հայտնի են եղել էդ երկիրներում, և էն լեզվով, ինչ լեզվով խոսել են էդ երկիրների հին բնակիչները։

V

ՀԱՅԿԸ — ԴԱՎԻԹ

Էս ամենից հետևում է, որ ժողովուրդների էպոսներին մոտեցող մարդիկ պետք է լավ իմանան ու միշտ հիշեն մի օրենք, որ ժող<ովրդական> էպոսի համար ժամանակ ու տարածություն եթե կան, ապա կան հսկայական չափերով, և միջավայր էլ եթե կա — էդ էլ ամենից առաջ ամբողջ մարդկային կյանքն է ու մարդկության պատմությունը։

Չպետք է խաբվել էս կամ էն ժողովրդի մեծ էպոսի ազգային կամ ժողովրդական անունից։ Նա զանազան երանգներ է առնում զանազան կլիմանների տակ, ընդունում է էս կամ էն ժողովրդի պատմության ու հոգեբանության առանձնահատուկ գծերը, և դրա համար էլ դառնում է հարազատ, թանկ ու նվիրական որոշ ժող<ովրդի> համար։ Բայց ավելի ևս մեծանում է հենց ազգային կոչված էպոսի նշանակությունը նրանով, որ նա միաժամանակ դերազանցորեն հանրամարդկային ստեղծագործություն է։

Հայկական էպոսն էլ թեև պատմական տարրեր ունի իր մեջը, թեև իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ իդեալները, բայց ամենից առաջ նա մի հանրամարդկային ստեղծագործություն է, դյուցազնական ու սիմվոլիկ, մի հավաքական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատները, այլև բոլոր ազգերը — իբրև անհատներ։

Էս պատճառով էլ սխալվում են մեր էն բանասերները, որ հայոց պատմության բանալիով են ուզում բաց անել հայկական էպոսի մեծ փականքը, կամ ազգային ճրագով են ուզում լուսավորել նրա մութ անկյունները, կենթադրելով թե նա էս կամ էն հայ իշխանի կամ թագավորի ապարանքն է։ Մինչդեռ նա հսկայական մի աշխարհք է, ուր ամենքն ունեն իրենց հայրենիքը և նրան լուսավորում է արեգակը։

Առաջ գալով էս տեսակետից, ընդունված կարծիքին հակառակ, ես ուզում եմ ցույց տալ, որ հայ դյուցազնական վեպը, ինչքան էլ պատմական տարրեր ունենա իր մեջը — իրական վեպ չի, որ Սասունցի Դավթի վեպը Հայկի պատմությունն է, որ Հայկ ու Դավիթ միևնույն գաղափարն են արտահայտում, որ Դավիթը կապ

չունի միջնադարյան որևէ Դավիթ Բագրատունու կամ այլ հայ իշխանի հետ, և, որ էստեղ Դավիթը հատուկ անուն չի մինչև անգամ, այլ ածական և ընդհանուր շատ ժողովուրդների դյուցազունների համար։

Խորենացին աստվածներից սերած դյուցազունների մասին խոսելիս նրանց անվանում է վիթխարի, անհեթեթ ու խոլական, որ կնշանակի անճոռնի ու խենթ հսկաներ։

Պետք է նկատել, որ ոչ միայն Խորենացու պատմած ժողովրդական հին զրույցների մեջ, այլ առհասարակ, ամեն ազգի առասպելների ու զրույցների մեջ անճոռնիությունն ու խենթությունը կապված է հսկայի գաղափարի հետ։

Էդ հսկաներից մինն է և մեր Հայկը։ Հետևաբար Հայկն էլ անճոռնի ու խենթ հսկա է։

Էս բոլոր բառերի մեջ մեզ համար մի մութը բառ կա և էն էլ հենց Հայկն է։ Ինչ կնշանակի Հայկ։

Մենք վերևը տեսանք Հայկի պաշտամունքը, բայց թե ինչ կնշանակի բառը — Հայկ, չիմացանք։

Մեր հին մատենագիրները[1] ունեն հայկաբար, հայկանման և այլ սրա նման ձևեր, և հասկանում են հսկայաբար կամ հսկայանման։ Նրանցում Հայկն ու հսկան հոմանիշ բառեր են։

Սրանցից ավելի հին մի վկայություն հաստատում է նույն բանը։

Ասորա-բաբելական դիցաբանության մեջ Սատուրն մոլորակը նվիրված էր Բելին և Բելն էր ներկայացնում։ Եվ, ահա, ասում է. «Ջրհեղեղից հետո, երբ լեզուները խառնվեցին, սկսվեց Սատուրնի կռիվը Տիտանի հետ» (Религия древн<ых> нар<одов>, Арх. Христ<анфа> <էջ> 250)։

Տիտան կնշանակի հսկա և էստեղ գործ է ածված Հայկ բառի փոխարեն։

Բայց մի վկայություն էլ բերենք, որ ոչ մի կասկածի տեղիք չմնա, թե հայկը կնշանակի հսկա, վիթխարի։

Մեր շատ բարբառներում հ-ն փոխվում է խ-ի, այ - էի, կ-ն ք-ի։ Էս օրենքով էլ հայը դառնում է խեն, իսկ Հայկը՝ Խէք (Ծաղկաքաղ Վասպ<ուրականի> ժող<ովրդական> բանահյուս<ութեան> Հայկ Ա.Ճեմ<յան>, էջմ<իածին> 1917, <էջ> 17, 88)։

Եվ էսպեսով էլ Վասպուրականի մեր ժողովուրդը Հայկ համատեղությանն ասում է —Խէք։

---

[1] մատենագիրները= [մեջ Հայկ և հսկա նույնանիշ բառեր են գրեթե, [և] հսկայաբար ասելու փոխարեն—ասում են՝ հայկաբար, հսկայանմանը—հայկանման և այլն]։

Հայկը Խէք կամ Հէք դառնալուց հետո բաց եք անում Աճառյանի[1] հայ բարբառների բառարանը[12]) և տեսնում եք, որ, հիրավի, Հէք[2]—կնշանակի հսկա, վիթխարի մարդ. (էջ 658, Այնթապի բարբ<առ>): Եվ նույնիսկ ինքը — Աճառյանը հարցականով է դրել էս հէքը, թե արդյոք Հայկ չի նշանակիլ: Ես կարծում եմ, մենք էսօր կարող ենք էդ հարցականը վերցնել և հաստատել, թե այո, Հայկ կամ հէք — կնշանակի հսկա:

Էսպեսով՝ եթե դյուցազուն[3] խոլական ու անհեթեթ Հայկ հսկան մեր լեզվով թարգմանենք՝ դուրս կգա աստվածային անճոռնի ու խեղճ հսկա կամ վիթխարի:

Այժմ սրանից հետո գալով մեր ժող<ովրդական> էպոսին— ինչ կնշանակեն Սասմա փահլևան, ծուռ Դավիթ բառերը: Էստեղ էլ փահլևան հսկա, դյուցազուն կնշանակի, ծուռն էլ՝ խեղճ: Մուրճն է մնում Դավիթ անունը:

Դավիթ անունը մեր բանասերները համարում են պատմական անուն, XI—XIII դարերի մեր պատմության մեջ են որոնում ու գտնում մինչև անգամ՝ ամեն մինը մի որևէ Դավիթ իշխան:

Ճշմարիտ է, էդ ժամանակաշրջանում, թուրք - մոնղոլական ցեղերի արշավանքների օրերում, շատ Դավիթ կա Հայաստանի կողմից, որոնց վրա ես կավելացնեմ և Վրաստանի Դավիթները, որ մեծ դեր են խաղացել Հայաստանում:

Ճշմարիտ է, որ մյուս կողմից էլ շատ Մելիք կա, ժամանակակից պարսից Մելիք Շահն էլ գլխին, այսուամենայնիվ Դավիթների ու Մելիքների էս առատությունը և նրանց հետ պատահած դեպքերը մեզ շատ չպիտի շփոթեն և գամեն իրենց ժամանակին ու շրջանին:

Մինչդեռ կարծում են, թե էս կամ էն Դավիթ հայ իշխանն է իր անունը տվել հայ ժող<ովրդական> էպոսին, ես հակառակն եմ կարծում, որ կա մի աղբյուր, որ Դավիթ անունը տվել է և՛ հայ էպոսին, և՛ հայ իշխաններին, և՛ Վրաստան, և՛ Ռուսաստան, և՛ ամբողջ Եվրոպա:

Մինչև 5-րդ դարը Դավիթ անունը գրեթե չի երևում մեր երկիրներում: Այնուհետև է միայն հաճախանում, իսկ թուրք-մոնղոլական արշավանքների շրջանում ուղղակի մեր երկիրները լիքն են Դավիթներով:

Սովորաբար էս երևույթը բացատրվում է ս. գրքի ազդեցությամբ:

---

[1] [գավառական]

[2] Աճառյանի բառարանում—Հէք: Տանոր. ինդինակի:

[3] [հսկա]

Ինձ թվում է, թե դրանով հարցը չի սպառվում։

Համենայն դեպս մեր էպոսի Դավիթը հայ իշխաններից ոչ մեկը գրքից չի առաջ գալիս, ինչպես որ Մսրա Մելիքն էլ պատմական անուն չի։

Մելիք (Մելքոն և Մոլոխ) սեմիտական հեթանոսական կրոնի մեջ Բելին հավասար պաշտամունք ուներ և Մելիք կնշանակի թագավոր, այսինքն՝ աստվածների թագավոր։ Բայց սրա մեջ զարգացած էր Բելի միայն դաժան կողմը։ Մելիքը ոչնչացնող ու ավերող ուժի գաղափարն էր ներկայացնում և մարդազոհ էր պահանջում։ (Религия древн<ых> нар<одов>, Арх. Хрис<анфа> II, <էջ> 276)։

Եվ էս Մելիքը կամ Մոլոխը Ասորեստանի կամ Մուսուլի ժողովրդի դաժանությունն է[ր] հանդես բ<եր>ում հայկ<ական> էպոսի մեջ։

Ասորեստանցիների ընդունակությունների ու բարձր կուլտուրայի մասին վկայելով հանդերձ՝ [1 անընթ.] հին արձանագրությունները և պատմաբանները ցույց են տալիս, որ նրանք՝ «մի արյունկզակ ժողովուրդ էին, բռնաբարող ու սոսկաց, վավաշոտ, ծայրահեղորեն հպարտ, խաբեբա ու դավադիր։ Մի ազգ չի եղած, որ նրանցից ավելի եղականորեն գործ դրած լինի ուժի իրավունքը։ Ավերում, էրում էին իրենց անցած տեղերի քաղաքները, ողջ-ողջ մորթազերծ էին անում ու հարդով լցնում իրենց դեմ ապստամբողներին։ Իրենց արտաքին քաղաքակրթության պերճանքի ու նրբությունների հակառակ, նրանք մնացել են միշտ բարբարոս։» (Ուրարտու, Գ. Մնսրոպ.[13]) <էջ> 126—127, Մասպերո, Հին պատմ<ություն> <էջ> 252)։

Ահա էս Մուսուրի ժողովուրդն է ներկայացնում Մելիքը իրենց կրոնի մեջ և սա է մեր էպոսի Մըսրա Մելիքը։

Իսկ սրա դեմ կանգնած Դավիթը, սրան հակառակ, մեր էպոսի մեջ լուսավոր ու ամենակարող ուժն է ներկայացնում, հնդկական Սիվայի նման։ Եվ հենց էնտեղից էլ առնում է իր ծագումը։

Վեդայի մեջ — դեավ՝ աստվածների ընդհանուր անունն է, որ կնշանակի՝ պայծառ, գեղեցիկ, լուսավոր, և ամենաուժեղ, ամենակարող։

Թուրք-թաթար-մոնղոլական առասպելների մեջ դևը զարձել է տեր, միշտ պահելով իր իմաստը։ Տեր—Տուրութ, Տուրութը—Տուվութ, Տուվութը—Դավութ կամ Դավիթ։ (Потанин, Оч<ерки> С<еверо>-з<ападной> Монг<олии>, IV)։

Եվ Դուվութ կամ Դավիթ է կոչվում մոնղոլական հին էպոսի մեջ առասպելական (ոչ պատմական) Ջինգիս խանը։ Դավիթ է

կոչվում և՛ նրա ախպերը, որ դարձյալ դյուցազն է և Ջինգիս խանի խորթ եղբայրը...

Մոնղ<ոլական> էպոսի մեջ Դավիթ է կոչվում առասպելական Ջինգիս խանի խորթ եղբայրը, ինչպես Դավիթն ու Մսրա Մելիքը խորթ եղբայրներ էին: Եվ նույնպես հակառակորդ են ու իրար դեմ, ինչպես Դավիթն ու Մսրա Մելիքը:

Եվ գիտե՞ք ում որդիքն են մոնղոլական էպոսի հերոսները... Մոսուլի Մունլիքի... էդ էլ հերիք չի:

Մոնղոլական էպոսի հերոսն էլ հոր մահից հետո մնում է որբ ու հալածական իր հոր աշխարհքում: Նույնպես հովվություն է անում: Նույնպես գազաններն ու կենդանիները շփոթում է իրար հետ ու միասին հավաքում տուն բերում: Եվ վերջը ուժի ու գիտակցության է գալիս ու կռվով ձեռք բերում իր հոր թողած ժառանգությունը — իր հայրենի երկիրը: (Потанин, Восточн<ые> мотивы[14]) <էջ> 24, 245, 248):

Եվ Տուբութ, Տուդուդ, կամ Դավիթ անունը, որ էնքան շատ է ընդունված թուրք-թաթար-մոնղոլական հին ըրույցներում՝ նշանակում է տեր, աստվածային, ապա դյուցազուն, և սովորաբար գործ է ածվում որպես ածական: Ասում է.

«Собрались все тубуты и мадуры, (Մըհեր?) (Потанин, Очерки, <էջ> 918):

Եվ հենց էս մտքով, իբրև ածական Դավիթ անունը գործ է ածված նաև հայկական էպոսի մեջ: Որ<ինակ>, երբ Դավիթը պատմում է Խանդութ խանումի պալատը, ուր արդեն առաջուց եկած էին ու նստած 39 ուրիշ հսկաներ, էպոսն ասում է.

«Աբեռ մը թալեցին Տավթի տակ, նըստավ մեջ էն 39 Տավիթներու, որ ուրեմն առաջ աշըղներ եկեր՝ բերեր էին: էն 39 Տավիթներ, որ սեղան դրած հաց կուտեին, իրենց թրեր չըլտըրեր (մերկացրել), դրեր էին սեղանի տակ, նոր եկող Տավթին բրդելու, որ խանըմն տրենցմե մեկին մնար: Խալայեղներ (ծառաներ) եկան սեղան ուզեցին, որ նոր եկող Տավթին կեր բերեն: Ինոնք էլ ասին. «Թող գա խետ մե ուտի»: Միտքերնին էն էր, որ Տավիթն սպանեին, չյունքի էնոնք գիտեին, որ քաջ Տավիթն էն էր»: (Ջոջանց տուն կամ Սասմա ծռեր. խմբ. Ստ. Կանայան, Վաղարշապատ, 1910. <էջ> 27.):

Եվ էսպես էսօր էլ Դավիթ անունը մեր ժողովրդի մեջ գործ է ածվում որպես ածական, բայց արդեն կորցրած իր աստվածային հատկությունը: Այժմ կնշանակի անճոռնի, վիթխարի, խենթ և առհասարակ խենթ, շաշ: [Եվ] զանազան գավառներում գործ է ածվում զանազան հեգնական ձևերով՝ խելացի Դավիթ, խելոք

Դավիթ, Դավթի տունը դատարկ է, անխելք Դավիթ, շաշ Դավիթ, վերջապես հենց ուղղակի՝ Դավիթ, և միշտ կնշանակի խենթ։ (Տե՛ս և՝ Աճառյանի հայ բարբառների բառարանը)։

Մենք արդեն հասանք էնտեղ և դրծ ունենք էն սովորական երևույթի հետ, երբ աստվածայինը ժամանակի ընթացքում, նոր գաղափարների ու նոր աստվածների գալով, կորցնում է իր ունեցած նախկին պաշտամունքը, հետզհետե իջնում դառնում հեգնանքի, արհամարհանքի, երբեմն նույնիսկ թշնամանքի առարկա։ Երևկվա բարին էսօր դառնում է չար, պայծառը՝ խավար, ինչպես դևը, քաջքը և այլն։ Կամ ամենաշատը պահում են իրենց որևէ երկրորդական հատկությունը՝ ինչպես Հայկը կամ Խեքը, որ միայն իր վիթխարիությունն է կարողացել պահպանի [խաոների կամ հեթիթների անհետանալուց և արիական ցեղի տիրապետությունից հետո,] և կամ, ինչպես Դավիթը, որ միայն իր վիթխարիությունն է պահել, բայց երկուսն էլ, իբրև անցած պաշտամունքներ, կորցրել են իրենց աստվածային հատկությունները մեր ժող<ովրդի> մեջ, մինչդեռ կենդանի են Մոնղոլիայում։

Եվ ահա լրանում է մեր զբոսանքը հին ժամանակների հուշերի ու մշուշների մեջ, անցած դնացած առեղծվածային աշխարհքներում, հեռացած — մոռացված աստվածների հետ։

Մեր նպատակն էն էր՝ իմանայինք, թե իրենց անցնելուց հետո ի՛նչ են թողել նրանք մեր երկրում ու մեր ազգային էպոսի մեջ։

Ինչ է թողել սեմական Այոսը, ջրերի ու հովերի տերը, որ բնակվում էր Արմենիայի բարձրավանդակի վրա և հսկում էր Եփրատի ու Տիգրիսի ակունքներին։ Արդյոք նա է տվել իր այլն անունը էդ երկրին ու ժողովրդին և դարձել Հայաստանի ու հայ ազգի անվանադիրը՝ էպոնիմը։

Եվ ո՞վ է էն Հայկը, որ տակավին էսօր էլ պաշտվում է Մոնղոլիայի անապատներում ու Ալթայան լեռներում և ամենասիրված ու ամենամեծ կուռքի կերպարանքով՝ կանգնած է ամեն մի մոնղոլի շեմքի<ն>, իբրև նրա նախահայրը, նախապատճառը և օջախի պաշտպանն ու պահապանը։

Եվ ո՞վ է կամ ի՞նչ է հայ ժողովրդի վերջին դյուցազունը՝ Սասունցի հսկա խենթը, որ հետագա դարերի շերտավորումի հետ միասին եկել է հայ ժողովրդի էպոսի վրա ու փոխարինել Հայկին, կամ, թերևս, Հայկից հետո եղած ուրիշներին։ Արդյոք լոկ մի անու՞ն է սա, թե՞ ավելի մի բան։

Էս խնդիրները շարժելով, իհարկե, ես բնավ հավակնություն չունեմ սրանց վերջնական պատասխանը տալու իմ գրույցի մեջ։

Եվ էսօրվան իմ զրույցը միայն մի ներածություն է, առաջիկայում, եթե հաջողի, ավելի խորը մտնելու հայ ժողովրդի հին ու մեծ էպոսի մեջ։

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՑՔ

Զ¹ էջ¹
4—16 ...«էն ժողովուրդները աշխարհքի առջև» տողերի փոխարեն՝
Եթե ճշմարիտ է, որ էպոսը մի ժողովրդի կյանքի մեծության և բարձր կուլտուրականության չափանիշն է, ապա հայ ժողովուրդը ունեցել է մի շատ մեծ կյանք և աշխարհքի ամենակուլտուրական ժողովուրդներից մինն է, որովհետև նրա ազգային էպոսը աշխարհքի հնագույն էպոսներից մինը լինելով, միաժամանակ լավագույն էպոսներից մինն է, իսկ նրա ազգային հերոսը — Սասունցի Դավիթը ամենալուսավոր դեմքերից մինը ժողովուրդների դյուցազունների շարքում։

Զ² Եթե ճշմարիտ է, որ էպոսը մի ժողովրդի ապրած կյանքի խտացումն է և նրա մեծության ու կուլտուրականության չափանիշը, ապա հայ ժող<ովուրդը> իրավ<ու>նք ունի պարծենալու իր մեծությունով ու կուլտուրականությունով, քանի որ Սասունցի Դավթի նման մի հոյակապ էպոս է կերտել։

Զ³ Եթե ճշմարիտ է, որ էպոսը մի ժողովրդի ապրած կյանքի խտացումն է և եթե ճշմարիտ է, որ էպոսի հերոսները նրա հոգեկան և բարոյ<ական> կարողությունների մարմն<ացումը>, հետևաբար [նրա մեծության ու կուլտուրականության չափանիշը] —ապա հայ ժող<ովուրդը> հիրավի, մի մեծ [ու բարձր կուլտուրական] ժողովուրդ է, քանի որ Սասունցի Դավթի նման մի հոյակապ էպոս ունի։

Զ¹ 27 ....«առասպելն է» բառից հետո՝
[Եվ] (Հայկից սկսելով էս հին ու մեծ կռիվը մեր պատմության ընթացքում մի քանի անգամ կերպարանափոխության ենթարկվելով վերջնական ձևի մեջ մեզ հասնում է XI—XIII դ<արերի> թաթար-սելջուկյան արշավանքների դեմ մղած պատերազմների շրջանում)։

Զ¹ էջ²
14 ....«դեմքերը» բառից հետո՝

Շրջանների ու հերոսների փոխվելով փոխվել են և սիմվոլները (խաչ պատրազի)։ Երբեմն էլ հինն ու նորը խառնվել են իրար կամ տեղ-տեղ էլ հինն է մնացել—աղավաղված ու հեղաթյուրված և այժմ մեզ համար անհասկանալի։

Զ¹ 23 ...«ամբողջությունը» բառից հետո՝

Երկրորդ թափառական մոտիվները, որ մի ժող<ովուրդից> անցնում են մյուսին — ժամանակի ընթացքում, զանազան միջոցներով, ներս են խուժել հայ ժող<ովրդի> էպոսի մեջ էնպես, <ինչպես> էդ ժող<ովուրդները> ներս են խուժել հայ երկիրը։

ԷՋ 4 Վերջապես փոփոխության է ենթարկվում և ինքը էպոսը, իր մեջ զարգանալով ազգի կյանքի հետ։

ԷՋ⁴
Զ² 21 ...«հասել է մեզ»։ Բառերից հետո՝

[Անշուշտ] նոր կյանքի [զարգանալ<ու> հետ] ու նոր կարգերի ուժեղանալով ու հնի քայքայումով, հետզհետե թուլանում է ազգերի ու ցեղերի մաքառումը, զորանում են հանրային գաղափարները, անհատն է ուժեղանում, և էպոսը թուլանում ու վերջանում։

Էս է պատճառը, որ շատ ջահել ժողովուրդները, որոնց ազգային կյանքը ուշ է զարգացել կամ էպոս չունեն բոլորովին (ինչպես տաճիկները), և կամ ոմանք էլ ուշ են կազմակերպվել, միմիայն մասեր են ստեղծել, [դեռ] չեն կարողացել ամբողջացնել, որ վրա են հասել նոր ժամանակները (ինչպես ռուսները)։ Ժող<ովուրդներ> էլ կան, որ կղզիացած են եղել ու ազգային մեծ մաքառումներ չեն ունեցել, ինչպես իսպանացիք։

II

ՀՆԱԳՈՒՅՆ ՀԵՏՔԵՐԸ

ԷՋ⁵
Զ³ Սկիզբ, որ չկա հիմնական տեխստում

[Ամեն մի ժող<ովուրդ> էպոսի վրա աշխատել է հազարավոր տարիներով ոչ միայն ինքը — հարազատ ժողովուրդը, այլև շատ ուրիշ ժողովուրդներ։

Ուրիշ ձևով ասենք, հազարավոր տարիներով էպոսի հերոսը իր հրեղեն ձիու վրա ոտնատակ է տալիս շատ մոտիկ ու հեռավոր աշխարհքներ, շատ բան է բերում իրեն հետ ամեն կողմից ու իրեն հետքերն էլ թողնում ամեն տեղ։

Եվ ահա նրա բերած ու մթերած գանձերը ճանաչելու համար,

ինչպես և նրա հետքերը գտնելու համար պետք է շատ տեղեր թա-
էջ՝ փառել]։

21—23 «Եգիպտոսը մինչև էսօր» տողերի փոխարեն

Զ¹ Եվ էնքան ուժեղ է եղած Հայաստանը էդ ժամանակներում, որ Եգիպտոսը I ու II Ռամզես փարավոնների օրերում տեղի է տվել Հայաստանի առջև ու դաշն է կապել նրա հետ, մի դաշնագիր, որ մնում է մինչև մեր օրերը։ Եվ համաձայն էդ դաշնագրի, Հայաստանի խատերի Խետասար թագավորը ք. ա. 1374 թվին, հանդիսավոր մտնում է եգիպտական մայրաքաղաքը և տոնում իր աղջկա հարսանիքը Ռամզես II փարավոնի հետ։ (Халат<янц>, Ист<ория> Арм<ении> <էջ> 52)։

Զ³ 23 ....«Էսօր» բառից հետո՝

Դաշնագրի մեջ հիշվում է հեթիթների թագավորը — Խետասար, որ աստծու որդի էր ու թերևս աստված էր համարվում ու կոչվում էր բաալ կամ բաաղ Խետասար։ (Халат<янц>, Ист<ория> Арм<ении>, <էջ> 52)։

...Բաալ կամ Բաաղ Խետասար, և ով գիտի թե մի որևէ կապ
էջ⁷ չունի մեր էպոսի կռապաշտ Բաղդասար <թագավորի> հետ։

Զ¹ 1 ....«Կռիվը» բառից հետո՝

Եվ Հայաստանի պետություններին միշտ վտանգը սպառնացել է հարավից ու հարավն է մի քանի անգամ վերջ տվել էդ բարձրավանդակի իշխանությանը, ինչպես ք. ա. VIII դարում հեթիթների մեծ թագավորությանը վերջ տվեց Ասորեստանը։ Եվ էդ պատերազմները եղած են անվերջ ու կատաղի։ Ազդեցությունն էլ
էջ⁸ Զ³ ավելի մեծ է ու խոր։

21—26...«Էստեղ փորձ անեմ» տողերի փոխարեն՝

Էլ թողնում եմ զանազան մանրամասնություններ, թեև շատ կարևոր։

Մեր հարևան Պարսկաստանի ազդեցության մասին մինչև անգամ ավելորդ է խոսել՝ էնքան է մեծ ու էնքան է հայտնի։

Բայց ես ուզում եմ մի քիչ էլ էն կողմը՝ դեպի Հնդկաստան և թաթարական Միջին Ասի<իա> անցնել և ինձ առաջնորդում է մի
էջ⁹ կարևոր հանգամանք։

Զ³ 5 ....«Հիմալայան լեռներում» բառերից հետո՝

[(եթե կասկած է առաջ գալիս, թե մեր մայր տաճարի, Էջմիածնի անունն էլ կապված է Արևելքի հետ, որովհետև աջա — կամ էջա — <1 անընթ.> հնդկական կրոնի մեջ կնշանակի մի անծին, կամ միակ,— որ միածին է դառնում քրիստ<ոնեության> մեջ և զույգ բառերի օրենքով՝ էջմիածին) Рагозина, Ист<ория> Индии, стр. 463)]

Եթե մեր մեծ ավանդությունը — ջրհեղեղի, տապանի և այլն— ունեն և նրանք, ապա ինչու չի կարող պատահել, որ մեր նախահոր անունն [էլ] ու առասպելն էլ էնտեղ որոնենք ու գտնենք։

III

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԿ

էջ[10]
Զ[2] 12 ... «տեղ» բառից հետո՝

Միակ տեղը, որ հանդիպում ենք Հայկ անվան նման մի անվան, էդ Ալթայական թաթարների առասպելի Եայըկ դյուցազն է, բայց Ուլաղան բարձրագույն աստծու որդին, որ բնակվում է երկընքում, հարկավ, աստղերի կերպարանքով։

Նույն թաթարական առասպելի ասելով Եայըկ նաև էն լեգենդական անձն էր, որ աստծու հրամանով տապան շինեց և իր երեք որդով ազատվեց ջրհեղեղից ու, ի միջի այլոց, [նաև] աշխարհքը զարգացրեց և խաղողի որթը տնկեց ու գինի շինեց։

Զ[3] 16 ....«անունները» բառից հետո՝

[Իհարկե, ես բնավ հավակնություն չունեմ էս խնդիրը լուծելու, այլ միայն իմ որոնումների արդյունքն է, որ դնում եմ հրապարակ։ Որոնումներ, որ ունեցել են մի նպատակ — հայկական էպոսը
էջ[15] հասկանալ]։

Զ[2] 3 ....«հետ» բառից հետո՝

Արդեն Հայկի առասպելն ասում է, թե Հայկը, որ եկավ՝ տեղացիներ կային ամեն տեղ Հայաստանում։

Թերևս սրանից է և հայ ժող<ովրդի> հռչակավոր անմիաբանությունը։

էջ[16] Մի բառ, որ շատ ժող<ովուրդներ> նույնիսկ չունեն։

Զ[2] 10 ....«պատկանում» բառից հետո՝

— այսինքն էն ցեղին, որ հնուց մինչև էսօր ունի Հայկի պաշտամունքը, մի պաշտամունք, որ չկա Հայաստանում, ուր զորացել ու տիրացել է արիական ցեղը։

....«խատեր» բառից հետո՝

(քաջեր?) մեր անհետացած քաջերը չեն?

(խաչ? վրաց խատի.)

Խատերը երկնքից իջած ոգիներ են։

Խատերը երկու տեսակ են. մի տեսակը հյուսիս արևելյան խատեր, որ չար են ու պիղծ, մյուսները հարավ արևմտյան, որ մարդկանց հովանավորն են ու երջանկություն տվողը։

Սրանք կոչվում են նաև խատ-հայ... Խատ էստեղ էլ Մոնղո-

լիայի Մենում կնշանակի տեր, ինչ որ նշանակում էր հին Արմենիայի Միննեում — տեր։

(Թվում է, թե մեր աշխարհից անհետացած խաւերն են սրանք, որոնց նոր տիրող ցեղը չար ու պիղծ է հայտարարել)։

Ուրեմն հին նկարները ցույց են տալիս, թե խաւերը կամ հեթիմները մոնղոլներ էին։ Մոնղոլներն էլ մինչև էսօր խաւեր ունին, խաւն էլ էնտեղ նույն իմաստն ունի էսօր, ինչ իմաստ ունեցել է
էջ[18] Հայաստանում հազարաւոր տարիներ առաջ։

զ[3] 7 ....«Հրիկ» բառից հետո՝

Ալթայան և առ<հասարակ> <՞> Միջին Ասիական և <1 անընթ.> թաւթար-մոնղոլ — ցեղերի մեջ ամենատարածված կուռքը (օնգոն) է Ջայկ, Եայիկ, Ըիկ, Հըիկ, որ միշտ պաշտպանում է ամեն մեկի տան շեմքը — մուտքը։

ջ — փոխվում է հ —

Հայկը — Բայ Ուլաղան բարձրագույն արարիչ աստծու որդին է։ (Սրա անունով սրբազան սար)։

Ջայկ կամ Հայկ ալթայցիների մեջ ունի հետևյալ նշանակությունները.

1. կուռք նախաստակի մորթուց,

2. աստվածներին նվիրված կենդանի,

3. ձնի կամ հեղեղի տակից դուրս եկած երկիրը։

(Հայկը երկրի ներկայացուցիչն էր, Բելը՝ երկնքի)։

Ուրյանխայցիք սրբազան լեռներին անվանում են — ադըկ, որ նույն է այըկ— (նրանցում յ—գ է) և ըիկ։

էջ[19]
զ[3] 2 Երկրորդ տողից հետո՝

Էս ամենից հետո՝ կասկած է առաջ գալիս, թե արդյոք Հայկը արևելյան ծագում չունի։ Եվ թերևս նա ջոկ է, հայը ջոկ։

զ[1] Սրանից հետո մեծ ռիսկ է մեր էպոսի փս կամ էն մոտիվը բացատրել մեր գավառներից մեկի սովորությունով, թեկուզ դա Սասուն լինի, ինչպես ասել է մեր էպոսի մեկնիչ Մ<անուկ> Աբեղյանը։ Նա Սասունի կյանքի գծերով է բացատրում Դավթի կամ Մհերի մանկության չարությունները ու տված վնասները, որ նրանք ծառի կատարը կորացնում են իրենց հասակակից երեխաներին <1 անընթ.> նստեցնում ու բաց թողնում, գլուխները պոկում են հոլ են շինում խաղում և այլն. (Մ. Աբեղյան, «Հայ ժող<ովրդական> վեպը», Թիֆ<լիզ>, 1911, էջ 54—58)։

Մինչդեռ նույնն է անում մանուկ Ամիրանը վրացական էպոսի մեջ, նույն չարությունն է անում պարսկական Զոհրաբը, կիրգիզական <....> և Բայան սլու<...> Ռոբերտ դիավոլ<....> ոու-

սական Վասիլիյ Բուսլաև և շատ ուրիշները, (չեն բերում), որոնք Սասունի հետ ոչ մի կապ չունեն։

Եվ Մ<անուկ> Աբեղյանը դեռ ավելի հեռուն է գնում։ Նա կարծում է, թե «մեր վեպը ծնունդ է Սասնա և հատկապես Տարոնո, (էջ 18) [և էնտեղից է տարածվել ազգի մեջ]։ <Մի քանի տող անընթ>։

Էս մի շատ վտանգավոր ճանապարհ է, որ կարող է տանել ու ձգել մեծ մոլորությունների մեջ։ Էն ժամանակ, երբ վեպը և նրա հերոս դյուցազնը իրեն հրեղեն ձիով երկինքն ու երկիրն է տակն ու վրա անում ամենահին ժամանակներից մինչև վեպը պատմելու օրը — վեպի մեկնիչը պտրտում է մի [փոքրիկ] նեղ շրջանում, [մի որևէ գավառակում] և էնտեղ է որոնում բացատրություններ։

Աբեղյանը Դավթի հորն ընկնելու մոտիվը բացատրում է Դավիթ Բագրատունու բանտարկությունով («Հայ ժող<ովրդական> վեպը»)։ Մհերի ժայռի մեջ փակվելն էլ XIII <?> դարում երկու հայ Աշոտ իշխանների դեմին եկած բանտարկությանն է համարում (նույն էջ 88)։

Մինչդեռ էդ մոտիվները թե հորն ընկնելու և թե ժայռի, քարանձավի մեջ, կամ լեռան մեջ և փակվելու մոտիվները ամեն էպոսների մեծ մասը՝ սկսած մեր հարևան վրացիների էպոսից, որի մեջ Թշնամին Բեժանին հորի մեջ է ձգում ու բերանին ծանր քար դնում, մինչև հնագույն էպոսների, հնագույն դիցաբանական ձևերը, որոնց մեջ հորի տեղ արդեն մութն աշխարհքն է հանդես գալիս կամ սև ամպը, որոնց մեջ կորչում է հերոսը, որ արդեն արևն է։

Էստեղ էլ Մհերի փակվելու մոտիվը — սկսած մեր հարևան վրացական Ամիրանից, մինչև Միջին Ասիայի թաթարական Աբըրղանը, և թափառական հրեայից (որ Հայաստանից է անցել Եվրոպա) մինչև ռուսական Ստենկա Ռազինը, և շատ ու շատ ուրիշները։

Նույն մոլոր ճանապարհներով է անում իր որոնումները և մյուս բանասերը — Ս<տեփան> Կանայանը։ Սասունցի Դավթի Քուռկիկ Ջալալին պարզելու համար նա մերթ Մասիսի շուրջ ապրող քուրդ ջալալի ցեղի մեջ է դեսնդում, մերթ Քյոռօղլու նաղլի ու ծագման, և կանգ է առնում XIII դ<արի> Սյունյաց Հասան Ջալալ Դոլա իշխանի վրա ու կարծում է թե նրա ձին պիտի լինի։ («Ջոջանց տոմն», Ս. Կանայան, 1910, ԺԴ, և այլն) և սրանց նման մի շարք մեկնություններ։ Մինչդեռ հենց ինքը էպոսը ասում է, թե Քուռկիկ Ջալալին հրեղեն էր։ (Նույն, էջ 63) և քրդերեն ասում է Բողբեղավին։ (Ինքը թարգմ<անում է> ճերմակ ճարտուկ)։

Եվ էդ ձին՝ Բելերեֆոնն ամեն գրեթե բոլոր էպոսների դյուցազունները — Ապոլոնից ու իր Պեգասից մինչև Ս. Գևորգ (ճեր-

մակ ձին) և այլն, մինչև Լենգ Թեմուր, որի ձին հրեղեն էր ու ձվաճերմակ:

Ես, հարկավ, էստեղ առարկելու չեմ մեր բանասերների [բոլոր] մեկնությունների դեմ մի առ մի, միմիայն մի քանի օրինակ եմ բերում ճանապարհի, մեթոդի սխալ լինելը ցույց տալու:

VI

ՀԱՅԿԻ ՏՈՏԵՄԸ

էջ[21]

2[3] ...«Գազանամարդ» բառից հետո՝

14 Ժող<ովուրդները> մինչև էսօր էլ հավատում են, որ արջի մորթու տակ բանական մարդ է ծածկված և նրա կերպարանափոխության պատմություններով լիքն են ժող<ովրդական> զրույցները:

2[3]

17—19 (Ժողովուրդներ կա՛ն կուզեք խոսեք) տողերի փոխարեն՝

Ժող<ովուրդներ> կան, որոնք արջի մեջ դավանում են և իմաստություն և խելք և խիղճ: Եվ պատահած ժամանակ խոսում են հետը: Եվ կարծում են նա ամեն <բան> գիտի: Եվ արջի մասին չեն խոսում էնտեղ, որտեղ մարդ կա, որ չի հավատում կամ ծիծաղում է:

2[3] 16 ....«Քար ու կշեռք» բառերից հետո՝

Մեծ արջին անվանում են գութան-աստղ, ինչպես անգլիացիք և հույները, իսկ հնում էլ անվանել են սայլ կամ սայլաթավ, ինչպես լատիններն ու հույները:

Հնում փյունիկեցիք էին արջ անվանում ողջ աստեղատունը, իսկ մինչև այժմ արջ են անվանում արաբները և միջին ասիական մի քանի ցեղեր: Իսկ Օրիոնին արջ են անվանում, այսինքն՝ այրգ միմիայն միջին ասիական թաթար մոնղոլական ցեղերի մեջ:

2[2] 18 ....«դյուցազունի» բառից հետո՝

Ալթ<այերեն> այրգ կնշանակի արջ, ուրյանիացիների մեջ — նույն աղրկ կամ Այրկը — արջ, և մոնղոլերեն ուդրկ կամ ույրկ — արջ: Ահա և էն սրբազան առարկաները արջի անվան դեմը:

Ալթայացիների մեջ Հայկ մեծ կուռքն է ու աստծուն նվիրված ձին (նույնը) և արջը — այրգ: Յակուտների մեջ, չուվաշների մեջ, սամոեդների մեջ, <....>

Ռուս<աստանի> Իրկուտսկ նահանգ<ում> արջը «омрачённый» մարդ է: Նա չի կարող մարդու երեսին նայել, կրակի պես էրում է: Ոնց որ մենք չենք կարող նայել արևին: Դրա համար էլ

մարդուն պատահելիս միայն մի անգամ է նայում (գելն էլ), և եթե մի անգամ նայելուց հետո չի հարձակվում — գլուխը կախ է գցում։ Որսորդները գլխարկները աչքներին <են> քաշում, որ արջը մարդուն չճանաչի։

ՀԱՅԿ—ԱՐՋ

Բուրիաթները արջի վրա գնալիս որջում ձեն են տալիս, թե թագավոր ես՝ աղեղդ ու կապարճդ վեր դիր, թե թագուհ<ի> ես полотенце (այսինքն, երեխադ <ˆ> փորիցդ վեր ածա) (էգին ու որձին)։

<Մի քանի անհասկանալի նմուշներ>

Ասում են՝ արջն աստծուց մեծ մատն է խնդրել։ Աստված ասել է՝ եթե քեզ բութ մատը տամ, մարդուն էլ թևեր պիտի տամ, իսկ շանը — հրացան։

Արջը 12 ձիու ուժ ունի։ Ենիսեյի օստյակները ասում են արջի մորթու տակը աստվածային ուժով ու բանականությունով օժտված մարդ է ծածկված։ Սամոեդներն ասում են — մարդուց ու ոդուց է ծնված արջը։ Մերը՝ կես մարդ է եղել, կես գազան։ (Հեքիաթների մեջ բոլոր ժողովուրդների նույն մոտիվը)։

Զ² Էսօր էլ Ռուսաստ<անի> Տոբոլ<սկի> նահանգի օստյակները արջից ներողություն են խնդրում որսալուց առաջ, ինչպես և որսալուց հետո, երկրպագում են սպանած տեղը կամ մորթին։

V

ՀԱՅԿԸ — ԴԱՎԻԹ

էջ²⁵
Զ¹
20—25 ....«Էս պատճառով-լուսավորում է արեգակը» տողերի փոխարեն՝
Մեր մեկնիչները <....>

Որոնումները և մեկնությունները՝ մեր պատմության շրջանակում սխալ են և սխալ հետևանքներ են տվել։

Պատմությունը մերն են նայում միայն, էն էլ հաճախ նեղ, որոշ շրջանի։ Մինչդեռ էպոսի կամ հեքիաթի և կամ լեգենդի նայելիս — ամենից առաջ պետք է մտածել, թե աշխարհքի պատմությունն է մեր պատմությունը։

(Ես կարծում եմ, մեր որոնումների մեջ էսպես պետք է շարժվենք։

1. Ասորա-բաբելական և եգիպտական աշխարհք։
2. Հնդկական աշխարհք։
3. Պարսկա-թաթարական աշխարհք (մեջը նաև Չինաստան)։
4. Հրեա-հունա-հռոմեական և
5. Մեր պատմությունը)։

Մի շարք մեծ դռներ կան, որոնցով կարելի է մտնել հայկ <ական> էպոսի հոյակապ ապարանքը։

Դրանցից մեկը Մսրա աշխարհքի պատմությունն է, մյուսը Մոսուլի Վերկու անուն, որ խառը հիշատակվում են մեր էպոսի մեջ— Մսրա Մելիք, և Մսլա Մելիք։

Եվ երկու աշխարհքն էլ, թե եգիպտոսը, թե ասորա բաբելական աշխարհքը իրենց [ընդհարումներով] ու քաղաքակրթությունով ու շփումներով մեծ հետք են թողել ինչպես հայ պատմության ու քա-
էջ 27 ղաքակրթության, էնպես էլ էպոսի վրա։
2³ 23 ....«երսկա» բառից հետո՝

Մեր լեզվի դույզ բառերի օրենքով, որոնցից մինը սովորաբար մյուսի թարգմանությունն է, արդեն մի ճանապարհ կա։ Էս օրենքով էլ Հսկա Հայկի մեջ մեզ համար Հայկ մութ բառն էլ պետք է որ
էջ 28 հսկա նշանակի։
2³ 2 ...«վիրխարի» բառից հետո՝

Էսպեսով խեք կամ հեք կնշանակի հսկա, վիրխարի, անհեթեթ, անճոռնի, և գուցե եքքե կամ եքքա թաթարական բառն էլ, որ կնշանակի հսկա, վիրխարի՝ կապ ունի սրա հետ։

[Զգուշանում եմ ասելու] եթե հայրն էլ նույն իմաստն ունի և, [սրա հետ] էս ձևի հետ էլ կապ ունի հեյվարա կամ հայվարա, որ կնշանակի հսկայաբար։

Հսկայակերպ կամ հայկաբար, ինչպես գործ են ածում մեր պատմագիրները, ապա էն ժամանակ Հայաստան կնշանակի հսկաների երկիր, որովհետև աստանն էլ սանսկրիտ <երեն> նշանակում է՝ տեղ, վայր, բնակարան։

էջ 32 Բայց հեշտ կարող է պատահել, որ Հայկն ու հայը տարբեր
2³ լինեն իրարից, ինչպես այոսը կամ խառը և Հայկը։
2—4 ....«[Եվ] զանազան-կնշանակի խենք» տողերի փոխարեն՝

Դավիթ անունը մեր զանազան բարբառներում — Վան, Ադանա, Մսարբերդ, Բուլանըխ, գործ է ածվում զանազան հնդևական ձևերով — Դավիթի տուն դարդակ է, խեղոք Դավիթ, խեչացի Դավիթ, և ընդհանուրի դեմը դրած է — խեննի։

Թիֆլիզի բարբառում առած կա, որ մի բանի անհնեթությունը ցույց տալու համար՝ ասում են.— «Ինչ իծանիր վուրթի Դավիթ»: («Թիֆլ<իզեցոց> մա<ամոր> կյանքը, Գ<եորգ Տեր Ազեքս<անդրյան>, Թիֆ<լիզ>, 1885, <էջ> 108): Եվ էսպես էլ բացատրված է, թեև սա կնշանակի անհնեթեթ բան:

Լոռի գործածական է — ա շաշ Դավիթ, կամ Դաթիկո ձևը, մեկի շաշությունը ցույց տալու համար: Դաթիկո ձևը անշուշտ վրաց ազդեցությունն է:

ԵԼՈՒՅԹՆԵՐ
ՈՒ
ՃԱՌԵՐ

1912

<ՀԱՅՑ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՉԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ>

Նախքան նոր անդամագրվել ցանկացողների քվեարկության անցնելը, ես կարծում եմ, կարևոր է բացատրել մեր կանոնադրության առաջին կետը, թե ո՞վ կարող է անդամ գրվել Հայոց Գրական Ընկերությանը. մանավանդ այդ հարցն այժմ մամուլի մեջ վեճի առարկա է դարձել: Մեր կանոնադրության առաջին կետի հիման վրա Ընկերությանը անդամ կարող են լինել նրանք, որոնք հայոց մեջ աշխատում են գրականության, գիտության և մամուլի ասպարեզներում: Այսպիսով պարզվում է, որ Ընկերությունը ընտրյալների մի կաճառ չէ, հայկական ակադեմիա չէ, այլ մի հաստատություն, որի հարկի տակ կարող են ժողովվել խոշոր և տաղանդավոր մարդկանցից սկսած մինչև ամենահամեստ աշխատավորն այդ ասպարեզներում՝ փոխադարձ օգնության և բարոյական-գեղարվեստական զարգացման նպատակով, ճիշտ այնպես, ինչպես է Ռուսաց գրական ընկերության մեջ, ուր Տոլստոյի, Տուրգենևի, Չեխովի և մյուս մեծերի հետ միասին գրած են շատ համեստ անուններ: Եթե մենք խիստ ենք լինելու և խորական, ես կցանկանայի, որ այդ լիներ Ընկերության բարոյականի վերաբերությամբ և աշխատեինք նրա բարոյական պատկերը պահել մաքուր, անաղարտ, բարձր ամեն նեղ կուսակցական միտումներից: Եվ արդեն առանց այդ պայմանների չի կարող լինել գրական-գիտական մթնոլորտ, չի կարելի երևակայել գրական-գիտական մի հաստատություն:

1913

<ԵԼՈՒՅԹ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈՒՅԹԻՆ>

Հովհ. Թումանյանը գտնում է, որ բանաստեղծի մասին խոսելիս քննադատության մեթոդին երկրորդական տեղ պետք է տալ: Ասում է, այս կամ այն մեթոդով չի կարելի գտնել բանաստեղծին կամ բանաստեղծությունը նրա գրվածքների մեջ, ինչպես չի կարելի անդամահատության այս ինչ կամ այն ինչ եղանակով անդամահատելով գտնել գեղեցկությունը: Մեթոդներով ամեն բան էլ կգտնեք, բայց բանաստեղծությունը կամ բանաստեղծին կարելի է գտնել զգացումով, ըմբռնումով, հոտառությամբ: Ասպա երբ արդեն գտնված է բանաստեղծը, նոր միայն գործադրել մեթոդները նրան վերլուծելու:

Պ. Թումանյանը այնուհետև մի քանի լրացուցիչ ուղղումներ է մտցնում դասախոսի տված բացատրությունների մեջ Սայաթ-Նովայի երգերի վերաբերմամբ:

Այսպես՝ քաղաքում չորս տարի քարվան չմտնելու, մայրերի հետ ռեհան հյուսելու և ծովի տակ թաքնված վանքի մասին և այն մութը տեղերի մասին, որ կան տպագրության մեջ:

<ԵՐԵԿՈՒՅԹ ԲԱՅՑՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ>

Հայ Գրողների Կովկասյան Ընկերության ապրիլի 25-ի 12-րդ հոբելյական երեկոն նվիրված էր դարձյալ Բաֆֆու հիշատակին: Ընկ<երության> նախագահ Հովհ. Թումանյանը, բանալով երեկույթը, մի քանի խոսք ասաց և մի երկու հիշողություններ պատմեց նրա մասին: Քսանհինգ տարի առաջ, ասաց պ. Թումանյան, հայ ազգը ընկղմված էր խոր սուգի մեջ իր մեծ վիպասանի՝ Բաֆ-

ֆու մահվան պատճառով: Անցել են այդքան տարիներ, դեռ հայի աչքը չի ցամաքել, այնքան տարիներ հայի սրտում ապրում է դեռ վիպասանին համակած մեծ ցավը նրա հիշատակի հետ միասին:

Այսօր, որ հարգանքի խոսքեր ենք ասում Րաֆֆիի հիշատակին, չի կարելի չհիշատակել նրա մեծ աշխատասիրությունը, որով միայն կարելի էր այնքան բեղմնավորության հասնել: Ինքն անմատչելի էր հասարակությանը, հասարակական վայրերում գրեթե չէր երևում, շատ գործերի չէր խառնվում և չնայած միշտ էլ նյութական մեծ կարիքների մեջ, ամբողջովին նվիրված էր իր գրական աշխատանքներին: Քսանհինգ տարի առաջ Րաֆֆու մահը մեծ սուգ էր հայի համար, ճիշտ է, բայց նա միևնույն ժամանակ և՛ գրականության հաղթանակն էր: Թիֆլիզի, ինչպես և ամբողջ հայությունը դեռ տեսած չէր Րաֆֆիի թաղման պես մեծ հանդես. նրանով գրականությունն սկսում էր հարգանք ու պատիվ վայելել հայի կյանքում: Հայի հիացմունքը այնքան մեծ է դեպի Րաֆֆին, որ մինչև այսօր քննադատություն չի ուզում լսել նրա մասին, այլ միայն գովասանք ու կեցցե:

<ԽՈՍՔ ՐԱՖՖՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ>

Ճապոնացիների մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետևելով էս գեղեցիկ սովորությանը, էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Րաֆֆու հոգուն:

Անմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական գեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վհատներին, որ տկարներիս համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արատասոքը, որ անհանգրստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, էսօր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ, և մեր զգացմունքները, որ համակված են քո շնորհ ու հիշատակով: Եկել ենք քո գերեզմանի վրա օրհնելու և փառաբանելու քո տված անհանգստությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր և

էն նահատակների շարքերը, որ գնացին քո ցույց տված ճանապարհով։

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, ուր քո մահից 25 տարի հետո՝ դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հետու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ քո շիրմի վրա ու կանչել.— Արդեն կատարված է քո իղձը, ո՛վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են էնքան արյուններ. էնքան կոտրած, և «ամեն կողմից պանդուխտ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք...» Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նի հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ո՛վ անհանգիստ հոգի։

<ՏԻՆԴԻՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ>

Առաջ գալով ստեղծագործող մարդու, բանաստեղծի կանխատեսության և կանխագիտության հիմնական ունակություններից, որոնք հատկանշում են նրան, Հովհ. Թումանյանը ասում է, թե տաղանդները կարող են շեղումներ անել և շեղումների մեջ էլ դարձյալ կմնան տաղանդավոր, բայց առհասարակ գնում են ուղիղ ճանապարհով և նախորոշված նպատակներով, միտումով, տենդենցիայով չեն առաջնորդվում իրենց ստեղծագործությունների ժամանակ։ Հայնեի ասածի նման, բանաստեղծը կապված է իր ժամանակների, հասարակությունների և մարդկանց հետ անթիվ անտեսանելի թելերով, կապերով և խոսում է նրանց ամենի սրտից. կարիք չունի բռնի կերպով մի միտք, մի գաղափար առնի և դառնա նրա պրոպագանդիստը գեղարվեստի ձևերով, թեկուզ և էդ մի՛տքը կամ գաղափարը կարող է շատ հրատապ խնդրի կերպարանք ու բնավորություն ունենալ և շատ հուզել ժամանակակից հասարակությունն ու հռչակ տալ հեղինակին։ Սրանից է նույնիսկ առաջ գալի էն երևույթը, որ կյանքում հաճախ տաղանդավոր գրողից ավելի մի անտաղանդ գրող է աղմուկ հանում ավելի շատ ու հռչակվում. իբրև օրինակ կարող եմ հիշատակել ռուսաց գրականությունից Պուշկինն և իր ժամանակակից մի ուրիշ բանաստեղծի դեպքը, մի բանաստեղծի, որի անունը մոռացել եմ, բայց կա ռուսաց գրականության պատմության մեջ, և իրենք ռուսներն էլ են մոռացել։ Իր ժամանակին ռուս հասարակությունը շատ ավելի բարձր էր դասում նրան

Պուշկինից, բայց մի Բելինսկի նկավ ցույց տվեց, որ միտումնավոր մի գրող, որ հասարակությանը հուզող զանազան խնդիրներ առնում է նույնությամբ, հանգի դնում և չափածո տողերով տալիս հասարակությանը, նա բանաստեղծ չի, կեղծ ապրանք է ծախում, և ժամանակի արևի տակ նրա գույները խունացան։

1914

<ԲԱՆԱԿՌԻՎԸ ՄԱՄՈՒԼԻ ՄԵՋ>

Ինչպես ամեն մի կուլտուրական ժողովրդի, նույնպես և հայ մամուլի մեջ եղել է և կա բանակռիվ։

Հաճախ բանակռիվը ստանում է ոչ ցանկալի կերպարանք շնորհիվ այն բանի, որ հաճախ բանակռվի ժամանակ պաշտպանվում են անարդարություններ, խեղաթյուրվում են փաստերը և այլն։ Այժմ, երբ դրված է այդ հարցի լուսաբանությունը, ցանկալի է, որ խոսողները լինին հանդիստ, կորրեկտ և զգույշ ժամանակակից բանակռիվներին գալիս, որով վիճաբանությունները կարող են սուր կերպարանք ստանալ, որը, իհարկե, ցանկալի չէ։

<ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋԸ>

Հովհ. Թումանյան.— *Կասկած է հայտնում պ. Աղբալյանի այն մտքի դեմ, թե մեր հին գրաբարը ավելի հարազատ է հայի հոգեբանության, որովհետև գրաբարի տիրապետության շրջանումն էլ հունական լեզվի ազդեցությունը կար, որը ներս էր մտնում գրաբարի մեջ Հունաստանի զանազան քաղաքներում սովորող հայ աշակերտների միջոցով։ Թերևս այն ժամանակ էլ գոյություն ուներ հայ ժողովրդական լեզուն իր առանձնահատուկ շարադասությունով։ Բայց թեկուզ եղած էլ չլինի, այսօր կա և կարիք չկա փոխելու, այլ նրա վրա պետք է հիմնել մեր գրական լեզուն և ճոխացնել թե՛ բոլոր բարբառներով, թե՛ գրաբարով և թե՛ օտար փոխառություններով։*

***

Հովհ. Թումանյան.— *Կարծիք է հայտնում, թե ինչպես մարդիկ ապրելիս՝ օրենքը չունեն ի նկատի, գեղարվեստագետներն ստեղծագործելիս՝ թեորիաներով չեն առաջնորդվում, էնպես էլ*

լեզու ստեղծողները երբեք քերականության կանոններով և զանազան հրահանգներով չեն գրում կամ խոսում։ Լեզուն ստեղծվում, կազմվում է կենդանի գործակցության մեջ, և մանրամասների մեջ ինչքան էլ տարակարծիք լինեն՝ ամենքն էլ հավան են մեր գրական լեզվի ազատ զարգացման ճանապարհին, որ նա օգտվի բոլոր աղբյուրներից, մնացածը շնորհքի և ճաշակի գործ է։

1916

<ԳԵՂԱՐՎԵՍՏԸ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒՆԻ>

Ես շատ եմ զարմանում մեր Գևորգի (Բաշինջաղյանի) բռնած դիրքի և այսօրվա ժողովից բացակա լինելու վրա։ Նա ասում է թե՝ «գեղարվեստը հայրենիք չունի», ես ուզում եմ շուռ տալ նրա այդ նախադասությունը, իսկ «Հայրենիքը գեղարվեստ ունի՞»։ Իհարկե, ամեն հայրենիք ունի իր ուրույն արվեստը և չի կարող չունենալ, ինչպես որ ամեն ժողովուրդ ունի իր գրականությունը, իր ֆոլկլորը։ Յուրաքանչյուր ազգի և ժողովրդի մեջ ուրույն կերպով է զարգանում և ծավալվում գեղարվեստի այս կամ այն ճյուղը, և դա է, որ որոշում է նրա կուլտուրայի աստիճանը և կենցաղի առանձնահատկությունը։ Մենք պետք է ուրախանանք մեր արվեստի զարգացմանը նպաստող ամեն մի ձեռնարկության, նիրկա դեպքում «Հայ արվեստագետների միության» հանդես գալով։ Մեր ազգի մեջ այս դառն օրերին,— շարունակեց ճառախոսը,— ես նկատում եմ մի տեսակ ինքնաճանաչում, ինքնագնահատում, սթափություն, և այդ շատ մեծ արևույթ է մեր կենսունակության համար։ Սրտառուչ է մանավանդ այն հանդամանքը, որ այս ընկերության հիմնադիր անդամների թվում մենք տեսնում ենք, այսպես ասած, «զաղթական» նկարիչներ, որոնց նկարները, ով գիտե, դեռ պատերազմի դաշտում ու ճանապարհներին ևն ընկած։ Ուրեմն ողջունելով մեր ժողովրդի կենսունակությունը, ողջունում եմ այս նոր ընկերության երևան գալը, որը մեծ աշխատանք ունի կատարելու մեր հայրենիքի գեղարվեստի զարգացմանը նպաստելու գործում։

Գեղարվեստը հայրենիք ունի։

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ՇԵՔՍՊԻՐԻ ԵՎ ՍԵՐՎԱՆՏԵՍԻ 300-ԱՄՅԱԿԻ ՀՈՒՆԴԵՍԻՆ

Հարգելի հայրենակիցներ.

Անգլիայի մեծ մարդկանցից մինը, կարելի, ասում է. Անգլիական ցեղը մեծացել, ծավալվել, ցրվել է աշխարհքով մին՝ Մեծ Բրիտանիայից սկսած մինչև Ամերիկա, Աֆրիկա, Հնդկաստան, Ավստրալիա և շատ հեռավոր կղզիներ: Եվ շատ տեղեր հաստատել է նույնիսկ ինքնուրույն իշխանություններ: Այլևս ոչ մի թագավոր չի կարող իր գայիսոնի տակ ամփոփել անգլիական ցեղը: Միակ թագավորը, որ կարողանում է իր իշխանությունը տարածել համատարած անգլիական ցեղի վրա ու ամեն տեղ պահպանել նրա ազգային ամբողջությունը— դա Շեքսպիրն է:

Սակայն միայն Անգլիական ցեղը չի, որ շաղկապում ու համերաշխության մեջ է պահում Շեքսպիրը: Նա միաժամանակ բոլոր ժողովուրդներն է մոտեցնում՝ ինչպես անգլիական ազգին, էնպես էլ իրար: Եվ արդեն սրա մեջն է բանաստեղծության ու առհասարակ գեղարվեստի կախարդական ուժը՝ ամեն մեկի բույրն ու հրապույրը պահպանելով հանդերձ՝ ամենքին ի մի բերել և բազմազանությունից ստեղծել ներդաշնակ ամբողջություն:

1917

<ՀԱՅԿԱԶՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ>

«... Մինչև այժմ հայ ժողովուրդն ունեցել է մի հոգևոր կենտրոն,— ասում է Հ. Թումանյանը,— էջմիածնի տաճարը. այժմ մենք ուզում ենք կառուցանել մի նոր տաճար՝ գիտության, դրականության ու գեղարվեստի տաճարը — Հայկազյան ընկերությունը: Եվ հայ ժողովուրդը թե՛ նյութական, թե՛ մտավորական կարողություն ունի այս նոր տաճարը կառուցանելու: Մենք չունինք դրականությանը նվիրված պրոֆեսիոնալ գրողներ, սրանից հետո պիտի ունենանք: Մենք չունինք հայ գիտնականներ, սրանից հետո պիտի ունենանք: Մենք չունինք հայ գեղարվեստագետներ, սրանից հետո պիտի ունենանք: Եվ ապագայում հայոց կուլտուրայի զարգացման պատմությունը գրողը պետք է բաժանի երկու շրջանի— մինչև Հայկազյան ընկերությունը և Հայկազյան ընկերությունից հետո»:

1919

<ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԱՒԵԼԻՔԻ ՄԱՍԻՆ>

...«Ահա ճիշտ այսպես, այն ժամանակ կլինի մեր մեծ ազգությունը, երբ օտարների մեզ տված վատ հատկություններն ու նախապաշարմունքները կմեռցնենք մեր սրտում:

Ես համոզված եմ, որ սա մեր ստրկության վերջալույսն է և սկսում է բացվել մեր մեծ ազատության արշալույսը, դուք եք, որ հիմքը կդնեք դրան. իհարկե, թեև դուք բոլորդ էլ չեք, սակայն ձեր միջից կլինեն անպատճառ. չկարծեք, թե՝ ով որ աղքատ է, որբ է, նա չի կարող մեծ մարդ դառնալ և մեծ գործ կատարել. ընդհակառակն, մեծ մարդկանց կենսագրություններն ապացուցանում են, որ ամենամեծ մարդիկ չքավորներ են եղել:

Այս դասախոսությունները, որ դուք կազմում եք, ես համոզված եմ, որ մեծ դեր են կատարում, ինչպես որ լուցկին մի չիփսիից կարող է բոցավառվել, այնպես էլ ձեր մեջ կան այնպիսիները, որոնց մատաղ սիրտն ու հոգին մի ոգևորիչ խոսքով բոցավառվում է և նրա ներքին աշխարհում մեծ հեղաշրջում է առաջանում:

Ես խորապես համոզված եմ, որ դուք կկռեք մեր այն ազատությունը, որի մասին խոսեցի, վերածնվելով, որովհետև դուք տպավորված եք այդ ցեղի ստեղծագործող ձիրքով և հարազատ եք նրան: Դուք պետք է ճանաչեք ձեզ. իրեն ճանաչելը ամենամեծ հպարտանքն է:

Այդ բոլորից հետո ես կասեմ, չպետք է մեծամտել. երեխաներ, ձեզ նման երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է ներքին կարողության»:

<ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱՑՈՂ ՄԻ ԽՈՒՄՔ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ>

Դուք գնում եք Հայաստան, որպես բժիշկներ, բուժելու համար նրա վերքերը։

Բարի՛ ճանապարհ, գնացե՛ք։ Հայաստանը շատ բժիշկների կարիք ունի, որովհետև շատ են նրա վերքերը։ Եվ կարիք ունի ամեն տեսակ բժիշկների, որովհետև բազմատեսակ են նրա վերքերը։

Դեռ աղետների առաջին օրերից մեր աղետյալ ժողովրդի մեջ, մեր երկրի զարկված քաղաքներում ու գյուղերում և պատերազմի դաշտերում հայտնվեցին մխիթարիչներ և օգնողներ— եկած հեռավոր երկրներից...

Եվ ահա պատրաստվում եք դուք, հայկ<ական> կարմիր խաչի անունից, գնալու գործելու Հայաստանում։ Եվ հենց էդ մասին եմ ես ուզում մի երկու խոսք ասել, թե ուր եք գնում դուք, և ինչպես պիտի գնաք։

Եվ ուզում եմ օրինակով խոսել ձեզ հետ։ Դուք գիտեք, որ ես սիրում եմ մեր ժողովրդի առասպելներն ու հեքիաթները։ Ահա էդ հեքիաթներից մինը ասում է՝ մի ժողովուրդ պատուհասված էր։ Էդ ժողովրդի ընտիր զավակը, հերոսը ճանա<պարհվում է> ճար գտնելու և փրկելու իր ժողովուրդը պատուհասից։ Իմանում է, որ ճարը անմահական ջուրն է, բայց անմահական ջուրն էլ գտնվում է կախարդական աշխարհքում։ Ճանապարհ է ընկնում դեպի կախարդական աշխարհքը։ Ճանապարհին նրան պատահում է իմաստունը։ Ասում է, քո ճանապարհին գետ կա, որ լեղի է հոսում։ Նրա ջրից պիտի խմես, և ասես — ի՛նչ անուշ, անմահական ջուր է։ Քո ճանապարհին՝ փշով ու տատասկով ծածկված անապատ կա։ Փուշը պիտի պոկես հոտոտես ու ասես։ Ի՛նչ անուշահոտ ծաղիկ է։ Դու չպիտի զգաս՝ ոչ ջրի դառնությունը, ոչ տատասկի դաժանությունը։ Եթե զգացիր— վերջացավ։ Այլևս չես հասնելու քո նպատակին։

Էդպես էլ դուք, որ գնում եք Հայաստան, նրան օգնելու, իմացեք, որ էնտեղ ցուրտ կա, սով կա, և շատ ուրիշ նեղություններ։ Եթե դուք էդ դժվարությունները, դառնությունները զգացիք, չեք հասնելու ձեր նպատակին և չեք փրկելու նրան։ Պետք է էդ դառնությունները չզգաք ու դրանցից չհաղթվեք, միայն էն ժամանակ դուք կհաղթեք։ Այո՛, սա հերոսի համար է ասված։ Բայց չէ՞ որ դուք էլ արդեն գնում եք հերոսության։

Սրա հետ միասին իմացեք, [որ եթե գնում եք բժշկելու] և՛

դուք, և՛ ձեզ հետ էլ էն ամեն օտարները, որոնք գնում են Հայաստանի վերքերը բուժելու, իմացեք, որ հայ ժողովուրդը և Հայաստանը մի որևէ աղետյալ չի, այլ մի բարձր աղետյալ, որ առողջանալով՝ շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհքին: Հետևաբար՝ ձեր գործը լոկ մարդասիրությունով չի սահմանափակվում, այլ դա մի ծառայություն է, որ անում եք քաղաքակրթությանը և մարդկությանը:

Հայաստանին օգնողը պիտի համոզված լինի, որ Հայաստանը ընդունակ է հազարապատիկը վերադարձնելու աշխարհքին:

Բարի՛ ճանապարհ, կամ ավելի ճիշտը, բարի գալուստ. որովհետև ես, իբրև Հայաստանի բանաստեղծը, ինձ միշտ էնտեղ եմ զգում: Եկե՛ք: Մենք միայն ցավեր չունենք: Եկեք տեսեք: Եթե դեղեցիկ է Բոսֆորը, նրան դժար թե զիջանի Արարատյան ծովածավալ դաշտի և երկնահաս Արարատի ու Արագածի բիբլիական վեհությունը: Եվ իզուր չի մեր երկիրը— Հայաստանի բարձրավանդակը էնքան մոտիկ երկնքին: Նա մի մեծ խորհուրդ ունի: Նա իր վերջին տանջանքներն է անցկացնում: Օգնեցե՛ք, որ աղատվի իր վերջին տանջանքներից էլ, և մենք կունենանք մի հայրենիք, որտեղից ուրիշները չեն հեռանալ ու դուք էլ չեք վերադառնալ:

1921

<ՀԱՅ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱՓԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՒ ՄԱՍԻՆ>

«Թէ՛ քրիստոնեութիւնը և թէ մահմետականութիւնը կրամային զիրար սիրել, սակայն ցավալի է տեսնել, որ մարդոց միջև այսքան արյուն հոսեցավ: Այսօր արևմուտքի մեջ գոյութիւն ունեցող անհամաձայնութեանց պատճառը տնտեսական շահն է, մինչդեռ արևելքի ժողովուրդները զերծ են այս տեսակ գծուծ հաշիվներե:

Արևելքցիները բարիին ճամբան և իրարու օգնելու առիթ փնտռող ժողովուրդներ եղած են. իրերու այս վիճակին մեջ խիստ ցավալի է, որ թշնամութիւնները հավիտենական վիճակ մը ստացած են, սակայն այսօր պատասխանատուութիւնը ուղղակի զանոնք կառավարող կառավարութեանց կպատկանի, որովհետև ժողովուրդները, հակառակ կրոնական տարբերութիւններուն, միշտ իրարու բարեկամ մնալու հակամետ եղած են: Ես թէ՛ թուրքերու և թէ՛ հայերու փոխադարձաբար իրարու կատարած օգնութիւններուն պատմութիւնը գրած եմ և ապագային զայն պիտի հրատարակեմ վավերաթուղթերով և անոնցներով: Քանի տարիե ի վեր դեպքերուն մեջ ապրած ըլլալով, անոնց մոտեն տեղյակ եմ. թուրքերուն մեջ կան այնպիսիներ, որոնք վտանգի մեջ եղող հայերը ազատելու համար ինքզինքնին կրակը նետած են:

Հայերն ալ թուրքերու հանդեպ նույն զգացումները կտածնն. ես զանոնք «վերջին դարու սուրբեր» կանվանեմ: Կովկասի հայերն ու իսլամները կխորշին պատերազմեն և ամեն առիթով իրարու օգնելեն չեն քաշվիր: Վերջին պատերազմին սկիզբը, երբ հայերը սովահար կմեռնեին, թուրքերը իրենց տուներեն դաղտնի հաց և ուտելիք փախցուցին, հայերն ալ իրենց կարդին նույն վարմունքն ունեցան: Կովկաս եղած ատենս օր մը նոմեր անունով նշանավոր

ավազակապետ մը ելավ, և ըսավ, թե իմ վարչութենես դոհ ըլլալուն համար զենքերը նետելով պարկեշտորեն պիտի ապրեր. արդարև այդ օրեն սկսյալ հին ավազակապետը ամենապատվավոր մարդ մը դարձավ:

Այն բոլոր տեղերուն մեջ, որոնք հավիտենական դրախտ մը ըլլալու արժանի են, երկու կողմի սխալներուն հետևանքով այս ցավալի դեպքերը առաջ եկան. մինչդեռ այս սխալը դարմանելու ժամանակը եկած է այլևս: Պետք չէ սպասել, որ այս դարմանումները կառավարութիւնները կամ կուսակցութիւնները կատարեն, որովհետև անոնք իրենց քաղաքականութիւնը ապահովելու համար երբեմն ուզելով և գիտնալով կգործեն այս սխալները: Այս գործը պետք է կատարեն մտավորական և լուսավորված դասակարգերը:

Իրարու առն ավրելու մեղքը գործողներու երեսեն այսօր այսքան ջարդերու հառաջ բերած միակ արդյունքը այն եղավ, որ քաղաքակիրթ աշխարհը երկու ազգերն ալ բարբարոս ճանչցավ, որովհետև գոյացած փլատակներեն առն մը անգամ շինել կարելի չէ:

Ամենուն պարտականութիւնն է աշխատիլ, որ աշխարհի ամենեն դժբախտ ազգերը եղող թուրքերուն և հայերուն միջև անկեղծ հասկացողութիւն մը գոյանա և կառավարութիւններուց կողմանե բացված վիհը գոցվի. իմ այսօրվան պարտականութիւնս ալ այս է միայն»:

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԵՌԱԳՐԵՐ
ԿՈՉԵՐ ԵՎ ԱՅԼՆ

1905—1906

<ԼՈՌԵՑԻՆԵՐԻ ԿՈՉԸ>

Մենք, լոռեցիներս, չենք հարձակվում ու չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ և ոչ մի կողմի վրա, որովհետև, եթե ուժեղ ենք— անիրավություն է, եթե թույլ ենք— հիմարություն է:

Մենք պահպանում ենք խաղաղություն և հաշտություն— դրա համար բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և կոչ ենք անում մեր հարևան թուրքերին էլ մեզ հետ միասին պահել խաղաղությունը: Եվ երդվում ենք միշտ մաքուր ու բարձր պահել մեր սպիտակ դրոշակը:

Իսկ եթե նրանք մեզ չեն լսիլ և կհարձակվեն մեր գյուղերի վրա— կաշխատենք պետական ուժով դրա առաջն առնել, և եթե այդ անկարելի եղավ, մենք ինքներս դուրս կգանք նրանց դեմ և անխնա, բայց այնուամենայնիվ դարձյալ չենք գնալ նրանց գյուղերի վրա:

ՂԱՐԻԲ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Դուք, որ հեռու աշխարքից եկել եք մեր ձորերը և դառը քրտինքով անում եք ձեր հալալ [ծանր] աշխատանքը, դուք, որ կանգնած եք սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշի տակ, ձեզ եմ դիմում:

Իմացած եղեք, որ դուք, ղարիբ երկրի եղբայրներ, ձեզ համարում ենք մեր երկրի թանկագին զոնախները, և մեր ձորերում այնքան տղամարդկություն կա, որ մենք թույլ չենք տալ ձեզ և ձեր ուրիշ ընկերներին, մեր թանկագին զոնախներին, մի նեղություն հասնի, իսկ եթե ժամանակի չարությունից և գյադա մարդ-

կանց լրբությունից կհասնի, այդ մենք չենք թողնիլ անպատիժ։ Դժբախտաբար շատ մարդկանց ջանքով անմիտ թշնամությունը մտել է մեր ժողովուրդների մեջ և կատարվում են այնպիսի խայտառակ գործեր, որոնց համար վաղը ամաչելու ենք մենք, իսկ մեզանից հետո էլ՝ մեր սերունդները։

Մենք, լուռեցիք, որքան աշխատեցինք, որ մեր գեղեցիկ սարերն ու ձորերը ազատ մնան այդ արատից ու խայտառակությունից, այնուամենայնիվ, չկարողացանք բոլորովին ազատ պահել։ Մեր մի քանի տաքգլուխ և կարճատես ջահելները իրենց մտածիկ Բորչալուի դաշտում և Ղարախաչի կողմերը կատարվող գործերից վրդովված՝ վեր են կացել խանգարել թե՛ եղբայրության, և թե՛ ղոնախի կարգն ու ադաթը, որը այնքան բարձր է մեր երկրում, որով չափազանց զայրացրել են մեր ամբողջ ժողովրդին և վրշտացրել։

Խոսքս Մալլի Շորի դժբախտ դեպքի մասին է։ Դուք իհարկե տեսնում եք այս օրերում աշխարքի խառը դրությունը և լավ եք հասկանում, թե ինչ դեպքեր են պատահում և թե ինչպես անկարելի է եղբայրությունը պաշտող մարդկանց համար ամեն տեղ չարության առաջն առնել։

Բայց, հրապարակավ հայտնում եմ ձեզ Լոռու ժողովրդի կողմից, այն էլ հաստատ իմացեք, որ մենք ամեն ջանք գործ կդնենք այնպես անելու, որ դուք բավական մնաք մեզանից։ Հանցանքի մասին լսելուն պես ուղարկելով այս նամակը և մեր երկու ընկերներին, խնդրում ենք ներողություն մեր գյուղերի կողմից, իսկ կարճ միջոցում գործով ցույց կտանք, որ մենք չենք կարող մեր տներում թալան պահել, իսկ մեր սրտերում՝ թշնամություն։

Սրա հետ միանգամ ընդմիշտ խնդրում ենք, եթե ձեզ մի որևէ նեղություն կհասնի մեր աշխարքի մարդկանց կողմից, հայտնեցեք մեզ համարձակ և համոզված եղեք, որ մենք, մեր ժողովուրդը միշտ կանգնած կլինենք ձեզ համար, ձեր արդար դատի համար, ձեր հալալ աշխատանքի, դարը մշակության համար, ձեր հետու թող արած երեխաների ու ընտանիքների համար և մեր ամենքիս պաշտած եղբայրության համար։

Կեցցե՛ ազգերի եղբայրությունը,
Կեցցե՛ հալալ աշխատանքը,
Կեցցե՛ հերոս բանվոր մարդը։

1912

Կ Ո Չ

(Տեսակ խմբագրության)

Արդեն բացված է Հայ Գրողների Ընկերությունը։ Վերջապես իրականություն է դառնում մեր լավագույն գրական հասարակական գործիչների վաղեմի իղձը՝ համախմբված տեսնել հայ մտքի ու գրչի մշակներին։ Այսպիսով հայ գրողն այսօր ունի մի հիմնարկություն, որին նա կարող է ապավինել կարիքի ժամանակ և մի ժամադրավայր, ուր հայ գրականության հարցերն ու խնդիրները կարող են պարզաբանվել ու հանգիլ բանավոր լուծման։

Վարչությունս հայտարարելով Ընկերության բացումը՝ սրտագին կոչ է անում հայ գրականության բոլոր ճյուղերի— գիտական գրականության, գիտության և հրապարակախոսության ասպարեզում գործողներին, ուր էլ նրանք լինեն, համախմբվելու նորակազմ Ընկերության շուրջը և միահամուռ ուժերով նվիրվելու աղգային գրականության բարգավաճման։

Անդամագրվել ցանկացողը պետք է գրավոր հայտնի վարչությանս իր ցանկությունը և տեղեկություններ տա իր գրական գործունեության մասին, թե ինչ առանձին աշխատություն ունի և կամ ո՞ր թերթին է աշխատակցել։

Տարեկան անդամավճարն է 5 ռուբլի, որ կարելի է վճարել առաջին երեք ամսվա ընթացքում։

Վարչությանս հասցեն՝

Кавказское общество писателей армян, Тифлис, Бебутовская, 25.

Վարչության նախագահ՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ադամ. քարտ.՝ ԳՅՈՒՏ Էան. ԱՂԱՆՅԱՆ

1913

ՀՐԱՎԵՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ գրողների Կովկասյան ընկերությունը իր ընդհանուր ժողովներից մեկում (1912, դեկտեմբեր 2) որոշում կայացրեց պրամական դիմումներ չանել մասնավոր անհատների, այդ տեսակի դիմումները վերապահելով պատեհ ժամանակին անելու հայ ժողովրդի ընդհանրությանը և ազգային հասարակական հիմնարկությունններին։

Եվ ահա այսօր՝ այդ պատեհ օրը։

Այսօր, հայոց գրերի գյուտի և տպագրության մեծ հոբելյանի օրը, հայոց գրի ու գրքի լուսավոր տոնին Գրողների ընկերության վարչությունը, օգտվելով պետությունից իրեն տված իրավունքից (կանոնադրություն, 2. ե.) դիմում է ամենուրեք սփռված հայ ժողովրդի ընդհանրությանը, դիմում է նրա ազգային այն բարձր գիտակցությանը, որով նա սիրել է իր գրականությունը, արձագանք տալ ամեն կողմից, հոժարակամ նվիրաբերություններով ուժեղացնել հայոց գրական ֆոնդը և նրա միջոցով մայրենի գրականությունը, որ հանդիսանում է մեր ազգային ոգու հարազատ արտահայտությունը, մեր ինքնուրույն գոյության պայծառ հույսը, և կուլտուրական ազգերի շարքում կանգնելու մեր հզոր իրավունքը։

Ընկերությունս հավատում է, որ ամեն տեղ հայ ժողովուրդը սիրով պիտի ընդունի վեր հրավերը և ամեն մի հայ մարդ իր ազգային գրականության հաջողությունը պիտի համարի իր սեփական հաջողությունը և Գրական ընկերության նպատակները նպատակ այնքան բարձր, ինչքան բարձր կարող են լինել իրենց լայն իմաստներով գրականությունն ու գիտությունը ամեն աշխարհքում և ամեն մի ազգի մեջ։

Վարչ. նախ.՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Ադամ. քարտ.՝ ԳՅՈՒՏ քաճ. ՈՂՈՒՆՅԱՆ

1914

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԵԼԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

Ընկերության անդամ Հովհաննես Թումանյանից.
Առաջարկություն.

Դժբախտաբար մեր կյանքում, հատկապես մամուլի մեջ, թե՛ գրական-հասարակական գործիչները և թե՛ հիմնարկությունները շատ հաճախ ենթարկվում են չարախոսության, անվանարկության ու զրպարտության, որից մեծապես թե՛ իրենք են տուժում և թե՛ մեր ազգային-հասարակական գործերը: Ես կարծում եմ Գրականն Ընկերության հոգածության առարկան պիտի լինի նաև էս շատ տգեղ ու ցավալի երևույթի դեմ մաքառելու խնդիրը, քանի որ նա իր ծրագրով բացի նյութականը, ունի և բարոյական պարտականություն և գրական խոսքի ազնվության ու մաքրության նախանձախնդիր լինելու կոչում: Ուստի խնդրում եմ իմ էս առաջարկությունը, եթե կարևոր գտատի հարգելի վարչությունդ, բարեհաճի տանել Ընկերության ընդհանուր ժողովի քննության ու տնօրինության:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1914, Հունվարի 16,
Թիֆլիզ:

1916

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՇԵՔՍՊԻՐԻ ԵՎ ՍԵՐՎԱՆՏԵՍԻ ՄԱՀՎԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայ Գրողների Ընկերության վարչությունը Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան երեք հարյուրամյակի հարգանքի երեկույթից հետո հետևյալ հեռագիրն ուղարկեց Լոնդոն՝ պառլամենտի անդամ և Լորդների Հայկական ֆոնդի նախագահ Վիլիամսի միջոցով Շեքսպիրյան կոմիտեի նախագահ սեր Ջորջ Ալեքսանդերին.

«Հայ Գրողների Ընկերության Վարչությունը և խումն բազմությունը՝ Շեքսպիրի մահվան 300-ամյակի հանդեսին հավաքված՝ իրենց հիացմունքն ու հարգանքն են ուղարկում, ձեր նախագահ, Ձեր միջոցով անգլիական մեծ ազգին, նրա հոյակապ դրականությանը, և խորին երախտագիտության զգացմունքներով խոնարհում են նրա հանճարեղ զավակի անմահ հիշատակի առջև»:

Իսկ Սերվանտեսի համար հեռագրել է Իսպանիա, Մադրիդ, իսպանական հյուպատոսի միջոցով:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Հայ Գրողների Ընկերության վարչությունը Սենկևիչի մահվան ադիթով հետևյալ հեռագիրն է ուղարկել Վեվե, Լեհական Գլխավոր Կոմիտեին.

«Հայ Գրողների Ընկերությունը հայտնում է իր խորին ցավակցությունը լեհական գրական գերդաստանին և լեհ ժողովրդին իրենց մեծ զավակի՝ Հենրիկ Սենկևիչի մահվան ադիթով, որի տաղանդավոր երկերը վաղուց ջերմագին սիրված են հայ ժողովրդի մեջ: Թո՛ղ միշտ բարգավաճի լեհական պանծալի գրականությունը և Միցկևիչի ու Սենկևիչի գերեզմանների վրա ծնի ու զորացնի նորանոր մեծ կրողներ ու պատգամախոսներ լեհական ոգու»:

1918

ԼՈՌԵՑԻՆԵՐ, ԻՄ ՔԱՋ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Փոքրաթիվ թշնամին մեր սարերին է հասել։ Նա համարձակվում է մտնել Փամբակի ձորը, Մայմեխի ու Դվալի արանքը և դուցե մուտ է անցնել Գյուլլադազանա կիրճից ներս դեպի Լոռու սրբազան ձորերը։

Լոռեցինե՛ր, այժմ ձեզ է ապավինել հայ փախստական ժողովուրդը և ամեն տեղից ձեզ է նայում հայ ազգի աչքը. հասել է էն օրը, երբ պետք է ցույց տաք, որ զուր չի Լոռու անունը Դաղըստան հասել և ամեն մինդ անուն պիտի թողնեք աշխարհքում։

Հավաքվեցեք մեր մութ անտառների նման, կանգնեցեք անսասան մեր սարերի նման, կրակ թափեցեք և զարկեցեք մեր սարերի կայծակների նման։ Թո՛ղ թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է Էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրից էլ, բայց Լոռու սարերից անցնել չի կարելի։

Սպասում եմ ձեզ։

Ղարաքիլիսա,
16 մայիսի, 1918 թ.

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1919

ՀԱՅՐԵՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասում առաջացած և իրանց սահմաններում բազմահազար հայեր բովանդակող երեք հանրապետությյան՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունները դեռևս այնքան անկատար են, որ չեն կարողանում բավարարել ինչպես բնակչության բոլոր խավերի, այնպես և մանավանդ գավառների պահանջներին։ Գավառի բազմաթիվ կարիքները զանց են առնվում գլխավորապես այն պատճառով, որ հիշյալ պետությունների մեջ գործող ներկայացուցչական մարմինները՝ պարլամենտները, խորհրդարանները, ազգային խորհուրդները և նմանօրինակ հաստատությունները կազմված են զուտ կուսակցական սկզբունքով և իրանց մեջ չեն պարունակում գավառների ներկայացուցիչներին։ Մյուս կողմից, շնորհիվ Անդրկովկասում տիրող քաոսային վիճակի, իրանք, գավառներն էլ տակավին չեն կարողացել իրանց սահմաններում գեթ իրանց տեղական կարիքները հոգալու համար ստեղծել համաժողովրդական ընտրական սկզբունքի վրա հիմնված և փոքր ի շատե կանոնավոր գործող հիմնարկություններ։

Այս պայմաններում հայրենակցությունները, որ չեն ընտրված կուսակցական սկզբունքով, հանդիսանում են այն միակ կազմակերպությունները, որ, իբրև օժանդակ մարմիններ, տեղ են հասցնում և լսելի են դարձնում գավառի ձայնը։ Հայրենակցությունները և նրանց միությունը հետու են քաղաքական պայքարից և իրենց առաջ տեսնում են երկու մեծ նպատակ. Անդրկովկասյան ազգերի համերաշխությունը և հայ ժողովրդի ֆիզիքական ու կուլտուրական գոյության ապահովումը։ Սակայն, հայրենակցությունները և նրանց

ընդհանուր օրգանը — Հայրենակցությունների Միությունը — իրանց վրա դրված ծանր և հույժ պատասխանատու գործը չեն կարող կատարել առանց իրանց հայրենակիցների բարոյական և նյութական աջակցության: Հայրենակցությունները, մանավանդ նրանցից ոմանք, որ գաղթականներ ունեն, իրանց վարչական ծախսերի, դրամենյակներ պահելուս վարձատրության աշխատավոր անդամներ ունենալու, գավառները ժամանակավոր կամ մշտական ներկայացուցիչներ ուղարկելու և այլ կարիքների համար նյութական միջոցների պահանջ են զգում: Այդ միջոցները, դժբախտաբար, չկան, ուստի հայ ժողովրդի համար էական նշանակություն ունեցող շատ գործեր մնում են չկատարված...

Հայրենակցությունների Միության խորհուրդը այսու դիմում է բոլոր հայերին և հատկապես հայրենակցությունների անդամներին, առաջարկելով բոլորին աջակցել հայրենակցությունների վարչություններին, թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Նյութական աջակցության կարևորությունը պետք է շեշտել մանավանդ այն պատճառով, որ հայրենակցությունները, բացի նրանց նշանակությունը պիտակցողների օժանդակությունից, իրանց վարչական կարիքները հոգալու համար ուրիշ աղբյուրներ չունեն:

Հայրենակցությունների Միության խորհուրդը հույս է տածում, որ հայերը առհասարակ և թիֆլիզաբնակ մեր հայրենակիցները մանավորապես վերջ կտան հայրենակցությունների համար ապանիչ հետևանքներ ունեցող իրանց անտարբերության, կխմբվեն այդ կազմակերպությունների շուրջը և կաջակցեն նրանց բարգավաճմանը, թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Հայրենակցությունները այժմ էլ, իրանց ներկա ծանր պայմաններում, հայ ժողովրդի համար կատարում են համեստ, բայց անփոխարինելի մեծ գործ: Եթե մեր հասարակությունը, գիտակցելով այդ կազմակերպությունների գոյության անհրաժեշտությունը, չմերժե նրանց իր հուժկու աջակցությունը, այդ դեպքում հայրենակցությունները կդառնան մի դարբնոց, որտեղ ժողովրդի մշակները կկոփեն հայության համար ոչ երկրորդական նշանակություն ունեցող մի գործ:

Նախագահ.՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Քարտուղար՝ Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Անցյալ տարվա սեպտեմբերի 18-ին մինիստրությունդ իմ անունով փոխադրել էր մի հարյուր հազար ռուբլի՝ հայ գրողներին և գիտնականներին մասնատրելու որոշ ցուցակով։

Նրանցից մեծ մասին իր ժամանակին հասցրի իրենց նշանակած գումարը, [և ստորագրություն առա], բայց մի քանիսին հնշտ չեղավ շուտով գտնելը, մանավանդ նրանցից պ<արոն> Վրույրին, որ քացակա էր Թիֆլիզից և որին միայն էս երկու օրը կարողացա հասցնել, ինչպես կտեսնեք իր ստորագրությունից։ Ուղարկում եմ ամեն մեկի ստացականը, բացի պ. պ. Դ. Անանունի և Վ. Փափազյանի, որոնք իրենց ստանալու մասին ինձ հայտնել են մասնավոր նամակներով։ Էդ նամակները անհարմար համարելով ուղարկել մինիստրությանդ՝ խնդրում եմ հաշվի համար նրանցից առանձին ստորագրություն առնել էդտեղ, քանի որ նրանք հենց էդտեղ — Երևան են գտնվում։

1921

<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԶԻՄԻՆ>

Ընկերներ Ամարբեգյանին և Օրջոնիկիձեին՝ Հայրենիքի Փրկության Կոմիտեի միջոցով ուղարկած իմ նամակներից մեկի մեջ (որոնք, դժբախտաբար տեղ չեն հասած) ես առանձնապես կանգ էի առել և հատուկ ուշադրություն էի խնդրել տաճկահայ գաղթականության վրա: Տաճկահայ գաղթականությունը, որ ապաստան էր գտած Հայաստանի Հանրապետության սահմաններում, քաջ գիտեր տաճիկ կառավարության որոշումը իր վերաբերությամբ, գիտեր, որ իրեն այլևս ոչ մի վերադարձ չկա դեպի իր երկիրը: Եվ ահա, մյուս կողմից էլ էդ աշխարհքի ամենաթշվառ մարդկային բազմության մեջ տարածված ու արմատացած է եղել էն սոսկալի թյուրիմացությունը, թե ինքը խորհրդային իշխանության մեջ էլ հրատարակված է օրենքից դուրս և դատապարտված է անխուսափելի կորուստի: Էսպիսով, էդ հուսահատ ժողովրդի մեջ ստեղծվել է ծայրահեղ հուսահատի հոգեբանությունը ու օրհասականի զայրույթով նետվել է կռվի մեջ, կարծելով, թե միևնույն է, իրեն այլևս ոչ մի փրկություն չկա:

Սրանով Հայաստանի Հանրապետության Ռևկոմի ուշադրությունը խնդրում եմ էս ծանր թյուրիմացության վրա, որ նա շտապի հերքել էս դժոխային սուտը, հատուկ հրաման արձակի տաճկահայ գաղթականության համար և առնի նրան իր հոգածության տակ <....>

1921, ապրիլի 7.
Երևան

ՆԱՄԱԿՆԵՐ

ՄՈՒՇԵՂ, ԱՇԽԵՆ ԵՎ ՆԱԶԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐԻՆ

Ուռավել—Դսեղ

[1901]

Սիրելի Մուշեղ[1]*, Աշխեն և Նվարդ*[2]*,*

Ձեր հիշատակարանները այնքան կարճ են, որ ավելի շուտ մոռացարաններ են, քան թե հիշատակարաններ։ Ամենից լավը Նունիկինն էր, որ կորել է... ես երևակայում եմ, թե ինչքան բաներ կային մեջը գրած։

Դուք հիշատակարան գրել չգիտեք։ Որ գնում եք մի տեղ — նայեցեք թե ի՛նչն է ամենից շուտ ձեր ուշադրությունը գրավում, մարդիկ, բնությունը, բնության ինչ տեսակ լինելը, մարդկանց ինչ տեսակ կյանքը — մի խոսքով ամեն բան, ինչ որ ձեզ վրա տպավորություն է անում — ուրախ թե տխուր — ամեն բան պետք է նշանակեք։ Նրանից հետո ի՛նչ է պատահում ձեզ հետ, ի՛նչ է պատահում ձեր մոտիկ շրջանում — մեր տանը՝ ամեն բան։ Իհարկե, մի որոշ կարգով։ Բնությունը — ժողովուրդը, նրանց կերպարանքը, ապրուստը, ձեր կարծիքը այդ բոլորի մասին, ձեր հետ պատահած ու ձեր մտիկներին պատահած դեպքերը։ Այսպես, կգրեք ու կուզարկեք ամեն շաբաթ, ամեն շաբաթ հերթով, ամեն մեկդ մի օր։ Բայց իրարից չդողանաք — երբ որ կղրկեք — հետո սևագրությունը կկարդաք, որ իրար նման չգրեք։

Աշխատեցեք լավ առողջանալ, բայց զգույշ կացեք, որ անպետք բաներ չուտեք կամ չբրտնեք։ Արտիկն էլ թող իրեն հիշատակարանը գրկի, մարդը նա էլ է գրում։

Համբուրում եմ բոլորիդ։

ՀԱՅՐԻԿ

ՎԱՐՅԱ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆԻՆ

Աբաս-Թուման—Թիֆլիզ
[1902.] 25 սեպտեմբերի,
Աբաս-Թուման

Իհարկե, Դուք գիտեք, որ ես Ձեզ չեմ մոռանում: Այդ հաստատ գիտեք:

Դեռ գալու ժամանակ վագոնում պառկած (ներեցեք անքաղաքավարի դիրքիս) կարդում էի Զուդերմանի նոր դրաման — Да здравствует жизнь!

Աղջիկն ասում է. Мама! Жизнь так хороша, что того и гляди разорвется сердце от восторга. *Մայրը պատասխանում է.* Да, жизнь хороша, даже тогда, когда она полна скорби, страха и лишений, и тогда все же хорошо жить.

Հիշեցի Ձեր խոսքերը, թե կյանքում այնքան գեղեցիկ բաներ կա՞ն...

Ճիշտ որ կյանքում շատ գեղեցիկ բաներ կան, բայց նրանք բոլորն էլ տանջանքի համար են գեղեցիկ. և սակայն քաղցր է կյանքը:

Բորժոմից գնացի տեսնելու Բակուրյանը: Հրաշալի է երկաթուղով վերելքը դեպի Բակուրյան: Այնտեղ խոսք ընկավ, թե Յխրա-Ծղարոյի գագաթից արևածագին սքանչելի տեսարան է բացվում, բայց այժմ սաստիկ ցուրտ է: Ну! *Գնանք Յխրա-Ծղարո:* Пермь-*ից մի ռուս տուրիստ,* председатель *չգիտեմ ընչի, հետս ընկերացավ ու դեպի Յխրա-Ծղարո: Այդ Յխրա-Ծղարոն, որ հայերեն կնշանակի իննակնյան (ինն աղբյուր) մի բարձր գագաթ է* Ахалк <алакский> перевал-*ի մոտ, Բակուրյանից 20 վերստ: Այնտեղից երևում է Կովկասի շղթան և Սև ու Կասպից ծովերը միաժամանակ: Կարճն ասեմ.* перевал-*ի* ночлег-*ից առաջնորդ առանք ու առավոտյան ժ. 6-ից առաջ արդեն տեղ էինք հասել: Ձյուն էր գալիս: Մեր առջև բացվեց մշուշային մի անեզր ծով, Կովկասը թաղված այդ ծովի մեջ ու մենք վերևը: Վոլիմպիական աստվածների անկարգությամբ նստեցինք ու սպասում էինք արևի ծագելուն: Հանկարծ մշուշն իջավ, այստեղ այնտեղ այդ մշուշի ծովից դուրս տնկվեցին բարձր սարերի կոնտուրները, վիշապի նման ձգվեց Կովկասի շղթան, արևելքում պատռվեցին մութ ամպերը, փայլատակեց մի հրաշք ու... իսկույն կրկին ամեն բան ծածկվեց մի հսկայական վարագույրով — մշուշով:*

Բայց այն ի՞նչ հրաշք էր:

Այն արևելքի ոսկի դռներն էին...

Այնուհետև էլ չբացվեց: Ամպերը հանդարտ ու հոյակապ, կաթծես ճեմում էին սարերի վրայով, մերթ ծածկելով ամեն բան, այնպես, որ իրար մենք հազիվ էինք նկատում, մերթ այստեղ, այնտեղ բաց անելով սարերի դեռ կանաչ լանջերը: Եվ ամեն անգամ ինձ թվում էր, թե այդ ամպերի տակից, այդ դալար լանջերի վրա, ուր որ է, այժմ կհայտնվեն Թեթև, գեղեցիկ աստվածուհիները խմբով կամ նրանցից մինն ու մինը իրենց թափանցիկ շղարշների մեջ: Իհարկե, մի քիչ անգութ եմ երևակայել — այն քնքուշներին այն ցրտում այնքան բարակ զգեստով, բայց ինչ անենք, աստվածանալու համար կարելի է և մի քիչ մրսել: Չէ՞ որ ամեն փառք ունի իր ծանրությունը:

Ահա այստեղից էլ ես ղրկել եմ Ձեզ այն պոստ կարտը — Կովկասի Վոլիմպոսից...

Այնտեղից ուղիղ դեպի Աբաս-Թուման, ու ընկա ինձ սպասող բաց գրկերի մեջ: Բայց նրանք շուտով գնացին, այժմ մենակ եմ:

Շրջապատված եմ ամեն հարմարություններով: Մի լավ բժիշկ կա այստեղ և շատ լավ մարդ է (ռուս), միշտ հետևում է: Սրա հանձնարարությամբ ու խորհրդով էլ ապրում եմ մի ռուս ընտանիքում, ուր, ինչպես ինքն ասում էր, ես կլինեմ под пазухой самого Исуса Христа. Եվ ճիշտ որ՝ շատ բարի, մաքուր ընտանիք են: Տանտիկինը մի ժիր, աչքաբաց կին է, և ես ու մարդն ապրում ենք նրա пазуха-ի տակ: Եվ ինձ համար միշտ գերադասելի է լինել մի կնոջ пазуха-ի տակ, քան թե նույնիսկ Հիսուս Քրիստոսի: Թեև, տարաբախտաբար, բանաստեղծական ոչինչ չկա մեջը և հենց դրանով էլ застрахована.

Սքանչելի, սքանչելի օրեր են: Զգիտեմ Դուք երբևէ աշնանը ապրել եք բնության մեջ, անտառներում, սար ու ձորերում: Աբաս-Թումանի հովիտը լիքն է արևի շողերով, տանձի անտառների բուրմունքով, թռչունների աշնան — հրաժեշտի երգերով ու մի անո՜ւշ — թախծալի խաղաղությամբ: Ամբողջ օրը ղրոսանքներ եմ կատարում. թաղվում եմ անտառների խորքում, բարձրանում եմ սարերի գլուխները, նստում եմ ժայռերի գագաթներին ու մտորում, ցնորում, չնայելով Ձեր խրատին: Հաճախ, հենց այդ անտառներում, այդ ժայռերի վրա ոտանավորներ եմ գրում, մեծ մասամբ այսպիսի հիշատակարանի ոտանավորներ.

Նըստած եմ ուրխուր, մենակ մի ժայռի,
Կանչում եմ հուշերն անցած օրերի,
Փընտրում եմ նըրա պատկերը կարոտ
Իմ մըտքո՜ւմ... ինձ մո՜տ...

Եվ ահա զրվարթ ծիծաղը հընչում...
Յոլում են աչքերն... լզգեսալ շըրշում...
Լըսվում են արագ քայլերը ծանոթ...
Իմ շո՜ւրջը... ինձ մո՜տ...

Բայց, ա՜խ, միմիայն չի գալիս կըրկին
Իմ էն լիասիրտ հըրճվանքը նախկին...
Ու նըստած եմ ես ժայռին նորից նոր
Տըխո՜ւր, զըլխակոր։

22 սեպտեմբերի.

Բայց դուք բանաստեղծություն չեք սիրում, գոնե ոտանավորներ, որքան գիտեմ, և, ափսոս, որ գիտեմ։

Հասցես՝ Абас Туман—яну

Կգրե՞ք արդյոք։

Հ. Թ.

ԳՅՈՒՏ ՐՈՒՀ. ՍԳՍ-ԵՅԱՆԻՆ

<1908>

Սիրելի աեր Գյուտ[1]*),*

Ուղարկում եմ Լեոի կենսագրությունը[2]*) հանելով էն մի երկու տողը, որ անտեղի եմ գտնում։ Նրանց տեղ դնելով այլ երկու տող,— որ նա առաջին փորձն արավ մեր մեջ — նոր գրականության պատմության։ Իսկ հաջողն ու անհաջողը դատելու տեղը չի — մանավանդ ոչ ոքի էլ քննադատած չէ։*

Ձեր Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ջիմացա՝ ի՞նչ կլիշեներ ու ինչ թուղթ է։

ՀԵՂԻՆԵ ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶՅԱՆԻՆ

1909, դեկտեմբերի 21

Թիֆլիզ—Բաքու

Սիրելի Հեղինե[1]*),*

Մեր հների սովորությանը հետևելով, էս ղխից պետք է ասեմ, որ մենք ամենքս լավ ենք։ Պատահում է, որ մեկը կամ մյուսը թեթև հրպանդանում են, բայց դրան նշանակություն չենք տալի.

միայն մի նորություն, որ ինձ անհանգստացնում է, էն է, որ Օլյան լուրջ հիվանդության նշաններ է ցույց տալի: Երբեք իր կյանքում չի հիվանդացել և ոչ մի օր. այժմ, ինչպես երևում է, հոգնել է և վերջապես ինչքան էլ առողջ մարդ լինի, քարից հո չի լինիլ, քարն էլ է մաշվում:

Գալով Ձեր նվաստ ծառային և նրա պարապմունքին, որով դուք էնքան քույրերն հետաքրքրվում եք, պետք է ասեմ, որ առողջությունս բավարար է, ուրամադրությունս աշնան եղանակի նման, ժամանակն ամբողջովին նվիրած եմ անային անվերջ հոգսերին, իսկ դրականությամբ, դժբախտաբար, չեմ պարապում:

Վերջին տեղեկությունը շատ ցավով եմ գրում, և կարող եք գուցե երևակայել էդ ցավի խորությունը, երբ ասեմ, դրա հետ միասին մտածում եմ, որ անցյալում էլ չեմ լուրջ պարապել երբեք և հաստատ գիտեմ, որ մնացած օրերս էլ փոխվելու չեն իսկի: Եվ ես էլ վաղուց լուրջ ափսոսում եմ ինձ: Բայց ինչ անենք. էս է ու էսպես մեր աշխարհքը, մեր կյանքը, մեր մթնոլորտը. և էսպես էլ պետք է լիներ. զարմանալին էն կլիներ, որ էսպես չլիներ: Եվ ես չեմ զարմանում, բայց ցավում եմ: Է՜հ, աստվածն էլածն օրհնի: Էսպես էին ասում մեր հներն ու ապրում հաշտ իրենց օրի հետ: Մենք հո նրանցից հազար անգամ ավելի լավ օրումն ենք— ուրեմն հազար անգամ աստված էլածն օրհնի:

Մոտ ժամանակներս մոտս էին նորընծա եպիսկոպոսները— լավ օր անցկացրինք մեր ազգայիննների — գրողների հետ և հաճույքով իմացանք, որ ցանկալի փոփոխություններ են լինելու:

Դպրոցական ծրագիրը Պ. Բուրգից եկած է[2]) բավական անախորժ փոփոխություններով, բայց փոխարքան հայտնել է, որ ինքը նորից կնայի և թույլ չի տալ մնան էն կետերը, որ ճնշում են մեզ: Մեր գործի մասին էլ լուր կա, որ մի մասի գործը կրճատեն, մյուս մասինը կտան դատի[3]). սակայն փոխարքան պահանջում է, որ սրանց գործն էլ ընդհատեն:

Էսպես լավ լուրերով նամակս վերջացնելով, խնդրում եմ ինձանից ու իմ գերդաստանից սրտագին բարևներ անեք մայրիկին ու Տիգրանին:

Միշա Ձեր
Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Թիֆլիզ—Մոսկվա

<1912> նոյեմբերի 16

Սիրելի Ալեքսանդր,

Ա՛յ տղա, շատ անկարգ բան պատահեց քո նամակի հետ: Ջեռքիցս առան, թե մի վերջս տող բան հանեն Գրական Ընկերությանը վերաբերյալ. հանել են ու սխալմամբ մյուս օրն էլ ամբողջը տպել[1]): Գիտեմ, դու ինչքան կնեղանաս, բայց ես շատ նեղացա, թե դու էլ ես նեղացել, ինձ մնում է ներողություն խնդրել: Շատերն ինձ հավատացրին, որ էնքան էլ մի մեծ դժբախտություն չի պատահել. օրինակ, թուրքերին հասած դժբախտությունը[2]) նրանից ավելի մեծ է: Իսկ ավելի շատերը պատահելիս, ասում են՝ ի՜նչ լավ նամակ էր. շատ լավն էր... ուրեմն ես ազգի մեջ սխալմունքով ինչ որ կանենք, էն է լավը:

Քո էդ նամակը դեռ է՛լ պատմություն ունի: Գրական Ընկերության վարչությունը որոշեց կցել ընկ <երությանն> գործին: Դեռ սրանից ավելին. որոշվեց քեզ էլ կցել գործին և էդ որոշումն էլ ես եմ հայտնելու քեզ: Դե՛, լավ ականջ դիր: Արդեն գրել ենք թե՛ Մոսկվային, թե՛ Պ. Բուրգի ռուսաց գրական ընկերություններին, թե մենք էլ կանք, խնդրել ենք հարաբերություն ու կապ հաստատել, տեղյակ պահել մեզ իրենց կյանքում պատահող երևույթներին և ուղարկել մեզ իրենց հրատարակությունները: Արդ, դու ոչ թե միայն անձամբ պիտի գրվես, այլև պետք է մեր ներկայացուցիչը լինես և գործ տեսնես: Գուցե մինչև անգամ— որովհետև ճյուղի իրավունք չկա — բաքվեցիների նման սեկրետարիատ հաստատեք Մոսկվա: Ես կարծում եմ էդտեղ ավելի շատ գրական մարդիկ կգտնվեն, քան թե Բաքու:

Ի՞նչ բանի են մեր «Գարունի»[3]) ծաղիկները: Ինչպե՞ս է և ի՞նչ է անում մեր տխրանուշ Վահանը[4],) ի՞նչպես է նրա տիկինը, որ կարծես իր ամուսնու գեղեցիկ երգերից մինը լինի: Գարնան կամ ավելի ճիշտը «Գարունի» փնջի առաջ ես սևերես մնացի: Առաջին տարին մի բան պատրաստեցի, թե դրկեմ— խուզարկեցին, տարան. ետ են վերադարձրել, էն էլ կեսը չկա[5]): Մակինյանը նամակ գրեց— դեռ չեմ պատասխանել. էդ տնաշենն էլ էն տեսակ նամակ է գրում, որ չես իմանում ոնց պատասխանես: Ամբողջ մի պատմություն պետք է գրեմ, որ պատասխանեմ: Բայց շատ մտածել տվեց: Ու շատ բան գտա, իհարկե, մտքիս մեջ: Վերջն էլ մի զակազ տվին — էն էլ դեռ ձեռ չեմ տվել— Լերմոնտովի Калашников-ի երգը թարգմանելու, որ ճշմարիտ է,

վաղուց եմ ուզել, բայց դեռ գլուխ չի եկել։[6]) Համարյա թե միշտ շատ եմ եղել խառնված. էս վերջին տարիները հո ամենքին հայտնի է։ Ինչ որ վիրադարձել եմ[7])— էլի ինչպես, զանազան պատճառներով— չեմ պարապում։ Միշտ պատրաստվում եմ, որ պարապեմ և իմ պարապմունքն էդ է։ Մինն էլ՝ մե-մեն հավաքվում են, քեֆ անում. թեև Ղազարից հետը[8]) բավական քեֆս փչացել է, էլ չեմ կարողանում սրտալի քեֆ անեմ։ Բայց էլի— անցյալ օրն էլ էին, էսօր էլ մոտս հավաքվելու են— սպասում եմ մեր մի քանի գրողներին։ Դալիս են— հետո կշարունակեմ։

Ձալմաղալ արինք— հյուրերիցս ոմանք— Ընկերության խոստացան գալ նվերներով։ Լավ երկար նամակ դուրս եկավ։ Տղերանցը շատ բարով արա ինձանից։

Ջերմ բարևներով՝
Ք. Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԳՅՈՒՏ ՀՍՀ. ԱՂԱՆՑԱՑՆԻՆ

<1912>

Սիրելի տեր Գյուտ Հայր,

Ես քանի օր է լուրջ հիվանդ պառկած էի։ Նոր եմ լավացել։ Երևիան ղրկում եմ Մինասի հետ խոսի մեր ժողովի մասին[1]) և ժամը Ձեզ հայտնի, երբ որ նա կարող կլինի։ Դուք էլ, խնդրում եմ, Անուշավանին իմացրեք[2])։ Մեզանից էլ հինգ հոգի են կանչում Պետրոգրադ և հետո մեր երեկույթի խնդիրը կա, այլև մի տուրիշ խնդիր տաճկահայ գրողների հետ կապված։

Ձեր Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՎԻԹ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

1913, փետրվարի 12

Թիֆլիզ—Բաքու

Հարգելի պ. Տեր-Դանիելյան,

Ըստ երևույթին երկար է ձգձգվելու հայ գրողների Բաքվում ճյուղ ունենալու գործը։ Որոշել ենք կանոնադրությունը փոփոխության ենթարկել, բայց մինչև էդ կլինի— շատ ժամանակ կանցնի։

Լավ կլինի, որ դուք այժմյանից գործի անցնեք, կազմեք ձեր գրական շրջանը և սկսեք ձեր գրական երեկույթներն ու բանախո-

սությունները։ Երբ իրավունք կստանաք— հիշա է, իսկույն էդպես էլ կհայտարարեք, որպես մի ընկերություն։ Կմիացնենք մեր ուժերը և առաջ կբերենք մի հոսանք։ Այժմ արդեն մենք ունենք թե՛ Բաքու, թե՛ Թիֆլիզ, և թե՛ այլ տեղեր ցրված ինտելիգենտ մարդկանց մի բազմություն— նոր մարդիկ, որոնք շատ ու շատ են տարբերվում իրենց նախորդ սերունդից և մեծ ազդեցություն են ունենալու մանավանդ մեր գրականության վրա։

Գրում եմ և Խանզադյանին ու ուրիշներին, այլև Հովհ. Հովհաննիսյանին ու ուրիշներին։ Գրել եմ և Հակոբ Մանանդյանին (Малая морск.)[2] նա լավ ուժ է, պետք է մեջ բերել։

Իհարկե, ինչպես էստեղ, էնտեղ էլ գործը դրած կլինի անկուսակցական հողի վրա։ Էս ինչքան լավ է. տարբեր հայացքով, բայց միշտ հարգանքով դեպի իրար։ Մի բան, որ չի ունեցել մեր անցյալ գրականությունը և չունեն նրա էսօրվան ներկայացուցիչները գժբախտաբար։

Նոր սերունդինն է դա։ Եվ պատի՛վ նրան։

Էս տողերում վրա հասավ Բաքվից պ. Ռ. Հովհաննջանյանը։

Ուրեմն շուտով կսկսվեն ձեր ժողովները։ Լավ կլինի միշտ հարաբերության մեջ լինենք, արձագանք տանք իրար։ Հաշիվ տանք իրար։ Նկատողություններ անենք իրար։ Խրախուսենք իրար։ Միացնենք Բաքուն ու Թիֆլիզը։

Էս տեսակ մի կյանք շատ է հարկավոր մեր փոքրիկ կյանքի համար։

Ջերմ բարևներով ու հարգանքով՝

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՐՏԱՎՈՋԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Յագվեր—Մոսկվա

1914, օգոստոսի 11

Արտիկ ջան,

Նվարդը իր նամակը կիսատ էր թողել ձերքև գնացել, ես շարունակում եմ։

Էս երկու օրը էլի նամակ կգրեմ։ Մեարիքականը շուտով կստանաս։[1]) Բայց գուցե դրանից ավելի շուտ ստիպված լինես պատերազմին թամաշա գնալու։ Ոչինչ։ Բանը քեզ չի հասնելու։

Մուշեղից[2]) էլ դեռ տեղեկություն չունենք։ Անպատճառ գերմանացիք գերի են պահում։ Տեսնենք ինչ լուր ենք ստանում իսպանական դեսպանի միջոցով։ Մենք լավ ենք ու շատ լավ էլ

ամառ անցկացրինք, միշտ ցավելով, որ Մուշեղն ու դու էլ հետներս չէիք։ Մի քանի օրից Թիֆլիս կերթանք։

Պողոսին[3]) շատ բարով արա, ասա նամակ եմ գրելու էս երկու օրը։ Իրավունքը, իհարկե, տալիս եմ։[4]) Դեռ Կարալենկոյին էլ ինձանից շատ բարով անի։ Շատ լավ հիշողություն ունեմ նրանից. շատ անուշ մարդ է։

Առայժմ համբույրներով։

ՀԱՅՐԿԴ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիզ—Մոսկվա

1916, փետրվարի 16

Հարգելի պ. Կարեն,

Ներեցե՛ք, խնդրում եմ, որ էսպես ուշ եմ պատասխանում Ձեր նամակին. շատ էր գլուխս խառնված։

Ձեր ուղարկելիք լուսանկարն արդեն ինքը՝ Վալերի Յակովլևիչը վերցրեց[1]) հետը։

Հենց նրանց ճանապարհ դրի՝ կայարանից տուն եկա թե չէ՝ հեռագիր ստացա, որ փոքր եղբայրս, 23 տարեկան օֆիցեր, սպանված է։

Քուչակի ու Սայաթ-Նովայի երգերի մասին արած իմ նկատողությունների մեջ մի երկու սխալ եմ արել, էս երկու օրը կուղղեմ։[2]) Շահը պետք է մնա մեծատառ, փարը— վահան, միայն նույն տողի շուխկը ոչ թե ճառագայթ է՝ այլ սավեր, խարն էլ և փուշ է և թևերս բողճ, ոչ հաստատ։

Շատ բարևներով ու հարգանքով՝

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱԼԻԽԱՆՅԱՆԻՆ

Պյատիգորսկ—Թիֆլիզ

1917, օգոստոսի 26

Թանկագին Կոստանդին Միխայլովիչ,[1])

Ինչպես գրել էի առաջին նամակիս մեջ՝ Կիսլովոդսկ մի ժողով հրավիրեցինք պ. Պատվական Ծատուրյանի տանը։[2]) Երեք հարց տարա ժողովին, քաղաքական, տնտեսական և կուլտուրական։ Կարճ զեկուցում արի Կովկասի և առանձնապես Հայաստանի ներ-

կա անապահով դրության մասին և առաջարկեցի կազմակերպել օգնության Կովկասյան ֆրոնտին (помощь Кавказск. фронту)։ Դրա համար այժմ մի հանձնաժողով պիտի կազմվի, որ փող ժողովի (հարկավ մեծ գումար), ապա թե ամեն կերպով օգնենք մեր ֆրոնտն ամուր պահելու։ Եվ մի ժամից հետո նորից գնալու եմ Կիսլովոդսկ, որ էդ հանձնաժողովը կազմենք։

Զեկուցում արի Հայկազյան Ընկ. և մեր կուլտուրայի պաշտպանության ու զարգացման նշանակության մասին։ Քսաներկու հոգի իսկական անդամ գրվեցին (5 հազարանոց)։ Մեր անդամներից էլ ներկա էին ժողովին։

Տնտեսական խնդիրն առայժմ մնաց։

Էստեղ շատ մարդիկ կան, շատ գործ կարելի է անել, բայց տարաբախտաբար, ոգևորություն չկա, քարձր տրամադրություն չկա։

Ես կգամ սեպտեմբերի երկրորդ կիսին և, եթե նոր ալեկոծություններ չլինեն, կսկսենք մեր գեղեցիկ գործը։

Տասն ռուբլիանոց անդամ շատերն են ուզում գրվել, բայց որովհետև դադարեցրել ենք առայժմ — չենք գրում (Միայն մի բանիսի ձեռքին մնացին սոորտգրության թղթեր)։

Դուրս է գալիս՝ բավական թվով ծագումով հայ գիտնականներ կան, որ հայերեն չգիտեն, այժմ, Հայկազյան Ընկ. բացվելով, պատրաստ են հայերեն սովորելու և հայ գիտնականներ դառնալու։

Առայժմ ընդունեցեք իմ սրտագին բարևները, իմ ազնիվ բարեկամ, մինչև մի ամսից կտեսնվենք։

Միշտ Ձեր՝
Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՂՅԱՆԻՆ

Նուռան—Թիֆլիզ

1921, ապրիլի 8

Գրիշա ջան,

... Քեզ հետաքրքրող մարդկանց ու մտերիմների մասին եթե գրեմ — շատ հեռու կտանի և, վերջապես շատերին էլ իսկի չեմ տեսել. ցրված են եղել դես-դեն ու ցրված տեղից էլ հեռացել, գրնացել։ Եվ ի՞նչքան անխելքություն կա էս ողբերգության մեջ, եթե գիտենա՞ս ...

Շատ հեշտ կարող էր չլինել էս ամենը. շատ հեշտ կարող էր միանգամայն լավ լինել։ Եվ նույնիսկ այժմ էլ շատ բան կարելի է ուղղել։ Տեսնենք, ես շատ մեծ հուսով եմ սպասում Օրջոնիկիձեին։

Դուք, թերևս, էդտեղ տեղեկություն ունիք իմ հաղորդագրությունների մասին։ Ասում եմ շատ բան կարելի է ուղղել, և որքան շուտ, էնքան լավ։

Եկա տեսա էստեղ սոսկալի լուրեր Թիֆլիզից։ Շարունակ հարցնում էին՝ ճի՞շտ է, որ 30 հազար դիակ է թափված Թիֆլիզի փոցողներում... Ճիշտ է, որ Սոլոլակից ոչ մի տուն չի ազատվել և այլն, և այլն։ Եվ զարմանում էին, որ ես էլ ազատվել եմ։

Մինչև իմ գալը ոչինչ չգիտեին. իսկ ինչ որ գիտեին՝ սուտ...

Ջերմ համբույրներով՝

Քո ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԵՏԻՆ

Երևան—Թիֆլիզ

1921, ապրիլի 13

Էս օրվանից սկսվում է երկրորդ ամիսը, ինչ որ հեռացել եմ իմ ամեն տեսակի մամոններից։ Եվ իմ սովորությամբ զանազան երազներ եմ տեսնում։ Անցյալ գիշեր էլ մի քիչ տխուր երազ տեսա — չեմ իմանում Նվարդի, թե Անուշի վրա — խառնեցի։ Շատ անհանգիստ եղա և դեռ անհանգիստ եմ։

Ջեմ ուզում կառքով կամ ավտոմոբիլով գամ, մի քիչ թույլ եմ, վախենում եմ ճամփին էլ մրսեմ կամ շատ ջարդվեմ։

Էսօր ժողով կար, թե ի՛նչ աննենք Ջանգեզուր փախածներին նա բերելու։ Արդեն էստեղ դուրս է եկել Ներսման դեկրետը։ Նոր Կասյանի և Մոռավյանի մոտ էի. հենց էնտեղից եմ եկել։ Փախածների ընտանիքների համար գնացի Կասյանի մոտ, թե կարո՞ղ են ազատ համարվել կամ հեռանալ։ Հայտնեց, որ բոլորն ազատ են և դուրս են գալիս թաքստոցներից։ Երկար խոսում էինք դրության մասին։ Շատ մեղմ ու ինտելիգենտ մարդիկ են։ Նրանց կողմնակիցներն են այժմ ուժեղանում, մանավանդ Լենինի դիրեկտիվներից հետո։ Շատ էին նեղացել Համլիկի գնալու համար։ Այժմ շատ խաղաղ է էստեղ։

Աշխենի մասին չգիտեմ ինչ գրեմ։ Ինձ միայն մի բան է զարմացնում, թե Անուշը ինչպես մի անգամ մի մարդարեություն արավ։ Իհարկե, այժմ ինքն էլ կլինի մոռացած։ Մի խոսքով լավ է։ Կարծում եմ հետս կգա։ Հովիկն, իհարկե, լավ է ու լավ։

Ամենից վատը ես եմ։ Էս տեսակ էլ բա՞ն կլինի։ Առանց երեխաների ապրել չեմ կարողանում։ Եվ այստեղ էլ են նկատել. եր-

կու բան են այժմ ինձ պահում — կամ երկու բանով եմ ապրում — դուք և սիեզերքը։

Մի խոսքով։ Հաշվում էինք նոր, որ զատկին անպատճառ էդտեղ կլինեմ, սպասում եմ, թե հիմի ձեզանից նամակ կստանամ։

Գրիշեն, իհարկե, շուտ-շուտ գալիս է և նստում եք ու խոսում։ Երանի՜ ձեզ — ինչ շրջան էր մեր շրջանը — փոքրիկ ու լավը։

Դերենիկն ի՞նչ է անում։ Բանից դուրս է գալիս, նրան գործով են ղրկել. կարծում եմ այժմ սիտի դա...

Էլեկտրականությունը շատ է թուլլ, մի կտոր մոմ էլ ունեմ — հանգչում է — սոխպված նամակը վերջացնում եմ։ Ձեզ լավ պահեցեք մինչև դամ։ Անվերջ համբուրում եմ ամենքիդ։ Ջերմագին բարևներ ու համբույրներ բոլոր մոտիկներին։

ՀԱՅՐԻԿ

ԱՐԵԳ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիզ—Երևան

1921 թ. հուլիսի 4

Արեգ ջան,

Սրանից առաջ ես քեզ մի երկար նամակ էի գրել, բայց էն նամակը հա եկավ։ Երևան եկողն էլ չէր եկել, հա բերավ։

Մենք դեռ լավ ենք։ Ամենքս էլ առողջ ենք ու ապրում ենք առաջվան պես։ Խոլերա կա, բայց մեր շորս կողմը դեռ ոչինչ չկա։ Կարող է պատահել, որ Կոջոր գնանք, գոնե մի մասս։ Կառավարական շրջաններից ասում են գնա, հարմարություն կտանք։ Օրջոնիկիձեին պատահեցի անցյալ օրը. ասում է՝ ինչո՛ւ չես գալիս։ Խոստացա գնամ։ Մի քանի բան կա կարևոր — դրույց կանենք, տեսնենք ինչ է դուրս գալիս։

Էստեղ՝ Թիֆլիսում դեռ լավ է. տեսնենք ինչպես է լինում մոտ առաջիկայում։ Բավական ծանրացել է և օրըստօրե ծանրանում է ժողովրդի տրամադրությունը։

Վերջապես իրենցն արին Զանգեզուրի «Թագավորները»։[1])

Ես՞ղ ժողովուրդ։ Ոչ մի ժողովուրդ էս տեսակ ինտելիգենցիա չունի — ուզում եմ ասեմ աշխարհքում։ Էսքան խորթ ու օտար, էսքան չնչին ու ապիկար, էսքան անխիղճ ու անամոթ։

Բայց էլ չեմ ուզում դրանից խոսեմ։

Չհասկացա, թե Պողոսն ի՞նչ էր արել։[2]) Ի՞նչ քաղաքագետ։ Ես իսկի չեմ էլ մտածել քաղաքագիտություն անեմ։ Եվ չեմ սիրում քաղաքագետներին էլ։ Եթե քաղաքագետն էն է, ինչ որ տեսանք ու տեսնում ենք։ Որ կոնկրետ դրեիր — կիմանայի ինչ ես ասում —

ես էլ իմը կասեի։ Ախր շատ բան կա, որ ես հիմնովին ուրիշ կերպ եմ հասկանում։

Մեր դասախոսություններն սկսվել են։[3]) Առաջին ակադեմիական զեկուցումը ես արի — «Հայկական էպոսի բառարանից»։[4]) Վերնագիրը շատ է համեստ, բայց բովանդակությունն անհամեմատ էր։ Հայկական էպոսի հնագույն հետքերն էի ցույց տվել, հայ, Հայկ և Դավիթ բառերի ծագումն ու իմաստը, պաշտամունքը և Հայկական տոտեմը — և կապել էի Ասորեստանի ու գլխավորապես Մոնղոլիայի հետ։

Իսկ անցյալ օրերը Գերենիկը դասախոսում էր իմ մասին, որ երկու օր տևեց վիճաբանությամբ։[5])

Էս էլ երկար պատմություն է։

Մեր գեղից ու գավառից սկսեցին, գնացին մինչև տիեզերքն ու Անհունը։ Իսկ երեկ իրիկուն Աղայանի հիշատակին ունեինք երեկույթ։

Արեգ ջան, ասում են էդ կողմերն էլ է խոլերա մտևացել։

Համբույրներով՝ ՀԱՅՐԻԿՊ

ՍԱՐԳԻՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիզ—Երևան

1921, Հուլիսի 29,

Արեգ ջան,

Էս քանի ժամանակ է՝ քեզանից նամակ չենք ստանում։ Չեմ հասկանում ի՞նչ է պատահել։ Ասում են նոր պաշտոն ես ստացել, որ այլևս գավառները չես գնալու, մշտապես մնալու ես Երևան։ Ասում են՝ էս մի քանի օրը քեզ տեսել են Քոլագերան— մի խոսքով չենք իմանում՝ որտե՞ղ ես կամ ի՞նչ բանի ես։

Երևի արդեն տեղեկություն ունես Դսեղ մեր տանը պատահած նոր դժբախտության մասին։ Արշավիրի[1]) մահվան մասին։ Իհարկե, խեղճ նանն էլ չի դիմանալու էսքան հարվածներին։

Վերջապես։

Մենք բոլորս առողջ ենք։ Աշխենը երեխի և Արփիկի ու Սեդիկի հետ գնացին Ցագվեր ամառանոց։ Թեև Թիֆլիզ շատ հով է։ Էնքան հով է, որ երբեմն նույնիսկ ցուրտ է անում։ Օրջոնիկիձեի կարգադրությամբ ինձ 2—3 սենյակ են հատկացրել Կոջոր, ամեն հարմարություններով, բայց մի կողմից գործերս թույլ չեն տալիս գրնալու, մյուս կողմից էլ շատ է հով։ Կերթամ երևի մի երկու շաբաթով հանգստանալու։

Պոլսից երեկ մարդիկ եկան. նրանց պատմելով արդեն վերջացել է Տաճկաստանի բանը։[2]) Տեսնենք։ Ըստ երևույթին էս մոտիկ օրերում շատ կարևոր դեպքեր են տեղի ունենալու։

Դու գրել էիր, թե գալու ես։ Լավ կանես մի քանի օրով գոնե գաս, եթե ավելի երկար ժամանակով չես կարողանալ։

Բարևիր մեր մոտիկներին ու բարեկամներին։ Քեզ լավ պահիր։ Իմացած եղիր միշտ, որ շատ հեշտ մալարիա կստանաս և աղատվելը դժվար կլինի։ Մեր կողմից միամիտ եղիր։ Ինչպես գրեցի՝ բոլորս առողջ ենք և ապրում ենք լավ — ժամանակին նայած։ Շուտով նամակ գրի։ Կարծեմ մյուսներն էլ են նամակ գրում։

Համբույրներով՝ ՀԱՅՐԻԿԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԽԱԹՅԱՆԻՆ

Թիֆլիզ 1922, ապրիլի 26

Հարգելի ընկ. Հարություն,

Դուրս եկավ, որ «Սասունցի Դավթի» փոփոխությունների սևագրությունը ուրիշ թղթերիս հետ թողել եմ Ճամփին (կարծեմ Բաթումում)։ Ուղարկում եմ վերջին տպած «Մնուշը»։ Քնարականներից ու քառյակներից էլ կուղարկեմ։[1])

Ձեր Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՁԵՄԱՐԱՆ ԱՎԱՐՏՈՂՆԵՐԻՆ

Ստացա ձեր նամակն և տեղեկացա... Դժբախտաբար Հայոց Բարեգործական Ընկերությունը մերժում է ձեր խնդիրը։

Բարեգործական Ընկերությունը չի ընդունում այնպիսի բարի գործ, որի մեջ «աստվածծ» բառը չկա. դրա համար էլ արտասահման է ուղարկում բացառապես այն երիտասարդներին, որոնք «աստվածաբան» են ուզում դառնալ։

Իսկ դուք ընտրել եք դյուղատնտեսություն, բաղաբատնտեսություն, լեզվաբանություն, պատմություն և այլն, որոնց մեջ իսկի խաչ էլ չկա։

Ուրիշ բան է, եթե լիներ աստվածադյուղատնտեսություն, աստվածքաղաքատնտեսություն, աստվածալեզվաբանություն և այլն։

Բաքու դիմեցինք, նրանց ընկերության անունը Մարդասիրական է։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ԴԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1885

«ԹՈՂ ՓՉԵ ՓԱՄՓԻՆ» ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿԱՎ

(էջ 11)

Գրել է 1885 թ. հոկտեմբերի 14-ին: Բանաստեղծությունը նվիրված է վարպան (Ալեքսանդր) Գոլոշյանին, որ ժողովրդասիրական և ազգային-ազատագրական գաղափարներով ոգևորված, 1883 թ. անցել էր Պարսկաստան և, բանաստեղծությունը գրվելու տարին, Սալմաստում ուսուցչություն էր անում:

Առաջին անգամ լույս է տեսել «Ծնորք» հանդեսի 1924, № 4, էջ 359—361:

Տպագրվում է ինքնագրից, որի տակ Թ-ի ձեռքով փակագծերի մեջ գրված է՝ «գրեհս սևագրություն»: Բառակուսի փակագծերի մեջ առնված երկու տուները (տողեր 73—76 և 117—120) Վարպան Գոլոշյանի քրոջ՝ Դարիա Թոզոսյանի բանավոր վկայությամբ, հիշողությամբ ավելացրել է իր հայրը՝ Գրիգոր Գոլոշյանը, մասնագիտությամբ իրավաբան, ժամանակի նշանավոր հասարակական գործիչներից մեկը:

1888

ՆԱՀԱՏԱԿ

(էջ 16)

Գրել է 1888 թ.:

Տպագրվել է՝ ԲՄ, I. հ., էջ 55—61:

1890

ԻՍՐԱՑԵԼ

(էջ 20)

Գրել է 1890 թ. դեկտեմբերին:

Ձեռագիրը վերջերս հայտնաբերել է բնհ. Անահիտ Խաչատյանը Վրաստանի Պետական կենտրոնական արխիվում (ֆոնդ 114, գործ № 1130): Տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1956, № , էջ 141:

1892

ՄԱՐՏ

(էջ 21)

Գրել է 1892 թ. մարտի 14-ին: Անտիպ:

Պարոզիային առիթ է ծառայել կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար Թիֆլիսի թեմական պատգամավորի ընտրությունը: Վերջինս հայտնի դարձավ նրանով, որ Գրիգոր Արծրունին իր կողմնակիցների հետ բոյկոտի ենթարկեց նիստը և հեռացավ: Ապագա կաթողիկոսին ընտրելու համար պատգամավոր է ընտրվում «Արձագանքի» խմբագիր Արգար Հովհաննիսյանը: Հետագայում պատգամավորների մարտի 8-ի այս ընտրությունը չեղյալ է հայտարարվում Սինոդի կողմից և նշանակվում է նորը, որը տեղի է ունենում նույն տարվա ապրիլի 22-ին: Այս անգամ ձայների ճնշող մեծամասնությամբ պատգամավոր է ընտրվում Գրիգոր Արծրունին: Կաթողիկոս է ընտրվում «Մշակի» թղթակցուն՝ Մկրտիչ Խրիմյանը:

[1]) Հավանորեն Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մամբրե եպ. Սանահաբյանը (ծնվել է էջմիածնի դավառի Խալիֆալի դյուղում), որ Արծրունու և նրա 44 կողմնակիցների հեռանալուց հետո նույնիսկ՝ շարունակեց ընտրությունը:

[2]) Ընտրությունների կարգի համաձայն՝ հօդուտ պատգամավորների տալիս էին սպիտակ քվե, ընդդեմ նրա՝ սև:

1901

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 22)

Գրել է 1901 թ. նոյեմբերին՝ Ղևոնդ Ալիշանի մահվան առթիվ:

Տպագրվել է միայն՝ Տզ, 1901, նոյեմբերի 18, № 44, էջ 401: Արտատպվում է Տզ-ից:

ՊՈԵՄՆԵՐ

1890

ՄԵՀՐԻ

(էջ 24)

Գրել է 1890 թ.: Տպագրվել է միայն՝ ԲՄ I հ., էջ 21—41, որտեղից և արտատպվում է:

ՀԻՆ ԿՈՒԻՎԸ

(էջ 36)

Գրել է 1890 թ.: Պոեմի նախնական վերնագիրը եղել է «Վհռոնի կռիվը», որ բաղկացած է եղել հետևյալ հինգ մասերից՝ «Տանը», «Ճամփին», «Երկրում», «Հրգնհր» և «Ժողովրդի մեջ»:

Հեղինակի կենդանության օրով այս պոեմից տպագրվել է երկու հատված. առաջինը պոեմի երրորդ երգն է՝ «Երկրում», որը տպագրվել է «Վհռոնի կռիվը (մի հատված պոեմից)» վերնագրով, 1907 թ. «Ժամանակ» թերթի № 1-ում: Նույն երգը երկրորդ անգամ տպագրվել է Բաքվի 1908 թ. «Բանաստեղծություններ»-ում, անփոփոխ, իսկ երրորդ անգամ՝ 1916 թ. «Հայրենիքիս հետ» ժողովածուի մեջ: Այս վերջինում հեղինակն ավելացրել է «Նախերգանք»-ը՝ քսան տող:

Այս պոեմի երկրորդ տպագրված հատվածը առաջին երգն է՝ «Տանը» վերնագրով, որ սկզբնապես տպագրվել է՝ ՀՔ, 1915 թ. հոկտեմբերի 29-ի № 243-ում: Նույն հատվածը երկրորդ անգամ տպագրվել է «Հայրենիքիս հետ» ժողովածուում, երրորդ անգամ, «Երկրում» հատվածի հետ միասին՝ ԲՊ, էջ 225—237: Այս հատվածի մշակված օրինակը 1911 թ. խուզարկության ժամանակ ժանդարմական վարչության կողմից բռնագրավվել է բանաստեղծի հինգ կապոց ձեռագրերի հետ միասին և մինչև հիմա չի գտնվել: Տպագրվածը, ինչպես ինքը՝ Թումանյանն է գրում «Հորիզոնի» № 243-ում, սևագրությունն է:

Պոեմի երկրորդ երգը՝ «Ճամփին», ունեցել է նաև «Դեպի լույսը» վերնագիրը, որի նախերգանքը՝ «Հայոց լեռներում», տպված է ԲԲ:

«Հին կռիվը» պոեմից մնացել են հետևյալ ձեռագրերը.

«Տանը»—առաջին երգի նախերգանքը՝ «Մենք կարծում էինք, թե հուր շանթերով», գրված է թանաքով՝ հեղինակի ձեռքով կատարված ուղղություններով:

«Երկրում»—երկրորդ երգի նախերգանքը՝ «Հնքիաթն ասում է, թե՝ մի աշխարհքում»: Կա և երկրորդ ձեռագիրը, որի վրա նույն տեքստը նշվում է իբրև «Դեպի լույսը» երգի նախերգանքը: Առաջին ձեռագիրը մաքուր է, իսկ երկրորդի վերջին տողերն ունեն ուղղություններ:

Թումանյանի արխիվում պահպանվում են ևս երեք էջ պոեմի սևագրություններից:

ԱՐՋԱԿ

1907

ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

(էջ 51)

Գրել է, հավանաբար, Երիմյանի մահվան առթիվ, 1907 թ.: Տպագրվել է «Նոր ալիք» օրաթերթի 1907 թ., № 5-ում:

1894

ԲՈՐՉԱԼՎՈՒՄ

(էջ 53)

Գրել է հավանորեն 1894 թ.: Ձեռագիրը չի պահպանված: Տպագրվել է «Հորիզոն» գրական հանդեսում (Ա. գիրք, 1894) էջ 149—167, որտեղից և արտատպվում է:

[1]) *«Հիշողություն հայրենիքից» բանաստեղծությունից, որ տպագրվել է ԲՄ II հ., էջ 89—92 («Երկերի ժողովածու», I հ., էջ 44):*

[2]) *Հավանորեն նկատի ունի ռուս-պարսկական պատերազմի շրջանում Բորչալվի հայերի դիմած պայքարը տեղի բեգերի և աղալարների դեմ, որոնք գլուխ էին բարձրացրել ընդդեմ ռուսական իշխանության: Երմոլովի ժամանակ նրանք ազատվեցին աղալարների լծից, թեև հետագայում նորից ընկան ճորտական կախման մեջ:*

[3]) *Հավանորեն Ախթան գյուղը:*

[4]) *Տիգրան Վերանյանց (տե՛ս Անձնանունների բառարանը):*

[5]) *Դսեղ գյուղը:*

[6]) *Հավանորեն Օձուն (Ուզունլար) գյուղը:*

[7]) *Դժվար է ասել, թե ար գյուղը նկատի ունի Թ-ը, հնարավոր է, թե Հովհաննաձորը:*

[8]) *Հավանորեն Ադարակ գյուղը:*

[9]) *Լերմոնտովի «Մահ» բանաստեղծությունից:*

1916

ՀԱՆՑԱՎՈՐՆԵՐ ՈՒ ՎԿԱՆԵՐ

(էջ 71)

Տպագրվել է՝ ՀԹ, 1916, սեպտեմբերի 23, № 212:

ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

ԱՆՈՒՇ ԸՆԿԵՐ

(էջ 76)

Անավարտ է, անվերնագիրը: Տպագրվում է առաջին անգամ, ձեռագրից, որ պահպանվում է Թումանյանի Տուն-թանգարանում:

<ԱՀԱ՛ ՇԻՐԻՄՆ...>

(էջ 76)

Սևագիրը է. գրել է 1920 թ.: Տպագրվում է առաջին անգամ, ձեռագրից, որ պահպանվում է Թումանյանի Տուն-թանգարանում:

<«ԻԼՅԱ ՄՈՒՐՈՄԵՑԸ ԵՎ ԿԱԼԻՆ ՅԱՐԸ» ԲԼԻՆԱՅԻՑ>

(էջ 76)

Սևագրությունն է, անավարտ: Տպագրվում է առաջին անգամ: Թարգմանել է 900-ական թվականներին: «Իլյա Մուրոմեցը և կալին ցարը» պատկանում է «Իլյա Մուրոմեցը և վլադիմիր իշխանը» բլիթային շարքին: Շարքի առաջին բլիթնան է «Իլյա Մուրոմեցի առողջացումը»: Առողջանալուց հետո Իլյան մի շարք սխրագործություններ է կատարում, ապա անցնում է Վլադիմիրի մոտ. այստեղ նա գժտվում է իշխանի հետ (տես «Իլյա Մուրոմեցի վեճը Վլադիմիրի հետ», որը Թումանյանը թարգմանել է 1908 թ.): Ապա գալիս է «Իլյա Մուրոմեցը և կալին ցարը», որով և փակվում է շարքը:

Թումանյանը թարգմանությունը կատարել է հետևյալ գրքից. „Книга былин, свод избранных образцов русской народной эпической поэзии. Составил В. П. Авенариус. М. 1907, стр. 161—181:

ԱՍԲ ԻԳՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

<Հատված>

(էջ 79)

Թումանյանի գրադարանում պահպանվում է «Ասք Իգորի ճակատամարտի մասին» պոեմի մի քանի հրատարակություններ:

Թումանյանը թարգմանել է Ն. Ալյաբևի՝ բնագրից կատարած բառացի, չափածո թարգմանությունից „Слово о полку Игореве, новейший буквальный перевод в стихах, Н. Алябова, Москва, 1873: *Թարգմանել է մի քառատող՝ գրքի 32-րդ էջից: Ահա ռուսերեն բնագիրը.*

Полечу ли по Дунаю кукушкою,
Омочу-ль рукав бобровый в Каяле реке,
Утру князю его раны я кровавыя
На его ли теле мужественном.

<ՇԵՔՍՊԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻՑ>

(էջ 79)

Թումանյանի արխիվում պահպանվում են քսանվածքներ Շեքսպիրի սոնետներից՝ «Сонеты» ընդհանուր խորագրով: Ինչպես նշում է ինքը՝ բառնասաեզծը, նա մտադրություն է ունեցել հետագայում մշակել գրանք և համեմատել Սայաթ-Նովայի երգերի հետ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

90-ական թվականներ

ԳՐՈՂԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

(էջ 85)

Սևագիր է: Տպագրվում է առաջին անգամ ձեռագրից, որ պահպանվում է Թումանյանի Տուն-թանգարանում: Գրված է հավանորեն 90-ական թվականներին:

Պետք է ենթադրել, որ սրանք սովորական առումով նամականեր չեն. բանաստեղծը դրական այդ ձևին է դիմել իր տպավորություններն ու մտքերը հաղորդելու համար, բայց չի ավարտել մեզ անհայտ պատճառով:

<ԿՅԱՆՔ ԵՎ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>

(էջ 89)

Տպագրվում է առաջին անգամ:

Գրականության և լեզվի հարցերով Թ-ը զբաղվել է երկար, իր ողջ կյանքի ընթացքում: Նա հոդվածներ է գրել, գրառումներ և նշումներ է արել բազմազան առիթներով, տարբեր ժամանակներում (սկսած 90-ական թվականներից): Դրանց մեծ մասը արդեն հրապարակված է «Երկերի ժողովածվի» IV հատորում: Այստեղ մենք դեռևս ենք այդ նյութին վերաբերող անավարտ և սևագիր հատվածները: Ֆրագմենտները դասավորված են կազմողների կողմից, հիմք ընդունելով միայն ժամանակագրությունը, բայց ոչ գրության թվականները, որոնք որոշել առայժմ հնարավոր չեզավ: Բնականաբար, այստեղ բերված որոշ հատվածներ, ձևակերպումներ, մտքեր կարող են օգտագործված լինել այլ, ավարտված հոդվածներում (համմա. «Մենք նախորդ շրջանի բանաստեղծները», «Երկերի ժողովածու» հ. IV, էջ 61, «Խոսք Գամառ-Քաթիպայի մասին», նույն տեղը, էջ 448 և այլն), այդպիսի կրկնությունները անխուսափելի են: Այստեղ կարող են տեղ գտած լինել նաև ֆրագմեններ, որոնք կարող են բնավ կապ չունենալ վերոհիշյալ դեկուցման հետ և այնուհանդերձ մենք նպատակահարմար գտանք այդ ամենը իմ հավաքել, դյուրացնելու համար դրանց օգտագործումը:

[1]) Տե՛ս «Տագեր ու խոցեր», խմբագրեց ու կազմեց Ազեք. Մխիթարյանց, Ազեքսանդրապոլ, 1900:

[2]) Տես Գ. Շերենց, «Վանա սար», Բ գիրք, էջ 59:

[3]) Տե՛ս «Բնար հայկական», խմբագրեց Մ. Մ. Մխանսարյանց, Ս. Պետերբուրգ, 1868:

[4]) Տե՛ս Ռ. Պատկանյանի «Ընտիր երկասիրությունները», Պետերբուրգ, 1893, էջ 19:

[5]) Տե՛ս Ալիշանյան Ղևոնդ, «Նուագք», գիրք Գ, Վենետիկ, 1858, էջ 220:

[6]) Տե՛ս Ս. Շահազիզ, «Լևոնի վիշտը և զանազան բանաստեղծություններ», Մոսկվա, 1865, էջ 237:

[7]) Տե՛ս Մ. Պեշիկթաշլյան, «Տագեր», Թիֆլիզ, 1903, էջ 55:

[8]) Բնագրում ասված է.

Թող լայցեն աչք որ վեհ բարձանցն Հայրենաց
Զեզեն ժաման տալոյ զողջոյնս անձկայրեաց:

Տես Յոբեն Նարպեյ, «Բնար պանդխտին», կ. Պոլիս, 1868, էջ 2:

[9]) Թումանյանը, հավանորեն, մեջբերումը կատարել է հիշողությամբ. բնագրում ասված է. «Ե՛վ խեղճի կյանքը, և՛ խեղճի հոգին»:

[10]) Տես Մխքայել Նալբանդյանի «Երկերը» հ. 1, Ռոստով Դոնի վրա. 1903, էջ 14:

[11]) Տես Պետրոս Դուրյան, «Տագր և թատերագրություններ», կ. Պոլիս, 1893, էջ 57:

[12]) Աշխատության խորագիրն է. «Դիմագրաւ ընդդիմ սատան յարուցեալ ամենապատուական նախամայր մարդուս լեզուիս հայոց», Տիֆլիս, 1858:

[13]) Տես Ռ. Պատկանյանի «Ընտիր երկասիրությունները», Պետերբուրգ, 1893, նշված էջը:

[14]) Նույն տեղը, էջ 9:

[15]) Տես Զեյմս Մորիեր, «Հաջի Բարայի արկածները Պարսկաստանում», թարգմ. Մ. Կ. (Նոր-Ջուղայեցի), Թիֆլիզ, 1904:

[16]) Նալբանդյանի այս խոսքը Թ-ը բերել է հիշողությամբ: Նալբանդյանը 1859 թ. հոկտեմբերի 27-ին Գրիգոր Սալթիկյանին ուղղած նամակում գրել է. «... և այնուհետև բարյավ մնա հայոց ազգը: Գրիչս պիտի կոտրեմ ու ձգեմ...» և այլն: (Միքայել Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու», հ. 4-րդ, էջ 64):

1898
<ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ>
(էջ 109)

Գրել է, հավանաբար, 1898 թ., ի պատասխան Ավ. Արասխանյանի՝ «Խոսեք այնպես, ինչպես գրում եք» վերնագրով առաջնորդողի («Մուրճ», 1898, №№ 4, 5, 6), որի մեջ նա առաջարկում է գրական լեզուն դարձնել խոսակցական լեզու:

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 47 ձեռագրից, որը անավարտ սևագրություն է:

[1]) Թերևս ակնարկում է Արասխանյանի «Քաղաքացիության զգացմունքը» վերնագրով առաջնորդողը («Մուրճ», 1898, № 1), որտեղ լեզվի մասին ասված է հետևյալը. «Նա (հայը—Խմբ.) չկարողացավ զարգացնել և ընդհանուր քաղաքացիություն տալ յուր գրական լեզվին և բարբառները կատարելապես խեղդված պահեցին գրական հայերենի գործածությունը, իսկ բարբառները իրենք կորցրին շատ շատերը հայերեն բառերից՝ թուրքական բառերին տեղ տալու համար»:

[2]) Հարություն Ճուղուրյան, «Մոռացված աշխարհ», Թիֆլիզ, 1896:

1899
ՄԱՄՈՒԼ
(էջ 112)

Գրել է 1899 թ: Տպագրվում է առաջին անգամ, ձեռագրից:

[1]) Տես «Մշակ», 1899 թ.:

[2]) Տես նույն թվի, «Ներքին տեսություն» («Մամուլ») բաժինը: Նկատի ունի իր «Արգելքներ» (Տզ, 1896 սեպտ. 50, № 38), «Նամակ խմբագրության» (Տզ, 1897, հունվ. 26, № 4), «Նամակ խմբագրության» (Տզ, 1897, մարտի 25, № 12), «Տաղանդ և բթամտություն» (Տզ, 1898, դեկտ. 20, № 42) հոդվածները:

1902
Ղ. ԱՂԱՅԱՆՑ
(էջ 116)

Գրել է 1902 թ. մայիսի 19-ին, Աղայանի գրական-մանկավարժական 40-ամյա գործունեության հոբելյանի առթիվ: Իր ժամանակ լույս չի տեսել գրաքննական նկատառումներով: Առաջին անգամ տպագրվել է Տզ, 1911, № 5—6, էջ 80, սակայն չի մտել «Երկերի ժողովածուի» IV հատորի մեջ:

[1]) Այս արտահայտությունը բերված է Վ. Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգությունից:

<ԼԵՈՒ «ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ>

(էջ 117)

Գրել է հավանորեն Լեոի հիշյալ աշխատության առթիվ, նրա լույս տեսնելու տարին՝ 1902 թվին: Անավարտ է: Տպագրվում է առաջին անգամ, ձեռագրից, որ պահպանվում է Թումանյանի Տուն-թանգարանում:

[1]) Տես հիշատակված աշխատության երկրորդ հատորը: Ընդգծումը Թ-ինն է:

[2]) Տես Ղազարոս Ազայանց, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», Թիֆլիզ, 1894:

[3]) Թ-ը նշել է միայն հատվածի առաջին բառը, լրիվ մեջբերումը թողնելով մաքրագրությանը: Բերում ենք հատվածն ամբողջությամբ:

«Հյուսիսափայլի» կյանքի մեջ առաջին անգամն էր, որ Նազարյանցը այդքան պարզ ու երկար խոսում էր թուրքահայերի մասին: Մենք իր տեղում նկատեցինք այն տարօրինակ հանգամանքը, որ Նազարյանցի համար, կարծես, գոյություն չուներ Թուրքիայի հայությունը, մինչդեռ «Հյուսիսափայլը» հրատարակվում էր մի այնպիսի ժամանակամիջոցում, երբ թուրքահայերի մեջ կատարվում էին խիստ նշանավոր պատմական դեպքեր. Զեյթունի ապստամբությունը, Ազգային Սահմանագրության հաստատվելը և այդ առիթով բռնկված կատաղի մաքառումները այն աստիճան նշանավոր երևույթներ էին Արևելքի կյանքում, որ նույնիսկ եվրոպական լրագրության առանձին ուշադրության առարկա էին դարձել: Սահմանագրական երիտասարդությունը, ոգևորված 1848-ի ֆրանսիական հեղափոխության սկզբունքներով, ժողովրդի վեհապետական իրավունքներն էր պաշտպանում, մոռացված ու հարստահարված դավառների ձայնն էր հնչեցնում. այդ երիտասարդության դեմ դուրս էին եկել խավար ուժերը, որոնք մատնությունների, ազմուկների միջոցով ուզում էին սպանել սկսված գործը: Եվ Մոսկվայի հայկական ազատամիտ ամսագրի համար գոյություն չունեին այդ բոլոր անցքերը: Կարծես զգալով այդ աններելի պակասությունը, Նազարյանցը հենց հատկապես իր սխալը ուղղելու համար էր, որ 1864-ին վերակսեց իր ամսագրի հրատարակությունը: Եվ արժեր հենց միմիայն այդ «Ազգային թշվառություն» հոդվածի համար հրատարակել» (նույն տեղը, էջ 208–209):

[4]) Ղ. Ազայանց, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 40:

1909

ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՍԵՐ ՈՒ ՀԱՐԳԱՆՔ

(էջ 120)

Գրել է, հավանաբար, 1909 թ. վերջերին, երբ «Կովկասյան կայսերական Գյուղատնտեսական ընկերությունը» տոնում էր «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարի գյուղատնտեսական գործունեության 30-ամյա հոբելյանը (նոյեմբերի 21-ին): Այդ առթիվ «Մշակը» և շատ այլ թերթեր (հայկական, ռուսական և վրացական, նույնպես և արտասահմանի հայ մամուլը) բազմաթիվ հոդվածներ են տպում:

Սևագրություն է: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 49 ինքնագրից:

[1]) Տես Տզ, 1909, № 11, էջ 97, որ տեղ առաջարկված է «Քալանթարակտա» կամ «Քալանթարաչեն» անունով մի օրինակելի գյուղ հիմնել:

[2]) Տես «Մշակ», 1909, № 251, «Ներքին տեսություն» բաժինը:

ԹԱՐԳՄ <ԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ> ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՋԱՆՈՒՄ

(էջ 122)

Տպագրվում է Թա, № 29 ձեռագրից: Գրության թիվը տրվում է ենթադրաբար:

[1]) Շեքսպիր, «Համլետ», անգլերենից թարգմանեց Հովհաննես Թումանյան, 1894:

[2]) Վիլիամ Շեքսպիրի «Մակբեթ», թարգ. Ստ. Մալխասյան, Թիֆլիզ, 1892:

[3]) Տպագրված է՝ Տզ, 1896, №№ 40, 41, 43, 44 և 45, «Մատենախոսական» բաժնում:

[4]) Մխիթար Տեր-Անդրեասյան, մասնագիտությամբ քիմիկոս-ինժեներ. Թումանյանի մոտիկ ծանոթներից մեկը, անգլերենի ուսուցիչ:

1910

<ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

(էջ 128)

Գրել է 1910 թ.: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 36 ձեռագրից:

[1]) Տես «Ճիշտ իր ժամանակին» վերնագրով հոդվածը՝ ՀԹ, 1910, № 181:

[2]) Տես Թ-ի «Լեզվական փոխառություններ» և «Վատ պատասխան պ. Ա. Մեղրյանին» հոդվածները, «Երկերի ժողովածու» IV հ., էջ 119 և 140:

[3]) Տես ՀԹ, 1910, №№ 166 և 167:

[4]) «Վերք Հայաստանի», Թիֆլիզ, 1858, էջ 91—92:

[5]) Ռաֆ. Պատկանյան, «Ընտիր երկասիրություններ», I հ., էջ 19:

[6]) Նույն տեղը, էջ 121:

<ԷԱ, ԷԴ, ԷՆ-Ի ՄԱՍԻՆ>

(էջ 131)

Գրել է 1910 թ., շարունակությունն է «Լեզվական փոխառություններ» հոդվածի (տես «Երկերի ժողովածու» IV հ., էջ 119): Ակագրություն է: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 36 ձեռագրից:

[1]) Տես Մ. Ղափարյանի «Մի նկատողություն» խորագրով հոդվածը ՀԹ, 1910, № 92:

ԴԺԲԱԽՏ ԱՍՏՂԻ ՏԱԿ ԾՆՎԱԾ ՄԱՐԴԸ

(էջ 134)

Սևագրության է: Գրել է 1910 թ.: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1234 ձեռագրից:

[1]) Ամեհա Տեր-Հարությունյան, այդ ժամանակ ուսուցիչ էր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում: Զբաղվում էր նաև գրականությամբ:

[2]) Տես «Լուսա» շաբաթաթերթ, Նոր-Նախիջևան, 1910, № 24, «Հայերեն դիացոդին» հոդվածը, որը գրված է Թ-ի «Հայերեն չգիտեն» հոդվածի առթիվ:

1911

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱԳՅԱՆԻՆ

(էջ 135)

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 756 ձեռագրից: Գրված է Ալ. Շիրվանզադեի հոբելյանի նախօրեին՝ Գ. Բաշինջագյանի „К юбилею Ширванзаде" („Тифлисский листок", 1911, № 92) հոդվածի առթիվ:

1912

<«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 137)

Գրել է 1912 թ.: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1189 ձեռագրից, որ սևագրության է բազմաթիվ ուղղումներով:

[1]) Նկատի ունի իր «Հայոց պատմության» հոդվածը, որը լույս է տեսել ՀՓ, 1912, ապրիլի 8, № 71:

1913

ՆԱՄԱԿ ԼՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

(էջ 138)

Տպագրվել է՝ ՀՓ, 1913, սեպտեմբերի 27, № 216;

[1]) Տ.—Ա.-ի հոդվածը «Սայաթ-Նովայի մահարձանը» խորագրով լույս է տեսել՝ ՀՓ, 1913, սեպտեմբերի 22, № 212:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԵՆ—ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(էջ 138)

1913 թ. դեկտեմբերի 5-ին, Հայ Գրողների ընկերության հերթական երեկույթին, Թումանյանը մի զեկուցում է կարդում «Սայաթ-Նովան—Դավիթ եպիսկոպոս և առաջնորդ Հազպատա թեմի» խորագրով, որի համառոտա-

դրությունը տպագրվում է՝ ՀՓ, 1913, դեկտեմբերի 8, № 276 (Տես Հովհ. Թումանյան, «Երկերի ժողովածու» IV հ., էջ 454—456)։ Սույն հոդվածը այդ դեկտեմբերի տեքստն է։ Առաջին անգամ տպագրվել է՝ Հովհ. Թումանյան, «Սայաթ-Նովա», Երևան, 1945։

Այն ժամանակ Թումանյանին հայտնի չի եղել, որ գոյություն է ունեցել Սայաթ-Նովայի մի մատյանը, որի մեջ բանաստեղծը ինքը հիշատակում է իր Սեւքհանոս քահանա լինելու մասին։ Մատյանը պահպանվում է Մատենադարանում (№ 4270)։

[1]) *Տես «Սայաթ-Նովա, լուս ցցած աշխատասիրությունով Գևորգա Ախվերդյանց. Մոսկվա, 1852, էջ Ը։*

[2]) *Նույն տեղը, էջ ԺԱ։*

[3]) *Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան (1864—1939)։*

[4]) *Տես «Դիվան հայոց պատմության», դիրք Դ, հառաջաբանով, հավելվածներով և ծանոթագրություններով հրատարակեց Գյուտ ա. ք. Աղանյան, Թիֆլիզ, 1899, էջ 458։*

[5]) *Նույն տեղը, էջ 492։*

[6]) *Նույն տեղը, էջ 493։*

[7]) *Նույն տեղը, էջ 580—581։*

[8]) *Նույն տեղը, էջ 589—591։*

[9]) *Թ-ը սխալվում է, ասելով թե «էդ տարվա (այսինքն՝ 1795 թվի) փետրվար ամսին» և այլն։ Հիշյալ բանագրանքը գրված է 1794 թվի փետրվարին։ Տե՛ս նույն տեղը, էջ 628—629։*

<ՆՅՈՒԹԵՐ, ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ>

(էջ 146)

Անավարտ նշումներ են։ Հավանաբար այս նյութը և կոնսպեկտը Թ-ը օգտագործել է իր դեկուցման և հոդվածների համար։ Տպագրվում է Թա, № 62 ձեռագրից։

1914

ԱՋԴԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԻՐԵՆՑ ԴՅՈՒՑԱԶՈՒՆՆԵՐԸ

(էջ 149)

Տպագրվել է՝ ՀՓ, 1914, սեպտեմբերի 4, № 194։

1916

ԼՈՍԲ՝ ՈՒՂՂՎԱԾ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

(էջ 151)

Գրել է 1916 թ. հունվարին։ Տպագրվում է Թա, № 34 ինքնագրից։ Ձեռագիրը 14 մաքրագիր էջ է։ Առաջին անգամ տպագրվել է «Թումանյանը քննադատ» ժողովածուում, էջ 339։

[1]) *Տես «Սայաթ-Նովա», Թիֆլիզ, 1914, երկ ԺԳ։*

<ՇԵՔՍՊԻՐԻ ՄԱՍԻՆ>

(էջ 153)

Այս ֆրագմենտներից առաջինը տպագրվել է «Գրական թերթ» 1956, № 16: Երկրորդը տպագրվում է Թա, № 61 ինքնագրից, որ սևագրություն է:

Ֆրագմենտները հավանորեն գրված են Շեքսպիրի մահվան 300-ամյակի առթիվ, 1916 թվին: Տես նաև Թ-ի հեռագիրը Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի առթիվ:

1) Այս վերջին տողը Թ-ը ճիշտ չի հասկացել, պետք է լինի՝ իմ անունը արատավորվում է, ինչպես ներկարարի ձեռքերը:

ԱՆՊԵՏՐՆ ՈՒ ՊԵՏՐԱԿԱՆԸ

(էջ 156)

Գրել է 1916 թ: Սևագիր է և անավարտ: Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1231 ինքնագրից, որը 3 էջ է:

1) Տե՛ս «Երկերի ժողովածու» հ. IV, էջ 340:

2) Տե՛ս Ջավախեցու «Ազգային պաշտպանության» հոդվածի երկրորդ մասը՝ «Հայ լեզուն» վերնագրով:

<Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ>

(էջ 158)

Տպագրվում է առաջին անգամ: Ինքնագիրը 2 փոքրիկ էջ է: Թա, № 8: Գրել է 1922 թ. մայիսին:

ՑՐԱԳՄԵՆՏՆԵՐ ԼԵՋՎԻ ՄԱՍԻՆ

1913

(էջ 158)

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 36 ինքնագրից: Մեծ մասամբ սևագրեր են:

1) Հր. Աճառյան, «Հայերեն դավառական բառարան»: Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Թ, Թիֆլիզ, 1913:

2) Տես Брокгауз и Ефрон, Энциклопедия, т. 81, стр. 541. *Հանրագիտարանի հետագա հիշատակումները վերաբերում են նույն հատորին:*

3) Ռ. Պատկանյանի «Երկու քույր» չափածո հեքիաթից:

4) Տես Միքայել Նալբանդյանցի «Երկերը», Ռոստով Դոնի վրա, հ. 1, 1906, էջ 16—17:

5) Տես «Հյուսիսափայլ», 1863—1864, էջ 603—604:

6) Տես «Հայոց բառ ու բան», աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912:

7) Տես 2-րդ ծանոթագրությունը:

[8]) Տես Лансон, „История французской литературы", XVII век, С. Петербург, 1899, էջ 48—56: Թումանյանի նշած էջը վերաբերում է այլ հրատարակության, որը մեզ չհաջողվեց գտնել:

[9]) Տես „История русской литературы", под ред. Д. Н. Овсянико-Куликовского, Москва, 1908, I հ., էջ 382:

[10]) Նույն տեղը:

[11]) Նույն տեղը:

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1909

ՀՈՐ<ԵԼՅԱՆՆԵՐԻ> ԴԵՄ

(էջ 173)

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 39 ինքնագրից: Ձեռագիրը՝ 21/2 էջ, սևագրությունն է ՀՔ, 1909, № 54 տպված «Հորելյանների դեմ» վերնագրով հոդվածի (տե՛ս «Երկերի ժողովածու», հ. IV, էջ 105):

Տպագրվում է տեքստային մեծ տարբերության պատճառով:

[1]) Տե՛ս Տգ, 1909, № 11, էջ 97, որտեղ Տիգ. Նազարյանը առաջարկում է «Բալանթարակերա» կամ «Բալանթարաչեն» անունով մի օրինակելի գյուղ հիմնել:

ՄԵՌ ՅԱՎԸ

(էջ 174)

Տպագրվում է ՀՔ, 1909, հոկտեմբերի 27, № 255:

[1]) Նկատի ունի «Թյուրքմացության մութի մեջ» իր հոդվածը (տե՛ս «Երկերի ժողովածու» հ. IV, էջ 102):

[2]) «Մանկական ոտանավորներ և երգեր», խմբագրեց Գամառ-Քաթիպա, Տփխիս, 1881, էջ 27:

1910

ՏԽՈՒՐ Գ. Վ-ԻՆ

(էջ 177)

Տպագրվել է՝ ՀՔ, 1910, ապրիլի 18, № 83:

[1]) Գրիգոր Վարդանյան, «Մշակ»-ի աշխատակիցներից:

[2]) Տե՛ս սույն հատորում՝ «Երևանի կռիվը և Մ. Արովյանի «Վերք Հայաստանի»-ն իբրև պատմություն» ուսումնասիրությունը:

«ՄՇԱԿԻ» Պ. Գ. Վ.-ԻՆ

(էջ 178)

Տպագրվել է՝ ՀՔ, 1910, մայիսի 8, № 98:

„МОСК<ОВСКИЕ> ВЕД<О>МОСТ<И>“-ԻՆ

(էջ 179)

Գրել է 1910 թ.:

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1240 ինքնագրից, որը 5 էջ է:

[1]) Խոսքը 1909 թ. «Երիտասարդ Թուրքերի» կառավարության կազմակերպած հայկական չարդի մասին է:

[2]) Մեզ չհաջողվեց գտնել „Моск. ведомости“ թերթի այդ համարը:

[3]) Տես ՀԹ, 1910, № 75, Թ-ի «Բողոքի գեմ» հոդվածը:

ՎԱՐԱԳԱ ՀՈՒԲԵԼՅԱՆԸ

(էջ 182)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, հունիսի 11, № 126:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆԳ

(էջ 183)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, նոյեմբերի 4, № 245:

ԴԱՌՆԱՅԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ

(էջ 184)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, հունիսի 16, № 130:

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆԸ

(էջ 187)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, ապրիլի 24, № 86:

<ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ԱԼՏԸ>

(էջ 188)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, հոկտեմբերի 6, № 220:

ԹԻՖԼԻՉԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

(էջ 189)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, հոկտեմբերի 10, № 224:

ԽՐԻՄՅԱՆ ԵՎ ԻԶՄԻՐԼՅԱՆ

(էջ 190)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, դեկտեմբերի 14, № 278:

ԱԶՆԻՎ ՄԱՐԴԸ

(էջ 191)

Տպագրվել է՝ ՀԹ, 1910, դեկտեմբերի 17, № 281:

1911

ԱՐԵՎԵԼՔԻՑ ԱՐԵՎՄՈՒՏՔ

(էջ 193)

Տպագրվել է՝ ՀՓ, 1911, մայիսի 13, № 101:

1) Մեսրոպ Տեր-Մովսիսյանի կազմած աշխարհի բոլոր հայերեն ձեռագրերի թվերի ցուցակը, որը պարունակում է Երևանի մատենադարանի ձեռագրերի նկարագրություններից ու հիշատակարաններից բացի, նաև մի շարք այլ երկրների թանգարաններում ու ձեռագրատներում պահվող հայերեն ձեռագրերի նկարագրություններ,—այժմ պահվում են ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում:

2) Սահակ Ամատունի, «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912:

3) Այդ աշխատանքների մի մասը, անտիպ, պահպանվում է ՀՍՍՌ Պետական Մատենադարանում: Ինչ վերաբերում է միջնադարյան տաղերդությունների ուսումնասիրությանը, ապա միայն մեր օրերում լույս տեսավ Ֆրիկին նվիրված մեծածավալ հատորը: Տե՛ս Ֆրիկ, «Դիվան», ի լույս ընծայեց.... Տիրայր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952:

4) Տե՛ս Գարեգին վարդ. Հովսեփյան, «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ», Թիֆլիզ, 1902: Հետագայում նա շարունակել է իր ուսումնասիրությունը այդ հարցի շուրջը:

5) Խոսքը ականավոր գիտնական Հ. Սարգիկովիչ «Die baukunst der Armenier und Europa» աշխատությունից (1918) նախօրոք եվրոպական մամուլում տպագրված առանձին հատվածների մասին է:

6) Եղիշե Թադևոսյան (1870—1936):

7) Նկարիչ Պ. Ս. Պոլտորացկի, որի մասին հիշատակվում է և Ն. Յա. Մառի հանրահայտ «Ани» աշխատության մեջ:

1912—13

ԴՊՐՈՑԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ

(էջ 196)

Անթվակիր: Հավանաբար գրված է 1912—1913 թթ.: Տպագրվում է առաջին անգամ Թա, № 33 սևագիր ինքնագրից: Ձեռագիրը՝ 3 էջ է: Անավարտ:

1) Խոսքը Բաքվի Հայոց Կուլտուրական Միության մասին է:

1913

ՋԱՏԿԻ ԱՌԻԹՈՎ

(էջ 198)

Տպագրվել է՝ ՀՓ, 1913, ապրիլի 14, № 81:

1) Նաղաշ Հովնաթանի «Յորժամ գայ պայծառ Զատիկն հայոց» սկզբնատառդն ունեցող երգից:

2) Մուրատ Խիկարի «Տաղ գարնան» երգից: Տե՛ս Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», Բ պրակ, Թիֆլիզ, 1892, էջ 5—7:

ԱՆԴԻՏԱԿԻՑ ԹՇՆԱՄԻՆԵՐ

(էջ 199)

Տպագրվել է՝ ՀՓ, 1913, դեկտեմբերի 4, № 272:

1914

ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՑՄՆ ՈՒ ԴԱՐԵՎՈՐ ՁԱՆԱՊԱՐՀԸ

(էջ 202)

Անթվակիր է։ Գրված է հավանորեն 1914 թ.։

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 27 ինքնագրից։ Ձեռագիրը՝ 4 էջ, անավարտ սևագրություն է։ Տպագրվել է «Սովետական գրականություն», 1941, № 12, էջ 70—71։

Ուշագրավ է այն ներքին կապը, որ կա սույն հոդվածի և «Ե. Արովյանի «Վերք Հայաստանին» իբրև պատմություն» ուսումնասիրության միջև։ Տե՛ս սույն հատորը։

[1]) Մինչև հոդվածի գրության տարեթիվը «Վերք Հայաստանի» վեպից ռուսերեն տպագրվել էր միայն մի հատված։ Տե՛ս Из романа „Раны Армении“, „Армянские беллетристы“, հ. I, 1893, էջ 20—24։

[2]) Ակնարկում է Երմոլովի՝ կովկասյան ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ ցուցաբերած համեմատաբար բարյացակամ վերաբերմունքը։

[3]) Ալամդարյանի ճառը (տե՛ս Գ. Ագանյանի «Դիվան հայոց պատմության», ԺԴ գիրք, էջ 9—14) Թ-ի մեզ մոտ եղած ձեռագրում չկա։ Բայց թողնված է համապատասխան տեղ։ Նպատակահարմար գտանք բերել ամբողջությամբ։

1915

ԹԱՆԿ ՄԱՐԴՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 207)

Տպագրվել է՝ ՀՔ, 1915, հոկտեմբերի 4, № 224։

[1]) Օր. Սաթենիկ Օհանջանյան (1883—1915)։

ԿԻՆՆ ՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

(էջ 208)

Տպագրվել է՝ «Մարիսխ» միօրյա թերթի 1915 թ. հունիսի 8, № 1-ում։

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(էջ 211)

1915 թ. հունիս ամսին Թ-ը ուղևորություն է կատարել պատերազմի վայրերում և հասել է մինչև Վան։ Այս սևագիր հոդվածը հավանաբար գրված է այդ ժամանակ։

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 37 ինքնագրից։ Ձեռագիրը $4^1/_2$ էջ է։

ՄԻ ԵՐԿՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

(ԷՋ 214)

Տպագրվել է՝ «Ք», 1915, հոկտեմբերի 23, № 238:

1) Խոսքը վերաբերում է „Закавказская речь“ թերթի խմբագիր Կ. Պ. Տումանովի (Կ. Տումանիշվիլի) նամակներին, որ տպագրված են նույն թերթում՝ «Грузин» ստորագրությամբ: Դրանցից առաջին երկուսը լույս են տեսել թերթի 205 և 213 համարներում: Այդ նամակների առթիվ է գրում իր հոդվածը Թ-ը: «Грузин»-ը սակայն շարունակում է նույն ոգով գրած իր նամակաշարը, հասցնելով դրանք 10-ի: Այդ նամակները մեծ ազմուկ են բարձրացնում ժամանակի հայկական, ռուսական և վրացական մամուլում: Այս խնդրի առնչությամբ նույն „Закавказская речь“ թերթի 1915 թ. № 263-ում լույս է տեսնում «Հայկական մամուլը Կովկասի մասին» անստորագիր հոդվածը, որի հեղինակը դատապարտում է դանազան «Грузин»-ների ու «Скальпель»-ների շովինիստական վարքագիծը հայ գաղթականների նկատմամբ:

2) Մեզ չհաջողվեց գտնել „Петроградские ведомости“ թերթի այդ համարը:

ԱՂԵՏ Է, Ո՛Չ ԹԵ ՓԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ԷՋ 219)

Տպագրվել է՝ «Ք», 1915, նոյեմբերի 1, № 246:

1) Տե՛ս Նախորդ հոդվածը:

2) Տե՛ս Բաֆֆի, «Վեպիկներ և պատկերներ», հ. առաջին, Թիֆլիզ, 1891, էջ 491:

1916

Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ...

(ԷՋ 224)

Տպագրվել է՝ «Ք», 1916, հունիսի 8, № 126:

ԿԱՐԵԼԻՆ ԵՎ ՅԱՆԿԱԼԻՆ

(ԷՋ 225)

Հոդվածն անթվակիր է. գրված է 1916 թվին:

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1236 ինքնագրից: Ձեռագիրը 25 էջ, սևագրություն է: Մի հատված՝ «Ռուսաստանը ազգեր չի խորտակել» վերնագրով տպագրվել է «Սովետական գրականություն», 1943, № 3, էջ 89—90:

1) Մագիստրանտը Գրիգոր Եվանգուլյանն է:

2) Տե՛ս „Кавказское слово“, 1916, № 182, „Будущее Турецкой Армении“ հոդվածը:

3) Տե՛ս „Кавк. слово“, 1916 թ.:

4) Խոսքը «Երրորդ գարկը» հոդվածի մասին է:

5) «Ազգերի պատերազմն ու իրենց դյուցազուններըն:

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ „КАВКАЗСК<ОЕ> СЛОВО“ ԹԵՐԹԻ Պ. ՆԱՐԲԱԳԻՐԻ ՀԵՏ

(էջ 230)

Գրել է 1916 թվին:

Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1235 ինքնագրից: Ձեռագիրը 8 էջ, մաքրագրություն է:

1) Տե՛ս „Кавказское слово“. 1916, Ю. Семёнов-ի „Россия в малой Азии“ *հոդվածի 2-րդ մասը:*

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

(էջ 232)

Տպագրվել է՝ ՀՔ, 1916, հունվարի 16, № 10:

1) Այստեղ թերթի խմբագիրը Մ. Վարդանյանը մի ծանոթագրություն է տվել, որտեղ շարունակում է պնդել, թե ռուսների հետ և վրացիք ընդհանրապես «պաղ ու անտարբեր վերաբերմունք ցույց տվին դեպի հայկական բանաստեղծության այդ եղակի երևույթը»:

2) Բյուրավի այդ դասախոսությունը տեղի է ունեցել Թիֆլիսում 1916 թ. հունվարի 22-ին, «Հայաստանի պատմական շրջանները և հայ պոեզիայի զարգացումը» թեմայով: Տե՛ս, ՀՔ, 1916, № 15:

ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽԸ

(էջ 233)

Տպագրվել է՝ ՀՔ, 1916, հուլիսի 21, № 160:

1918

ՀԱՆԴՅՐԵ՛Ք ՀՐԴԵՀԸ

(էջ 235)

Տպագրվել է՝ „Кавказск. слово“ *թերթի 1918, № 70:*

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՊԸ ԴԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԵՏ

(էջ 236)

Տպագրվել է՝ «Մշակ» թերթի 1918, սեպտեմբերի 12, № 183:

<ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

(էջ 238)

Տպագրվել է՝ „Тифлисский листок“ *թերթի 1918 թ. դեկտեմբերի համարներից մեկում, ապա, կրճատումներով արտատպվել է՝ «Ժողովրդական ձայն», 1918, դեկտեմբերի 27, № 92:*

«ՋԻՆՎՈՐԱԳՐՎԵԼ ԵՆ»

(էջ 239)

Տպագրվում է առաջին անգամ: Ձեռագիրը պահպանվում է Հովհ. Թումանյանի Տուն-թանգարանում:

[1]) «Ժողովրդի ձայն», քաղաքական, հասարակական-դրական օրաթերթ, (1918—1919)։ Առաջին համարը լույս է տեսել 1918 թ. սեպտեմբերի 1-ին։

[2]) Տե՛ս «Աշխատավոր», 1918, սեպտեմբերի 11, № 129 («Լրատու»)։

[3]) Տե՛ս Հմ, սեպտեմբերի 3, № 175 («Մամուլ»)։

1920

ՎԵՐՋԻՆ ՎԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(էջ 244)

Տպագրվել է՝ «Նոր աշխատավոր», 1920, հոկտեմբերի 7, 148։

ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

<ԴՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ>

(էջ 246)

90-ական թվականների սևագրություններից է։ Տպագրվում է առաջին անգամ։ Ինքնագիրը գտնվում է Թա։

ԳՈՐԾՆ ՍԿՍՎԱԾ Է

(էջ 247)

90-ական թվականների սևագրություններից է։ Տպագրվում է առաջին անգամ։ Ինքնագիրը գտնվում է Թա։

<ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՓՈԽԱԴԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

(էջ 248)

Սևագրություն է։ Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 174 ձեռագրից։

<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 248)

Գրել է, հավանաբար, 1918 թ.։ Տպագրվում է առաջին անգամ, Թա, № 1242 ձեռագրից։

<ՄՏՔԵՐ ՕՐԱՏԵՏՐԻՑ>

(էջ 249)

Գրել է, հավանաբար, 1918 թ.։ Օրատետրը գտնվում է Հովհ. Թումանյանի Տուն-թանգարանում։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՒԻՎԸ ԵՎ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն ԻԲՐԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(էջ 253)

Հովհ. Թումանյանի անավարտ և անտիպ մնացած այս ուսումնասիրության տեքստը պատրաստված է հեղինակի ինքնագրերի հիման վրա, որոնք պահվում են Հայկ. ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում, Թա, № 176 թղթապանակում:

Ձեռագիրը 155 թերթ է, մեծ մասամբ 35×22 սմ.: Սկզբնական ու հիմնական մասը գրված է թանաքով, իսկ հետագա լրացումներն ու փոփոխությունները՝ թե թանաքով, և թե մատիտով: Ինքնագրերից երեք հիմնական հատվածներն ունեն վերնագրեր, այն է՝

ա) «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և <18> 28 թ. ռուս-պարսկական պատերազմը»:

բ) «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և ռուսաց դին<վորական> տարեգրությունը»:

գ) «Երևանի առումը և հայոց պատմությունը»:

Բացի այդ հիմնական հատվածներից, որոնցից ոչ մեկը ավարտված ամբողջություն չէ, № 176 թղթապանակում կան նաև առանձին կտորներ, ավելի փոքրածավալ հատվածներ ու պատառիկներ:

Ընդհանուր վերնագիրը որոշելիս, նկատի ենք ունեցել ուսումնասիրության բավական մանրամասն պլանը, որը բաղկացած է 22 մեծագիր թերթից, կարված տետրակի ձևով: Այդ պլանի հիմնական վերնագիրը վերցրել ենք իբրև ամբողջ ուսումնասիրության ընդհանուր վերնագիր՝ ենթագրելով, որ հեղինակն էլ այդպես կվարվեր, եթե ավարտեր, ամբողջացներ այն ու հանձներ տպագրության:

Տեքստը պատրաստելիս հատվածների հաջորդականությունն ու տեղադրությունը որոշել ենք՝ ելնելով նյութերի բովանդակությունից, ձեռագրի արտաքին նշաններից, տարբերություններից ու նմանություններից: Գրության թվականը չի նշված, բայց հայտնի է դառնում բովանդակությունից ու հատվածներից մեկի սկզբնական վերնագրից՝ «Վերք Հայաստանի»-ն և հայոց պատմությունը («Վերք Հայաստանի»-ի տպագր<ության> 50-ամյակի առիթով)»:

Փակագծերում եղած այդ ենթավերնագիրը վկայում է, որ Թ-ը իր աշխատանքն հիմնականում սկսել է 1908 թ., «Վերք Հայաստանի» վեպի առաջին հրատարակության 50-ամյակի օրերին, երբ այդ առիթով նա գրում է իր՝ «Հայոց նոր գրականության 50-ամյակը» վերնագրով հոդվածը («Վաչակ», 1908 թ., հունիսի 5, № 119): Այդ հոդվածի և այս ուսումնասիրության որևէ հատվածի միջև տեքստային ոչ մի նմանություն չկա: Այս փաստն ինքնին վկայում է, որ Թ-ը հիշյալ հոդվածը տպագրելուց հետո է միտք հղանում գրելու «Վերքի» մասին «մի համառոտ-պատմական տեսություն»: Այդ հաստատվում է մի քանի այլ փաստերով, որոնք վկայում են, որ նա իր անավարտ մնացած ուսումնասիրության վրա աշխատել է առավելապես 1908—1910 թթ.: Այնուհետև նա հնարավորություն չի ունեցել հիմնավորապես զբաղվելու այս հետաքրքր-

բական ու մեծարժեք հետազոտությունը շարունակելու և այն ամբողջացնելու գործով:

1910 թ. ապրիլի 1-ին «Հորիզոն» թերթում տպագրված իր հոդվածում Թ-ը ասում է. «... Առաջիկայում եթե տպագրության տանք մի համառոտ դրական-պատմական տեսություն, որ արել եմ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանիի» 50-ամյակի առիթով...» և այլն («Հորիզոն», 1910 թ. ապրիլի 1, № 83, «Տխուր Գ. Վ-ին» հոդվածը):

Նույն թվականին, այդ հոդվածի տպագրությունից մեկ ամիս հետո դրված հոդվածն սկսվում է այսպես.

«Մի դրական-պատմական ուսումնասիրության համար վերցրել էի «Վերք Հայաստանին», և հատկապես Բաքվի կուլտուրական Միության հրատարակությունը...» («Հորիզոն», 1910 թ. մայիսի 6, № 96, «Ուղղված «Վերք Հայաստանին»»):

Ինչպես հայտնի է, «Վերքի» այդ հրատարակությունը եղել է 1908 թ., հետևաբար Թ-ը իր «Դրական-պատմական ուսումնասիրությունը» կատարել է գլխավորապես հենց այդ տարվա ընթացքում: Հիշենք մի փաստ ևս, որ նույնպես պարզում է այս ուսումնասիրության դրության ժամանակը:

1912 թ. մարտի 7-ին Պետերբուրգից Թիֆլիզ՝ իր որդուն՝ Արտավազդին, դրած նամակում, Թ-ը դժգոհանում ու պատվիրում է, թե՝ «Վերք Հայաստանիի» մասին իմ դրած հոդվածների համար էլ էդքան շատ մի ասեք,— և առ հասարակ մի խոսեք,— էնքան կասեք, նույն բանը կտաք ուրիշներին, որի վրա ես տարիներ աշխատել եմ» (տե՛ս սույն հրատ. հ. V, էջ 369):

Պարզ է, «Վերք Հայաստանի»-ի մասին իմ դրած հոդվածները» ասելով, Թ-ը նկատի ունի սույն ուսումնասիրությունը:

Իսկ որ Թ-ը 1908 թ. հետո էլ շարունակել է աշխատել իր ուսումնասիրության վրա, և այն էլ՝ «տարիներ», այդ հաստատվում է ուսումնասիրության առանձին մասերի ու էջերի, լրացումների ու փոփոխությունների տարբեր թանաքով կամ մատիտով, տարբեր ժամանակներում դրված լինելու փաստով:

Հեղինակի կենդանության օրով այս ուսումնասիրությունից ոչ մի հատված չի տպագրվել: Բայց նրա մի քանի հոդվածներում, որոնք ամբողջովին, կամ մասնակիորեն վերաբերում են Աբովյանին ու նրա վեպին, ինչպես և ռուս-պարսկական պատերազմին, Թ-ը արտահայտում է նույն այն հիմնական մտքերն ու եզրակացությունները, որ կան այս ուսումնասիրության մեջ:

Հիշենք այդ հոդվածներից մի քանիսը ժամանակագրական կարգով. «Երևկվան պատմությունը և այսօրվան իրականությունը» («Հորիզոն», 1912 թ. նոյեմբերի 7, № 196), «Կարևոր հույսն ու դարևոր ճանապարհը» անտիպ մնացած և բուն երևույթին գրված առաջին համաշխարհային պատերազմի սկզբին. (տե՛ս սույն հատորը էջ 202), «Վան ու Երևան» («Հմայ», 1915 թ. մայիսի 10, № 101), «Կինն ու մահմեդական պետությունների անկումը» («Մշակ», 1915 թ. հունիսի 8, № 1), և այլն:

Այդ հոդվածներում հեղինակն օգտագործել է իր անտիպ ուսումնասիրության ոչ միայն առանձին մտքերն ու եզրակացությունները, այլև՝ տեղ-տեղ ամբողջական հատվածներ է մեջբերել այնտեղից: Որպես օրինակ, համեմատել այս ուսումնասիրության ներածական մասի «Հայ ժողովուրդը երկար դարերով աչքը կթած Արևմուտք...» բառերով սկսվող երրորդ պարբերությունը («Հոյակապ է տեսարանը...» բառերից սկսած մինչև «դեպի քրիստոնյա բանակը»), «Երևկվան պատմությունը և այսօրվան իրականությունը»

հոդվածի տանչոթս ու տանհինգերորդ պարբերությունների հետ («Հայոց պատմությունը հոյակապ է նկարագրում էն տեսարանը, երբ Ջիրավի մեծ դաշտում...» բառերից մինչև «գեղի քրիստոնյա բանակը»)։ Այդ հատվածների նույնությունն ակնհայտ է։ Հոդվածի մնացած մասն էլ (ուր օգտագործված են բազմահատոր „Кавказский сборник“ I հատորում տպված Լալինովի օրագրությունները) գրեթե ամբողջապես շարադրված է անթիլ ուսումնասիրության համապատասխան մասերի օգտագործումով։

Առաջին անգամ 1941 թ. հեղինակի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, մի հակիրճ բացատրական նախաբանով, տպագրում է քաղվածքներ այս ուսումնասիրությունից «Սովետական Գրականություն» ամսագրում (տե՛ս 1941 թ. № 9—10, էջ՝ 113—114), «Հատվածներ Հ. Թումանյանի «Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը» անթիլ աշխատությունից» վերնագրով։ Հարկ է նշել, որ այս վերնագիրը, սակայն, չի համապատասխանում հեղինակային ինքնագրի վերնագրերից ոչ մեկին. այն ամսագրի խմբագրության հղացման արդյունք է։ Տպագրության համար վերցված են՝ ուսումնասիրության ներածական հատվածի երկրորդ տարբերակը սկզբից մինչև վերջը, «Մ. Աբովյանի «Վերք Հայաստանին» և ուսաց պինվորական տարեգրությունը» գլխի վերջին հատվածը («... Այսպես, գարեր շարունակ...» բառերից սկսած մինչև «քաջածանոթ դեպքերին ու դեմքերին» բառերը) և մի քանի այլ, ավելի փոքր քաղվածքներ ինքնագրի զանազան մասերից, որ ցույց կտանք իրենց տեղերում։

Բացի այն, ինչ որ տպագրվում է հեղինակի երկերի ներկա հատորում, Թ-ի արխիվի նույն՝ № 176 թղթապանակում կան նաև այս ուսումնասիրության նյութերը, զանազան աղբյուրներից քաղվածքներ և նշումներ, որոնք անհրաժեշտ չհամարեցինք հրատարակել։

Տեքստը պատրաստելիս հեղինակի բերած բոլոր մեջբերումները համեմատել ու ճշտել ենք համապատասխան աղբյուրների հիման վրա, ըստ որում որոշ դեպքերում թողել ենք անփոփոխ և ծանոթագրություններում ավել այն տարբերությունները, որ կան մեջբերումների ու դրանց բնագրերի միջև։

Մի շարք տեղերում մեջբերված քաղվածքները (մասնավորապես «Վերք Հայաստանիից») լրացրել ենք, ինչպես և համապատասխան աղբյուրներից մեջ ենք բերել այն տեղերը, որ հեղինակը ցույց է տվել համապատասխան էջերի նշումներով։ Այդ լրացումներն առնված են սուր փակագծերի մեջ։

«Վերք Հայաստանիից», մեջբերումներ կատարելիս Թ-ը Աբովյանի չափածո ու հանդավոր արձակը տեղ-տեղ տողատել է։ Այդ մասին համապատասխան տեղերում ավել ենք ծանոթություն։

Թ-ի ուսումնասիրության երկու օյունակի վրա գրված մասերը ավել ենք նույն ձևով՝ երկու օյունակի վրա, ըստ որում իրենց տեղերում պահպանել ենք նաև աջ և ձախ լուսանցքներում եղած ծրագրային կամ այլ կարգի նշումներն ու հարցականները։

Թ-ն իր ուսումնասիրության համար օգտագործել է «Վերք Հայաստանի» վեպի 1908 թ. հրատարակությունը և մեջբերումներ կատարելիս, էջերը ցույց է տվել մեծ մասամբ ըստ այդ հրատարակության, բայց միշտ էլ նկատի է ունեցել նաև նախորդ երկու (1858 և 1897 թթ.-ի հրատարակությունները, մասնավորապես առաջինը, և նկատված սխալները ճշտել է

թե 1858 թ. հրատարակություն և թե՛ «Վերքի» հեղինակային ձեռագրի հիման վրա, որ Թ-ը իր տրամադրության տակ է ունեցել՝ վերցրած լինելով Աբովյանի ժառանգներից:

[1]) Խ.— ըստ երևույթին Խորենացի, որովհետև Չամչյանի «Հայոց պատմության...» այն էջը, որտեղից օգտվել է Թ-ը, լուսանցքում նշված է Խորենացու անունը:

[2]) Տե՛ս Մ. Չամչեան,—«Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784», հատոր Ա, գիրք երկրորդ, գլուխ ԽԸ, էջ 464. տե՛ս նաև Փ. Բյուզանդ՝ «Պատմութիւն Հայոց» Դ գպրություն, գլուխ ԾԸ—ԾԹ.:

[3]) Տե՛ս «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ». «Նախերգանք»:

[4]) Արշակունի տուն կամ Արշակունյաց հարստություն—թագավորական դինաստիա հին Հայաստանում, մի ճյուղը՝ Պարթև Արշակունիների, որ հաստատվեցին Հայաստանում մեր թվականության 64 թվականին: Արշակունյաց հարստության առաջին ներկայացուցիչը Տրդատ I է: Արշակունիների իշխանությունը վերջացավ 428 թ. այդ հարստության վերջին՝ Արտաշիր (Արտաշես) թագավորով, որից հետո Հայաստանն ընկավ նախ՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի և ապա արաբների իշխանության տակ:

[5]) Չիրավի դաշտը գտնվում է Բագրևանդի գավառում: Այնտեղ 368 թ. տեղի ունեցավ մեծ ճակատամարտ՝ հայոց զորքի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ընդդեմ պարսիկների:

[6]) և [7]) Տե՛ս Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց...», հատոր Ա. գիրք Բ., գլուխ ԽԹ, էջ 465—466: Տե՛ս նաև Մ. Խորենացի՝ «Պատմութիւն հայոց», գիրք երրորդ, գլուխ ԼԸ՝ «Յաղագս մեծի պատերազմին, որ եղև ի Չիրաւ...»:

[8]) Նպատ լեռը գտնվում է Բագրևանդի գավառում, ուր և Չիրավի դաշտն է: Մեր պատմիչների (Խորենացի, Փ. Բյուզանդ, Մեսրովպ Երեց և այլն) ասելով, 368 թվականին Չիրավի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ «Նպատի սրբազան գագաթին» աղոթում էր Ներսես Մեծը հայերի հաղթության համար («Արդ, իբրև ետես Մեծն Ներսէս զայն ամենայն, ել նա ի կատար լերինն Նպատայ, և ամբարձ զձեռս իւր յերկինս անխոնարհելի պահելով ի խնդրուածս, հանգոյն նախամարգարէին Մովսիսի, մինչև պարտեցաւ երկրորդն Ամաղեկ» ասում է Խորենացին: Տե՛ս «Պատմութիւն հայոց», գ. ԼԷ.):

[9]) և [10]) Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը:

[11]) Տե՛ս Խ. Աբովյան՝ «Վերք Հայաստանի», 1908 թ. Բաքու, էջ 272:

[12]) «Իրականություն» բառից հետո հաջորդ տողի սկզբին կարմիր մատիտով արված է հետևյալ նշումը. «Ծանոթություն աղբյուրների»:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն ԵՎ <18> 26 Թ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(էջ 257)

[1]) «Պատերազմի առիթը» բառերի դիմաց, աջ լուսանցքում մատիտով նշված՝ „стр. 17 (22)“ պետք է հասկանալ՝ Кавказский сборник“, под редакцией генерал-майора В. Потто, том XXII, отдел 3, стр. 17 (ճիշտը՝ 16. Թ. սխալվել է). „Персидская война. Кампания 1826 г. Из записок графа Симонича“.

[2]) Տե՛ս Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», 1858, էջ 129—131:

[3]) Տե՛ս „Кавказский сборник„ том I, 1876 г., стр. 9, „Воспоминания из кавказской старины“ В. Андреева.

[4]) «Պատմության հետ» բառերից հետո, ներքևի լուսանցքում կան հետևյալ ծրագրային նշումները.

«ա. Հայ ժողովրդի պատմական տրամադրությունը.

բ. Ընչի՞ց է բխում էդ տրամադրությունը.

գ. Փաստերը ճի՞շտ են պատմության հետ, թե չէ»:

[5]) Տե՛ս „Кавказский сборник„ под ред. В. Потто, том I, 1876 г., стр. 129, „Отрывок из „Исповеди" Лачинова".

[6]) Տե՛ս «Դիվան հայոց պատմության», դիրք Դ., 1899 թ. էջ 717. «Հավելված Ա, «Յաղագս կաթողիկոսութեան տեառն Դանիէլայ Կարնեցւոյ և դաշնագրութեան Հայոց ընդ ռուսաց և կաթողիկոսացն Սաւոյ, որք նստան ի յետին ժամանակս»:

[7]) «Դերեվաճառության» բառից առաջ կապույտ մատիտով արված է հետևյալ նշումը. «Ա՛խ, սիրելի հայ»...

[8]) Տե՛ս 5-րդ ծանոթագրությունը:

[9]) «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում», մասն Ա. (1800—1832 թ.). աշխատասիրյաց Ազեքսանդր Դ. Երիցյանց, Թիֆլիզ, 1894:

Թ-ի նշած էջերում (181, 186, 225, 227, 228,), Երիցյանը բերում է պարսկական կառավարության ու նրա պաշտոնյաների կողմից հայերի նկատմամբ եղած հալածանքի բազմաթիվ փաստեր:

[10]) Ռուսաց զորքերի առաջին մուտքը Թիֆլիզ տեղի է ունեցել 1799 թ. նոյեմբերի 28-ին (տե՛ս В. Потто.— „Утверждение русского владычества на Кавказе", т. I, 1901 г., стр. 5), իսկ Վրաստանի միացումը Ռուսաստանին՝ 1801 թ.:

[11]) Ալեքսանդր I-ի 1801 թվականի սեպտեմբերի 12-ի հրովարտակը վրաց ժողովրդին հրապարակվում է 1802 թ. ապրիլի 12-ին (տե՛ս В. Потто, „Утверждение русского владычества на Кавказе", т. I, стр. 25, 39):

[12]) Կայսեր հրովարտակից բերված է միայն այդ մասը. ամբողջը տե՛ս „Утверждение русского владычества на Кавказе", под редакцией генерал-майора В. Потто, т. I, 1901 г., стр. 34—35.

[13]) Այս քառյակը բերված է Լերմոնտովի «Спор» բանաստեղծությունից:

[14]) Թ-ի այս ուսումնասիրության ծրագրային նախաբերության մեջ նշված աղբյուրների ցանկում կա նաև Կ. Եզյանի (Եզովի) աշխատությունը՝ „Сношения Петра Великого с армянским народом". պարզ է, որ այստեղ տմփովված դիմումներից մեկնումեկը նկատի ունի Թ-ը, բայց փակագծերում գրված վերոհիշյալ արտահայտությունը դիմումներից ոչ մեկի մեջ չկա, մի քանի դիմումների (1723 թ. 1|XI, 1724 թ. 18|X, 1725 թ. 10|III, 1725 թ. 10|III, և այլն) մեջ կան առանձին արտահայտություններ, տողեր, որոնք միայն հիշեցնում են փակագծերում եղած այդ արտահայտությունը:

[15]) «Հայոց ողովր» բառերից առաջ, վերևի լուսանցքի աջ անկյունում գրված է՝ «Լոռի. Կավ. սբ. 22, 22»: Այս թվերից առաջինը ցույց է տալիս այդ ժողովածվի 22-րդ հատորը, իսկ վերջինը՝ նույն հատորի էջը (М. Кочебу, Вторжение персиян в Грузии в 1826 году)*: Այդ և նախորդ էջերում Կոչեբուն խոսում է Լոռու բնական-աշխարհագրական դիրքի ու հարստության և բնակչության ազգային կազմի, ինչպես և Լոռու պատմական անցյալի մասին:

[16]) Տե՛ս „Кавказский сборник", том IV.

[17]) «Վերք Հայաստանի» վեպի նախասովետական շրջանի բոլոր հրատարակություններում (1858, 1897 և 1908) տպված է «քեանդազ էլան»: Թ-ը ճշտել է բառը՝ վեպի ձեռագրի հիման վրա, որը նա իր ձեռքի տակ է ունեցել: Փիանդազ՝ նշանակում է զորք:

[18]) «Վերք Հայաստանի»-ի վերոհիշյալ բոլոր հրատարակություններում այս տողը («Անիբաւ, էս բաղին բազմանչի ունի») կրկնված է հաջորդաբար: Թ-ը չի տվել կրկնությունը:

[19]) «Վերք Հայաստանի»-ի վերոհիշյալ բոլոր հրատարակություններում (ինչպես և բնագրում)՝ «Միտք արա և այլն»: Թ-ը «և այլն»-ը բաց թողնելով, շարունակում է տողը՝ ոտանավորի չորրորդ ու հինգերորդ տողերը բերելով, իբրև կրկներգ:

[20]) Թ-ը Լաչինովի հուշերից բերված այս քաղվածքի միայն սկզբի բառն է դրել՝ նշելով նաև աղբյուրը: Մենք բերում ենք ամբողջ պարբերությունը, նկատի ունենալով, որ անկասկած ինքը՝ Թ. էլ կբերեր այն, եթե ավարտեր ու մաքրագրեր իր ուսումնասիրությունը: Նման դեպքերում այդպես ենք վարվել նաև հետագա մասերում:

[21]) Տե՛ս «Кавказский сборник», том I, стр. 186. «Отрывок из «Исповеди» г. Лачинова, письмо из Карса, 2-го декабря, 1828 г.»

[Ս. ԱՐՀՈՎՅԱՆԻ] «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն ԵՎ ՌՈՒՍԱՑ ՋԻՆ[ՎՈՐԱԿԱՆ] ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(էջ 267)

[1]) Թ-ը չի նշել, թե որտեղից է մեջ բերել Գյուլիստանի դաշնագրի քաղվածքը:

[2]) Թ-ը նկատի ունի Պարսկաստանի հետ 1810 թ. Անգլիայի կնքած դաշնագիրը, որով Անգլիան հանձն է առնում Պարսկաստանի պաշտպանությունը՝ Ռուսաստանի կողմից հարձակում լինելու դեպքում:

[3]) Խոսքը 1825 թվականի դեկտեմբերի 14-ի դեկաբրիստների նշանավոր ապստամբության մասին է:

[4]) Թ-ը նկատի ունի գեներալ-լեյտենանտ Վելյամինովի՝ գեներալ Երմոլովին ուղղած՝ 1826 թ. հունվարի 27-ի զեկուցագիրը (рапорт), ուր մեջ է բերված շահի դեսպանորդ Միրզա-Մահմեդ-Սաղըխի խոսքերը, որ ասել է վերջինս գեներալ-լեյտենանտ Վելյամինովին, սրա հետ բանակցություն վարելու ժամանակ. «Եթե ռուսները չեն ուզում մեզ հետ բարեկամաբար ապրել, ապա մենք էլ դրա կարիքը չենք զգում»: Տե՛ս «Кавказский сборник», том XXII, отдел IV, стр. 37. «Рапорт ген.—лейт. Вельяминова ген. Ермолову».

[5]) «Верность данному слову и т. д.» այսպես է սկսում՝ 1826 թ. հունվարի 11-ին (և ոչ թե 1-ին, ինչպես սխալմամբ գրել է Թ-ը) Երմոլովին ուղղած Նիկոլայ I հրամանը, որով ցարը պատվիրում է պահպանել խաղաղությունը Պարսկաստանի հետ և առիթ չտալ պատերազմի:

Տե՛ս В. Потто, «Кавказская война», т. I, 1887, стр. 20.

[6]) Ռուսերեն բնագրում՝ «главнокомандующаго».

Տե՛ս «Кавказский сборник», т. XXIУ, стр. 63. «Письмо Аббас-Мирзы к полковнику Реутту, 25-го июля 1826 года».

[7]) Այս քաղվածքը ռուսերեն բնագրում այսպես է. «О разрыве мира Персии с Всероссийскою державою я от начальства своего сведения никакого не имею, ни в какия переговоры вступать не могу, а долг свой, сколько честь того требует, исполнять буду». Տե՛ս «Кавказский сб.», т. XXIУ, стр. 64. «Письмо полковника Реутта к Аббас-Мирзе, 26-го июля 1826 г.».

[8]) Տե՛ս «Վերք Հայաստանի», 1908, էջ 186:

[9]) «рапортовал» բառից հետո գրված է «Մինչև (XXII, 10—11, երկրորդ

տողը—с баталионами сарбазов»). ըստ այս նշումի «Кавк. сб.» հիշյալ՝ հատորից ամբողջ քաղվածքը մեջ ենք բերում տեքստում:

[10]) Տե՛ս «Кавказский сборник», том XXIII, стр. 10—11, «Рапорт князя Севарсамидзе генералу Вельяминову, 18-го июля 1826 г.»:

[11]) «Սրանից հետո Երմոլովը հայտարարում է» բառերից հետո համապատասխան քաղվածք չկա: Թ-ը, հավանաբար, նկատի ունի Երմոլովի՝ 1826 թ. հուլիսի 26-ի հրամանը, ուր ասված է. «Недавно возвратился я с Кавказской линии... здесь персияне гораздо безсовестнее, с большею гораздо наглостью начали делать нападения на войска наши» և այլն:

Տե՛ս «Кавк. сб.», т. XXIII, стр. 68, նաև 22:

[12]) Դարը սխալ է նշված: Զաքարիա Սարկավագը մեռել է XVIII դարի 10-ական թվականների սկզբից ոչ շուտ:

Տե՛ս նրա՝ «Պատմագրութիւն», հատոր Բ, էջեր 83, 95, 101 և 135:

[13]) Տե՛ս «Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւն», Ա հատոր, գլուխ ԼԸ՝ «Վասն գլուխ գրողացն»:

[14]) Տե՛ս նույն աշխատությունը՝ հատոր Բ, գլուխ ԿԶ՝ «Քաշանք աղջկանցն»:

[15]) «Ընկնում» բառից հետո կա հետևյալ նշումը. «ամբողջ գլուխը (մի թերթ) գրքից դնել՝ 93—94, ապա՝ էջ 99»: Այս նշման համաձայն բերում ենք քաղվածքի շարունակությունը «Վերք Հայաստանի»-ի 1908 թ. հրատարակության 93—94 էջերից և ապա 99 էջից:

[16]) «Ինչպես մի սուրու գառն ու մերը կորցրած ոչխար» արտահայտությունը Թ-ը սկզբում մեջ է բերել անփոփոխ, իսկ հետո «գառնի» փոխարեն գրել է «ոչխար» և «ոչխարի» փոխարեն՝ «գառը», որով ստացվել է «ինչպես մեկ սուրու ոչխար ու մերը կորցրած գառը»: «Վերքի» բոլոր հրատարակություններում, ինչպես և ձեռագրում այնպես է, ինչպես վերևում:

[17]) Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ». Գլխ. ԺԳ. —Պատմութիւն նեղութեանց, զորս կրեցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս թագաւորէն և Գլխ. ԺԴ.— Միւս ևս պատմութիւն նեղութեանց, զորս կրէցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս թագաւորէն: Այս գլուխներում հեղինակը մանրամասնորեն նկարագրում է հայերի կրած նեղությունները ու սարսափները:

[18]) Տե՛ս «Վերք Հայաստանի», 1908 թ. էջ 127:

[19]) «Կմոռանանք» բառից հետո կա հետևյալ նշումը փակագծերում. «(128 մինչև 130 աստուծո բանն անքննելի ա)»: Ըստ այս նշումի բերում ենք քաղվածքի շարունակությունը «Վերք Հայաստանի»-ի նույն հրատարակության հիշյալ էջերից (128—130):

[20]) Տե՛ս «Վերք Հայաստանի», 1908, էջ 68—69, գլուխ առաջին, հատված V և էջ 160—162, գլուխ երկրորդ, հատված IV: Թ-ը, ըստ երևույթին, նկատի ունի Աղասու այն խոսքերը, որ նա ասում է նախ՝ ֆառաշներից Թագուհուն ազատելիս, և ապա՝ Հասան-խանին, Խլղարաքիլիսայում:

[21]) Տե՛ս 18 և 19 ծանոթագրությունները:

[22]) Տե՛ս «Акты Кавк. арх. ком.. VII, стр. 252, Письмо архиеп. Нерсеса к ген. Паскевичу от 14-го июня 1827 года, № 89».

Ներսեսի այդ նամակը վերաբերում է Սարգիս եպիսկոպոսին, և խոսք կա՝ «միայն Ղարաքիլիսայից վերցված մոտավորապես 1500 հոգի հայ գերիների» մասին: Աշտարակեցին գրում է նաև այն մասին, որ Սարգիս եպիսկոպոսը այդ գերիներից 60 հոգու ազատում է գերությունից:

[23]) «Դոշիցը» բառից հետո փակագծերում կա հետևյալ նշումը. «հանել մինչև էջ 193, ընկավ Վրաստանու հողը ու գլուխը պրծացրեց»:

Այս նշումի համաձայն «Վերք Հայաստանի»-ից բերում ենք քաղվածքը:

[24]) «Հանդիստը» բառից հետո կարմիր մատիտով գրված է աստղանիշ, ըստ երևույթին ծանոթագրելու համար, բայց տողատակին որևէ ծանոթություն չկա:

[25]) Թ-ը նկատի ունի В. Потто. «Кавказская война...». том 3, вып I, стр. 37. Այստեղ խոսվում է՝ Համզաչիմանի պահակի վրա պարսիկների հանկարծակի հարձակման ժամանակ գլխատված 15 ռուս զինվորների, ապա նաև փոքր կամ Խըլ-Ղարաքիլիսայի ազետի մասին:

[26]) «Խըլ-Ղարաքիլիսի» և «այժմ» տողասկզբի բառերի կողքին՝ ձախ լուսանցքում, կարմիր մատիտով նշված է. «Сб. к. XXIV, 3, ուղղել», Թ-ը նկատի ունի «Кавказский сборник», том XXIV, стр. 3, ուր պարսիկ հեծյալ զինվորների նույն թիվն է նշված, ինչ-որ բերել է ինքը՝ Թ-ը. այնտեղ ասված է. «Силы Гасан-хана простираются до 5000 конницы...»: Իսկ թե ինչ ուղղման մասին է խոսքը, հասկանալի չէ:

[27]) Տե՛ս «Кавказский сборник», том XXIV, стр. 3.

[28]) «Տան կըտրրներին» բառերից սկսած մինչև յոթերորդ տողը («իրար հետ խառը երկինք վերացան»), Թ-ը Աբովյանի չափածո հանգավոր արձակը մեջ է բերել իբրև տողատված ոտանավոր:

[29]) «Վերացան» բառից հետո գրված է. «և այլն, մինչև գնացին ի բաց, էջ 151»: Ըստ այս նշումի բերում ենք քաղվածքի շարունակությունը տեքստում «Վերք Հայաստանի»-ի 150—151 էջերից:

[30]) Նույն տեղը, էջ 152:

[31]) «Ինչպես մեկ կաթիլ... ու ... հողը սառած» տողերը «Վերք Հայաստանի» վեպում արձակ է: Թ-ը մեջ բերելիս՝ վեր է ածել ոտանավորի: Տե՛ս նույն տեղը, էջ 152—155:

[32]) Տե՛ս նույն տեղը, էջ 153:

[33]) «Խոտի դեզերի» բառերից մինչև «վրա թափեցին» բառերը «Վերք Հայաստանի» վեպում արձակ է:

Թ-ը մեջբերում կատարելիս այդ հատվածը նույնպես տողատել, վեր է ածել ոտանավորի: Տե՛ս նույն տեղը, էջ 157—158:

[34]) «Վերք Հայաստանի»-ի 1897 և 1908 թվերի հրատարակություններում՝ «առավ ալավը»: Տե՛ս էջ 157:

[35]) Տե՛ս նույն տեղը, էջ 157—158:

[36]) Տե՛ս «Վերք Հայաստանի», 1908 թ., էջ 183—184:

[37]) Տե՛ս նույն տեղը, էջ 184,

[38]) Տե՛ս «Кавказский сборник», т. XXIII, стр. 102.

«Рапорт полковника князя Севарсамидзе генералу Ермолову, сел. Караклис, 5-го августа 1826 г., № 524».

Փակագծերում նշված աղբյուրներից հետո տողաբանքում մատիտով արված է հետևյալ նշումը.

«Ապա թե Կոցերուն, <том> XXII,—123 և [Потто]

XXIV, 2, ու Բայանդուր և Բորչալու»:

[39]) Տե՛ս «Кавказский сборник», том XXII, стр. 123—124.

М. Е. Коцебу, «Описание вторжения персиян в Грузию, в 1826 году».

[40]) Տե՛ս «Кавказский сборник», том XXIV, стр. 2.

[41]) «Кавказский сборник», том XXII, стр. 106—107.

[42]) «18-ի երեկոյան»— նշանակում է՝ 1826 թ. հուլիսի 18-ի երեկոյան:

[43]) Թ-ը նկատի ունի Սևարսամիձեի դեպքից 1—2 օր հետո գրած դեկուցումների քաղվածքները, տես «К. сб.» XXIII, с. 12—15. Выписка из

рапортов полковника князя Севарсамидзе» և գեներալ-մայոր Սերգեյ Երմոլովի՝ 1826 թ. հուլիսի 22-ին (և ոչ Ղարաքիլիսայի «ավերումից երկու օր հետո», որ կնշանակեր հուլիսի 18-ին), գեներալ Ալեքսեյ Երմոլովին գրած նամակը «Кавказский сборник», т. XXIII, стр. 35—39: Այդ փոխումենանեբում խոսք կա փոխ-գնդապետ Դեխտերևի՝ Գյումրի վերադառնալու մասին:

44) Տես В. Потто, Кавк. война... т. 3, вып. 1, стр. 38. այստեղ խոսք կա փոխ-գնդապետ Դեխտերևի՝ Գյումրի վերադառնալու հանգամանքների մասին:

45) «Բերին էլ եզ Թոփի կողքը», նախադասության մեջ «եզ» բառը Թ-ն է ավելացրել. «Վերք»-ի նախասովետական շրջանի բոլոր հրատարակություններում (1858, 1897, 1908), ինչպես նաև Աբովյանի վեպի ինքնագրում այդ բառը չկա, ամեն տեղ գրված է. «Բերին էլ Թոփի կողքը»:

46) Տե՛ս Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», 1908 էջ 164:

47) Տե՛ս Ջեյմս Մորիեր, «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», վեպ պարսկական կյանքից, թարգմ. անգլիերեն բնագրից Մ. Կ. (Նոր Դաւդայիտի), Թիֆլիզ, 1904 թ., էջ 171—172:

48) «Կառավարչապետ» բառի վերև նշված է «Վ<երք> Հ<այաստանի>, էջ 190»:

49) Թ-ը նկատի ունի գեներալ Երմոլովի՝ 1926 թ. հուլիսի 31-ի հրամանագիրը (предписание) դնդապետ Մուրավյովին, որին հանձնարարում է այդ կարգադրության մասին հաղորդել իշխ. Սևարսամիձեին և կատարուին: Այդ կարգադրության մեջ ասված է.

«Нужно чтобы князь Севарсамидзе подумал бы об эвакуации всех войск из Бамбакского округа возможно скорее.

... Быстрое отступление к Лори с более необходимыми припасами есть задача, которую он должен поставить за цель и благоразумно исполнить... Бамбакские армяне могут отступить с своими семействами...», «Кавказский сборник», том XXIII, стр. 85:

50) «Փամբակից ու Շորագյալից» բառերի վերև արված է հետևյալ նշումը. «XXIII, 92. 96, 147. «Кавказский сборник»-ի այդ հատորի հիշյալ էջերում Թ-ը նկատի ունի հետևյալ վավերագրերը.

ա) Գեներալ Երմոլովի՝ դնդապետ իշխան Սևարսամիձեին ուղղված 1826 թ. օգոստոսի 3-ի № 241 հրամանագիրը (предписание), ուր Երմոլովը հայտնում է, որ ինքը «ամրոցվովին հավանություն է տալիս իշխ. Սևարսամիձեի մտադրությանը՝ ամրանալու Ջալալ-Օղլիում» և այդ նպատակով անհրաժեշտ է համարում «պաշտպանության համար ամրացնել Լոռու հին քերդը»: Վերջում Երմոլովը խոսում է հայերի պաշտպանության և նրանց բոլորին Փամբակից Լոռի գաղթեցնելու մասին (տես «К. сб.», том XIII, стр. 92—93):

բ) Դնդապետ Մուրավյովի 1826 թ. օգոստոսի 3-ի զեկուցագիրը (рапорт) գեներալ Երմոլովին, վերջինիս՝ ն. թ. հուլիսի 31-ի՝ դնդապետ Մուրավյովի միջոցով իշխան Սևարսամիձեին ուղղված հրամանագրի կատարման ընթացքի մասին: Այդ հրամանագիրը վերաբերում է Փամբակից Լոռի նահանջելուն: (Տե՛ս նույն տեղը, էջ 85—86):

գ) Իշխան Սևարսամիձեի, 1826 թ. օգոստոսի 25 № 605 զեկուցագիրը գեներալ Երմոլովին՝ դորքի և Փամբակից ու Շորագյալից գաղթած հայերի մատակարարման մասին: (Տե՛ս նույն տեղ, էջ 146—147):

51) «Վերք Հայաստանի»-ի նախասովետական շրջանի բոլոր հրատարակություններում «Թեզեր իրար վրա ավել...» և այլն: Տե՛ս 1858 թ. հրատ., էջ 183, 1897 և 1908 թթ. հրատարակությունների էջ 192:

[52]) Խ. Արովյան, «Վերք Հայաստանի», 1908 թ., էջ 192:

[53]) «Լոռու դյուղերի գլխին բերի» բառերից վերև կարմիր մատիտով արված է հետևյալ նշումը. «XXIII, 167, князя Севарса<мидзе>». Այստեղ Թ-ը նկատի ունի իշխան Սևարսամիձևի 1826 թ. սեպտեմբերի 3-ի՝ № 633 դեկուցագիրն՝ ուղղված դեներալ Երմոլովին. Հասան խանի հրամանատարությամբ նույն տարվա սեպտեմբերի 2-ին՝ Պարսկական 4 հազարանոց հեծելապորի կատարած հարձակման մասին:

[54]) Թ-ի ձեռագրում «խարարը նրանց» բառերից հետո, փակագծերում գրված է՝ «(«Վերք Հայաստանի» 189—190)»: Այդ նշումի համաձայն «Վերք»-ից բերում ենք համապատասխան քաղվածքը, որից հետո գնում ենք Թ-ի նշումը՝ փակագծերով:

[55]) Թ-ի կողմից նկատի առնված քաղվածքն այսպես է.

«Положение его становилось весьма критическим, ибо куртинцы, спешившись, атаковали гору, но в сию минуту князь Орбелиани к счастью выстрелом убил на месте начальника оных; неприятель мгновенно прекратил нападение и все бросились оплакивать тело начальника». Տե՛ս «Кавказский сборник», т. XXII, стр. 115, М. Е. Коцебу—«Вторжение персиян в Грузию в 1826 году».

[56]) «Кавказский сборник», том XXII, стр. 115. Նախորդ ծանոթագրության մեջ նշված վավերագիրը:

[57]) Թ-ը նկատի ունի Բորչալվի գլխավոր պրիստավ կապիտան իշխան Դմիտրի Օրբելիանիի՝ 1826 թ. օգոստոս 18-ին, Քվեշի գյուղից՝ դնդապետ Կոստենեին ուղղված դեկուցագիրը (рапорт), ուր ասված է. «Настоящего месяца 14-го числа, утром, в селении Саркинеты был я извещен, что персияне разграбили немецкую колонию Екатеринфельд и другия селения» և այլն: Տե՛ս «Кавказский сборник», том XXIII, стр. 132—133.

[58]) Թ-ը նկատի ունի հետևյալ վավերագրերը.

«Показание пойманного куртинца Мустафи (он же Сутто)», «Его-же показание, данное в Тифлисском Ордонане-гаузе 23-го августа 1826 года».

«Кавказский сборник», том XXIII, стр. 126—127.

[59]) Թ-ը նկատի ունի հետևյալ վավերագիրը.

«Отношение генерала Ермолова начальнику главного штаба Его Императорского Величества, 4-го сентября 1826 года, № 349». «Кавказский сборник», том XXIII, стр. 167—169.

[60]) Տե՛ս Խ. Արովյան, «Վերք Հայաստանի», 1908 թ. էջ՝ 186—187:

[61]) Ձեռագրում «выступил» բառից հետո գրված է. «и тд. XXIV, 230» որ նշանակում է՝ շարունակությունը տե՛ս «Кавказский сборник», էջ 230, որտեղից և բերել ենք ամբողջ քաղվածքը:

[62]) «Кавказский сборник», том XXIII, стр. 65—66, «Рапорт князя Севарсамидзе генералу Ермолову 28-го июля 1826 года, № 483».

[63]) «Խալիք քոչել չէր ուզում» բառերից առաջ, վերևի լուսանցքում կա հետևյալ նշումը. «կառ<ավարչապետը> կարգադրում է, որ քոչեն Լոռի... Մի դասթա սալդաթ... ժող<ովրդի> չուգիլը... գրությունը Լոռում... գնել իրար հետից. 6+2»: Այստեղ հիշատակված կտորների հաջորդականությունը որոշել ենք հեղինակի այդ նշումի համաձայն:

[64]) Ինքնագրում «կխասճամբի էինք» և «թուրքերը» բառերի վրա գրված աստղանիշերին համապատասխան ծանոթություններ չկան տողատակին:

[65]) Փակագծերում նշված «(августа)» բառը բերված քաղվածքի բնագրում չկա. ինքը՝ Թ-ն է ավելացրել: Տե՛ս հաջորդ ծանոթության մեջ նշված աղբյուրը:

[66]) «Кавказский сборник», том XXIV, стр. 10.

[67]) «Сожгли» և հաջորդ բառերից ներքև՝ լուսանցքում մատիտով փակագծերում արված է հետևյալ նշումը. «(Նույն օրը մեկ դաստա ալգաթ...» Վ<երք> Հ<այաստանի>, 191)»:

[68]) «Князь» բառի վրա աստղանիշ է դրված, ըստ երևույթին անհրաժեշտ ծանոթություն տալու համար, բայց որևէ նշում չկա տողատակին:

[69]) Տե՛ս «Кавказский сборник», том XXIII, стр. 169, Рапорт генерал-лейтенанта Красовского I-му генерал-лейтенанту Паскевичу, от 16-го октября 1827 года, № 1508, Крепость Эривань.

ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(էջ 297)

[1]) Թ-ը իր այս ուսումնասիրության սկզբի մասի համար օգտագործել է գլխավորապես հետևյալ երեք հիմնական աղբյուրը:

I. «Известия древних греческих и римских писателей о Кавказе», Собрал и перевел с подлинников К. Ган, ч. 1, от Гомера 6-го столетия. по Р. Х». 1884 г, Тифлис.

II. Лависс и Рамбо, «Всеобщая история...», т. I, 1897 г.

III. «История человечества», под редакцией Г. Гельмгольта т. т. I, II, III, IV, V. Բացի այդ Թ-ը օգտագործել է նաև մի շարք այլ աղբյուրներ, այդ թվում՝ «Землеведение Азии К. Риттера», Ю. Липперт, «История культуры»... և այլն: Ուսումնասիրության այս գլխի վերջին մասի համար Թ-ը հիմնականում օգտագործել է Մ. Չամչյանի «Հայոց պատմութիւն...»-ը ինչպես և հայ հին ու միջին դարերի պատմիչներին:

Ըստ երևույթին Չամչյանի «Պատմութեան» օրինակով է, որ Թ-ը, ինչպես այս, նույնպես և մյուս հատվածների լուսանցքներում նշել է իր օգտագործած համապատասխան պատմական աղբյուրները:

[2]) Տե՛ս «Ներածություն» 3-րդ ծանոթագրությունը:

«Վերք Հայաստանի»-ի 50-ամյակի առիթով ցվեր Ս<ուչաուբ> Ա<ովյանի> ճիշատակին (էջ 297):

[3]) «Վերք Հայաստանիի» 50-ամյակի առիթով» բառերից առաջ՝ վերևի լուսանցքում արված է հետևյալ նշումը կապույտ մատիտով. «[Պատմական թյուրիմացություն]»:

[4]) Թ-ը, ըստ երևույթին, օգտագործել է վերմանացի նշանավոր աշխարհագրագետ Կարլ Ռիտտերի աշխատության ռուսերեն թարգմանությունը. «Землеведение Азии К. Риттера. География стран, входящих в состав Азиатской России или пограничных с нею, т. е. Сибири, Китайской Империи, Туркестана, независимой Татарии и Персии», СПб 1877, 695 стр.
